ՄԵՐԻ ԾԱՂՅԱՆ

ՌԱՖԱՅԵԼ ՊԱՏԿԱՆՅԱՆ

ՀՍՍՀ
ԱԿԱԴԵՄԻԱ

АКАДЕМИЯ НАУК АРМ. ССР
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ ИМ. М. АБЕГЯНА

МЕРИ САГИЯН

РАФАЭЛ ПАТКАНЯН

ЖИЗНЬ И ТВОРЧЕСТВО

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1980

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

891.981.092 [Պատկանյան]

ՄԵՐԻ ՍԱՂՅԱՆ

ՌԱՓԱՅԵԼ ՊԱՏԿԱՆՅԱՆ

ԿՅԱՆՔԸ ԵՎ ԳՈՐԾԸ

А — 11/64641

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1980

8 Ар 1 ինդեքս ԳՄԴ 83.3Հ1
Պ 292 Ս

Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ բանասիրական գիտ. դոկտոր Ս. Ն. ՍԱՐԻՆՅԱՆ

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝ բանաս. գիտ. դոկտոր Ս. Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԸ, բան. գիտ. թեկնածուներ Լ. Ա. ԱՍՄԱՐՅԱՆԸ և Ս. Ա. ՇՏԻԿՅԱՆԸ

Սաղյան, Մ. Ս.

Պ 292 Ս *Ռափայել Պատկանյան։ Կյանքը և գործը։ Պատ. խմբ. Ս. Ն. Սարինյան.—Եր.։ ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1980.—382 էջ.*

Աշխատությունը բաղկացած է երեք մասից։ Առաջինն ընդգրկում է հեղինակի մանկությունը և ուսումնառությունը, երկրորդը՝ գործունեության պետերբուրգյան շրջանը, իսկ երրորդը ներկայացնում է Պատկանյանի ստեղծագործական կյանքը Նոր Նախիջևանում։

Արխիվային տվյալների, մամուլի, հեղինակի և նրա ժամանակակիցների նամակային ժառանգության հիման վրա ստեղծվել է Պատկանյանի գիտական կենսագրությունը, տրվել նրա գործերի ստեղծման շարժառիթները, նրանց ստեղծագործական պատմությունը, կերպարների նախատիպերը։

Ս $\frac{4603000000}{703\ (02)-80}$ 42—79

8 Ар 1
ԳՄԴ 83.3Հ1

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1980

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ
ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ, ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅՐԱԿԱՆ ՕՋԱԽՈՒՄ, ԼԱԶԱՐՅԱՆ ՃԵՄԱՐԱՆ

1830 թ. նոյեմբերի 8-ին, ուշ աշնան մի ցրտաշունչ երեկո, երիտասարդ սարկավագ Գաբրիել Պատկանյանի տանը ծնվեց երրորդ զավակը, որի անունը կնքեցին Ռափայել։ Պատմում են, որ նրա աշխարհ գալու պահին հայրը կլանված «Հարսանիք Արտաշէսի եւ Սաթենկա» բանաստեղծության հորինմամբ, չէր շտապում տեղեկություն ստանալու երկունքի ցավերի մեջ գալարվող իր կնոջ մասին։ Ամբողջապես անձնատուր եղած ոտանավորի նրաժշտականությանը, մտքով սավառնելով հայոց հին դյուցազունների աշխարհում, նա լսեց նորածնի ճիչը միայն այն ժամանակ, երբ ավարտեց բանաստեղծության վերջին տողը[1]։

Չնայած այն հանգամանքին, որ մեզ հասած պաշտոնական փաստաթղթերը հաղորդում են ծննդյան այլ թվական և օր, սակայն, ինչպես Գաբրիել Պատկանյանի «Հիշատակարան»-ում բերված գրառումը, այնպես էլ հետագայում բանաստեղծի կողմից բազմիցս վավերացված 1830 թ. նոյեմբերի 8-ը, հիմք են տալիս այն համարելու Ռափայել Պատկանյանի ծննդյան ճիշտ ժամանակը։

---

[1] Տեղեկությունը վերցված է Ռուբեն Բերբերյանի «Հայրենիք» ամսագրի 1931 թ. 1—3 համարներում տպագրած «Ռափայել Պատկանյան» հոդվածից։ Բերբերյանի խոստովանությամբ ձեռքի տակ ունենալով իր մորեղբոր՝ բժ. Անանիա Սուլթան-Շահի «Տետրակ ուրախ և տխուր անցքերի» վերնագիրը կրող հիշատակարանի բեկորները, ինչպես նաև նախիջևանցի ծերերի իրեն պատմած հուշերը, նա կարողացել է բավականին ճշմարտացի վերականգնել բանաստեղծի աշակերտական և ուսանողական տարիների պատկերը։ Հավաստի կերպով խոսելով այնպիսի փաստերի մասին, որոնց նա ծանոթ կարող էր լինել միայն արխիվային փաստաթղթերից կամ հեղինակի անձնական նամակներից, որոնք տեղում նրան միանգամայն անմատչելի էին, մենք հակված ենք մտածելու, որ նրա ունեցած տեղեկություններից շատերը մտացածին չեն, այլ համապատասխանում են իրականությանը և հաղորդված են գիտակ անձանց կողմից։

Նրա ծննդյան վկայականը մեզ չի հասել, սակայն պահպանվել է 1861 թ. Պետերբուրգի գլխավոր ինժեներային վարչությունից նրան տրված տեղեկանքը[2], որտեղ ասված է. «Սույնը ներկայացնող կոլեգիական քարտուղար Ռափայել Գաբրիելի Պատկանյանը, ծնված 1832 թ. սեպտեմբերի 30-ին...»։ 1862 թ. օգոստոսի 24-ին ստորագրված համալսարանական դիպլոմի մեջ նույնպես գրված է «30 տարեկան», հետևաբար՝ 1832 թ. ծնված։ Պետք է ենթադրել, որ այս տվյալը վերցված է եղել ծննդյան վկայականից և ինքը՝ Ռափայել Պատկանյանը երկար տարիներ համոզված է եղել իր 1832 թվականին ծնված լինելուն, և հետո միայն, 60-ական թվականներին, հոր Պետերբուրգ գալուց հետո, նրանից իմացել է իր ծննդյան ստույգ թվականը։ Այդ է պատճառը, որ մինչև 1860-ական թվականները գրված նամակների մեջ նա իրեն համարում է 1832 թ. ծնված և հետագայում է միայն արտահայտվում 1830 թվականի օգտին։

Գաբրիել Պատկանյանը իր «Հիշատակարան»-ում գրում է. «1830 թիվն այսպես անցավ... Տիրացու Գաբրիելի կինն ծնավ արու և Ռափայել որդին դարձյալ մկրտվեցավ Խամաճյան Խաչատուր աղայի որդվո (Ստեփան) կնքահայրությամբ ու հասավ 1831 թվականն»[3]։

Ինչո՞վ բացատրել ծննդյան ստույգ թվականի և վկայականի միջև գոյություն ունեցող տարբերությունը։ Արդյո՞ք ուսումնական հաստատություն մտնելու համար հետագայում արհեստականորեն փոքրացրել են տարիքը, թե՞ Ռափայելից հետո աշխարհ եկած վաղամեռիկ Հրաչյա որդու հիշատակը մի ինչ-որ ձևով պահպանելու համար Ռափայելին են հատկացրել նրա տարեթիվն ու օրը։ Դժվար է ասել։

Ընտանիքը, որտեղ մանուկ Ռափայելը ստացավ իր կյանքի առաջին տպավորությունները, բազմանդամ էր և համերաշխ։ Այնտեղ տիրում էր պապի՝ նահապետ Սերովբե վարժապետի հեղինակությունը, տան ղեկը գտնվում էր Մալալ մեծ մոր ժրաջան հսկողության ներքո, իսկ երիտասարդ տիրացու Պետրոսը, եղբոր հետ միաժամանակ վաստակում և հոգում էր ընտանիքի բարեկեցության մասին։ Սակայն տան ոգին երիտասարդ տանտիրուհին էր՝ գեղեցիկ ու խոհուն Եղիսաբեթը, որին հարսնության առաջին օրից սիրառատ ամուսինը Ծաղիկ էր կոչում նրա գեղեցկության ու հմայքի համար։ Նա էր, որ երեխաների առջև մանկության վաղ տարիներից սկսած բացել էր հրաշապատում հեքիաթների դյու-

[2] ԳԱԹ, ՌՊֆ, № 1338։

[3] ԳԱԹ, ԳՊֆ, № 20, Գ. Պատկանյան, Հիշատակարան, էջ 132։ (Այսուհետև՝ «Հիշատակարան»)։

թական աշխարհը[4], նրանց հաճախակի պաշտպանել դյուրաբորբոք ամուսնու ցասումներից, տանը ապահովել հանգիստ ու բարեհամբույր մթնոլորտ։ Ծնված և դաստիարակված լինելով հաշտարխանցի ունևոր վաճառական Մելքոն Սունդուկյանցի գերդաստանում, նա կարողանում էր փոքր-ինչ նվագել դաշնամուրի վրա, սովորեցնել երեխաներին, զբվարճացնել նրանց զանազան խաղերով ու զբաղմունքներով։ «Դու այնքան բարի ու առաքինի կին էիր,— գրում է իր «Հիշատակարան»-ում նրա ամուսինը,— որ թշնամիներս բեղանից պատկառում էին և կարող եմ ասել երկնչում էին։ Վատահամբավ ու անվանաբեկ Տեր-Գաբրիելի համբավն չէր, որ նորա դստերք փառավոր հարսներ եղան, այլ Տեր-Գաբրիելի պարկեշտ, համեստ, առաքինի, ժպտալից տիրուհու սնուցած ու կարգացած օրիորդք էին ասում և հափշտակում իմ որբացյալ աղջկունքն։ Դու նույն առաքինությամբ պիտի ամենայն տեղ բարձրագլուխ շրջես»[5]։ Ռափայելի ծնունդից ութ ամիս անց սարկավագ Գաբրիելը Ներսես առաջնորդի հրամանով մեկնում է Քիշնև, նոր հաստատվող կոնսիստորիայի գործերը կազմակերպելու համար և վերադառնում միայն մեկ տարի հետո։

Այդ մեկ տարվա ընթացքում ընտանիքի ամբողջ հոգսը ծանրանում է տիրացու Պետրոսի ուսերին, որոշ դժգոհություններ ու անբավականություններ ստեղծելով նրա և երիտասարդ տանտիրուհու միջև։

Վերադարձից հետո Գաբրիել քահանան քաղաքագլխի և հոգևոր կառավարության հետ ունեցած բախումների հետևանքով շուտով կորցնում է աշխատանքը, և ընտանիքը դատապարտվում է նյութական ծանր զրկանքների։ Այստեղ դարձյալ օգնության է հասնում երիտասարդ տանտիրուհու զգոնությունն ու ընտանիք կառավարելու ունակությունը. «Որպես յուր մայրն էր այնքան ամ պահել և պահպանել յուր հոր տունն ճիշտ չափավորությամբ, նույնպես և յուր ամուսին գոլով կին ժպտալից, մի արծաթ դահեկանով այն տանտիկնության ջանդիմանն կկատարեր, ինչ որ այլք նորա հասակի և պատվի տիկնայք հինգ դահեկանով չէին կարող ուղղել։ Համեստ և զգույշ, չափավոր հուտելիս, հագնելիս և հրմպելիս»[6],— գրում է հետագայում Գաբրիել Պատկանյանը։ Շուտով ամուսնանում է նաև տիրացու Պետրոսը, և տանը հայտնվում է մի տասնչորսամյա գեղանի նորահարս՝ համբավավոր Հարություն Ալամդարյանի Աննա

---

[4] Ռ. Պատկանյան. Երկերի ժողովածու, հ. VIII, ԳԱ հրատարակչություն, Երևան, 1974, էջ 202, (այսուհետև Ռ. Պատկանյանի երկերի ժողովածուից բերված ծանոթագրությունները կնշվեն տեքստում, հատորի և էջի հիշատակությամբ)։

[5] «Հիշատակարան», էջ 600։

[6] Նույն տեղում, էջ 254։

դուստրը։ Աշխարհ է գալիս Պետրոս Հորեղբոր Քերովբե անդրանիկը։ Օրավուր ավելի ու ավելի դժվարանում են կյանքի պայմանները վարժապետի համար առանձնացված նորակառույց քաղաքային վարժարանին կից փոքրիկ փայտաշեն տանը։ Այս բոլորի հետ միասին վերանորոգվում են նաև տեր Գաբրիելի հիվանդության նշանները և տագնապալի վիճակ է ստեղծվում նրա կյանքի համար[7]։ Կյանքից հեռանում է Ռափայելից հետո աշխարհ եկած փոքրիկ Հրաչյան։ Չդիմանալով հարվածների ծանրությանը, որոշում են Աստրախան վերադառնալ Սերովբե վարժապետն ու իր կինը։ «Տիրացու Գաբրիելի ծնողքն, մանավանդ մայրն, որ երբեմն յուր որդուն համբերություն և վեհանձնություն կքարոզեր, ինքն ընկճվելով յուր որդու անհաջողության հարվածից ներքո, վհատել էր։ Այն ժրաջանի կինը, որ 1795 թվին յուր ամուսնու հետ քանի ժամանակ Վրաստանի լերանց դաղանաբնակ այրոց մեջ չէր հեծել անգամ, այժմ յուր քանիննամյա հիվանդ որդվո ձախորդությամբ կոշկոճելով, Հագարու նման կամեցավ ծարավատանջ որդին թողուլ անապատի մեջ և հեռանալ, որ նորա մահու կսկիծով չտանջվի»[8]։

Տնտեսական սուղ պայմանները շարունակվում են մինչև 1836 թ., երբ վերջապես Գաբրիել քահանային հաջողվում է բացել իր մասնավոր երկսեռյան դպրոցը։

Չնայած, որ տեր Գաբրիելը համարյա ամբողջ օրը զբաղված էր վարժարանում, նա միշտ ժամանակ էր գտնում պարապելու իր երեխաների հետ, աշխատում նրանց հոգին վառել հայոց պատմությունից քաղած հերոսական անցքերով։ Հաճախ շաբաթ երեկոները, բոլորած պերճախոս հոր շուրջ բոլորը, երեխաները լսում էին Հայկ Նահապետի անվեհերության, Վահագնի ուժի, Արայի առաքինության ու Վարդանի քաջության մասին։

Սակայն հոր պատմություններից ավելի շատ վառում էին փոքրիկ Ռափայելի, կամ ինչպես նրան տանն էին կոչում Ռափուշի, հոգին մոր և իրենց տունը հաճախակի այցելող նախիջևանցի մի պառավի դյութական հեքիաթներն ու քաղաքի կյանքից քաղած իրական պատմությունները։ «Ականջը-կանչ մայրս ներհուն հեքիաթճի էր..., ...Մի պառավ նախիջևանցի հաջի-մամա էլ մեր տուն կերթևեկեր, որ նմանապես հեքիաթճի էր» (VIII, 202), հետագայում Փիլիպոս Վարդանյանին գրել է Պատկանյանը։ «Մի հոգված միտս ձգեց մանկությանս օրերը հաջի-մա-

---

[7] Տե՛ս նույն տեղում, էջ 132, 135։

[8] Նույն տեղում, էջ 155։

.մայիս լսած հեքիաթը, որը շատ սիրում էի լսել, թեկուզ օրը չորս անգամ (աստված ողորմի հոգուն)», նույն Վարդանյանին նա հայտնում է մի այլ նամակում (VII, 132)։ Ռափայել Պատկանյանն իր ամբողջ կյանքի ընթացքում միշտ սիրով ու խանդաղատանքով է մտաբերել Հաջի-մամային։ Գամված մահվան մահճին նա պատվիրել է իր դստերը՝ Եղիսաբեթին, Հովհաննես Հովհաննիսյանին հղած նամակում գրել հետևյալ տողերը. «Բռնի պսակը», «Երկու քույրը» և «Մարիամ» հեքիաթը յուր մանկության օրով նա լսել է մի պառավ հայ կնոջից, որ հորս վրա նույն ազդեցությունն է ունեցել, ինչ ազդեցություն որ ունեցել է ռուս Պուշկինի վրա Իրինա Ռոդիոնովնա աղախինը»[9]։

Նույն այդ Հաջի-մամայի պատմածները նախիջևանցի գեղեցիկ աղջիկների ու հարսների մասին առաջին անգամ զգայուն մանուկի սրտում զգացմունքներ խլրտացրին, առաջացրին տեսիլներ, և նա սկսեց երազել ինչ-որ անհասկանալի, անհասանելի արարածների մասին։ «Պաց ազպար» պատմվածքի մեջ Պատկանյանը գրում է. «...Դեռ այն ժամանակները ես երեխա էի— մեր տունը մի հաջի-մամա էր գնում գալիս։ Նա մեզ շատ բաներ էր պատմում աբթար (մանրավաճառ) Սարգսի վրա. գովում էր նրա տուն-տեղ կառավարելը, նրա կնոջ գովասանքն էր անում, նրա զավակների վրա ինչ ասես լավ բաներ էր պատմում։ Այդ ժամանակներից սկսած աբթար Սարգիսին ճանաչում էինք։ Երբ որ տան համար ինչ ասես մանր-մունր բաներ էր պետք լինում, մամաս ինձ փող էր տալիս ու ես միշտ Սարգիս-այի աբթարանոցից էի առնում մեղրամոմ, սանձապղ, վարդի մուրաբայի համար ծծումբ, խունկ, քույրերիս համար հատ, կամ սուրբ Կարապետի մաստակ, դե՛ այսպիսի բաներ»։

Մեկ օր, աբթար Սարգիսը փոքրիկ գնորդին առաջարկում է իր տուն տանել զամբյուղով լյարդը և միաժամանակ հենց պարտեզում վայելել ընտիր միրգը։

Երբ երեխաները ներս են մտնում բակ, փոքրիկ Ռափայելը տեսնում է իր անձև երազների, անմարմին անուրջների կենդանի պատկերը. «...Պատշգամբում, աթոռակի վրա նստած, հին սովորությամբ գլխին մոռ ատլասե ֆեսով մի աղջիկ կար... Շատ գեղեցիկ աղջիկներ եմ տեսել, ավելի գեղեցիկ դեմքեր եմ տեսել, բայց ինչ որ այն օրը տեսա՝ օրիս մեջ այնպիսի աղջկա տեսք չեմ տեսել։ Ո՞վ գիտի, գուցե այն ժամանակ երեխա էի, ավելի չքնաղ բան տեսած չլինելու պատճառով՝ դա ինձ հիանալի մի բան երևաց ու քանի գնաց՝ մտքիս մեջ գեղեցկացրի.

[9] «Արձագանք», 1892, № 24։

ո՞վ գիտե, որ լինի կլինի, բայց մեկ էլ աղջկա տեսքը ինձ այնպես չհիացրեց, չսիրահարեցրեց ...Ես այն օրը առաջին ու վերջին անգամ սեր զգացի։ Աղջկա անունը Թագուշ էր» (IV, 30—31), (թարգմանությունը մերն է — Մ. Ս.)։

1836—37 թթ. Ռափուշն արդեն հոր երկլեզվյան դպրոցի առաջին սաներից էր, որտեղ նրան ընկերակից էին իր եղբայր Հովհաննեսը, Միքայել Նալբանդյանը, Հակոբ Խըլըճյանը, Գրիգոր Սալտիկյանը, Ավետիք Խաղեզյանը և շատ ուրիշներ։ Պետք է ենթադրել, որ երեխան արդեն գրաճանաչ էր, երբ սկսեց դպրոց հաճախել, որովհետև ավագ եղբոր՝ Հովհաննեսի հետ անցկացվող դասերը, իհարկե, առանց նրա մասնակցության չէին լինում։

Հենց հոր դպրոցում նա հիմք դրեց այն զարմանալի, բազմակողմանի զարգացմանը, այն անհագ ընթերցասիրությանը, որն ամբողջ կյանքի ընթացքում ուղեկցեց նրան։ «Որի ձեռքի՞ց այդքան գրքեր անցել է, ինչքան իմ, ո՞վ յուր ամեն կարդացած գրքեն հարկավոր քաղվածքներ անելու ծուլացած չէ և նույն րոպեին մուծել է նախապես պատրաստված ստվար տեֆտերներու մեջ», գրել է նա հետագայում Փ. Վարդանյանին (VII, 125)։ Իր իսկ վկայությամբ նա դեռևս Նախիջևանում լսել էր և զուցե նույնիսկ կարդացել Եղիշեին ու Խորենացուն, Փավստոս Բուզանդին ու Ղազար Փարպեցուն և բազմաթիվ ռուսական ու եվրոպական հեղինակների. «Ես անչափ շնորհակալ եմ հորես, որ իմ մեջ ներշնչեց հեղինակության առաջև երկրպագություն անելու զգացմունքը,— գրել է նա հետագայում,— ... Սխալվել եմ, թե ոչ, չգիտեմ, բայց այն գիտեմ, որ մանկությանս և պատանեկությանս միջոցին իբրև անսխալական էակների խոսք՝ կարդացել եմ Եղիշեն, Խորենացին, Փավստոսը, Ղազար Փարպեցին, Լեռմոնթովը, Թուրգենևը, Գոգոլը, Ժան-Ժակ Ռուսոն, Բեռնարդեն դը Սեն-Փիեռը, Մոլիերը, Շեքսպիրը, Շիլլերը և այլն և այլն» (V, 156)։

Սակայն բոլոր առարկաները չէ, որ հավասարապես գրավում էին փոքրիկ Ռափայելին, և հայրը նկատում էր, որ նա փոխանակ դասերի ժամանակ ուշադիր լինելու՝ ծիծաղաշարժ պատմություններ է անում, կամ զվարճալի բաներ նկարում ու խանգարում ընկերներին։ Մանկուց դյուրագրգիռ ու անզուսպ, նա դասամիջոցներին հաճախ կռիվներ էր սարքում դասընկերների հետ և չէր սիրում, որ իրեն նկատողություններ էին անում։ Ամենից ավելի նրան գրգռում էր հոր ամենասիրելի աշակերտ Միքայել Նալբանդյանի հովանավորող դիրքը իր նկատմամբ։ Հավանորեն նրա հասցեին շռայլվող հոր ամենօրյա գովեստները՝ «Տղին

մեջը քանքա՞ր կա, քանքա՞ր...», շարժում էին նրա նախանձը, որ ոչ թե ինքը՝ տեր Գաբրիելի որդին և Սերովբե վարժապետի թոռն է դպրոցի ամենահեղինակավոր աշակերտը, այլ մեկ ուրիշը։

Դպրոցական պարապմունքները հոր մոտ տևեցին մինչև 1840 թվականը, այսինքն՝ մոտավորապես 3—4 տարի։ 1840 թ. տեր Գաբրիելը որդուն ուղարկեց Ստավրոպոլ իր եղբոր՝ Պետրոսի մոտ ապրելու և ուսումը շարունակելու։ Ռափայելից առաջ երկու տարի հորեղբոր մոտ ապրել և ապա այնտեղից Լազարյան ճեմարան էր մեկնել նաև նրա ավագ եղբայրը՝ Հովհաննեսը։

Հավանորեն անընդհատ բախումները տեղական իշխանությունների և առաջնորդ Ներսեսի հետ, ժամանակավորապես քահանայագործելու իրավունքից զրկվելը տանը ստեղծում էին նյութական անհաստատ վիճակ, որի պատճառով և Գաբրիել քահանան ավագ որդիներին ուղարկում էր եղբոր մոտ, կտրելով նրանց մայրական գուրգուրանքից ու սիրուց, որի կարոտը այնքան տանջել ու թունավորել է մանուկ Ռափայելի դյուրզգայուն հոգին։

Ստավրոպոլում անցկացրած մեկ տարվա մասին կոնկրետ տեղեկություններ չեն պահպանվել, բայց, անկասկած, այդ բազմամարդ ընտանիքը, ուրախ ու բարեհամբույր մանկամարդ տանտիրուհու և համարյա հասակակից Քերովբե խաղընկերոջ ներկայությունը, Պետրոս հորեղբոր հոգատարությունը և, մանավանդ, կրթված ու ռուսական մըշակույթին քաջատեղյակ Միքայել հորեղբոր ներկայությունը, պիտի որ հաճելի մթնոլորտ ստեղծեին փոքրիկ պանդուխտի համար։ Հետագայում, խոսելով հորեղբոր մասին, նա գրել է Քերովբեին. «...Բայց նա չգիտե, թե որքան ես նորան կարոտել եմ по собачьей привязанности, *գիտես խոմ, սիրելը կյանքիս սկզբեն մինչև այժմ ինձ համար մի ցավ է» (VI, 292)։*

Հորեղբոր տանը, հավանաբար, շատ էին խոսակցությունները Արմավիր քաղաքի և նրա բնակիչների՝ չերքեզահայերի մասին։ Մանուկի հիշողության մեջ մխրճված մնացել էր չերքեզների կողմից հայ աղջիկների առևանգության պատմությունները, արթնացնելով առաջին հուզումներ ու մտորումներ մահմեդականների սանձարձակությունների, հայերի անպաշտպանության ու խոնարհության, խեղճության վերաբերյալ (V, 35)։

Արդյոք Ռափայելը ե՞րբ է վերադարձել Ն. Նախիջևան, 1841, թե 1842 թվականին, դժվար է ասել։ Սակայն արդեն 1842 թ. հուլիսի 8-ին նա հասել էր Մոսկվա և ընդունվել Լազարյան ճեմարանի առաջին դա-

սարանը[10], որտեղ արդեն ուսանում էր նրա ավագ եղբայր Հովհաննեսը։ Եղբայրը մեծ էր Ռափայելից չորս տարով և ճեմարան էր մեկնել նրանից երկու տարի առաջ։ Թե Ռափայելն ում հետ էր կտրել այդ դըժվարին ուղին, ստույգ հայտնի չէ, հավանորեն Մոսկվա երթևեկող վաճառականներից որևէ մեկի հետ։ Դեռևս մինչև ճեմարան մեկնելը նա անընդհատ նախապատրաստվել էր այդ մտքին, իսկ եղբոր այնտեղ լինելը ավելի ու ավելի էր գրգռել նրա հետաքրքրությունը հեռավոր, խորհրդավոր դպրոցի նկատմամբ, ուր նրա համար պիտի բացվեին գիտության բոլոր մութ արահետները։ «Ամեն անգամ, որ հայրս յուր աշակերտներին պատմում էր թե՛ քերականությունից և թե՛ պատմությունից,— գրել է հետագայում Ռափայել Պատկանյանը,— նա միշտ ասում էր դառնալով ինձ «աստուծով երբոր Մոսկվա կերթաս, առավել լավերը, առավել կատարյալները կլսես Լազարյանց ճեմարանի հռչակավոր Մըկրտիչ էմին վարժապետից»։ Եվ այս բանը այնքան հաճախ կրկնվում էր, և Մկրտիչ էմինի անունը ամեն հետաքրքիր և նշանավոր գիտելիքի մեջ այնքան շատ հիշվում էր, որ այնուհետև իմ երևակայության մեջ էմինը դարձել էր մի այնպիսի անձն, որը իմ ամեն հոգեկան պահանջներին լիուլի բավարարություն պիտի տար» (V, 156)։

Մոսկվա էր ձգտում գնալ ոչ միայն փոքրիկ Ռափայելը, այլ նաև Պատկանյանների ամբողջ ընտանիքը։ Դեռևս 1840 թ. սկսած խաչատուր Լազարյանի և Ներսես արքեպիսկոպոսի միջև բանակցություններ էին գընում տեր Գաբրիելին անցաթուղթ տալու վերաբերյալ, նրան Լազարյան ճեմարանում հայոց լեզվի դասատու կարգելու համար։ Սակայն Ներսեսը հավատարիմ մնալով ըմբոստ քահանային ճնշելու և հնազանդեցնելու իր որոշմանը, անընդհատ խոչընդոտներ էր հարուցում դրա իրագործման համար· մեկ գրում էր, որ Գաբրիել Պատկանյանը չունի այդքան գիտություն, որ կարողանա դասավանդել ճեմարանում, մերթ պատճառ բռնում նրա «անսանձ լեզուն ու անտանելի վարքը»[11]։ Ի վերջո անսալով էջմիածնի վանքի ավագ լուսարար և Արարատյան սինոդի նախագահ Բարսեղ արքեպիսկոպոս Կեսարացու միջնորդությունը, Ներսեսը համաձայնություն է տալիս Գաբրիել Պատկանյանին անցաթուղթ տալու։ Վերջինս ուրախացած սկսում է վաճառքի հանել կահ-կարասիքը,

---

10 Տե՛ս Մաշտոցի անվան Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթապանակ 117, վավերագիր 64 (այսուհետև՝ Լազարյանների արխիվ)։

11 Տե՛ս Ներսեսի նամակը խաչատուր Լազարյանին, գրված 1840 թ. հունիսի 9-ին (Լազարյանների արխիվ, թ. 107, վ. 10, 31)։

տունը, առաջիկա՝ 1843 թ. գարնանը Մոսկվա տեղափոխվելու մտադրությամբ, սակայն փոփոխամիտ Ներսեսը նորից արգելք է դնում, այս անգամ կրկնակի թշվառության դատապարտելով նրան[12]։

Ռափայելը, անշուշտ, ճանապարհ էր ելել մի կարճ ժամանակից հետո մորն ու մյուս հարազատներին Մոսկվայում հանդիպելու հույսով և այդ պատճառով էլ անջատումը նրանցից այնքան էլ կսկծալի չի եղել երեխայի համար, ընդհակառակը, երկար ճանապարհի, անծանոթ վայրերի ու մարդկանց տեսնելու հեռանկարը, այդքան երազած ճեմարանը մտնելը և եղբայր Վանյուշի հետ հանդիպելը ուրախությամբ էին լցրել նրա հոգին։ Հիշողության մեջ ամուր նստած էր նաև հոր անվերապահ պահանջը՝ ջանասիրությամբ ու լավ վարքով բարձր պահել պապի՝ Սերովբե վարժապետի ու իր անունը։

* * *

Լազարյան ճեմարանի նորաստեղծ հոգևոր բաժնի ստեղծման աշխատանքները սկսվել էին դեռևս 1838 թվականից, սակայն այն վերջնական հաստատում էր ստացել 1841 թ. մարտի 4-ից՝ կաթողիկոսի, Սինոդի և Լազարյանների ընդհանուր ջանքերով։ Հոգևոր բաժինը ձգտում էր հոգևոր դասի երեխաներից կրթված հոգևորականներ պատրաստել հայ-

[12] Կաթողիկոսական դիվանի փաստաթղթերի մեջ մեզ հանդիպեց Գաբրիել Պատկանյանի նամակը՝ ուղղված Բարսեղ Կեսարացուն, որտեղ պատմելով իր կրած հալածանքների մասին, խնդրում էր միջնորդ լինել Ներսեսին՝ իրեն անցաթուղթ տալու հարցում. «... Երկուք յորդոց իմոց են ի Մոսկով ի դպրոցի վեհազնեաց Լազարեվանց, երրորդն ես հասանէ։ Ինձ յայսմէետև ոչ ուրեք պարտ է լինել, բայց եթե՝ ուր զավակունք իմ իցեն... Վասնորոյ այժմ անկեալ թաւալելով ըզ գարշապարօք ձեր, աղաչեմ տալ ինձ հրաման ելանել ի քաղաքէ և երթալ ի Մոսկով հանդերձ ընտանեօք վասն քահանայագործութեան և ծառայութեան ի ճեմարանին Մոսկովայ, զի անձամբ անձին լինելով անդ, մարթացայց օգնել զաւակացս ի պէտս նոցա ի քաջալոյս գոլով, զի այս աղերս իմ ոչ մնասցե անայցել, սկսեալ եմ ի վաճառ մուծանել զծանրութիւն իմ, նաև զտուն իմ և զամենայն կահ և կարասի տանս, զի յառաջիկա գարնան միայն ընտանեացս ծանրութեամբ բեռնավորուած մարթացայց յաւիտենական բարեաւ մնա ասել Նախիջևանայ երկոտասնամեայ տան իմոյ թշուառութեան ուր եղէ անարգ և նուաստեալ քան զամենայն որդիս մարդկանց», Նախիջևան, 1842, սեպտեմբերի 15, (Կաթողիկոսական դիվան, թ. 102, վ. 8, գ. 148)։

Պահպանվել է նաև Գաբրիել Պատկանյանի 1842 թ. հոկտեմբերի 12-ի նամակը, որտեղ նա հայտնում է Խաչատուր Լազարյանին, որ Ներսեսը իր համաձայնությունը տվել է իրեն ճեմարանում պաշտոնավարելու և Մոսկվայի եկեղեցում քահանայագործելու համար։ Խոստանում է իր լավ աշխատանքով պարզերես լինել Վեհազնյայի և Աստծո առջև (Լազարյանների արխիվ, թ. 107, վ. 104, գ. 44)։

կական եկեղեցիների համար։ Բաժինը պետք է ունենար 15—20 աշակերտ, որոնք բացի ընդհանուր առարկաներից, պարտավոր էին ուսումնասիրել աստվածաբանություն, սուրբ գրքի մեկնություն, եկեղեցու պատմություն, դրա փոխարեն ազատվելով լատիներեն լեզվից և մաթեմատիկական ուրիշ առարկաներից։

Սակայն այդ բաժինը միայն ձևականորեն էր կրում հոգևոր անունը, ինչպես խոստովանում էր 1890 թ. ճեմարանի 75-ամյակին նվիրված զեկուցման մեջ ճեմարանի տեսուչ Գևորգ Քանանյանը. առաջադրված նպատակը չէր իրագործվում, քանի որ ո՛չ ուսուցման ծրագիրը, ո՛չ նրա ձևը, ո՛չ սաների կենցաղը չէին համապատասխանում նպատակադրված խնդիրներին, և հոգևոր բաժինն ավարտողները մյուսների հետ միասին մտնում էին պետական ծառայության, իսկ ավելի հաճախ՝ բարձրագույն ուսումնական հաստատություններ։

Ռափայել Պատկանյանը հոգևոր բաժնի առաջին սաներից էր[13]։ Այն դասարանը, որտեղ նա սովորում էր, ուներ ընդամենը երկու հոգևոր աշակերտ. Ռափայել Պատկանյանը՝ Ն. Նախիջևանից և Ալեքսանդր Ջիմիչկյանը՝ Թիֆլիսից։ Ուրեմն, պետք է ենթադրել, որ Ռ. Պատկանյանը մյուս աշակերտների հետ միասին անցել է բոլոր առարկաները, մանավանդ, որ հետագայում բժշկական ֆակուլտետ ընդունվելու ժամանակ նա հաջողությամբ հանձնել է լատիներենի քննությունը։

Ազատ կյանքից հետո դպրոցի չորս պատերի մեջ պարփակվելը, անկասկած, մեծ դժվարությունների ու ապրումների հետ էր կապված։ Պահպանվել են տեղեկություններ, թե Քերովբե Պատկանյանը ինչպիսի տառապանքներով է համակերպվել դպրոցի խստագույն կարգապահության և ներպարփակ կյանքին, թե ինչպես մի քանի անգամ փորձ է արել փախչել և ամեն անգամ բռնվելուց հետո ինչպիսի խիստ պատիժների է ենթարկվել[14]։

Ռափայել Պատկանյանի ավելի ըմբոստ բնավորությունը, դյուրագրգռությունը, հաճախակի ծայրահեղ հոգեվիճակներում լինելը, ինչպես նաև նրա նամակներում պահպանված հատ ու կտոր արտահայտությունները մանկական հասակում կրած տառապանքների մասին, մեզ իրավունք են տալիս մտածելու, որ ակամա պանդուխտը իր հորեղբորորդու նման երկար ու ծանր հոգեկան պայքարից հետո է միայն սակավ առ

[13] Մեկ տարի առաջ հոգևոր բաժինն էին ընդունվել Համբարձում Փափազյանը և Գրիգոր Աղափիրյանը։

[14] Տե՛ս Н. Веселовский, Керопэ Петрович Патканов. С. Петербург, 1900, стр. 8.

սակավ սկսում ընտելանալ իր նոր կյանքին։ «Քերո՛բ, ուրանա՞լ յուր մանկական հասակի տանջանքը, մոռանա՞լ այն ստացած խոցերը, որ միանգամայն անբուժելի են...», գրում է նա հետագայում (VI, 364)։ «Աստված օրհնե քեզ ամեն զգացածիդ և գրածիդ համար,—իր նամակներից մեկում Քերովբե Պատկանյանը գրում է Ռափայելին,— Թող քո զավակներդ առավել բարի մանկություն վայելեն, քան ես և դու և մերձավորաց սերը օտար բան չլինի նոցա համար, ինչպես ինձ և քեզ»[15]։ Սուր կերպով զգալով փոքրիկ որբուկների անմխիթար հոգեվիճակը, Ռ. Պատկանյանը շատ տարիներ անց նամակով դիմում է Գրիգոր Խալաթյանին Լազարյան ճեմարանում ուսանող իր որդուն այցելելու և նրան փոքր-ինչ զվարճացնելու խնդրանքով։ «Որդիս Լազ<արյան> ճեմարանի աշակերտ է, տարիքով շատ փոքրիկ և ակամա պանդուխտ։ Եթե երբեմն ազատ րոպեներ ունենաք, խնդրում եմ, այցելե՛ք նորան և քանի մի քաղցր խոսքով ամոքեցե՛ք նորա անմխիթար դրությունը» (VII, 70)։

Սակայն անցնում են ամիսներ և ժամանակը սպեղանի է դնում մանուկի հոգուն։ Տարվելով ավանդվող առարկաների հետաքրքրությամբ, մասնավորապես երիտասարդ ուսուցիչ Մկրտիչ Էմինի դասախոսություններով, նա սկսում է հաճույքով պարապել, «ամբողջապես կուլ տալով» նրա ասածները և օրերով ու շաբաթներով ընկերական զրույցի ու վիճաբանությունների առարկա դարձնելով դրանք։

Բայց շուտով վերահաս ցավալի դեպքը դարձյալ ծանր հարված է հասցնում ինքնասեր մանուկի սրտին և խոր հիասթափություն առաջացնում դեռևս հոր ջանքերով և իր ամբողջ էությամբ ստեղծած կուռքի Մկրտիչ Էմինի նկատմամբ, հիասթափություն ու զայրույթ, որն ուղեկցեցին նրան ամբողջ կյանքի ընթացքում։ Հիասթափության պատճառն հետևյալն էր. 1843 թ. ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվեց Ներսես Աշտարակեցին և Պետերբուրգից Էջմիածին վերադառնալու ճանապարհին կանգ առավ Մոսկվայում։ Լազարյան ճեմարան այցելած ժամանակ նա հատուկ հետաքրքրություն ցուցաբերեց Գաբրիել Պատկանյանի որդիների առաջադիմության ու վարքի վերաբերյալ և լսելով ամենաբարենպաստ կարծիքներ, կասկած հայտնեց սրալեզու ու ըմբոստ տերտերի որդիների օրինակելի լինելու մասին։ Ճեմարանի տեսուչ Մկրտիչ Էմինը ցանկանալով սիրաշահել կաթողիկոսին, շտապեց համաձայնել նրա հետ և պախարակել Պատկանյան եղբայրների անհնազանդությունը։ Կաթողի-

15 ԳԱԲ, ՌՊՖ, № 1006։

կոսի հատուկ պահանջով Հովհաննես և Ռափայել Պատկանյանները տեսուչի հրամանով հեռացվեցին ճեմարանից և պատիժների ու նվաստացումների ենթարկվելուց հետո միայն վերականգնվեցին։ Ի դեպ, վախենալով հայտնել հորը այս մասին, նրանք կրկնակի տվայտանքների են ենթարկվում, տառապելով անորոշության մեջ։ Ահա թե Գաբրիել Պատկանյանը իր «Հիշատակարան»-ում ինչպես է նկարագրում այդ դեպքը. «Տեր Գաբրիելն հայտնի տեսավ, որ Ներսեսի դիտավորությունն է նրան աղքատության մեջ ճնշել, հանդերձ երեք զավականք, երկու դստերոք Սոփիա և Վարվառե և մի որդվով՝ Վահագն—որովհետև մի դուստրն հարսնացել էր, իսկ երկու որդիքն կոսանեին Լազարյանց ճեմարանի մեջ ի Մոսկով, և տակավին չգիտեր, որ Ներսես երբ այցելության է գնացել ճեմարանին և մեծամեծ զրվոլություններ է լսել տեր Գաբրիելի երկուց որդվոց համար, Հովհաննեսի և Ռափայելի և սկսել է նոցա վերա ևս հարձակել, թե նորա որդիք լավ չպիտի լինին. այս միջոց հնդկաստանցի էմինն հառաջ է եկել և ասել՝ ծառա եմ վեհափառությանդ, նոքա շատ անհնազանդ են. վեհափառն իսկույն հրամայել է, որ արտաքսեն։ Այս երկու որբուկներն չէին համարձակել յուրյանց հորն ծանուցել, ինչ նեղություններ են կրել, այն միայն աստծուն է հայտ. վեհափառն յուր այս մարդասիրական սխրագործությունն մի օր ինքն հայտնեց»[16]։ Թե ինչքան խորն է խոցել մանկան սիրտը այս անարդարությունը, ինչպես տառանել նրա հավատը լավի, արդարի, վեհի նկատմամբ, կարելի է նկատել նրա նամակային ժառանգության մեջ սփռված բազմաթիվ զայրացական արտահայտություններից էմինի անձնավորության, նրա դաստիարակչական գործի ու ձևերի նկատմամբ։ Ստացած հարվածը Պատկանյանը համարում էր իր կյանքի առաջին մեծ ցնցումը. «Երանի թե այս վերջին հարվածը լիներ... որո սկիզբը էմինը արավ» (VI, 351),—բացականչել է նա շատ տարիներ հետո։ «Եթե դու ուզում ես նորան մահաբեր հարվածներ տալու,— գրում է նա Քերովբե Պատկանյանին 1874 թ.,— հարվածներ պիտի տաս ինչպես վարժապետի, ինչպես դաստիարակի, ինչպես մանկավարժի, այս է նորա խոցելի տեղերը...»[17]։

Սակայն մի առ ժամանակից հետո մոռացվում է այս փոթորիկը, և դպրոցական կյանքը մտնում է իր հունի մեջ։ Մկրտիչ էմինի հետաքրքրաշարժ, բազմակողմանի ու գրավիչ դասաժամերը միանգամայն կլանում են պատանի Ռափայելի ուշադրությունը։ Երկրորդ դասարանում արդեն էմինը իր սաներին ծանոթացնում էր չորս ավետարանների

[16] «Հիշատակարան», էջ 242։

[17] ԳԱԹ, ՌՊՖ, № 270 (նամակն անտիպ է)։

և գործ առաքելոցի հետ, երրորդում անցնում Աստվածաշնչի «Գիրք Ծննդոց»-ը, «Դանիելի մարգարեությունը», «Գիրք Հովբա»-ն, չորրորդում՝ Գաբրիել Այվազովսկու «Օսմանյան պատմություն»-ը, իսկ վերջին երկու դասարաններում աշակերտները ազատորեն և գրեթե առանց բառարանների կարողանում էին կարդալ և հասկանալ Եղիշեի «Վարդանանց պատմություն»-ը, Խորենացու, Փավստոսի պատմությունները, Հոմերոսի «Իլիականի» թարգմանությունը, Գեսների «Մահ Աբելին»-ը, Ֆենելոնի «Տելեմաք»-ը, Միլտոնի «Դրախտ կորուսյալ»-ը և շատ ուրիշ հայ հեղինակների գործեր ու ընտիր թարգմանություններ (V, 158)։ Հիմնական նյութից զատ, Էմինը իր սաներին ծանոթացնում էր ժամանակակից ռուս և եվրոպական գրականության հետ, դասերի ընթացքում կարդում Պուշկինի, Լերմոնտովի, Կռիլովի ստեղծագործությունները, ծանոթացնում Շիլլերի, Ուլանդի պոեմների հետ, առաջարկում թարգմանություններ կատարել չափածո գործերից։

Ռուս և եվրոպական հեղինակների գործերից բացի, Էմինը առաջին անգամ իր աշակերտների առջև բացեց հայ ժամանակակից բանաստեղծության դյութիչ աշխարհը, որտեղ առանց դժվարության կարելի էր հասկանալ ամեն բառ, ձուլվել բանաստեղծական տողերի հետ։ Դրանք Նահապետի երգերն էին։ Թե ինչպես էին քանդակվել Ռափայելի հոգում բանաստեղծական այդ հրաշալի տողերը, որի դյուրըմբռնելի լեզուն մի հայտնություն էր այդ տարիներին, կարելի է եզրակացնել նրանից, թե ինչպես տարիներ անց Թիֆլիսում նա տեսնելով արևածագը, մտաբերել էր Ալիշանի «Հայ հայրենիք» բանաստեղծության մեջ նկարագրված պատկերը և բանաստեղծությունը ստեղծողի պես, երևակայության ուժով, Հայաստանից հեռու իրեն զգացել Հայաստան աշխարհում. «Քանի՜ անգամ, ասում եմ, քեզ անծանոթ օդաբաժնի (կլիմա) տակ վայելել եմ Հայաստանի արևածագը.

A II 64641

Ահա ելնէր արևն յամպոյ
Վարդ կու թափէր յամայն Հայոց.
Յօղըն տեղայր զով ու սիրուն
Ջինչ մարգարիտ ի սատափուն
Կարմիր կանաչ ծին ծիրանի
Գոտի ածուէր Հայաստանի (VI, 35),—

գրել է նա 1851 թ., Թիֆլիսից Դորպատ, իր հոգեհարազատ բարեկամին՝ Քերովբե եղբորը, որի հետ միասին երկար ու ձիգ ամառային երե-

կոնների հափշտակությամբ կարդացել ու զմայլվել էին Նահապետի երգերով։

Միայն մատչելի երգերը չէին, որ հիացում էին պատճառում մանուկներին. Եղիշեի, Խորենացու, Փավստոսի, Փարպեցու նկարագրած պատմական իրադարձությունները հմուտ մանկավարժի մատուցմամբ դառնում էին ժամանակակից դեպքեր, ոգևորելով ու վրեժի կոչելով մանկական վառվռուն հոգիները, հպարտությամբ ու պարծանքով լցնելով նրանց սեփական ժողովրդի ու նրա ծոցից ելած հերոսների հանդեպ (V, 164)։

Առանձնապես ցնցող տպավորություն գործեց սաների վրա Նահապետի «Պլպուլն Ավարայրի» պոեմը, որը փառաբանում էր Ռափայելի համար մանկությունից այնքան թանկ ու նվիրական Վարդանանց հերոսամարտը, հիշեցնում հոր շարադրած երկարաշունչ երկասիրությունները, որոնց համեմատությամբ այս նոր լսածը, անկասկած, ավելի հասկանալի էր, ավելի մտերմիկ, ուրեմն և ավելի ներգործող։

Ջրավականանալով դասերի ընթացքում տված գիտելիքներով, Էմինը աշխատում էր նաև դասերից դուրս մանուկների միտքը կրթել, նրանց զրույցներին տալ հատուկ, ընդգծված ազգասիրական ուղղություն, նրանց տենչանքների առարկան դարձնելով նախնի հերոսների առաքինությունները (V, 159)։

Ճեմարանում «աներևութաբար» թագավորող հայկական ոգին սաներին դարձնում էր հայրենասեր, նախապատրաստում նրանց հայ ազգային կյանքին նվիրվելուն. «...Հայոց շահերը թանկ էր մեր սրտերին, մենք զարգանում էինք հայկական դրականության մեջ, մեր իդեալները միայն մեր նախնիքն էին, առաքինության օրինակներ մենք որոնում էինք և գտնում էինք մեր պատմության մեջ, լայն հոսանքով ծծում էինք հայկական օդը ճեմարանի մեջ և միայն հայ գործողներ լինելու համար էինք պատրաստվում»,— հիշում է հետագայում Ռափայել Պատկանյանը (V, 160)։ Եվ հենց դրա շնորհիվ Պատկանյանի ճեմարանական ընկերներից շատերը նվիրվեցին հայ ազգային մշակույթը զարգացնելու գործին, հիմք դրեցին հայ նոր պոեզիայի զարգացմանը, դարձան նորաբողբոջ հայ ազգային կյանքի նախակարապետներ։

Այն դասարանը, որտեղ սովորում էր Ռ. Պատկանյանը և նրանց նախորդ դասարանը հայ մշակույթին պարգևեցին այնպիսի գործիչներ, ինչպիսիք էին Վահան Ասկարյանը, Գևորգ Դոդոխյանը, Գևորգ Միրիմանյանը, Համբարձում Փափազյանը, Գրիգոր Աղափիրյանը, Միքայել Միանսարյանը, Անանիա Սուլթան-Շահը, Ռափայել Պատկանյանը, Քերովբե

Պատկանյանը, Պետրոս Սիմեոնյանը, Մարկիանոս Ռոտինյանը և շատ ուրիշներ։ «Չեմ կարող ասել, որ պարոն Էմինի այն միջոցի աշակերտքս մեր մայր-Հայաստանի համար շնաշխարհիկ էակներ հանդիսացանք, ո՛չ. բայց այն համարձակ կարող եմ ասել, որ մեզ նման հայկական շահերին անկեղծ մտերիմ խումբ էլ մյուս անգամ չտեսավ մեր հարազատ հողը։ Փափազյան, Աղափիրյան, Ասկարյան, Միրիմանյան, Ռոտինյան, Սիմեոնյան, Միանսարյան, Քերովբե Պատկանյան և այլն և այլն, աննշան և անհետք չմնացին հայկական կյանքին մեջ» (V, 158)։ Չնայած այն հանգամանքին, որ հիշատակված աշակերտներից շատերը սովորում էին այլ դասարանում, սակայն դասերից հետո ամբողջ օրը միասին անցկացնելով, նրանք հաղորդակից էին լինում միմյանց խոհերին ու մտորումներին, միասին նախապատրաստվում հետագա գործունեության համար։ Բացի դրանից հոգևոր բաժնի հավելյալ դասերի ընթացքում Ռափայելը մոտիկից շփվում էր Համբարձում Փափազյանի և Գրիգոր Աղափիրյանի հետ, որոնցից առաջինը բանաստեղծի համբավ էր վայելում ճեմարանում, իսկ երկրորդը՝ փայլուն հռետորի։

Բացի հայոց լեզվից և գրականությունից, որն այնպես փայլուն կերպով վարում էր երիտասարդ գիտնական Մկրտիչ Էմինը, աշակերտները ուսանում էին հայ եկեղեցու պատմություն և կրոն (Մսեր Մսերյան), ընդհանուր պատմություն և Ռուսաստանի պատմություն (Գրիֆցով), ռուսաց լեզու և գրականություն (պրոֆ. Ջինովև), մաթեմատիկա և ֆիզիկա (Նովիցկի), աշխարհագրություն և վիճակագրություն (Գրիֆցով), լատիներեն (Մենշչիկով), թուրքերեն և արաբերեն (Շահումով), պարսկերեն (Տավրաշև), ֆրանսերեն (Պետերման և Կուրտիներ), գերմաներեն (Յանիաու և Վերներ)[18]։ Հանրակրթական առարկաների հետ զուգընթաց դպրոցում դասավանդվում էր երգ, երաժշտություն և եվրոպական պարեր[19]։

Ընթերցասիրությունը շատով ամբողջապես կլանում է Ռափայել Պատկանյանին։ Հատկապես ամառային արձակուրդների օրերին շատ ժամանակ էր լինում տրվելու սիրած զբաղմունքին, երբ ամբողջ օրերով այգում նստած կարելի էր կարդալ անհագ հետաքրքրությամբ։ Ճեմարանի աշակերտները հազվադեպ էին հնարավորություն ունենում արձակուրդներին հայրենիք մեկնելու և այն պատճառով էին վարժվում մեկուսացմանը, որ քաղաք դուրս գալիս չէին կարողանում տանել մարդաշատ

[18] Լազարյանների արխիվ, թ. 117, վ. 156։

[19] Նույն տեղում, թ. 112, վ. 9։

փողոցները և աշխատում էին տեղ հասնել խուլ նրբանցքներում[20]։ Ճեմարանը ավարտելուց հետո դեռ երկար տարիներ Ռափայել Պատկանյանը լրիվ բավարարություն էր գտնում իր սենյակում զանազան գործերով զբաղվելով, չէր էլ աշխատում լիաթոք օգտվելու ազատ կյանքի ընձեռած հնարավորություններից։ Դորպատում նրա հարևան Ալեքսանդրը Ռոտինյանը նկարագրելով Ռափայելի կենցաղը, գրել է. «...Փակված կյանքին ընտելացած, սա Դորպատում էլ փոքր էր դուրս գալիս յուր խեղճ օթևանից, և ես միշտ գտնում էի նրան զանազան առարկաներով զբաղված»[21]։ Ցերեկները կարդացածները Ռափայելը հաճախ ոգևորությամբ պատմում էր ընկերներին ննջարանում. հուզվում գրքի հերոսների հետ, անմխիթար լալիս ու մազերը փետփետում նրանց դժբախտությունների ժամանակ։ «Ուխտավորք» Հաուֆին, (մի՞տդ է), որ ես սիրում էի վարժատնումը կարդալ և իմ ընկերներիս պատմել Օրբասանի պատմությունը» (VI, 191), հիշում է նա հետագայում։

Հորից ժառանգած լինելով նրա անզուսպ, ծայրահեղ հոգեվիճակների մեջ լինելու բնավորությունը, պատանի Ռափայելը ամեն մի երևույթ, լիներ դա կյանքում, գրականության մեջ, թե՛ իր երազների աշխարհում, ընկալում էր բուռն, անզուսպ, հախուռն կերպով։ «Կհավատա՞ս,— գըրել է նա հետագայում Քերովբե Պատկանյանին,— քու Մաղաքիան, Կիրակոսը և 1-ый Выпуск-ը կարդալիս, 44 տարեկան հասակումս, դառնակսկիծ լացել եմ, ինչպես որ երբեմն 16—18 տարեկան ժամանակս գիտեի լալ...» (VI, 370)։ «... Քու ամեն գրվածքը իմ սրտի մեջ մի նոր թունդ տալիս է,— գրում է նա մի այլ նամակում։— Առաջին նվագ մինչև ի մահ տրտմեցնում է, օրերով վերաս մելամաղձություն բերում է, ինքս ինձմեն անդոհունակ մնում եմ (ասես թե հայի ամեն աղետքի պատճառը ես էի), մազերս փետփետում եմ, հետո կամաց-կամաց թմրում եմ, հաշտվում եմ ինձ և պարագայից հետ» (VI, 395)։

Անզուսպ թե՛ սիրո մեջ, թե՛ ատելության, նա մերթ անվերապահորեն հիանում էր, մերթ մահու չափ զարշում և՛ իր մտերիմներից, և՛ գրքի հերոսներից, և՛ ուսուցիչներից։ Առանձնապես հաճախ էին անհամաձայնություններն ու «կռիվ»-ները, հորեղբորորդի Քերոբի հետ, որոնք տևում էին միայն մի քանի ժամ, քանի որ ինչքան արագ բոցավառվում էր Ռափայելի բարկությունը, այնքան էլ շուտ շիջանում էր այն, և միշտ ինքը առաջինն էր ձեռք մեկնում հաշտություն կնքելու (VI, 30—31)։ Ավելի լուրջ ընդհարումներ էին լինում նաև Համբարձում Փափազ-

[20] Տե՛ս Н. Веселовский, նշվ. աշխ., էջ 9։

[21] «Արձագանք», 1892, № № 108—110։

յանի, Մարկիանոս Ռոտինյանի, Գևորգ Միրիմանյանի ու Ռափայելի միջև, ընդհարումներ, որոնք նրան անհանգստություն էին պատճառում անգամ ճեմարանն ավարտելուց հետո։ Թափթփված, անկարգապահ, փոքր ու քոնը չտարբերող Ռափայելը երևի հիշյալ պատանիների զայրույթն էր շարժում նրանց գրքերի և ունեցվածքի հետ անփույթ վարվելու, կորցնելու, հետո էլ դեռ նրանց արդարացի պահանջների դեմ զայրանալու, զանազան երգիծական անուններ կպցնելու ու բարկության անտեղի բռնկումների համար։ «Փափազյանը, որ գրերով հարուստ է, տալի՞ս է քեզ կարդալու, թե առաջվա պես մահանաճի է», հարցնում է նա Թիֆլիսից Դորպատում սովորող Քերովբեին և ապա ավելացնում. «Փափազյանը, Ռոտինյանը, ես և Միրիմանյանը, որոնք լավ աչոք չէին միշտ մտիկ անում վրաս (ո՞վ գիտե ինչ պատճառի) ի՞նչ ասում են իմ գալուս համար (կարծեմ այս հարցմունքս միտդ բերի կկվի և սարյակի առակը, բայց ես քեզ այս հարցանելով իրավունք ունիմ մանրամասնաբար տեղեկանալ), կամ թե միանգամայն անունս տալու ժամանակ—...Ապա միտդ բեր 4, 5, 6 դասատունները, թեև տեղը փոխեցինք, տեսնենք, սրտերս էլ փոխեցի՞նք,... Իմ սիրտը վկայում է, կամ թե տեղվույս ոճով ասեմ՝ կուդիս ծվում է, վա՛յ թե առաջվա տեսարանները կրկնվում են, և որ կողմը ավել անզգամ է, լեզվագար է... Էլ չեմ ասիլ, դու լավ կըհասկանաս, թե ուզես» (VI, 30—31)։

Ձնայած ճեմարանում խստիվ արգելվում էր դաստիարակության նպատակին հակառակ գրականության ընթերցանությունը, սակայն, գիշերօթիկ սաները երբեմն աշակերտների օգնությամբ, կարողանում էին հնար գտնել շրջանցելու այդ խստությունները և մինչև ուշ գիշեր ննջարաններում կարդալ ու հուզվել, ընկալել ու իմաստավորել բազմաթիվ նոր ըմբռնումներ։ Կարելի է հաստատապես ասել, որ կոմունիզմ հասկացողությունը արդեն ծանոթ էր ճեմարանի բարձր դասարանի աշակերտական շրջաններին։ Հավանորեն այդ տարիներին մեծ տարածում գտած Կաբեի, այդ «ամենաժողովրդական, բայց և կոմունիզմի ամենամակերեսային ներկայացուցիչի»[22], «Ճանապարհորդություն դեպի Իկարիա» գրքի ընթերցումը որոշ պատկերացում էր ստեղծել այդ ուսմունքի վերաբերյալ։ Իր նամակներից մեկում նկարագրելով ճեմարանի նոր բացված լիցեյի դասարանները՝ Ռափայելը գրում է Դորպատում ուսանող Քերովբե եղբորը. «...Գլխավորը զարմանալի ընկերություն և communism մեջերը» (VI, 47)։

[22] Маркс и Энгельс, соч. 2-ое издание, т. 2, стр. 146.

Ռուս հարուստ գրականությունը, Պուշկինի ու Լերմոնտովի բանաստեղծական աշխարհը, Լոմոնոսովի, Բատյուշկովի, Գոգոլի, Տուրգենևի ստեղծագործությունները, Կարամզինի պատմական աշխատությունները, եվրոպական գրականության հրաշալիքներն ու հատկապես գերմանական ռոմանտիկական պոեզիան բազմաթիվ նորանոր զգացմունքներ ու հարցադրումներ էին արթնացնում խոհուն ու երազուն պատանու երևակայության մեջ։ Լազարյան ճեմարանի վերջին դասարաններում նրա հոգին սկսեցին փոթորկել մտորումները հարազատ գրականության վիճակի մասին, ուր չկար հայության ներկա ոգուն հարազատ որևէ ստեղծագործություն, իսկ թարգմանություններն էլ լեզվի պատճառով անհասկանալի էին, օտար։ Բուցե հենց այդ ընթերցանություններից հետո նա հայոց լեզվի կամ գրականության ժամերին իր տարակուսանքն է հայտնել միայն ոսկեղենիկ գրաբարով գրված երկերը իսկական գեղարվեստական գործ համարվելու վերաբերյալ, մտքեր հայտնել խոսակցական լեզվով գրականություն ստեղծելու հնարավորության և անհրաժեշտության մասին, իր վրա հրավիրելով ուսուցիչ Մկրտիչ Էմինի բարկությունը։ «Ասում ես, թե Էմինի վերա հանդարտ ու առանց կրից բորբոքելու խոսիմ, կարելի՞ է արդյոք...,— գրել է նա հետագայում Քերովբե Պատկանյանին։— Որքան դյուրին էր նորան նախ՝ ինքը սերտել և ապա՝ աշակերտներին սովորեցնել այն ամենը... ինչ որ դու այժմ թեթև ձեռքով անում ես։ Ի՞նչ ասել է աշակերտների ճաշակը նրբացնել միայն 5-երորդ դարու հեղինակների գրվածքի վերա, իսկ մնացածը արհամարհել. մինչ 5-երորդ դարը առավել հեռի է գրականական բնականությունեն, քան թե մնացյալ դարերը, մանավանդ 12-են հետո, որոց հեղինակները, ինչպես երևում է նոցա գրվածքեն, առավել լավ հասկացել են գրականության նպատակը, և նոցա անարվեստ պատմվածքի մեջ առավել հոգի և սիրտ կա, քան թե 5-երորդ դարու. եթե առաջինք կույր հետևողք էին եղծյալ կլասսիկականության, սոքա, գոնե, իրանց ճաշակը ոչինչով չաղճատած իսկական զուտ հայեր էին, հայոց լեզվի (եթե Էմինը թույլ ես տար, որ Խորենացին անպատճառ գրաբար խոսել է) աստիճան առ աստիճան տկարանալը և մինչև մեր օրերու աշխարհաբարի հասնելը չիպիտի նո՞րա միտքը ձգեր, որ գրաբար սովորեցնել և աշխարհաբարը հալածելը абсурд է. նա չիպիտի՞ հասկանար, որ գրաբարը անշարժություն, մեռելություն է, իսկ աշխարհաբարը՝ հավետ հառաջխաղացություն և կատարելագործություն...» (VI, 371—372)։

Մկրտիչ Էմինին նվիրված հուշերում անգամ, որը գրված էր նրա մանկավարժական և գիտական գործունեության հիսնամյա հոբելյանի

առթիվ և աչքի էր ընկնում իր դրվատական ոգով, Պատկանյանը զգուշորեն անդրադառնում է Էմինի գրաբարը պաշտպանելու և աշխարհաբարը մերժելու քաղաքականությանը. «Մի զարմանալի երևույթ,— գրում է նա,— որն մինչև այսու ինձ համար անլուծանելի առեղծված մնաց. պարոն Էմինը, ինչպես որ վերը հիշեցի, թեև ինքը հիանալի կանոնավոր, գեղեցիկ և մաքուր աշխարհաբար էր խոսում, բայց բնավ չէր խոստովանում և չէր ուզում ճանաչել նորա գոյությունը և նորա ժողովրդականության ընթացք և իրավունք տալու չէր աշխատում» (V, 165)։ Ճեմարանի երկրորդ դասարանում սկսված թշնամությունը Մկրտիչ Էմինի նկատմամբ ավարտական տարիներին նոր պոռթկում է ապրում թե՛ աշակերտի, թե՛ ուսուցչի մոտ, հասցնելով նույնիսկ փոխադարձ ատելության. «...Էմինը ինձ հեռաստանից ևս ատում է.— գրում էր Ռ. Պատկանյանը Թիֆլիսից, 1851 թ.,— իմ մեկ քանի աշխարհաբար ոտանավորներս կարդացել է լսարանի աշակերտաց առաջ և զանազան մեկնություններ տվել է նոցա, թե իմ միտքը կծողական է եղել» (VI, 37)։ Իսկ Էմինի նոր լույս ընծայած բարձրարժեք «Վեպք հնոյն Հայաստանին» գիրքը, որն, անկասկած, մեծ երևույթ էր այդ թվականներին, ոչ միայն չի ոգևորում Ռափայելին, այլ նրան թվում է «շատ զզվելի» (VI, 32)։ Ով գիտե, գուցե Էմինը չէր կարողանում ներել իր աշակերտի համարձակ կարծիքները աշխարհաբարի անհրաժեշտության վերաբերյալ, որը հասցնում էր ըմբոստությունների, գրաբարի դասերին անպատրաստ ներկայանալու ձևով, և այդ հակաճառությունների ու ընդվզումների ընթացքում ավելի ու ավելի էին լարվում նրանց հարաբերությունները ու հասցնում անբավարար գնահատականների։

Չնայած Ռափայելը դեռևս հոր դպրոցում բավականին հմտացել էր գրաբարի մեջ և ճեմարանում համարվում էր աչքի ընկնող աշակերտ, սակայն հետագայում Էմինի նկատմամբ ցուցաբերած կիրքը հուշում է մեզ, որ Ռափայելի վերջին տարվա անհաջողությունը պիտի կապված լիներ հենց Էմինի և ոչ թե այլ դասատուի հետ, և այդ լարված հարաբերությունները ոչ թե դասատուի և աշակերտի սովորական դժգոհություններ էին միմյանցից, այլ ավելի լուրջ պատճառների հետևանք. «Դու պիտի ասես,— խորհուրդ է տալիս նա հետագայում Քերովբե Պատկանյանին, երբ վերջինս բանավիճում էր Էմինի հետ,— դու ոչ թե հայ խոսքի մշակն ես, այլ հայ տաղանդների կործանիչ... Դու նույնիսկ խանգարել ես հայ պատանիներին ուղղակի գրագետ լինելու. հայոց լեզուն իմանալը, որ հարցի խելացի կազմակերպման դեպքում 2—3 տարվա գործ է, դու հասցրել ես եգիպտական խորհրդավոր ծիսակատարու-

թյան աստիճանի։ Դու Հնդկաստանի խորքերից Եվրոպայի կենտրոնը փոխադրեցիր կյանքի և գիտության վերաբերյալ քո ունեցած ասիական հայացքները...»[23]։ Թե՞ Ռափայելին քիչ էին հետաքրքրում ճշգրիտ գիտությունները, և նա ամբողջապես կլանված իր գրքերով ու մտորումներով, ուշադրության չէր արժանացնում դրանց։ Այսպես թե այնպես, վեցերորդ դասարանում նրա առաջադիմությունը խիստ նվազում է, և նա դասվում է ետ մնացող աշակերտների շարքը։

Հենց այդ ժամանակաշրջանում սերտ բարեկամություն է հաստատվում Ռափայել Պատկանյանի, Պետրոս Սիմեոնյանի, Քերովբե Պատկանյանի և մեկ դասարան իրենցից ցած Վարդան Կողբեթլյանի միջև։ Տղաները կապվում են միմյանց այնպես, ինչպես օտարության մեջ կարող են կապվել հարազատներից զրկված, սիրո կարոտ մատաղ սրտերը։ Եվ, հավանորեն, արդեն նրանց հոգիները խլխլում էին մի ինչ-որ գործունեության պահանջից, և երեխաները միասին բազմաթիվ ծրագրեր էին կազմում իրենց հետագա անելիքների վերաբերյալ, ցույց տալիս միմյանց նոր գրած բանաստեղծություններ՝ ճեմարանական այս կամ այն իրադարձության վերաբերյալ։ «Եվ մի՞թե կարելի է ինձ մոռանալ այն օրերը, որ ես ձեզ հետ եմ անցկացրել և որ ես առանց սրտիս հառաչանաց չեմ կարողանում միտս բերել,— գրում է նա Թիֆլիսից ճեմարանը ավարտող իր ընկերներին,— չգիտեմ դուք ինչպես եք, արդյոք փոխվել եք, արդյոք ձեր մտաց գաղափարներն ուրիշ ուղղություն առացան, արդյոք այն ժամերը, որ երբեմն միասին հավաքված զվարճության համարում ենք հիշել, ինչ մեզ միշտ ուրախարիթ եղել է, արդյոք, ասում եմ, էլ կկրկնվին...» (VI, 27)։

Պահպանվել են հիշատակություններ, որ Ռափայելը զարմանալի դիպուկ անուններ էր տալիս աշակերտներին և ուսուցիչներին[24], ծաղրական, երբեմն էլ կծու քառատող էր հորինում սրա ու նրա վրա, որի հետևանքով աշակերտներից ոմանք խուսափում էին նրա հետ մոտ հարաբերություններ ունենալուց։

Ռափայել Պատկանյանը ճեմարանում արդյոք գրե՞լ է բանաստեղծություններ, ամենայն հավանականությամբ այո՛, թեև նա աշակերտների մեջ բանաստեղծի համբավ չի ունեցել։ Այդ տարիների ճեմարանական բանաստեղծներն էին Վահան Ասկարյանն ու Համբարձում Փափազյանը,

---

[23] ԳԱԲ, ՌՊՖ, № 270 (նամակն անթիվ է)։

[24] Այդ անուններից հինգը հասել են մեզ. Մկրտիչ Էմինին՝ «Թզուկ», Վահան Ասկարյանին՝ «Դոն Քիշոտ», Քերովբե Պատկանյանին՝ «Բոշա», Պետրոս Սիմեոնյանին՝ «Լոշկոկոշ» և Տեր-Պետրոսյանին՝ «Մուղուս» (VI, 32, 36)։

տրոնց չափածո թարգմանությունները Մկրտիչ Էմինը զետեղում էր «Ընտիր հատվածք»-ի մեջ, և որոնք իրենց ինքնուրույն ոտանավորներով ողջունում էին վեհազնյա Լազարյանների այցելությունները ճեմարան։ Սակայն Ռափայելի մտերիմները ծանոթ են եղել նրա բանաստեղծական փորձերի հետ և անհամբերությամբ սպասել նրանից, իր տպավորությունների մասին չափածո նկարագրությունների, երբ նա 1849 թվականին մեկնել է ճանապարհորդության Մոսկվայից՝ Թիֆլիս. «Բազում ինչ տեսի յորէս հեռանալոյ իմմէ ի ձէնջ և լուայ, մանաւանդ յԱժտերխան, ուր զմնացեալ 9 աւուրս կոչեցի 9 աւուրք զուարճութեան, ընդ որոյ վերտառութեամբ ունիմ առաքել առ ձեզ զմնալն իմ յԱշտերխան» (VI, 9), (ընդգծումը մերն է — Մ. Ս.)։

Բացի այս «Ինն աւուրք զուարճութեան» վերնագրով բանաստեղծությունից, հիշատակություն է պահպանվել նաև «Ռոզալիա» անունով ոտանավորի մասին. «Եթե գրիս պատասխանը գրիս, քեզ խոստացած բանս կղրկեմ, որ լավ պատրաստած եմ» (VI, 20), հայտնում է նա Քերովբե Պատկանյանին, Ռոզալիա օրիորդի մասին ձոն գրելու խոստումից անմիջապես հետո։

Բացի իրենց հետագա անելիքների ծրագրերից ու բանաստեղծություններ հորինելուց, տղաները զանազան երգեր են հավաքում ռուսերեն, ֆրանսերեն և գերմաներեն լեզուներով, սովորում նրանց եղանակները և զվարճանում այդ աշխարհիկ երգերի կատարումով, ամենայն հավանականությամբ երազելով նրանց նմանությամբ նաև իրենցը՝ հայկականը ստեղծելու մասին։ Իր ճանապարհորդության ընթացքում Ռափայելը անընդհատ խնդրում էր ընկերներին իրեն ուղարկել տարբեր երգերի խոսքեր, ինչպես ռուսերեն, այնպես էլ ֆրանսերեն։ Թիֆլիսում ստեղծելով իր «Ջարմայր նահապետի մահը» պոեմը, Ռափայելը շտապում է այդ երկարաշունչ չափածո ստեղծագործությունը վերածել երգի և նախատեսում նրա համար «Уж как в поле туман» ռուսական երգի եղանակը (VI, 32)։

Չնայած ընկերական հավաքույթների քաղցրությանը, Ռափայելը ուսումնառության վերջին տարում կրած անհաջողությունների հետևանքով ամբողջ հոգով սկսում է տենչալ ճեմարանական փակ կյանքից ազատվելու և ինչ-որ գործունեություն սկսելու մասին[25], որի մասին և հայտնում է հորը։ Վերջինս խորհուրդ է տալիս դասընթացը ավարտելուց

[25] «Ես որ գամ, իմացիր, որ ամեն բանե, ինչ որ ես անձկությամբ 2 տարի առաջ սպասում էի, կշտացած հափրուցած եմ գալի»,— գրում է նա Թիֆլիսից Քերովբեին (VI, 27)։

հետո մեկնել իր մոտ՝ Թիֆլիս, նախատեսնվելիք «Արարատ» շաբաթաթերթի աշխատանքներին օգնելու և Ներսիսյան դպրոցում պաշտոնավարելու համար։ Սակայն անբավարար առաջադիմության պատճառով Ռափայելը զրկվում է ավարտական քննություններին մասնակցելու իրավունքից։ Անհաջողության են հանդիպում նույն դասարանից նաև երեք այլ աշակերտներ՝ Ավետիք Ծղյանը, Գաբրիել Ասատրյանը և Վասիլի դե Լազարին։ Առանց դասընթացը լրիվ ավարտելու, 1849 թ. օգոստոսի 1-ին Ռափայել Պատկանյանը թողնում է Լազարյան ճեմարանը և Մոսկվայից Նիժնի-Նովգորոդի Մակարիայի տոնավաճառը մեկնող հայ վաճառականների հետ մեկնում սկզբում Մակարիա՝ այնտեղից Թիֆլիս անցնելու և անհապաղ հայրենանվեր գործունեության լծվելու մտադրությամբ։ Հոր անբավականությունից խուսափելու համար նա մտածում է առժամանակ ոչ ոքի չհայտնել իր ձախորդության մասին (VI, 39)։ Շուտով, սակայն, ճեմարանի ուսուցչական խորհուրդը որոշում է ընդունում, նկատի ունենալով դասընթացը չավարտած սաների ընդհանուր առաջադիմությունը, տալ նրանց ավարտական վկայականները[26], որը լրիվ իրավունք էր ընձեռում մտնելու բարձրագույն ուսումնական հաստատություններ, ինչպես նաև պետական ծառայության անցնելու ժամանակ ստանալու 12-րդ աստիճան։ Ռափայելից առաջ հոր պահանջով Թիֆլիս էր եկել և անցել պետական ծառայության նաև նրա ավագ եղբայր Հովհաննեսը։ Այսպիսով, Պատկանյանների ընտանիքը երկար տարիների անջատումից հետո, 1850 թ., հավաքվում է Թիֆլիսում, միատեղ բնակության համար։

---

[26] Այդ առթիվ ճեմարանի արխիվում պահպանվել է հետևյալ սևագիր փաստաթուղթը՝ «Դասընթացը չավարտած աշակերտներին վկայականներ տալու մասին», ուր ասվում է. «Լազարյանների սաներ՝ Էզովի, Ասատուրովի, յուրածախս դե Լազարիի և հոգևոր Պատկանովի վերաբերյալ անել այն, ինչ վճռված է խորհրդում նույն որոշման 3-րդ հոդվածում» (ГИАМО, ֆ. 213, ց. 12, գ. 2616)։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԱՌԱՋԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԴԵՊԻ ՆԻԺՆԻ-ՆՈՎԳՈՐՈԴ, ԱՍՏՐԱԽԱՆ, ՍՏԱՎՐՈՊՈԼ ԵՎ ԹԻՖԼԻՍ

Օգոստոսի 1-ին դուրս գալով Մոսկվայից փոստային կառքով, նույն ամսի 4-ին Ռափայելը Մոսկվայի հայ վաճառականների հետ միասին հասնում է Նիժնի-Նովգորոդի Մակարիայի տոնավաճառը և մնում այնտեղ մինչև սեպտեմբերի 8-ը։ Այդ տարի, հավանորեն, զբաղված լինելով «Արարատ» շաբաթաթերթի հրատարակության գործերով, Ռափայելի հայրը չէր այցելել Մակարիայի տոնավաճառը, որտեղ նա սերտորեն կապված էր հայ առևտրականների հետ և մեծ հեղինակություն էր վայելում նրանց շրջաններում, որպես քաջ ռուսախոս և սուր մտքի տեր մարդ։ Բայց նրա փոխարեն Ստավրոպոլից տոնավաճառ էր ժամանել Ռափայելի հորեղբայրը՝ Պետրոս Պատկանյանը։ Հոր կարգադրության համաձայն Ռափայելը տոնավաճառից անմիջապես պիտի մեկներ Ն. Նախիջևան և ապա անցներ Թիֆլիս։ Սակայն նրան ուղեկցող վաճառականները, որոնց հանձնարարված էր պատանու համար հագուստ պատվիրել և հետո ճամփել տուն, զբաղված լինելով իրենց առևտրով, անքաթող էին արել այդ կարևոր հանգամանքն ու սթափվել միայն տոնավաճառի վերջերին, երբ նախիջևանցի վաճառականները վերջացնելով իրենց առևտուրը մեկնել էին հայրենիք։ Զրկվելով հարմար ուղեկից, Ռափայելը որոշում է մեկնել ուղիղ Թիֆլիս, սակայն ճանապարհածախսի համար Թիֆլիս մեկնողների պահանջած գումարի չափը սարսափեցնում է պատանուն, և նա անսալով հորեղբոր խորհրդին՝ այն է նավով Աստրախան մեկնող վաճառականների ապրանքներին ուղեկից դառնալով ազատվել ճանապարհածախսից և իր հետ մի երկու շաբաթ անցկացնելով յուրայինների շրջանում, այնտեղից Մոզդոկի վրայով անցնել Թիֆլիս, սեպտեմբերի 8-ին վաճառական Շադինյանի ապրանքի հետ նստում է «Սամփսոն» նավը և Վոլգայի վրայով ուղևորվում դեպի Պատկանյանների «նախկին հայրենին»՝ Աստրախան։ 1849 թ. սեպտեմբերի 27-ին նա-

վը խարիսխ է գցում Աստրախանում, ուր մեկ օր առաջ ոտք էր դրել «Սամարա» նավով ժամանած նրա հորեղբայրը։

Երկար տարիներ հարազատների գուրգուրանքներից զուրկ պատանու համար նրազի պես անցան Մալալ մեծ մոր, Կատարինե հորաքրոջ, մորաքույրների ու նրանց զավակների հոգատարությամբ շրջապատված այն օրերը, որ նա անցկացրեց Աստրախանում։ «Եթե ձեզ պատահել է երբևիցե երկար հեռանալեն ետև և երկար սպասելեն՝ տեսնվել ծնողաց կամ բարեկամաց հետ, ինարկե կարող եք իմանալ ինչ զգաց այն վայրկյանին իմ սիրտս, որ ժամանակ տեսա ալևորված մեծ մորս, անթիվ տղոտյաներուս, իրենց որդիներուն և աղջկաց... Բայց չեմ ուզում մանրամասնաբար գրել ամեն մանր-մունր պարագաները... Միայն այս իմացեք, որ 9 օր, որ մնացի Հաշտարխան, այնպես երևցավ, ինչպես որ 9 սահաթ, և ևս քիչս, այնպես ուրախ էի» (VI, 11)։

Իջևանելով իր հորաքրոջ՝ մեծահարուստ Կատարինե Բալեյանի տանը, նա հնարավորություն ունեցավ շփվելու Աստրախանի հայկական գաղութի վերնախավի հետ։ Այցելեց իր մորաքույրների տները, տեսավ քաղաքի տեսարժան վայրերը։ Առաջին բանը, որ հաճելի զարմանք պատճառեց նրան, դա տեղացի հայ օրիորդների կրթության աստիճանն էր։ Նրանցից յուրաքանչյուրը խոսում էր մի քանի օտար լեզուներով (հաճախ ֆրանսերեն և գերմաներեն), նվագում դաշնամուրի վրա։ Բոլոր տներում թագավորում էր նույն կենցաղը, հարուստ լինեին տանտերերը, թե չունևոր, միևնույն է... «Մեկ բան շատ զարմացուց ինձ Հաշտարխանի հարկինքի մեջ, ինչ կերպ մեկը, ինարկե, իմացիր որ մյուսն էլ նույն կերպը, թեև մեկ մեկե զանազան լինեն հարստությունով» (VI, 11),— գրում է նա իր ընկերներին Մոսկվա, մանրամասնորեն նկարագրելով այն բազմապիսի քաղցրավենիքները, որ նրան Կոլյովի «Դեմյանովա ուխա»-ի Ֆոկայի պես ստիպում էին ուտել ամեն տեղ։

Ռաֆայելի ուշադրությունն է գրավում նաև Աստրախանի բարբառը, որտեղ շատ բառեր այնպես չէին արտասանվում, ինչպես իր իմացած խոսակցական լեզվում (օրինակ ունևորին հարուստ չէին ասում), և օտարոտի հնչում նրա ականջի համար։

Աստրախանում անցկացրած այդ 9 օրերը այնպիսի հաճելի տպավորություն են գործում Ռափայելի վրա, որ նա որոշում է այն հավերժացնել չափածո տողերով և գրում իր անդրանիկ ոտանավորներից մեկը «Ինն աւուրք զուարճութեան»-ը, առաքելով այն Մոսկվա ընկերներին (VI, 9)։

Հոկտեմբերի 7-ին Պետրոս Պատկանյանի հետ ցամաքային ճանապարհով դուրս գալով Աստրախանից և 17 օր կալմիկական ավազուտ տափաստաններով և Կովկասյան լեռներով անցնելով, ճանապարհներին ավազակությամբ զբաղվող թաթարների և նրանց հետ համագործակցող սայլապանների երկյուղից աչք չբացելով, հոկտեմբերի 24-ին մտնում են Մոզդոկին։ «Օ՜, ես հիմա արևէ անցած մարդ եմ դառել (չծիծաղես),— հպարտանում է նա Քերովբեի առջև,— ի՞նչ տեղ չիգնացի, ի՞նչ չիտեսա, ի՞նչ չլսեցի. մեկ՝ սրընթաց կառքը դեպի տոնավաճառ էր տանում ինձ, մեկ՝ շոգենավը մեր նախկին հայրենիքը, մեկ՝ ղալմուխի սայլը ավազուտ անապատե էր անցնում, մեկ՝ հավատադրուժ պարսիկ սայլապանը մազը մնացած գերության էր մատնում քու բարեկամիդ» (VI, 34)։

Նոյեմբերի 6-ին դուրս գալով Մոզդոկից և ճանապարհին մեկ օր կանգ առնելով Յազսաք (Գեորգիևսկ) քաղաքում, նոյեմբերի 9-ին, երեք և կես ամիս ճանապարհորդելուց հետո Ռափայել և Պետրոս Պատկանյանները մտնում են Ստավրոպոլ։

Ստավրոպոլում շուտով կյանքը մտնում է սովորական հունի մեջ, և երկար տարիներ ընտանիքից կտրված Ռափայելին թվում է, թե ինքը չի էլ բաժանվել հարազատներից. նույն երգերը, նույն կիրակոց-կիրակի կարմիր շապիկները, եկեղեցի գնալը, տոն շնորհավորելը, նույն միակերպ, խաղաղ կենցաղավարությունը։ Մոսկվայից մեկնելուց առաջ տեղի հայոց եկեղեցու սարկավագ Հարություն Կեռքչյանը խնդրել էր Ռափայելին Ստավրոպոլ, Թիֆլիս և այլ հայաշատ վայրեր հասցնել իր թարգմանած և կազմած «Ծաղկաքաղ յառակաց Քռիլովի, Տմիթրիևի և Խեմնիցերի» գիրքը, որը նրա հորեղբայրը անմիջապես սկսում է օգտագործել դպրոցի ստորին դասարաններում։ «Խնդրեմ քեզմե, որ ասես հայր սարկավագին, որ տեր հայրը ստացավ խրկած «Ծաղկաքաղը» և շատ շնորհակալ կեցավ։ Տեղիս հասարակությունը շատ հավանել է, և մանր հայոց աշակերտները ամենը բերանք առած են» (VI, 13),— գրում է նա Քերովբեին։ Հավանորեն նույն նպատակի համար պիտի օգտագործվեր նաև Գաբրիել Այվազովսկու «Օսմանյան պատմություն» ստեղծագործության II հատորը, որը Ռափայելը խնդրում է ընկերներին անհապաղ ուղարկել իրեն, հիշելով Մկրտիչ Էմինի դասավանդման ձևը։

1850 թ. օգոստոսի 10-ից Ռափայելը արդեն հոր միջնորդությամբ ստանձնել էր Ներսիսյան դպրոցի ստորին դասարանների ռուսաց լեզվի ուսուցչի պաշտոնը և դպրոցի վերակացուի պարտականությունները 150 ռուբլի տարեկան ռոճիկով։ Միաժամանակ, Գոլովինյան փողոցում

Գաբրիել Թամամշյանի նորաշեն թատրոնի դիմացը գտնվող Տեր-Ասատուրյանի տանը եղող իրենց բնակարանում, հոր հետ միասին աշխատանքից հետո մինչև ուշ գիշեր կարգի էր գցում տպարանը, դասդասում տառերը, որի մի մասը փոխ էր առնված Ներսիսյան ուսումնարանի տպարանից, իսկ մյուս մասը պահպանվել էր տակավին 1827 թվականից՝ Աստրախանում միսիոներներից գնած մայրերից։ Բացի դրանից, Թիֆլիսի բազմաթիվ պատվավոր քաղաքացիներ, ինչպիսիք էին Գաբրիել, Գևորգ, Դավիթ Թամամշյանները, Եգոր·Փիթոյանը, Երեմիա Արծրունին, Սողոմոն Քաթխուդյանը և շատ ուրիշներ, ցանկանալով շարունակել իրենց քաղաքում ընդհատված «Կովկաս» լրագրի գործը, մեծամեծ աջակցություններ էին ցուցաբերում նորաստեղծ տպարանը ապահովելու գործում։

Չնայած այն հանգամանքին, որ Ներսես Աշտարակեցին անսալով դպրոցի հոգաբարձուների և մասնավորապես Դավիթ Խերոդինյանի բազմաթիվ խնդիրներին, 1850 թ. հունվարից Ներսիսյան դպրոցի տեսչի պաշտոնակատար էր կարգել Գաբրիել Պատկանյանին, դարձյալ անվստահությամբ էր վերաբերում նրան, իր առջև պատասխանատու համարելով միայն հոգաբարձությանը և ոչ տեսչի պաշտոնակատարին։ Չկար դեռևս հայրապետական կոնդակը՝ նրան իր պաշտոնի մեջ հաստատելու վերաբերյալ։ Աշտարակեցու անբավականությունն էր շարժում նաև «Արարատ»-ի տպագրության հապաղումը, և նա դպրոցի կրոնուսույց Սահակ Սահառունուն հրամայում էր Գաբրիել քահանայից ետ վերցնել դպրոցի տպարանից տրված տառերը[1]։

1850 թ. սեպտեմբեր ամիսը ամենաերջանիկ ամիսներից էր երիտասարդ Ռափայելի համար։ Սկսվել էր այն եռանդուն գործունեությունը, որի մասին նա այնքան երազել էր ճեմարանում։ Նա միաժամանակ հնարավորություն էր ստացել դասավանդել դպրոցում և տպագիր օրգանի՝ «Արարատ» շաբաթաթերթի միջոցով ազդարարել իր նվիրական խոհերը՝ առաջին հերթին ազգային համընդհանուր լեզվի ստեղծման ու զարգացման և այդ լեզվով գրականություն ստեղծելու վերաբերյալ։ Թերթը հենց իր առաջին համարում ազդարարեց, որ հայ ժողովրդին անհրաժեշտ է հասկանալի, մատչելի լեզու, որ նախորդ պարբերականի՝ «Կովկաս»-ի դադարման ամենահիմնական պատճառը գրաբարն էր և որ նորը՝ «Արարատ»-ը պիտի հոդվածներ տպագրի այնպիսի լեզվով, որ ամեն կարդացող հասկանա և հաճույք ստանա իր կարդացածից, օրա-

[1] Տե՛ս Ա. Երիցյան, Պատմություն 75-ամյա գոյության Ներսիսյա՛ն հայոց հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1898, էջ 487։

վոր լայնացնի իր գիտելիքները, զգա ընթերցանության պահանջը։ Խոսելով մինչ այդ գոյություն ունեցող հայ պարբերականների և նրանցից որոշ մասի ընդհատման պատճառների մասին, Գաբրիել Պատկանյանը գրում է. «Նույն շնորհակալության ձայնն կամեցավ Վրաստանի կողմանց Հայոց ազգն ևս լսելի առնել. նորա ձայնն լսվեցավ «Կովկաս» լրագրի միջև. 1846 և 1847 շարունակեցան։ Այլ որովհետև լեզուն չէր աշխարհաբար, և չէր ամենեցուն հասկանալի, վասնորո և խափանվեցավ»[2]։

Իհարկե, այս առաջին առաջնորդողը, չնայած, պատկանում էր հոր Գաբրիել Պատկանյանի գրչին, բայց նրա մեջ արտահայտված մտքերն այնքան համահնչուն էին որդու սրտին, որ հետևյալ համարում տպագրված «Որն է արարատյան լեզուն» հոդվածի ստեղծման գործում արդեն նա իր մասնակցությունն է բերում հուշելով հորը Լազարյան ճեմարանում ստեղծված համահասկանալի հայերեն գրական լեզվի կազմավորման ձևը. «Շատ տարի է, որ Վեհազնյա Լազարեանց ճեմարանն՝ որպես օրենք է հաստատել, որ նորա աշակերտքն խոսին պարզ հայերեն լեզվով։ Վարժապետքն ուշադրությամբ ականջ էին դնում աշակերտաց խոսակցության և նոցա լեզվեն հեռացնում էին ամենայն խորթ և անճոռնի գավառական բառերն և արտասանություններն և որն որ լինում էր ախորժ և ըստ կանոնի, այն էին թողնում, այս պատճառով շուտ ժամանակի մեջ աշակերտաց զանազան գավառական պարզ հայերեն խոսակցությունից կազմվեցավ մի պարզ հայերեն լեզու, որն այժմ հասկանալի է թե օսմանցվոց, թե պարսից, թե Քրդաստանի և թե Վրաստանի հայոց»[3]։ Շատ տարիներ հետո գրած «Մանկական հիշողություններ պարոն Մկրտիչ Էմինի մասին» հոդվածում համարյա բառ առ բառ կրկնվում է այս հոդվածը, ճեմարանում ուսուցիչների և առաջին հերթին Էմինի ջանքերով մաքրվող, կոկվող, կանոնավորվող գրական լեզվի ստեղծման մասին գրելու ժամանակ (V, 161)։

Շուտով «Արարատ»-ում տպագրվում է Ռափայելի առաջին տպագիր բանաստեղծությունը «Թռչնակ» վերնագրով, որը Բատյուշկովի նույնանուն բանաստեղծության փոխադրությունն էր։ Զարմանալին այն էր, որ աշխարհաբար լեզվով գրականություն ստեղծելու ջատագովը իր տպագիր առաջին փորձը կատարել էր գրաբար։ Հավանորեն ճեմարանական արմատացած սովորությունը՝ գրավոր արտահայտվելիս անպայմանորեն գրաբարով գրելը, կաշկանդել է նրան ճիշտ այնպես, ինչպես մեկ տարի առաջ ընկերներին նամակ գրելու ժամանակ։

---

2 «Արարատ», 1850, № 1։

3 «Արարատ», 1850, № 2։

Բանաստեղծությունը մի անպաճույճ, պարզ երգ էր, մարդկային ցավին ու ձանձրույթին անտեղյակ թռչնակի մասին, որը ապավինելով բնությանը ապրում է անհոգ և ուրախ։

Սակայն իր առաջին տպագիր բանաստեղծությունը տեսնելու ուրախությունը մթագնվում է Ներսիսյան դպրոցում տեղի ունեցած մի ծանր դեպքի պատճառով։ Հավանորեն հենց այդ օրը՝ սեպտեմբերի 23-ին, երբ «Արարատ»-ի թարմ համարը իր հետ բերեց Ռ... Պ... ստորագրությունը կրող «Թռչնակ» ոտանավորը, իրեն արդեն վաստակ ունեցող մարդ զգացող երիտասարդ ուսուցիչը ուսուցչանոցում թույլ է տվել հայտարարել ֆրանսերեն լեզվի իր իմացությունների մասին, այդ լեզվի դասեր ևս ստանալու ակնկալությամբ։

Սակայն նույն դպրոցի բարձր դասարանների ռուսաց լեզվի ուսուցիչ, Գաբրիել քահանայի եղբայր Միքայել Պատկանյանը կոպտորեն առարկել է Ռափայելին, հայտարարելով, որ նա միանգամայն անտեղյակ է ֆրանսերենին։ Չկարողանալով զսպել Պատկանյաններին հատուկ մոլեգին զայրույթը, երիտասարդը «հիմար» էր անվանել հորեղբորը, որի համար արժանացել էր նրա ապտակին։

Անախորժությունը պատահել էր ուսուցչանոցում, և դասատուներից ու աշակերտներից շատերը ականատես էին եղել դրան, իսկ կրոնուսույց և Գաբրիել Պատկանյանի հակառակորդ քահանա Սահակ Սահառունին շտապել էր կռիվը նամակով մանրամասն պատմել կաթողիկոսին։ Հոգաբարձու Դավիթ Խերոդինյանցը, որի խնդրանքի համաձայն Ներսեսը համաձայնել էր տեսչությանը հանձնել Գաբրիել քահանային և աշխատանքի ընդունել նրա որդուն, ստիպված 1850 թ. սեպտեմբերի 30-ին կաթողիկոսին գրած նամակում խնդրում է թույլ տալ հետաձգելու գործի քննությունը թագաժառանգի Թիֆլիս այցելելու կապակցությամբ և խոստանում է անախորժ դեպքը մանրամասնորեն ներկայացնել հետևյալ նամակում։ Հոկտեմբերի 6-ին Խերոդինյանը կատարում է իր խոստումը և հայտնում.—«Ընդ ազնուատոհմ հոգաբարձուաց Ուսումնարանի քննեցաք զկռիւն ուսուցիչ ատփճանաւոր Միքայելի Պատկանեանց ընդ եղբօր որդւոյն իւրոյ Ռափայելի։ Անցքն պատահել էր ի խորհրդարանի Ուսումնարանի, ուր նոքա երկոքին գոլով և միւս ևս ոմանք յուսուցչաց, Ռափայելն զովաբանեալ էր զճոխութիւն իմաստից իւրոց ըստ մասին գաղղիական լեզուի. հօրեղբայրն նորա՝ Միքայէլ Սերաֆիմիչն, ճանաչելով զնա բոլորովին անտեղեակ այնում լեզուի, ոչ է հաճեալ զասութիւն նորա, և առ այս Ռափայելն ձայնեալ է առ նա՝ «չիք յիմար քան զքեզ», երկրորդելով ևս զնոյնն, որյ վասն և ընկալեալ ի հօրեղբօրէն զապտակ,

կասաղմամբ վաղնալ է, ի վերա նորա առ ի բուռն հարել զհնրաց։ Ասէն ներկայ լեալքն՝ ուսուցիչքն թե ըմբռնեցին զերկոսեան զնոսա և Ռափայէլն չկարաց ձեռն ձգել ի հերս հօրեղբօրն, այլ մնացեալ ուսուցիչքն ինքեանց պատմեալ են զՌափայէլն վասն բուռն հարկանելոյ և զհերացըն։ Այս անցք եղեալ է ի ժամ ուսման, աշակերտաց ելեալ են ի լուսամտիցն ի տես հանդէսին։ Զիարդ և է՝ հոգաբարձուքն, զերկոսին և ևս ճանաչելով յանցաւոր, դատեցին առ խաղաղութեան վերջաւորել առարկայիս. մեք ևս առանց նոյն պատուէլեացն զոչինչ տնօրէնութիւն աբարեալ՝ պատշաճ համարեմք զվերոգրելոցն ի տնօրէնութիւն Վեհափառութեանդ յայտնել»[4]։

Ջնայած Խերոդինյանցի թախանձանքներին, այն է՝ գործը վերջացնել նկատողությամբ, Աշտարակեցին հատուկ հրաման է տալիս Ռափայելին անհապաղ հեռացնելու մասին և պահանջում այն կարդալ երիտասարդ ուսուցչի ներկայությամբ[5]։ 1850 թ. նոյեմբերի 18-ին Ռափայել Պատկանյանը կաթողիկոսի հրամանի համաձայն, հազիվ երկու և կես ամիս պաշտոնավարելուց հետո, հեռացվում է ուսուցչությունից, և նրա տեղն է բռնում Ներսիսյան դպրոցը նոր ավարտած, համեստ ընդունակություններով օժտված մի երիտասարդ՝ Երեմիա Իսահակյանը, որն իր բանաստեղծություններով նույնպես մասնակցում էր «Արարատ»-ի աշխատանքներին։ Այսպիսով, երկուստեք բորբոքված պատանյանական անզուսպ բարկությունը ընդհատում է ոչ միայն Ռափայելի գործունեությունը Ներսիսյան դպրոցում, այլ նաև կաթողիկոսին վերջնականապես համոզում չհաստատել Գաբրիել Պատկանյանին տեսչության պաշտոնում, դրանով իսկ դատապարտելով նրան նորանոր փորձությունների ու տառապանքների։

Դեռևս մինչև դասերից զրկվելը Ռափայել Պատկանյանը օգնում էր հորը շաբաթաթերթի հրատարակման գործում, շարում էր նյութերը իրենց բնակարանում գտնվող տպարանում, սրբագրում և մերթ ընդ մերթ իր մասնակցությունը ցուցաբերում փոքրիկ մատենագրական ակնարկներով։ Հակադրվելով Մկրտիչ Էմինի «Վեպք Հնոյն Հայաստանի» աշխատության վերաբերյալ հոր հայտնած բարձր կարծիքին, որը տպագրվել էր «Արարատ»-ի երկրորդ համարում, Ռափայելը կարողանում է երկու շաբաթ անց «Մատենագիտություն» ընդհանուր խորագրի տակ քննադատական խոսք ուղղել հեղինակի հասցեին, մեղադրելով նրան բազմաթիվ բառերի (վեպք, ցուցք) մեկնությունները իրեն վերագրելու

[4] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թ. 158, վ. 14։

[5] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թ. 158, վ. 14 ա։

մեջ, մինչդեռ դրանք մի քանի տարի առաջ արել էին Մխիթարյանները, «Նկարագիր ուսմանց» կոչված գրքում[6]։

Զկարողանալով զսպել իր զայրույթը Էմինի նկատմամբ և երկյուղ կրելով հոր անբավականությունից, նա իր փոքրիկ հոդվածը կառուցել էր այնպես, որ առաջին հայացքից այն թողնում էր դրական կարծիքի տպավորություն և միայն ուշադիր կարդալու դեպքում երևան էր գալիս հոդվածագրի անբարյացակամ վերաբերմունքը. «Այս գեղեցիկ գիրքը՝ հաստատում է,— գրում էր Պատկանյանը, որ գիտնական Էմինի բառաքննությունը շատ հարազատ է, որովհետև նույն բառերը հինգ տարի առաջ նույն մտքով մեկնել են Հայոց լեզվի անխոնջ մշակները։ Շնորհակալ ենք այնպիսի աշխատությանց համար. և ցանկալի է, որ մեր ազգի մեջ բազմանան այնպիսի աշխատությունք»[7]։

Իհարկե, Ռափայել Պատկանյանը չէր կարող չզգալ նոր հրատարակված գրքի առավելությունները, շոգեորվել այն նոր մեկնություններով, որ տրված էին հայ գուսանական երգերին, սակայն նրա հատուկ վերաբերմունքը հեղինակի նկատմամբ թույլ չէր տալիս նրան անաչառ քննադատության ենթարկելու այն։

Բացի առօրյա զբաղմունքներից, երիտասարդ Ռափայելի միտքը տանջում էր նաև աշխարհաբար լեզվով ազգային կյանքից մի բանաստեղծություն գրելու միտքը, բանաստեղծություն, որը կարողանա արտահայտել իր խոհերը, իր վերաբերմունքը հայրենասիրության և ազգային զգացմունքների վերաբերյալ։ Կար ընդհանուր տրամադրությունը, սակայն առայժմ չէր գտնվում այն նյութը, որի մեջ կարելի լիներ ամփոփել այն ամենը, ինչ խլրտում էր նրա հոգում։ Եվ ահա նյութը կարծես թե գտնված է, հոր պատմած ավանդությունն իրենց տոհմի ծագման մասին, Ռափայելի մտքերը տանում էին դեպի Փարիզ, ուր իր տըխուր հանգրվանն էր գտել հայ պետականության վերջին ներկայացուցիչ Լևոն VI-ի պանդուխտ ոսկորները։ Լևոն VI-ի կերպարը Ռափայելի երևակայության մեջ նույնացվում էր հայրենիք, ազգ, ազգային ինքնագիտակցություն ռոմանտիկ գաղափարի հետ։ Հայկական կյանքում բարենպաստ պայմանների հետևանքով նոր թափ ստացած գոյության և ազգային ազատագրության հույսերը բանաստեղծի երևակայության մեջ

---

[6] Որ այս հոդվածը պատկանում է Ռափայելի գրչին կարելի է եզրակացնել 1851 թ. մարտի վերջերին Թիֆլիսից գրած նամակից, ուր նա ասում է. «Էմինի «Վեպը» ինձ ոչ թե դուր չեկավ, այլև շատ զզվելի երևեցավ... Ես նորա բառա<րանից> իմացա որտեղաց կողացած էր, բայց շատ հարևանցի» (VI, 32)։

[7] «Արարատ», 1850, № 6։

ծնում էին ապագա հայրենիքի տեսիլը։ Բորբոքված երևակայությունը պատկերում էր անցյալի իդեալականացված կյանքը, ուր հայ պետականության հովանու տակ և՛ իշխանն էր զորավոր. ուրախ ու երջանիկ, և՛ շինականը՝ հպարտ իր աշխատանքով ու կյանքով, և՛ նազելի, մրահոն կույսը՝ պաշտպանված թագավորի հզոր աջով՝ անդորր ու աներկյուղ։

Եվ այդ բոլորն արտահայտելու համար բանաստեղծը ընտրում է Լևոն արքայի շիրմին այցելության գնացած հայի և արքայի շիրիմից հնչող նրա ոգու միջև տարվող խոսակցության ձևը։ Այս կառուցվածքը նրան հնարավորություն էր տալիս արտահայտելու այն ամենը, ինչով լի էր նրա հոգին, ինչ զգացմունքներ որ առաջացրել էին նրա մոտ արտաքին հանգամանքները։ Դեռևս ուսումնառության շրջանում ներծըծած լինելով ռուս և գերմանական ռոմանտիկական պոեզիայի լավագույն ավանդները, երիտասարդ բանաստեղծը նույնպես պահանջ էր զգում ինքնաարտահայտման, պահանջ էր զգում ոչ թե նկարագրելու, այլ ներկայացնելու, բացելու իր հոգին, պատմելու բոլորին այն զգացումները, որոնք պիտի օգնեին գտնելու ռոմանտիկական իդեալը՝ հայրենիքի ու ազգության գաղափարը կրող հերոսին։

«Մտավոր կյանքի իրական հանգամանքների և անձնական պայմանների մի ներդաշնակություն զուգադիպեց Ռափայել Պատկանյանի աշխարհայացքի ձևավորման ընթացքին, և նա միանգամից գտավ իրեն այն կետում, որից պետք էր սկսել։ Արևելահայ ռոմանտիկական պոեզիայի հիմնադիրը հրապարակ եկավ մի նախորոշված ինքնագիտակցությամբ և առանց որոնման դեգերումների։ Քչերն էին այդպես ծնվում ճիշտ ժամանակին»[8],— գրել է գրականագետ Ս. Սարինյանը։ Եվ, իսկապես, երիտասարդ բանաստեղծի առաջին գործը ազդարարեց հայ գրականության մի նոր շրջանի թևակոխման մասին։ Եվ զարմանալին այն էր, որ այդ երախայրիքը կառուցված էր ճիշտ ու նպատակասլաց, մի հանգամանք, որ ապացուցում է նրա նախորդ բանաստեղծական փորձը։ Պոեմի բոլոր բաղադրիչները կարողանում էին շեշտել հեղինակի հիմնական միտքը, այն ձգձգված չէր, ուներ որոշակի սյուժե։ Պոեմը սկսվում է Հայաստանի ավեր ճանապարհներով դեպի Փարիզ շտապող պանդուխտ հայի մտորումներով։ Ամայի ու դատարկ է ամեն տեղ հայոց հիշատակներ ունեցող երկիրը, չի լսվում հայկական բառն ու բանը։ Պանդուխտը կանգ չի առնում ոչ մի տեղ, նրան չեն գրավում ո՛չ գեղեցիկ քաղաքները, ո՛չ բնության հրաշալիքները, նա շտապում է հասնել հեռավոր Ֆրանսիա,

[8] Ս. Սարինյան, *Հայկական ռոմանտիզմ*, Երևան, 1966, էջ 303։

ուր օտար, բազմամարդ Փարիզում հավերժական քնով ննջում է հայոց անկախության վերջին վկան՝ Լևոն արքան։

Հասնելով նրա շիրիմին, պանդուխտը թախանձում է հայոց արքային՝ հարություն առնել, տեր կանգնել ամայացած հայրենիքին, որտեղ չքացել են նախնի զորության հիշատակները, որտեղ ստրկության մեջ տառապում է հայ մարդը։ Ցնցված հայրենիքից եկող ձայնից, արքան արթնանում է դարավոր քնից և սարսուռ ազդելով պանդուխտ հային իր ձայնով, սկսում է պատմել Հայաստան աշխարհին հասած բոլոր տարաբախտությունները և մինչ այդ եղած երջանիկ կյանքը։ Որպեսզի ավելի շեշտվի ներկա թշվառ, անմխիթար վիճակը, բանաստեղծը թագավորի բերանով տալիս է անկախության շրջանում եղած կյանքի հրաշալիքների ռոմանտիկական պատկերը։ Սակայն մոլեգնում է սաստիկ մրրիկը, և երկրի թշնամիները տակն ու վրա են անում ամեն ինչ, այժմ օտարության մեջ դեգերող հայոց արքան, ինքը պանդուխտ, խնդրում է պանդուխտ հային վերադառնալ հայրենիք։ Բայց երիտասարդը հրաժարվում է մենակ Հայաստան գնալ, աղերսում է թագավորին իր հետ մեկնելու հայրենիք, վերաստեղծելու կորցրած անկախությունը, կյանք տալու հային, կառավարելու երկիրը նախնիների դրած կարգով, որ հակառակ դեպքում ինքը ևս չի վերադառնա տուն, այլ կմնա նրա հետ կիսելու թե՛ պանդխտություն, թե՛ տանջանք։ Եվ այդ ամենի վարձատրությունը կլինի այն, որ իր անունը անքակտելիորեն կկապվի արքայի անվան հետ, և ով որ այցելության գա նրա շիրիմին՝ կհիշի և իրեն։ Պոեմի իմաստը պարզ էր։ Անհրաժեշտ է կամ մեռնել, կամ ազատագրել Հայաստանը օտար լծից։ Եվ ով իրեն նվիրի այդ գործին, նրա անունը և փառքը միշտ անմար կմնա սերունդների սրտերում։

Գաղափարը նոր չէր. թե՛ իր հոր բազմաթիվ երկարաշունչ հայրենասիրական պոեմներում, թե՛ կլասիցիստական ոճով գրված Մխիթարյան հայրերի գործերում փառաբանվում էին նախնիների սխրանքները, գովերգվում նախորդ դարերի կյանքը։ Նորը այստեղ ժամանակակից մարդու մտորումներն էին, նրա վերաբերմունքը անցյալի հերոսների նկատմամբ, նրա պատրանքները ապագայի վերաբերյալ, ինչպես նաև հակիրճ, արտահայտիչ ձևը։ Պոեմի լեզուն աշխարհաբար էր, բավականին հղկված և որ ամենակարևորն է, այս առաջին գործում բանաստեղծին հաջողվել էր ստեղծել ձևի և բովանդակության մի միասնություն, ենթարկել ձևը իր միտքը հստակությամբ արտահայտելուն։

Իրավացի էր Բելինսկին, երբ գրում էր. «Եթե կան ժամանակի գաղափարներ, ապա կա և ժամանակի ձև»[9]։

Ռոմանտիզմի էությունը, ինչպես աշխարհընկալման ձև, որը ծընունդ է առել հասարակական զարգացման որոշակի շրջանում, զգացվեց և՛ թեմայի, և՛ ժանրերի ընտրության մեջ։ Ռոմանտիկական սուբյեկտիվիզմը ծնեց լիրո-էպիկական պոեմը, որը լայն հնարավորություններ էր ընձեռում մարդկային հոգու գաղտնարանների գեղարվեստական արտահայտման, էմոցիոնալ աշխարհի նուրբ, հաճախ անորոշ, հակասական երևույթների վերհանման համար։ Բայց ոչ մի ժանր այնքան լրիվ ու բազմակողմանի չէր համապատասխանում ռոմանտիկական ժամանակաշրջանին, ինչպես էլեգիան։ Հենց այդ ժանրն էլ հանդիսացավ նոր մարդու զգացմունքների արտահայտման միջոց։ Էլեգիայի տխուր, մելամաղձոտ բնույթը ոչ թե դառնում էր ռոմանտիկ բանաստեղծի համար աշխարհընկալման ձայնաշարի հնչյուններից մեկը, այլ հիմնական, տիրապետող մեղեդին։ Ռուս գրականության մեջ այդ ժանրի հարստացնողներից մեկը Ժուկովսկուց հետո հանդիսացավ Բատյուշկովը, որը էլեգիաներին հաղորդեց տխուր հիշողություններով լեցուն իրադարձություններ, տալով նրանց նոր, էպիկական էլեգիաների ձև։ Պատահական չէր, որ Պատկանյանն իր առաջին թարգմանության համար ընտրել էր Բատյուշկովի բանաստեղծություններից մեկը։ Սա ապացուցում է, որ նա ընդհանրապես ծանոթ էր նրա ստեղծագործություններին և, մասնավորապես, ռոմանտիկական շնչով գրված լիրո-էպիկական էլեգիաներին, որտեղ ոչ թե տրվում էին բանաստեղծի խորհրդածությունները, պոեմում պատմվող մի ինչ-որ դեպքի վերաբերյալ, այլ առնչվում հենց պոեմում կատարվող իրադարձությունների հետ։ Ընդօրինակելով այս ձևը, Պատկանյանն իր ռոմանտիկական հերոսի մտորումներն ուղղեց ազգային ինքնագիտակցության, հայրենիքի գաղափարի արծարծմանը։

Պոեմը լույս ընծայվեց «Արարատ»-ի ութերորդ համարում, առանց ստորագրության։ Այն կրում էր «Պանդուխտ հայ ի Փարեզ, ի գերեզմանի Լևոնի վերջին թագավորի հայոց» վերնագիրը։ Նրան կցված էր նաև մի փոքրիկ պատմական ակնարկ Լևոն VI-ի մասին, որտեղ խոսվում էր նաև ֆրանսիական հեղափոխությունից հետո նրա աճյունը Պանթեոն տեղափոխելու մասին։ Խիստ բացասական գնահատական տալով ֆրանսիական հեղափոխության գործիչներին, որոնց հարևանությամբ այժմ

[9] В. Белинский, Полн. собр. соч., т. I, М., 1953 г., стр. 275.

դրված է Լևոն VI-ի աճյունը, ակնարկի հեղինակը, որը, անկասկած, Գաբրիել Պատկանյանն էր, ավելացնում էր, որ այդ պատճառով տաճարը Պանթեոնից (ամենաաստվածյան) վերանվանվել է պանդեմոնի (ամենադև)։ Նույն այս տրամադրությունը զգացվում է նաև պոեմի մեջ, որտեղ երիտասարդ բանաստեղծը չըմբռնելով ֆրանսիական մեծ հեղափոխության նշանակությունը և կրկնելով հոր տրամադրությունները, նշավակում է Մարատին, Վոլտերին, Միրաբոյին։

Առաջին պոեմի տպագրությունից հետո Ռափայելը ձեռնարկում է նաև մի երկրորդ ստեղծագործություն, որի նյութը այս անգամ առնված էր անտիկ շրջանի պատմությունից։ Անտիկ թեմաները նույնպես բնորոշ էին ռոմանտիկական վաղ շրջանի ստեղծագործություններին, երբ կլասիցիզմին հատուկ սյուժետներին տրվում էր նոր բովանդակություն, նոր իմաստ։ Զարմայր նահապետի կերպարը երկար տարիներ ոգևորել էր Գաբրիել Պատկանյանին, և նա Ներսիսյան դպրոցում կարդացած իր դասախոսությունների ժամանակ հաճախ էր անդրադարձել նրա անձնավորությանը, նրա սխրանքին, դրել նրան Հոմերոսի անմահ հերոսների հետ նույն պատվանդանին։ «Տեր Գաբրիելն սկսավ ընդհանուր պատմություն ավանդել ի սկզբնավորութենէ Բաբելոնյան միապետության,— պատմում է նա իր «Հիշատակարանում»,— և նորա դասախոսության օրերին Ներսիսյան դպրոցն լի էր լինում բազմությամբ ունկնդրաց, մանավանդ երբ Հունաց դյուցազնական պատմությունն սկսավ, որովհետև ամենայն ուրեք, ուր Մովսես Խորենացին Հայոց պատմությունը, կամ Մովսես Մարգարեն և այլք Աստվածաշնչո պատմության լծորդում էին արտաքին պատմությանց հեղինակությանց հետ, այն տեղերն միշտ հիշել էր տեր Գաբրիել թե ժամանակով պիտի հաստատվին պատմության այն տեղեկությունները, որ Հայոց ազգեն Զարմայրը յուր քաջերով պիտի երթային Տրոյային օգնության՝ Հունաց քաջ դյուցազանց դեմ և այնտեղ պիտի մեռնեին»[10]։

Սակայն հոր հաղորդած տեղեկությունները Զարմայրի և նրա հետ Տրոյա մեկնած հայկական զորագնդի մասին Ռափայելի մտահղացմամբ դարձյալ վերածվեցին հեռավոր հայրենիքը գովերգող մի պատգամի, նրա համար ապրելու ու մեռնելու քարոզի։ Պոեմը դարձյալ կառուցված էր կոնկրետ սյուժետային գծի զարգացման օգնությամբ։ Տեղի ունեցող դեպքերի զուգակցումով ստեղծելով երկախոսություն հեռավոր Տրոյայում մեռնող հայ զորապետի ու նրա հավատարիմ երիվարի միջև,

[10] «Հիշատակարան», էջ 321։

բանաստեղծը իր բոլոր մտորումները կարողանում է հաղորդել մերթ Զարմայրի բերանով, մերթ նժույգի։ Պոեմից առաջ տրված էր մանրամասն տեղեկություններ Տրոյայի պատերազմի, Պրիամոսի ու նրա որդիների, հույների ռազմիկների ու նրանց բանակում տեղի ունեցած իրադարձությունների մասին, ինչպես նաև Պրիամոսին օգնության գնացած հայազգի Զարմայրի ու նրա զորագնդի մասին։ Պոեմը սկսվում է տրոյացիների և հույների դաժան մարտից հետո դաշտում տիրող սարսափելի տեսարանի նկարագրմամբ, ուր իրենց սիրեցյալների դիակներն են փնտրում հարազատները, ուր սև քողով պատած երկինքն անգամ սգում է իր զավակների կորուստը։ Բնության ահեղ, մռայլ պատկերները օգնում են բանաստեղծին ծանր, տխուր տրամադրություն ստեղծելու։ Հեռավոր մի կաղնու տակ, խոր վերքը կրծքին մենակ մեռնում է հայոց զորավար Զարմայրը՝ իր անմոռաց հայրենիքի կարոտը սրտում։ Նրա կողքին կանգնած իր հավատարիմ նժույգը կարծես աղաչում է տիրոջը նստել իր մեջքին և սլանալ դեպ սիրելի Հայաստան։ Սակայն մեռնող մարտիկը վերջին անգամ համբուրելով ձիու աչքերը, որոնք պիտի տեսնեին անձկալի Հայաստան երկիրը, խնդրում է նրան իր սերն ու ողջույնը հայրենիք տանել, պատմիրել որդուն իր փոխարեն հայր ճանաչել հայրենին։ Ապա մեռնող զորականը հիշելով իր նորատի կնոջը, ընկնում է տխուր մտքերի մեջ, պատկերացնում նրան այրիի սև հանդերձների մեջ, մանուկը անմխիթար կրծքին սեղմած և խնդրում երիվարին չհայտնել նրան իր մահը, այլ ասել, որ ինքը հավերժ մնաց օտար երկրում։

Պատկանյանի այս պոեմը ևս իր կառուցվածքով ու ներքին բովանդակությամբ դարձյալ հիշեցնում էր Բայրոնի լիրո-էպիկական պոեմները, մասնավորապես նրա «Մեռնող Տասսոն», որտեղ իր մահկանացուն կնքող բանաստեղծը հրաժեշտ է տալիս սիրելի քաղաքին, վերջին անգամ հղելով նրան իր ողջույնն ու սերը։

Սա թեև չուներ «Պանդուխտ հայ ի Փարեզ»-ի հստակ կառուցվածքը, որը հնարավորություն էր տվել նրան առավելագույն պարզությամբ տեղ հասցնելու իր հիմնական միտքը, սակայն այստեղ, բանաստեղծի մտորումներով հագեցված լիրո-էպիկական պատկերներում կային արդեն այն բոլոր նախադրյալները, ինչ հետագայում հնարավոր դարձրին Պատկանյանի քաղաքացիական պոեզիայի զարգացումը և հարստացումը նորանոր բազմապիսի երանգներով։

Պատկանյանի առաջին պոեմները ոչ միայն դարձան արևելահայ պոեզիայի համար նոր արտահայտման ձև, նոր խոսք ու կառուցվածք

բերելով իրենց հետ, այլ նաև իրենց լեզվական բառամթերքով երկար տասնամյակներ սնեցին այն[11]։

Սակայն, այս անգամ ևս պոեմի տպագրման ուրախությունը մըթագնեց հեղինակին աշխատանքից հեռացնելու հրամանով։ Հենց նույն օրը, 1850 թ. նոյեմբերի 18-ին, երբ «Արարատ»-ի հերթական համարը իր հետ բերեց «Մահ Զարմայր Նահապետի հայոց»-ը, կաթողիկոսի հըրամանով Ռափայել Պատկանյանը արտաքսվեց Ներսիսյան դպրոցից։

Հիմա ավելի շատ ազատ ժամանակ ունենալով, Ռափայելը մխրճըվեց Թիֆլիսի, այդ «աշխարհական Սոդոմ-Գոմորի» կյանքի մեջ, ծանոթություններ հաստատելով քաղաքի աչքի ընկնող ընտանիքների հետ, նրանց որդիների հետ հաճախելով տոնահանդեսների, քաղաքից դուրս կազմակերպվող քեֆերի ու զբոսանքների։ Նրա ուշադրությունը գրավեցին Թիֆլիսի բարբառով երգվող ուրախության բաժակաճառերը, քաղաքացիների յուրահատուկ կենցաղը, սովորությունները, ազգային զըվարճությունները։

Բայց և նրա սուր հայացքից չվրիպեցին Թիֆլիսեցի հարուստների տներում կատարվող անարդարությունները, իրենց աղաների առջև գըլուխ խոնարհած և դարձյալ լուտանքների ու ծեծի ենթարկվող խեղճ ծառաների կերպարները, «աղաների» դռներից վռնդվող աղքատ խնդրատուները, ամենուրեք տիրող խաբեությունն ու անարդարությունը։ «Ես որ գամ, իմացիր, որ ամեն բանն, ինչ որ ես անձկությամբ 2 տարի առաջ սպասում էի, կշտացած հափրուցած եմ գալի, շատ ման եկա, շատ բան տեսա, բայց չիգտա, ինչ որ պտրում էի, մի ասիլ, որ իմ պտրածս անկարելի էր եղել. ես ամեն տեղ բանաստեղծություն էի պտրում, բայց մի ասիլ, որ ամեն ինչ կոպիտ արձակ շարադրություն է եղած: Այժմ ես զզվում եմ գործնականեն և կենում եմ միայն տեսական աշխարհումը» (VI, 27), գրում է նա Դորպատ՝ ընկերներին, իրականության հետ բախվելուց և իր երազներում ստեղծած աշխարհի փլուզումից հետո։

«Արարատ»-ում տպագրված պոեմները հայկական շրջաններում երիտասարդին բերել էին համընդհանուր ճանաչում, և ամէն տեղ նա ցանկալի հյուր էր համարվում։ Անգամ Թիֆլիսից դուրս գտնվող նրա հոր ծանոթներն ու ազգականները սկսեցին նամակներով խորհուրդներ տալ Գաբրիել Պատկանյանին, հատուկ ուշադրություն դարձնել քանքարավոր որդու վրա, հոգալ նրա հետագա կրթության մասին։ Առաջին-

[11] Մասնավորապես կուզեինք նշել «մրահոն» բառը, որը հասավ մինչև Իսահակյան։

ներից մեկը, որ զգաց երիտասարդի տաղանդը, դա Լազարյան ճեմարանի պրոֆեսոր Ստեփանոս Նազարյանն էր։ Ճեմարանի աշակերտների առջև կարդալով նրա երկու աշխարհաբար պոեմները, Նազարյանը գովաբանել է հեղինակի հայրենասիրությունը, նրա բանաստեղծության գեղեցկությունը և մատչելի լեզուն։ Իր գոհունակությունն է հայտնել լսարանի առջև նաև Մսեր Մսերյանը։ Միայն Մկրտիչ Էմինը, չկարողանալով համակերպվել աշխարհաբարով գրված ոտանավորների հետ, բացասաբար էր արտահայտվել դրանց մասին (VI, 37)։ Թիֆլիսում նույնպես գոհունակության հետ միասին հնչեցին բացասական ձայներ՝ նման հանդիսավոր ու վերամբարձ նյութը ժողովրդական լեզվով արտահայտվելու վերաբերյալ։ «Տեղս շատ քննադատության և զանազան կարծիքներու նշավակ եղա» (VI, 32),—հայտնում է նա Մոսկվա մարտի վերջերին գրած նամակներից մեկում։

Առաջիններից մեկը, որ առաջարկեց Գաբրիել Պատկանյանին հոգալ նրա որդու ուսման ծախսերը, Մկրտիչ Պոպովյանն էր, Ռափայելի ավագ քրոջ՝ Մարիամի ամուսինը։ Հաշվելով, որ Խարկովում կամ Կազանում ուսանելու համար անհրաժեշտ է տարեկան 350 ռուբլի ծախս, Մկրտիչ Պոպովյանը միանգամից առաջարկում էր առանձնացնել 1700 ռուբլի՝ 5 տարվա համար։ Արդյո՞ք նրա խորհրդով էր Ռափայելը որոշել ընդունվել Խարկովի կամ Կազանի համալսարանի բժշկական բաժինը, թե՞ հոր տնտեսական անհաստատ վիճակն էր ստիպել նրան, մի կողմ թողած իր հակումները՝ ընտրել ավելի եկամտաբեր մասնագիտություն։ Սակայն նրա առաջին միտքը բժշկություն ուսանելն էր, լիներ դա ռուսական, թե գերմանական համալսարաններից մեկում։ Ի դեպ, այդ շրջանում հայ երիտասարդներից շատերը, ձգտում էին բժշկական կրթություն ստանալ հետագա կյանքը ապահովելու նպատակով, իսկ Պատկանյանների ընտանիքում, մասնավորապես, խիստ գայթակղեցուցիչ էր բարձր դիրքեր նվաճած Միքայել Ռեստենի օրինակը, ինչպես նաև բժշկական ակադեմիայում ուսանած Միքայել Պատկանյանի խորհուրդները։ Բացի այդ ամենից, XIX դ. առաջին քառորդից սկսած բնական գիտությունները, որտեղ ամենից առաջ էին ներթափանցել կյանքի մատերիալիստական ըմբռնումները, առանձնապես գրավում էին առաջավոր գաղափարներով տոգորված երիտասարդությանը։ Ռուս իրականության մեջ հայտնի էր այն փաստը, որ բնական գիտություններով պարապելու տենչը դեպի ֆիզիկո-մաթեմատիկական ֆակուլտետ տարավ գրական ընդունակություններով օժտված երիտասարդ Գերցենին, իրավաբանության ուսանող Օգարյովին ստիպեց հաճախել մաթեմատիկա-

կան ֆակուլտետի դասախոսություններին, բնական գիտություններով զբաղվող առաջավոր գաղափարներով ներծծված գեղարվեստական կերպարներ սկսեցին երևան գալ ռուս գրականության լավագույն ստեղծագործություններում (Լոպուխով, Կիրսանով, Բազարով, Կրուպով)։

Բնական գիտությունները մեծապես նպաստում էին ժամանակի առաջավոր երիտասարդության աշխարհայացքի ձևավորմանը, օգնում նրանց ըմբռնելու դարի լուսավոր գաղափարները։ Հայ իրականության մեջ, բացի Պատկանյանից, ամբողջ հոգով ձգտում էր բժշկական կրթություն ստանալ նաև գրական փայլուն ընդունակությունների տեր, հետագայում Գերցենի, Օգարյովի հետևորդ Միքայել Նալբանդյանը։

Պատկանյանի հենց այդ երկընտրանքի ժամանակ Թիֆլիս է ժամանում պետերբուրգաբնակ հայտնի հարուստ Աղաթոն Աքիմյանը և Թիֆլիսի անվանի ընտանիքներից մեկում հանդիպելով Ռափայելին, իմանալով նրա մտադրության մասին, սկսում է գովաբանել գերմանական կրթությունը, օրինակ բերել Դորպատում կրթություն ստացած Աբովյանին ու Նազարյանին։ Աղաթոն Աքիմյանը վաղուց ի վեր փայփայում էր հայ համայնքի համար կրթված հոգևորականություն պատրաստելու միտքը, դրա մեջ տեսնելով հայության ապագա լուսավորության հնարավոր ուղին։ Ամուսնացած լինելով գերմանուհու հետ, նա հաճախակի առիթներ էր ունենում շփվելու գերմանացի պաստորների հետ, հիանալու նրանց լայնախոհությամբ, բազմակողմանի իմացություններով։ Նրանց օրինակով հայ լուսավորչական եկեղեցու համար սպասավորներ պատրաստելը Աղաթոն Աքիմյանը համարում էր անհետաձգելի խնդիր և անընդհատ համապատասխան թեկնածուներ որոնում Լազարյան ճեմարանն ու Ներսիսյան դպրոցն ավարտող երիտասարդների շրջաններում։ Ոգևորված գերմանական կրթության օգտին բերված փաստերից և իր ընկերների հետ համատեղ սովորելու հեռանկարներից, Ռափայելը որոշում է մեկնել Դորպատ և Աքիմյանի միջնորդությամբ խնդրագիր է գրում կաթողիկոսին, հոգևոր կոչումից ազատվելու վկայական ստանալու համար։ Մինչև էջմիածնից պատասխան ստանալը, Ռափայելը «Արարատ»-ի № 15-ում մի հոդված է տպագրում Դորպատի համալսարանի մասին, գովաբանում Լազարյանների նոր ձեռնարկումը՝ Դորպատի համալսարանում իրենց ծախսով ճեմարանավարտ ուսանողներին հետագա կրթություն տալու վերաբերյալ։ Հոդվածում խոսվում էր պետերբուրգաբնակ երեք հայ մեկենասների՝ Աղաթոն Աքիմյանի, Նիկողայոս Շանշյանի և Սարգիս Պողոսյանի ազգանվեր գործունեության մասին, որոնք չխնայելով իրենց միջոցները, Դորպատի համալսարանում մի քանի

հայ ուսանողներ են պահում իրենց հաշվին։ Հենց այդ օրերին, այսինքն, դեկտեմբերի կեսերին Գաբրիել Պատկանյանը որդուն ներկայացնում է Կովկասի պետական դպրոցների վերատեսուչ Սեմենովի տեղակալ Մաքսիմովիչին, որի օգնությամբ Կովկասյան թոշակ էր հայթայթել Գեղարվեստների ակադեմիայում սովորող կրտսեր որդու՝ Վահագնի համար։

Մաքսիմովիչը բացի Կովկասյան թոշակ Ռափայելին ուղարկելուց, խոստանում է նաև որոշ գումար նշանակել բժշկական բաժին ընդունվելու համար անհրաժեշտ առարկաներից նախապատրաստվելու համար և պահանջում միայն արձակման թուղթ կաթողիկոսից։ Սակայն շուտով էջմիածնից ստացվում է Ներսես Աշտարակեցու հոգևոր կոչումից ազատվելու վերաբերյալ տված բացասական պատասխանը և Պետերբուրգի հայկական եկեղեցում վեց տարի աշխատելու և հենց այնտեղի համալսարանում ազատ ունկնդիր լինելու առաջարկը (VI, 23)։

Ամբողջ հոգով ձգտելով դեպի Դորպատ, Ռափայելը միևնույն ժամանակ վախենում է նոր դժգոհությունների առիթ տալ կաթողիկոսին և որոշում համակերպվել նրա հրամանին և «առանց ղալմաղալի» մեկնել Պետերբուրգ, տեղի համալսարանում ազատ ունկնդիր լինելու պայմանով։ Տեղի տալով հանգամանքներին, նա նույնիսկ առժամանակ հրաժարվում է բժիշկ դառնալու իր մտադրությունից։

Դեկտեմբերի վերջերին վախճանվում է Խաչատուր Լազարյանի յոթնամյա որդի Հովհաննեսը, և այդ առիթով «Արարատ»-ի հերթական համարը տպագրում է Ռափայելի երրորդ պոեմը, որը նվիրված էր վաղամեռիկ մանուկի հիշատակին։ Պոեմը գրված էր գրաբար. հավանորեն վախենալով վեհաղնյա իշխանապետի անբավականությունից նրա որդու հիշատակին նվիրված դամբանական-պոեմը ժողովրդական լեզվով գրելու համար, երիտասարդ բանաստեղծը դարձյալ դիմել էր նախնյաց լեզվին, վերամբարձ արտահայտություններով ու փքուն ոճերով պատկերել իր զգացմունքները։ Սակայն, չնայած այդպիսի ճոռոմաբանությանը, իր ներքին բովանդակությամբ պոեմը օրգանական շարունակությունն էր առաջին երկու գործերի և նույնիսկ իր հետ բերում էր էպիկական պոեմին հատուկ գործողությունների ընթացք ու գործող անձերի առկայություն, նրանց անունից պատմվող զգացմունքներ ու խոհեր։ Հետագայում այս ձևը իր զարգացումն ապրեց Պատկանյանի «Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը» և «Քյոռօղլի» պոեմներում, «Օտար օրիորդ և հայ պատանի» բանաստեղծության մեջ։ Այս ձևը սկիզբ առնելով քսանամյա Ռափայել Պատկանյանի «Դամբանական»-ից, հասավ մինչև հայ նոր գր-

րականության գոհարներից մեկը՝ Թումանյանի «Անուշ» պոեմը։ «Դամբանական»-ում գործող անձինք էին հայ ժողովրդի նահապետներ Հայկը, Արամը և վաղամեռիկ պատանյակը։

Ինչի մասին էլ գրելու լիներ երիտասարդ բանաստեղծը, հեռավոր Փարիզում թաղված հայ վերջին թագավորի, Տրոյայի ճակատամարտում զոհված Զարմայր զորապետի, թե Լազարյանների շառավիղ յոթնամյա մանուկի մահվան, նրա պոեմներում առաջին հերթին հորդում էր հայրենասիրական զգացումը, ազգային ինքնորոշման և ինքնագիտակցության անհրաժեշտությունը։ Սակայն «Դամբանական»-ում այդ զգացմունքները ու կոչերը ավելի որոշակի ու շոշափելի տեսք էին ստանում, առաջին երկու պոեմներում երևան եկող վերացական-ռոմանտիկ տրամադրությունները կոնկրետանում էին որոշակի բովանդակության մեջ, հանգելով ազգային անկախության համար պայքարելու անհրաժեշտության գաղափարին։

Այս հանգամանքը չհապաղեցին նկատել ռուսական պետական քաղաքականությանը նվիրված որոշ անձինք և անմիջապես գաղտնի մատնագիր ներկայացրին Կովկասյան պետական դպրոցների վերատեսուչ Սեմենովին, «Արարատ»-ում տպագրված «Դամբանական»-ի մասին և որպես ապացույց հեղինակի «սեպարատիստական» տրամադրությունների, հատուկ կարմիր թանաքով ընդգծված ռուսերեն թարգմանությամբ ցույց տվին այն նախադասությունները, որոնցով հեղինակը սգում էր կորցրած անկախությունը և հույսեր փայփայում ապագա անկախ պետականություն ստեղծելու շուրջ։ Մատնագրի հեղինակը այն կարծիքն էր հայտնում, որ հայերը իրենց ապագա անկախ պետության համար թագավոր են նախատեսել Լազարյան ընտանիքի շառավիղներից մեկին և հիմա այս վերջին շառավիղի մահվան կապակցությամբ դամբանականը երիզավորել են սև շրջանակով, որը արվում է միայն թագավորական տան անդամների մահվան դեպքում։

1851 թ. հունվարի 11-ին Սեմենովը իր հերթին զեկուցագիր ներկայացրեց Կովկասի փոխարքա Վորոնցովին, որի մեջ նշելով «Դամբանական»-ի մեջ արտահայտված հայերի սեպարատիստական ձգտումների մասին, գրել էր. «Ինչպես Ձերդ պայծառափայլությունը շնորհ կանի նկատելու սույնին կցած թարգմանությունից, հոդվածը լցված է անվայել արտահայտություններով, որոնք հեղինակի կողմից դրված են ոչ միայն հայ ժողովրդի շուրթերին, այլ նաև նրանց նախահայրեր Հայկի և Արամի բերանը և բացի դրանից շրջանակված են սգո նշանով։ Ինքս, ութ տարի Պետերբուրգում գրաքննիչ եմ եղել և փորձով գիտեմ, որ սև-շըր-

չանակը թույլ է տրվում միմիայն կայսերական տան անդամների վախճանվելու ժամանակ»[12]։ Անվայել արտահայտությունները ռուսերեն թարգմանությամբ նույնպես ներկայացվել էր փոխարքային. «Гайк и Арам оплакивают себя: горе несчастным останкам нашим, горе истлевшим костям нашим, остались тщетными вековые мечты несчастных наших потомков. Светильник, обнадеживающий возобновить потухший свет, погрузился в волны. Заженная лампада Иафетова дома на веки погасла».

Այնուհետև շարունակում էր Սեմենովը. «Այդ պատճառով ես բացատրություն պահանջեցի թե՛ Պատկանյան և թե՛ Օրբելի քահանաներից։ Պատկանյան քահանան բացատրեց, որ այդ հոդվածը գրել է նրա որդի Ռափայելը՝ Լազարյան ճեմարանի սանը, իր անկեղծ երախտագիտական զգացմունքից դրդված։ Ինքը՝ խմբագիրը նայել է այդ հոդվածի վրա իբրև մի երախտագիտական և ցավակցական արտահայտություն երիտասարդի՝ դեպի յուր բարերարները։ Հեղինակի նախադասությունները, որ կարող են ուռուցիկ թվալ, հայկական բանաստեղծությանը, իբրև արևելյան լեզվի հատուկ են։ Իսկ սև շրջանակը շինել են ամենևին չկարծելով, թե այդ արգելված բան է, կամ թե այդ հոդվածի տպագրությամբ որևէ հանցանք է գործվում գրաքննության դեմ։ Գրաքննիչ Օրբելի քահանան իր կողմից բացատրում է, նախ, որ ըստ հոդվույն և բովանդակության իբրև երախտագիտական զգացմանց արտահայտություն գրողի առ յուր բարերարս, նա ոչինչ մի պակասություն չէ գտած և երկրորդ՝ որ սև շրջանակի վրա նա ոչինչ ուշադրություն չէ դարձած, մանավանդ, որ ոչ մի օրենքով, կամ շրջաբերականով տպագրական այդպիսի նկարների գործածության մասին որոշ արգելքներ չկան։

Այս բացատրություններից ես եզրակացնում եմ, որ թե՛ գրաքննիչ Օրբելու և թե՛ խմբագիր Պատկանյանի մեղավորությունը այդ բանում մի մտացածին հանցանք չէ պարունակում իր մեջ, այլ է լոկ իրենց պարտականությունները լավ չճանաչելու հետևանք»[13]։

Վորոնցովի հրամանով գործը ավարտվում է թե՛ խմբագրին, թե՛ գրաքննիչին վերջին նախազգուշացումով արված խիստ նկատողությամբ։ Այսպիսով, երիտասարդ Ռափայել Պատկանյանի առաջին հանդիպումը գրաքննության հետ վերջացավ սեպարատիզմի մեղադրանքով, որը, ի

---

[12] Ա. Երիցյան, Գաբրիել Պատկանյան (դամբանական), «Արձագանք», 1889, № 15։
[13] «Արձագանք», Նույն տեղում։

դեպ, շարունակվեց համարյա նրա ամբողջ ստեղծագործական կյանքի ընթացքում։

Չնայած իր ծանր, անմխիթար վշտին, Խաչատուր Լազարյանը նույնպես հատուկ ուշադրություն էր դարձրել այս պոեմի վրա և ցանկություն հայտնել անձամբ տեսնել երիտասարդ բանաստեղծին, որը չբավարարվելով միայն պոեմի տպագրումով, Մողնու եկեղեցում տրված պատարագի ժամանակ հանդես էր եկել դամբանական հուզիչ ճառով[14]։

Օգտվելով այս առիթից, Ռափայելը նամակով դիմում է Խաչատուր Լազարյանին, պատմում իր անորոշ դրությունը և խնդրում կրկին իրեն վերցնել հովանավորության տակ և փորձել համոզել կաթողիկոսին՝ արձակման թուղթ տալու հարցում։ Կաթողիկոսի հետ լարված հարաբերությունները հնարավորություն չեն տալիս Խաչատուր Լազարյանին կատարելու նրա խնդիրը, բայց օժտված երիտասարդին օգնելու համար նա խորհուրդ է տալիս մեկնել Պետերբուրգ, աշխատել հայկական եկեղեցում և միևնույն ժամանակ ազատ ունկնդիր լինել համալսարանում, խոստանալով դրամական օգնություն բոլոր տարիների ընթացքում (VI, 23)։

Հուսախաբված այս պատասխանից, Պատկանյանները դարձյալ դիմում են իրենց փեսային, որը առաջինն էր պատրաստակամություն հայտնել օգնելու Ռափայելին։ Սա խորհուրդ է տալիս մեկնել Դորպատ և ազատ ունկնդիր գրվել համալսարանում, մինչև հնարավոր լինի կաթողիկոսից արձակման վկայական ստանալ։ Ամբողջ հոգով ձգտելով դեպի Դորպատ, դեպի իր ընկերները, Ռափայելը կառչում է Մկրտիչ Պոպովյանի խորհրդից և սկսում տենդագին պատրաստություններ տեսնել մեկնելու համար։ «...Ես, թե Տերը հաջողե, միտք ունիմ մարտի վերջերին դուրս գալ,— գրում է նա մարտի 9-ին Քերովբեին,— գուցե զատկին Պետերբուրգումը քեզ տեսնեմ և հոգեգալուստին միասին երթանք Դորպատ։ Բանը այն է, որ ինձ ավել խորհուրդ են տալի Պետերբուրգ մնալ, քան թե Դորպատ երթալ։ Բայց որ Դորպատ գալիս եմ, հավատա ինձ, քեզ միշտ սիրող եղբարդ, որ թե դու և Սիմեոնյանցն <չ>լինեիք Դորպատ, ես մտքիցս էլ չէի անց կացնիլ գալ, ուր մնաց, որ աշխատել գալու» (VI, 27)։ «...էլ կկրկնեմ քեզ, թե կհավատաս,— գրում է նա հետևյալ նամակում,— ես Դորպատը Ս. Պետերբուրգեն վերադասելու ուրիշ

[14] «Իմ վեհազնեից որդու մահվան վերա ոտանավոր գրել և ճառ դամբանական կարդալս Մողնու եկեղեցումը Լազարյանին դուր է եկի. ասել է, թե շատ ուզում է ինձ անձամբ տեսնել» — հայտնում է Ռափայելը իր ընկերներին, 1851 թ. ապրիլի 20-ի նամակում (VI, 37)։

պատճառ չունիմ, բայց եթե այն, որ դու Դորպատումն ես, և ես ուզում եմ քեզ հետ և Սիմեոնյանցի լինել» (VI, 31)։

Գերմաներեն լեզվով քննությունների ենթարկվելու վախը նրան ստիպում է լրջորեն զբաղվել այդ լեզվով։ Նրա այդ շրջանի նամակները լի են գերմաներեն արտահայտություններով ու նախադասություններով։ Մինչ այդ «Արարատ»-ի № 5-ից սկսած մինչև № 12 տպագրվում էր գերմաներենից թարգմանած նրա «Բժշկության աղբյուր» պատմվածքը։ Բացի գերմաներենից նա ձեռնարկում է նաև անգլերենի ուսումնասիրությունը (VI, 37), պարապում լատիներեն, հագուստներ պատրաստում, հարցնում ընկերներին նրանց անհրաժեշտ պիտույքների մասին, հայերեն գրքեր ու ամսագրեր առանձնացնում հետը տանելու համար։ Ընկերների խորհրդով նա հորդորում է թիֆլիսեցի մի քանի երիտասարդների՝ իր հետ միասին Դորպատ մեկնելու։ «Առաջին գրումդ ինձ պատվիրել էիր մեկ քանի թիֆլիսեցիներու հորդորել, որոց թիվը է նաև Թամամշյանը,— գրում է նա Քերովբեին՝ Դորպատ,— կան տեղվույս պատանիներից եկող, բայց Թամամշյանը դեռ հաստատ խոսք չի տալիս, վախենում է» (VI, 26)։

Աղաթոն Աքիմյանի հովանավորությունից հրաժարվելը և դարձյալ իր քրոջ ամուսնու առատաձեռնությանը ապավինելը նորից բորբոքում է Ռափայելի՝ բժշկական բաժին մտնելու ցանկությունը, և նա սկսում է նամակներով հորդորել ընկերներին հրաժարվելու պետատնտեսական բաժնից և բժշկական բաժին տեղափոխվել. «...Դու, Սիմեոնյանցն և Աղափիրյանցն նամաղուլ եք արել, որ պատմաբան եք եղել, միթամ հեքիաթճիներ, շատախոսներ՝ մեր ազգումը քիչ էին, որ դուք էլ ավելանում եք, խելք ունիք, մտեք բժշկական, մանավանդ դու» (VI, 29)։

Ռափայելի այս տրամադրությունները պաշտպանում էր նաև հայրը, որ ուզում էր որդուն հեռու պահել հայ վարժապետի և առավելապես հոգևորականի անապահով, անազատ կյանքից։

1851 թ. փետրվարին Ներսես Աշտարակեցին հիշելով դեռևս 1849 թ. օգոստոսի 26-ին Ն. Նախիջևանի քաղաքագլուխ Հարություն Խալիբյանի՝ քաղաքի բնակչության խնդրանքով գրած միջնորդությունը Գաբրիել Պատկանյանին վերադարձնելու մասին և ցանկանալով խպառ ազատվել նրանից, գուցե և նետել բորբոքվող պայքարի հորձանուտը, անհանգիստ տերտերին առաջարկում է վերադառնալ Ն. Նախիջևան և ստանձնել նախկին պաշտոնը։ Առաջարկությունն ընդունվում է ուրախությամբ, քանի որ համապատասխանում էր Գաբրիելի կնոջ՝ Եղիսաբեթի բուռն ցանկությանը, որը Ն. Նախիջևանում թողնելով աղջկան և

իր տունն ու տեղը, ամբողջ հոգով ձգտում էր նա վերադառնալ։ Հոր·
խնդրանքով Ռափայելը համաձայնում է հետաձգել իր մեկնումը։

Չնայած չվելու տրամադրություններին, աշխատանքը «Արարատ»-ի
էջերում շարունակվում էր։ Փետրվարի առաջին համարում երևան եկավ
«Համակերպություն Հոբա» պոեմը, որը փոխադրված էր Լոմոնոսովի
«Ода, выбранная из Иова»-ից։ Այս պոեմի թարգմանությունը Պատ-
կանյանին հետաքրքրել է դեռևս ճեմարանից։ Ճեմարանական բանաս-
տեղծ Համբարձում Փափազյանը, հավանորեն, թարգմանել էր հենց այս
նույն պոեմը, և Ռափայելը աշխատել էր իրենը ինչ-որ չափով նմանեց-
նել նրա թարգմանությանը։ «Գուցե Փափազյանը երկրորդը (այսինքն
«Համակերպության Հոբան» — Մ. Ս.) հավանի, վասնզի չթարգմանած
նախ յուրը անգիր արի, այսինքն նորա ոգին իմի մեջ ունիմ, չգիտեմ,
աջողեցա՞վ թե ոչ» (VI, 32), հարցնում է նա Դորպատի ընկերներին իր
մարտի վերջերին գրած նամակում։

Հետաքրքրությունը Լոմոնոսովի ստեղծագործությունների, մասնա-
վորապես նրա օդաների նկատմամբ, անկասկած, այդ շրջանում թելա-
դրված էր ռուս գրականության մեջ XIX դարի առաջին քառորդում մեծ
տարածում գտած Լյուբոմուդրների (Օդոևսկի, Վենևիտինով, Ռոժալին,
Շևիրև և ուրիշներ) պանթեիստական, պեյզաժային քնարերգության
նոր ըմբռնումների հետ, որոնք Շելինգի փիլիսոփայության համաձայն,
բնությունը նույնացնում էին ոգու զարգացման չգիտակցված շրջանի
հետ։ Նրանց բանաստեղծությունների մեջ բնությունը որպես իդեալի
փոխակերպություն, ոգեշնչված էր, մարդկայնացված։ Լոմոնոսովի փի-
լիսոփայական օդաներում նույնպես արտահայտվում էին նրա կոսմո-
լոգիական, մատերիալիզմին մոտ կանգնած դեիստական ըմբռնումնե-
րը, կենդանություն ստացած բնությունը իմաստավորվում էր դիցաբա-
նական պատկերումներով։ Լյուբոմուդրները մեծ տարածում տալով Լո-
մոնոսովի օդաներին ու պոեմներին, միաժամանակ իրենց ստեղծագոր-
ծություններում փիլիսոփայորեն իմաստավորեցին մարդու փոխազդե-
ցությունը բնության հետ։

Լոմոնոսովի «Ода. выбранная из Иова»-ն նույնպես մի վեճ էր բը-
նության և մարդու միջև, որտեղ բնության ուժերը հաղթանակ են տա-
նում մարդկային թույլ էության նկատմամբ։ Լոմոնոսովի օդաներին դի-
մելը ապացույց էր այն բանի, որ բացի ազգային հայրենասիրության
ռոմանտիկական իդեալից, երիտասարդ Պատկանյանի հոգին փոթորկում
էր նաև կյանքը փիլիսոփայորեն իմաստավորելու պահանջը, որն իր հե-

տագա զարգացումը ապրեց մի քանի տարի անց ստեղծած «Դանգ», «Ունայնության վրա» խոհական բանաստեղծություններում։

Բացի դրանից, այս պոեմի ընտրությունը մեկ անգամ ևս գալիս էր ասելու, թե ինչպիսի ուշադրությամբ էին հետևում ճեմարանցիները և, մասնավորապես, երիտասարդ Պատկանյանը ռուս գրականության զարգացման ընթացքին, ինչպիսի հետևողականությամբ աշխատում նրանց նմանությամբ հարստացնել հայ նորելուկ գրականությունը նոր գաղափարներով, հասկացություններով ու ձևերով։ Թարգմանության լեզուն աշխարհաբար էր, ավելի հղկված, քան նախորդ պոեմներում, զգացվում էր, որ բանաստեղծը հատուկ ջանք է թափել հասկանալի, մատչելի լինելու համար։

Սակայն «Արարատ»-ում տպագրած բանաստեղծություններից ամենաուշագրավները 23 և 24 համարներում նրևան եկած «Առավոտյան երգ շինականաց» և «Երեկոյան երգ շինականաց» ոտանավորներն էին, որոնցում աշխատանքի գովքն էր երգվում ռոմանտիկական պատրանքներով գունավորված հայրենիքում։ Փաստորեն այդ գործերը նույնն էին, ինչ որ նրա ազգային, հայրենասիրական պոեմները, միայն այս դեպքում բանաստեղծի մտորումներն ու խոհերը պատկերված էին ոչ թե պատմական-հերոսական հենքի վրա, այլ, իր ներդաշնակությամբ զարմանալիորեն գեղեցիկ գեղջկական կյանքի, որտեղ նրա վերացական-ռոմանտիկ ընկալումը չէր նշմարում ոչ մի հակասություն, ոչ մի սոցիալական անարդարություն։ Այդ բանաստեղծությունները կոչված էին դարձյալ խթանելու ազգային ինքնագիտակցությունը և լի էին հայրենի աշխարհի կյանքի գովերգումով, հայ սիրտը հպարտությամբ լցնելու միտումով։ Գրականագիտության մեջ եղել են փորձեր Պատկանյանի այս երգերը համարելու ռեալիստական շնչով գրված բանաստեղծություններ, որտեղ հեղինակը «Երկու ոտքով կանգնում է իրական հողի վրա, աշխատավոր ժողովրդին է ուղղում իր հայացքը»[15]։ Մինչդեռ ակնհայտորեն պարզ է, որ երիտասարդ բանաստեղծը ոչ թե «պատմական անցյալից վերադառնալով ներկային» իր հայացքը ուղղեց աշխատավոր ժողովրդի առօրյան, նիստ ու կացը ճշմարտացիորեն պատկերելուն, այլ հայրենիք, ազգ, հայրենասիրություն ռոմանտիկական իդեալը մերթ արտահայտեց պատմական անցյալի պատկերներով, մերթ վարդագույն մշուշով գունազարդված գեղջկական կյանքի նկարագրումով։ Այդ բանաստեղծությունները գրված էին հայ գեղջկուհու անունից, որը արթնացնելով ննջող ամուս-

---

[15] Հ. Մուրադյան, *Ռափայել Պատկանյան, Երևան, 1956, էջ 20։*

4—907

նում, նկարագրում է գեղջկական առօրյան, փառաբանում շինականի առատության պարգևող աշխատանքը, հորդորում նրան շտապել դեպի դաշտ։ Պարզ, անպաճույճ լեզուն, տաղաչափական ձևը ստեղծում էր այն հովվերգական իդիլիան, որին ձգտում էր հեղինակը։ Ճիշտ է, գաղթօջախում և այնուհետև մեծ քաղաքներում (Մոսկվայում և Թիֆլիսում) ապրած երիտասարդը պարզ պատկերացում չուներ հայ գեղջուկի կենցաղի մասին, ծանոթ չէր նրա աշխատանքի ու տառապանքի հետ, և այդ պատճառով բանաստեղծությունների մեջ սպրդել էին որոշ անճիշտ նկարագրություններ՝ հանդից վերադարձող խուրձը շալակին հնձվոր, նախշած սփռոցով զարդարված սեղան, գառան մսով խորոված, փափուկ, սպիտակ գարեհաց, աշխատանքից հետո սեղան նստելուց առաջ ձեռքերը լվացող հանդի աշխատավոր և այլն[16]։

Սակայն այս բոլոր մեղանչումները, իհարկե, չէին կարող նսեմացնել այն ընդհանուր տպավորությունը, այն խաղացկուն ոճը և, որ ամենակարևորն է, այն նոր բովանդակությունը, որ իր հետ բերեցին շինականի, գեղջուկի կյանքի պատկերացումով ներկայացված, հայրենիք փառաբանող այս երգերը։ Առանձնապես հետաքրքիր էր կառուցված բանաստեղծություններից երկրորդը՝ «Երեկոյան երգ շինականացը», որտեղ բառի և հնչյունի կրկնության օգտագործումով ուժեղացվում էր բանաստեղծական պատկերը և ստեղծվում ձայնային երանգ՝ ալիտերացիա.

Մարդըս, եկավ դաշտից՝ դաշտիցը,
Կանաչ դաշտից, դալար դաշտից տուն եկավ,
Տուն եկավ ու դուռը դըրեց՝ նստեցավ.
Շալկին խուրձ էր, խուրձ ցորենի արտիցը։
Խուրձըդ վե՛ր դիր, թող բաց անեմ թոկերը,
Մեջքեդ առնում այդ սուր, այդ սուր դերանդին.
Սուր այդ, սուր այդ դերանդիով հնձել ես,
Հնձել ես ու խուրձ կապել ես ցորենը
Ա՜խ, ճակատըդ թաց է եղել քըրտինքով,
Թո՛ղ ճակատըդ, թող որ սըրբեմ իմ ձեռքով, իմ ձեռքով։
(I, 12)

Բացի բանաստեղծություններից, Ռափայելը շաբաթաթերթում հանդես էր գալիս նաև հոդվածներով, որոնցից ամենահետաքրքրականը

[16] Այս հանգամանքը նշել է Հովհ. Թումանյանը իր հոդվածում (տե՛ս Հովհ. Թումանյան, հ. VI, Երևան, 1959, էջ 103)։

«Ազգասիրական հանդես»-ն էր[17], որտեղ դարձյալ հարց էր բարձրացվում միասնական աշխարհաբարի անհրաժեշտության վերաբերյալ։ Գովաբանելով ռուսական ինքնակալության մարդասեր կառավարությունը, որը հնարավորություն ընձեռեց հայկական լուսավորության օջախներ հիմնել թե՛ Ռուսաստանում, և թե՛ Կովկասում, հայ երիտասարդության համար բացեց համալսարանների դռները, հոդվածագիրը կոչ էր անում լուսավորված ազգերի հետ համաքայլ ընթանալով, հասնել համազգային լուսավորության։ Իսկ դրան հասնելու միակ միջոցը բոլորին հասկանալի ու մատչելի աշխարհաբար լեզվի ստեղծումն է. «Քանի ժամանակ է,— գրում էր նա,— որ Հայոց ազգը ցանկանում էր յուրյան աշխարհաբար լեզուն կարգի կանոնի դնել, զարդարել, պայծառացնել և եթե հնար կըգտնվի՝ միավորել, մեկ կարգավորյալ լեզու շինել, որ գըրաբարի խրթնությունը չունենալով, ամենայն տեղ ամենայն ընթերցողաց հասկանալի լինի»։ Ապա մի առ մի ցույց տալով բոլոր այն լուսավորության օջախները, որտեղ դարբնվել էր աշխարհաբար լեզուն՝ Պոլսի Հակոբ պատրիարքի աշխարհաբար գրությունները, Մխիթարյան ուխտի միաբանների անխոնջ աշխատանքները, Լազարյան ճեմարանի և Ներսիսյան դպրոցի ջանքերն ու հրատարակությունները, հոդվածագիրը արժեքավորում է նրանց գործունեությունը և առանձին ջերմությամբ անդրադառնում Լազարյան ճեմարանի երիտասարդ ուսուցչապետ Ստեփանոս Նազարյանի կողմից կատարվող մեծ աշխատանքին։ «Շատ տարի առաջ Ղազանու Համալսարանի Ուսուցչապետ Ստեփանոս Նազարյանց, տեսնելով, թե Ռուսաստանի կողմանց հայոց ազգը ծանր են լըսում և միտք անում այս աշխարհաբար լեզվի բարեկարգության և հասարակյալ լեզու դառնալու օգուտն, յուր բարի խորհուրդը տվեց բոլոր Եվրոպիո դատողությանն։ Այս մեկ բողոք էր ընդդեմ այն եռանդամոլության, որ ոմանք ցույց են տալիս գրաբար լեզվի պահպանության համար»[18]։ Աշխարհաբարի զարգացման և տարածման հնարավորությունը Պատկանյանը տեսնում էր աշխարհաբար գրված օրագրերի, ամսագրերի հրատարակման մեջ։ «Օրագրերը շատ շուտ կարող են յուրյանց մեջ միություն ձգել. այնպես որ սակավ ժամանակի մեջ ազգը կունենա ոչ միայն ընթերցման համար, այլև ընտանեկան խոսակցության համար մեկ պարզ, ընտիր մաքրած և հարթած հայերեն լեզու»[19]։

Անմիջապես այս հոդվածից հետո Ռափայելը դարձյալ մի աշխա-

---

[17] Տե՛ս «Արարատ», 1851, № 18։

[18] Նույն տեղում։

[19] «Արարատ», 1851, № 26։

տություն է գրում նվիրված լեզվի հարցերին և շաբաթաթերթի աշխատակիցների թիվը մեծ ցույց տալու նպատակով, ցանկանում է տպել այն Քերովբե Պատկանյանի անվամբ, բայց վերջին րոպեին վախենալով նրա դժգոհությունից, խուսափում է հանձնել տպագրության։ Հավանորեն այդ հոդվածում նույնպես հարց էր բարձրացվում աշխարհաբարի անհրաժեշտության վերաբերյալ և նշվում այն հնարավորություններն ու ճանապարհները, որոնք ըստ հոդվածագրի, տանում էին դեպի նոր լեզվի զարգացումն ու ժողովրդականությունը։ «...Ես քու անունով ուզում էի տպել իմ մեկ շարադրությունը «Լեզու» խորագրով, որ բավական հաջողած էր, բայց վերջը զղջացա, գուցե քեզ դուր չիգար, գուցե դու նույն առարկային վերա խոսելով, քան զիս լավ գրեիր, նկատմամբ լեզվին և պատմելու ոճին» (VI, 37)։

Վերջին աշխատանքը, որով Պատկանյանը հանդես եկավ «Արարատ»-ի էջերում, դա շաբաթաթերթի թղթակցուհի Լյուսյա Պետրաշկոյի մեկ բանաստեղծության կապակցությամբ գրված առաջաբանն էր, որտեղ Ռափայելն արդեն ձևակերպում էր իր ազգային հայրենասիրության հավատամքը։ Խոսելով թղթակցուհու տատի՝ տիկին Խաչիքենի Արմավիր ավանի եկեղեցու այրվելու կապակցությամբ 1842 թ. գրած հայրենասիրական բանաստեղծության մասին, նա գրում է. «Թող ամենայն հայ տեսնե և իմանա, որ հայ լինելու համար բավական չէ միայն ասել ես հայ եմ ազգով և հավատով, այլ և քաջ իմանալ յուր ազգի պատմությունը, ողբալ նորա տարաբախտության վերա, ուրախության արտասուք թափել նորա բարեբախտության պատկառանք և անկեղծություն ունենալ նորա ծեսերուն և ավանդներուն, որ ազգայնության ճյուղերից մեկն է»[20]։

Սկսելով իր գործունեությունը «Արարատ»-ի էջերում դեռևս վերացականորեն ընկալված ազգային-հայրենասիրական ընդհանուր տրամադրություններ արտահայտող գործերով, Ռափայել Պատկանյանը հետզհետե կոնկրետացնում է, դրանք հանգեցնելով ազգային լուսավորության անհրաժեշտության, որը հնարավորություն կընձեռի հայությանը ստեղծելու ազգի շահերին նվիրված, ազգային արժանապատվությամբ օժտված հասարակություն և այդ հասարակության ուժերով հասնելու ազգային անկախության։ Այդ բոլորն իրագործելու համար նա առաջին հերթին դնում էր համազգային հասկանալի, մատչելի լեզու ստեղծելու հրամայական պահանջը՝ պարբերական հրատարակությունների, առանձին գրքերի ու ազգային երգերի լայն տարածման ճանապարհով։

[20] Նույն տեղում։

Ռափայել Պատկանյանի աշխարհայացքի ձևավորմանը, անշուշտ, նպաստեցին Թիֆլիսի հայության ազգային զարթոնք ապրող միջավայրը, «Արարատ»-ի շուրջ համախմբված մտավորականների և հոր՝ Գաբրիել Պատկանյանի հետ ունեցած սերտ շփումը, ինչպես նաև Լազարյան ճեմարանի ընդհանուր մթնոլորտը։ Մոտենում էին մեկնելու օրերը, բայց Ռափայելին տանջում էր մի ինչ-որ ծանր նախազգացում, որը չուշացավ իրականանալ։ Պյատիգորսկից ստացվեց Մկրտիչ Պոպովյանի ծանր, անբուժելի հիվանդության գույժը։ Առանց սպասելու կաթողիկոսի արձակման հրամանին, Գաբրիել Պատկանյանը իր ընտանիքով, 1850 թ. մայիսի 2-ին ճանապարհ ընկավ դեպի Նոր Նախիջևան, մենակ մնացած դստերը օգնության հասնելու նպատակով։

Մեծ դժվարություններով հասնելով Պյատիգորսկ, Պատկանյանները այցելում են փեսա Մկրտիչ Պոպովյանին, որը կաթվածահար պառկած էր և հույս ուներ հանքային ջրերի զորությամբ վերականգնել թուլացած ոտների ուժը։ Տեսնելով նրան այդ վիճակում, Ռափայելը հասկացավ, որ պետք է այլ աղբյուր որոնել ուսումը շարունակելու համար։ Նորից նրան սկսեց տանջել բժշկությունից հրաժարվելու և Աղաթոն Աքիմյանի առաջարկած ասպարեզը ընտրելու անհրաժեշտությունը։ Սակայն դժվարությունները, կարծես թե ավելի են գրգռում նրա մեջ ուսման տենչը. «Եղբայր, գիտեմ, այսպիսով շատ օրերս անցավ և տարիքս հասավ, բայց ժրաջանությունս օր քան զօր առավելանում է։ Քեռոբ ջան, թե իմ տեղս մեկ ուրիշը լիներ և այսքան փոփոխության հանդիպեր, անշուշտ յուր նպատակեն կհեռանար և միանգամուց կսառեր, բայց ես միշտ ակնապիշ աչոք նայում եմ իմ մենավոր աստեղը, որ մեկ փայլում է, մեկ կորչում. տեսնենք, վերջը ի՞նչ կլինի, վերջն աստված բարի անե» (VI, 38, 39),—գրում է նա Քեռովբեին։

Նախիջևան հասնելուն պես Պատկանյան ընտանիքը մեկ ամսով մեկնում է Ստավրոպոլ, Պետրոս Պատկանյանի դստեր՝ Մարգարիտի հարսանյաց հանդեսին ներկա լինելու համար, որ ամուսնանում էր Նորնախիջևանցի հայտնի հարուստ Խոջայանների որդու հետ։ Մինչև հուլիսի սկիզբը մնալով Ստավրոպոլում Պատկանյանները վերադառնում են Նախիջևան, և տեր Գաբրիելը անցնում է իր պարտականությունների կատարմանն ու մխրճվում Հայրապետյան-Խալիբյան փոթորկված պայքարի մեջ որպես Հայրապետյան կուսակցության ամենահզոր ու հեղինակավոր անդամներից մեկը։ Մտերմանալով Նախիջևանի և Բեսարաբիայի թեմի առաջնորդ Մատթեոս Արքեպիսկոպոս Վեհապետյանի հետ, որն այդ պայքարի կենտրոնական դեմքն էր և որը, ի հեճուկս

Ներսես Աշտարակեցու, ըմբոստ քահանային նշանակել էր հոգևոր կառավարության առաջին տեղակալ, շնորհել նրան խաչափիլոն, կարգել ուսուցիչ «մանկանց եկեղեցականաց և ժողովրդականաց, քաղաքացիաց և գիւղացւոց»[21]։ Գաբրիել Պատկանյանը շուտով իր անձնական բոլոր հարցերը սկսում է լուծել նրա անմիջական օգնությամբ, մի կողմ թողնելով Ներսես Աշտարակեցուն, այդպիսով ավելի ու ավելի գրգռելով վերջինիս իր դեմ։ Ստանալով առաջնորդի բանավոր համաձայնությունը արձակման թուղթ տալու մասին, Ռափայելը շտապում է հունիսի 10-ին առաջնորդի անունով խնդրագիր ներկայացնել թեմի հոգևոր կառավարությանը։ Բացի դրանից, տեր Գաբրիելը կարողանում է համոզել առաջնորդին Պետերբուրգի հայկական եկեղեցու ծախսով ուսման ուղարկել բազմախոստում պատանուն, քանի որ Կովկասյան թոշակով ուսանելը և ավարտելուց հետո Կովկասում երեք տարի պարտադիր աշխատելը, առանձնապես չէր հրապուրում ո՛չ հորը, ո՛չ որդուն։ Սկզբում առաջնորդը թեմի այցելությունը նախատեսում էր սկսել Պետերբուրգից, և Ռափայելը առաջնորդի քարտուղար Միքայել Նալբանդյանի և իր հոր հետ միասին նախապատրաստություններ էր տեսնում Պետերբուրգ և այնտեղից էլ Դորպատ մեկնելու համար։ Սակայն շուտով առաջնորդը փոխում է մտադրությունը և այցելությունը սկսում Ղրիմի թերակղզուց։ Իսկ Ռափայելը այլևս չհանդուրժելով անընդհատ հետաձգումները, Պետերբուրգում ուսանող Վահագն եղբոր օգնությամբ թույլտվություն է ստանում մինչև հոկտեմբեր ամիս իջևանել գեներալ Խուդաբաշևի տանը և անհապաղ մեկնում մայրաքաղաք, այնտեղից հոկտեմբերին Դորպատ անցնելու հաստատ մտադրությամբ։

Հոկտեմբերին Մատթեոս Վեհապետյանը և Գաբրիել Պատկանյանը պետք է ժամանեին Պետերբուրգ, որտեղ պիտի հոգային բոլոր անհրաժեշտ պայմանները՝ Ռափայելին Պետերբուրգի Զինվորական բժշկական ակադեմիա ընդունել տալու կամ Դորպատ ուղարկելու համար։ Սեպտեմբերի 4-ին Սիմֆերոպոլում թեմի առաջնորդը ստորագրում է Ռափայել Պատկանյանի հոգևոր կոչումից արձակելու այնքան անձկությամբ սպասվող վկայականը և կարծես իր իրավասությունը թեմի բոլոր հարցերում շեշտելու նպատակով ընդգծում հատկապես այն հանգամանքը, որ «Ռափայել Պատկանյանի բարձրագույն ուսումնական հաստատություն մտնելը և գիտությունների մեջ կատարելագործվելը Հոգևոր իշխանության կողմից ոչ մի արգելքի չի ենթարկվում»[22]։

---

[21] Մ. Նալբանդյան, Երկերի լրիվ ժողովածու, հ. 1, Երևան, 1940, էջ 348։

[22] Ստորև բերում ենք այդ վկայականն ամբողջությամբ, հայերեն թարգմանությամբ.

Մյուս օրը, սեպտեմբերի 5-ին, կատարելով Գաբրիել Պատկանյանի խնդիրը, Թեմի քարտուղար Միքայել Նալբանդյանը դիմում է Պետերբուրգի Հայոց Հոգևոր կառավարության անդամ վարդապետ Եփրեմ Ալթունյանին, Ռափայելին տեղում դրագրի պաշտոն տալու հարցով, որը նրան նյութական հնարավորություն կտար ընդունվելու Զինվորական բժշկական ակադեմիա[23]։

Նամակի նույն թերթի վրա Գաբրիել Պատկանյանն իր կողմից երկրորդում է Միքայել Նալբանդյանի խնդիրը և թախանձում վարդապետին անմիջապես որդու մատուցած դիմումը ուղարկել Պերեկոպ՝ առաջնորդի կողմից հաստատվելու համար։ Նամակը ուղարկվում է Ռափայելին՝ վարդապետ Ալթունյանին հանձնելու նպատակով։ Սակայն Ռափայելն արդեն իր ողջ էությամբ ձգտում էր դեպի Դորպատ, դեպի իր Քերովբե եղբայրն ու մյուս ընկերները, ուստի Պետերբուրգում մնալու հեռանկարը այլևս նրան չէր հրապուրում։ Ստանալով Նալբանդյանի և իր հոր նամակները, նա ակամայից այցելում է վարդապետ Ալթունյանին և նրան տանը չգտնելով, կարծես, ուրախանալով, նամակը թողնում է սպասավորի մոտ, երկրորդ անգամ այլևս չգնալու որոշումով[24]։

Այդ օրերին Պետերբուրգում էին գտնվում նաև ճեմարանի ընկերներից երկուսը՝ Գևորգ Դոդոխյանը և Գրիգոր Աղափիրյանը, որոնք նույնպես սպասում էին Պետերբուրգի եկեղեցու վարչությունից սպասվող նպաստին Դորպատ մեկնելու համար և բոլորովին անօթի չմնալու հա-

---

«Նախիջևանի և Բեսարաբիայի Թեմի առաջնորդ Մատթեոսի կողմից տրվում է սույն վկայականը Նախիջևանի հայկական Մայր եկեղեցու քահանա Գաբրիել Պատկանյանի որդուն, որն ավարտել է Լազարյան ճեմարանի գիմնազիական դասընթացը, առ այն, որ նա՝ Ռափայել Պատկանյանը, իր, սույն թվի հունիսի 10-ին ներկայացրած խնդրագրի հետևանքով, համաձայն բարձրագույն հաստատությամբ հայկական հոգևորականության մասին եղած 110 հոդվածի, իմ կողմից ներկայացված է արձակման և որ Ռափայել Պատկանյանի բարձրագույն ուսումնական հաստատություն մտնելը և գիտությունների մեջ կատարելագործվելը Հոգևոր իշխանության կողմից ոչ մի արգելքի չի ենթարկվում, որի համար Ռափայել Պատկանյանին տրվում է սույն վկայականը հաստատված իմ ստորագրությամբ և իմ կնիքով։

1851 թվական սեպտեմբերի 4 Սիմֆերոպոլ

Արքեպիսկոպոս Մատթեոս

(ԳԱԹ, ՌՊֆ, № 1336)։

[23] Տե՛ս ԳԱԹ, ՄՆֆ, № 3 $\frac{3-\text{Ռ}}{45}$

[24] Այդ է վկայում Մ. Նալբանդյանի և Գ. Պատկանյանի խնդրանքը պարունակող նամակի վրա Ռափայելի ձեռքով գրած հետևյալ երկտողը՝ «Ռափայել Պատկանյանի նամակումն գրած էր այս գիրը՝ հայր սուրբ, որ Ձեզ տանը չի գտնելով թողեց բանվորի մոտ»։

մար կիրակի օրերը փոխ առում եկեղեցում։ Հավանորեն նրանք երեքով հաճախակի հանդիպում և ապագայի վերաբերյալ օդեղեն ամրոցներ էին կառուցում, գովաբանում գերմանական կրթությունը, և Պետերբուրգում մնալու հեռանկարը ավելի ու ավելի էր կորցնում իր հմայքը։

Դեռևս կյանքի դժվարություններին անտեղյակ Ռափայելին ապագան երևում էր վարդագույն մշուշի միջից, և նա Քերովբեին նամակներով պատվիրում է իր համար գտնել հարմարավետ սենյակ՝ «սեղանով, վառելյոք, կահկարասյոք», որի գինը կարող է բարձր լինել, միայն թե լինի «հանգիստ և անկարոտ»։ Խնդրում է նաև խոսել «լավ ուսանողի հետ, որ նա հանձն առնու զիս պատրաստելու ցգալ քննության (օգոստոս ամս.) բժշկական ունակություն», (VI, 39), երազում Նախիջևանից սպասվող արևելյան հանդերձով զարմացնել բոլորին։

Արդյո՞ք հոկտեմբերին Գաբրիել Պատկանյանը առաջնորդի և Միքայել Նալբանդյանի հետ միասին գալիս է Պետերբուրգ, ինչպես ծրագրված էր։ Պետք է ենթադրել, որ այո՛, չնայած այդ մասին ոչ մի տեղեկություն չի պահպանվել։ Սեպտեմբերի 5-ին առաջնորդը իր ուղեկիցների հետ գտնվում էր Սիմֆերոպոլում, իսկ նույն ամսի 15-ին՝ արդեն Քիշինևում, այսինքն այնպես, ինչպես իր նամակում ճիշտ գծում է նրանց ուղին Ռափայելը. «Ինքը (առաջնորդը — Մ. Ս.) մինչև հոկտեմբեր յուր գալուստը դեպ առ Պ<ետերբուրգ> այն մասին երկարացուց, որ յուր վիճակաց այցելությունը լավ համարեցավ սկսել Ղրիմի կիսակղզիեն, ուր և այժմ իսկ գտանի հորս հետ միասին։ Անտի կերթան (այսինքն նա և հայրս) Քիշինև, Օդեսսա, հետո կգան Մոսկով և ապա Ս. Պ<ետերբուրգ>» (VI, 38)։

Այսպիսով, պետք է ենթադրել, որ Մ. Նալբանդյանի առաջին այցելությունը Մոսկվա և Պետերբուրգ տեղի է ունեցել ոչ թե 1853 թ. հունիսին, այլ 2 տարի դրանից առաջ, և երկու պատանիները Նախիջևանում ունեցած կարճատև հանդիպումից հետո, առաջին անգամ կարողացել են ավելի հանգամանալից ծանոթանալ մեկը մյուսի հետ Պետերբուրգում։ Մինչև առաջնորդի և նրա ուղեկիցների գալը Ռափայելը ժամանակը իզուր չէր անցկացնում։ Հավատարիմ մնալով բժշկական բաժին մտնելու իր որոշմանը, նա աշխուժով Ռոբերտսոնի դասագրքով պարապում էր լատիներեն, ծանոթանում Ալեքսանդր Խուդաբաշյանի տունը այցելող հետաքրքիր մարդկանց հետ, Դոդոխյանի, Աղափիրյանի և նոր Պետերբուրգ եկած Ալեքսանդր Ռոտինյանի հետ այցելում մայրաքաղաքում բնակվող այլ անվանի հայերի, մասնավորապես մեծահարուստ Պողոսովին, որի ճոխ ճաշկերույթների ժամանակ իրենց քաղցն էին հա-

գենում հյուսիսային մայրաքաղաքում դեգերող հայ պանդուխտ պատանիները[25]։

Ռափայել Պատկանյանից առաջ կարողանում են իրենց գործերը վարգավորել և հայկական եկեղեցու վարչության գումարներով Դորպատ մեկնել Գևորգ Դոդոխյանը և Գրիգոր Աղափիրյանը։ Ճանապարհ է ընկնում նաև Ալեքսանդր Ռոտինյանը, որին Ռափայելը հանձնարարում է պատմել Քերովբեին իր ուշացման պատճառների մասին (VI, 38)։

Վերջապես հասնում է անձկալի հոկտեմբեր ամիսը, և առաջնորդի ու հոր միջոցով ապահովեցնելով իր ուսման ծախսերը, Պետերբուրգի հայկական եկեղեցու վարչության կողմից տրվող նպաստով Ռափայել Պատկանյանը 1852 թ. օգոստոսին մեկնում է Դորպատ՝ տեղի համալսարանի բժշկական ֆակուլտետ ընդունվելու նպատակով։

---

[25] Տե՛ս «Արձագանք», 1892, № 108։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ԴՈՐՊԱՏՈՒՄ

1851 թ. հոկտեմբերի կեսերին Ռափայել Պատկանյանը «սրտում պահած ազնիվ խորհուրդներ» ոտք դրեց Ռուսաստանի հռչակված համալսարանական քաղաքը՝ գերմանական փայլուն կրթություն ստանալու հույսով։ Պետերբուրգյան փողոցի վրա գտնվող հայ ուսանողական համայնքը և, մասնավորապես, նախկին ճեմարանցիները մեծ ցնծությամբ դիմավորեցին նորեկին, որն իր հետ, բացի բազմաթիվ հայերեն գրքերից ու ամսագրերից, բերել էր հայրենիքի բույրն ունեցող տարբեր տեսակի չոր մրգեր, ծխախոտ, քաղցրավենիներ։ Ռափայելից առաջ Դորպատում արդեն ուսանում և պատրաստվում էին ուսանող դառնալ 20 հայ երիտասարդներ[1], որոնք բոլորն էլ, հիմնականում բնակվում էին Պետերբուրգյան փողոցում, և այդ հանգամանքը փողոցին տվել էր նաև Արմյանսկայա անվանումը։ Ռ. Պատկանյանը նույնպես տեղավորվում է Պետերբուրգյան փողոցում տնատեր Վիրների վարձու տրվող սենյակներից մեկում։ Առաջին օրերի աղմկալի հավաքույթներից հետո Ռափայելը նկատեց, թե որքան են փոխվել իր ճանաչած տղաները, ինչպիսի մաքուր և կանոնավոր հայերենով են սկսել խոսել, ինչպիսի վառվռուն հայրենասիրական ճառեր են արտասանում նրանք հավաքույթների ժամանակ, իրենց կյանքի նպատակը տեսնելով միայն տառապյալ հայրենիքին օգտակար լինելու, նրա համար ապրելու, նրա համար զոհվելու մեջ, ինչպիսի զարմանալի հայրենասիրական երգեր են երգում աշխարհաբար լեզվով, փառաբանում հայ աղջկան, հայոց գինին, հայ հայրենիքը։ «Իմ դրությունս խղճալի էր,— պատմում է Ռափայելից մեկ

---

[1] *Այդ երիտասարդներից էին Ք. Պատկանյանը, Պ. Սիմեոնյանը, Ն. Շարոյանը, Հ. Փափազյանը, Մ. Փիրումյանը, Ի. Տ-Պետրոսյանը, Հ. Տեր-Միքայելյանը, Մ. և Ա. Ռոտինյանները, Գ. Պեպինյանը, Փ. Նազարբեկյանը, Գ. Միրիմանյանը, Ղ. Ղազարյանը, Ղուրյանը, Գ. Խատիսյանը, Գ. Աբիմյանը, Դ. Դոդոխյանը, Ռ. Պատկանյանից չորս ամիս հետո ժամանել է Վ. Ասկարյանը։*

ամիս առաջ Դորպատ հասած Ալեքսանդր Ռոտինյանը,— նախ այն պատճառով, որ շատ փոքր գիտեի հայերեն և մանավանդ դժվարանում էի խոսել ընկերներիս հետ մայրենի լեզվով, որ խստաբար պահանջվում էր։ Ես զարմացմամբ նայում էի ծանոթ ընկերներիս, որ իմ ռուսերեն ասածներիս հայերեն էին պատասխանում և այնպիսի մաքուր հայերեն, որ հենց հայոց լեզվի ուսուցչից, էմինից չէի լսել։ Ամոթս ծածկելու համար առավել մունջ էի հասարակության մեջ և ուշի ուշով հետևում էի ըմբռնել հայոց խոսակցության ոճը, որ օրավուր կարևոր էր դառնում։ Նա, որ մի ժամանակ ամենևին հայերեն չգիտեր, այժմս իմ առջևս համարձակ դատում էր, վիճում հայերեն, գործածելով միանգամայն այնպիսի բառեր, որ ես մի քանի ամիս առաջ դժվարիմաց բառեր էի համարում և որոնում էի Խուդաբաշյանի բառարանում»[2]։

Առանձնապես ցնցող տպավորություն էին գործում երեկույթներին երգվող «Ուխտի երգը», «Ուրախացուք ուրեմնը», որոնք հին գերմանական ուսանողական երգերի նմանությամբ գրել էր Դորպատի ամենաավագ հայ ուսանողներից մեկը՝ Խաչատուր Ավագյանը։ Նա այնպես էր կարողացել հայացնել այդ երգերը, կապել հայկական իրականության հետ, այնքան հարազատորեն արտահայտել հայ ուսանողների ամենանվիրական ցանկությունները, որ այդ գործերի փոխադրություն լինելը չէր ընկալվում ոչ ոքի կողմից։ «Ուխտի երգը» սխրանքների էր կոչում հայ մի բուռ մտավորական երիտասարդների, հանուն Հայաստանի բարօրության, հորդորում զինվորագրվել մահվան «Ե՞րբ դայն, ե՞րբ պայն կամի Հայաստան»։

Բանաստեղծություններ էին սկսել գրել ոչ միայն ճեմարանում անուն հանած Համբարձում Փափազյանը, այլ նաև Գևորգ Միրիմանյանն ու Գևորգ Դոդոխյանը, իսկ եղբայր Քերովբեն դարձել էր ուսանողական շրջանների ամենասիրված ու համբավավոր բանաստեղծն ու երգահանը, որի հորինած բազմաթիվ հրաշալի երգերը անընդհատ կրկնվում էին թե՛ ուսանողական հավաքույթների ժամանակ, թե՛ Դոմբերգի անտառում զբոսնելիս, թե՛ գարեջրատներում։ Լազարյան ճեմարանում սկսած ազգասիրական տրամադրություններն այստեղ՝ Դորպատում նոր ձև ու բովանդակություն էին ստացել գերմանացի ուսանողության և գերմանական ռոմանտիկ գրականության ազդեցության տակ, ավելի ու ավելի էր սրվել ու զարգացում ապրել ինքնաճանաչման և ազգային արժանապատվության զգացմունքները, ստիպելով նրանց անդադար եր-

---

[2] «Արձագանք», 1892, № № 108—110։

գել «ով չգիտե հայերէն, ոչ ճանաչէ նա զօրէն»։ Պետրոս Սիմեոնյանն իր վրա էր վերցրել հայոց լեզվի դասատուի դերը։ Իսկ ուսանող Գևորգ Աքիմյանի մոտ գտնված Աբովյանի «Վերք Հայաստանի»-ի արտադրությունը, որն այնպիսի անզերազանցելի վարպետությամբ կարդում էր Քերովբե Պատկանյանը, բացի հայրենասիրական տրամադրություններով ուսանողներին համակելուց, մեկ անգամ ևս հանգեցնում էր աշխարհաբարի կենսունակության ու անհրաժեշտության գաղափարին։ «Հայրենասիրական մի միտում է պարուրում դորպատյան պոեզիայի ազգային կոլորիտը,— իրավացիորեն նկատում է Ս. Սարինյանը,— գինին չէ, որ երգվում է, այլ հայոց գինին, սիրո ինքնամոռաց զգացումը չէ նվիրաբերվում աղջկան, այլ պոետականացվում է հայոց աղջկա հըրապույրը, պատահած ծիծեռնակին չեն նրանք հանձնում իրենց կարոտը, այլ հայրենի ծիծառին։ Ուսանողական դարեջրատների բազմահնչուն մթնոլորտում հայ պատանիներն էլ իրենց հայրենի եղերգն էին ռոմանտիկորեն գունազարդում»[3]։

Դորպատում վաղուց ի վեր գոյություն ունեին ուսանողական միություններ՝ կորպորացիաներ, որոնց մեջ ընդգրկվում էին իրենց լավ դրսևորած երիտասարդները։ Այդ միությունները ունեին իրենց օրենքները, իրենց դատարանը և դատավճիռը ի կատար ածող մարմինը։ Դըրանց նպատակները ժամանակակիցների վկայությամբ միայն բարոյական շարժառիթներն էին և նպատակ ունեին ճշմարտության ուղու վրա կանգնեցնել բոլոր երիտասարդներին։

Այդ միությունների ոգին ամենաազնիվ, ամենասրտաբաց ու եղբայրական զգացմունքներն էին. բոլոր ուսանողներն ընդհանրապես մեկը մյուսին դիմում էին «դու»-ով, գերմանացիք՝ հայերին, լեհերը՝ ռուսներին, ֆրանսիացիք՝ հրեաներին, պանդոկապանների և կոշկակարների զավակները՝ հպարտ կոմսերի, իշխանների և բարոնների շառավիղներին. հոխորտանքը նրանք ծաղրում էին, իսկ գոռոզությունն՝ արհամարհում, արիությունը՝ հարգում, համարձակությունն ու խիզախությունը՝ սիրում, գինին՝ երգում ու փառաբանում, ստորությունն ու արատները՝ պատժում ամենաանողոք կերպով։

Գերմանացի և այլազգի ուսանողների նմանությամբ կազմելով իրենց հայրենակցական միությունը, հայ ուսանողները գերմանական ռոմանտիկական պոեզիայի և ուսանողական հինավուրց երգերի ազդեցությամբ կարողացել էին ստեղծել հայ աշխարհիկ երգը, միահյուսելով իրար կյանքի վայելքի փիլիսոփայությունն ու հայրենասիրությունը։

[3] Ս. Սարինյան, նշվ. աշխ., էջ 306։

Շուտով Ռափայել Պատկանյանը նույնպես սկսում է նույն տրամադրություններով բանաստեղծություններ հորինել, մի պահ ընդմիջելով Թիֆլիսում այնքան հաջողությամբ սկսված երկարաշունչ պոեմների ստեղծման աշխատանքները։

Դորպատյան շրջանից շատ քիչ՝ ընդամենը երկու բանաստեղծություններ են պահպանվել՝ «Հայոց գինին» և «Թիֆլիզի քեֆ»-ը, երկուսն էլ գրված 1852 թ. հունվար ամսվա ընթացքում (11-ին և 20-ին)։ Թուցե անցումը հայրենասիրական, պատմական պոեմներից դեպի սենտիմենտալիզմով հագեցված, գերմանական ուսանողական երգերի նմանությամբ գրըված ոտանավորներին կաշկանդեց նրա ստեղծագործության թափը, մանավանդ, որ Դորպատում ստացած բոլոր այն նոր թարմ ընկալումները, կենսասիրության, վայելքի տրամադրությունները, կյանքը փիլիսոփայորեն իմաստավորելու ձգտումները նա արտահայտեց հետագայում՝ Մոսկվայում գրած իր բազմաթիվ բանաստեղծություններում։ Դորպատում գրված բանաստեղծություններից առաջինը ներծծված է ուրախության, գինու ու կյանքը վայելելու փիլիսոփայությամբ և միևնույն ժամանակ այդ ամենը ենթարկած հեռավոր հայրենիքը փառաբանելու մտումին։

Երկրորդ բանաստեղծությունը արդեն պատկերում է Թիֆլիսի ծանոթ ու սիրելի քեֆի ուրախության տեսարանը և պատկերում այնքան վարպետորեն ու հարազատորեն, որ ամեն քառատողից կարծես վեր են ելնում անհոգ զվարճության տրված «մին մինի բողազը շամփուր խրող» Թիֆլիսի լոթիները, քաչալ գլխով «հարալո փչող» կարմրատակած զուռնաչին, փափուկ մատով դահիրեն տմբտմբացնող «քաղքցու գյոզալ քալ-բատոնը»։

Ճիշտ այնպես, ինչպես Գևորգ Միրիմանյանը գերմանուհի օրիորդի սիրով տոգորված, հայ աղջկա վերացական սիրո ցնորքն էր երգում, Ռափայել Պատկանյանն էլ գերմանական գարեջրատանը նստած մտովին դեպի Թիֆլիս էր թռչում, պատկերում այգիներում զվարճացող իր հայրենակիցներին, փառաբանում խորոված ու կարմիր գինին, դահիրեն ու զուռնան, Նազելի հայուհու գեղեցիկ շորորանքը։

Այս գողտրիկ երգի Թիֆլիսի խոսակցական բառամթերքով ստեղծած կոլորիտը, խաղացկուն ռիթմը, դիպուկ ճշպանկարով գծված կերպարները ապահովեցին նրա համար երկարատև կյանք, մեծ ժողովրրդականություն։ Իսկ 1855 թ. Գամառ-Քաթիպայի առաջին ամսատետրակում բանաստեղծության հետ միաժամանակ տպագրված ձայնանիշները այն դարձրին հայ ժողովրդի սիրած երգերից մեկը, որ մինչև այսօր հնչում է խնջույքի սեղաններին։ Միաժամանակ այն հանդիսանում է Ռ.

Պատկանյանի՝ բարբառով գրված առաջին գործը, որով նա դեռևս չգիտակցված կերպով աշխատեց ժողովրդական լեզվով ստեղծել հային հասկանալի ու սիրելի մի ստեղծագործություն։ Հետագայում աշխարհաբարի զարգացումը և հարստացումը նա տեսնում էր տարբեր բարբառից կենսունակ բառերն ու դարձվածքները գրաբարյան բառամթերքին ձուլելու մեջ և լուրջ աշխատանքներ ձեռնարկում այդ ուղղությամբ, ինչպես չափածո գործերի, այնպես էլ արձակի մեջ։

Սակայն անցնում են արբեցումի առաջին ինքնամոռաց պահերը, և կյանքն իր առօրյա դաժան պահանջներով ծառանում է այդ մառախլապատ ու ցուրտ քաղաքը նետված մի բուռ պատանիների առջև։ Ով տնից օգնություն էր ստանում, նա մի կերպ կարողանում էր գոյությունը պահպանել, իսկ այն ուսանողները, որոնք ուղարկված էին Պետերբուրգի հայկական եկեղեցու գումարներով ուսանելու, նպաստի փոքրության պատճառով շուտով ընկնում են ծանր տնտեսական կացության մեջ։ Նպատակ ունենալով, հիմնականում, կրթված հոգևորականներ պատրաստել գերմանական համալսարանում, Լազարյանները, Աղաթոն Աբիմյանը և պետերբուրգցի մեծահարուստ Պողոսյանը Պետերբուրգի հայկական եկեղեցու գումարներով Լազարյան ճեմարանի շրջանավարտներին ուղարկում էին Դորպատ, պահանջելով, որ նրանք անպայմանորեն ընդունվեն աստվածաբանական կամ պետատնտեսական բաժինները։ Այպս ուղարկելով չափազանց փոքր նպաստ, և այն էլ անկանոն, նրանք ուսանողներին նետում էին, բառիս լայն իմաստով, աղքատության ճիրանների մեջ, ստիպում ուսումը չավարտած ետ վերադառնալ և ընդունել հոգևոր կոչում, որին նրանք, անկասկած, կընդդիմանային, եթե ձեռքներին ունենային շատ ավելի փայլուն ապագա խոստացող համալսարանական դիպլոմներ։

Այդ էր պատճառը, որ Դորպատ մեկնած բազմաթիվ հայ ուսանողներից միայն մի չնչին մասը ավարտեց համալսարանը, այն էլ գերազանցապես իրենց սեփական հաշվով սովորողները, մնացածները տարբեր կուրսերից կիսատ թողնելով ուսումը, ետ վերադարձան և ընդունեցին հոգևոր կոչում (Գրիգոր Աղափիրյան, Համբարձում Փափազյան), կամ արքունական ծախսով մտան և ավարտեցին այլ համալսարաններ (Քերովբե և Ռափայել Պատկանյաններ), կամ առանց որևէ տեղ կրկին ուսանելու ձեռնամուխ եղան որևէ գործունեության (Պետրոս Սիմեոնյան, Գևորգ Բարխուդարյան և այլն)։ Սկսեցին խուսափել Դորպատից և նախընտրել ռուսական համալսարանները Լազարյան ճեմարանի և Ներսիսյան դպրոցի բազմաթիվ շրջանավարտներ։ «Որքան սեր և ջերմ-

եռանդություն կար առաջ Դորպատ երթալ, այնքան հիմա պաղություն և քամահրանք,— 1852 թ. սեպտեմբերի 3-ին Մոսկվայից Դորպատ է գրում Ռ. Պատկանյանը,— մի մարդ ոչ թե ուզում է Դորպատ գալ հոժարել, այլ անունը անգամ լսելից փախչում է։ Էն էլ պետք է ասել, որ Նազարյանցը իրա անզգուշությամբը խրտնեցուց աշակերտներուն, կուրսերը պրծեք, ասում է, կգաք, ձեզ տերտեր կշինենք» (VI, 47)։

Առաջին ամիսները մի կերպ անցկացնելով տնից իր հետ բերած դրամով, Ռափայել Պատկանյանը մյուս ուսանողների նման առաջին անգամ կյանքում երես առ երես հանդիպում է մաշող կարիքին, տառապում քաղցից, ցրտից, դրամ ստանալու իզուր սպասումներից։ «Դորպաթի մեջ մեզ պես կյանք անցնողին աղքատությունը չի պարհուրեցնիլ...»,— բացականչել է հետագայում մի առիթով նա (VI, 278)։ Անգամ ուսանողական հավաքույթները նրա համար դառնում են անմատչելի, որովհետև իրեն և Քերովբե եղբորը հասնող ամսական 3 1/2 ռուբլին հազիվհազ բավարարում էր միայն առանց հացի կարտոֆիլով սնվելուն (VI, 297)։

«Շատ չափավոր դրամ ստանալով Պետերբուրգի եկեղեցու վարչությունից և այն էլ անկանոն, Ռափայելը մեծ զրկանքի մեջ էր և այդ պատճառով չէր մասնակցում ուսանողաց ուրախությանց»[4], իր հիշողություններում գրում է Ալեքսանդր Ռոտինյանը։

Ամբողջ օրը ծվարած իր աղքատիկ օթևանում, Ռափայելը ջանասիրաբար պարապում է բժշկական բաժին ընդունվելու համար անհրաժեշտ առարկաներով և մյուսներին էլ հորդորում հետևելու իր օրինակին։

Շատ շուտով Ռափայելի անհնազանդության լուրը ուսանող Պեպինյանի ջանքերով հասնում է Աղաթոն Աքիմյանին, որը սպառնալի նամակներ գրելով Քերովբեի և Ռափայելի ծնողներին, որոշում է մեկնել Դորպատ և ազատել «Դորպատ պլուտ Ռափայելից» (VI, 49)։

Հավանորեն բացի բժշկական ֆակուլտետ ընդունվելու Ռափայելի որոշումից, Աղաթոն Աքիմյանին վրդովել էր նաև Ռափայելի՝ իր սանտիրոջ աղջկան՝ գեղանի Լուիզ Վերներին սիրահետելու լուրը[5]։

Իսկ ամենավրդովեցուցիչը, իհարկե, Ռափայելի հանդգնությունն էր, որ ծայր աստիճան չքավորությունից դրդված համարձակվել էր նամակով խաչատուր Լազարյանից խնդրել իրեն հասանելիք նպաստը։

---

4 *«Արձագանք», 1892, № № 108—110։*

5 *«Հայրենիք», 1931, № № 1—3։ Այս մասին տեղեկություններ են պահպանվել Ռուբեն Բերբերյանի «Գամառ-Քաթիպա» աշխատության մեջ։*

Այս ամենի մասին շուտով տեղյակ են դառնում նաև Ռափայելի և Քերովբեի ծնողները, և Պետրոս Պատկանյանը շտապում է Ն. Նախիջևան, անձամբ եղբորը հայտնելու իր դժգոհությունն ու վրդովմունքը, նրա անհնազանդ որդու վարքագծի վերաբերյալ։ Չբավականանալով դրանով, նա գանգատ է գրում Սարգիս վարդապետ Ջալալյանին, որը կաթողիկոսի հրամանով քննություն էր կատարում Ն. Նախիջևանում եկեղեցական գումարների չարաշահումների հարցով։ Շատ չանցած Դորպատում հայտնի է դառնում Աղաթոն Աքիմյանի անողոք հրամանը Ռափայելի նախապատրաստական պարապմունքները անմիջապես ընդհատելու և անհապաղ Մոսկվա մեկնելու մասին, մյուս ուսանողներին գայթակղության օրինակ չլինելու համար։ Իրար հետևից Դորպատ են հասնում Գաբրիել և Պետրոս Պատկանյանների նախատական նամակները, որոնք մեղադրում էին Ռափայելին ոչ միայն անհնազանդության մեջ, այլև շրջապատի վրա վատ ազդեցություն ունենալու համար։ Ստիպված Ռափայելը խնդրում է Քերովբեից և մյուսներից Աղաթոն Աքիմյանին հայտնելու, որ իրենք չեն հրաժարվում հոգևորականությունից, այլ ուզում են միայն տերտեր և բժիշկ լինել միաժամանակ։ «Ես Աղաթոնի և Աղափիրյանի առաջ քու նկատմամբ ասացի, ինչ որ պետք էր, հոգևորականություն շուզենալդ ժխտեցի, որովհետև դու չէիր հրաժարվել, այլ միայն ուզեցել էիր տերտեր և բժիշկ լինել, այնպես չէ՞, դու էս այդ կրկնիր» (VI, 41),— թախանձում է նա Քերովբե Պատկանյանին, անմիջապես Դորպատից դուրս գալուց հետո գրած իր նամակում։

Սակայն բոլորը չէ, որ տրամադրված էին օգնելու փորձանքի մեջ ընկած իրենց ընկերոջը։ Ինչպես նման պարագաներում լինում է, բազմաթիվ ասված և չասված խոսքեր հասցվում են բարերարների ականջները և ավելի բորբոքում նրանց զայրույթը։ Գուցե այդ ամենի մեջ դեր ուներ նաև Ռափայելի անզուսպ բնավորությունը և ընկերներին ծաղրական, դիպուկ ածականներ տալու սովորությունը. «Ռափայել Պատկանյանը շատ կծու լեզու ուներ և այդ է պատճառը, որ նա սիրելի չէր ուսանողներին,— հիշել է հետագայում Ալեքսանդր Ռոտինյանը,— բայց դրա պատճառը ինքն էր, յուր երգիծական լեզվով։ Խոսելով յուր ընկերների մասին նա միշտ ծաղրում էր յուրաքանչյուրին մի կծու ածական տալով»[6]։ Առանձնապես մեծ ջանքեր էին գործադրում այդ ուղղությամբ Պեպինյանը, Դոդոխյանը, Աղափիրյանը[7]։ Շուտով Ռափայելի շուրջը Դոր-

[6] «Արձագանք», 1892, № № 108—110։

[7] «Դոդոխյանը նրա համար այդպիսի բաներ տարածում է եղել, որ իմ և քու անունը մեծերու առաջ սևացնէ և սրտերս կոտրե։ Բայց շատ մարդու վերա չարախոսու-

պատում ստեղծվում է սառնության ու թշնամանքի օղակ, ուսանողները աշխատում են չշփվել անհնազանդ, ըմբոստ երիտասարդի հետ, որ չանսալով խստագույն հրամանին շարունակում է տենդագին պարապել բըժըշկական բաժին ընդունվելու համար. «...Դու գիտես, որքան մորմոքվել էր իմ սիրտը, երբ բավական չէր, որ խեցեկույտս կրում էի, նորից ինձ վիրավորում էին ամեն կողմից անխնա ծնողք և մերձավոր ազգականք», գրում է նա Մոսկվա մեկնելուց անմիջապես հետո (VI, 49)։

Այսպես թե այնպես, այլևս հնարավոր չէր մեղմացնել Աղաթոն Աքիմյանի վայրույթը և պետք է ենթարկվեր նրա հրամանին՝ թողներ բոլոր վառ երազները, ընկերներին, ընդհատեր պարապմունքները, մոռանար Լուիզին և մեկներ դարձյալ դեպի անհայտություն։ Արդյոք հնարավո՞ր կլինի շարունակել ուսումը, թե՞ այդպես էլ համալսարան չընդունված պետք է գլխահակ ետ վերադառնար հայրենիք։ Եվ այսպես, ընդամենը վեց ամիս մնալով Դորպատում (1851 թ. հոկտեմբերից մինչև 1852 թ. ապրիլը) Ռափայել Պատկանյանը մեկնում է Մոսկվա, Կովկասյան թոշակով Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետ ընդունվելու որոշումով։ Սակայն Դորպատում անցկացրած այդ վեց ամիսները երկա՜ր-երկա՜ր տարիներ չէին ջնջվում նրա հիշողությունից։ Մեղմացել էր աղքատության, զրկանքների ու անբարյացակամության մթնոլորտի զգացողությունը, տպավորված մնացել էին միայն եվրոպական լուսավոր մշակույթին մերձենալու, գերմանական ռոմանտիկական պոեզիայի գոհարները բնագրով ճանաչելու՝ Հայնեի, Շիլլերի, Գյոթեի հանճարով հիանալու, նրանց հոգու թռիչքով իր բանաստեղծական աշխարհը ընդլայնելու հնարավորությունը, բնական գիտություններով լուրջ կերպով պարապելը, հասարակական նոր ուսմունքների մասին ավելի հիմնավոր տեղեկություններ ստանալը։ Առաջին անգամ Դորպատում գերմանացի օրիորդների անկաշկանդ վարվեցողությունը, նրանց դաստիարակությունն ու եվրոպական կենցաղավարությունը, մտահորիզոնի լայնությունը թելադրեցին նրան կնոջ մեջ ընկեր որոնելու գաղափարը, վառեցին նրա հոգում սիրո գիտակցված զգացմունքը։ «Ուրեմն թողիր դու էլ Դորպատ, բայց ի՜նչ սրտով՝ Աստված գիտե, արդյոք էն զգացմամբ, ինչպես բանտարկյալը ազատության ժամանակ է զգում, թե էն, որ զավակը՝ յուր ծնողացմե հեռանալուն։ Իհար-

---

թյուն արել են,— գրել է Ռ. Պատկանյանը, անմիջապես Դորպատից դուրս գալուց հետո,— մեր պարոն Պեպինյանը գրել է կամ թե ականջն է հասցրել Աղաթոնին և հորդ, ինչ որ մենք այլոց վրա կասկածում էինք»,— հայտնել է նա հետևյալ նամակով (VI, 41, 49)։

կե, մենք շատ անգամ նաև արտասուք թափում ենք մեր թշվառության տեղը և ժամանակը միտներս բերելով, բայց Դորպատ մեզ համար շատ ուրախության ժամեր է ցույց տվել, քան տխրության», գրել է նա Դորպատից դուրս գալուց մի քանի ամսից հետո Քերովբե Պատկանյանին (VI, 50)։

Դորպատում ստացած հոգեկան ու մտավոր հարստությունները մեծապես նպաստեցին Պատկանյանի աշխարհայացքի կազմավորմանը, որն իր հետագա զարգացումը պիտի ապրեր Մոսկվայի համալսարանի և տեղի հայ գրական-հասարակական մտքի փոթորկալից մթնոլորտում։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

1852 թ. ապրիլի սկզբներին Մոսկվա ուղևորվելու որոշումով դուրս գալով Դորպատից, Ռափայել Պատկանյանը երկու օր կանգ է առնում Պետերբուրգում, այցելում Աղաթոն Աքիմյանին, աշխատում արդարանալ նրա առաջ, փոքր-ինչ մեղմում նրա բարկությունը և, նույնիսկ, տարեկան 150 ռուբլի նպաստի առաքման խոստում ստանում նրանից մինչև Կովկասյան թոշակի ստացումը։ Հուլիսի կեսերից մինչև օգոստոսի 10-ը հաջողությամբ հանձնելով բոլոր առարկաները, նա 1852 թ. օգոստոսի 11-ին ընդունվում է Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետը։ «Այս տարի ինձմով 7 մարդ հայ մտանք համալսարան, և 2 վրացի, 200 լեհ, 25 կամ 30 ռուս։ Գլորվեցան 14 լեհ, 30 ռուս, ոչ մի հայ» (VI, 43),— հպարտությամբ հայտնում է նա Դորպատի իր ընկերներին։ Վերջապես կատարվում է նրա տարիների երազանքը՝ նա արդեն համալսարանի ուսանող է և մի քանի տարի անց բժշկի դիպլոմը ձեռքին կվերադառնա հայրենիք, ուր նրան սպասում է եռուն գործունեություն, ապահով ու անկախ կյանք։ Ուսումնառության առաջին ամիսներին Պատկանյանը կարծես ավելի կապված է Լազարյան ճեմարանի սաների ու դասախոսների, քան՝ իր համալսարանական նոր ընկերների հետ։ Դորպատում ստացած տպավորությունները դեռևս տիրում են նրա ողջ էությանը։ Մտապատկերները նրան տանում են դեպի Վերներների տունը՝ Լուիզի մոտ, նա ճեմարանի բարձր դասարանի աշակերտների ու երիտասարդ դասատուների հետ հաճախակի հանդիպումներ է ունենում, երգում դորպատյան տաղեր, խնդրում նրանցից նոր երգեր ուղարկել իրեն։ Նամակներ է գրում Թիֆլիս, իրեն ազգային խաղեր առաքելու խնդրանքով. «Ես գրել էի Թիֆլիս, որ ինձ տաղեր ուղարկեն և ձայները ևս գրեն. ստացա և հաղորդում եմ Ձեզ։ Ուղարկեցեք ձերերից ինձ, չիմանաք, որ մենք չունինք խնչույք, ո՛չ, մենք էլ գիտենք տաղով գինի խմել։ Քու տաղերը՝ զորօրինակ «Ուրախություն», «Պաչի տաղը», «Ուսանողի տաղը», «Ուրախասցուք ուրէմն...» և այլն, որ ես սիրում էի։ Էմի-

նը ինձ խոստացավ Սայաթ-Նովի տաղարանը տալ» (VI, 44), գրում է նա Դորպատի իր ընկերներին։

Նամակներից զգացվում է, որ նա իր ամբողջ ազատ ժամանակը անց է կացնում Լազարյան ճեմարանում, լավատեղյակ է ուսումնարանի անց ու դարձին, ուրախանում է ճեմարանական իրադարձություններով, տխրում այնտեղ տեղի ունեցած փոփոխությունների համար։

Առանձնապես մտահոգություն է պատճառում նրան այն, որ ճեմարանի բարձր դասարաններում ավելացել էր ռուս աշակերտների քանակը, և ճեմարանական ղեկավարությունը ոչ մի քայլ չէր կատարում դրությունը փոխելու ուղղությամբ։ «Հայերուն շատ զրկանք է, գրեթե ռուսերն են բռնել բոլոր վերին դասարանները. Էմինը անզգա է մտիկ անում այս ամեն անցքին։ Մսուրը իր գրպանին է մտիկ անում։ Ցույց է տալիս սրտացավ, բայց փարիսեցություն է։ Նազարյանցը ձայն բարբառո հանապատի» (VI, 43), վրդովմունքով գրում է նա Քերովբե Պատկանյանին։

Ուրախացնում են նրան հայ աշակերտների միջև գոյություն ունեցող «ազգասիրական ընկերասիրությունը» և «communism»-ը, (VI, 43) հայերեն երգերը ուրախությամբ կլանելը ու տարածելը։ Իսկ առանձնապես մեծ հիացմունք է պատճառում Ստեփանոս Նազարյանի հայկական դպրոցների համար պատրաստվող «Առաջին հոգեղեն կերակուր հայ ազգի երեխաների համար» գիրքը, և այդ գրքի աշխատանքների հետ ծանոթանալուց հետո, դուցե, նրա մտքում առաջին անգամ փայլատում է ազգային երգարան կազմելու և հայ երգը հայկական բոլոր շրջաններում տարածելու գաղափարը։ Սկսվում են առաջին աշխատանքերն այդ ուղղությամբ։ Ինչ որ ուներ հավաքած իր մոտ հին, թե նոր երգերից, խնամքով արտագրվում է հատուկ տետրակի մեջ, նամակներ են թռչում Դորպատ, Թիֆլիս, Ն. Նախիջևան ազգային երգեր ուղարկելու թախանձանքով։

Դեռևս դորպատյան տրամադրություններով են հագեցված Մոսկվայում գրված առաջին ոտանավորները՝ «Վերջին գարունը», «Ուսանողի երգը», «Սիրո երգը»։ Դրանցից առաջինը, որը գրված է անմիջապես Մոսկվա հասնելու առաջին օրերին, գերմանական ռոմանտիկական պոեզիայի նմանությամբ գրած թախծալի մի երգ է, որտեղ բնության զարթոնքը հակադրվում է իր ներքին աշխարհի ունայնությանն ու անանց տխրությանը։ Այս տրամադրությունները համահնչուն էին երիտասարդ բանաստեղծի հոգեվիճակին, որի երազները, սիրո ցնորքը մնացել էին հեռվում, և ինքը կյանքի բիրտ հարվածով անջատվելով դրանցից, եր-

բեք ու երբեք չի կարողանալու վայելել այն, և ելքը այս ամենից միայն սփոփարար մահն է, որ մոռացումի սառը շիրմի մեջ կամփոփի իրեն։

Իր անհույս, անհաս սիրուն՝ Լուիզ Վերներին է նվիրված նաև Մոսկվայում գրված երկրորդ ոտանավորը՝ «Սիրո երգը»։ Դորպատյան բոլոր երգերի նման այս բանաստեղծությունը ևս փառաբանում է հայ գեղանի կույսի՝ Զանանի հմայքն ու գեղեցկությունը, ողբում իր անպատասխան սերը։ Ամբողջ էությամբ ձգտելով դեպի գեղանի գերմանուհի Լուիզը, նա իր երգը նվիրում է հայ աղջկան, տենչում նրան։

Մի քիչ այլ տրամադրություններ է արտահայտում նրա երրորդ ոտանավորը՝ «Ուսանողի երգը»։ Առաջին հայացքից թվում է, թե հեղինակը դարձյալ փառաբանում է վայելքն ու անհոգ զվարճությունը, սակայն իրականում նա զգուշորեն հորդոր է կարդում թե՛ իրեն, թե՛ մյուս հայ ուսանողներին, չշեղվելու իրենց հիմնական նպատակից, չտրվելու «չար ուսմունքներին»։

Հավանորեն, հենց այդ բանաստեղծությունների ստեղծման օրերին էլ ծնունդ է առնում Ռափայել Պատկանյանի առաջին գրական կեղծանունը՝ «Աշուղ Կարապետ»-ը, որ այսուհետև պիտի արտահայտեր երիտասարդ բանաստեղծի հիմնական առաքելությունը՝ ժողովրդի մեջ իր հորինած երգերով սեր ներարկել հայրենիքի, հարազատ լեզվի, հայկական երգի նկատմամբ։

Այստեղ չկային բանաստեղծական այն հնարանքները, որոնք կարողանում էին կաղմակերպել միտքը, թևավորել բանաստեղծական խոսքը ու ոգի հաղորդել տողին։ Չկար նաև գեղեցիկ, հնչեղ հայերեն լեզուն, որն այնպես աչքի էր զարնում թե՛ «Պանդուխտ հայ ի Փարեզ», և թե՛ «Զարմայր Նահապետի մահը» պոեմներում։ Կարծես հեղինակին հետաքրքրողը այս տաղերում պարզ, անպաճույճ բովանդակությունն էր, որ պիտի երգվեր և տարածեր հայրենասիրության սաղմերը ժողովրդի բոլոր խավերի մեջ, և որոնք իրենց բնույթով ավելի երգի տեքստեր էին, քան «Ապողոնի ճաճանչ» ունեցող բանաստեղծություններ։

Շուտով, սակայն, Մոսկվայի համալսարանի ժամանակի առաջավոր գաղափարներով տոգորված մթնոլորտը իր վճռական ազդեցությունն ունեցավ բժշկական ֆակուլտետի երիտասարդ ուսանողի վրա։

Մոսկվայի համալսարանը այդ տարիներին շարունակում էր մնալ ռուսական գիտության և հասարակական-քաղաքական մտքի ամենակարևոր օջախներից մեկը։ Համալսարանում զարգացում ապրող առաջընթաց գիտությունը անքակտելիորեն կապված էր երկրում տիրող հեղափոխական տրամադրությունների ու շարժումների, ինչպես նաև ռու-

սական կլասիկ փիլիսոփայության զարգացման հետ։ Համալսարանի սաները ամենաեռանդուն մասնակցությունն էին ունեցել դեկաբրիստների շարժման և ապստամբության շրջանում։ Մոսկվայի համալսարանում Գերցենի, Օգարյովի, Բելինսկու ստեղծած խմբակները մեծ դեր կատարեցին ոչ միայն այնտեղ առաջավոր գաղափարների հաստատման գործում, այլև երկրում ծավալված հեղափոխական-դեմոկրատական շարժման զարգացման համար։ 1848 թ. Արևմուտքում տեղի ունեցած հեղափոխական իրադրությունների հետևանքով Մոսկվայի համալսարանը, ինչպես նաև Ռուսաստանի այլ համալսարաններ ենթարկվեցին ծանր հետապնդումների և սահմանափակումների, սակայն այդ ամենն անգամ անզոր եղան կոտրելու այնտեղ թագավորող տրամադրությունները, այդ «վտանգավոր ազատասիրության գլխավոր շտեմարանի» ոգին[1]։

Քառասնական և հիսունական թվականները հանդիսացան Մոսկվայի համալսարանի գիտական ծաղկման տարիները, առանձնապես մեծ առաջընթացի հասավ բժշկական ֆակուլտետը, որտեղ դասախոսություններ էին կարդում կենդանաբանության հռչակավոր պրոֆեսոր Ռուլյեն, անատոմիայի փայլուն մասնագետ պրոֆեսոր Գլեբովը, վիրաբույժ Ինոզեմցովը, ֆիզիկոս Սպասկի-Ավտոնոմովը, բուսաբան Ֆիշերը, հանքաբան Շչուրովսկին և այլք։ Բոլոր այս նոր առարկաները գրավեցին երիտասարդ ունկնդրին, և նա շտապեց ձեռք բերել տնկաբանության, անդամազննության, քիմիայի, կենդանաբանության, հանքաբանության և ֆիզիկայի դասագրքեր (VI, 52)։

Մոսկվայի համալսարանի զարթարար ոգին նրան ստիպեց կասկածի տակ առնել գերմանական կրթության անգերազանցելիության մասին տարածված կարծիքը. «...Մի՞թե նախապաշարմունք չէ, որ Մոսկովից դուրս եկողը Դորպատի դուրս եկողից միշտ ցած է գիտությամբ,— գրում է նա Քերովբեին, հորդորելով նրան էլ տեղափոխվել Մոսկվա,— դու ինքդ քննիր։ Աստված վկա՝ մեկ բան ուզում էի ասել, բայց կասեք, թե չարախոսություն է անում, թե չէ կտեսնեիք, որ Դորպատի մերոնց ուղղությունը շատ վատ է եղել» (VI, 42), գրում է նա, ակնարկելով անընդհատ ուրախություններն ու գինարբուքները։

Մոսկվայի համալսարանի հայ ուսանողների շրջաններում տարածված էր դորպատցիների մասին հորինված երգը, որտեղ ծաղրվում էր նրանց անհոգ, զվարճալիքներով լեցուն կյանքը։

---

[1] Տե՛ս «Колокол», 1862, № 118:

Նվ այդ երգը, որ Դորպատում շարժում էր բոլորի զայրույթը, այժմ Ռափայելին այլևս չափազանցություն չէր թվում, և նա չէր կարողանում իրեն դիմող հայ աշակերտներին գովաբանել դորպատյան ուսումը, գերմանական համալսարանը բարձր դասել ռուսականից: «Շատերը գալիս էին ինձանից էին հարցնում, եղբայր, ինչ կարող էի նոցա ասել հօգուտ Դորպատին, մի՞թե չէին ասիլ ինձ՝ թե լա՞վ էր, ինչու դու չմնացիր. իսկ թե իմ անցքը պատմեի, դարձյալ կխրտնվեին. ես ամեն անգամ ասում էի՝ սովորել ուզողը կարող է ամենայն տեղ սովորել» (VI, 43):

Խիստ կցկտուր տեղեկություններ են պահպանվել Ռափայել Պատկանյանի բժշկական բաժնում սովորելու մասին, առայժմ հայտնի է այն, որ նա երկու լրիվ տարի (1852 թ. օգոստոսից մինչև 1854 թ. սեպտեմբերը) հաճախելով բժշկական ֆակուլտետի դասախոսություններին, հանձնել է միայն առաջին կուրսի համար նախատեսված առարկաները[2]:

Հետագայում, նա իր հեռացումը բժշկական ֆակուլտետից պատճառաբանում է անատոմիա առարկայի նկատմամբ ունեցած անդիմադրելի զզվանքով: Պետք է ենթադրել, որ իսկապես գեղջուկ երիտասարդը չէր կարողանում իրեն ստիպել անտարբեր, հանգիստ ուսումնասիրել դիակները, ոսկորները, գանգերը: Իր բորբոքված երևակայության մեջ նա օժտել է նրանց կենդանի մարդկանց զգացմունքներով, խղճացել, սարսափել, ահաբեկվել նրանց վրիժառությունից: Հետագայում՝ 1863 թ. գրած «Մեռելի վրեժխնդրությունը» նովելում Պատկանյանը նկարագրում է անդամազննության դահլիճը, դիակները և նրանց ունեցած սարսափելի ներգործությունը իր հերոսի վրա: Անկասկած, նովելը պարունակում է որոշ ինքնակենսագրական տարրեր, և Պատկանյանն իր նկարագրած երիտասարդի նման սահմռկել է բզկտված դիակ-

---

[2] Ստորև բերում ենք Մոսկվայի համալսարանի կողմից Ռ. Պատկանյանին տրված փաստաթուղթը բժշկական ֆակուլտետից իր դիմումի համաձայն դուրս գալու մասին. «Տեղեկանք. սույնը ներկայացնող հոգևորականի որդի Ռափայել Պատկանյանը ընդունվել է Մոսկվայի կայսերական համալսարանը 1852 թվականի օգոստոսին, լսել է առարկաներ բժշկական բաժնում ունենալով լավ վարք, իսկ այժմ համաձայն իր դիմումի արձակվել է առաջին կուրսից, որի հետևանքով դասընթացը ավարտած ուսանողներին տրվող իրավունքներից օգտվել չի կարող, իսկ քաղաքացիական ծառայության մտնելու դեպքում օրենսգրքի հիման վրա (1842 թ. հր.), աշխատանքային օրենքի 81 հոդվածի համաձայն, իրավունք ունի դասվելու երկրորդ կարգի աստիճանավորների թվին: Ի հաստատումն որի տրվում է սույն վկայականը Պատկանյանին, համապատասխան ստորագրություններով և համալսարանական կնիքով: Մոսկվա, սեպտեմբերի 27, 1854 թվականի» (ГИАЛО, ֆոնդ 14, ցուցակ 5, գործ 272, թ. 7):

ների տեսքից, երկա՜ր-երկա՜ր գիշերներ սարսափահար արթնացել նրանց սառը ձեռքերի հպումից, անխիղճ բղկտումների համար հատուցում պահանջող անդրշիրիմյան ձայներից։ «Այս բանը պատահեցավ ինձ 1825 թվականին[3], երբ ես ուսանող էի Մոսկվայի բժշկական ճեմարանում,— սկսում է իր պատմվածքը Ռափայել Պատկանյանը և ապա զարգացնելով պատմվելիք դեպքերը, ուսանողական ուրախ հավաքույթում գինովցած երիտասարդին գիշերվա կեսին մտցնում է անատոմիական սրահը, ուր դրված էին ցերեկը նրանց ուսումնասիրած դիակները.— Եթե գինու գոլորշիքը շատ կամ քիչ մնացած էին գլխուս մեջ, այն րոպեին ամենը ցնդեցան և ուշքս ու խելքս բոլորովին վրաս եկան և ի՞նչ տեսնեմ, ես անդամահատության ամփիթեատրոնի մեջ էի. այս այն սենյակն է, որ սովորաբար բերում են մեռելների մարմինը (դիակը) և բժշկականության ուսանողները մարդու կազմվածքը և գործանավոր մասունքը քննելու և սովորելու համար կտրտում են նորան։ Թեև ես անփորձ նորամուտ չէի, որ մեռելի տեսքից վախենայի և թեև անդադար էլ ու մուտք անելով այս սենեկի մեջ ընտելացել էի նորա սոսկալի ազդեցությանը, բայց անակնունելի պատահմունքը, մթությունը և մեռելի զանգահարությունը, որ լսվում էր մոտիկի եկեղեցիեն— այս ամենը միասին առած սրտիս մեջը մեկ անվանելի և անսովորական վախ մտցուցին»[4]։

Սակայն, բացի անատոմիայի նկատմամբ ունեցած տհաճությունից, անկասկած, երիտասարդ Պատկանյանի մտքերին աստիճանաբար սկսում է տիրել Մոսկվայի համալսարանի ամենափայլուն գիտնականներից ու հռետորներից մեկի՝ Տիմոֆեյ Գրանովսկու հրապարակային դասախոսությունները։ Գրանովսկին, այդ «պատմության Պուշկինը» ունկնդիրներին գրավում էր ոչ միայն հասարակության պատմության զարգացման վերաբերյալ ունեցած իր առաջավոր հայացքներով, որոնք արտահայտվում էին պատմական պրոցեսները բնության և պատմական գիտությունները բնագիտության հետ զուգակցելու, պատմության մեջ ժողովրդի և անհատի դերի ճիշտ ըմբռնման, պատմությունը մատերիալիստորեն ընկալելու ձգտման մեջ, այլ նաև իր ամբիոնը «հասարակական բողոքի տրիբուն» դարձնելու, ի պաշտպանություն ճորտ գյուղացու ձայն բարձրացնելու, մարդկային արժանապատվությունը ոտնակոխ անելու և ազատ միտքը հալածելու դեմ ելույթ ունենալու մեջ. «Երբ Գրանովսկուն տեսնում էիր ամբիոնի վրա,— գրել է Գերցե-

[3] Պետք է ենթադրել, որ թվականը շրջված է՝ այսինքն 52-ի փոխարեն գրված է 25։

[4] «Մեռելի վրեժխնդրությունը», «Հյուսիս», 1864, № 17։

նը,— հոգիդ թեթևանում էր. «Դեռ ամեն ինչ չի կորել, եթե նա շարունակում է իր ճառը»,— մտածում էր ամեն մեկը և շնչում ազատ»[5]։

Իր դասախոսությունների ընթացքում Գրանովսկին անդրադառնում էր նաև հայ ժողովրդի պատմության հարցերին և որպես ժողովրդի անվեհերության ու կենսունակության օրինակ բերում էր Լենկթեմուրի դեմ պայքարի ելած հայ մարտիկների անօրինակ սխրագործությունները[6]։ «Երբ ես դուրս էի գալիս նրա լսարանից,— հետագայում պատմել է Ռ. Պատկանյանը Երվանդ Շահազիզին,— նա այնպես էր ներգործում իմ վրա, որ ես կարծես թե մաքրված, ազնվացած էի լինում»[7]։

Իր ամբողջ կյանքի ընթացքում Ռափայել Պատկանյանը պահեց Գրանովսկու նկատմամբ ունեցած հիացումը, ամենամեծ չափանիշ համարելով մարդու համար Գրանովսկու, Ստանկևիչի հետ համեմատվելը։ «Կհավատա՞ս, Փիլիպպոս, որ ես Աբգարին մի խղճալական երիտասարդ էի երևակայում, մի հայ Սթանքեվիչ էի համարում, շինող... Գռանովսկիի և <...> այլոց, որոնք այս օրս ռուսաց գրականության մարգարիտներն են» (VII, 132)։

Հետևանքը լինում է այն, որ այնքան երազած բժշկական կրթությունը ավելի ու ավելի սակավ է սկսում հրապուրել Ռափայել Պատկանյանին, և նա հենց առաջին տարում չի հանձնում սահմանված քննություններից մի քանիսը և երկրորդ տարին մնում դարձյալ առաջին կուրսում։ Հիմա նրան ավելի հաճախ հանդիպում էին պատմական ֆակուլտետի դասախոսություններին, քան բժշկական. նա արդեն լրջորեն մտածում էր մասնագիտությունը փոխելու մասին և քայլեր էր կատարում պատմական ֆակուլտետում ազատ ունկնդիր գրվելու ուղղությամբ։ Հենց առաջին կուրսում նա մտերմանում է դանձակեցի ուսանող Մնացական Թիմուրյանի և նորնախիջևանցի Անանիա Սուլթան-Շահի հետ, որին գիտեր տակավին Լազարյան ճեմարանից։

Մոսկվայի համալսարանի ուսանողության շրջաններում տիրող ազատասիրական ոգին, բազմաթիվ ուսանողական խմբակներում քննարկվող ժամանակի առաջավոր մտավորականության հուզող հարցերը վարակեցին նաև ռոմանտիկական երազներով ապրող հայ երիտասարդներին, որոնք սկսեցին մտածել իրենց խմբակը ունենալու մասին,

---

[5] Герцен, Собр. соч. в тридцати томах, т. IX, М., стр. 122.

[6] Տե՛ս С. Дароняи, М. Налбандян и русские революционные демократы. М., 1967 г., էջ 38։

[7] Տե՛ս ԳԱԹ, Ե. Շահազիզի ֆ., II բաժին, № 27, Ռ. Պատկանյանի կենսագրությունը էական գծերով, էջ 7։

որի ջանքերով պիտի լուսավորություն ու ընթերցասիրություն տարածվեր հայերի մեջ։ Այդ մտորումները Ռափայելին սկսել էին հուզել դեռևս Թիֆլիսում։ Դորպատում նրանք դարձել էին ավելի շոշափելի, ընդունել գործնական տեսք, իսկ Մոսկվայում սովորելու հենց առաջին տարում արդեն որոշակի քայլեր էին արվել այդ երազանքներն իրական հողի վրա դնելու ուղղությամբ։ Պետք է ենթադրել, որ հենց 1853 թ. սկզբներին բժշկության ուսանողներ Ռափայել Պատկանյանի, Մնացական Թիմուրյանի, Անանիա Սուլթան-Շահի մոտ ծագում է Մոսկվայի համալսարանի առաջադեմ ուսանողության օրինակով խմբակ ստեղծելու գաղափարը։

Թե ինչ ձևով պիտի տարվեր ապագա գործունեությունը, դեռևս լրիվ պարզ չէր երիտասարդների համար, սակայն Գրանովսկու դասախոսությունները, գաղտնի կերպով միմյանց տրվող Բելինսկու, Գերցենի ստեղծագործությունները կոչում էին նրանց մի ինչ-որ սուրբ գործունեության, իրենց ժողովրդին ծառայելու, նրա համար մարտնչելու ու զոհվելու պահանջի։ Անհավանական չէ, որ Մոսկվայի համալսարանի նորընտիր տեսուչ Թեոդոս Վեսելագոյի հրամանով 1853 թ. մայիսի 10-ից մինչև 30-ը Պատկանյանի ձերբակալվելը կապված լիներ ինչպես արգելված գրականություն կարդալու, այնպես էլ իր կարծիքները բարձրաձայն արտահայտելու հետ։ Ռեակցիայի այդ ծանր տարիներին առանձնապես մեծ վստահություն չէր վայելում նաև ինքը Գրանովսկին, որը Պետրաշևսկու գործի կապակցությամբ գտնվում էր ոստիկանության և մոսկովյան մետրոպոլիտ Ֆիլարետի հսկողության ներքո և, բնական է, նրա դասախոսություններով բուռն կերպով հիացող ուսանողները նույնպես պիտի գրավեին համալսարանի ղեկավարության ուշադրությունը։

Արգելափակման պայմանները բավականին խիստ են եղել. միայնակ սենյակ, առանց լույսի և թեյի, դռան ետևը՝ լուռ պահապան զինվոր, որի հետ կարելի է բանակցել միայն ամենաանհրաժեշտ բաների մասին։ «... Ես խոսել չեմ կարող, բացի ամենահարկավոր բաների վրա, պատճառն որ անիծից ծնունդ ինցպեկտորը խստիվ արգելել է. ես կենում եմ Охотный ряд-ից առաջին թվումը, հին համալսարանի երկրորդ դստիկոնումը. 1 և 2 պատուհանները սայլադուռից. այնպես որ, թե անունը տաս՝ կլսեմ. նաև կարող ես, ինչ ասես, մեջը գցել, մանավանդ ծխախոտ ու լուցափայտ, որոնց համար ջերմաջերմ էրվում եմ» (VI, 54),— գրում է նա Մոսկվա եկած Քերովբե Պատկանյանին և այդ նամակին կցած ոտանավորի մեջ փորձում նկարագրել իր վիճակը և կարծես իր արգելափակման պատճառը հայտնած լինելու համար բնա-

բան դնում հետևյալ խոսքերը. «Սիրելիք՝ ազատությունը սիրեցեք» (VI, 55—56)։

Այս դեպքը, անկասկած, անդրադարձել է նրա վարքագծի ընդհանուր գնահատականի վրա, և Պետերբուրգի համալսարան փոխադրվելու ժամանակ նրան տրված վկայականի մեջ նշվել է վարքի «լավ» գնահատական, որը ռուսական համալսարաններում համարվել է վարքի ոչ դրական արժեքավորում[8]։ Անհանգստություն է ապրել հետագայում այդ կապակցությամբ նաև ինքը՝ Պատկանյանը, երբ Պետերբուրգի համալսարանից հարցում են կատարել Մոսկվայի համալսարան նրա բարեհուսությունը ստուգելու համար՝ «Մուսինը ողորմեցավ՝ այսինքն, խիստ պահանջմունքները թողեց, բայց լսել եմ, որ իբր թե ուղարկել է Մոսկովի համալսարան՝ իմանալ իմ վարքը. իհարկե եթե Վեսելագոն ցխտի գործս, չափազանց կվնասե ինձ» (VI, 101),— գրում է նա 1856 թ. իրենց «Ավատի» անդամ Գևորգ Քանանյանին։

Վրա է հասնում 1853 թ. օգոստոս ամիսը, երբ Ն. Նախիջևանից հասած սարսափելի լուրը իր ողջ ուժգնությամբ ցնցում է Ռափայելի հոգին։ Կաթոգին սիրված և միշտ իր համար անխախտ հեղինակություն եղած հոր ձերբակալությունը, նրա դեմ առաջ քաշված անհեթեթ մեղադրանքը, անխնամ մնացած մոր և քույրերի անելանելի դրությունը ցասումով ու դառնությամբ են լցնում երիտասարդ Պատկանյանի հոգին։ Հոր ձերբակալման հետ համարյա անհնար է դառնում ուսումը շարունակելու նպատակը։ Կովկասյան թոշակը, որը նրան խոստացել էր հայթայթել հայրը, առաջնորդ Մատթեոս Վեհապետյանի օգնությամբ, նրա քահանայագործությունից զրկվելու պատճառով մնացել էր անիրագործելի, և նա այդ ամբողջ տարին կառավարվել էր տնից ուղարկվող օգնությամբ[9]։ Այժմ պետք էր որոշել, թողնե՞լ ուսումը և վերադառնալ տուն, օգնության ձեռք մեկնել մորը և քույրերին, որոնք գրում էին, թե «ապրելու համար ստիպված պիտի լինեն ժամին դուռը թախտ բռնել», թե՞ շարունակել այդքան դժվարությամբ ձեռք բերած ուսանելու իրավունքը։ Հաղթանակեց վերջինը, մանավանդ որ եռանդուն Վարվառա քույրը, իր շուրջը հավաքելով հոր աշակերտներին, սկսեց շարունակել նրա գործը և հայթայթել ընտանիքի ու բանտարկյալի օրվա պարենը[10]։

---

[8] Տե՛ս սույն աշխատության էջ 71, Մոսկվայի համալսարանից Պատկանյանին տրված տեղեկանքը։

[9] «Հիշատակարան», էջ 465։

[10] «Այրասիրտ, այրիացած կենակիցն, որբացած արխասիրտ, անվեհեր և աներկյուղ դուստրն, որ մոր միակ քաջալերող և խրախույս տվողն էր, թե ինչ անձնվեր ողջակիզու-

Այս անարդարությունը՝ Ն. Նախիջևանի աղայական դասի հաղթանակը, Ռափայելին ստիպեցին լրջորեն մտածել սոցիալական այն անարդարությունների մասին, որոնք փողատեր աղաներին հնարավորություն են ընձեռում ոտնակոխ անելու ամեն մի իրավունք, բանտում փտեցնել բողոքող ամեն մի ըմբոստի. «...Խե՜ղճ մարդ, խեղճ մայրս և խե՜ղճ մեր ազգը. ի՞նչ ամոթ և խայտառակություն» (VI, 185),— գրել է նա Քերովբե Պատկանյանին այդ օրերին։

Հիմա արդեն նրա գոյությունը պահպանվում էր միայն պատահական մասնավոր դասերով և թղթերի արտագրությամբ։ Սակայն մեկը մյուսի ետևից երիտասարդ Պատկանյանի գլխին թափվող անհաջողությունները ու դժբախտությունները, կարծես ավելի էին կոփում նրա կամքը, կրթություն ստանալու, իր խեղճ, թշվառության մեջ խարխափող ազգին օգտակար լինելու անհագ տենչը. «...Աստված ինձ զրկելով ամեն արժանավորությունից, տվել է մի զորավոր զգացմունք՝ սեր հայրենյաց, որ այնպես միացել է իմ էության հետ, որ մի օր չիմտածել հայի օգտին, մի օր չիցավել նորա թշվառությանը, մի օր չիմտածել նորա ապագայի վերա, ինձ համար մահ է։ Ինչե՞ր չէի բերել գոհ նորա համար, եթե հարկը պահանջեր...» (VI, 65, 66),— գրում է նա մի տարի անց իր ընկերներին։

Հայտնի չէ, թե Լազարյան ճեմարանի ուսուցչական կազմը և Մոսկվայի հայ գաղութը ինչպես ընդունեցին Գաբրիել Պատկանյանի ձերբակալության լուրը և ինչ վերաբերմունքի արժանացրին նրա որդուն, սակայն ելնելով այն ծանր հարաբերություններից, որ 1853 թ. հոկտեմբերից սկիզբ առան ճեմարանի կրտսեր ուսուցիչ, Գաբրիել Պատկանյանի սիրելի աշակերտ Միքայել Նալբանդյանի և ապա Ռափայելի ու Ստեփանոս Նազարյանի միջև, համենայն դեպս պիտի ենթադրել, որ նրան այնտեղ շրջապատում էր սառնության որոշակի օղակ։ Չափազանց անսպասելի և պարմանք հարուցող էր Միքայել Նալբանդյանի և Ռափայել Պատկանյանի ղուսպ և, նույնիսկ կարելի է ասել, անբարյացակամ վերաբերմունքը միմյանց նկատմամբ։ Իսկ որ այդ հարաբերությունները սկիզբ էին առել հենց 1853 թ. վերջերից, այսինքն, անմիջապես Գաբրիել քահանայի ձերբակալումից հետո տեղի ունեցած հանդիպման ժամանակ, ոչ մի կասկած չի հարուցում։ Դեռևս երկու տարի առաջ,

---

թյամբ էին մշտակեզ խանձվում և այրվում։ Առաջին ամիսն՝ շաբաթ երկու կամ երեք անգամ, հետո ամենայն օր, երբ ծնողասեր դուստրն հորն բանտի մեջ և մորն խաչաչարչար նեղության մեջ պահելու համար սկսավ յուր ծնողի ընդհատյալ մանկավարժությունն առաջ վարել» («Հիշատակարան», էջ 475)։

1851 թ. սեպտեմբերին, Միքայել Նալբանդյանը վերաբերվում էր նրան ջերմությամբ, Եփրեմ վարդապետ Այթոնյանին գրած նամակում համարում իրեն «իբրև եղբայր նորա հարազատ նոյն և որդի ծնողի նորա, իմոյն երախտաւորի»[11]։

Դրանից հետո երիտասարդները չեն հանդիպել, եթե ենթադրենք, որ նրանք հանդիպել են Պետերբուրգում նույն այդ շրջանում, ապա շատ կարճ ժամանակով։ Առաջին իսկական, երկարատև հանդիպումը մանկական տարիներից հետո տեղի է ունեցել Մոսկվայում, 1853 թ. հուլիսին և ապա ավելի մոտիկից՝ հոկտեմբերին, չափազանց դրամատիկ իրադրության պայմաններում։ Չնայած Ռափայելը ամբողջ էությամբ հավատում էր հոր անմեղությանը, սակայն նրա դեմ հարուցած մի շարք ծանր քրեական մեղադրանքները ստիպում էին նրան ամաչել մարդկանցից։ Ահա թե ինչ է գրում այդ մասին Ռուբեն Բերբերյանը. «Անդունդը բացվել էր Ռափայելի առաջ։ Մի կողմից նա համոզված էր, ինչպես և շատերը, որ հայրը հակառակորդների ոտնձգությունների զոհ է եղել, մյուս կողմից նա ինքն էլ չգիտեր ինչու, ամոթից քաշվում էր ընկերների աչքերին նայել։ Ռափայելը թեև միշտ երազներով էր ապրում, բայց երբեք սանտիմենտալ բնավորության տեր չէր։ Այնուամենայնիվ քանիցս արտասվեց։ Հիշեց մանկության ոսկի օրերը, հիշեց իր եռանդուն հոր պատմածները, նրա անվերջ աշխատանքը»[12]։

Սակայն, չնայած հոգեկան ու տնտեսական ծանր վիճակին, Ռափայել Պատկանյանը նույն ոգևորությամբ շարունակում է հաճախել Գրանովսկու, Սոլովյովի, Կուդրյավցևի դասախոսություններին, բոլորովին բարձիթողի անելով իր ընտրած բժշկական բաժնի առարկաները։ Ահա այդ դասախոսությունների ընթացքում, 1853—54 ուսումնական տարում, նա ծանոթանում ու մտերմանում է հաճելի արտաքինով զարգացած մի վառվռուն երիտասարդի հետ, որն իր նման ինքնամոռաց ունկնդրում էր Գրանովսկուն։ Այդ երիտասարդը Գևորգ Քանանյանն էր[13]։

---

[11] Տե՛ս ԳԱԹ, ՄՆֆ, $\frac{3-}{45}$ ։

[12] «Հայրենիք», 1931, № № 1—3։

[13] «Ռափայել Պատկանյանը առաջին անգամ ծանոթացել է Քանանյանի հետ 1854 թվին յուր Մոսկովի ուսանողության վերջին տարում, երբ Քանանյանը ավարտած լինելով յուր ուսման ընթացքը Ստավրոպոլի գիմնազիայում եկած է եղել Մոսկվա և մտած համալսարանի պատմագրական բաժինը, որին ազատ ունկնդիր է գրված եղել և ինքը Պատկանյանը։ Նրանք պատահել և ծանոթացել են Գրանովսկու դասախոսություններին, որոնք Պատկանյանին նույնքան շատով հափշտակած են եղել, որչափով հետո հափշ-

Գևորգ Քանանյանը 1853 թ. ավարտել էր Ստավրոպոլի գիմնազիան, որի վերատեսուչն էր Գրանովսկու, Բելինսկու մտերիմ բարեկամ և համախոհ Յանուարի Միխայլովիչ Նևերովը։ Ուշիմ ու ընդունակ պատանին գրավել էր տեսչի ուշադրությունը, և նա ոչ միայն ջանք չէր խնայել ապահովելու նրան նյութապես, այլ նաև աշխատել էր կրթել նրա միտքը ժամանակի առաջադիմական հայացքներով, ծանոթացրել ռուս առաջավոր գրողների, ամսագրերի հետ։ Գիմնազիան ավարտելուց հետո, Նևերովը Մոսկվա է բերում «իր Եգորուշկային» (Քանանյանին), ինչպես սովորություն ուներ կոչել նրան[14] և որպես Կովկասյան սան տեղավորում համալսարանի պատմական ֆակուլտետում։ Անհավանական չէ, որ Նևերովը Քանանյանին անձամբ ներկայացրած լիներ Գրանովսկուն, խնդրելով նրանից նույն հոգացողությունն ունենալ իր սիրասուն աշակերտի նկատմամբ, ինչ ունեցել է ինքը։ Այդ են ապացուցում Գրանովսկու մահվան կապակցությամբ Քանանյանին գրած Պատկանյանի նամակի հետևյալ տողերը. «Ես գիտեի, որ Գրանովսկիի մահը, մանավանդ քեզ համար (ընդգծումը մերն է—Մ. Ս.), զգալի պիտի լիներ, կարծիքս արդարացրուց քու այս անգամվա նամակը» (VI, 64)։

Երիտասարդները սերտ մտերմանում են, հայտնում միմյանց իրենց սրտի խորհուրդները, միջոցներ փնտրում հայ ժողովրդի շրջաններում լուսավորություն տարածելու ուղիների մասին՝ լուսավորություն, որը հնարավորություն կտար հետագայում կրթել ազգը հայրենասիրական գաղափարներով, համախմբել նրան ընդհանուր համազգային խնդիրների շուրջ։ Շուտով Քանանյանը ևս տեղյակ է դառնում Պատկանյանի և Թիմուրյանի գրական-քաղաքական խմբակ կազմելու մտադրությանը։ Անհավանական չէ այն ենթադրությունը, որ «Սովրեմեննիկ» ամսագրի ընթերցումը, որ Քանանյանի հետ մտերմանալուց հետո ավելի լայն ծավալ ստացավ, երիտասարդներին մղեց ամսագրի «Литературный яралаш» բաժնում 1854 թվականից Կոզմա Պրուտկով հավաքական անվան տակ հանդես եկող երեք հեղինակների՝ Ա. Տոլստոյի և Ժեմչուժնիկով եղբայրների օրինակով ստեղծելու իրենց գրական ընկերությունը, որի անվամբ, առանձին պրակներով հրատարակել ժողովրդին հասկանալի լեզվով բանաստեղծություններ, առակներ, պատմվածքներ, ուսումնասիրություններ։

տակել են Քանանյանին»,— պատմում է Երվանդ Շահազիզը ամենայն հավանականությամբ, իրենից, Պատկանյանից լսելով այդ մասին (ԳԱԲ, ԵՇՖ, № 48, էջ 14, «Իմ տեսուչ Գևորգ Քանանյանը»)։

[14] Նույն տեղում։

Ինքը՝ Ռափայել Պատկանյանը հետագայում բժիշկ Լևոն Տիգրանյանի հետ ունեցած զրույցի ժամանակ հետևյալ բացատրությունն է տվել իրենց ընկերության և կեղծանվան ստեղծման մասին. «Երբ առաջին անգամ, այն է, 1881 թ. Ռափայել Պատկանյանը ինձ մոտ Երևանում էր և բացատրեց իրենց կեղծ անվան կազմվելը, ես հարցրի «ինչ միտք կար այդ կերպ կեղծ անուն կազմելու»—նա պատասխանեց, թե «որովհետև մենք երեքով միասին պետք է գործեինք, չէինք կամենում հայտնել, թե ով ինչ է գրել և պետք է ներկայանայինք որպես մի անձնավորություն, մտածեցինք մի առանձին, թեպետ և անմիտ անուն ստեղծել մեր հրատարակության համար և ոչ ոք չպետք է ստորագրեր իր անունն իր աշխատանքի տակ»[15]։

Նման ձևով, մեկ անձնավորության անվան տակ 1854 թ. հանդես էր եկել Կոզմա Պրուտկով գրական եռյակը, իր ծրագրում ունենալով ծաղրի և քննադատության ենթարկել կյանքի տգեղ երևույթները, մտքի կոնսերվատիզմը, ռեակցիոն բարեհուսությունը, ոստիկանական պետության մեջ գոյություն ունեցող կյանքի չափվածությունը (ռեգլամենտացիան)։ Հետագայում «Սովրեմեննիկ»-ում տպագրվեց նույնիսկ Կոզմա Պրուտկովի մտացածին դիմանկարը։

Կոզմա Պրուտկովի ստեղծագործությունները հիմնականում գրական և քաղաքական պարոդիաներ էին և ինքնագոհ, բութ, քաղաքական բարեհուսությամբ աչքի ընկնող չինովնիկի անունից կյանքի տարբեր երևույթները ներկայացնող բանաստեղծություններ, թևավոր խոսքեր և ասացվածքներ։ Հետագայում, Գամառ-Քաթիպայի տետրակների մեջ երևան եկած «Մայրաքաղաքում կրթած հայ երիտասարդ»-ը, «Մայրաքաղաքում կրթած հայ աղջիկ»-ը, «Անվնաս մարդը» ոտանավորները, «Կռվասեր» դրամատիկական պատկերը, «Բարոյական խրատներ ու իմաստալից խոսքեր» թևավոր խոսքերն ու ասացվածքները ճշտորեն ընդօրինակում էին Կոզմա Պրուտկովի ամեն ինչ իր սահմանափակ ուղեղի տեսակետից ընկալող ու վերարտադրող հերոսին։ Իհարկե, ելնելով հայկական կյանքի պահանջներից, հենց սկզբից Գամառ-Քաթիպայի տետրակների մեջ որոշվեց ներմուծել և՛ հայրենասիրական բանաստեղծություններ, և՛ հայ կյանքին նվիրված հոդվածներ և պատմական անցյալը ներկայացնող ուսումնասիրություններ, և՛ հայ հասարակությանը որոշակի ծրագրով կրթելու ու զարգացնելու համար հատկապես ընտրրված գործեր։ Սակայն «Սովրեմեննիկ»-ի Կոզմա Պրուտկովի երգիծական

[15] Լ. Տիգրանյան, Գերմանական Դորպատ համալսարանը և նորա հայ ուսանողները 1830—1892 թթ., «Լումա», 1903, № 6, էջ 55։

ուղղությունը որոշիչ դարձավ Գամառ-Քաթիպաների համար, արթնացրեց ու զարգացրեց Ռափայել Պատկանյանի մոտ դեռևս մանկուց զգացվող երգիծական տաղանդը։ «Պատկանյանի իրոնիան արտահայտչական ուրույն ձևեր ունի,— նկատում է Սերգեյ Սարինյանը իր «Հայկական ռոմանտիզմ» աշխատության մեջ։ —Մի դեպքում այն իրական-այլանդակը ցուցադրում է օբյեկտիվ պատկերների մեջ, մի այլ դեպքում՝ տոնի արտաքին լրջության զգեստով, վերջապես, մի երրորդ դեպքում առկա է հեղինակային խայթը... Իրոնիան Պատկանյանի համար գործնական զենք էր, որով նա նույնիսկ անձնական խնդիրները մերձեցնում էր գրականությանը, լուծում օրվա հարցեր։ Նրա մասին կարելի էր ասել Հայնեին բնորոշող խոսքերը, թե նա «ոչ միայն գրականությունը դարձրեց իր անձնական գործը, այլև իր անձնական գործն անում էր գրականությամբ»[16]։

Ժամանակի առաջավոր մտքի հետ մերձենալու հետևանքն այն եղավ, որ երիտասարդները ոչ միայն սկսեցին մտածել ապագա պարբերականի բնույթի մասին, այլև գործնական քայլերի դիմեցին։ Այդ քայլերի արգասիքն էր առաջին հերթին Ռափայել Պատկանյանի մի շարք բանաստեղծությունների երևան գալը, որոնք էապես տարբերվում էին մինչ այդ նրա ստեղծածներից։

Այդ հինգ բանաստեղծությունները գրվել են 1854 թ. հուլիսի 26-ից մինչև սեպտեմբերի 25-ը, հավանորեն հենց այն օրերին, երբ անօթևան մնացած Ռափայելը տեղափոխվել էր Գևորգ Քանանյանի սենյակը, որը տեղավորված էր Կովկասյան թոշակով ուսանողների համար վարձված բնակարանում։ Այդ սենյակը գտնվում էր Տվերսկայա փողոցի Գազետնի նրբանցքում, Սավինայի տանը։

Այդ ամիսներին Քանանյանի հետ միատեղ ապրելու փաստը նշում է Ռուբեն Բերբերյանը. «Մոսկվայի բազմաթիվ հայ ուսանողներից Ռափայել Պատկանյանը առանձնապես մտերմանում է երկուսի՝ Գևորգ Քանանյանի և Մնացական Թիմուրյանի հետ։ Ռափայելը տեղափոխվում է Գ. Քանանյանի սենյակը։ Ռափայելը ոչ ժամանակ գիտեր, ոչ կարգապահություն. տուն էր վերադառնում ժամը 3—4 գիշերը և իր աղմուկով արթնացնում Քանանյանին։ Բայց և այնպես Քանանյանը անկեղծորեն սիրում էր նրան և ով գիտե, զգում էր, որ իր անունը կապվելու է Ռափայելի անվան հետ»[17]։

[16] Ս. Սարինյան, նշվ. աշխ., էջ 335—336։

[17] «Հայրենիք», 1931, № № 1—3։

Երեկոները երեք ընկերները հավաքված մերթ Թիմուրյանի, մերթ Քանանյանի սենյակում նախագծում էին իրենց ապագա անելիքները։ Հրատարակվելիք պարբերականը, որն արդեն ուներ իր անունը, կազմված երեք ընկերների անվան սկզբնատառերից և ա հոդակապից ու ազգանունների առաջին վանկերից՝ Գ—Գևորգ, Մ—Մնացական և Ռ—Ռափայել. Գ ա Մ ա Ռ, Քա—Քանանյան, Թի—Թիմուրյան, Պա—Պատկանյան—Գամառ-Քաթիպա, միակ արգասիքը չէր, որ պիտի տար երեք ընկերների միությունը՝ «Ուխտ»-ը, այլ միայն ձեռնարկություններից մեկը։ «Ուխտ»-ը աստիճանաբար լայնացնելով իր սահմանները, պիտի ընդգրկեր նորանոր անդամներ և սկսեր հայկական դպրոցների համար դասագրքերի, ընթերցանության հանրամատչելի գրքույկների, ազգային երգարանների հրատարակության աշխատանքները։ Արդեն կային մի քանի ուսանողներ, որոնք պատրաստ էին օգնել երեք երդվյալներին, դրանք էին Սիմեոն Ամբարդանյանը, Անանիա Սուլթան-Շահը, Սուխանյանը, սակայն հիմնական գործող անդամները պետք է լինեին երեքը։ Բայց «Ուխտ»-ի ամենանվիրական իղձը՝ ազգը աստիճանաբար ազգային-ազատագրական պայքարին նախապատրաստելն էր։ Գևորգ Քանանյանի ավելի հասուն միտքը կարճ ժամանակում կարողացավ նպատակասլաց ուղղություն հաղորդել գործունեության մարմաջով տարված երիտասարդների եռանդին։ Հենց սկզբից ևեթ, «Ուխտ»-ի ամեն մի անդամ, ինչպես մարտի գնացող զինվոր, պիտի երազեր միայն հանուն վեհ նպատակի զոհվելու, մարտիրոսանալու մասին. ոչ մի անձնական շահ, ոչ մի փառք, ոչ մի անուն, միայն համազգային նպատակներ, միայն տառապանք ու նահատակություն։ «...Մի սպասեք ազգից շնորհակալություն. մեզվին չեն շնորհակալ լինում մեզր վայելողները, ծախողն է, որ հազիվ երբեք քաջալերական խոսքեր լսում, բայց կան այնպիսիները, որոնք հոգվով կզգան մեր բարի գործի աստիճանը. այդպիսիններու գնահատությունն է վարձը ձեր ազնիվ սխրագործությանը» (VI, 104, 105)։ Եվ Թիմուրյանի սենյակում անցկացրած գիշերներից մեկը ընդմիշտ քանդակվեց նրանց սրտերում, որովհետև այդ գիշեր ընկերները երդվեցին իրենց անձը ողջակիզել ազգը դարավոր նիրհից սթափեցնելու, լուսավորելու և այս թուրք բռնապետության ձեռքից ազատագրելու համար։ «...Մեր (էն գիշերվա) խորհուրդը չպիտի ունայն անցնի,— գրում է արդեն Պետերբուրգից Գևորգ Քանանյանին Ռափայելը,—ես, ինչպես ասել եմ քեզ, պատրաստ եմ ամեն կերպ առաջարկություններուն, որոնց հետևանքը մեր ազգի օգուտը պիտի լինի» (VI, 59)։ «Աստված ինձ թող չարաչար պատուհասի, եթե մի ժամ ես մոռացած լինիմ այն օրհասական երե-

կոյան խոսակցությունը, որ մենք երեքս ունեցանք Թիմուրյանի սենյակումը, եթե չեմ կարողացել 1000 անգամ ավել անելու, քան թե արել եմ, պատճառը և միակ պատճառը չքավորությունս է եղել» (VI, 163)։

Այժմ անձնական շահի ամեն մի փոքրիկ արտահայտություն «Ուխտ»-ի անդամներին թվում է դավաճանություն։ Լազարյան ճեմարան կատարած իր այցելությունների ժամանակ անհավասարակշիռ, դյուրաբորբոք Ռափայել Պատկանյանը Ստեփանոս Նազարյանի երեսին է շպրտում նրա «եսամոլությունը», իր «անձնական բարօրությունը» ազգային շահից վեր դասելը։ Նրան վրդովում է նույնիսկ այն հանգամանքը, որ Նազարյանն իր կազմած դասագիրքը ստորագրում է իր անվամբ։ «Ոչ ոք մեզ չի օգնիլ, մենք պիտի հարթենք մեր ճանապարհը, կատաղաբար պիտի մարտնչենք ամեն դժվարության և արգելքների հետ. աղքատություն, զրկանք, հալածանք, տառապանք պիտի լինի մեր բաժինը. օգուտ՝ ոչինչ, վարձատրություն՝ ոչինչ։ Ազգը մեզ փող չի տալ. մենք մեր քրտնաջան վաստակի արդյունքը պիտի թափենք նոցա համար գրքեր տպելու» (VI, 61)։

Բանաստեղծություններից առաջինը, որ նախատեսված էր հետագա պարբերականի մեջ զետեղելու համար, «Գանգատ բախտեն»-ն էր, որտեղ պարզորոշ հնչում էր սոցիալական անարդարությունների դեմ ուղղված բողոքը։ Արդեն բանաստեղծի աչքը նշմարում է սոցիալական շերտավորումը, այլևս նրա համար վարդագույն մշուշի միջից չի երևում իր արդար վաստակը վայելող գյուղացու առօրյան, նա արդեն գիտե, որ աշխարհը լցված է չարությամբ ու անարդարությամբ։

1854 թ. ամռանը գրած երկրորդ ոտանավորի՝ «Ազգասեր»-ի[18] մեջ Պատկանյանը կարողացել է արտահայտել իր և իր ընկերների փայփայած ազգային-ազատագրական տրամադրությունները, հանդես գալ գործունեության որոշակի ծրագրով։ Այս ոտանավորը առաջինն էր այն շարքից, որոնք կոչված էին հայ մարդու սրտում արծարծելու պայքարի տենչ, վառելու հայրենասիրության անմար բոցը։ «Երդերս թող պարունակեն իրանց մեջ հուսահատություն, կասկածանք (սկեպտիցիզմ), կյանքից զզվումն, քան թե բնության և ատաժ ողորմությունը, բարոյականության հաղթանակը։ Թող հայ աղջիկը սիրե քաջություն, քան թե բարոյական առաքինություն. սև և խուճուճիկ մազեր, զգայուն հոգի, տափառ

[18] Այդպես է կոչված այս բանաստեղծությունը «Ազգային երգարան Հայոց»-ի ձեռագիր օրինակում, այդպես է՝ կոչել այն Պատկանյանը նաև իր 1855 թ. սեպտեմբերի 7-ին գրած նամակում։ Միայն առաջին տպագրության ժամանակ, 1860 թ. «Մեղվում», այն վերնագրվել է առաջին տողով։

(страстный) աչքեր, քան թե փայլուն ուսադիրներ, հարուստ կամ աստիճանավոր փեսա։ Գիտեմ, մեզ կհայհոյեն, անբարոյական կանվանեն, խելացնոր կկարծեն։ Բայց մենք, եթե չիհասնենք էլ մեր նպատակին, գոնե կմոտենանք. հնարը չիկա, որ հետևողներ չունենանք...

...Եթե երեք հոգի ինձ համաձայնել են, կարեկից են եղել կարդալով «Ազգասերը», «Հայ և հայությունը», «Արաքսի արտասուքը», «Հայրենիքը», «Օրորոցի երգը Հայաստանին», ես կիսով չափ հասել եմ նպատակիս. բայց քանի՞սը արդյոք կան, որոնք համարում են ինձ ապստամբ, ազատախոս, վնասակար, շառլատան, գուցե 1—1000։ Բայց ես չեմ վհատում» (VI, 60, 61),—գրել է նա իր ազգային-ազատագրական երգերից առաջինը ստեղծելուց մեկ տարի հետո՝ 1855 թ. սեպտեմբերի 7-ին։

Բանաստեղծությունը զարգանում է՝ ամեն ութնյակում ուժեղացնելով միտքը և վերջին տողերում հասցնում տրամաբանական ավարտին։ Ծերացած, ուժը կորցրած հայը երազում է վերադարձնել երիտասարդությունը ո՛չ թե կյանքի վայելքներից օգտվելու, ո՛չ թե հաջողակ բախտ ու հարստություն որոնելու, այլ մարտի դաշտ նետվելու և իր հայրենիքը թուրքական բռնապետությունից ազատագրելու համար։

Առաջին ութնյակում նա միայն երազում է ետ վերադարձնել երիտասարդությունը, սլանալ մարտի դաշտ, հայոց արյունով ցողած-ողողված Ավարայր։ Երկրորդ ութնյակում նա ոչ միայն ինքն է կռվում, այլ կոչ է անում օգնել մարտի դաշտում կռվողներին, դիմում հայ կանանց իրենց մազերից վիրակապ հյուսել և մարտի դաշտում արյունաքամ եղած մարտիկների վերքերը կապել։ Երրորդ ութնյակում նա երազում է հարստության մասին, որով պիտի «գնդակ ու վառոդ» առնի, վերջին ութնյակում արդեն իր երազներում իշխան դարձած հայը իր զորքին հրամայում է.

Շարաքայլ երթալ դեպի Հայաստան
Խըղճուկ հայ ազգին լինել օգնական։

Բանաստեղծության այս ձևը հեղինակին հնարավորություն էր տվել ոտանավորի մեջ ամփոփել մի ամբողջ ծրագիր, հետևողականորեն զարգացնելով միտքը, հանգեցնել ազգային-ազատագրական պայքարի անհրաժեշտությանը։ Բանաստեղծության զարմանալի կուռ ու սեղմ կառուցվածքը օժտել էր նրան ներգործուն ուժով, գեղեցկությամբ ու երաժշտականությամբ։ Ակնհայտ է տարբերությունը Պատկանյանի այս գործի և վերջին տարիների ընթացքում Աշուղ Կարապետի ստեղծած տաղերի միջև։ Աշուղային, ժողովրդական երգերի նմանողությամբ ստեղծ-

ված բանաստեղծություններում չքացել էին բանաստեղծական հնարանքները, լեզուն կորցրել էր պատկերավորությունը, բանաստեղծական բառամթերքը դարձել պարզունակ, զրկելով, այսպիսով, բանաստեղծական ներքին ուժից, պոտենցիայից։ Ազգային-ազատագրական պայքարի գաղափարով ներշնչված այս առաջին երգի մեջ սակավ առ սակավ վերականգնվում էին այն ամենը, ինչ զարմացնում էր քսանամյա պատանյակի առաջին փորձերի մեջ, մտահղացման և կառուցվածքի, մտքի և բանաստեղծական մտածողության միասնականությունը, որից և ծնունդ է առնում իսկական բանաստեղծությունը։ Սկսելով «Ազգասերով» Պատկանյանը ուղղի հարթեց դեպի ռոմանտիկական անկրկնելի պաթոսով գրված «Արաքսի արտասուքը» և «Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը» գործերը, որոնք մի նոր աստիճանի բարձրացրին հայ նոր քնարերգությունը։

1854 թ. կեսերին երևան եկան նաև Ռափայել Պատկանյանի «Քահանա», «Գանգ», «Ունայնության վրա» բանաստեղծությունները, որոնցից առաջինը նվիրված էր հորը, բանտում հեծող Գաբրիել քահանա Պատկանյանին և կրում էր «Ի նշան որդիական սիրո Գ. քահանյանիդ Պատկանյան» նշումը։ Բարձր գնահատելով հոր՝ իր մերձավորների և իր ժողովրդի համար ամբողջ իր կյանքի ընթացքում «բարոյական արեգակ» հանդիսացող անձնավորությունն ու գործունեությունը, Պատկանյանը ստեղծում է եկեղեցու սպասավորի լուսավոր մի կերպար, որն իր ամբողջ կյանքը ի սպաս դրեց իրեն վստահված հոգիների փրկությանը։ Բացի բանաստեղծության ամեն մի տողից հնչող որդիական սիրո ու խանդաղատանքի հնչյուններից, որ այդ օրերին այնքան անհրաժեշտ էին հասարակությունից մերժված հոր հեղինակությունը բարձրացնելու համար, բանաստեղծության մեջ ներդրված էր հոգևոր հովվին ներկայացվող այն պահանջները, որոնք պիտի կարողանային հաստատուն պահել ազգը։ Հետագայում, հոգևորականությանը անխնա ձաղկող իր չափածո և արձակ գործերի մեջ Պատկանյանը երազեց այսպիսի մի հոգևոր հովվի մասին, հավատացած լինելով, որ ճշմարիտ հավատով լցված և իր ժողովրդին ազնվությամբ ծառայող քահանան, եկեղեցին պիտի լինեն ազգը կործանումից փրկող օղակներից մեկը։

Դաստիարակված լինելով հոգևորականի ընտանիքում, մոր կաթի հետ ներծծած լինելով հոգևոր ավանդույթները, վաղ մանկությունից աչքի առաջ ունենալով հոր անձնուրաց աշխատանքը, նա հավատը, եկեղեցին համարում էր ազգի պահպանման ամենահզոր միջոցներից մեկը, իսկ աստծո գաղափարը նույնացնում բարու, արդարի, ճշմարտի

հետ։ Կրոնական զգացումը Պատկանյանը համարում էր բնածին, ինչպես սիրո զգացումը, քանի որ մարդը իր էությամբ ձգտում է ճշմարտության, բարության, առաքինության։ «Ինչպես հայր՝ դու անշուշտ նկատած պիտի լինիս զավակացդ վրա, որ կրոնական զգացմունքը մարդուս բնածին է,—գրել է նա հետագայում։ Ինչո՞ւ բնությունը պիտի տար զգացմունք այն բանին, որն որ չիկա աշխարհիս մեջ. բնածին է սերը, վասնզի բնության մեջ կան սիրո առարկաներ՝ զավակ, ծնող, նաղելի, բարեկամ. բնածին է առաքինությունը, վասնզի աշխարքս լիքն է այնպիսի ասպարեզներով, ուր մարդ պարտավոր է ցույց տալու յուր մեջ դրդող զգացմունքը. բնածին է մարդուս մեջ ձգտումն դեպի ճշմարտություն, վասնզի բնության օրենքները ճշմարտություն են» (VI, 289)։

«Ունայնության վրա» և «Գանգ» բանաստեղծություններում հեղինակին տանջում է կյանքի և մահվան առեղծվածը, անցավոր կյանքի ունայնության գաղափարը, և դարձյալ նա ապավինում է քրիստոնեական բարոյախոսությանը, այս աշխարհում միայն բարության հաղթանակին ձգտելու իմաստին։

Անկասկած, այս բանաստեղծությունների երևան գալուն նպաստել էին նաև այդ շրջանում փիլիսոփայական մի շարք աշխատություններով տարվելը, ինչպես նաև անատոմիա առարկայով պարապելու ընթացքում մարդկային գանգերի ու ոսկորների հետ ունեցած առնչությունների ժամանակ նրա զգայուն հոգում արթնացած մտքերն ու զգացմունքները։

«Պարապում եմ փիլիսոփայությամբ՝ մահը միակ փրկություն եմ ճանաչում» (VI, 65),—գրում է նա Քանանյանին ուղղված նամակում, այդ բանաստեղծությունները ստեղծելուց մի քանի ամիս անց։ Իրականության և պատրանքի աններդաշնակ բախումից առաջացած խոր ցավն ու անելանելիության զգացումը թելադրում էր բանաստեղծին միակ ելքը որոնել մահվան, մոռացման մեջ։ Հոգու անմահության գաղափարը այս գործերում հետապնդում է բանաստեղծին՝ հաճախ տատանելով նրա հավատը անդրշիրիմյան գոյության վերաբերյալ։

«Կրոնը, սիրական Քերոբ, խոստանում է ընտրելոց այն երջանկությունը հավիտենական կյանքին, որն որ մարդ այս ժամանակավորի մեջ չիգտավ, թեև արժանի ևս էր։ Աստծո գոյությունը և հոգվո անմահությունը մին մինե են կախած և մին մինի հաստատում են. ոչ ոք մերժել չէ կարող նոցա՝ ոչ բնաբանք և ոչ իմաստասերք» (VI, 289), գրել է նա տարիներ անց, այս անգամ առանց կասկածանքի ապավինելով

հանդերձյալ կյանքի գաղափարին և դրանով լուծելով երկրավոր կյանքի բազմաթիվ անհարթությունները։

Հետևյալ բանաստեղծությունը իր ավագ եղբորը՝ Հովհաննեսին նվիրված «Նկարիչ»-ն է։ Չնայած մինչև այժմ այդ բանաստեղծությունը համարվել է 1856 թ. ստեղծագործություն, քանի որ տպագրվել է այդ թվականին (I, 280), սակայն այն արդեն ի թիվս այլ գործերի, 1854 թ. դեկտեմբերի 19-ին ներկայացված է եղել Պետերբուրգի գրաքննության ատյանին, տպագրության թույլտվություն ստանալու նպատակով[19]։

Բանաստեղծությունն արտահայտում էր արվեստագետի ծանր վիճակը ժամանակակից հասարակության մեջ, ուր, եթե նույնիսկ ընդունում են նրա հանճարի արգասիքը, ապա մերժում են իրեն, ստեղծողին, որի բաժինն է տառապանք, աղքատություն և անվերջ տքնություն։ Սակայն ստեղծագործ ոգին կարիք չունի ամբոխի գովասանքին, նա «խուլ է աշխարհի ունայն շշուկին», նա պիտի տա իր ներքին հարստությունները, պիտի բաժանի շռայլորեն բոլորին իր հանճարը և մնա առանց հատուցման։

Այո՛, և՛ նկարիչը, և՛ բանաստեղծը, և՛ յուրաքանչյուր ներքին գանձ ունեցող պիտի տա ամեն ինչ իր ժողովրդին և մնա անհատուցում... Սա արդեն իրենց գործունեության ծրագրի գեղարվեստական արտահայ-

[19] 1854 թ. դեկտեմբերի 20-ին գրաքննիչ Մկրտիչ Բերոյանն ի պատասխան նախորդ օրը՝ դեկտեմբերի 19-ին Մուսին-Պուշկինի ստորագրությամբ գրաքննելու համար ստացված «Դամառ-Քաթիպա»-ի № 1 գրքույկի նյութերի մասին հայտնում է հետևյալ եզրակացությունը՝ «Ձերդ գերազանցության կողմից ինձ ուղարկված հայերեն ռամկական լեզվով գրված ձեռագիրը, Դամառ-Քաթիպայի ստեղծագործությունները, ես չկարողացա, չնայած իմ մեծ ջանքերին, լրիվ կարդալ, քանի որ այն գրված էր չափազանց մանր տառերով, անընթեռնելի և անփույթ և ամենևին հնարավոր չէր ամբողջությամբ կարդալ։ Սակայն ինչքան որ կարողացա կարդալ, Ձերդ գերազանցություն, գտնում եմ, որ այս ստեղծագործությունը, հեղինակի ցանկության համաձայն պիտի տպագրվի ամսագրի ձևով ռամիկ ընթերցողի համար և նրա բովանդակությունը կազմում են հետևյալ հոդվածները. 1) Առաջաբան, 2) Երեք ցանկություն, 3) Թիֆլիսի քեֆ, 4) Եսական երջանկությունը, 5) Հանելուկներ հարց ու պատասխանի ձևով, 6) Օրորոցի երգ գյուղական այրի կնոջ, 7) Մխիթար աբբահոր կենսագրությունը, 8) Ինչ օգուտ ունի լեզվի համար թարգմանությունը, 9) Հաֆեզի ճանապարհորդության ժամանակ պատահած անցք, 10) Աշխարհի ունայնությունը, 11) Նկարիչ և 12) Աղեն տա՞նն է։ Շարադրելով կրճատ ձևով հիշյալ ձեռագրի բովանդակությունը և վերադարձնելով այն սույնի հետ միասին, պատիվ ունեմ զեկուցելու Ձերդ գերազանցությանը, որ իմ կողմից վերծանված ու կարդացած տողերի մեջ ես չգտա գրաքննչական ատյանի կանոններին հակառակ որևէ բան. մնացած տողերը մնացին բոլորովին մութ և անհասկանալի ինձ համար։ 20-ը դեկտեմբերի 1854 թվականի Աղյունկտ Բերոև (ЦГИАЛ, ց. 2, 1854 գ. 111, թ. 2)։

տությունն էր, որ վերարտադրված էր բանաստեղծական որոշակի վարպետությամբ։

Քանի որ Գամառ-Քաթիպա ընկերության նպատակներից մեկն էլ ժողովրդի մեջ ընթերցասիրություն տարածելն էր, ապա Պատկանյանը շտապում է բարբառով ևս մի երկու ստեղծագործություն գրել։ Եվ քանի որ հայկական բարբառներից առայժմ ամենամոտը նրա համար Թիֆլիսի խոսվածքն էր (Ն. Նախիջևանի բարբառից մնացել էր մանկության հիշատակների հետ նշխարված տպավորություններ միայն), նա այդ բարբառով ստեղծում է «Կուվասեր» երկխոսությունը և «Աղեն տա՞նն է» բանաստեղծությունը։

Այս երկու գործերում ևս բանաստեղծին զբաղեցնում է սոցիալական անարդարությունների հարցը։ Եթե «Գանգատ բախտեն»-ի մեջ կար որոշակի պարզունակություն, որտեղ այդ անարդարությունները դիտվում էին որպես բախտի քմահաճույք, ապա բարբառով ստեղծված «Աղեն տա՞նն է»-ի մեջ արդեն որոշակիորեն հնչում է սոցիալական բողոքի ձայնը։

«Կուվասեր» երկխոսության մեջ կենդանի կերպով պատկերված են թիֆլիսեցի հարուստ, ամբարտավան «մոքալաքեն» և նրա անտեղի լուտանքները կրող, սարսափից իրեն բոլորովին կորցրած խեղճ «բիճոն»։ Գեղարվեստական գործերից բացի ապագա հրատարակության համար Պատկանյանը գրում է «Մխիթար Աբբա» և «Ի՞նչ օգուտ ունի լեզվի համար թարգմանությունը» հոդվածները։ Հայ ընթերցողին կարդալու նկատմամբ սեր ներարկելու նպատակով նա կատարում է մի շարք դյուրամարս նյութերի թարգմանություններ, ընտրում իր նախորդ տարիներին ստեղծած մի քանի ոտանավորներ, ինչպես նաև հոր ոտանավորներից մեկը և պատրաստում մի փոքրիկ առաջաբան Գամառ-Քաթիպայի անունից։

Առանձնապես ուշագրավ էր «Մխիթար Աբբա» հոդվածը, որտեղ հեղինակը բարձր գնահատելով Մխիթար Սեբաստացու հայ մշակույթի և գրականության զարգացման ասպարեզում կատարած մեծ սխրանքը, իր ընթերցողներին մանրամասնորեն ծանոթացնում էր նրանց հրատարակությունների հետ։ Ապա անդրադառնալով Մխիթարի կաթոլիկական դավանանք ընդունելու հարցին, հոդվածագիրը այդ համարում է միայն իր ազգին ծառայելու համար կատարած զոհողություն, որը լիովի արդարացվեց նրա հետագա գործունեությամբ։ Հետաքրքրականը այս հոդվածի մեջ, առաջին հերթին, այն ջերմ զգացումն ու մեծ երախտագիտությունն է, որ հեղինակը տածում է Մխիթարյանների գործի նկատ-

մամբ, ինչպես նաև դավանաբանության նկատմամբ ունեցած վերաբերմունքը։ Հետագայում այս համոզմունքը գնալով ավելի ու ավելի ամրացավ Պատկանյանի մոտ, և նա դավանափոխության շուրջ տարվող պայքարը սկսեց դիտել որպես հայ ժողովրդի ներքին պառակտման ամենամեծ պատճառներից մեկը։ Մեկ տարի անց ստեղծած «Հայ և հայություն» բանաստեղծության մեջ նա ավելի որոշակիորեն անդրադարձավ այս հարցին, իր վերաբերմունքը արտահայտեց նաև «Քյոռօղլի» պոեմում, իսկ կյանքի վերջին տարիներին ազգությունը փրկելու նպատակով հանգեց ամբողջ ազգի դավանափոխության գաղափարին։ «Լեզվի համար ինչ օգուտ ունի թարգմանությունը» հոդվածում Պատկանյանը ընթերցողներին ծանոթացնում է այն մեծ օգուտների հետ, որ իր հետ պիտի բերի համաշխարհային գրականության գոհարներին առնչվելը, քանի որ այն «ծանոթացնում է օտար ազգերի գաղափարների հետ», կրթում ընթերցողի միտքը։ Թարգմանությունը նաև հարստացնում է լեզուն, օգնում մյուս լեզվի մեջ զանազան նոր դարձվածքներ, ձևեր, ոճեր մտցնելուն։ Փոքրիկ առաջաբանը ընթերցողներին էր ներկայացնում Գամառ-Քաթիպայի ստեղծագործությունների հրատարակման նպատակները, որը, առայժմ, միայն իր ազգակիցներին հասկանալի լեզվով ընթերցանության նյութ տալն էր։ «Թե առաջին տետրակս սիրով ընդունեցին մեր ազգակիցք, միտք ունիմ մյուս ձեռագիրներիցս էլ կամաց-կամաց տարեկան փոշին թափ տալ և տպել»[20],—գրում է նա։

Առաջաբանի սկզբում նշելով Գաբրիել Պատկանյանի, Ստեփանոս Նազարյանի և Գևորգ Ախվերդյանի աշխարհաբարի տարածման գործում կատարած մեծ վաստակը, իրեն համարում է նրանց սկսած գործի շարունակող։ Բացի Գամառ-Քաթիպայի տետրակների առաջին պրակի նյութերի նախապատրաստումից, Ռափայել Պատկանյանի առաջարկով, «Ուխտ»-ի մասնակիցները ձեռնարկեցին նաև ազգային երգարան ստեղծելու աշխատանքները։ Ինչպես տեսանք, երգարան կազմելու գաղափարը դեռևս վաղ պատանեկությունից զբաղեցրել էր բանաստեղծին։ Լազարյան ճեմարանում ուսանելու տարիներին, հայկական գաղթօջախները կատարած այցելությունների ժամանակ, Թիֆլիսում ապրած շրջանում, Դորպատում սովորելու ընթացքում և վերջապես Մոսկովյան գործունեության բուռն տարիներին նա չի դադարում երգեր հավաքելուց, ուշի-ուշով նրանց եղանակներին ունկնդրելուց, ազգի հոգեբանությունն ու պատմական բախտը նրանց մեջ պտրելուց։

[20] «Գամառ-Քաթիպայի արձակ և չափաբերական աշխատությունները», տետրակ առաջին, 1855, Պետերբուրգ, էջ 2։

Երգը դիտելով որպես ազգային դաստիարակության հզոր միջոց և միևնույն ժամանակ մայրենի լեզվի տարածման ամենագործնական ձևերից մեկը, «Ուխտ»-ի մասնակիցները առանձին խանդաղատանքով վերաբերեցին տաղարանի ստեղծման գաղափարին, որը պետք է անհապաղ կազմվեր և հրատարակվեր, իսկ մինչև հրատարակումը տարածվեր ձեռագիր արտագրությունների ձևով։ Այդ աշխատանքները նախատեսվում էր ավարտել Պետերբուրգում[21]։ Երգարանի առաջաբանում, որը 1854 թ. սեպտեմբերի 16-ին գրել էր Ռափայել Պատկանյանը, հայտնըվում էր երգարան կազմելու շարժառիթների մասին։ Պատկանյանն այդտեղ այն միտքն է հայտնում, որ ազգային երգը լիովին արտահայտում է ազգի ոգին, նրա զգացմունքների ու երևակայության առանձնահատկությունները և հայերի ազգային երգերը, մեծ մասամբ տխուր են, քանի որ տխուր է եղել նրանց անցյալը և այդ է պատճառը, որ այսօր այդ տխուր երգերը չեն բավարարում ներկա կյանքի պայմաններին, և հայերը ստիպված դիմում են օտար երգերի օգնության, մոռացության տալով անցյալի ժառանգությունը։ Ուստի Գամառ-Քաթիպան հավաքելով ժողովրդի մեջ ցրված և արդեն մոռացության մատնված հին երգերը, ինչպես նաև ստեղծելով նորերը, ցանկանում է իր ազգակիցներին հնարավորություն տալ վերհիշելու ու սովորելու մի շարք երգեր, գործնականորեն դրանք օգտագործելու համար։

Ավարտելով Գամառ-Քաթիպայի առաջին տետրակի նյութերի ընտրությունը, «Ուխտ»-ի մասնակիցները, հավանորեն, սկսեցին մտածել նաև այն հրատարակելու հնարավորությունների մասին։ Մոսկվայում չկար հայ գրաքննիչ, ուրեմն հրատարակվելիք տետրակները գրաքննության հանձնելը կապված պիտի լիներ բարդությունների հետ, բարդություն էր նաև այդ տետրակների տպագրության թույլտվության ստացումը։ Հետևաբար, ավելի նպատակահարմար պիտի լիներ Պետերբուրգում մշտական գործակալ ունենալ, որը գլուխ բերեր տպագրության

---

[21] Ինչպես Ռ. Պատկանյանի Երկերի ժող.-ի 5-րդ հատորի կազմողները, այնպես էլ մենք, 6-րդ հատորի ծանոթագրություններում ձեռագիր ազգային երգարանների արտագրությունը և տարածումը, ինչպես նաև այդ երգարանի առաջաբանի ստեղծումը սխալմամբ համարել ենք 1854 թ. արգասիք, ուրեմն և Մոսկվայում ստեղծված։ Մինչդեռ ԳԱԹ, ՌՊՖ 157 համարի տակ պահվող ձեռագիր տաղարանը, անկասկած, կազմված է հետևյալ տարում, քանի որ նրա մեջ տեղ են գտել այնպիսի բանաստեղծություններ, որոնք գրվել են 1855 թ. ընթացքում («Արաքսի արտասուքը», «Հայ և հայություն» և այլն)։ Այնպես որ, ձեռագիր տաղարանների արտագրությունները սկսվել են Մոսկվայում, ապա լրացվել Պետերբուրգում և ուղարկվել Մոսկվա՝ ուսանողների շրջանում տարածելու համար։

թույլատվությունն ու տեղում գրաքննություն ամեն համարի գրաքննության հարցերով։ «Ուխտ»-ի անդամներից մեկն իր վրա պիտի առներ այդ պարտականությունը, թողներ ուսումը, տեղափոխվեր Պետերբուրգ և սկսեր այնտեղ հրատարակման աշխատանքները։ Այդ դժվարին գործը հանձն առավ կատարել Ռափայել Պատկանյանը։

Կան կարծիքներ, որ Ռափայել Պատկանյանը տեղափոխվել է Պետերբուրգ նյութական ծանր պայմանների պատճառով, «Մինչ ընկերները զբաղված էին նյութերի խմբագրությամբ,—գրում է Ռուբեն Բերբերյանը իր հիշյալ աշխատության մեջ,—Ռափայելը թողնում է Մոսկվան և տեղափոխվում Պետերբուրգ, որտեղ նրան խոստացել էին այնտեղի եկեղեցական գումարներից մի շատ չնչին թոշակ հատկացնել իրեն»[22]։

Մեզ թվում է, որ այս պնդումը անհիմն է, նախ այն պատճառով, որ Պետերբուրգ տեղափոխվելուց հետո Ռափայելը որևիցե պաշտոն հանձն չառավ վարել հայկական եկեղեցում և գրվեց ազատ ունկնդիր համալսարանի պատմաբանասիրական բաժնում, ուսանող դառնալով միայն 1856 թ. հունիսի 18-ին։ Բացի դրանից, չնչին թոշակի պատճառով նա երբեք չէր թողնի հունի մեջ նոր մտնող գործը, հոգեհարազատ ընկերներին, Մոսկվայի համալսարանի հայ ուսանողների ու Լազարյան ճեմարանի աշակերտների և ուսուցչության շրջաններում կամաց-կամաց ձեռք բերած հեղինակությունը և մեկնի դեպի անհայտություն։ Անկասկած, այդ քայլին դիմելու համար եղել են ավելի ծանրակշիռ պատճառներ, կապված հենց «Ուխտ»-ի ծրագրի իրականացման հետ։

Բժշկությունն այլևս չէր հետաքրքրում Ռափայելին, ուստի ավելի հեշտ էր նրան հրաժեշտ տալ այդ ֆակուլտետին, քան ջանասեր ու իր անձնական գործերին հետամուտ Մնացական Թիմուրյանին։ Իսկ Գևորգ Քանանյանը ուղարկված էր Մոսկվայի համալսարան՝ որպես Կովկասյան սան և չէր կարող վտանգի ենթարկել այդ թոշակը, մանավանդ, որ Ներսեսի հանձնարարությամբ վերջինիս մոսկովյան բարեկամները, որոնց թվում գուցե նաև Գրանովսկին, հոգում էին նրա հոգևոր ու նյութական կարիքների մասին։ Դժվար էր հրաժարվել, իհարկե, այդ ամենից։ Իսկ Ռափայելը այլևս չուներ անձնական նպատակներ, նրա անձնականը անքակտելիորեն կապված էր ազգին ծառայելու, նրան դարավոր քնից արթնացնելու, նրա թմրած հոգում ազգասիրական զգացմունքներ ներարկելու, լույս ու գիտություն տարածելու հետ։

Այսպիսով, հավաքելով մի չափավոր գումար, կարգի բերելով

---

[22] «Հայրենիք», 1931, № 1—3։

ընտրված ու նոր գրված նյութերը, Ռափայել Պատկանյանը 1854 թ. սեպտեմբերի սկզբներին դիմում է ներկայացնում Մոսկվայի Համալսարանի բժշկական ֆակուլտետին՝ իրեն Համալսարանից ազատելու վերաբերյալ, նույն ամսի 27-ին[23] ետ է ստանում փաստաթղթերը և որպես Գամառ-Քաթիպա ընկերության գործակալ, գործունեության տենչը և ապագայի վառ երազները սրտում, մեկնում է Պետերբուրգ։

---

[23] Տե՛ս ГИАЛО, ֆ. 14, ց. 5, գ. 272, թ. 7։

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՅԱՆ ՇՐՋԱՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱՅԻ ՏԵՏՐԱԿՆԵՐԸ

Պետերբուրգ հասնելով Գամառ-Քաթիպա ընկերության գործակալ Ռափայել Պատկանյանը առաջին հերթին ձեռնարկում է Պետերբուրգի գրաքննչական ատյանից թույլտվություն ստանալ հայ ժողովրդական լեզվով բանաստեղծությունների և արձակ գործերի պարբերական գրքույկներ հրատարակելու վերաբերյալ, ինչպես նաև դիմում ներկայացնում Պետերբուրգի համալսարան, իրեն պատմագրական ֆակուլտետում ազատ ունկնդիր ձևակերպելու մասին[1]։

Ցավոք, և՛ գրաքննչական ատյանին ներկայացված դիմումը, և՛ համալսարանի խնդրագիրը չեն պահպանվել, սակայն Լենինգրադի կենտրոնական պետական արխիվի ֆոնդերում մենք հանդիպում ենք 1854 թ. դեկտեմբերի 19-ին ներկայացված Գամառ-Քաթիպայի 1-ին տետրակի բովանդակությանը, իսկ նույն թվականի նոյեմբերի 30-ին կազմած համալսարանի ազատ ունկնդիրների ցուցակում՝ Ռափայել Պատկանյանի անվանը[2]։

Առաջին իսկ օրերին վերականգնելով նախկին մտերմությունը Պետերբուրգի գլխավոր մանկավարժական ինստիտուտում սովորող Քերովբե Պատկանյանի հետ, Ռափայելը աշխատում էր նրա միջոցով, ինչպես նաև Գեղարվեստների ճեմարանի ուսանող իր եղբոր աջակցությամբ կապեր ստեղծել պետերբուրգաբնակ հայերի հետ, նրանց շրջաններում տարածել իրենց ապագա գործունեության ծրագրերն ու նպատակները,

---

[1] *«Ես լսում եմ կամերալնըյ ֆակուլտետի առարկաները, բայց քննություն կտամ Հայոց-թաթարի ֆակուլտետից, որ հեշտ է»,— գրում է նա Գևորգ Քանանյանին, 1855 թ. հոկտեմբերի 30-ին (VI, 67)։*

[2] *Տե՛ս* ЦГИАЛ, *ֆ. 777, ց. 2, 1854, գ. 111, թ. 1—2 և* ГИАЛО, *ֆ. 14, ց. 5, գ. 272, թ. 7 և 8։*

համախոհներ փնտրել նրանց մեջ, ինչպես նաև առնչություններ որոնել Քերովբեի և Հովհաննեսի դասընկերների հետ։

Դեռևս Մոսկվայում սկսած և Պետերբուրգում լրացվող ձեռագիր տաղարանի մեջ 1855 թ. փետրվարի 27-ին գրի առած «Կտրական պատասխան» բանաստեղծության տակ բերված բացատրությունը և, մանավանդ, «ըստ սովորության» արտահայտությունը, մեզ իրավունք է տալիս մտածել, որ նա մինչև այդ, այսինքն, մինչև փետրվարի 27-ը, հայկական շրջաններում հաճախակի առիթներ է ունեցել խոսելու ազգի վիճակի և իրենց ապագա անելիքների մասին, վիճաբանել, ներհակել շատերին, ներկայացնել իրենց նպատակները, փորձելով վարակել նրանց իր ոգևորությամբ, տանել իր ետևից. «1855 թվականի փետրվարի 27-ին ես, եղբայրս, Ա (գուցե Անանիա Սուլթան-Շա՞հը—Մ. Ս.), Ք (Քերովբե Պատկանյանը) և մի քանի պարոններ ժողովեցանք պր. Ի (Հովսեփ Իզմիրյանի) մոտ. ըստ սովորությամբ խոսակցությունը դարձավ դեպի հին ու մաշված ազգասիրությունը, սկսեցին մի-մի զննել հայության պայմանները, իմը նոցա ներհակն էր»[3]։

Այդ վեճերի ընթացքում ավելի ու ավելի են հստակվում նրա համար իրենց նպատակները, լայնանում մտահորիզոնը, հղկվում ու որոշակի ուղղություն ստանում միտքը։ Կարդալով «Հայ և հայություն» բանաստեղծությունը կարծես լսում ես ոգևորությունից ու հուզմունքից կերկերվող նրա ձայնը, երբ նա սեղանի շուրջ նստածներին տալով «Կտրական պատասխան»[4], ներշնչում է ազգային-ազատագրական պայքարի անհրաժեշտությունը, երբ ժողովրդական հասկանալի լեզվով տարվելիք ամբողջ լուսավորական պրոպագանդը նա ցանկանում է հանգեցնել միայն դարավոր լծից զենքի ուժով և արյան գնով ազատության հասնելու գաղափարին։ Եվ, ինչպես Մոսկվայում, այնպես էլ այստեղ նա կոչ է անում իր ունկնդիրներին չպահանջել ազգից ոչ մի հատուցում, տրվել նրան ծառայելու գաղափարին ամբողջ էությամբ, տառապել նրա համար, գործել նրա համար, ողջակիզվել հանուն նրա։ Եվ, եթե յուրաքանչյուր հայ հասնի այս գիտակցությանը, այն ժամանակ հնարավոր կլինի համընդհանուր ուժերով ոտքի ելնել և փրկել հայրենիքը.

Սիրե՛ ազգըդ ո՛չ քոկ խոսքով, սիրե՛ ինչպես քու անձը,
Նորա օգտին, թե պետք լինի, զոհե բոլոր քու գանձը.
Մի խընայիլ կյանքըդ անգամ, արյունըդ բեր նորան զոհ

[3] ԳԱԲ, ՌՊֆ, № 157 ա, «Ազգային երգարան հայոց» ձեռագիր, էջ 83։
[4] Ի դեպ, այդպես է սկզբնական շրջանում կոչվել «Հայ և հայություն»-ը։

Ոչ այն հուսով, որ քու ազգը խսկույն լինի քեզնից գոհ.
Իսկապես սերը չի պահանջում ամենևին տրիտուր.

. . . .

Դու պատրա՞ստ ես թողնել կայքըդ, ծընողք, եղբարք,
սիրական
Սիրելվույդ տեղ կըրծքիդ սեղմել միշտ մահառիթ հըրացան,
Դու պատրա՞ստ ես անվախ երթալ թշնամիի սուրի դեմ
Սարսափելի մահըդ տեսնել դու կարո՞ղ ես ծաղրադեմ (I, 41)։

Ինչքան համահնչուն են այս տողերը նրա նամակներում սփռված արտահայտությունների հետ... «...Մենք պետք հարթենք մեր ճանապարհը, կատաղաբար պետք մարտնչենք ամեն դժվարությանց և արգելքների հետ. աղքատություն, զրկանք, հալածանք, տառապանք պիտի լինի մեր բաժինը. օգուտ՝ ոչինչ, վարձատրություն՝ ոչինչ...» (VI, 61)։ Ինչքան համահնչուն իր վարած կյանքի հետ. «Անօրինակ էր նրա աշխատասիրությունը,—պատմել է Երվանդ Շահազիզին Մնացական Թիմուրյանը,—ուսանող էր, գրում էր, դասեր էր ձուլել տալիս, հրատարակում էր և այդ բոլորը անփող, կիսակուշտ, քաղցած փորով և միայն, միայն գալոց բախտի հույսով...»[5]։

Իր ռոմանտիկական երազներում ազգը ընկալելով որպես մի ամբողջություն, անտեսելով դավանաբանական վեճեր հրահրող քաղաքական ուժերը և զգալով միայն նրանց կործանարար ազդեցությունը, Պատկանյանը կոչ էր անում հեռու մնալ դավանաբանական վեճերից, ազգը համարել մի ամբողջություն և միասնական պայքար մղել քաղաքական անկախություն ձեռք բերելու համար։ Արդեն «Մխիթար Աբբա» հոդվածի մեջ երևան եկող համակրական տրամադրությունները Մխիթարյան միաբանության լուսավորական, ազգօգուտ գործունեության նկատմամբ, այս ծրագրային բանաստեղծության մեջ խտանում, համոզմունք է դառնում։ Ազգի ներքին ուժերը ջլատող ամեն մի խոչընդոտ պիտի հաղթահարվի, քանի որ այդ ամենը շեղում են նրան ամենահիմնական նպատակից՝ հայրենիքը ազատագրելու և օտար բռնակալության լուծը թոթափելու սուրբ գործից.

Արվեստ, ուսում, շըքեղարվեստ տարածե հայ ազգի մեջ,
Բայց բըռնությամբ միշտ հեռացուր նորա մեջեն կրոնի վեճ.
Քեզ ի՞նչ շահ է թե դու կասես՝ հոգին բըխել է Հորից,
Կամ թե Որդին հոգվով սրբով անսերմ ծնունդ է Մորից...

[5] ԳԱԲ, Ե. Շահազիզի ֆ., «Դիվան Ռ. Պատկանյանի», էջ 935։

Թող սիրելի, այդ խնդիրը, աչքըդ դարձուր դեպ Հարավ,
Բյուր-բյուր հոգիք դու կըտեսնես կորած դորա պատճառավ
(I, 41)։

Այս հարցը հանգիստ չի տվել Պատկանյանին նաև հետագա տարիներին։ Այսպես, 1859 թ. ստեղծելով «Քյոռ-օղլու» պոեմը, նա իր հերոսին հանուն հայ ազգի ազատության ուրանալ է տալիս իր հավատը. «Իմ Քյոռօղլուն հայ է, բայց ինձ հայտնի պատճառներով նա ուրանում է հայոց հավատը... Իմ դյուցազնը յուր նվիրական իդեայի համար զոհում է մարդուս ամենաթանկ սրբությունը՝ կրոնը», գրում է նա Գևորգ Քանանյանին (VI, 222)։

Պատկանյանը դավանությունների հարցին անդրադարձել է նաև 1882 թ. իր «Տաճկահայերի օրհաս» բանաստեղծության մեջ գրելով հետևյալ տողերը.

Քրիստոնյա ենք մենք և սերունդ Հայկի,
Այսքանը բավ է։ Էլ լուսավորչական,
Կամ պապադավան և կամ լոթրանցի
Ազգը չի բաժնենք՝ ի սեր հայության (I, 176)։

1889 թ. ստեղծած «Վարդապետարան Հայաստանի ազատության» գործը կազմված է Քրիստոնեական վարդապետարանի նմանությամբ՝ հարց ու պատասխանի ձևով։ Ո՞րն է հայ ազգի կրոնը հարցին հեղինակը պատասխանում է. «Հայի ազգային կրոնն է հաստատուն հավատը, որ Հայաստանը պիտի ազատվի օտարի լծեն։ Ով այս բանին հավատում է, նա է ուղղափառ հայադավանը»։ Ապա ի՞նչ են նշանակում լուսավորչադավան, պապադավան, կամ կաթոլիկ և լյութերական կոչումները հարցին հետևում է. «Դոքա մարդկային կրքերի և կոշտ տգիտության ստեղծած և այժմ հնացած գաղափարներ են, որոնք մեծապես վնասեցին և այժմ ևս վնասում են հայ ազգին»[6] պատասխանը։

Ռուս-թուրքական պատերազմից հետո կրած ծանր հիասթափության օրերին, զգալով, որ Ռուսաստանի և Անգլիայի շահերի բախումը Մերձավոր Արևելքում միշտ պիտի խոչընդոտ հանդիսանա հայկական հարցի լուծման համար, Ռափայել Պատկանյանը Պոլսում եղած ժամանակ հանդիպումներ է ունենում կաթոլիկ հայերի պատրիարք Ազարյանի հետ և հետագայում նամակներով հորդորում նրան ընդունելու Լևոն XIII պապի առաջարկը՝ համայն հայությանը կաթոլիկության դարձնելու և Պապի ու եվրոպական պետությունների օգնությամբ սուլթանական լծից

6 ԳԱԹ, ՌՊՖ, № 198 ա։

արևմտահայության ազատագրելու մեծ ու սուրբ գործի համար (VIII, 103—104)։

Շուտով, սակայն, գրաքննչական ատյանից ետ են վերադարձվում Գամառ-Քաթիպայի արձակ և չափաբերական աշխատությունների առաջին տետրակի համար ներկայացված նյութերը՝ անընթեռնելի ձեռագրի պատճառով, և Ռափայել Պատկանյանը նորից խնամքով բոլորը արտագրելուց հետո, 1855 թ. փետրվարի 28-ին, կրկին ներկայացնում է գրաքննչական ատյանին[7]։

Միաժամանակ Պատկանյանը բանակցություններ է սկսում Կայսերական գիտությունների ճեմարանի տպարանի հետ, որտեղ կային հայերեն տառատեսակներ, և 25 ռուբլի մամուլի համար վճարելով, սկսում առաջին տետրակի տպագրությունը։

Սակայն, ամենայն հավանականությամբ, տպարանի տնօրինությունը հայերեն գրաշար չունենալու պատճառով, այդ գումարը վերցնելուց հետո, առաջարկում է նրան սեփական ձեռքերով շարել ամբողջ տետրակը. «...Ինձ համար ավել ձեռնտու է, քան թե գիտությանց ճեմարանումը տպել, ուր առին ինձանից գրեթե նույնքան՝ այն բացառությամբ, որ գրեթե ամբողջ գիրքը ես մենակ շարեցի ինչպես հասարակ վարձկան» (VI, 69),—գրել է նա իր ընկերներին մի երկու ամիս անց։

Հավատարիմ մնալով երգի միջոցով ժողովրդի մեջ աշխարհիկ բովանդակությամբ բանաստեղծություններ տարածելու իր վաղեմի երազին, նա եղանակներ է հորինում «Երկու քույր» և «Թիֆլիզի քեֆ» բանաստեղծությունների համար, եվրոպական ձայնանիշերով գրի առնում դրանք և տեղադրում բանաստեղծությունների տակ։

Դարձյալ պակասեցնելով հոդվածների քանակը և հասցնելով այն մեկ մամուլի, Պատկանյանը հանձնում է տպագրության, դրաքննված մյուս նյութերը պահելով հետևյալ տետրակի համար։

Գամառ-Քաթիպայի առաջին տետրակի նյութերի ընտրությունը կատարված էր հայ հասարակության ընթերցանության հանրամատչելի նյութ մատակարարելու նպատակով։ Նախ և առաջ պետք էր ազգին ընթերցասեր դարձնել, ապա աննկատ ներարկել նրան ազգասիրական զգացմունքներ։ Եվ այդ էր պատճառը, որ իր ձեռքի տակ ունենալով մի շարք ծրագրային բանաստեղծություններ, գեղարվեստական ավելի կատարյալ գործեր, նա առաջին տետրակը համալրեց պարզունակ բանաստեղծություններով ու նյութերով։

[7] ЦГИАЛ, ֆ. 777, ց. 2, 1854, գ. 111—12։

«Երկու քույր» հեքիաթը, որ Պատկանյանը կատարել էր Պուշկինի մշակումների նմանությամբ, աշխարհի բոլոր հեքիաթների պես ազդարարում էր բարու հաղթանակը և չարի կործանումը, «Երեք ցանկություն»-ը քարոզում էր սակավապետություն և ազնվություն, «Կովասեր»-ը, «Ամեն տանն է»-ն շոշափում են սոցիալական սուր հարցեր և միայն «Օրորոցի երգ գյուղական այրի կնոջ» ստանավորը ինչ-որ չափով անդրադառնում էր ազգային ազատագրական պայքարին։ Եվ այդ այն օրերին, երբ արդեն ստեղծվել էին «Թե իմ ալևոր հերքս սննային»-ը և «Հայ և հայություն»-ը։

Ազգի դաստիարակության առաջին պայմանը, իհարկե, համազգային լեզուն էր, ժողովրդական լեզուն, որը, ըստ Պատկանյանի, պիտի կառուցված լիներ ժողովրդական բարբառների հիմքի վրա և համալրվեր գրաբարյան ընտիր դարձվածքներով ու բառերով։ Ըստ որում, գրական նոր լեզվի հետագա զարգացումը պիտի ընթանար ոչ թե մեկ բարբառի հաշվին, այլ պիտի իր մեջ ընդգրկեր հայկական տարբեր բարբառների կենսունակ արտահայտություններն ու քերականական ձևերը։ Աչքի առջև ունենալով ճեմարանում տարբեր գավառներից եկած և զանազան բարբառներով խոսող աշակերտների խոսակցություններից ծնունդ առած, բոլորի համար հասկանալի գրական լեզվի կազմավորման պրոցեսը, Պատկանյանը հայ գրական լեզվի հետագա զարգացումը հնարավոր էր համարում միայն բարբառների, այդ թվում նաև արևմտյան և արևելյան բարբառների համաձուլման միջոցով։ «...Թարգմանության ժամանակ և, առհասարակ, հայերեն շարադրելու ժամանակ, մի գաղտնիք ունիմ, կամ собст<венные> методы, որին ես կարծում եմ միակ հնար պարզ հայերեն գրելու, այսինքն, ես միշտ երևակայում եմ առաջիս մի թիֆլիզցի, մի նախիջևանցի և մի համտարխանցի, իբր թե ամենս միասին մի հարկավոր առարկայի վերա խոսում ենք, կամ թե ես նոցա պատմում եմ. բոլոր գաղտնիքը состоит в том, чтобы приискать такие фразы, которые в одно и то же время հասկանալի լինեին այդ երեքին. իհարկե, որ այդպիսի գրությունը խիստ դանդաղ է առաջանում, բայց բարոյական օգուտը այն է, որ ամենին հասկանալի է լինում», գրում է Պատկանյանն իր մոսկովյան համախոհներին (VI, 174)։ «Մենք պետք չէ շինենք լեզու. լեզուն կա և այնքան պատրաստած և կոկած է ազգի բերնումը, որ առանց դժվարության կարող է մեր գաղափարները հայտնելու,—գրում է նա մի այլ առիթով,—ինչպես որ ճարտարապետի գործն

է պատրաստ նյութից մի շինվածք կանգնեցնել և ո՛չ նոր ի նորո քար տաշել, ծառ տնկել, որ բսնի և ատաղձ ստացվի, այնպես էլ մենք՝ գրողներս ջանք պիտի դնենք հավաքել ծակուծուկերից ազգային, կենդանի, խաղացկուն պարբերությունները և նոցանով կամ նոցա կազմությանը հետևելով շինել ամբողջ հոդվածներ, գրքեր։ Չգիտեմ ո՛վ, բայց խիստ լավ ասաց մինը՝ որ ավել հեշտ է երեսի վրա ձգած սեփական պարտեզը վերանորոգել, քան թե անապատ դաշտումը նոր պարտեզ շինել» (VI, 62)։

Գամառ-Քաթիպայի արձակ և չափաբերական շարադրությունների առաջին տետրակի բնաբանն էր Կարամզինի «Գրե այնպես, ինչպես որ խոսում են և խոսե այնպես, ինչպես որ գրում են» աֆորիզմը, որն այնքան համապատասխանում էր երիտասարդ հեղինակի ձգտումներին։

Սակայն, իհարկե, հեշտությամբ չէր տրվում նրան այդ «լեզվաշինարարությունը»։ Ինչպես վերը տեսանք, պարզ ժողովրդական լեզվով գրված մի շարք բանաստեղծություններ կորցրին իրենց ներքին ուժը, դարձան պարզունակ, թե մտքի, թե ձևի տեսակետից բավարարություն չտալով բանաստեղծի հորդող զգացմունքներին, և նա դարձյալ ստիպված եղավ թողնել «Աշուղ Կարապետին» և իր խոհերը արտահայտելու համար դիմել դասական լեզվի անբավ «հանքին»։ Մյուս կողմից, իր ստեղծագործական կոչումը տեսնելով միայն ժողովրդին հարազատ ու հասկանալի լինելու մեջ, նա ծառանում էր ամեն տեսակ խրթնաբանությունների ու արհեստական ձևերի դեմ, տանջալից կերպով փնտրելով այն միջինը, որը պիտի կարողանար խոսքին տալ կենդանի, կենսունակ արտահայտություն. «Մտածող եմ, այդտեղ կասկած չկա. մտածելը նմանապես պարգև է երկնքի,— կիսում է նա իրեն կրծող հոգսերը Գևորգ Քանանյանի հետ,— բայց բավական չէ միայն մտածելը այն մարդուն, որ զգում է, որ պե՛տք է և կարող է օգուտ բերել, մտածածը պիտի պարզ և անպաճույճ կերպով հայտնե յուր նմաններուն, բանիս, քակե այն կընճիռը, որով երկնքի ճշմարտությունը մութ է երկրավորի համար. դորա համար պետք է միջոցներ, որոնց հենց առաջինից և կարևորից ես զուրկ եմ՝ ազգային բուն լեզուն, տեղը մնա՛ ազգի պատմության խորին իմանալը, ազգի հոգեբանությունը, նորա կեցած տեղի աշխարհագրությունը, նորա ամեն պակասությունները, վերջինի պատճառները. ի՞նչ եմ ասում, դեռ շատ բաներ պիտի իմանա, որ ասվի բանաստեղծ այն իմաստով, որով արևմտացիք հասկանում են պոետ խոսքը, բայց ես՝ դյուրահավանս, երկու տող խակ իմաստներ հազիվ-հազիվ մին մինի հետ հյուսելով արդեն ահագին զուռնա բերնումս փող եմ խփում, որ ինձ կենդանության

ժամանակ պատրաստեն դափնյա պսակ. հողը իմ գլխին...» (VI, 73)։

Եվ այս մտորումներն ու տվայտանքները տվին իրենց պտուղները, մինչև այդ անկաղմակերպ լեզուն նրա գրչի տակ սկսեց ստանալ բանաստեղծական ավյուն, խորին իմաստ և խանդավառ զգացմունք, այս ամենը միավորելով վերածվեցին բազմազան պատկերների, նախապատրաստելով հայ բանաստեղծական այնպիսի գործերի երևան գալուն, ինչպիսիք էին «Արաքսի արտասուքը», «Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը»։

«Արաքսի արտասուքը» բանաստեղծության ստեղծման ստույգ թվականը անհայտ է։ Երվանդ Շահազիզը առանց որևիցե կռվանի այն համարում է 1854 թ. հուլիսի 26-ին գրված, սակայն թե՛ բանաստեղծության ներքին բովանդակությունը, թե՛ լեզուն, թե՛ մտահղացման և կառուցվածքի վարպետությունը հուշում է, որ այն ստեղծվել է «Ի՞նչ իմ սևոր հերքս սևնայի՞ն» և «Հայ ու հայություն» բանաստեղծություններից հետո, այն ժամանակ, երբ ավելի ու ավելի էր առնականացել բանաստեղծի ձայնը, հասունացել էին նրա գաղափարները։ Այն գրվել է 1855 թ. փետրվարից մինչև օգոստոս ընկած ժամանակահատվածում, քանի որ արդեն 55 թ. սեպտեմբերի 7-ին գրած նամակում հիշատակություն կա «Արաքսի արտասուք»-ի մասին[8]։

Իսկ այդ այն շրջանն էր, երբ Պատկանյանի մտերիմներն ու ծանոթներն էին դառնում Նիկոլայ Տրիֆոնովն ու նրա շրջապատը կազմող «Սովրեմեննիկ»-ի աշխատակիցները, Քերովբե Պատկանյանն ու նրա համակուրսեցիները, Անանիա Սուլթան-Շահը, պետերբուրգաբնակ ազատախոհ Մովսես Բուդաղյանն ու Հովսեփ Իզմիրյանը և վերջապես մոսկովյան ընկերներ Գևորգ Քանանյանը և Մնացական Թիմուրյանը։ Նրա ընթերցանության ու ոգևորության աղբյուրներն էին Նեկրասովի պոեզիան, Բելինսկու ստեղծագործությունները, «Սովրեմեննիկ»-ի համարները, ռուս առաջավոր մտավորականությանը հուզող փիլիսոփայական աշխատություններն ու գաղափարները։

Այնուհետև՝ Ռուբեն Բերբերյանի հիշողություններում պահպանված դրվագները, այդ բանաստեղծության շուրջ եղած խոսակցությունները պլագիատի մասին կապվում են Անանիա Սուլթան-Շահի անվան հետ, իսկ Սուլթան-Շահը Պետերբուրգում է եղել 1855 թ. հունիսից մինչև օ-

[8] «Եթե երբք հոգի ինձ համաձայնել են, կարեկից են եղել կարդալով «Ազգասերը», «Հայ և հայություն», «Արաքսի արտասուքը», «Օրորոցի երգը Հայաստանին», ես կիսով չափ հասել եմ իմ նպատակիս»,— գրում է նա 1855 թ. սեպտեմբերի 7-ին, Գևորգ Քանանյանին (VI, 61)։

գոստոսի վերջերը, և այդ ամիսները անցել են երկու երիտասարդների սերտ մտերմության պայմաններում։ Դատելով Սուլթան-Շահին տրվող հանձնարարություններից, կարելի է եզրակացնել, որ Անանիան դարձել էր «Ուխտ»-ի անդամներից մեկը՝ խոստանալով նրանց աջակցություն թե՛ իր, թե՛ հորեղբոր կողմից։ «Ինձ վերա ոչինչ բան չեմ գրում, այս 3 ամսվա հանգամանքս Անանիային լավ հայտնի է, նա կպատմե քեզ մանրամասնաբար»,—գրում է օգոստոսի 31-ին Մնացական Թիմուրյանին,— Անանիայի գնալը ինձ խիստ տխրացնում է, բավականին քաղցր րոպեներ անցկացրի նորա հետ այս 2 ամսվա միջոցումը» (VI, 58)։ Եվ ապա մի երկու ամիս անց հիշեցնում Քանանյանին. «Հայերը Մոսկովումը տպում են պր. Իվանովի տաղարանը... Մերն էլ Աստծով՝ շուտով կտպվի, եթե Թիմուրյանը և Սուլթան-Շահը աշխատեն, ինչպես որ ես խնդրել էի նոցանից» (VI, 66)։ «...Մի՛ տը ձգե Թիմուրյանին Սանասարովի մասին... Գլուխ դրեք նմանապես ստորագրության համար, այստեղումը ես ոչինչ և ոչովից հույս չունիմ, եթե Անանիան չհամոզե իր հորեղբորը ինձ օգնելու» (VI, 75)։

Պետք է ենթադրել, որ 1855 թ. ամռանը ստեղծելով «Արաքսի արտասուքը» բանաստեղծությունը Ռափայելը այն Սուլթան-Շահի միջոցով ուղարկել է Մոսկվա, անմիջապես հավելում կատարելով ձեռագիր տաղարանի մեջ։ «Ուղարկում եմ քեզ իմ ձեռագիր տաղարանը, փոքրինչ բան ավելացրի մեջը, մնացածները ցրված են» (VI, 58), գրում է նա 1855 թ. օգոստոսի 31-ին Թիմուրյանին, նույն այն նամակում, որով ծանուցում էր Անանիայի Մոսկվա վերադառնալը։ Այնուհետև 1855 թ. հուլիսի 15-ին ներկայացնելով գրաքննչական ատյանին Գամառ-Քաթիպայի տետրակների 2-րդ պրակը, Պատկանյանը չի մտցնում «Արաքսի արտասուքը» բանաստեղծությունը։

Մկրտիչ Բերոյանի 1855 թ. հուլիսի 28-ին Պետերբուրգի գրաքննչական ատյանի նախագահ Մուսին-Պուշկինին ուղարկած հաղորդումից կարելի է պատկերացում կազմել այդ պրակի բովանդակության մասին։ Դրանք են՝ «Մխիթար Աբբա» հոդվածը, «Քահանա» բանաստեղծությունը, «Հաֆների ճանապարհորդության միջոցին պատահած անցքը», «Անվնաս մարդը», «Ինձ համար չէ գարնան գալը», «Հայոց աղջիկը», «Դամասկոսի հայ աղջիկը»[9]։

Չկա «Արաքսի արտասուքը» նաև 1855 թ. սեպտեմբերի 1-ին ներկայացված երրորդ պրակում, որի բովանդակությունն էին կազմելու

[9] Տե՛ս ЦГИАЛ, ֆ. 777, ց. 2, 1854, գ. 111—7, № 9—12։

«Բաժակ փրկության», «Սիրո երգ» բանաստեղծությունները «Հայաստան» (աշխարհագրական) հոդվածը, «Արդարադատություն» պատմվածքը, «Տապանագիր» և «Քառպուշկա» ոտանավորները[10]։ Եվ միայն հոկտեմբերի 27-ին ներկայացված նյութերի մեջ մտցված է «Արաքսի արտասուքը» և այս երեք անգամ գրաքննված գործերից ընտրված երկրորդ պրակի բովանդակությունը։ Ուրեմն, պետի ենթադրել, որ այն վերջնականապես մշակված և պատրաստ է եղել տպագրության սեպտեմբերի 1-ից հետո։ Հետաքրքրական է այն հանգամանքը, որ բանաստեղծության սկզբնական տարբերակը, որտեղ ցասումնալից խոսքեր էին ուղղված նաև ռուսական տիրապետության և ցարիզմի դեմ, արտագրրված էր միայն ձեռագիր տաղարանի մեջ և նախատեսված ձեռագիր միճակով բազմացնելու ու տարածելու համար, իսկ գրաքննության ներկայացված օրինակը, հեղինակի կողմից կրճատված և մեղմված էր, հանված էին հետևյալ երկու քառատողերը.

Իմ ազգակից գիժ Քուռը
Թեև այրի ինձ նման,
Ըստրկորեն տանում է,
Գայթակղիչի կուռ շղթան։

Բայց նա ինձ չէ օրինակ
Ես հայ՝ հայիս կճանչնամ,
Օտար փեսա չուզելով
Ես միշտ այրի կմնամ։

Մինչև վերջերս գոյություն ուներ այն կարծիքը, որ այդ երկու քառատողերը հանված են գրաքննության կողմից, սակայն 1855 թ. հոկտեմբերի 28-ին Բերոյանի դրական կարծիքի հիման վրա Բեկետովի տված թույլտվության մեջ չի խոսվում ոչ մի կրճատման մասին, այլ նշվում է. «Գամառ-Քաթիպայի արձակ և չափաբերական աշխատություններն» անվան տակ եղած նյութերն են՝ «Հանք և Ստրուկ Մարկոյի պատմությունը», «Ժողովրդական առածներ և առակներ», «Արտասուք Արաքս գետի ափին», «Ուսանողի երգը», «Իսկական բարեկամը», «Հայոց գինին», «Մայրական սեր», «Տալ և բարեգործել»։ Իմ կողմից կարդացված այս բոլոր գործերի մեջ չկան գրաքննչական օրենսդրության կանոններին հակառակ որևէ բան, որի մասին զեկուցում եմ Ձերդ գերազան-

---

[10] Տե՛ս նույն տեղում, № 12։

ցությանը և պատիվ ունեմ սույնի հետ վերադարձնելու բոլոր երեք ձեռագրերը։ Մկրտիչ Բերոյան, և ապա՝ դրաքննիչ Ալեքսանդր Բեկետով»[11]։

«Արաքսի արտասուքը» բանաստեղծության կառուցվածքը Պատկանյանի համար նորություն չէր։ Ինչպես «Ջարմայր նահապետի մահը» և «Պանդուխտ հայ ի Փարեզ» պոեմներում, այստեղ ևս գործողությունների ընթացքը զարգանում է բանաստեղծի՝ «վշտացյալ պատանյակի» և հայոց դարավոր ցավը հեծող ձայնի խոսակցության միջոցով։ Եթե առաջին գործերում այդ դերը ստանձնել էին երիվարն ու հայոց պանդուխտ արքայի ոսկորները, ապա այս դեպքում բանաստեղծի զրուցակիցն էր Հայաստան աշխարհը նշանավորող գետը՝ Արաքսը, հայոց նախկին փառքի ու անկման հավերժական վկան։

Սակայն նույնիսկ այս, արդեն օգտագործված բանաստեղծական հնարանքը չէր նսեմացնում Պատկանյանի նոր գործի արժեքը, որովհետև բանաստեղծության մեջ դրված նոր գաղափարը, անցյալի հերոսների մեծարումը որպես ներկայի ողբերգության վերհանման միջոց ընկալելը և ներկա ծանր վիճակի պատկերումով ազգային ինքնագիտակցության խթանումը մի նոր հիմք էին պարգևել բանաստեղծական խոսքին, որը սրընթաց զարգացում ապրելով հանգեցնում էր ազգային ազատագրական պայքարի անհրաժեշտությանը։ Քանի Արաքսի զավակները որբ, անտերունչ ու պանդուխտ կթափառեն աշխարհի բոլոր ծայրերում, մայր հայրենիքը կմնա սգավոր, շղթայակապ ու ստրուկ օտարին։ Ինչպես դիպուկ նկատել է հայ ռոմանտիզմի տեսաբան Ս. Սարինյանը, Պատկանյանի ռոմանտիզմը չբավարարվեց պատմական հերոսության մեծարումն իբրև ազգային ինքնագիտակցության խթանիչ, անցյալի պատմական հերոսությունների գունազարդումով տարվելով, այլ նրա ռոմանտիզմը իր հետ բերեց մի նոր որակ՝ անցյալի և ներկայի հակադրման միջոցով ներկայի ողբերգության պատկերում և պայքարի նախապատրաստվելու անհրաժեշտության գիտակցություն։

Բանաստեղծությունը սկսվում է առանց նախապատրաստական միջոցների։ Նախորդ պոեմներում համապատասխան տրամադրություն ստեղծելու նպատակով Պատկանյանը դիմում էր բնապատկերի և այլ արտահայտչամիջոցների օգնությանը, այստեղ առանց որևէ շեղումների նա պատկերում է Արաքսի ափերով դնացող «քայլամոլոր» պատանուն և այդ մի հատիկ բառով կարողանում է ներկայացնել երիտասարդի հոգին կրծող վիշտը, նրա ներքին խռովքը, նրա տարակուսանքը, նրա

[11] ЦГИАЛ, ֆ. 777, ց. 2, 1854, գ. 111, 18 թ.

դարերի խորքը թափանցել ցանկացող հայացքը, որը կարծես ուզում էր գտնել ներկա դժբախտության պատճառը։

Բայց միայն պատանին չէ վշտոտ, վշտոտ ու անմխիթար է նաև հայրենի մեծ գետը, ինքը՝ բազմաչարչար հայրենիքը։ Այնուհետև սկըսվում է պատանու մենախոսությունը, որ գետին ուղղված իր հարցերի և կշտամբանքների օգնությամբ ստեղծում է անցյալի կյանքի հոգեմայլ պատկերը, երբ և՛ հայրենիքն էր ազատ, և՛ հայը՝ երջանիկ։ Ըստ որում այդ քառատողերում չկա ոչ մի ուղղակի արտահայտություն անցյալի մասին, չկա վերհուշ, չկա պճնալում անցյալ դարերի հերոսներով, այլ գեղեցիկ, անդորր բնանկարի պատկերումով վերակենդանացված է անկախության շրջանի Հայաստանի ռոմանտիկական կյանքը, երբ գետը հոսում էր «ձկանց հետ մանկական խաղ բռնած», ուրախ ու անհոգ, երբ նրա ափերը զարդարված էին վարդի անուշաբույր թփերով, որոնց մեջ մինչև առավոտ դայլայլում էին սարյակները, և Արաքսը իր կենարար ջուրն էր տարածում բոլորի համար։

Պատանու իդիլիական, ռոմանտիկական երազին է հակադրված սգավոր գետի դարավոր վշտի պոռթկումը, որը բանաստեղծը արտահայտել է մեջքը ուռցրած ու հատակից ամպի նման ցռռացող, և իր հզոր կոհակներով հայ ժողովրդի ամբողջ դարավոր ողբերգության պատմությունը հիշող Արաքսի կերպարով։ Քառատողից-քառատող ուժեղացնելով պատկերները, բանաստեղծը կարողանում է դարձյալ ստեղծել ներքին դինամիկա, գետի միջոցով նախ նկարագրելով քաղաքական անկախության պայմաններում ապրող ժողովրդի երջանկությունը և ապա դրան հակադրում ներկայի անմխիթար վիճակը, ցասումնալից խոսքեր ուղղելով բոլոր նվաճողների հասցեին, հասցնելով բանաստեղծությունը տրամաբանական վախճանին՝ ազգային-ազատագրական պայքարի անհրաժեշտությանը.

> Քանի որ իմ զավակունք
> Էսպես կումընան պանդուխտ
> Ինձ միշտ սըգվոր կըտեսնեք,
> Էս է անխախտ իմ սուրբ ուխտ։

Զարմանալիորեն խոսուն են բանաստեղծության մեջ օգտագործված պատկերները։ Մեկ դիպուկ արտահայտությամբ Պատկանյանը կարողացել է արտահայտել մի ամբողջ գաղափար, մեկ ածականով ստեղծել անդորրության, երջանկության պատրանք, կամ ցասումի ու վշտի տրամադրություն։ Ինչպես վերը նշեցինք, «քայլամոլոր» գնացող պատանու

կերպարը նախապատրաստեց, ստեղծեց տագնապի ու անանց վշտի մի տրամադրություն, «Հազար ու բյուր պլրանքով», «շքեղազարդ Հարսի պես» իր ափերից փախչող գետը վերականգնեց նախնի դարերի գեղեցիկ կյանքի պատրանքը։ Նույն այդ գետը օձի պես օղակ-օղակ մոլեգին առաջ սողալով Համոզեց ընթերցողին, որ նրա Համբերությունը անսպառ չէ, որ նա ցասումնալից, վրեժխնդիր օձի պես պատրաստվում է թռիչքի։

Որ Պատկանյանը «դայթակղիչ» բառի տակ Հասկանում էր ցարական Ռուսաստանին, կարելի է մակաբերել Հենց այն փաստից, որ նա Հիշյալ քառատողերը նախատեսել էր ձեռագիր վիճակով տարածելու, իսկ գրաքննությանը ներկայացրել այլ տարբերակ։ Այնուհետև, 1855 թ. հոկտեմբերի 30-ին գրած նամակում Հետևյալ տողերի առկայությունը ստիպում է մտածել, որ անազատության զգացումը միշտ Հետապնդել է նրան ստեղծագործության ընթացքում և ժամանակ առ ժամանակ նա վախեցել է Հետապնդումների ենթարկվել իր Համարձակ լեզվի Համար. «Պարապում ես պոեզիայով՝—գրել է նա Քանանյանին,—Հետևանքը անեծք է անազատության» (VI, 65)։

Իսկ մի ամիս անց, դարձյալ Քանանյանին ուղղված նամակում, քննադատության է ենթարկում ռուս բանաստեղծ Ապոլլոն Մայկովին՝ ինքնակալության Հասցեին շողոքորթ ոտանավորներ գրելու Համար. «...Ես քեզ արդեն գրել էի, որ ծանոթացա (թեև ո՛չ այնքան մոտ) Գոնչարովի, Դանիլևսկիի, Պոլոնսկիի Հետ, այժմ նաև Մայկովի և Զոդովի Հետ... Մի օր ես կգրեմ նոցա վերա իմ կարծիքը. Հիմի այնքան միայն կասեմ, որ խիստ խելոք և ազատ մտածմունքով մարդիկ են, բացի Մայկովից, որ փոքր-ինչ նվաստացավ տերության առաջ յուր շողոքորթ գրվածքներով, բայց ինչպես ինքը ասում է, ստիպված է արել այդ ամենը» (VI, 77)։ Պատկանյանի վրդովմունքն էին շարժել, անկասկած, Մայկովի Ղրիմի պատերազմի դրվագներին նվիրված «1854 թվական» ժողովածուն, ուր Ղրիմի պատերազմի Հերոսներին փառաբանող բանաստեղծությունների Հետ միասին Հիացական տողեր կային ինքնակալության և, մասնավորապես, Նիկոլայ I մասին։ Ինչպես երևում է նամակից, Պատկանյանը չէր Հապաղել Հայտնել նաև բանաստեղծին իր վրդովմունքը և լսել էր վերջինից իրեն արդարացնող պատասխանը։

Ռուբեն Բերբերյանի «Միքայել Նալբանդյան» աշխատության մեջ կան այսպիսի տողեր, որոնք պատմում են «Արաքսի արտասուքը» բանաստեղծության մասին Հյուսված մի խոսակցության մասին, ինչպես նաև վերՀանում Միքայել Նալբանդյանի վերաբերմունքը այդ գործի վե-

րաբերյալ։ «Մեկ օր,—գրում է Բերբերյանը իր մորեղբոր Անանիա Սուլթան-Շահի պատմածների վերհուշով,—Մոսկվայի հայ ուսանողական շրջանում ժողոված էինք։ Բժշկական ուսանող Սուլթան-Շահը պատմեց, որ նախընթաց օրը նա իր ռուս ընկերոջ տանը ծանոթացավ մեկ արաբացի ուսանողի հետ, որ նորան ծանոթացրեց արաբ նորագույն բանաստեղծության հետ։ Այդ ուսանողը կարդացել էր նույնպես աղատ թարգմանված մեկ ոտանավոր, որ կոչվում էր «Եփրատի արտասուքը»։ Այդ ոտանավորը գրված է քառասնական թվականներին և շատ-շատ տեղերում հիշեցնում է Գամառ-Քաթիպայի «Արաքսի արտասուքը»։ Ընկերները խորին ուշադրությամբ լսում էին Սուլթան-Շահին, որը շարունակում է,—այդ ոտանավորի մեջ Եփրատը պատմում է, թե ինչպես նորա որդիք իրանց հայրենիքը թողած, թափառում են աշխարհիս չորս ծայրը։ Այնուհետև Եփրատի հետ խոսող բանաստեղծը իր իղձն է հայտնում, որ մըշտադալար ուռեններ ծաղկեն Եփրատի ափերում։ Ի՜նչպես,—շարունակում է Սուլթան-Շահը,—Պատկանյանը անգիտակ, որ Արաքսի ափերի կլիման մեր Մոսկվայի կլիմայից շատ չի զանազանվում արտագրել է.

Մշտադալար ուռեններ
Սառ ծոցի մեջ քու ջրրին
Ծըկուն ոստըն ու տերև
Թող թաց անեն տապ օրին։

Սուլթան-Շահի այդ զեկուցումից հետո բարձրանում է մեծ աղմուկ ու իրարանցում, որովհետև ամենքը միասին ուզում են խոսել, առարկել ու վիճել։ Նալբանդյանը լուռ նստած էր.—Նալբանդ, լսենք քո կարծիքը,—դիմում են ուսանողները։ —Հարցը անոր մեջ չէ,—բացատրում է Նալբանդյանը, թե Պատկանյանի «Արաքսի արտասուքը» թարգմանություն է, թե նմանություն արաբերեն բանաստեղծության։ Ես տասնյակ անգամներ կարդացել եմ «Արաքսի արտասուքը» և միշտ հիացել եմ, որովհետև դորա մեջ լսում եմ և զգում եմ հայ ազգի իղձը, որովհետև ճշգրիտ և գեղեցիկ խոսում է ազգի ցավերի մասին. կասեմ և ավելին. ես այն կարծիքին եմ, որ 19-րդ դարում ամբողջ եվրոպական բանաստեղծությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ Բայրոնի, Գյոթեի և Պուշկինի ստեղծագործությանց ավել, կամ պակաս կրկնությունններն ու նմանություններն։ Հազվագյուտ են այն բանաստեղծները, որոնք իրենց գլխից որևէ բան ստեղծեն, եթե լավ խառնփտեք, դուք կգտնեք, որ այսօրվան լավ ճանաչված բանաստեղծների գրվածքների սաղմը արդեն գոյություն ունի հույն, լատին, ֆրանսիացի, թե, գերմանացի, անգլիացի, թե ռուս բա-

նաստեղծների ստեղծագործությունների մեջ։ Գաղտնիքը անոր մեջ է, սակայն, որ գրածդ ճշտորեն համապատասխանե քու նկարագրած պատմական շրջանին, նորա հոգուն ու բնության, և եթե կարողանաս տալ կարգին լեզու և գեղեցիկ բանաստեղծական ձևեր—նպատակիդ հասած կլինես։ Կա՞ ձեր մեջը մեկը, որ ասե, թե Պատկանյանի այդ ոտանավորը մեր աշխարհաբար բանաստեղծության զարդը չէ...

— Ուրեմն դու կարծիքդ փոխե՞լ ես Պատկանյանի մասին,—վըրդովված հարցնում է ուսանողներից մեկը։

— Սիրելի՛ս... դու տխմա՞ր ես...տաքանում է Նալբանդյանը․ ես գովեցի «Արաքսի արտասուքը», բայց ես ոչինչ չասի Պատկանյանի մասին։ Իբրև մարդու իմ կարծիքը նորա մասին մնում է առաջվանը։ Կարգա, իրեն մի տես... Եվ եթե նա չփոխվի իբրև մարդ, նա չի կարող մեզ ընկեր լինել, բայց իբրև բանաստեղծ՝ մենք ուզենք չուզենք նորա ոտանավորները պիտի անգիր անենք ու երգենք»[12]։

Թե որն է այստեղ իրականությունը և որը մտացածինը, դժվար է ասել, սակայն հավանորեն, բանաստեղծության առաջացրած ընդհանուր տրամադրությունն ու խանդավառությունը ճիշտ է հաղորդված, ինչպես նաև շեշտված է Նալբանդյանի և Պատկանյանի լարված հարաբերությունների անձնական շարժառիթները, քանի որ Նալբանդյանը ընդունում է նրա՝ Պատկանյանի պոեզիան և չի ուզում նրան ճանաչել իբրև մարդ։

---

[12] «Հայրենիք», 1929, օգոստոս, էջ 124։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ՌՈՒՍԱԿԱՆ ԱՌԱՋԱՎՈՐ ՄՏՔԻ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ

Օրըստօրե ընդլայնվող ընկերական միջավայրում Պատկանյանը ոչ միայն քարոզում, քննարկում է հայ ժողովրդի ապագայի հետ առնչվող հարցերը, այլև վերլուծում ժամանակի առաջավոր միտքը փոթորկող ընդհանուր կարծիքներ, ինքը նույնպես ջանք թափում իր նոր ընկերներին ծանոթացնելու Մոսկվայի համալսարանի ուսանողների միջավայրում ձեռքից-ձեռք անցնող արգելված գրականության հետ։ 1855 թ. մարտի 25-ին գրած նամակում նա Գևորգ Քանանյանից խնդրում է Բելինսկու ստեղծագործությունների տետրակները (տետրակ ասելով այն օրերին հասկանում էին պրակներ), հավանորեն իր նոր բարեկամներին նրանց հետ ծանոթացնելու նպատակով, քանի որ, ինչպես երևում է նամակից, ինքը դրանք կարդացել էր տակավին Մոսկվայում. «Չիմնալով քու պատասխանին և գտնելով հաջողակ դիպված՝ ուղարկում եմ և այս նամակը, որ դու կստանաս իմ ծանոթ և քեզ անծանոթ Ասատուրովից, որի հետ դու գլխացավություն կանես ուղարկել ինձ նամակ և այն քու տետրակները (Բելինսկիի), որ ես անցյալ նամակումս խնդրել էի քեզանից» (VI, 57)։

Պետք է ուշադրություն դարձնել այն փաստի վրա, որ թե՛ նամակը, թե՛ գրքերը ուղարկվել են ոչ թե փոստով, այլ ոմն Ասատուրովի ձեռքով, քանի որ այդ տարիներին՝ այսինքն 1848 թ. մինչև 1856 թ. Բելինսկու անունը և նրա ստեղծագործությունները գտնվում էին գրաքննչական խիստ արգելքի տակ։ Այդ իսկ պատճառով Չերնիշևսկին Բելինսկու բնութագրումը տվեց իր «Очерк Гоголевского периода» *հոդվածում միայն 1856 թ., իսկ առանձին գրքով այն լույս ընծայվեց 1859 թվականին։*

Ովքե՞ր էին այդ ժամանակ Պատկանյանի մտերիմները, ում հետ էր նա կիսում իր խոհերն ու մտքերը, ումի՞ց էր սովորում, ո՞ւմ միջոցով էր հաղորդակից դառնում Ռուսաստանի առաջավոր միտքը հուզող գաղափարների հետ։ Ինչպես վերը թռուցիկ կերպով ասվեց, դրանք առա-

չին Հերթին Քերովբե Պատկանյանն ու Անանիա Սուլթան-Շահն էին, Հովհաննես Պատկանյանն ու սրանց Գլխավոր մանկավարժական ինստիտուտում ու Գեղարվեստների ճեմարանում սովորող ընկերներն ու համակուրսեցիները, ինչպես նաև պետերբուրգաբնակ հայ գործիչներ Մովսես Բուդաղյանը, Հովսեփ Իզմիրյանը, Սիմեոն Սուլթան-Շահը։

Պետերբուրգ եկած հենց առաջին օրերից Պատկանյանը ավելի ու ավելի ոգեշնչվեց դեռևս Մոսկվայում իր համար ուղեցույց ընտրած այդ տարիների երիտասարդության մտքերի տիրակալ Նեկրասովի պոեզիայով և նրանցում արծարծված գաղափարներով, երբ սկսեց շնչել «Սովրեմեննիկ»-ի միջավայրի կենարար օդը։ Անկասկած, այդ առնչությունների ու նրանց հետևանքով հասունացող մտքի ու գաղափարների արգասիքն էր 1855 թ. սեպտեմբերի 7-ին Գևորգ Քանանյանին գրած իր ծրագրային նամակը, որտեղ նա իրենց ամբողջ գործունեության նպատակը հանգեցնում էր ազգը ազատասիրական գաղափարներով զինելու և պայքարի կոչելու մեջ։ Հայտնելով Քանանյանին միայն առաջիկա տարիներին կատարելիք աշխատանքների ծրագրերը, նա ավելի հեռավոր ապագայի գործունեությունը, գործնական քայլերին դիմելը թողնում է հետագային. «...Ապագա պլանները փոքր-ինչ հետո կհայտնեմ. ավելի մոտինը և ներկան ահա՛ համառոտ կաշխատեմ հայտնել,—գրում է նա։—Գամառ-Քաթիպան անպատճառ պիտի ունենա ուղղություն ներքին պարունակության կողմանե. նա պիտի լինի մեր օրերու, սեփական մեր կարծիքների և մեր նվիրական խորհուրդների արձագանքը. Նորա կարդացողները թող չիգտնեն մեջը այնպիսի հատվածներ, որոնք կարող են պատճառ լինել հային անդորր կենցաղ սիրող լինել, թող չիանեն նոցա կրոնասեր քրիստոնյա, զավակասեր կամ ընտանեսեր ծնող. այլ ամեն մի դորա մեջ պարունակած հոդվածը թո՛ղ կարողանա արծարծել նոցա սրտի մեջ, եթե ոչ ուղղակի կերպով հայրենասիրությունը, գոնե թո՛ղ հիշեցնեն նոցա նոցա կորցրած երջանկությունը. թո՛ղ կամաց-կամաց սովորի պաղարյուն նայել այն մահվան վերա, որ նա կարող է ստանալ ղոհելով անձը ազգի ազատությանը. մեկ խոսքով, այն ամեն զգացմունքները, որոնք խորը տպավորվել են մեր մեջ, որ մենք չենք համարձակում հրապարակավ քարոզել և որն որ Հային, ըստ մեծի մասի, անհայտ է, թող անզգա կերպով սերմանվի նոցա սրտի և հոգվո մեջ։ Ուստի մենք պիտի աշխատենք մուծանել Գ<ամառ>-Ք<աթիպա>-ի մեջ վարք երևելի արանց, ինչպես որ էին Գուստավ Ադոլֆը, Վիլհելմ Թելը, Բոցարիսը, Դմիտրի Դոնսկոյը, Լեոնիդը և շատ ուրիշները, որոնք փառք են իրանց հայրենյաց։ Ընդհակառակն, եթե մենք

կտեղավորենք այնպիսի շարադրություններ, ուրտեղ որ պատմություն (ազգասիրական) համարվում է հանցանք, կսովորեցնենք Հայինխաղաղ, առանին կյանք վայելել,— այն ժամանակ ինչի պիտի նմանին նոքա, ոչ ապաքեն այն ատելի հայերուն, որոնցմով առատ են, մանավանդ ներկա դարումս Մոսկով, Պետերբուրգ, Ղզլար, Հաշտարխան։ Իմ կարծիքով, ավել լավ է նկարագրել ապստամբ ավազակների կյանքը, զորօրինակ Պուգաչովի, Ստենկա Ռազինի, Օտրեպևի, քան թե գերմանական կյանքից առած, մեղր ու կարագով ծեփած և սերով կոկած էռնեստներու, վոլդեմարներու և դյուվալներու։ Երգերս թող պարունակեն իրանց մեջ հուսահատություն, կասկածանք (սկեպտիցիզմ), կյանքից զզվումն, քան թե բնության և աստծո ողորմությունը, բարոյականության հաղթանակը։ Թող հայ աղջիկը սիրե քաջություն, քան թե բարոյական առաքինություն. սև և խուճուճիկ մազեր, զգայուն հոգի, տոփոտ (страстный) աչքեր, քան թե փայլուն ուսադիրներ, հարուստ կամ աստիճանավոր փեսա» (VI, 59, 60)։

Հատկապես մեծ նշանակություն ունեցավ Պատկանյանի համար ճարտարապետության ուսանող Նիկոլայ Տրիֆանովի բարեկամությունը, որը իր օտարազգի ընկերոջ գաղափարներով վառված նրան մտցրեց ռուս առաջավոր գրողների ու մտավորականների շրջանը, ծանոթացրեց Գոնչարովի, Մայկովի, Պոլոնսկու, Ջոտովի և նրանց միջոցով «Սովրեմեննիկ»-ի շրջապատի հետ։

Որտե՞ղ և ե՞րբ էր ծանոթացել Պատկանյանը այդ ազնիվ ռուս պատանու հետ։ Ամենայն հավանականությամբ, ծանոթության աղբյուրը հանդիսացել է Ռափայելի եղբայրը՝ Գեղարվեստների ճեմարանում սովորող Հովհաննես Պատկանյանը, քանի որ Նիկոլայ Տրիֆանովը 1855 թ. նախապատրաստվում էր ճեմարանի ճարտարապետական բաժին ընդունվելու քննություններին և, երևի, մասնակցում էր նկարչության դասերին։ Ծանոթությունը տեղի է ունեցել 1855 թ. մայիս-հունիս ամիսներին, որովհետև օգոստոսի 31-ին Թիմուրյանին գրած նամակում նա հայտնում է. «... Ամեն կերպ անբավականություններ չորս կողմից պատել են ինձ, միայն Նիկոլայի բարեկամությունն է մխիթարում ինձ այս նեղ հանգամանաց մեջ» (VI, 58)։

Նիկոլայ Տրիֆանովը բնակվում էր իր մորաքրոջ՝ տիկին Աննա Նիկոլաևնա Աստաֆիևայի սեփական տանը, որ գտնվում էր Նիկոլայ Մորսկոյ փողոցում։ Նույն այդ տանն էր բնակվում նաև Տրիֆանովի քույրը, որի ամուսինը՝ Կոնստանտին Լոսևը ֆրեգատ «Պալլադա»-ով շուրջերկրյա ճանապարհորդության մեջ էր գտնվում ադմիրալ Պուտյատինի հետ։ Նա-

վի վրա Պուտյատինի քարտուղարի պաշտոնով նավարկում էր նաև Իվան Ալեքսանդրովիչ Գոնչարովը։ Ծանոթանալով իր նոր ընկերոջ գաղափարներին ու գործունեության հետագա ծրագրերին, Տրիֆանովը անկեղծ հարգանքով ու հիացմունքով է լցվում ինչպես նրա, այնպես էլ բոլոր այն հայ երիտասարդների հանդեպ, որոնց հետ ծանոթացել էր Պատկանյանների միջոցով։ Պերճախոս Ռափայելը այնպես էր վարակել նրան իրենց ոգևորությամբ, որ մինչ այդ անծանոթ ժողովրդի ցավերը դարձել էին հարազատ նրա համար, և այդ ժողովրդին օգտակար լինելու տենչը սակավ առ սակավ համակել էր Տրիֆանովի ամբողջ էությունը։

Ծանոթությունից 5 ամիս հետո, 1855 թ. հոկտեմբերին Նիկոլայ Տրիֆանովը առաջարկում է Պատկանյանին տեղափոխվել իր մորաքրոջ բնակարանը և ծրագրեր մշակում օգնելու նրան սեփական տպարան բացելու գործում։

«Ռափայելի հետ տեսնվում եմ հաճախ, նա բարեկամություններ է բաց արել և տալման վրեն Պետերբուրգ է զարմացնում»,—հայտնում է Քերովբե Պատկանյանը մոսկովյան ընկերներին, Տրիֆանովի հետ սկսված սերտ բարեկամության մասին[1]։

Պատկանյանի բարեկամները դառնում են նաև Տրիֆանովի բարեկամները, ամեն մի հայի օգնելը այդ ռուս երիտասարդը համարում է իր սրբազան պարտքը։ «Նիկոլայյին (իմ ընկերի և ընտիր ընկերի) շատ դուր են գալի իմ ամեն բարեկամները, թեև ոչ մի անգամ չի տեսել. ուրեմն, որքան կարող ես այդ մասին իմ վերա հուսալ, այնքան և նորա...» (VI, 65)։

Տիկին Աստաֆիևան նույնպես սիրով ու պատրաստակամությամբ էր ընդունում հայ երիտասարդներին, հրավիրում Մոսկվայի հայ ընկերներին իրենց մոտ անցկացնելու արձակուրդները։

Առաջին անգամ երկար տարիներից հետո իր ռուս բարեկամների տանը Պատկանյանը սկսում է ճաշակել անդորր ու անհոգ կյանքի բոլոր հարմարությունները, անձնատուր լինում ստեղծագործական աշխատանքին ու գործունեությանը. («...Մեր բնակությունը խիստ ընդարձակ է,—գրում է նա Գևորգին և Մնացականին, հրավիրելով նրանց իր մոտ,— 5 սենյակից բաղկացած). կգտնեք կենաց ամեն հարմարությունը, հանգիստ բնակարան, առողջ կերակուր, սպասավոր նաև...»։ «Ես արդեն քու վրա խոսել եմ մադամ Աստաֆիևայի հետ, նկարագրել եմ այնպես,

[1] ԳԱԲ, Քանանյանի ֆ., № 8։

ինչպես, որ ինքս ճանաչել եմ. նա քեզ շատ սիրեց դեռևս չտեսած. ի՜նչ պիտի լինի, եթե տեսնի» (VI, 65)։

Աննա Նիկոլաևնա Աստաֆիևայի տանը, ուր երեկոները հավաքվում էր ռուս մտավորականների մի ընտիր հասարակություն, Պատկանյանը կարողանում էր ոչ միայն ծանոթանալ Ղրիմի պատերազմի օրերին ռուս առաջավոր մտածողներին համակած ազատասիրական տրամադրություններին, նրանց համարձակ մտածելակերպին, ճորտ գյուղացիության շահերը պաշտպանող ճառերին, այլ նաև այդ հասարակության որոշ ներկայացուցիչներին ծանոթացնում հայերի պատմական բախտի ու ներկա ձգտումների հետ և համակրություն գտնում նրանց մոտ։ Այդ խոսակցությունները ավելի էին ամրապնդում Նիկոլայ Տրիֆանովի Գամառ-Քաթիպա ընկերությանը սեփական տպարանով ապահովելու որոշումը։ Դեմ չէր նրա այդ ձեռնարկությանը նաև տիկին Աստաֆիևան, որը անընդհատ խրախուսում էր իր քեռորդու ոգևորությունները։ «Նիկոլայ Տրիֆանովը յուր գումարից զոհեց մոտ 1500 մանեթ հայոց տպարան բանալու համար Պետերբուրգումը,—հայտնում է Գևորգ Քանանյանին Ռափայել Պատկանյանը,—գնեց 25 փութ տառ գաղղիացի Ռեվլլիոնից, որ խիստ գեղեցիկ է, և եթե ինձ հարցնեք, դեռ ոչ մի տեղ դորա նմանը չիկա, յուրաքանչյուր փութը արժե 22 մանեթ, կնշանակի միայն տառերու համար մխեց 650 մանեթ, մոտ 150 մանեթի գնեց զանազան տպարանի զարդեր, առավ թուղթ և ուրիշ հարկավոր բաներ 200 մանեթի, Անգլիայից ապսպրեց թափցու երկաթի մամուլ, որ նմանապես արժան չի նստիլ, խիստ սակավից 450 մանեթ, և այս ամենը ոչ այն հուսով, որ մեծ տոկոսներ ստանա, ո՛չ, այլ միայն ինձ զբաղելու և մխիթարելու համար, որովհետև հայտնի կերպով ես հրաժարում էի նորանից օգնություն ստանալ... Ուրեմն, որքա՜ն հարմարություններ ունինք այժմ մեր աղնիվ մտածմունքը էացնելու և ասես թե վերին նախախնամությունը ամեն հնարքը և միջոցը գործ է դնում զգալի կերպով մեզ օգնելու։ Այդ գործումը Տրիֆանովը ցույց տվեց մի այնպիսի հաղվագյուտ աղնվություն, որ չէր կարելի սպասել նաև մեր մինչև երկինք բարձրացած մեկենասներից։ Պր. Լազարյանք մի գրոշ դուրս չեն հանիլ իրանց գրպանից, եթե վստահ չլինին, որ այդ նոր խունկ պիտի լինի նոցա կուռքի, սնափառությանը առաջ. այնինչ այս աղնիվ երիտասարդը առանց մի ակնկալության յուր աննախանձելի գումարից հանեց այդ նշանավոր մասը, որ կարող էր գործ դնել ավելի ճշգրիտ ձեռնարկության» (VI, 69)։

Ամեն անգամ Տրիֆանովին դիմելը կատարյալ տանջանք էր դարձել Պատկանյանի համար, որովհետև ծանոթության առաջին իսկ օրից բո-

լորովին այլ կերպ էր ներկայացրել իրենց «Ուխտ»-ի ու համախոհների վիճակը, նկարագրել այն ընդհանուր խանդավառությունը, որ ամեն հայ տածում է ազգօգուտ այս ձեռնարկության նկատմամբ. «Հիմի ի՞նչ գաղափար պիտի ունենա նա մեր հայերու վերա,— տագնապով գրում է նա Մոսկվա.— եթե բանը տեղով հայտնեմ նորա, իհարկե, նա չէ՛ չի ասիլ, կտա ինձ այդ թշվառ գումարը, բայց ինչպե՞ս պնդացնեմ երեսս և նորից ծանրություն լինիմ խեղճին» (VI, 77)։ Պետերբուրգի իր նոր բարեկամները, որոնք հաճախ էին խանդավառվել նրա վերացական գաղափարներով, հիմա, անհրաժեշտության դեպքում անտարբեր նայում էին նրա անվոր ճիգերին և ձեռք չէին մեկնում օգնելու։ Կային և այնպիսիները, որոնք երկու երիտասարդների ձեռնարկած գործին նայում էին կասկածանքով և ազգասիրական նպատակների տակ տեսնում անձնական շահի ակնկալություններ, դառնացնելով և՛ Տրիֆանովին, և՛ Պատկանյանին. «...Այժմ հասավ ականջիս, որ նոքա ասել են, իբր թե ես ամեն կողմ ընկնելով վերջապես ճանկել եմ ինձ նման հիմարի մինին և հայոց լեզուն միջոց եմ արել իմ վաճառականական հաշիվներուս։ Այս ստապատիր կարծիքը ինձ դառնագույն թվեցավ... (VI, 74)։

Այս ամենի հետևանքը լինում է այն, որ Պատկանյանը որոշում է պակասեցնել Գամառ-Քաթիպայի 2-րդ տետրակի ծավալը, և իր ձեռքի տակ ունեցած 22 գրաքննված նյութերից ընտրում դարձյալ ինը[2], նշածծրագրի կատարումը թողնելով ավելի հաջողակ օրերի։ Բովանդակության տեսակետից Գամառ-Քաթիպայի այս տետրակը առաջինի համեմատությամբ, անկասկած, ավելի լավ էր կազմված և այն նպատակները, այն ներքին իմաստը, որով երազում էր դաստիարակել հային Ռափայել Պատկանյանը, ինչ-որ չափով պահպանված էր։ Իհարկե, համարի պսակն էր «Արաքսի արտասուքը» ոտանավորը, որը իր ռոմանտիկական մեծ ոգևորությամբ պիտի բաբախեր տար շատ ընթերցողների սրտեր, համակեր նրանց հայրենիքին օգնելու տենչով։ Հայ կնոջ գովքն էր անում Լամարտինի «Ճանապարհորդություն Արևելքում» գրքից թարգմանած «Դամասկոսի հայ աղջիկ» հատվածը, որ ֆրանսերենից թարգմանել էր Ռափայել Պատկանյանը։ Անհրաժեշտ էր հայերի ինքնագիտակցությունը բարձրացնելու համար վկայակոչել Եվրոպայի գողների կարծիքը հայ կնոջ մասին, մանավանդ այնպիսի նշանավոր մարդու, ինչպիսին նրբա-

---

[2] 1. «Քահանա» ոտանավորը, 2. «Ճշմարիտ բարեկամը» բարոյախոսական զրույցը, 3. «Քափուշքա» ոտանավորը, 4. «Դամասկոսի հայ աղջիկ» ճանապարհորդական հուշերը, 5. «Բաժակ փրկության», 6. «Արաքսի արտասուքը», 7. «Տապանագիր» ոտանավորը, 8. «Արդարադատություն», 9. «Տալ և բարեգործել» պատմվածքները։

ճաշակ ու նրբազգաց բանաստեղծ Լամարտինն է։ Անհրաժեշտ էր հայի աչքում բարձրացնել հայ կնոջ արժանապատվությունը, ցույց տալ այն հիացումը, որ նա առաջացնում է ամենուրեք։ «Ինչ կարծիք էլ ունեցած լինեի Ասորվոց գեղեցկության վրա, ինչ գաղափարներ էլ թողած լինեին իմ գլխումս Հռոմի ու Աթենքի կանանց գեղեցկությունը, հայոց կանանց ու աղջկերանց գեղեցկությունը ամենին գերազանցեց. գրեթե ամեն տեղ այնպիսի կերպարանքներ տեսա, որ եվրոպացոց վրձինը դեռևս չի նկարել. աչքեր՝ այնպիսի ճառագայթաձիգ աչքեր, որոնց նմանը մինչև այսօր ոչ մի կնկա վրա չէի տեսել, այնպիսի նուրբ և հրաշալի ուղիղ գծեր, որ ամենաթեթև և ամենաքնքույշ ձեռը նորա նման չի կարող նկարել. այնպիսի թափանցիկ կաշի և միևնույն ժամանակ՝ այնպիսի կենդանի գույներով ներկած, որ մինչև վարդի թերթերը անգամ նորա առաջ դժգույն կարող են երևիլ... Հայոց կանայք և աղջկունք որքան գեղեցիկ են, այնքան էլ հաճելի են»[3]։

Ազգի համար ողջակիզվելու գաղափարախոսությանն էր արձագանքում և միևնույն ժամանակ իր ծանր հոգեկան տվայտանքներն էր արտահայտում «Բաժակ փրկության» ոտանավորը, որտեղ չնայած զոհվելու պահին Աստծո որդուն պատած վախին ու տարակուսանքին, «Անգոհ մարդկանց» իր մեծ զոհի հանդեպ ունեցած արհամարհանքին, նա դարձյալ պատրաստ է մեռնելու, եթե իր մահը «ազգին կտա մի նոր կյանք»։

Այս ծրագրային բանաստեղծություններից բացի, տետրակում տեղ էին գտել նաև իր հորը նվիրած «Քահանա» բանաստեղծությունը և պետերբուրգաբնակ Մովսես Բուդաղյանի վաղաթառամ մանկան հիշատակին նվիրված «Տապանագիր» գողտրիկ ոտանավորը։ Այս ոտանավորը առաջին վկայությունն էր Բուդաղյանի և նրա ընտանիքի հետ բանաստեղծի ունեցած մտերմության մասին, որը պիտի ավելի ու ավելի խորանար հետագա տարիների ընթացքում։ Բացի իր գործերից, Պատկանյանը տետրակում հրատարակել էր նորնախիջևանցի երաժիշտ Հովհաննես Սահրադյանի «Քափուշքա» երգը, ամենայն հավանականությամբ, հենց իր՝ Սահրադյանի երաժշտական նոտաներով հանդերձ, քանի որ վերջինս զբաղվում էր հայկական երգերի ձայնագրությամբ։ Ձայնանիշեր ուներ նաև «Արաքսի արտասուքը», որի հեղինակն էր Պատկանյանը։ Սակայն, ի տարբերություն առաջին տետրակի ձայնանիշերի այստեղ տրված էր նաև ձախ ձեռքի, ակորդային ուղեկցությունը, որը պետք է ենթադրել,

[3] «Գամառ-Քաթիպայի արձակ և չափաբերական աշխատությունները», 1856, Ֆրիդրիխսոնի տպարան, 1(2), էջ 6։

օգնել էր գրել Նիկոլայ Տրիֆանովը, կամ ավելի ճիշտ, վերջինիս քույրը՝ տիկին Լոսևան, որի երաժշտական կարողությունների մասին նա հաճախակի հիշատակություններ ունի այդ օրերի նամակներում (VI, 72)։

Հենց այդ շրջանում էլ, երևի, միատեղ աշխատանքներ էին տարվում «Ազգային երգարան հայոց»-ի երգերից մի քանիսի (ներկայացված 140 երգերից 33-ի) համար երաժշտական մեղեդիների հորինման ու գրառման ուղղությամբ։ Մեկ տարի անց այդ երաժշտական մշակումները Ռափայել Պատկանյանը հրատարակեց որպես իր կազմած երգարանի հավելված՝ Նիկոլայ Տրիֆանովի անունով, այսպիսով հայտնելով նրան իր երախտագիտությունը, թե՛ ցուցաբերած աշխատանքի, թե՛ վերաբերմունքի համար։ Սակայն կասկածից վեր է, որ բանաստեղծություններից շատերի մեղեդիները պատկանել են իրեն՝ Պատկանյանին, կամ իր կողմից հարմարեցումներ էին պատրաստի եղանակների։ Մի քանի ոտանավորների եղանակներ ուղարկված էին նրան բանաստեղծության հեղինակների կողմից, և Տրիֆանովների մասնակցությունը եղել է միայն ձախ ձեռքի ակորդային ուղեկցությունը գրելու մեջ։ Որպես ապացույց կարելի է բերել «Ծիծեռնակ» երգի մեղեդին, որը համարյա անփոփոխ հասել է մինչև մեր օրերը, մինչդեռ այն իր բանաստեղծությանն էր հարմարեցրել Դոդոխյանը դեռևս Դորպատում բաշկիրական «Սակլաշկա» երգը լսելուց հետո։ Այնուհետև, մինչև Տրիֆանովների հետ ծանոթանալը, դեռևս Գամառ-Քաթիպայի առաջին տետրակում արդեն տրված էին «Երկու քույր» և «Թիֆլիսի քեֆ» երգերի մեղեդիները, սակայն միայն աջ ձեռքի համար գրված։ Այդ եղանակները իրենց բնույթով նման էին երգարանի մեջ զետեղվածներից մի քանիսին։ Այդպիսիներից կարելի է համարել «Արաքսի արտասուք» երգի եղանակը, որն, ինչպես իրավացիորեն նկատում է երաժշտագետ Մաթևոս Մուրադյանն իր «Հայկական երաժշտական մշակույթի պատմություն» աշխատության մեջ, իր վալսանման ռիթմով, թեթև ինտոնացիաներով և ընդհանուր բնույթով ամենևին չի կապվում երգի բովանդակությանը և, ընդհակառակը, հակասության մեջ է նրա հետ՝ տալով «խոսքի և երաժշտության աններդաշնակության մի օրինակ»[4]։

Հայկական մեղեդիների հետ ոչ մի ընդհանրություն չուներ նաև «Թիֆլիսի քեֆ»-ի եղանակն իր եվրոպական երանգներով։ Ակնհայտ է, որ Պատկանյանը միայն սիրող էր երաժշտության ասպարեզում, և ինքնուրույն երաժշտական գործերը նրան առանձնապես հաջողությամբ չէր

[4] Մ. Մուրադյան, Հայ երաժշտությունը 19-րդ դարում, Երևան, 1970, էջ 34։

տրվում, ինչպես նաև երկար տարիներ կտրված լինելով հայկական միջավայրից, նա ինչ-որ չափով խորթացել էր մայրենի մեղեդիներից։ Հավանորեն այս եվրոպական մեղեդիների առկայությունը և Պատկանյանի դեռևս աշակերտական նստարանից կատարած աշխատանքին անտեղյակ լինելը Մատթևոս Մուրադյանին ստիպել է մտածել, որ երգերի եղանակները լիովին պատկանում են «ռուս երաժիշտ» Նիկոլայ Տրիֆանովին։

Չնայած այս հանգամանքին, նա չափազանց բարձր է գնահատում Պատկանյանի կատարած աշխատանքը, որը չլինելով երաժիշտ, առաջինը սկիզբ դրեց մեր իրականության մեջ ձայնանիշերով երգարանների հրատարակությանը և ազգային-հայրենասիրական երգերի ստեղծմանն ու տարածմանը։

* * *

1855 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին տիկին Աստաֆիևայի տանը ավարտին էր մոտենում նաև Գամառ-Քաթիպա «Ուխտ»-ի, այսինքն Ռափայել Պատկայանի մյուս աշխատությունը՝ հայկական դպրոցների համար գրվող «Այբբենարանը»։ Տարօրինակ է այն իրողությունը, որ հայ գրական լեզվի ջատագով Ռափայել Պատկանյանը իր հայկական դպրոցների համար նախատեսած առաջին դասագիրքը շարադրում էր գրաբար։ Արդյո՞ք սովորույթի ուժը դարձյալ հաղթող էր հանդիսացել, թե՞ դասագրքի աշխատանքները սկսվել էին վաղուց, տակավին Լազարյան ճեմարանում և Թիֆլիսում եղած ժամանակ (ի դեպ, այս վարկածի օգտին է խոսում այն փաստը, որ բանաստեղծությունների բաժնում բերված են «Բազմավեպի» 1843—46 թթ. համարներում լույս ընծայված ոտանավորներն ու առակները, իսկ իր չափածո գործերից տրված է միայն «Թռչնակ»-ի թարգմանությունը)։ Բացի նրանից, որ «Այբբենարան»-ի աշխատանքները սկսվել էին վաղուց, Պատկանյանը պարզապես անհնարին էր համարում դպրոցներում ուսուցումը սկսել աշխարհաբարով, քանի որ ուսանելու կանոնները դեռևս մշակված չէին։ «Արդարև կմեղանչեիմք, եթե քարոզէիմք այժմ իսկ ուսումնարանաց մեջը աշխարհիկ լեզուն ուսուցանել,— գրում է նա 1857 թ. Գամառ-Քաթիպայի տետրակների 4 (5) համարում Մսեր Մսերյանի դեմ ուղղված «Աշխարհաբար լեզու» հոդվածում,— որովհետև այդ լեզուն չունի դեռևս ուսանելու կանոններ, և ի մանկութենե գրոց լեզուն ուսանելով, մեք հասնում էմք այն նպատակին, որ ռամկի հետ խոսելու ժամանակը, թեև հատկապես նորանից լավ եմք խոսում, նա կարողանում է յուր խոսակցությունը մեզ հետ շարունակել և ցանկանում է ինքն ևս լավ խոսել...

Եթե կհավատա հարգելի հեղինակը, թե մեք անհաշտ թշնամի չեմք գրոց լեզվին, կարեմք ասել, թե այժմյան ժամանակի համար նա պիտի լինի իբրև հանք, որո միջից պետք է դուրս բերեմք ոսկի և արծաթ, որոց կարոտությունը զգում է մեր աշխարհիկ լեզուն» (V, 193)։

Ուրեմն կարամզինյան «գրե այնպես, ինչպես խոսում են և խոսե այնպես, ինչպես որ գրում են» բանաձևը Պատկանյանի կողմից չէր ընդունվում բառացիորեն։ Դեռևս Դորպատում, ապա Մոսկվայում նա Աշուղ Կարապետ ստորագրությամբ ստեղծած ժողովրդական լեզվով բանաստեղծություններում զգաց, թե ինչպես լեզուն պարզունակություն ստեղծեց նաև բանաստեղծության բովանդակության մեջ և սկսեց տանջալից պրպտումներ ճիշտ ճանապարհ գտնելու ուղղությամբ։ Աստիճանաբար հրաժարվելով բանաստեղծական գործերի մեջ ժողովրդական խառնակ լեզվի օգտագործումից, նա կարծես կրկին կարողացավ իր պոետական խոսքին հաղորդել այն հմայքը, որ առկա էին նրա 1851 թ. ստեղծած սկզբնական գործերում։

Հենց իր իսկ բանաստեղծական արտադրանքի վրա զգալով նատուրալիստական ընդօրինակված ժողովրդական խոսակցական լեզվի ոչ բարերար ազդեցությունը, Պատկանյանը ճգնում էր միջոցներ փնտրել լեզվի զարգացման նոր ուղիներ ստեղծելու ասպարեզում, անգամ դիմելով գրաբարի նախնական պարտադիր ուսուցմանը, հետագայում նրա ատաղձի վրա ժողովրդական կենդանի բարբառներով հարստացած աշխարհիկ լեզու ստեղծելու համար։

Չի կարելի պնդել, որ Պատկանյանը իրավացի էր իր այս համոզման մեջ, սակայն լեզվի կազմավորման մի շրջան էր այդ, երբ տարբեր միջոցներ ու առաջարկներ պիտի ժամանակի ընթացքում հանգեցնեին ճիշտ ուղու ընտրությանը, ճանապարհ հարթելով աշխարհաբարի հաղթական երթին։ «Այբբենարան»-ը բաղկացած էր հայկական այբուբենից, որտեղ տառերի տակ ռուսերեն և լատիներեն տառերով տրված էր նրանց հնչյունն ու տառերի անվանումը։ Ապա բերված են գրերի մի քանի տեսակներ։ Այնուհետև աշակերտներին պատկերացում էր տրվում բաղաձայն, ձայնավոր և կրկնաձայն տառերի մասին։

Գրքի երկրորդ բաժինը սովորեցնում էր հեգումը և հասկացություններ տալիս վանկերի մասին։ Բերված էին միավանկ բառից մինչև հնգավանկ բառերը և նրանց հեգման եղանակը, տրված էին բացատրություններ կրճատումների և կետադրական նշանների վերաբերյալ։

Երրորդ բաժնում բերված էին աղոթքների նմուշներ և տասը պատգամները, ավետարանից քաղված 3 առակներ (սերմնահանի, անառակ որդու և անդամալուծի)։

«Այբբենարան»-ին որպես հավելված կցված է հայ-ռուսերեն բառարան, որը կազմված է ոչ թե այբուբենի կարգով, այլ իմաստի։ Բառերը խմբակցելով ըստ նրանց նշանակության, Պատկանյանը կազմել է 21 իմաստային խումբ. (1. Կրոն, 2. Աշխարհ, 3. Հրահալելիք, 4. Ժամանակ, 5. Մարդ, 6. Ազգականություն, 7. Գիտություն և ուսումն, 8. Տուն, 9. Կահ-կարասիք, 10. Ուտելիք և ըմպելիք, 11. Համեմունք և բանջարեղեն, 12. Պտուղք, 13. Ծառք և ծաղիկք, 14. Եկեղեցական և աշխարհական աստիճանք, 15. Արվեստք, 16. Սպասավորք, 17. Ախտք և պակասություն մարմնո, 18. Զգեստ, 19. Զենք և գործիք, 20. Հավք և թռչունք, 21. Կաթնասուն անասուններ)։

«Այբբենարան»-ի ամենահետաքրքրական մասը, անկասկած, հենց այս բառարանի առկայությունն էր, քանի որ ինքը այբբենարանը ոչինչ չէր ավելացնում մինչ այդ գոյություն ունեցածների վրա և դեռ մի աստիճան ետ էր Ստեփանոս Նազարյանի «Առաջին հոգեղեն կերակուրից» թե լեզվով, թե ընթերցանության նյութով։

Ինչպես պատմում են, Պատկանյանը բառարանի վրա սկսել է աշխատել դեռևս ճեմարանում ուսանելու տարիներին[5] և ապա աստիճանաբար լրացնելով կազմել է հիշյալ 21 իմաստային խմբերը, լեզվի մեջ նորամուտ բառերը նշանակելով աստղանշանով։

«Այբբենարան»-ի առաջաբանում խոսելով իր նպատակների մասին, Պատկանյանը անդրադառնում է Ալեքսանդր Խուդաբաշյանի և Ստեփանոս Նազարյանի կազմած դասագրքերին, նշում այն մեծ օգուտը, որ իրենց հետ բերեցին այդ գրքերը, մասնավորապես Նազարյանի աշխարհաբար «Առաջին հոգեղեն կերակուրը»։

Հետագայում նույնպես իր հրատարակությունների հիմնական նպատակը նա տեսնում էր ժողովրդի բոլոր խավերին մատչելի, էժանագին ձեռնարկներ ու գրքեր տարածելու մեջ, որոնք պիտի աստիճանաբար նախապատրաստեին հայերին ավելի բարձր ու վեհ գաղափարներ ընկալելուն։ Նա պահանջում էր հայկական դպրոցների չունևոր խավերի երեխաներին իրենց հրատարակությունները տալ միանգամայն անվճար,

---

[5] «Բառացանկը» սկսած է եղել դեռևս Լազարյան ճեմարանում,— գրում է Շահազիզը. իր անտիպ հիշողություններում,— բառերը նա գրել է փոքրիկ թերթիկների վրա և խառնի խուռն ձգել է իր բնակարանի անկյունը և առանց ուշադրության թողել։ Մի օր էլ նկատել է, որ թերթիկների թիվն այնքան բազմացել է, որ այլևս չի կարելի առանց կարգի բերելու թողնել, անկյունը արդեն լցված է եղել և տեղ էլ չի եղել փոքր սենյակում, նա նստել, հավաքել, դասավորել է մի տետրի մեջ։

ԳԱԹ, Ե. Շահազիզի ֆ., № 27, Ռ. Պատկանյանի կենսագրությունը էական գծերով, էջ 125։

չնայած տպագրական ծախսերը հոգալու անհուն դժվարություններին։ «...Կարծեմ, որ պր. Գրիգորը քեզ միջոց գտնի ուղարկելու 150 հատ կապուտից, այսինքն՝ 40 կոպեկանոցից, իսկ մյուս 30 կոպեկանոցից առանձին կկապես և կգրես վրան՝ աղքատաց ձրի ընծայելի, որ այնտեղ իմանան, ո՞րը պետք է ծախել և ո՞րը ընծայել» (VI, 141)։

Ավարտելով «Այբբենարան»-ի վրա տարվող աշխատանքները, Պատկանյանը 1855 թ. հոկտեմբերի 5-ին այն ներկայացնում է գրաքննչական ատյանին, որտեղից դասագիրքը ուղարկվում է ժողովրդական լուսավորության մինիստրություն և նոյեմբերի 17-ին թույլտվություն է ստացվում տպագրության վերաբերյալ[6]։

Ձգտելով հայկական գաղթօջախների դպրոցներին մատչելի դասագրքերով ապահովելու խնդրին բավարարություն տալուն, Պատկանյանը ինքը ևս զգալով իր «Այբբենարան»-ի անկատարությունը, շտապում էր այն հանձնել տպագրության, առաջիկայում նպատակ ունենալով նոր, վերամշակված հրատարակությամբ ուղղել ներկա դասագրքի անհարթությունները։

«...Հայոց «Այբբենարան»... ես ավելի գեղեցիկ և լիակատար տպելու եմ մեր սեփական տպարանումը,— գրում է նա երկու տարի անց Քանանյանին։—...Զորօրինակ, Այբբենարանի առաջի երեսումը փոխանակ սովորական ա, բ, գ և այլն, ես կդնեմ պատկեր՝ Աղավնի, կամ Այծ և տակը կգրեմ Ա, ա, բանալի, բաժակ կամ բազե և դոցա տակն էլ կգրեմ Բ, բ, և այլն ըստ կարգին. այս ձևը մեր մեջ չէ եղել, այսինքն, մեր երեխայոց հետ երբեք չեն վարվել ինչպես երեխայոց հետ, այլ միշտ խիստ և ծանր, որ է եղել պատճառը նոցա խելքի ուշ փթթելուն կամ միանգամայն փակ լինելուն։ Իհարկե, որ Գամառ-Քաթիպան չի կարող ազգի համար ամեն ինչ լինել՝ և՛ հեղինակներ, և՛ դպրոցներ, և՛ քարոզիչներ, և՛ բարերարներ, բայց յուր զորությունը հասածի չափ պիտի օգնե նորա ցավին...» (VI, 172, 173)։

Սակայն ամենակարևոր գործը, որին նա տրվում էր իր ամբողջ էությամբ Աստաֆիևայի տանը ապրելու ամիսներին, դա «Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը» պոեմն էր։ Ինչպես տարիներ առաջ Թիֆլիսում, այնպես էլ հիմա նրան զբաղեցնում էր ազգային կյանքից պոեմ գրելու միտքը, սակայն այժմ հստակվել էին գաղափարները, հսկայական թռիչք էր կատարել բանաստեղծական երևակայությունն ու միտքը։ Անցյալի հերոսական կերպարներն այժմ բանաստեղծին անհրաժեշտ էին ներկա ժամանակաշրջանի հայությանը դաստիարակելու համար և ոչ թե լոկ որ-

[6] Տե՛ս ЦГИАЛ, ֆ. 777, ց. 2, 1854, գ. 111, 14 և 20։

պես անցյալի փառաբանում։ Հայրենիքի և ազգի համար մարտիրոսացող Ավարայրի հերոսը հենց այն կերպարն էր, որ պիտի իր մեջ մարմնավորեր հայրենիքի ազատության իր կյանքը զոհելու փիլիսոփայությունը։ Վարդանի կերպարը դեռևս մանկուց մարմնավորել էր Ռափայելի համար ամեն վեհ զգացմունք, եղել հիացումի առարկա։ Պերճախոս հոր պատմությունները, ավելի ուշ Վարդանի ու Վարդանանց սխրանքը փառաբանող նրա չափածո տողերը, իսկ ճեմարանական տարիներին բոլորի մտքերի ու երևակայության տիրակալ Նահապետի երգերի ու մասնավորապես նրա «Պլպուլն Ավարայրի» պոեմի ռոմանտիկական հայրենապաշտությունը, որը և արբեցնում էր հայրենիքի սիրով և սխրագործություններ ու մաքառումի մղում նրան, այժմ դարձավ նրա ռոմանտիկական երազի, նրա ողջ գաղափարայնության մարմնավորողը «այդ իմ հոգու խորհրդի հոսումն է», գրել է Պատկանյանը Քանանյանին։ Անմիջապես «Արաքսի արտասուքը» բանաստեղծությունից հետո, 1855 թ. ամռանը, նա սկսեց մտածել պոեմի կառուցվածքի մասին, պատմելով իր մտահղացումները Անանիա Սուլթան-Շահին, եղբորը, Քնրովբեին և իր նոր ռուս բարեկամին՝ Նիկոլայ Տրիֆանովին։

Ավիշանի պոեմի հմայքն այնքան մեծ էր Պատկանյանի համար, որ նա իր պոեմը ևս որոշեց սահմանափակել միայն Ավարայրի ճակատամարտի և հերոսի մահվան տեսարանով։ Որոշիչ եղավ նրա համար նաև «Պլպուլն Ավարայրի»-ի նախերգի մեջ լուսնի հետ ունեցած բանաստեղծի մենախոսությունը։ Այս անգամ իր համար զրուցակից ընտրելով Նահապետի նման, արյունոտ դեպքերի, անձնազոհության, հայրենասիրության, սխրանքի հավերժական վկային՝ թախծոտ լուսնին, Պատկանյանը ռոմանտիկ բանաստեղծների նախասիրած ինքնազեղման, ինքնաարտահայտման միջոցով ձգտում էր լուսնի բերնով պատմել իր հոգում պաշտած մտորումներն ու խոհերը, հիացումն ու վրդովմունքը, հուսահատությունն ու սպասումները։

Առաջին հիշատակումներ «Վարդանի մահը» պոեմի մասին պահպանվել են հոկտեմբերի 30-ի նամակում, որտեղ, սակայն նա իր այս նոր գործի վերաբերյալ խոսում է որպես վաղուց հայտնի մի իրողության մասին, ուրեմն, պետք է ենթադրել, որ աշխատանքները սկսված էին ավելի վաղ, թերևս օգոստոս-սեպտեմբեր ամիսների ընթացքում։ «Նամակս արդեն կնքել էի և մտադիր էի ճամփա դնել, թուղթերս խառնելով հանկարծ ձեռս ընկան այս տողերը, որ ես կորած էի կարծում, «Վարդանի մահի» մի կտորն է» (VI, 67),—և ապա բերում է պոեմի 5-րդ հատվածը՝ 116-րդ տողից մինչև 140-րդ տողը։ Հավանորեն, ինչպես ձե-

ռագիր տաղարանի մեջ ավելացրած «Արաքսի արտասուքը» բանաստեղծությունը, այնպես էլ պոեմի բովանդակությունը, նախերգանքն ու առաջին հատվածները Մոսկվա էր բերել իր հետ Անանիա Սուլթան Շահը, և այդ իսկ պատճառով նամակների մեջ ավելի վաղ հիշատակություններ պոեմի մասին չկան, թեև վերը բերած տողերից ակնհայտ է, որ ընկերները քաջատեղյակ են տարվող աշխատանքների մասին։ Անանիան, ինչպես հայտնի է, Մոսկվա է վերադարձել օգոստոսի վերջերին, ուրեմն աշխատանքներն էլ սկսվել են հենց այդ ամսի սկզբներին, կամ, թերևս, միքիչ էլ ավելի վաղ։

Սեպտեմբերի 7-ին գրած նրա հանրահայտ նամակում, որտեղ արտահայտված է Գամառ-Քաթիպա ընկերության գաղափարական ծրագիրը, կարելի է նշմարել պոեմում արծարծվող մտքեր ներկա ժամանակաշրջանի «ատելի հայերի» մասին, որոնց անհրաժեշտ է կրթել, նախապատրաստել ազգի ազատագրության համար զոհվելու փիլիսոփայությունն իր անձնական օրինակով, իր կերպարով իմաստավորողի՝ Վարդան Մամիկոնյանի կերպարով։ Նրա մասին պոեմ գրելու գաղափարը գրավել էր բանաստեղծի երևակայությունը, և դրա ազդեցությամբ էլ շարադրել էր իր բոցաշունչ նամակը իրենց ծրագրերի ու հետագա գործունեության վերաբերյալ։ «Անանիան ինձ գրել էր, որ «Վարդանի թաղումը» կորցրել եք,— գրում է նա Քանանյանին և Թիմուրյանին նոյեմբերի 14-ին,— ահա՛ ուղարկում եմ ձեզ՝ փոքր-ինչ նոր ավելացրած վրան. չեմ ուզում շուտով ավարտ տալ, ինչու որ ամեն օր նոր-նոր մտքեր են գալիս ավել ընտիր, ավել գեղեցիկ. թեև ամբողջը պատրաստ է երևակայությունումս, բայց հայտնելու կերպը, պատկերները րոպեից րոպե փոփոխվում են։ Աստված տա, որ մի սիրուն պոեմա դուրս գա դորանից» (VI, 70)։

Հոկտեմբերի 23-ին Գևորգ Քանանյանին գրած իր նամակում Քերովբե Պատկանյանը նույնպես հայտնում է Ռափայելի նոր աշխատության մասին.— «Նա սկսել է մի ահագին պոեմա հայոց կյանքից գրելու, որ Գոգոլի «Մեռյալ հոգիներից» պետք է բարձր դասվի, թե որ ավարտվի»[7]։

Ինչպես տեսանք, երիտասարդ Պատկանյանին ևս առաջին հերթին զբաղեցնում էր ազգի հոգեբանության վերհանման հարցը «...Տեղը մնա ազգի պատմություն խորին իմանալը, ազգի հոգեբանությունը, նորա կեցած տեղի աշխարհագրությունը, նորա ամեն պակասությունները, վեր-

[7] ԴԱԹ, Քանանյանի ֆ., № 8։

չինի պատճառները. ի՞նչ եմ ասում, դեռ շատ բաներ պիտի իմանա, որ ավի բանաստեղծ» (VI, 73),— գրում է նա պոեմի վրա աշխատելու ամենաեռուն պահերին, 1855 թ. նոյեմբերի 24-ին։ Անհանգստացրել է բանաստեղծին նաև իր ժամանակակից հայերի կյանքին, սովորություններին անտեղյակ լինելը. ամբողջ կյանքում գաղթօջախներում և ռուսական քաղաքներում ապրած լինելով նա իրեն միանգամայն անպատրաստ էր զգում նման մեծ ու պատասխանատու խնդիր կատարելու համար. «Հեռու Հայաստանից, հեռու ամեն հայերից, անծանոթ նոցա ատրնին կեցությանը, սովորություններուն, նոցա վարուց և բարուց։ Մի՞թե հանդգնություւմ՝ չէ իմ կողմանե նորա վերա մի տող բան գրել. բանաստեղծության արտաքին թաղանթը մտացածին կարող է լինել. վա՜յ նորա, որ նորա միջի թաքուն և խորին իմաստը մաքուր, ճշգրիտ և արդար չիպահպանե... Ահա ինչ կրակով էրվում եմ ամեն օր...» (VI, 74),—գրում է նա նույն նամակում, խնդրելով ընկերներին կարծիքներ ու բարի խրատներ ուղարկել իրեն ավարտված հատվածների վերաբերյալ, «թեթևացնել իր բեռը»։

Աշխատանքները պոեմի վրա սկսելով 1855 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին, շարունակվում են մինչև 1856 թ. մարտի վերջը, և այդ 8 ամսվա ընթացքում պոեմը լրիվ պատրաստ է լինում տպագրության[8]։ Այդ ընթացքում Պատկանյանը մի քանի անգամ փոփոխությունների է ենթարկում պոեմի կառուցվածքը, աշխատում ամեն մի բառի, պատկերի վրա։ Նոյեմբերի 24-ին ստեղծում է պոեմի 8-րդ հատվածը և ընդհուպ մոտենում Վարդանի մարտաշունչ երգի ու Ավարայրի ճակատամարտի նկարագրությանը։ «Խնդրեմ մի՛ մեղադրիլ ինձ, որ ես այդպես դանդաղ եմ առաջ գնում,— գրում է նա Քանանյանին,— պետք է իմանաս, որ շատ արգելք ունիմ հորինելու ժամանակ, միանգամայն ազատ չեմ բանաստեղծի իրավամբ, հայոց պատմություն չիմանալս խիստ կաշկանդում է ձեռերս, ավել դառնը այն է, որ երկիցս անգամ չունիմ, որ այն ցամաք պատմությունից կարողանայի ժամանակ առ <ժամանակ> հյութ քամելու. մնացածներու համար ավելորդ է և ասիլը» (VI, 72)։ Առանձնապես բանաստեղծի միտքը զբաղեցնում է Վարդանի թաղման տեսարանը, արդյո՞ք թաղել էին նրան մարտի դաշտում, թե՞ տարել կալվածքը, ինչպիսի՞ն է եղել թաղման ծեսը, մասնակցե՞լ են կանայք, հարազատներ, թե՞ նրա սրբազան մասունքները հողին են հանձնել զորավարին վայել խստությամբ։

---

[8] 1856 թ. մարտի 26—29-ի նամակում նա գրում է. «Խնդրեմ Վարդանի սկիզբը ճարես և շուտով ուղարկես, որ դատաքննելու տամ» (VI, 106)։

Վարդանի հուզարկավորության սկզբնական տարբերակը բանաստեղծի երևակայության մեջ գծագրվում է մեծ ճոխությամբ, նա Ավարայրի դաշտն է բերում զորավարի կնոջն ու աղջկան, սուգ անել տալիս նրա դիակի վրա և չնայած առաջին ոգևորության, ինչ-որ մի բան չի բավարարում նրան այս թատերական իրավիճակի մեջ, և նա արտագրելով այս հատվածը առաքում է Մոսկվա՝ ընկերների կարծիքը իմանալու։ «Այս ոտանավորը, որ քեզ կտա Անանիան, «Վարդանի թաղումը», ես վաղուց հորինել էի երևակայությունումս, միայն թե հարմար ժամանակ չէի գտնում թղթի ավանդելու, որ վերջապես կատարեցի, թեև այն չհայտնեցի, ինչ որ ուզում էի, գեթ ոչ այն աստիճան ազդու։ Նյութը միանգամայն շինովի է. ոչ մի պատմաբան, նաև Եղիշեն, չի գրել նորա (Վարդանի) հուղարկավորությունը, մեզ հայտնի չէ այն ժամանակվա ծեսը, ևս առավել՝ անկելոցն ի պատերազմի. պետք էր ստեղծել։ Դարձյալ չգիտեմ, թաղման ժամանակ կայի՞ն արդյոք կնանիք, արդյոք Ավարայրո՞ւմը թաղեցին նորա, թե տարին նորա կալվածք, կամ մի որոշ տեղ. ես թաղում եմ նորա Ավարայրի դաշտումը, վերան սուգ անել եմ տալի նորա կնկան և աղջկան և զինվորներին, որ ամենը միասին առած լավ պատկեր է, բայց այժմ այսքանով բավականացիր» (VI, 78)։ Երկար խորհելով այս պատկերի վրա, բանաստեղծը որոշում է լիովին փոփոխության ենթարկել այն, թաղմանը հաղորդելով ասկետական միխստություն, որտեղ ոչ միայն չկային լալկան կանայք ու հարազատներ, այլ նույնիսկ քահանաներ, որ սուրբ աղոթքով հողին հանձնեին հերոսի դին։ Չէին լսվում լացի ու ողբի ձայներ, միայն հերոսի մարմինը շրջապատած մռայլ զինվորները անձայն շարժում են իրենց շրթունքները, հայտնի չէ աղոթքի՞, թե վրեժի խոսքեր շշնջալու համար։

Ցավոք չի պահպանվել պոեմի ոչ մի տարբերակ, բացի նամակի մեջ հիշատակված թաղման հատվածի շարադրանքից։ Միակ ձեռագիր արտագրությունը կատարված է 1862 թ., այսինքն առաջին տպագրությունից հետո, այդ պատճառով դժվար է ասել, թե ինչ աշխատանքներ, ինչպիսի փոփոխություններ, լրացումներ ու կրճատումներ են արված եղել հեղինակի կողմից։ Որ Պատկանյանը այն ենթարկել է մանրակրկիտ մշակման ոչ մի կասկած չի հարուցում։ Ինչպես վերը բերված թաղման տեսարանի լրիվ փոփոխումը, այնպես էլ նամակների մեջ պահպանված խոստովանությունները ստեղծագործական տվայտանքների մասին, իրավունք են տալիս մեզ հաստատապես պնդելու կատարված մանրակրկիտ աշխատանքի մասին։

Պոեմի ստեղծման ընթացքում Պատկանյանը կրկին ու կրկին վերըն-

թերցում է ռուս և եվրոպական գրականության ստեղծագործությունները, Նեկրասովի բանաստեղծությունները, Լերմոնտովի պոեմները, աչքի անցկացնում նոր՝ Գաբրիել Պատկանյանի Վարդան Մամիկոնյանին նվիրած գործերը, Ալիշանի բանաստեղծություններն ու «Պլպուլն Ավարայրի» պոեմը։ Այդ են վկայում պոեմի նախերգանքի 3 և 6 հատվածներից առաջ դրված բնաբանները, առաջինը՝ Նեկրասովի բանաստեղծությունից, երկրորդը՝ Նահապետի «Հայոց աշխարհիկ»-ից և երրորդը՝ Գաբրիել Պատկանյանի «Քաջն Վարդան Մամիկոնյան» պոեմից։

Երկխոսությունը բանաստեղծի և որևէ մեկի միջև հարմար ձև էր ինքնազեղման համար, սակայն այս անգամ լիրո-էպիկական այս պոեմը նախորդների համեմատությամբ իր մեջ ընդգրկում էր ավելի շատ գործող անձինք (բանաստեղծը, լուսինը, ոգիները, Վարդանը) և գործողությունների ընթացք, ուներ նախերգանք և վերջաբան։ Այն սկսվում էր վշտոտ բանաստեղծի և տրտում լուսնի մենախոսությամբ, դիմելով իր նման վշտոտ ու դալուկ լուսնին և խնդրելով իր առջև բացելու իրեն կրծող վիշտը, բանաստեղծը լուսնից պատգամ է ստանում պատմելու բոլորին իր մեծ ցավը, որ նա երկար ու ձիգ դարեր կրել է իր հոգում, չգտնելով ոչ մի կարեկից հոգի, ոչ մի սփոփարար ձեռք։ Այժմ ամեն մի տառապյալի կարեկից բանաստեղծի մեջ գտնելով իրեն հոգեհարազատ ոգի, նա պիտի բացի նրա առջև իր մորմոքած սիրտը և խնդրի պատմելու բոլորին այդ մասին. բանաստեղծի այդ սխրանքը, հավատացնում է լուսինը, կգնահատվի հետնորդների կողմից, ներկա սերնդից պետք չէ սպասել ոչ մի խրախուսանք, ոչ մի երախտագիտություն։ Եվ չնայած դրան՝ պետք է գործել, պետք է «բանիվ ներդաշնակ» պատմել բոլորին այն, ինչ պատրաստակամ զեղել է լուսինը իր հոգու գաղտնարանից։

«Արաքսի արտասուքը» բանաստեղծության մեջ վշտոտ գետը ցասումով ու դառնությամբ պատասխանելով իր նիրհը վրդովող պատանու հարցումներին, առանց նրան որևէ հանձնարարություն տալու, մոլեգնած օձի պես սողում է, անցնում։ Այստեղ արդեն ոչ թե հայոց գետը այլ համայն մարդկությանը պատկանող լուսինն է պատրաստվում խոսելու երկրում կատարվող անարդարությունների մասին և խնդրում բանաստեղծին պատմելու բոլորին՝ Թուլլի նկատմամբ ուժեղի գործադրած բռնության մասին։ Այս անգամ լուսնին ընտրելով իրեն զրուցակից և լուսնի բերանով պատմելով երկրում կատարվող նախճիրների մասին, Պատկանյանը ուզում է շեշտել, որ ամեն ազգ իրավունք ունի լուսնի տակ ապրելու, որ այդ մենաշնորհը միայն հզորներինը «չէ սեփական», որ ինքը՝ լուսինը երկրի այդ անարդար օրենքից սգավոր, դարեր շարու-

նակ դեգերել է երկնակամարում «գլխին վայ տալով»։ Ապա սկսվում է լուսնի պատմությունը, որ բանաստեղծը նրան պատմել է տալիս, երկնակամարում կատարած իր դեգերումների ժամանակ տեսած գեղեցիկ Հայաստան աշխարհի մասին, մի երկու վրձնահարվածներով պատկերում սքանչելի բնությունն ու ժողովրդի խաղաղ, ստեղծագործ կյանքը, հայ ճարտարագործ ձեռքով կանգնեցրած քաղաքներն ու վանքերը։ Նկարագրում է նույն այդ վայրերին դարձյալ կարոտով ու խանդաղատանքով այցի եկած ու դրանց փոխարեն ավերակներ, հրդեհ, նախճիր գտած լուսնի վրդովմունքը։ Այնուհետև պատկերելով առավոտը Ավարայրի դաշտում, նա բնության գեղեցիկ խաղաղ տեսարանները հակադրելով «բնության զարդ» մարդու հակաբնական արարքներին, որը հավաքած «սանձակոծ ձիանք, անճոռնի փղեր» մտածում է ստրկացնել իր նմանին, արյամբ հագեցնել իր անկուշտ նիզակի ծայրը, դարձյալ նշավակում է պատերազմը, հզորի տիրապետելու անհագ, անկուշտ մոլուցքը։

Մինչև Ավարայրի ճակատամարտը նկարագրելը բանաստեղծը ներկայացնում է հայ ժողովրդի «ընտրյալ զորավարին»՝ Վարդան Մամիկոնյանին, որը գերադասելով մահը ստրկական կյանքից, իր ժողովրդին դուրս բերեց օրհասական պատերազմի։ Պատկանյանի Վարդանը ոչ միայն խրոխտ մարտիկ էր, մոլագար մի զորական, այլ նաև «ծնող բազմագութ», կյանքով ու վայելքով ուրախացող մի մարդ, որ ձգտում էր ապրել, ըմբոշխնել աստծու պարգևած երջանկությունն իր բոլոր դրսևորումներով, տեսնել մերձավորի բախտը։ Նրա Վարդանը և՛ լալիս է, հիշելով տանը անպաշտպան թողած ընտանիքը, որոնք գուցե շուտով պիտի գլխահակ քայլեն գերության ճանապարհներով, և՛ տրտմում նրանց կարոտից։ Այս հանգամանքը Վարդանի կերպարը դարձնում է ավելի պայծառ, ավելի մարդկային և միևնույն ժամանակ ավելի հերոսական, որ հրաժարվելով իր համար թանկ մարդկային զգացմունքներից, առանց վարանելու ընտրում է մահը՝ հանուն հայրենիքի ազատության և ոտնակոխ եղած մարդկային արժանապատվության։

Ավարայրի ճակատամարտը պոեմում համարյա չի նկարագրված, բանաստեղծը խուսափել է պատերազմի նկարագրությունից և մի երկու նախադասությամբ ստեղծել անհավասար մարտից հետո պարսկական ահեղ բանակի առջև կանգնած մի բուռ քաջերի պատկերով տեղի ունեցած մարտը։ Զարմանալի ուժով ու ներքին անդիմադրելի պաթոսով է կերտված Վարդանի ռազմակոչը, որը հաջորդում է նահատակվելու և այդպիսով իրենց հետնորդների ապրելու իրավունքը նվաճել ցանկացող զինվորների մելամաղձոտ, քնարային հնչյուններով հագեցված երգին։

Այդ ռազմերգը պոեմի ամբողջ իմաստի խտացումն է, որը կառուցված է բացառիկ վարպետությամբ։ Այստեղ դարձյալ, ինչպես «Թե իմ ալևոր հերքս սևնային» և «Արաքսի արտասուքը» բանաստեղծությունների մեջ առկա է ներքին ուժեղ դինամիկան, որ վերջանում է տրամաբանական զորեղ մի եռահնչյունով։ Բանաստեղծության ամեն քայլ հետզհետե թափ առնելով կարողանում է ներկայացնել հայ ժողովրդի պատմական դժնդի բախտը, բազմաթիվ դարերի ընթացքում նրա կրած տառապանքներն ու նվաստացումները և այսպիսով արդարացնում ընդվզման ու կործանիչ հողմի պես թշնամուն բնաջինջ անելու փիլիսոփայությունը։

«Վարդանի երգը» ինչքան օրգանապես կապված էր նկարագրված պատմական ժամանակաշրջանին, այնքան էլ առնչվում էր բանաստեղծի ապրած օրերի, նրա փայփայած երազանքների ու գործունեության ծրագրի հետ։ Այդ մի բողոք էր ոչ միայն ուղղված հեռավոր անցյալում կատարված ոճիրների, այլ առաջին հերթին ցարական Ռուսաստանի ու Թուրքական վայրագ տիրապետության դեմ։ Անկասկած, եկեղեցուն ձեռնամերձ լինելու ակնարկը նույնպես վերաբերում էր ցարական «Պոլոժենիե»-ին, իսկ ազգի գլխին կանգնած «գառնազգեստ գայլը» ոչ այլ ոք էր, քան ամենայն հայոց կաթողիկոս Ներսես Աշտարակեցին[9]։

[9] Ի դեպ, թե՛ Արսեն Տերտերյանը, թե՛ Աշոտ Հովհաննիսյանը «Գառնազգեստ գայլը» դիմառնությունը համարում էին Այվազովսկու դեմ ուղղված արտահայտություն, առանց խորամուխ լինելու պոեմի ստեղծման ժամանակաշրջանի մեջ։ «Նույն այս տարիներին՝ 1861—1862 թվականներին Այվազովսկու դեմ բորբոքված նյութեր ունեցավ նաև Ռ. Պատկանյանը,— գրում է Ա. Հովհաննիսյանը։ Սկզբնապես Պատկանյանը վատ չէր տրամադրված դեպի նորադարձ վարդապետը... Պատկանյան-հոր դեմ Այվազովսկու և յուրայինների հետագա խարդավանքները պետք է, որ իհարկե, սթափեցնեին Պատկանյան որդուն...։ 1861 թ. Գամառ-Քաթիպան գրեց «Հիմի էլ լռենք» նշանավոր երգը, որտեղ Այվազովսկուն էր վերաբերում, անշուշտ, «Գառնազգեստ գայլը» դիմառնությունը։ Նույն Այվազովսկին էր նաև 1862 թվականին «Դև Մրուս» ազգային ավանդությունը գրելու շարժառիթը» (Ա. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, հ. 1, Երևան, 1955, էջ 283)։ Ինչպես տեսանք վերը բերված փաստերից աշխատանքները պոեմի վրա սկսվել էին տակավին 1855 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին և ավարտվել 1856 թ. մարտին, երբ Այվազովսկին դեռևս մտադրություն չուներ Ռուսաստան տեղափոխվելու, կամ համենայն դեպս, այդ մտադրության մասին չգիտեր ոչ ոք։ Իհարկե, կարելի է ենթադրել, որ «Վարդանի երգը» Պատկանյանը ավելացրել է հետո, տպագրության հանձնելու ժամանակ և «Գառնազգեստ գայլը» ակնարկը իսկապես բնութագրում է Այվազովսկուն, սակայն նախ՝ «Վարդանի երգը» այնպես օրգանապես կապված է պոեմին և այնքան հարազատորեն է արտահայտում բանաստեղծի հենց 50-ական թվականների կեսերի մտքերն ու տրամադրությունները (տե՛ս, 1855 թ. սեպտեմբերի 7-ին գրած № 23, նրա ծրագրային նամակը) և երկրորդ՝ 1858 թ. հոկտեմբերի 29-ին Միքրոն Փառ-

«Վարդանի երգ»-ին մի առանձնակի հմայք է տալիս բանաստեղծության խանդավառ ոգին, մտքի ու զգացմունքի զուգակցությունը։ Մայրամուտից առաջ կենդանի մնացած մի բուռ հայ զորականները Վարդանի առաջնորդությամբ նետվեցին թշնամու ահեղ զորքի վրա, և ապշած մնացին պարսիկները, որովհետև փոքրաքանակ հայ զինվորները արին այն, ինչ չէր կարողանում անել պարսից բյուրավոր զորքը։

Անհավասար մարտում հերոսի մահով ընկնում է Վարդանը՝ պատգամ թողնելով միշտ դիմադիր լինել հայրենիքը նվաճողներին, միշտ ազատ մահը գերադասել ստրկական վիճակից։ Կանխազգալով, որ իրենից հետո հայերը կարող են համակերպվել անազատ կյանքին, Ավարայրի հերոսը անեծքի շանթեր է թափում բոլոր նրանց գլխին, ովքեր թուրն ու ասպարը մի կողմ գլորած, գլխահակ դերի կհանձնվեն թշնամուն։ Վարդանի մահից անմիջապես հետո զինվորներն արդեն կորցնում

յանին ուղղած նամակում, (№ 106) խոսելով «Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը» պոեմի մասին Պատկանյանը գրում է. «Բայց և դուք պիտի հոժարիք, որ «Քաջն Վարդանի» 16-րդ գլուխը շատ չեմ սիրում»։ 16-րդ գլխում խոսվում է ժամանակակից հայերի մասին, որոնք հաճախ զզվանքով վանում են իրենցից հայ անունը։ Այսօր նույնպես այս գլուխը համապատասխանում է 16-րդ համարակալմանը։ Եթե «Վարդանի երգը» ավելացված լիներ տպագրության տարում, 1861 թ., ապա գլուխների հաջորդականությունը խախտված կլիներ և 1858 թ. համարակալումը չէր համապատասխանի տպագրվածին։ Ուրեմն 1856 թ. ավարտված պոեմն ուներ նույն տեսքը ինչ 1861-ին տպագրվածը։ Այնուհետև, ամենայն հավանականությամբ, նույն այդ 1855 թ. ստեղծած «Դև Մրուս» պոեմում «Սուրբ Գրիգորիս» հուշակին հավասար համբավ ունեցող և «տաս տարի» հայ Եկեղեցու գլուխ հանդիսացող Վասակի, Մերուժանի, Հազկերտի ու Ջարմաղանի կերպարանքներով Հայաստան աշխարհը քանդող Դև Մրուսի կերպարը շատ ընդհանուր գծեր ուներ հայ եկեղեցու «գլխին դրված» «գառնազգեստ գայլի» հետ և, անկասկած, ուղղված էր հայ Եկեղեցու գլուխ, ամենայն հայոց կաթողիկոս Ներսես Աշտարակեցու դեմ։ Ինչպես տեսանք Պատկանյանի ընտանիքը, ինչպես նաև ինքը՝ Ռափայել Պատկանյանը բավականին ծանրակշիռ պատճառներ ուներ Ներսեսի գործունեությունը նման գիմառնություններով նշավակելու...։ Թե՛ «Վարդանի երգ»-ում, թե՛ «Դև Մրուս»-ում «գառնազգեստ գայլը» կանգնած է ամբողջ հայ եկեղեցու գլխին և ղեկավարում է այն, ինչպես ակնարկված է «Դև Մրուս»-ում տաս տարի շարունակ,

«Արդ՝ Մրուսը ինչ սրալի նա իր խոսքը կատարեց
Տարտարոսի երկյուղը տասր տարում փարատեց
Ուր որ դըրեց իր ոտքը՝ աղմուկ դարձուց ամեն տեղ
Հորն ու որդուն կըռվեցուց, ինքը մընաց միշտ անմեղ,
Անթիվ կասկածանք ցանեց նա միամիտ սըրտերում
Սեր ու հաշտության տեղը թողեց նախանձ, չարություն։

Ինչպես հայտնի է Ներսես Աշտարակեցին 1845 թ. ընտրված և ցարի կողմից հաստատված որպես Ամենայն Հայոց կաթողիկոս ուղևորվեց Էջմիածին՝ ճանապարհին սկսելով իր խարդավանքները մանուկ Պատկանյան եղբայրների և ապա նրանց հոր դեմ։

են իրենց մարտական ոգին և սկսում նմանվել հովիվը կորցրած որբ գառնուկների, որոնք այս ու այն կողմ վազելով սգում են իրենց հովվին ու մահ խնդրում երկնավորից։ Թաղման տեսարանում նույնպես զինվորները մոլորված են, նրանց դեղնած շրթունքները, պղտոր աչքերը, անշարժ դեմքերը մատնում են հոգեկան խռովքը, չկա վրեժի կոչող առկայծուն հայացք, չկա մեռնելու պատրաստ մռայլ, հաստատակամ դեմքը։ Անձայն շարժվող շրթունքներն անգամ, անհասկանալի է աղո՞թք են մրմնջում, թե՞ վրեժի երդում։ Պոեմն ավարտվում է վերջաբանով, որտեղ բանաստեղծը դիմելով լուսնին խնդրում է անընդհատ հայոց երկնակամարից հիշեցնել ներկա սերնդին մեռնելու և հայրենիքը ազատագրելու Վարդանի հերոսական պատգամը և դրանով կարծես ցրում պոեմի վերջին գլխի հուսահատական տրամադրությունը, ոգի ներշնչելով, որ դեռ կորած չէ ամեն ինչ, որ հնարավոր է ազգային ինքնագիտակցության սթափման հետ վերականգնել կորցրածը։ Պետք է միայն Վար-

---

Այնուհետև իր կաթողիկոսության հետագա 10 տարիների ընթացքում Ներսես Աշտարակեցին շատ քիչ բանով էր հիշեցնում ռուս-պարսկական պատերազմի օրերի եռանդուն ու անվեհեր գործչին, ավելին, ամեն լուսավոր առկայծումների դեմ նրա ծավալած հարձակումներն ու պայքարը ստիպել էին ժամանակի առաջավոր գործիչներից շատերին, որոնց թվում նաև Գաբրիել Պատկանյանին, բնութագրելու նրա գործունեությունը ամենավատթարագույն ածականներով։ Հետագայում գրի առած Ներսես Աշտարակեցու կենսագրությանը նվիրված իր «Ծաղկաքաղի» մեջ հայր Պատկանյանը նրան համարում է «ազգի իրավանց հիմը խախտող», «ազգավնաս», «դավաճան», «հայոց եկեղեցու հիմն դրդող», «հավատադրուժ», «մատնիչ հայրենյաց» որ համահնչյուն էր որդու ստեղծած Դև Մրուսի և հայ եկեղեցու գլուխ կանգնած «Դառնազգեստ գայլի» կերպարներին։

«Դև Մրուս»-ը գրվել է, ըստ վերը բերված ակնարկի, Ներսեսի կաթողիկոսության տասներորդ տարում, 1855 թվականի ընթացքում, «Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը» պոեմի հետ միաժամանակ, կամ անմիջապես հետո, իսկ տպագրության է ուղարկել «Հյուսիսափայլ»-ի խմբագրություն, նրա հրատարակման հենց առաջի ամիսներին, 1858 թ. ապրիլ-մայիսին։ Այդ է վկայում Միքայել Նալբանդյանին ուղղված 1858 թ. նոյեմբերին գրված Ռափայել Պատկանյանի նամակը, որտեղ 7—8 ամիս սպասելուց հուսահատված բանաստեղծը ետ է խնդրում խմբագրությունից իր «Դև Մրուս» պոեմը (տե՛ս, հ. VI, նամակ № 107)։ Ուրեմն ոչ «Վարդանի երգ»-ը ոչ էլ «Դև Մրուս»-ը չէին կարող ուղղված լինել դեռևս Փարիզի Հայկազյան վարժարանում գործող Այվազովսկու դեմ, այլ վերաբերում էին մի ավելի նշանավոր եկեղեցականի, Ամենայն Հայոց կաթողիկոս Ներսես Աշտարակեցուն և Ռափայել Պատկանյանը փաստորեն դեռևս «Հյուսիսափայլ»-ից առաջ, Ստեփանոս Նազարյանի արտահայտությամբ «առանց կաշառվելու մի անունի փայլատակությամբ եղիպտական դատաստան» էր բացել Ներսես Աշտարակեցու գործունեության դեմ իր նշանավոր «Երգ»-ով և «Դև Մրուս»-ով։

դանի նման սիրել մայրենի հողը, սեփական կյանքից, սեփական բարօրությունից ավելի։

Մինչ Պատկանյանը աշխատում էր պոեմի վրա, Աստաֆիևների տանը կազմակերպվող երեկոները նոր թափ ու բովանդակություն էին ստանում։ Հեռավոր ծովային ճանապարհորդությունից վերադարձել էր Նիկոլայ Տրիֆանովի քրոջ ամուսինը՝ հրետանային կապիտան Կոնստանտին Իվանովիչ Լոսևը։ Ինչպես վերը ասվեց, նա 1852 թ. հոկտեմբերին Կրոնշտադից ադմիրալ Պուտյատինի ղեկավարությամբ շուրջերկրյա նավարկության դուրս եկած «Պալլադա» ռազմանավի անձնակազմի անդամներից էր։ Այդ նավի վրա էր նաև Պուտյատինի անձնական քարտուղարի պաշտոնով Ի. Ա. Գոնչարովը։ Ղրիմի պատերազմը սկսվելուց հետո անձնակազմի մի մասը ցամաքային ճանապարհով վերադառնում է Ռուսաստան (որոնց թվում նաև Գոնչարովը), իսկ մյուսները բազմաթիվ դժվարություններ հաղթահարելուց հետո, միայն 1855 թ. նոյեմբերին հասնում են Պետերբուրգ։ Իրենց նոր ժամանած ընկերոջը հաճախակի այցելում էին ոչ միայն Գոնչարովը, այլ վերջինիս մտերիմ բարեկամներ, բանաստեղծներ Ապոլոն Մայկովը, Գրիգորի Դանիլևսկին, Վլադիմիր Զոտովը, որոնք բոլորն էլ «Սովրեմեննիկ» ամսագրի եռանդուն մասնակիցներն ու դրտավորողներն էին։ Վ. Զոտովի մասին 1857 թ. «Սովրեմեննիկ»-ը գրել է հետևյալը. «Զոտով որդին ռուս գրականության մեջ հետաքրքիր երևույթներից մեկն է։ Զոտով հայրը պատկանում էր հին սերնդին, մինչ Զոտովը հայրը իր թատերական ֆելիետոններն է գրում «Սեվերնայա պչելա»-ում, որը շարունակում է պնդել նատուրալ դպրոցի և Գոգոլի մասին, որ նա միջակ կարողությունների տեր գրող է, Զոտով որդին հանդիսավորությամբ ընդունում է Գոգոլի հանճարը և բացականչում.

И суд слепец на комика восстал,
Еще не всем понят он, а много ль
У нас таких писателей, как Гоголь?
Кто был нужней? Нет, явится нескоро
Второй певец второго «Ревизора»[10].

«...Այժմ մեր (լսի՛ր **մեր** եմ ասում) տանը ուրախությունը կրկնապատկվեցավ.— Կոնստանտին Լոսևի վերադառնալու լուրը հայտնելուց հետո գրում է ընկերներին Ռափայելը։—Օր չի անցնում, որ նոր-նոր անձինք չիտեսնեմ և նոր-նոր համբավներ չիլսեմ» (VI, 77)։

[10] «Սովրեմեննիկ», Заметки нового поэта, 1857, № 1—2, էջ 126։

Բացի Աստաֆիևների տանը ունեցած հանդիպումներից, Ռափայելը սկսում է հաճախել իր նոր ծանոթների տները, մասնակցում նրանց հավաքույթներին, գրական-երաժշտական երեկոներին, որտեղ, անկասկած, բացի երաժշտություն ունկնդրելուց, քննության էին առնվում ժամանակի ամենահրատապ հարցերը։

Հավանորեն հենց այդ օրերին Ռափայելին հաջողվում է ծանոթանալ «Սովրեմեննիկ»-ի խմբագիրներից մեկի՝ մոր կողմից հայ Իվան Պանաևի հետ։ Դուցե նրանց տանը հանդիպում է նաև Նեկրասովին ու Դոբրոլյուբովին։ Հետագայում՝ 1857 թ. հուլիսին նա արդեն որպես հին ծանոթ պատրաստվում է Պանաևի հետ հանդիպեցնել իր մյուս հորեղբորորդուն՝ Պետերբուրգ նոր ժամանած Սերովբեին, «Սովրեմեննիկ»-ում աշխատակցելու համար[11]։ 1860 թ. Բեռլինից գրած նամակներից մեկում Դոբրոլյուբովը հիշատակում է «Պոտկ»-ից ստացվելիք ինչ-որ գումարների մասին[12]։ Պետք է ենթադրել, թե այդ ծանոթությունների հիմքը դրվել էր Աստաֆիևների տանը բնակվելու ժամանակ։ Հենց այդ շրջաններում էր, որ Պատկանյանը սկսեց անհագորեն կարդալ արգելված գրականու-

---

[11] «Սերաֆիմը պատվական տղա է և մեծ բանքարով։ Ես նորան այս շաբաթ կծանոթացնեմ Պանաևի հետ, Լալաևի միջնորդությամբ և կարծեմ, որ դորա շարադրությունները ոչ վերջին տեղը կբռնեն «Սովրեմեննիկս-ում»,— գրում է նա Քերովբե Պատկանյանին Դերմանիա (VI, 169)։

[12] «Տեղեկացրեք ինձ նաև... ինչ է արվում նախատեսվող հրատարակության համար և գրեք՝ ստացաք դուք դրամը Պոտկ-ից և Կրասովսկուց և ինչքան»,— գրել է Ն. Ա. Դոբրոլյուբովը Վ. Ի. Դոբրոլյուբովին ուղղված նամակում։ Նամակը ծանոթագրող Ն. Ի. Տոտուբոլինը տվել է հետևյալ ծանոթությունը «Հավանորեն Դոբրոլյուբովը խոսում է այդ ժամանակ Պետերբուրգում բնակվող հայ անվանի բանաստեղծ Ռափայել Պատկանյանի մասին (տե՛ս, Н. А. Добролюбов, Собр. соч., М., т. IX, էջ 418 և 606, 1964 Իր «Некрасов и армянская общественность», հոդվածում Ս. Դարոյանը գտնում է, որ Դոբրոլյուբովի նամակում հիշատակված Պատկանյանը, հավանորեն Քերովբե Պատկանյանն է, որի հետ միասին Դլխավոր Մանկավարժական ինստիտուտում սովորում էր Դոբրոլյուբովը և ոչ թե Ռափայելը, քանի որ վերջինս մշտապես գտնվելով նյութական ծանր պայմաններում, դժվար թե կարողանար դրամով օգնել ինչ-որ հրատարակության։ Սակայն մեզ թվում է, որ խոսքը հենց Ռափայել Պատկանյանի մասին է, որովհետև վերջինս էր անընդհատ հետաքրքրվում տարբեր հրատարակչություններով, դրամ հայթայթում զանազան մեկենասներից իր և իր ընկերների համար, գրաքննչական ատյաններում հանդիպումներ ունենում գրաքննիչների ու հրատարակիչների հետ։ Կարելի է ենթադրել, որ Դոբրոլյուբովին տրվելիք դրամը նա պիտի վերցներ մի որևէ հայ մեկենասից։ Նման մի դեպք մեզ հայտնի է, երբ նա ոմն պետերբուրգաբնակ Մամիկոնովից վերցրել էր 120 ռուբլի, նրա մոտ գրավ թողնելով իր հրատարակած Տաղարանից 600 և Այբբենարանից 100 օրինակ, և դրամը տվել իր ծանոթ Վլադիմիր Միխայլովիչ Կաչենովսկուն՝ վերջինիս ձեռնարկությանը օգնելու նպատակով (տե՛ս հ. VI, էջ 155)։

թյան ընտիր նմուշներ, ձեռք բերել Լոնդոնի պրոպագանդիստների «Ազատ տպարանում» տպագրված «Պոլյարնայա զվեզդա»-ի համարները, տարածել դրանք ոչ միայն պետերբուրգաբնակ ծանոթների շրջաններում, այլև ուղարկել Մոսկվա՝ «Ուխտ»-ի ընկերներին։ Եվ վերջապես այդ շրջաններում էր, որ Ռափայել Պատկանյանը հանգամանորեն ծանոթացավ Նեկրասովի պոեզիայի հետ, մեկընդմիշտ իր համար ուղենիշ ընտրելով քաղաքացի բանաստեղծի դժվարին, մաքառումներով լի ճամփան, գտավ բանաստեղծի իր սեփական կոչումը, ձևակերպեց քաղաքացի բանաստեղծի իր հավատամքը։

Չնայած Աստաֆիևների տանը նրան ընդունում էին հարազատի պես, սակայն Ռափայելը անհարմար էր զգում նրանց անընդհատ ծանրություն լինելու մտքից[13]։ Բնավորությամբ լինելով պատվասեր ու հպարտ, նա այլևս չէր կարողանում հանդուրժել իր ներկա կախյալ վիճակը։ Բազմաթիվ պատրաստի գործեր, որ նա կարող էր մտցնել Գամառ-Քաթիպայի տետրակների մեջ, դրամ չլինելու պատճառով մնում էին դուրս, բացի դրանից համալսարանի վերաբերյալ դուրս եկած նոր որոշումը, համաձայն որի ազատ ունկնդիրները կամ պետք է անցնեին աշխատանքի, կամ մտնեին իսկական ուսանողների շարքը, նորանոր դժվարություններ էր ստեղծում նրա համար։ Իսկական ուսանողին անհրաժեշտ համազգեստի համար պահանջվող 70 ռուբլի գումարը միանգամայն անհնարին էր հայթայթել որևէ տեղից, իսկ աշխատանքի անցնել կնշանակեր վտանգի ենթարկել Գամառ-Քաթիպաների հրատարակության գործը։ Իսկ այն արդյունքը, որ սպասվում էր տետրակների վաճառքից` չկա՜ր-չկա՜ր։

1855 թ. դեկտեմբերի ծննդյան տոներին Ռափայելին այցելության եկավ Գևորգ Քանանյանը։ Աստաֆիևները, Նիկոլայ Տրիֆանովը ջերմ ընդունելություն ցուցաբերեցին միայն Ռափայելի պատմածներով ծանոթ երիտասարդին, մասնակից դարձրին իրենց հավաքույթներին։ Նրա մեկնումից հետո դեռ երկար ժամանակ Աստաֆիևների տանը հիշում էին համակրելի ու զարգացած երիտասարդին։ Չնայած Ռափայելը պատմել էր նրան իր դժվարությունների մասին, սակայն «Ուխտ»-ի մոսկովյան անդամները չէին շտապում, կամ ավելի ճիշտ, չէին կարողանում

[13] «Նա վերին աստիճանի պատվասեր էր, երբ երկու հոգի միասին ակումբանոցում, կամ հյուրանոցում ընթրիք էին ուտում, թեյ, սուրճ էին խմում փող տվողը անպատճառ նա էր լինում, երբ երկուսն ընկերովի մի տեղ էին գնում կառքի փողը անպատճառ նա էր վճարում», գրել է հետագայում Երվանդ Շահազիզը իր հուշերում, (Ե. Շահազիզ, Իմ հիշողությունները Ռ. Պատկանյանի մասին, «Տարազ», 1901, № 11)։

վաճառել և շրջանառության մեջ դնել ստացած գումարը՝ հաջորդ գըրքույկների տպագրման համար։ Զգալով, որ ամսագրի վաճառքից գոյացած գումարով տպագրության գործը անհնարին է առաջ տանել, Ռաֆայելը որոշում է դիմել պետերբուրգաբնակ հայ վաճառականներին, իրենց օգնություն ցույց տալու խնդրանքով, որովհետև մինչև իրենց տպարանի կարգավորումը, նա և Տրիֆանովը պայման էին կապել տպարանատեր Ցրիդրիխսոնի հետ ամեն 15 օրը մեկ, մի համար թողարկելու վերաբերյալ։ Սակայն, վախենալով, որ իր՝ ընչազուրկ ուսանողի և բանտարկյալ տեր Գաբրիելի որդու հեղինակությունը չի հարգվի նրանց կողմից, այդ գործը հանձնարարում է Գևորգ Քանանյանին, որ ղլարցի լինելով որոշ կապեր ուներ Հովսեփ Իզմիրյանի հետ։ «Խնդիրքս այն է,— գրում է նա Քանանյանին,— որ դուք այդ գրքույկները դարձնեք խատակ փող և ուղարկեք ինձ շատ սակավ միջոցումը, պատճառ որ մենք հավատարիմ խոսք ենք տվել հունվարից սկսած ամեն ամիս 2—2 թվահամար դուրս տալ, հիմի արգելքը միայն փողումն է. կնշանակե փետրվարին քարն էլ ճաքի, պիտի դուրս գա 3 թվահամար, թե որ մինչև փող ժողովելը մնանք, պիտի Քրիստոսի վերջին գալստյանը դուրս տանք մյուս թվահամարը. այդ պատճառով ես ուզում եմ իմ Գևորգին փոքր-ինչ անհանգստություն տալ։ Տեսնո՞ւմ ես, բանը ինչումն է կայացած ներկա րոպեին, ես փող չունիմ, այդ աշխարքին հայտնի է. դու էլ նմանապես, դորա վկան ես եմ, նմանապես Թիմուրյանը առ ժամս մեզ չի կարող օգնել, կնշանակե Գամառ-Քաթիպայի բնագիրները տկլոր են (իմա—հրատարակողները—Մ. Ս.), բայց դորա փոխարեն գլուխները դատարկ չէ՛, ուրեմն, կարելի է բանը խելքով բռնելով՝ նույն ռեզուլտատին հասնել։ Ինչպե՞ս, ահա քեզ հնարը։ Հիմի պր. Իզմիրովի դեպի մեզ ունեցած հավատարմությունը կրկնապատկվեցավ, ...նա հասկացած պիտի լինի, որ նորա խաբելու միտք չունինք. մեր ցանկությունը բարի է, մեր արգելքը փողի պասակություն է, և այդ է մեր հանցանքը: Մյուս կողմանե նա ազգասեր է, բարեմիտ է, բարեսիրտ է, եթե կարողացավ վստահանալ Նազարյանցի վերա 200 մանեթ տալով և նորա գիրքը պիտի ստանալ $1\frac{1}{2}$ տարիից, ինչո՞ւ չհավատալ մեզ 150 մանեթ, որով մենք կարող ենք հրաշապես ուղղել մեր գործերը, չխանգարել սկսած աշխատանքումը և ծաղրուծանակ չլինել մեր վատակամների առաջ։ Ի՞նչ ասեմ, դու լավ գիտես այդ, միայն այն եմ խնդրում քեզանից, որ կամքդ էացնես, այսինքն, գրես նորա մի ազդեցող նամակ, հայտնես վերոհիշյալ բաները նորա և մին շուտ օգնություն խնդրել. չունիս փող, մտիր հող, ահա՛ ինչ կարող եմ ասել քեզ» (VI, 84)։

Սակայն «աղդեցիկ» նամակը ստանալուց հետո Իզմիրյանը 150՝ ռուբլու փոխարեն Ռափայելին հանձնեց միայն 40 ռուբլի, որ պետք է տրամադրվեր «Այբբենարան»-ը տպագրելուն։ Դարձյալ հույսը դրած երկրորդ տետրակի ցրումից ստացված գումարի վրա, Ռափայելը ստացած 40 ռուբլին ծախսում է նորանոր համարներ տպելու, դրանք ծախելու և շահված գումարը հորրորդ համարի և «Այբբենարանի» տպագրության համար ծախսելու։ Ռափայելն իր մոտ է բերում եղբորը, Հովհաննեսին, որը այդ շրջանում ձեռնարկվել էր «Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը» պոեմի համար լիտոգրաֆիական նկարներ պատրաստելու գործին։ Սակայն այս, համեմատաբար հանգիստ կյանքը երկար չի տևում։ Չնայած՝ իր առաջավոր հայացքներին և ունեցած կապերին, Կոնստանտին Լոսևը անբարյացակամությամբ է ընդունում աներձագի՝ իր օտարազգի ընկերոջը նման դրամական օժանդակություն ցուցաբերելու որոշումը և ամեն կերպ համոզում է նրան ետ վերցնել և վաճառքի հանել Պատկանյանին տրված տառատեսակները։ Հավանորեն ինչ-ինչ պատճառներով դրամական հարցերում ստիպված լինելով ենթարկվել փեսային, Նիկոլայ Տրիֆանովը սրտի կսկիծով հայտնում է Ռափայելին իր որոշումը և առաջարկում նրան 600 ռուբլի արժողություն ունեցող տառերը ձեռք բերել 150 ռուբլով և այսուհետև մենակ վարել գործը։ Ռափայելն իր ամբողջ հնարավորությունները կենտրոնացնում է պահանջվող գումարը հայթայթելու և դժվարությամբ ձեռք բերած տառատեսակները չկորցնելու ուղղությամբ։ Այդ խառը օրերին Լոսևների միջոցով նրան ծանոթ Ազգային լուսավորության մինիստրության աշխատակից, սեղանապետ Դոբրովոլսկին առաջարկում է Ռափայելին օգնել ամսագիր հրատարակելու թույլտվություն ստանալ, իսկ գրքեննիչ Բերոյանը, որի հետ Ռափայելը մտերմացել էր համալսարանի դասախոսությունների ընթացքում, ցանկանալով ընդառաջել իր ուսուցիչ Սերովբե վարժապետի թոռանը, խորհուրդ է տալիս Գամառ-Քաթիպան դարձնել կանոնավոր պարբերական հրատարակություն։ Առաջին նվագ գայթակղվելով շլացուցիչ առաջարկություններով Ռափայելը պատրաստում է դիմումը և ծրագիրը Դոբրովոլսկուն հանձնելու նպատակով, բայց հիշելով իր նյութական անհաստատ վիճակը և ընկերների անհոգությունը, անմիջապես հրաժարվում է դրանից։ «...Վախենում եմ, 8 մանեթ 6 ամիսը ստանալով բան չի ծաղկի։ Ցանկություն շատ, հնարք քիչ։ Հնարն էլ կունենանք, եթե բերաններս չփբանանք և չփքնենք։ Դու ինձ ասում ես ճշտություն, ճըշտություն, ճշտություն։ Ես քեզ պատասխանում եմ՝ օգնություն, օգնություն, օգնություն...» (VI, 89)։

1856 թ. մարտի սկզբներին Պետերբուրգ է ժամանում Միքայել Նալբանդյանը, նախատեսվող «Հյուսիսափայլ» ամսագրի համար Ռեվիլիոն տպարանատերից մայրեր ձեռք բերելու նպատակով։ Երկու երիտասարդները հանդիպում են սիրով։ Իմանալով Նազարյանի և Նալբանդյանի մտադրության մասին, շատ խանդավառված Ռափայելն իր ծառայությունները է առաջարկում գրաքննչական ատյանում թույլտվության գործը գլուխ բերելու հարցում։ Հիշելով Բերոյանի և Ազգային լուսավորության սեղանապետ Դոբրովոլսկու իրեն տված խոստումները, Պատկանյանը որոշում է այն օգտագործել հօգուտ Նազարյանի և Նալբանդյանի։ Ռափայելը նրան պատմում է իր նոր ծանոթությունների մասին, ցույց տալիս մոտը եղած արգելված գրականությունն ու տալիս նրան «Պոլյարնայա զվեզդա»-ի առաջին համարը՝ կարդալու և Մոսկվայի ընկերներին, մասնավորապես Գևորգ Քանանյանին հանձնելու համար։ Լոնդոնի պրոպագանդիստների ամսագրի այդ համարում էր տպագրված Գերցենի նամակն ուղղված նոր գահ բարձրացած ռուսական թագավորին։ Այդ նամակը Գերցենի՝ Ալեքսանդր II-ին գրած բաց նամակներից առաջինն էր և իր վրա կրում էր հեղինակի 50-ական թվականների լիբերալ տատանումների ու պատրանքների կնիքը։ Գերցենը դեռևս հավատ էր ընծայում ցարի լավ մտադրություններին և այն բանին, որ ցարական կառավարությունը կարող է արմատական փոփոխությունների գնով բարելավել երկրի վիճակը։ Այդ նամակով նա առաջարկում էր թագավորին Ազատություն տալ ռուսական խոսքին, ազատել գյուղացիներին հողի հետ միասին, վերացնել մարմնական պատիժները։ Գերցենը՝ ինքը զգալով իր պահանջների համեստությունը նույն այս նամակում գրում էր. «...Ես ամաչում եմ, թե ինչքան քչով ենք մենք պատրաստ բավականանալու...»։

Դեմոկրատական տրամադրություններով տոգորված ռուս երիտասարդության համար «Պոլյարնայա զվեզդա»-ի երևան գալը մեծ իրադարձություն էր. բոլորը անհագությամբ կլանում էին ազատ միտքն ու անարգել խոսքը։ Դոբրոլյուբովը 1857 թ. հունվարի 13-ին իր օրագրում գրել է. «Ժամը 10-ից սկսեցի ընթերցանությունը («Պոլյարնայա զվեզդա»-ի երկրորդ գրքի) և շրնդհատեցի մինչև առավոտյա հինգը։ Գիրքը փակելուց հետո դեռ երկար չքնեցի... բազմաթիվ ծանր, մխոր, բայց հպարտ մտքեր էին պտտվում գլխումս...»[14]։

«Պոլյարնայա զվեզդա»-ի առաջին համարը լույս էր տեսել Լոնդոնում, 1855 թ. օգոստոսին և արդեն նույն տարվա վերջերին ընկել էր

[14] Տե՛ս Н. А. Добролюбов, Полное собр. соч., М., 1939 թ., т. VI, стр. 451.

Պատկանյանի ձեռքը։ 1856-ի ամռանը լույս տեսած № 2-ը Դոբրոլյուբովի ձեռքն էր անցել մյուս տարվա հունվարին, համարյա նույն ժամկետներում։ Ուրեմն Պատկանյանն ինքը և նրա շրջապատը պատկանում էին այն երիտասարդների թվին, որոնք աշխուժորեն հետևում էին ռուս առաջադեմ մտքին, կարդում ու տարածում էին դրանք իրենց շրջաններում։

Աստաֆիևների տանը այլևս անհնարին էր մնալ, Կոնստանտին Լոսևն իր ձեռքն առնելով տան ղեկավարությունը, հասկացնել էր տվել Պատկանյան եղբայրներին, որ նրանց ներկայությունը այլևս ցանկալի չէ (VI, 97)։ Չնայած Նիկոլայ Տրիֆանովի հետ նախկին բարեկամությունը շարունակվում էր, սակայն պետք էր հնազանդվել Լոսևի կարգադրությանը։ Եվ մարտի կեսերին Պատկանյան եղբայրները սենյակ են վարձում Վոզնեսենսկի պողոտայի, Օֆիցերսկի փողոցի վրա գտնվող Բագի տանը, կազմարար վարպետ Պաուլի բնակարանում, որը, իհարկե, ոչ մի բանով չէր հիշեցնում Աստաֆիևների շքեղ տունը։ Եվ դարձյալ աղքատության ուրվականը, որ մի քանի ամիս բաց էր թողել Պատկանյան եղբայրներին իր մագիլներից, նորից սեղմեց նրանց իր ձեռքերի մեջ։

Հանգիստ չէին տալիս Ռափայելին նաև համալսարանական գործերը։ Դեռևս փետրվարի 27-ին նա դիմում էր ներկայացրել Սանկտ Պետերբուրգի ուսումնական մարզի նախագահ Մուսին—Պուշկինին, համաձայն նոր դուրս եկած կարգի իրեն յուրածախս ուսանողների շարքն ընդունելու համար[15], սակայն, արդեն նույն ամսի 29-ին Պետերբուրգի համալսարանի ռեկտորն իր պատասխան գրությունում մերժել էր Ռափայել Պատկանյանի խնդրանքը, պատճառաբանելով, որ բժշկական ֆակուլտետից արևելյան ֆակուլտետ տեղափոխվելու համար անհրաժեշտ են ընդունելության քննություններ[16]։

Մարտի 3-ին, դարձյալ համալսարանի ռեկտորի անունով դիմում ներկայացնելով, Ռափայել Պատկանյանը բժշկական բաժնից իր հեռացումը բացատրում էր անատոմիա առարկայի հանդեպ ունեցած անդիմադրելի զզվանքով, որը 1856 թ. հունվարի 5-ի № 64 հրամանի համաձայն ընդունվում էր որպես հարգելի պատճառ։

Սակայն, Մուսին-Պուշկինը նկատի չառնելով ուսանողի պատճառաբանությունը, հրամայել էր ետ վերադարձնել նրա փաստաթղթերը և այլևս խնդրագիր չընդունել։ Մեծ դժվարությամբ տեսակցություն հա-

15 Տե՛ս ГИАЛО, ֆ. 14, ց. 5, գ. 272, թ. 1։

16 Տե՛ս ГИАЛО, ֆ. 14, ց. 5, գ. 272, թ. 2։

ջողեցնելով, Ռաֆայելը անձամբ պատմում է նրան իր դժվարություննների մասին[17], սակայն, այդ նույնպես ներգործություն չի ունենում, և մարտի 22-ին ռեկտորի հրամանով ետ են վերադարձնում նրան իր փաստաթղթերը[18]։ Անգամ այդ չի հուսահատեցնում Ռափայելին, և նա դարձյալ խնդրագիր է ներկայացնում իրեն վերոհիշյալ հրամանի ուժով առանց քննությունների ընդունել համալսարանի արևելյան բաժին։ Իսկ այդ ընթացքում, առանց մի օր կորցնելու նա հաճախում է պատմագրական ֆակուլտետի դասերին, ուր առանձնակի հափշտակությամբ ունկընդրում է Նիկոլայ Գերասիմովիչ Ուստրյալովի Ռուսաստանի պատմության դասընթացը։ Ուստրյալովը այդ շրջանում աշխատում էր իր «История царствования Петра» մեծածավալ աշխատության վրա և առանձնակի փայլով դասախոսություն էր կարդում Պետրոս I-ի ժամանակաշրջանի մասին[19]։ Հենց այդ դասախոսությունների ընթացքում Պատկանյանի մտքում ծագեց հայ ընթերցողին ծանոթացնել իրենց հայրենիքը վերափոխող, հզորացնող ուժեղ անհատների գործունեության հետ, նրանց օրինակով ոգեշնչել, դաստիարակել նոր սերնդին։ Ոչ միայն անհրաժեշտ է իր սեփական մահով մարտիրոսանալ և ձեռք բերել ազգի ապրելու իրավունքը, ինչպես Վարդան Մամիկոնյանը, այլ նաև ուժեղ անհատների, իրենց հայրենիքը լուսավորության և առաջընթացի ուղեգծերի վրա կանգնեցնող հանճարեղ վերափոխիչների օրինակով փրկել սեփական ժողովրդին։ Այդ ընթացքում նրա մտքում առաջացավ ըս-

[17] «Մուսինը հրամայել է թղթերս ետ տալ և այլևս ինձանից աղերսագիր չընդունել. ես դես դեն ընկա. նորից գնացի իրա մոտ, չէր ուզում ինձ ներս ընդունել. բայց չգիտեմ, որ խաչից ողորմաց և բարեհաճեցավ լսել իմ արդարությունը։ Ես սրտանց հոժար եմ, ասացի, կամ ծառայել, կամ ուսանող դառնալ. բայց մի հասկացե՛ք իմ նեղ դրությունը, է՜. ավելի ընդարձակ պատմեցի՝ ինչո՞ւ չեմ կարող ուսանող լինել՝ փողի կարոտություն կրելով։ Մինչև այժմ ինչո՞վ էիք ապրում, ասաց։ Թղթեր դուրս գրելով, սուտ ասացի նորան։ Հիմիկուց դենը ինչո՞վ մտադիր ես ապրել, ավելցուց։ Կարծեմ նմանապես, ասացի։ Լա՛վ, գնա՛. կտեսնենք,—էր նորա լակոնիկական պատասխանը։ Սիրտս լցված դուրս գնացի. հանկարծ վազեց քամակիցս նորա ատենադպիրը. մի վհատիք, պարոն, ասաց, գուցե լավ վախճան ունենա Ձեր գնալ գալը, այսօր նորա քեֆը տեղը չէ. որդու մասին էլի մի վատ համբավ է լսել երեկ, որ այդպես անհարկու է (VI, 95)։

[18] Տե՛ս ГИАЛО, ֆ. 14, ց. 5, գ. 272, թ. 5։

[19] Հետագայում իր «Պատմություն Մեծին Պետրոսի» աշխատության մեջ Պատկանյանը հիշատակում է Ուստրյալովի համալսարանական բեմից կարդացած դասախոսությունները, որոնց ինքը ունկնդիր է եղել (Տե՛ս ԳԱԹ, ՌՊՖ, № 158), ինչպես նաև իր 1856 թ. մարտի սկզբներին գրած նամակում հայտնում է. «Ահա 3 շաբաթ է, որ չափազանց ջերմեռանդ գնում եմ համալսարան (և այս նամակը գրում եմ քեզ համալսարանի աուդիտորիայումը սպասելով Габа-Устрялов-ին (VI, 90)։

տեղծագործությունների մի շարք ստեղծելու գաղափարը, որից առաջինի՝ «Նապոլեոն մեծի, Ֆրանսիայի կայսրի պատմությունը» նա ձեռնարկեց շուտով, մի քանի ամիս անց։

Գամառ-Քաթիպայի ծրագրերը իրագործելու համար[20] *պետք էր ըստեղծել «երևելի արանց վարքը» պատկերող գործեր և այդ կենսագրական ձեռնարկները, իհարկե, լույս պիտի տեսնեին առանձին փոքրիկ գրքույկներով, ինչպես «Այբբենարան»-ը, «Տաղարան»-ը և մյուս նախատեսվող հրատարակությունները։*

Սակայն անցնում էր Նիկոլայ Տրիֆանովի պայմանաժամը, իսկ մոսկվացիները դեռ լուռ էին, փոխանակ դրամ ուղարկելու, կամ բոլորովին մերժելու Ռափայելի խնդիրքը՝ «Ուխտ»-ի մոսկովյան անդամները նորանոր պահանջներ էին ներկայացնում իրենց գրություններում, դըժգոհում համարների դանդաղ տպագրվելուց, առաջարկում նոր հայտարարություն գրել ցրելու և բաժանորդներ գտնելու հույսով, ինչպես նաև նորանոր կապոցներ տպագրած համարներից Թիֆլիս, Շամախի, Աստրախան և այլուր ուղարկելու համար։ Անտրտունջ կատարելով նրանց պահանջները, Ռափայելն ամեն մի նամակի մեջ զգուշությամբ հիշեցնում է նրանց պայմանաժամի մասին, կարծես լուռ աղաչելով երեսի վրա չձգել այդպիսի դժվարություններով ստեղծած գործը։ «Բարեկամները կապված պիտի լինեն մի պինդ հանգույցով, այդ հանգույցն է մի բարի նպատակ, մի սուրբ խորհուրդ» (VI, 100),—ակնարկում է նա տպարանի մասին Թիմուրյանին գրած նամակում, առանց մանրամասների մեջ մտնելով։

Այդ օրերին շարադրած «Հայտարարության» մեջ նա ընթերցասեր հայերից պոհունակություն էր հայտնում առաջին երկու համարների ջերմ ընդունելության համար։ Չկար այլևս առաջին հայտարարության անվստահ երանգը, նա զգում է, որ հայը ազգ է դառնում և պահանջ ունի ազգության ամենակարևոր պայմանին՝ համընդհանուր լեզվին, «առանց որի ազգը ազգ չէ, այլ խուժան, խաժամուժ»։ Հիմի օրե-օր սակավանում է «գրաբարամոլների» թիվը, որոնք եգիպտացվոց քուրմերի նման սեփականացրել էին նրանց բոլոր գիտությունները և արվեստները, անմատչելի անելով ժողովրդի համար գիրը և դպրությունը»[21]*։*

---

[20] *«Ուստի մենք պիտի աշխատենք մուծանել Գ<ամառ>-Ք<աթիպայի> մեջ վարք երևելի արանց, ինչպես որ էին Գուստավ Ադոլֆը, Վիլհելմ Թելը, Բոցարիսը, Դմիտրի Դոնսկոյը, Լեոնիդը և շատ ուրիշներ, որոնք փառք են իրանց հայրենյաց, (VI, 60)։*

[21] *Երկու տարի անց «Հյուսիսափայլ»-ը նույնպես պիտի բնաբան դներ իր առաջին համարին, «Այսուհետև ոչինչ եգիպտական խորամանկ քուրմեր, որ կամեին լինել գիտության միայնակ պահապանքը»։*

Այսպիսով, դարձյալ Գամառ-Քաթիպայի տետրակների առաջին գործը «Ուխտ»-ի անդամները համարում էին հայ աշխարհաբար լեզվի տարածումը, ազգը ավելի բարձր գաղափարներ ընկալելուն նախապատրաստելը։ Ընդ որում, անհամբեր Գևորգ Քանանյանը անընդհատ պահանջում է ավելի ծանրակշիռ նյութերով համալրել իրենց հրատարակությունները, իսկ Ռափայելը խորհուրդ է տալիս տեղավորել այնպիսի նյութեր, որ «հասկացվի և օգուտ բերե»։ Եվ այդ է պատճառը, որ իր ձեռքի տակ ունենալով այնպիսի գործեր, ինչպիսիք էին «Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը», «Դև Մրուս»-ը նա չօգտագործեց դրանք Գամառ-Քաթիպայի տետրակներում, մտադրվելով տպագրել առանձին գրքով։ «...Արտաքին ձևի համար՝ Գ<ամառ>—Ք<աթիպան> մեր զորությունը հասածի չափ պիտի մեծանա մինչև 2 թերթ՝ գինը չբարձրանալով... Ներքին պարունակության համար՝ պետք է այնպիսի նյութեր տեղավորել մեջը, որ հասկացվի և օգուտ բերե. ասելը հեշտ է, անելն է դժվար։ Ուրեմն, մի անգամ և հավետ պիտի կանոն դնենք մեզ այսքան միջոց ժամանակի այսինչ ձև շարադրություն մշակել, հետո մյուսը կամ երկու կամ երեք միասին. օրօրինակ, մենք հաստատ դիտավորություն ունենանք այս տարի բացի վեպական և պատմական առարկաներից ոչինչ չիգրել և չիտպել մանավանդ» (VI, 105)։

Հավատարիմ մնալով իր այս որոշմանը, Ռափայել Պատկանյանը տետրակների 3-րդ պրակը համալրում է Բիմուրյանի և իր «Հայաստան» և «Մխիթար Աբբա» հոդվածներով, «Հայ աղջիկ» բանաստեղծությամբ և Քերովբե Պատկանյանի «Ինձ համար չէ գարնան գալը» ոտանավորով։ Միակ բացառությունը, որ թույլ է տալիս իրեն Ռափայել Պատկանյանը, այդ նրա երևակայությունը բորբոքած Նեկրասովի նոր լույս ընծայված ժողովածուից «Բանաստեղծն ու քաղաքացին» վերնագրով գործի փոխադրությունն էր։ Հետաքրքիր է այն հանգամանքը, որ թե՛ ռուսերեն բնագիրը, թե՛ հայերեն ազատ թարգմանությունը լույս են ընծայվել համարյա միաժամանակ։ Նեկրասովի բանաստեղծությունների անդրանիկ ժողովածուն գրաքննական թույլտվություն էր ստացել 1856 թ. մայիսի 14-ին, իսկ Գամառ-Քաթիպայի տետրակների 3-րդ համարը 1856 թ. հունիսի 16-ին։

Պետք է ենթադրել, որ Պատկանյանը մինչև ժողովածուի լույս ընծայումը արդեն ծանոթ էր որոշ բանաստեղծությունների ձեռագիր արտագրությունների հետ «Սովրեմեննիկ»-ի շրջաններում ունեցած կապերի շնորհիվ, մանավանդ, որ որպես բնաբան բերված տողերը «Բանաս-

տեղծն ու քաղաքացին» ստանավորի տպագրված օրինակի մեջ բացակայում են։

Նեկրասովի ժողովածուն ցնցեց ամբողջ ռուս առաջավոր հասարակությանը։ Նրա հաջողությունը հավասարազոր էր «Եվգենի Օնեգինի» և «Մեռած հոգիների» հաջողությանը։ Բանաստեղծությունների ժողովածուի ամբողջ տպաքանակը ծախվեց մեկ-երկու օրվա ընթացքում, և հասարակության մեջ երևացին տասնապատիկ գնով վաճառվող ձեռագիր արտագրություններ։ Գրքի հաջողությունը միանգամայն պարզ էր։ Ռուսական հասարակական կյանքում եղած փոփոխությունները, «Նոր մարդկանց», ռազնոչին մտավորականության և դեմոկրատորեն տրամադրված երիտասարդության բազմությունը ագահորեն կուլ էին տալիս նոր թեմաներով, նոր լեզվով գրված բանաստեղծությունները, որոնք պատմում էին խոնավ նկուղների, ծանր աշխատանքի, անանց թշվառության մասին և լի էին հարստահարողների նկատմամբ թույնով ու ատելությամբ։ Ընթերցող նոր հասարակության համար այդ թեմաները հասկանալի ու հարազատ էին, ինչպես հարազատ էր նաև բանաստեղծությունների նոր, փոքր-ինչ «անտաշ» դեմոկրատական լեզուն։

Երբ ժողովածուն լույս ընծայվեց, Նեկրասովը գտնվում էր Իտալիայում և «Սովրեմեննիկ»-ի խմբագրի պարտականությունները կատարում էր Չերնիշևսկին։ Հաղորդելով ընթերցողներին Նեկրասովի գրքի լույս ընծայման մասին, Չերնիշևսկին լրիվ արտատպել էր ամսագրում «Բանաստեղծն ու քաղաքացին» բանաստեղծությունը։ Այդ հանգամանքը մեծ փոթորիկ էր առաջացրել գրաքննչական ատյանում։ Չերնիշևսկին տարիներ անց գրել է. «Աղետը, որ ես բերեցի «Սովրեմեննիկ»-ին իմ արտատպությամբ չափազանց ծանր ու երկարատև էր»։ Սկսվեցին սահմանափակումներ և հետապնդումներ թե՛ ամսագրի, թե՛ Նեկրասովի գրքի նկատմամբ։ 1856 թ. դեկտեմբերի 19-ին ներքին գործերի մինիստր Լանսկոյը բոլոր նահանգապետներին գաղտնի շրջաբերական ուղարկեց «Նեկրասովի բանաստեղծությունները չվերահրատարակելու մասին»։ Այդ շրջաբերականի մեջ նա պահանջում էր, որ «Նորերս Մոսկվայում տպագրված Նեկրասովի «Բանաստեղծություններ» վերնագիրն ունեցող գիրքը չթույլատրել նոր հրատարակության և չթողնել մամուլում ոչ մի հոդված այդ գրքի վերաբերյալ, ինչպես նաև արտատպություններ այդ գրքից»[22]։

Խոսակցություններ էին պտտվում, որ Նեկրասովին Ռուսաստան վերադառնալուն պես պետք է արգելափակեն Պետրոպավլովյան ամրոցում։

[22] Н. А. Некрасов, Собр. соч., т. I, М., 1954, стр. 396.

Կառավարության վրդովմունքն էր շարժում առանձնապես «Բանաստեղծն ու քաղաքացին» ոտանավորը, որը կարծես թե հանդիսանում էր հեղափոխական դեմոկրատների մանիֆեստը, որի անունից ռուս գրողներին պահանջ էր ներկայացվում ամբողջ գրական ստեղծագործությունն ի նպաստ դնել աշխատավոր ժողովրդի շահերին։

Հետագայում Դոբրոլյուբովը, նկատի ունենալով այդ բանաստեղծությունը, իր ընկերներից մեկին գրել է. «Կորցնելով ներկա հնարավորությունները այդպիսի (այսինքն հեղափոխական—Մ. Ս.) գործունեության համար, մենք կմեռնենք, բայց կմեռնենք, համենայնդեպս, ոչ իզուր։ Հիշի՛ր

Иди в огонь за честь отчизны,
За убеждение, за любовь...
Иди и гибни безупречно
Умрешь не даром: дело прочно,
Когда под ним струится кровь!»[23]

Ընդհանուր խանդավառությունից ետ չմնաց նաև Ռափայել Պատկանյանը, ավելին, նա դեռևս մինչև «Սովրեմեննիկ»-ի արտատպումը և դրան հաջորդած արգելքները, առաջիններից մեկն էր, որ Նեկրասովի անունը դնելով բնաբանի տակ, փոխադրեց և Գամառ-Քաթիպայի տետրակների 2 (3) և 3 (4) համարներում տպագրեց ռուս հեղափոխական-դեմոկրատների մանիֆեստը՝ «Բանաստեղծն ու քաղաքացին» և ժողովածուի լավագույն բանաստեղծություններից մեկը՝ «Բարոյական մարդը»։ Թերևս դրանով միայն կարելի է բացատրել Նեկրասովի անունը և նրա բանաստեղծությունների փոխադրությունը անարգել կերպով Գամառ-Քաթիպաների մեջ մտցնելու փաստը։ Բացի վերոհիշյալ բանաստեղծությունների փոխադրումից, Ռափայել Պատկանյանը իր «Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը» նորավարտ պոեմի համար բնաբան ընտրեց ժողովածուի բանաստեղծություններից մեկի քառատողը[24]։

Պատկանյանի համար «Բանաստեղծն ու քաղաքացին» ոտանավորը ունեցավ ծրագրային նշանակություն։ Այն, ինչ նա անում էր վերջին տարիների ընթացքում, ինչին երկրպագում, ինչից մղումներ էր ստանում, կարծես թե հնարավորություն ստացավ ամբողջանալու, բյուրեղանալու

[23] Նույն տեղում։

[24] «Стихи мои плод жизни несчастливой
У отдыха похищенных часов
Сокрытых слез и думы боязливой».

իր բարձրարվեստ փոխադրության մեջ։ Ի դեպ, այդ բանաստեղծությունն ավելի ինքնուրույն ստեղծագործություն էր, գրված Նեկրասովի հայտնի գործի ազդեցության տակ, քան փոխադրություն, կամ թարգմանություն։ Այն խտացված էր, չկար նեկրասովյան բանաստեղծության հարց ու պատասխանի ձևը։ Երկու մասերում հեղինակը կարողացել էր հակադրել իրար միայն խնջույքներում վարդ տեսնող և վարդ երգող սիրված բանաստեղծին և իր ժողովրդի ցավը երգող, նրան խարազանող, նրա տառապանքով խոցոտված երգչին, որին բոլորը հալածում են, հեռու վանում իրենցից։

Սակայն հալածված պոետը, չընկճվելով մարդկանց արհամարհանքից, նա «անդողդոջ» քայլերով ու բաց ճակատով քայլեց աշխարհում, երգեց թշվառություն, կարեկցանքի ձեռք մեկնեց խեղճին, ծաղրով ու խարազանով վերացրեց բազմաթիվ արատներ։

«Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը» պոեմում քննադատելով ներկա սերնդին, որ հաճախ ամոթով ու զզվանքով հեռու է վանում իր վրայից հայ անունը, նա իր նույն այդ ազգակիցների համար պատրաստ էր ամեն զոհողության, կիսաքաղց ու կիսամերկ գոյության, մասնավոր՝ դասերից ստացած վարձատրությունը տպարանատերերին ու սրբագրիչներին բաժանելուն (VI, 186), իր անձնական գործերը ամենևին աչքաթող անելուն. «Այո՛, ինձ հայտնի են ճանապարհները և միջոցները, որով մենք պարտավոր ենք հասնելու մեր նպատակին, ես գիտեմ, ո՞ւմ համար է նշանակած մեր աշխատությունը, ո՞վ պիտի լինին մեր դատավորները, ինչպե՞ս պետք է կռվել նախապաշարման և նախանձի դեմ միևնույն ժամանակ. և գիտեմ՝ ի՞նչ փշյա պսակ պիտի հյուսվի մեր ճակատի համար՝ վարձ մեր համարձակ ձեռնարկության» (VI, 105)։

Նեկրասովյան մուսան օգնեց նրան ամբողջացնելու և ձևավորվելու տարիների ընթացքում հասունացող իր գաղափարները, որին նա չդավաճանեց իր ամբողջ կյանքի ընթացքում, օգնեց նրան ստեղծելու իր երգիծանքի, ծաղրի «հաստ փաթոթով» պատած բանաստեղծությունները, որոնցից երկուսին նա դիմեց անմիջապես, մեծ վարպետությամբ, մերթ նուրբ հումորով, մերթ ձաղկող սատիրայով պատկերելով մայրաքաղաքում կրթված հայ օրիորդին և հայ երիտասարդին։

Նեկրասովյան մյուս բանաստեղծությունը, որ գրավել էր Պատկանյանի ուշադրությունը, դա «Բարոյական մարդը» հայտնի գործն էր, որտեղ մերկացված էր ազնվական-կալվածատիրական կեղծավոր, այլանդակ բարոյականությունը։ Այս բանաստեղծությունը բարձր էր գնահա-

տել Բելինսկին, համարելով այն «կացնի հարված» տիրող դասակարգերի գլխին։

Որպեսզի հասկանալի լինի հայ ընթերցողին, Պատկանյանը փոխել է ճորտատեր-կալվածատերերին հայ վաճառականով, տարբերություններ է մտցրել նաև գործող անձանց մեջ, պահպանելով սակայն բանաստեղծության հիմնական ոգին ու իմաստը։

* * *

Վերջապես Մոսկվայից ստացվում է տառատեսակների համար ուղարկված 150 ռուբլին, և Ռափայելը մեծ ցնծությամբ ձեռք է բերում դրանք Նիկոլայ Տրիֆանովից ու մնում բոլորովին անփող։ Իսկ Գամառ-Քաթիպայի տետրակներից 3-ը անհրաժեշտ էր տպել։ Այդ պատճառով այն ստացվեց չափազանց փոքր, Պատկանյանի վրա հրավիրելով մոսկվացիների զայրույթը։ Նյութերը կուտակված մնում էին, իսկ լույս էին տեսնում փոքրիկ պրակներ, որոնք հաճախ դառնում էին ծիծաղի առարկա և ստիպում շատերին կորցնելու հավատը իրենց գործի նկատմամբ։ Ռափայելի բոլոր արդարացումները, անփողության մեջ տառապելը, «պատեպատ ընկնելը» չէին շարժում նրանց գութը։ Իհարկե, այս թերացումների մեջ նշանակալից դեր էր խաղում նաև Ռափայելի անփորձությունը դրամական գործերում, նրա ոգևորվող բնավորությունը, առանց նախօրոք հնարավորությունների հետ հաշվի նստելու զանազան գործեր ձեռնարկելը։ Հազիվ ավարտելով 3-րդ տետրակի նախապատրաստական աշխատանքները և փոխանակ բոլոր միջոցները կենտրոնացնելու հաջորդ տետրակի բովանդակությունը հարստացնելու իր մոտ եղած նպատակասլաց, բարձրարժեստ նյութերով, Ռափայելը որոշում է հրատարակել առանձին գրքով «Հայոց դյուցազունք» վերտառությամբ մի ժողովածու, արագ-արագ հաշվում նրա համար անհրաժեշտ գումարը և նույնիսկ առանց ընկերների համաձայնությունն ստանալու, նույն այն նամակով, որով ծանուցում էր նրանց իր մտադրության վերաբերյալ, հայտնում է այդ ժողովածուի համար 108 ռուբլու նկարներ պատվիրելու մասին (VI, 111)։ Առանձին գրքով էր պատրաստվում հրատարակել Պատկանյանը «Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը» պոեմը, զարդարված չորս վիմատիպ պատկերներով։ Եվ այդ ամենը, չնայած տպագրության համար ծախսված նշանակալից գումարների, պիտի վաճառվեին ամենաէժան գներով, ընթերցողների շրջանակները լայնացնելու նպատակով։ Բնական է, որ այս բոլոր ծրագրերը և՛ շեղում էին նրա ու-

շաղրությունը, և՛ դատապարտում անիրագործելիության բազմաթիվ նկրտումները։ Մինչդեռ, եթե Պատկանյանը, խմբագրին հատուկ հոտառությամբ կարողանար իր ունեցած նյութերը՝ «Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը», «Դև Մրուս»-ը, «Մեր այր»-ը և մյուսները հրատարակել Գամառ-Քաթիպայի անտրակներում և ոչ թե ցրել տարբեր հրատարակություններում, ապա և՛ նրանց արժեքը կմեծանար, և՛ կլայնանար ընթերցողների շրջանակը, և՛ կհզորանար նրանց ներգործուն ուժը։

Նախատեսվող «Հայոց դյուցազունք» ժողովածուն պիտի իր մեջ ընդգրկեր և իր «Զարմայր Նահապետի մահը», «Պանդուխտ հայ ի Փարեզը», «Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը» և Քերովբե Պատկանյանի «Սմբատ Բագրատունի», «Հարսանիք Արամա» պոեմները՝ իրենց պատմական ակնարկներով, որոնք պիտի բացահայտեին պոեմների մեջ պատկերված պատմական ժամանակաշրջանը։ Բոլոր պատմական ակնարկների հեղինակն ինքը՝ Պատկանյանն էր, բացառությամբ «Տրոյական պատերազմ»-ի, որը գրել էր Գաբրիել Պատկանյանը Ռոստովի բանտում (VI, 112)։

Քանի որ Նիկոլայ Տրիֆանովը վերջնականապես հրաժարվել էր հայկական տպարան բացելու մտքից և տառատեսակներն էլ վաճառել Ռափայել Պատկանյանին, ապա պետք էր առաջին հերթին մտածել տպագրական մամուլ ձեռք բերելու, իսկ հետո հոգալ տպարանին անհրաժեշտ այլ պարագաների մասին։ Գրելով Նախիջևան իր դժվարությունների մասին, նա խնդրում է մորը հորից թույլտվություն ստանալ իրեն ուղարկելու Թիֆլիսի իրենց տպարանի մամուլն ու մնացած տառատեսակները, ինչպես նաև սկսում համոզել Քանանյանին ղլլարցի հարուստ Ցիդանյան ընտանիքին հորդորել՝ միջոցներ տրամադրել հայկական անկախ, կանոնավոր տպարան բացելու համար։

Ցիդանյանները Մոսկվա էին ժամանել Ղզլարի վաճառականների կորցրած արտոնությունները ետ ստանալու առաքելությամբ։ Ռուսաստանի հայկական գաղթօջախները, մասնավորապես Աստրախանը, Ն. Նախիջևանը և Մոզդոկն իրենց բնակչության թվի շնորհիվ հնարավորություն էին ստացել ինքնուրույն կառավարման։ Դեռևս XVIII դ. երկրորդ կեսերին նրանք ռուսական կառավարությունից ստացել էին որոշ արտոնություններ ինչպես քաղաքային ինքնավարության, այնպես էլ զինվորական ծառայության և վաճառականության ասպարեզներում։ Մինչև XIX դ. 50-ական թվականները, այդ արտոնությունները մի քանի անգամ սահմանափակվել էին, մասնավորապես, վաճառականության հարցում,

սակայն հայ վաճառականների բազմիցս բողոքների հետևանքով դարձյալ վերահաստատվել էին։

1824 թ. ռուս վաճառականների ներկայացրած բողոքի հետևանքով Ալեքսանդր I-ի հրամանով հայ վաճառականությանը ստիպել էին պարտադիր կերպով ներգրավվել գիլդիաների մեջ։ Գիլդիաների մեջ ընդգրկվելը շահավետ էր միայն առաջին կարգի վաճառականներին, իսկ երկրորդ և երրորդ կարգի վաճառականները գիլդիաների մեջ ընդգրկվելուց հետո կորցնում էին արտասահմանի հետ առևտուր անելու հնարավորությունը։ Այս որոշման դեմ դուրս եկան Աստրախանի վաճառականները և 1831 թ. նրանց հաջողվեց առանց գիլդիաների մեջ ընդգրրկվելու վարել ազատ առևտուր։ Ղզլարի և Մոզդոկի առևտրականները, հետևելով աստրախանցիների օրինակին՝ նույնպես աշխատում էին ստանալ նման իրավունքներ։ Իմանալով այդ մասին, և Ֆիրդանյանից տպարանի ստեղծման համար օգնության ակնկալություններ ունենալով, Ռափայել Պատկանյանը հանձն է առնում օգնել նրան, նախապես ստանալով պետերբուրգաբնակ հարուստ և մեկենաս Մովսես Բուդաղյանի համաձայնությունը այդ գործը գլուխ բերելու հարցում։ Միջնորդի դեր ստանձնելով Ֆիրդանյանի և Բուդաղյանի միջև, Ռափայելը աշխատում էր այդ երկուսին էլ օգտագործել իրենց ազգասիրական նպատակների համար, առաջինի օգնությամբ բացել հայկական տպարան, իսկ երկրորդի հեղինակությամբ ու կապերով ապահովել իրենց հրատարակությունների տարածումը։

Լսելով, որ Ֆիրդանյանը կամենում է միայն մի քանի հայ պատանիների կրթության ծախսը հոգալ, Ռափայելը մեկնաբանում է այն բոլոր բարոյական օգուտները, որ ազգը պիտի ստանա պարբերական հրատարակությունների ու գրքերի միջոցով, որ այդ հրատարակությունները ոչ միայն կօգնեն լուսավորության տարածմանը, այլ հայ գրականության հարստացմանը։ «Բայց ուրիշ ռեզուլտատ կստանար այսքան զոհերու պտուղները, եթե 3 տղա զուրկ լինեին այդ սուտ ուսումեն, և ազգը ունենար այդ ծախսով մի անկախ կանոնավոր տպարան, այն ժամանակ հայ տղաք կարոտ չէինի լինիլ ուսման համար վազել մեծ փողեր մխելով օտար աշխարհներ, այլ ուսումը ինքը կգար և կհանդիսանար նորա առաջ։ ...Универсал ուսումը առայժմս ծիծաղական բան է հայոց համար. խիստ բավական է, եթե առաջի նիվադ բոլոր հայերը իմանային հայերեն լեզվով խոսել, գրել, իմանային ազգային պատմությունը և թեթև գաղափար զանազան գիտությանց և արվեստից» (VI, 113, 114)։

Բացի Ցիզանյանին համոզելուց նա այդ մասին զգուշությամբ ակնարկում է նաև Հովսեփ Իզմիրյանին, ինչպես նաև ղարաբաղցի ոմն Գրիգորի, որոնք մշուշոտ խոստումներից առաջ չէին գնում։ Ապարդյուն անցավ նաև նրա դիմումը պետերբուրգաբնակ հարուստ Թամաշևին, որը պատճառ բռնելով, թե ինքը արդեն մի քանիսին բարերարություն արել է և այլևս ոչինչ տալ չի կարող, մերժեց «Ուխտ»-ի անդամների խնդիրը, ստիպելով Ռափայելին վրդովմունքով բացականչելու... «Արդյո՞ք իր սրտակից բարեկամներուն տուն հրավիրելը և մեծրի՞լն է համարում նա բարերարություն, թե՞ այն է նորա բարերարությունը, որ 2½ տարի առաջ մի շնաբարո պոռնիկի տվեց (իհարկե, ընդդեմ կամացը) մոտ 500 մանեթ, որով իրոք կարող էր ապահովացնել (եթե ոչ իմ) գոնե մի հայ խեղճ երիտասարդի ապագա վիճակը...» (VI, 119)։

Քերովբե Պատկանյանը նույն այդ շրջանում, 1856 թ. կեսերին հայոց լեզվի դասեր էր ստացել այդ ժամանակ արդեն վախճանված Աղաթոն Աքիմյանի գերդաստանում, որի գերմանուհի կինը, Վարվառե Աքիմյանը ցանկանում էր երեխաներին որոշ գիտելիքներ հաղորդել մայրենի լեզվից։ Այս հանգամանքը առանձնապես ուրախացնում էր նրանով, որ տիկին Աքիմյանի վրա նույնպես կարելի կլիներ ներգործել տպարանի ստեղծման, կամ գոնե նախատեսվող հրատարակությունների տպագրական ծախսերի խնդրանքով։

Իհարկե, այս անընդհատ դիմումները, անընդհատ ստորացումները «ոսկե դրպանների» առջև, ծանր էին անդրադառնում թե՛ ինքնասեր Ռափայելի, թե՛ Քանանյանի ու Թիմուրյանի վրա, սակայն անկախ լինելու բոլոր հույսերը պայթում էին օճառի պղպջակների պես, իսկ գրքերի վաճառքից սպասվող հասույթները չկային ու չկային։ «...Ես գիտեմ, դու ինձ չէիր մեղադրիլ, այլ կգանգատեիր մեր անձուկ դրությանը վրա, որ մեզ ստիպում է այդպիսի մտածողություններ անել, որոնք փոքր-ինչ խլում են մեզանից մեր արժանավորությունը և հպարտությունը...,—գրում է նա Քանանյանին, Ցիզանյանից տպարանական պարագաների համար 650 ռուբլի խնդրելուց հետո։—Այդ միտքը ինձ ես չարչարում էր, բայց երբ որ այն ես միտք էի անում, որ այդ հնարը մի անգամով կազատե մեզ անընդհատ և հաճախ կրկնվելու խնդիրքներից, կարոտությունից...» (VI, 141), ...«Ես լավ համարեցի ցույց տալ կամ, ավելի ուղիղ ասել, միտքդ բերել առաջիկա նամակումս մեր կարիքը, մի անգամ էլ մտնել ցխի մեջ և իսկույն и навек լվացվել աղնվության ավազանի մեջ։ ...650. մանեթ մի այնպիսի գումար է... հայերի համար, որ նոքա շուտով թույլ կտան փորի աղիքները դուրս բերել, քան թե դրպա-

նից՝ այդ գումարը, թեև ամեն մինը նոցանից կյանքումը 10 անգամ այդպիսի փողեր սպառել է պես-պես շռայլ և զզվելի գործերու համար (VI, 142)։ ...Ես քեզ շատ անգամ խնդրեցի во чтобы то не стало անկախ դառնանք, դու հասկացար գուցե իմ միտքս, բայց աղբյուրը ցույց չիտվիր, մենք ոչինչ նորոգություն չէինք անում մեր զզվելի դրությունը, միայն թե զանազան ձևեր էինք տալիս մեր մուրացկանությանը, խընդիրքով ստորագրություն էինք անում, խնդիրքով գիրք էինք ծախում, խնդիրքով գիրք էինք ցրվում, խնդիրքով մեր քրտնաջան վաստակի չնչին վարձն էինք ստանում, մենք մեր СИМВОЛ-ը ընտրել էինք ազնվություն, բայց իրոք մեր СИМВОЛ-ը ցածություն էր։ Ով որ մեզ չիպատահեր, մենք նորա մեծ նշանակություն էինք տալի և ազգասիրության ամեն պայմանները մեկնում էինք, ինչու, որ 20 կոպեկ տա և անու մի հատ Գամառ» (VI, 143—144)։ Երկարատև մաքառումներն ու կարիքը, անկանոն սնունդն ու մայրաքաղաքի գաղջ օդը կամաց-կամաց սկսեցին անդրադառնալ Ռափայելի առողջության վրա։ Օրեցօր սաստկացող, մաշող հազը, սառը քրտինքը ի վերջո ստիպեցին նրան գամվելու անկողնին։ 1856 թ. ապրիլի 20-ից մինչև մայիսի կեսերը նա չկարողացավ ոտքը ցած դնել անկողնուց, ապավինելով եղբոր և Քերովբեի հոգացողությանը։ Առաջին անգամ թոքախտի նշանները սկսեցին զգացնել տալ իրենց։ Սակայն այդ հանգամանքը ամենևին չստիպեց Ռափայելին լուրջ ուշադրություն դարձնել իր առողջական վիճակին և հենց անկողնում պառկած նա շարունակում էր թե՛ իր տպագրական աշխատանքները, թե՛ լրջորեն պարապում համալսարանական դասերով, թե՛ նորանոր ծրագրեր մշակում ապագա հրատարակչական աշխատանքների վերաբերյալ։

Քերովբե Պատկանյանի միջոցով հարաբերություններ սկսելով ակադեմիկոս Բրոսսեի հետ, որը մտադրություն ուներ հայ պատմիչների գործերից 15 անուն գիրք թարգմանել ֆրանսերեն և հրատարակել, Ռափայելն իր պատրաստակամությունը հայտնեց օգնել դժվար հասկանալի հատվածների բացատրության գործում, ինչպես նաև Քերովբեի հետ միասին կատարել նրա բոլոր հանձնարարությունները։

Անկողնում պառկած, նա անընդհատ Քերովբեին հիշեցնում էր Բրոսսեին տված խոստումը և խնդրում բերել բոլոր անհրաժեշտ նյութերը, ինչպես նաև Լորենցի պատմության դասագրքերը՝ քննությունների նախապատրաստվելու համար։ Չնայած Լորենցի «Руководство к всеобщей истории» գիրքը արգելված էր ինչպես Գլխավոր մանկավարժական ինստիտուտում, այնպես էլ մյուս բարձրագույն ուսումնական հաստա-

10—907

տություններում, Ռուսսոյի, ֆրանսիական հեղափոխության և ֆրանսիական լուսավորիչների հանդեպ ունեցած համակրական վերաբերմունքի համար, Պատկանյանը անպայման ցանկանում էր քննություններին նախապատրաստվել այդ դասագրքով։ Դեռևս Գրանովսկու դասախոսություններն ունկնդրելիս նա փոխել էր իր վերաբերմունքը ֆրանսիական հեղափոխության և նրա գործիչների նկատմամբ և այժմ ցանկանում էր նոր տեսանկյունից ուսումնասիրել նրանց գործունեությունը[25]։

Հիվանդության բերումով գտած ազատ ժամանակը Ռափայելը աշխատում է օգտագործել երեսի վրա թողած դասերի և մյուս գործերի կարգավորման համար։ Ամբողջ օրերով մենակ պառկած իր աղքատիկ սենյակում, նա պարապում էր պատմություն, լատիներեն և մյուս առարկաները, սնվելով եղբոր բերած աղքատիկ պարենով և առանց շաքարի տաք ջրով։ «Ես քաշելս թողի,—գրում է նա Քերովբեին,—...Այսինքն, երբ որ բոլոր ծխախոտներս выծխեցի ու նորից ձեռք բերելու հնարը չէի տեսնում, հիշեցի, որ կուրծս թույլ է, հազս օրեօր սաստկանում է. միտք արի, որ մարդուս պարտավորությունն է յուր առողջությունը պահպանելու, փոքրոգություն է, որ մենք չենք կարողանում մեր կրքերուն տեր լինել, այսպես խորհրդածությունները քաջ ներգործեցին վրաս, և երբ որ անփողությունը օգնության հասավ ներքին ձայնիս, երկուսը միասին ստիպեցին ինձ հրաժարվել այդ թույնից, որ ամեն օր անզգա կերպով ծծում ենք մեր ներքսը» (VI, 108)։ Բացի Հովհաննես եղբորից, հիվանդ Ռափայելին այցելում էր նաև Նիկոլայ Տրիֆանովը, որը և նրան հասցրեց համալսարանի հասցեով գրած՝ Գևորգ Քանանյանի նամակը, որտեղ վերջինս հայտնում էր տպարանի համար մանր տառերի (petit) ձեռք բերման մասին։ Ուրախությունն այնքան մեծ էր, որ Ռափայելը իրեն բոլորովին ապաքինված զգաց, մանավանդ, որ Նախիջևանից ստացված նամակն էլ խոստանում էր շուտով հորը պատկանող երկաթե մամուլի առաքումը Պետերբուրգ։ Եվ դարձյալ աշխատանքներն ու ծրագրերը սկսեցին հաջորդել մեկը մյուսին։ Ռափայելը սկսեց մտածել երեխաների համար ընթերցանության հանրամատչելի պատմվածքների ժողովածու կազմելու, ինչպես նաև համաշխարհային գրականու-

[25] Մի քանի տարի անց 1860 թ. «Հյուսիսափայլ»-ում տպագրված իր «Նապոլեոն Մեծի պատմությունը» աշխատության տողատակում ծանուցում է ամսագրի ընթերցողներին, որ նախապատրաստել է տպագրության Ֆրանսիայի և նրա պանծալի որդիների պատմությունը... «Եվ ինչպես առավել կտեսնենք հետզհետե ուսանելով Ֆրանսիայի նախընթաց օրերի և նորա պանծալի որդիների պատմությունը, պատվական «Հյուսիսափայլ»-ի միջնորդությամբ»։ «Հյուսիսափայլ», 1860, № 11, էջ 448։

թյան գոհարներից մանուկների համար թարգմանական շարք ստեղծելու մասին։

Ժողովածուն նա անվանեց «Զատկական պարգև ժրաջան հայ մանուկներին»։ Առաջաբանը, որտեղ խոսվում էր ընթերցասիրության օգուտների մասին, վերջանում էր հետևյալ խոսքերով. «Ուրեմն տեսնում ես, որ գրքի միջից շատ լավ բաներ կարելի է սովորել։ Լավ գիրք կարդալը միևնույն է, եթե մենք խոսենք բարի և խելոք մարդոց հետ։ Ով որ սիրում է կարդալ, նա կարող է գրքից շատ շահավետ բաներ սովորել, կարող է ժամանակը ուրախ անցնել...»[26]*։*

Առաջաբանին հետևում էին՝ «Սահմանադրություն», «Սեր առ ծնողը, կամ ծնողասիրություն», «Եղբայրական սեր» և «Գութ» պատմվածքները։ Դեռևս աշխատանքները չավարտած, նա այս գործը կիսատ է թողնում և ձեռնարկում Դանիել Դեֆոյի «Ռոբինզոն Կրուզոյի կյանքն ու զարմանալի արկածները» հանրահայտ գրքի թարգմանության աշխատանքները։ Թարգմանության համար ընտրելով ֆրանսերեն դյուրամատչելի հրատարակություններից մեկը, նա իր երեկոներն անց է կացնում այդ թարգմանությունը հայ մանկահասակ ընթերցողի համար հասկանալի ու սիրելի դարձնելու գործով։ Բացի այս գործերից, Ռափայելը թարգմանում է Եզովպոսի առակները՝ դարձյալ ընթերցանության համար նյութ պատրաստելու նպատակով, կազմում է «Հայոց դյուցազունք» ժողովածուն, գրում «Գաբրիել ամրոցապետ» պատմվածքը, պատրաստում «Քրիստափոր Կոլումբոս» և «Վիլհելմ Թելլ» կենսագրությունները, որոնք պիտի սկիզբ հանդիսանային «Վարք երևելի արանց» շարքի համար։

Շարադրելով Շիլլերի համար նյութ հանդիսացած ավստրիական բռնապետության դեմ Շտաուֆախերի գլխավորությամբ շվեյցարական ժողովրդի ապստամբության պատմությունը, Պատկանյանը Շվեյցարիայի տերիտորիան անընդհատ համեմատում է Հայաստանի հետ, նրա ժողովրդի քանակը՝ հայերի քանակի հետ, շեշտելով, որ փոքր ժողովուրդները ևս կարող են իրենց արյունով ու քաջությամբ ձեռք բերել ազատ ապրելու իրավունքը. «Զվիցերիա, կամ Շվեյցարիա, թեև ինքնըստինքյան մի փոքրիկ երկիր է, բայց և այնպես, պատմաբանի, երկրաբանի, արվեստագետի և ճանապարհորդի համար շատ հետաքրքիր կարող է երևիլ. Նորա տարածությունը 3 անգամ փոքր է, քան թե Հայաստանի, բնակչաց թիվը հասնում է մինչև 2.200000 հոգի, այսինքն, երկու անգամ սակավաթիվ են, քան թե հայերը։ Որովհետև Շվեյցարիո ժողո-

[26] ԳԱԹ, ՌՊՖ, № 204։

վուրդը բաղկացած է զանազան փախստական մարդիկներից, ուստի և խոսած լեզուներն էլ մի չէ, այլ երեք է... Ուրեմն նոցա ազգային կապը և պայմանները չեն լեզուն, կրոնը և ծեսերը, այլ ընդհանուր բարոյական ուղղությունը և ազնիվ զգացմունքը, որոնք ավելի ամուր են, քան թե որպես և իցե տերության հպարտությունը, զորությունը և այլն՝ հայրենասիրությունը ուզում եմ ասել»[27]։

Ամեն դարաշրջանի առաջավոր գործիչներ իրենց հայացքներն ուղղել են դեպի անցյալի ըմբոստներին, իրենց հայրենիքի ու համայն մարդկության լուսավոր կերպարներին, նրանց օրինակով իրենց ժամանակակիցներին դաստիարակելու և ազատաբաղձ գաղափարներ ներարկելու համար։

Հայտնի է, որ վաղ վերածննդի հանճարեղ բանաստեղծ ու հումանիստ Ֆրանչեսկո Պետրարկան երկար տարիներ է նվիրել «De viris illustribus» («Փառքով պսակված մարդկանց մասին») աշխատությանը, որտեղ նկարագրված էին Ռոմուլոսից մինչև Հուլիոս Կեսարի վարքն ու սխրանքները, գրել մի փայլուն պոեմ «Աֆրիկա» վերնագրով՝ Սկիպիոն Աֆրիկացու, Հանիբալի դեմ մղած պայքարի ու հաղթանակի մասին։ XVIII դ. վերջերին Գյոթեն ստեղծել է «Գյոց ֆոն Բեռլիխինգեն» և «Էգմոնդ» դրամաները, որոնցից առաջինը արտացոլում է գյուղացիական մեծ ապստամբության նախորդող շրջանը, իսկ երկրորդը՝ օտար կեղեքիչների և ժողովրդի ու նրա լավագույն ներկայացուցիչների պայքարը։

Վերջերս գտնված նյութերի հիման վրա հայտնի է դարձել, որ գիտական կոմունիզմի հիմնադիրներից մեկը՝ Ֆրիդրիխ Էնգելսը XIX դ. 30-ական թվականներին իր առաջին և միակ գեղարվեստական երկը նվիրել է վաղ վերածննդի ըմբոստներից մեկի՝ Կոլա դի Ռիենցիի կերպարին, որը XIV դ. կեսերին Հռոմի ընչազուրկներին պայքարի էր առաջնորդել «Հավերժական քաղաքի» արիստոկրատների դեմ։ Օրինակները բազմաթիվ են։

Հետաքրքիր է այն, որ բոլոր այդ գործիչներին դառն հիասթափություն է պատճառել իրենց դարաշրջանը և մի քանի գլխով վեր խոյանալով նրանից, նրանք ավելի սուր են նշմարել իրենց ժամանակակիցների արատները, խարազանել դրանք անողոքաբար, երազել դրանք վերացնելու մասին։

Պետրարկան իր «Փառքով պսակված մարդկանց մասին» գրքի վրա աշխատելիս գրել է. «Ինձ թվում է, որ ես ապրում եմ Կոռնելիուսների,

[27] ԴԱԹ, ՌՊՖ, № 197։

Սկիպիոնների, Ցաբրիանոսների, Կատոնների հասարակության մեջ և ոչ թե կողք կողքի այն ողորմելի մանր գողերի հետ, որոնց ժամանակաշրջանում ես դժբախտություն եմ ունեցել աշխարհ գալու»[28]։ Եվ դա համարյա այն ժամանակ, երբ Հռոմում բռնկվել է Կոլա դի Ռիենցիի, իր բարեկամի ու ընկերոջ ղեկավարած ապստամբությունը, որի սխրանքը հետագա դարերում ոգևորել է բազմաթիվ առաջավոր գործիչների։

Ինչպես տեսանք, Պատկանյանը նույնպիսի զայրույթով ու սրտի կսկիծով նշավակել է իր ժամանակակիցներին, առանց, իհարկե, ծանոթ լինելու Պետրարկայի գործին ու նրան համակած տրամադրություններին։ «...Եթե մենք կտեղավորենք այնպիսի շարադրություններ, ուրտեղ որ ապստամբությունը (ազգասիրական) համարվում է հանցանք, կտավորեցնենք Հային խաղաղ, առտնին կյանք վայելել, այն ժամանակ ինչի պիտի նմանին նոքա. ոչ ապաքեն այն ատելի հայերուն, որոնցմով ատատ են, մանավանդ ներկա դարումս Մոսկով, Պետերբուրգ, Ղզլար, Հաշտարխան» (VI, 60)։

Վրդովմունքը և արտի ցավը հանգիստ չեն տվել Պատկանյանին, այնպես, ինչպես դարեր առաջ Մեծ Պետրարկային, արտահայտություն գտնելով նրա համարյա բոլոր գործերի մեջ, և անցյալի, իրենց ժողովրդին՝ ստեղծված պատմական փակուղիներից դեպի ազգային ազատություն, դեպի բարգավաճում առաջնորդած «երևելի այրերի» կերպարներին անդրադառնալը, անշուշտ, թելադրված էին իր ժամանակակիցների, իր ժողովրդի նկատմամբ ունեցած մեծ, անհունորեն մեծ սիրուց։

Երբ իր ազգի, իր ժողովրդի ցավը և նրան օգնելու տենչը նրա զավակներից մեկի համար դառնում է նրա էության անբաժանելի մասնիկը, ապա այդ անհատների մտածելակերպն ու ծավալած գործունեությունը զարմանալիորեն նման են լինում, որ դարաշրջանում էլ նրանք ապրած լինեն, տաղանդի ինչ չափով էլ օժտված լինեն ի վերուստ։

* * *

Ոգևորությունն այնքան մեծ էր, որ Ռափայելն իրեն թույլ տվեց առաջին անգամ Գամառ-Քաթիպայի 3 (4) տետրերը համալրել 21 անուն նյութերով։ Այդ համարում տեղ գտան թե՛ իր, թե՛ Գևորգ Դոդոխյանի, թե՛ Քերովբե Պատկանյանի, թե՛ նորնախիջևանցի Սահրադյանի բանաստեղծությունները ու թարգմանական գործերը, հետաքրքրաշարժ պատմությունները ու բարոյախոսական զրույցները։

Բանաստեղծություններից տպագրվել էին Ռափայել Պատկանյանի «Անվնաս մարդը», «Սիրո երգ»-ը, «Մայրաքաղաքում կրթված հայ երի-

[28] Ян Парандовский, Петрарка, «Иностранная литература», 1974. № 6, էջ 83։

տասարդ»-ը, «Նկարիչ»-ը, «Վերջին դարուն»-ը և Մյատլևի «Ոստիկ» բանաստեղծության թարգմանությունը[29]*, Գևորգ Դոդոխյանի հենց այդ տարի գրած «Ծիծեռնակ»-ը, «Հարբած մարդու երգ»-ը, Քերովբե Պատկանյանի «Սմբատ Բագրատունի» պոեմը և Շիլլերից կատարած «Երկրի բաժանումը» բանաստեղծության թարգմանությունը, Հովհաննես Սահրադյանի՝ «Նախիջևանի երգը»։ Սակայն տպարանը դեռ միայն «Ուխտ»-ի անդամների երևակայության մեջ էր կանգուն, տառատեսակները լրիվ չէին, չկար Թիֆլիսից ուղարկված մամուլը, դեռ ամեն մի թերթ տպելու համար անհրաժեշտ էր վճարել, և Ռափայելի բոլոր նկրտումները մնում էին ձեռագիր վիճակում՝ սպասելով իրենց հերթին։ Մանր տառերի վրա օգտագործելով ամբողջ խնայած դրամը, Քանանյանն այլևս ի վիճակի չէր օգնել ընկերոջն արդեն համարյա տպված պատրաստի այբբենարանները տպարանից վերցնելու, ինչպես նաև շարված «Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը» պոեմը տպելու և պատրաստած Գամառ-Քաթի-*

[29] *Միայն վերջերս հնարավոր եղավ պարզել, թե ինչու Մյատլևի բանաստեղծությունը Պատկանյանն իր նամակում վերագրում է Լերմոնտովին (VI, 12)։ Նամակի ծանոթագրության մեջ մենք հայտնել ենք այն միտքը, թե Պատկանյանն իր թարգմանության վարկը բարձրացնելու համար այն վերագրել է Լերմոնտովին, սակայն նա իսկապես համոզված էր դրանում և ահա թե ինչ պատճառով։ 1835 թ. լույս է ընծայվել 14 լիրիկական բանաստեղծություններ պարունակող մի գրքույկ՝ առանց հեղինակի անվան, որի վերջին էջում պահպանված է եղել հեղինակի խոստովանությունը* уговорили напечатать *(«համոզեցին տպագրել»)։ Այդ գրքույկում տեղ էր գտել և* «Плавающая ветка» *բանաստեղծությունը, որը գրավել էր Պատկանյանի ուշադրությունը և* «Как хороши, как свежи были розы» *-ն, որի մոտիվներով հետագայում Տուրգենևը ստեղծել էր իր հանրահայտ արձակ բանաստեղծությունը։ Ինչպես Պատկանյանը, այնպես էլ Տուրգենևը չէր իմացել իր հոգում տեղ գտած բանաստեղծության հեղինակի անունը։ Նրա արձակ բանաստեղծությունը սկսվում է հետևյալ տողերով, «Մի ինչ-որ տեղ, մի ինչ-որ ժամանակ, վաղուց-վաղուց սրանից առաջ ես կարդացել էի մի բանաստեղծություն՝ «Ինչքան թարմ, ինչքան լավն էին վարդերը»։*

Իսկ Լերմոնտովի անվան հետ Պատկանյանը այն կապել էր «Կաղնու տերևը» բանաստեղծության նմանությամբ, որ ռուսական պոեզիայի մեջ էր մտել Առնոյի հանրահայտ „De la tige detache" *բանաստեղծության միջոցով, որը 1819 թ. թարգմանել էր Ժուկովսկին։ Անանուն բանաստեղծությունների գրքույկի հեղինակը Իվան Մյատլևն էր, որը իր ժամանակ հանդես էր գալիս ավելի երգիծական բանաստեղծություններով, Պուշկինի, Վյազեմսկու, Լերմոնտովի հետ միասին գրում գրական պարոդիաներ-էքսպրոմտներ։ Հետագայում նա հայտնի դարձավ «Տիկին Կուրդյուկովայի սենսացիաները և դիտողությունները» երգիծական պոեմով։ Հավանորեն հումորիստ-բանաստեղծը անհարմար էր զգում իր անունը դնել սենտիմենտալ-լիրիկական բանաստեղծությունների տակ և այդ պատճառով հանդես էր գալիս անանուն ժողովածուներով։ Հետագայում նրա բանաստեղծություններից շատերը, որոնց թվում նաև «Լողացող ոստիկը» վեր են ածվել ռոմանսների և երգվել երկար տարիներ։*

պայի տետրակները դրաշարին հանձնելու։ Ռափայելին հատկապես տանջում էր այն հանգամանքը, որ նոր դուրս եկած հրամանի համաձայն կարելի էր անարգել ամսագիր կամ լրագիր հրատարակել, իսկ իրենք չէին կարողանում դրամական դժվարությունների պատճառով սկսելու այդ մեծ ու պատվավոր գործը։

Ղրիմի պատերազմից անմիջապես հետո Ռուսաստանի հասարակական-քաղաքական կյանքում ստեղծված աշխուժությունն անդրադարձավ նաև գրաքննչական կոմիտեի աշխատանքների վրա։ Ոչ միայն առաջավոր հասարակության, այլ նաև մինիստրական շրջաններում ավելի ու ավելի հաճախ էր հայտնվում գրաքննչական կանոնադրությունը փոխելու միտքը։ Լիբերալ ռեֆորմիստական ժամանակաշրջանը ընդգրկում է և գրաքննությանը, գյուղացիների ազատագրման ծրագրերի հետ մեկտեղ սկսվում է ստեղծվել նաև նոր գրաքննչական կանոնադրություն։ Սակայն այս «ազատությունները» երկար չեն տևում և արդեն մի քանի ամիս անց, 1856 թ. դեկտեմբերի 15-ին, Ալեքսանդր II-ի հրամանով գրաքննչական կոմիտեն տրվում է լուսավորության մինիստրության տեղակալ իշխան Վյազեմսկուն, որը և շատ շուտով փոփոխությունների է ենթարկում տրված մի շարք արտոնությունները։

Գրաքննչական կոմիտեում եղած նոր կանոնադրությունների մասին Ռափայել Պատկանյանին հայտնել էր Գոնչարովը և խորհուրդ տվել Գամառ-Քաթիպայի տետրակները ամսագիր դարձնել։ «Ես քեզ մի ծածուկ բան ուզում եմ հայտնել,—գրում է Պատկանյանը՝ Մոսկվա ընկերներին,—Թագավորը թույլ տվել է անարգել օրագիր կամ լրագիր կամ որպեսևիցե պարբերական գիրք լույս ընծայելու՝ առանց խնդիրքի և դըժվարության. այս դեռևս ոչ ոքի հայտնի չէ՛, ինձ ասաց Գոնչարովը, որ այժմ դատաքննիչ է. և ինձ խորհուրդ տվեց Գ<ամառ>-Ք<աթիպան> օրագիր անվանելու. ուրեմն, եթե այն ստորագրությունը հաջողվի մեզ, մենք առաջի պարտավորություններս պիտի համարենք Ռուսաստանի մեջ առաջի օրագիրը հրատարակելու. այս մասին լա՛վ միտք արեք, ձեր կարծիքը ինձ գրեցեք և պռոգրամման, որով պիտի ընթանա օրագիրը, սիստեմատիկ հորինեցեք և ուղարկեցե՛ք ինձ» (VI, 116)։

Սակայն Մոսկվայի ընկերները ոչ թե չէին ուղարկում ծրագիրն ու իրենց համաձայնությունը Գամառ-Քաթիպաները ամսագիր դարձնելու վերաբերյալ, այլ, միանգամայն անօգնական թողնելով Ռափայելին, նույնիսկ դադարեցրել էին նամակագրությունը, սաստիկ երկընտրանքի մեջ թողնելով իրենց ընկերոջը։ Թիմուրյանը զբաղված լինելով ավարտական քննություններով, ժամանակավորապես ետ էր քաշվել գործե-

րից, իսկ Քանանյանը մենակ չէր կարողանում անել ավելին, քան այն, ինչ անում էր։ Մինչդեռ տպագրությունը միջոցներ էր պահանջում անողոք պարտատերի պես։ Այս ամենը ծանր էին ազդում Ռափայել Պատկանյանի թե՛ առողջական, թե՛ հոգեկան վիճակի վրա։

Հիվանդությունից դեռ չապաքինված, ծանր տվայտանքների մեջ, նիհարած ու հյուծված տեսքով, նա իր վրա էր հրավիրում շրջապատի ուշադրությունը։ Ընկերներն ու ծանոթները վախենում էին, որ թոքախտը արդեն բույն է դրել նրա կրծքում, որ այդ անկանոն, անսնունդ ու անհանգիստ կյանքը դեպի կործանում կտանի նրան, նախազգուշացնում էին, խնդրում չծխել։ Սակայն Ռափայելի համար առաջին հերթին գոյություն ուներ գործը, որին նա տրվել էր իր ամբողջ էությամբ։ «Անհամբերությամբ սպասում եմ նամակիդ,—գրում է նա Թիմուրյանին,—այնքան մեծ է անհամբերությունս, որ ո՛չ հանգիստ քնել եմ կարող, ոչ նստել, ոչ մտածել, ոչ խոսել, գրելի մասին էլ մի՛ հարցնիլ. միայն քաշում եմ, քաշում եմ խիստ սաստիկ, ծանոթներս սկսել են վտարանքի մեջ ընկնել, որ ես թոքացավ չիստանամ։ Չեն սխալիլ, որոնք ասել են քեզ, որ ես նիհարացել եմ» (VI, 118)։ Միակ մխիթարությունը, տաքուկ անկյունը, որտեղ Ռափայելը փոքր-ինչ թոթափում էր հոգսերը, դարձյալ Աստաֆիևների տունն էր, որտեղ տեղի ունեցած տհաճությունից հետո նորից սկսել էր ել ու մուտ ունենալ։

Նիկոլայ Տրիֆանովն արդեն նախապատրաստվում էր ավարտական քննություններին և մտադիր էր 1856-ի սեպտեմբերին ստանալ ճարտարապետի դիպլոմ։ Միևնույն ժամանակ սիրահարված լինելով հարուստ գերդաստանի մի օրիորդի, հակառակ նրա ծնողների կամքի, ցանկանում էր վերջինիս հետ Պետերբուրգի մերձակա գյուղերից մեկում պսակվել։

Հաճախակի զմայլվելով սիրահարված զույգով, հանուն իր ընտրյալի ամեն ինչ զոհելու պատրաստ Լուիզա-Էմիլիայով, Ռափայելը երազում էր նման մի հայ ընկերուհու մասին, որը չխորշելով իր աղքատ վիճակից, հնամաշ շորերից, հիվանդ ու հյուծված տեսքից, իր հետ ձեռք-ձեռքի քայլեր մաքառումների դժվարին ճանապարհով։ Երևի հենց այդ մտորումների ու երազանքների ժամանակ նրա աչքերի առջև անցան այն հայ քաղքենի օրիորդները, որոնք յուրացնելով քաղաքակրթության միայն արտաքին ձևերը «շինծու» խոսքերով, կեղծ վարվեցողությամբ ցանկանում էին ոտք դնել ռուս բարձրաստիճան հասարակության մեջ, իրենց կյանքը միավորել միայն հարուստ ու անվանի մարդկանց հետ։ Այդպիսի օրիորդներ նա շատ էր տեսել պետերբուրգաբնակ հայկական օջախներում, նույնիսկ այնպիսի ընտանիքներում, ինչպիսիք էին

Շանշյանները, Սուլթան-Շահերը, Բուդաղյանները, Աքիմյանները։ Տարօրինակն այն էր, որ հայրերը դեռևս հետաքրքրվում էին հայկական կյանքով, աշխատում և՛ նյութապես, և՛ բարոյապես օգնել ազգասիրական ձգտումներին, սակայն, չէին մտահոգվում իրենց ընտանիքներում ներմուծել հայկական ոգին, սովորեցնել զավակներին, մանավանդ աղջիկներին, հայոց լեզու, սիրել տալ ազգայինը։

Որոշ օժանդակություններ ցույց տալով Ռափայելին, Պետերբուրգի հայկական գաղութի այդ անվանի ներկայացուցիչները երբեք հնարավորություն չէին տալիս նրան ազատ ել ու մուտ ունենալու իրենց օջախներում, մտերմանալու օրիորդներին։ Նույնիսկ տեղի ունեցած սակավաթիվ հանդիպումների ժամանակ Ռափայելը միշտ զգացել է իր վրա այդ «հայ ազնվական» երիտասարդների ծաղրալի հայացքները, տանջվել իր հնամաշ կոշիկների ու իրեն «անորոշ մարդու» կերպարանք տվող շորերի պատճառով։

Երազելով բարձրաստիճան հասարակության մասին այդ օրիորդներից շատերը պատրաստ էին ամբողջ կյանքում մնալ մենակ, քան մտածել անգամ իր նման մեկի մասին, պատասխանել իր սիրատոչոր հայացքին, առանձնանալ մի քանի րոպեով իր հետ, լսել իր հոգին տանջող խոստովանքը։ «...Միտներս բերենք Շանշիևի երկու ամուրի քենիներուն,— գրել է նա հետագայում Քերովբե Պատկանյանին, հիշելով պետերբուրգյան կյանքը,—մեկը իմ օրովս մեռավ, մյուսը, չգիտեմ ողջ է՞ այժմ։ Նայե Բուդաղյանի և Սուլթան-Շահի հասունացած աղջիկներու վերա... Նոքա, հոգիս վկայում է, այժմ շատ նախանձում կլինեն իմ կողակցին, թեև մի ժամանակ թերևս արհամարհում կլինեին նորան և վրան ծիծաղում, որ ինձ պես шалопай-ի հետ միավորեց յուր վիճակը։ Եթե բանը մնար լուսահոգի ղոքանչիս կամքին, անշուշտ կողակիցս էլ այժմ Պետերբուրգի պառավացած աղջկերանց թիվը կլիներ. լավ է, որ նորա առողջ խելքը շուտ կտրեց, թե բարվոք է քանի մի պակասություններով այր ունենալ, քան թե հավիտենական շնասեր ու կատվասեր կույս մնալ» (VI, 301, 302)։ «Աքիմյանցի որդին, որ նմանապես կարող էր մի բան դառնալ... Այժմ խոսում է զինվորականներու փայլուն զգեստի վրա, իսկ նորա քույրերը հայերեն չեն խոսում և չեն խոսիլ և հային չեն սիրիլ» (VI, 132, 133),—գրել է նա սրտի դառնությամբ Գևորգ Քանանյանին հենց 1856 թ. ամռանը։ Ահա այս կերպարներն ու իդեալական աղջկա մասին եղած երազանքները մղեցին նրան «մի նոր ազգի ծնունդ» հայ երիտասարդի երգիծական դիմանկարից հետո ստեղծել հայ օրիորդի պատկերը։ Կյանքից վերցնելով կոնկրետ փաստը, նա այն հակադրեց

իր իդեալին, ստեղծելով երգիծական մի վառ ստեղծագործություն։

«Մայրաքաղաքում կրթած հայ երիտասարդ»-ի և «Մայրաքաղաքում կրթած հայ օրիորդ»-ի օրինակով կարելի է զգալ Պատկանյանի երգիծանքի այդ առանձնահատկությունը, երբ նա իր կյանքից պոկելով փաստը, պետերբուրգաբնակ հայ երիտասարդների ու օրիորդների կենցաղն ու մտածելակերպը, հակադրեց այն իր երազած անձնազոհ ու ժուժկալ աղջկա կերպարին և անձնականը մոռացության տված հայ երիտասարդին։ Պատկանյանի ռոմանտիկական իդեալին մշտապես ուղեկցող կյանքից պոկած հակադարձությունը օգնել է նրան բազմապիսի կերպարանափոխություններով հանդես գալու իր զարմանալիորեն դիպուկ ու սուր, թե՛ չափածո, և թե՛ արձակ երգիծական ստեղծագործություններում։

1856 թ. հուլիսի 2-ին համալսարանական խորհուրդը վերջապես հաշվի առնելով Ռափայել Պատկանյանի բազմակի դիմումները, որոշում է նրան առանց ընդունելության քննությունների, սեպտեմբերի 1-ից համարել Պետերբուրգի համալսարանի արևելյան ֆակուլտետի հայ-վիրա-թաթարական բաժնի առաջին կուրսի յուրածախս ուսանող[30]։ Որոշումը, իհարկե, չափազանց ուրախալի էր, բայց և նորանոր հոգսեր էր բարդում առանց այդ էլ հոգսերով ծանրաբեռնված նրա ուսերին։ Անհրաժեշտ էր լրջորեն զբաղվել առարկաներով և հանձնել նախատեսված 12 քննությունները, անհրաժեշտ էր ուսանողական համազգեստ պատվիրել, որ ամենաքիչը կնստեր 75 ռուբլի, վերջապես անհրաժեշտ էր ուսման վարձ հայթայթել։ Այժմ, երբ նա արդեն իսկական ուսանող էր և ոչ ազատ ունկնդիր, պետք է զբաղվեր ոչ թե այն առարկաներով, որ գրավում էին նրա ուշադրությունը, վառում երևակայությունը, այլ ժամանակ ծախսեր վրացերենի և թաթարերենի քերականական կանոնները անգիր անելով «...Մի՞թե կարող եմ հանգիստ մնալ մի տեղ, երբ որ համալսարանը յուր 12 առարկաներովը խղճմտանքի նման աչքիս առաջ կանգնած ամեն վայրկյան շշնջում է ականջիս. «Թանկ է օրդ, թանկ է ժամդ, թանկ է րոպեդ»։ Միայն այժմ կարող եմ ասել,—«Աշխարհ աչքիս սեւցել է, հոգիս մէջը դեցել է...» (VI, 118)։

Իսկ այդ ժամերը նրան պետք էին իր ծրագրած աշխատանքները կատարելու համար... Նրան արդեն ուրախացնում էին ազատության այն երկու ամիսները, որ կային նրա տրամադրության տակ, մանավանդ, որ օգոստոսի կեսերին լույս ընծայվեցին Գամառ-Քաթիպայի 3(4) տետրակը և Այբբենարանի աղօրինակը։ Ուղարկելով Մոսկվա առաջին նմու-

[30] Տե՛ս ГИАЛО, ֆ. 14, ց. 5, գ. 272, թ. 6—7։

չը իր ճեմարանական ընկեր Գաբրիել Ասատուրովի հետ, Ռափայել Պատկանյանը Պետերբուրգում գտնվող Միքայել Նալբանդյանին է հանձնում Մոսկվա տանելու համար 227 հատ նոր հրատարակված Գամառներից և 150-ը՝ հնից 2(3) և խնդրում ընկերներին այդ փաթեթները առանց բացելու առաքել Մակարիայի տոնավաճառ՝ ծախելու համար։

Սակայն, անցնում են երկու երկար շաբաթներ, բայց Քանանյանից ոչ մի լուր չի գալիս իր անելիքների մասին, իսկ Թիմուրյանը ստանալով բժշկի դիպլոմը և 15 ռուբլի էլ վերցնելով ծախված Գամառների դրամներից, ճանապարհ է ընկնում դեպի հայրենիք, խոստանալով այնտեղից օգտակար լինել «Ուխտ»-ի աշխատանքներին։ Իսկ տպված պատրաստ այբբենարանները սպասում էին փողի, որպեսզի սկսեն իրենց երկար ճանապարհորդությունը դեպի Կովկասի և Անդրկովկասի հայկական դպրոցները։

Իհարկե, այս դրության մեջ այլևս հնարավոր չէր Գամառ-Քաթիպայի տետրակները պարբերական դարձնելու մասին մտածելն անգամ, և Ռափայելը սրտի կսկիծով ընդմիշտ հրաժարվեց այդ գաղափարից։ Այժմ նա ոչ թե նորանոր նախագծեր էր պատրաստում հետագա գործունեության համար, այլ աշխատում էր վերջացնել սկսածներից ամենաանհրաժեշտները։

Գամառ-Քաթիպայի տետրակների 3(4) համարից տպելով ընդամենը 227 օրինակ նա թուղթ չունենալու պատճառով կանգնեցրեց տպագրությունը՝ անբավականությունների տեղիք տալով տպարանատեր Յոնսոնին։ Նույն վիճակում էր նաև Այբբենարանը։ «Ինձ պետք է փո՜ղ, լսո՞ւմ ես՝ փող. երկու թերթ Գամառը 15 հոդվածներով շարած պատրաստ է, թուղթ չունիմ, երկու թերթ Տաղարանի պատրաստ է, թուղթ չունիմ, որ տպեմ. հասկանո՞ւմ ես, որ փողի կարոտություն ունիմ։ Էլ ի՞նչ կերպով ասեմ, որ հասկանաս... Ա՜խ, մի՞թե երկար կտևի այս իմ չարչարանքը» (VI, 123, 124), կարդում ենք Քանանյանին գրած անպատասխան նամակներից մեկում։

1856 թ. սեպտեմբերի 8-ին Ռափայելը մեկնում է Մոսկվա՝ տեղում թաժանորդագրությունների հարցով զբաղվելու և «Ուխտ»-ի այլևայլ գործերը կարգադրելու համար և իջևանում է Քանանյանի մոտ, Տվերսկայա փողոցի Գազետնայա նրբանցքում գտնվող Սավինայի տանը։ Մոսկվայում գտնված 15 օրերի ընթացքում նա Քանանյանի հետ միասին այցելություններ է անում Լազարյան ճեմարան, հյուրընկալվում Նազարյանին, հանդիպումներ ունենում Նալբանդյանի, Սուլթան-Շահի և մոսկովյան մյուս ծանոթների հետ, տեղեկանում ծրագրվող ամսագրի

թուլտվության վերաբերյալ նորությունների մասին։ Նրան զարմանք և վրդովմունք էին պատճառում Լազարյան ճեմարանի ուսուցիչների շրջաններում տիրող լարված հարաբերություններն ու թշնամանքը, ինչպես նաև արտաքնապես թվացող բարյացակամ վերաբերմունքը, կեղծավորությունը միմյանց նկատմամբ։

Ըստ նրա հասկացողության, բոլոր հայերը, մանավանդ լուսավորյալ հայերը պետք է մի կողմ նետեին ներքին անբավականությունները և միասին պայքարեին հանուն ազգային լուսավորության և ապա հանուն օտար լծից ազատագրվելու։ Ինչպես դավանաբանական հարցերում նա չէր կարողանում տեսնել ազգը պառակտող ուժերին և երազում էր մի միասնական, միադավան հայ զանգվածի մասին, այստեղ նույնպես, ցանկանում էր վերացած տեսնել հոսանքների պայքարը, հանուն համահայկական ընդհանուր շահերի։

Ընդունելով և ամբողջ էությամբ համակրելով ռուս ռազնոչին մտավորականության մաքառումները ցարական կառավարության դեմ, տարված լինելով ռուս հեղափոխական դեմոկրատների գաղափարներով, նա հայ հասարակության համար ներքին պայքարը համարում էր մեծ շռայլություն և բանաստեղծի իր հզոր երևակայությամբ միավորում այդ թշնամական ուժերը մեծ նպատակի՝ Հայաստանը օտարների լծից ազատագրելուն հասնելու։ «Նա իր երազներով էր ապրում,— գրել է Պատկանյանի մասին Ռուբեն Բերբերյանն իր վերոհիշյալ աշխատության մեջ, օգտագործելով Անանիա Սուլթան-Շահի հիշողությունները,— թեկուզ անորոշ, բայց գեղեցիկ ազգային երազներով ու հույզերով։ Խորը չէր ուզում, կամ չէր կարող թափանցել։ Նրան մեղադրում էր Մոսկվայի հայ ուսանողությունը, որ մշուշապատ է, պարզ չէ նրա ազգասիրությունը, հստակ չէ աշխարհայացքը։

«— Ի՞նչ արած, ես այդպիսին եմ,— պատասխանում էր նա։ Բայց չէր էլ մտածում պաշտպանվել, կամ արդարանալ։

— Ես իմ մանկական օրերից կրում եմ սրտումս ազգային փառքի պարծանքը, սերը դեպի ազգային շահերը, օգուտը և պատիվը։

Պատահում էր, որ ուսանողությունը նրան հարց էր տալիս.

— Ո՞ւմ հետ ես, որ Թվականին (իմա, որոնց թվին—Մ. Ս,) ես պատկանում, ազատամիտների՞, թե խավարամիտների՞։

Որ բանակի՞, հը՞մ, հա՛յ բանակի, կարդացեք գրվածներս»[31]։

Պետք է ենթադրել, որ Ռուբեն Բերբերյանի այս նկարագրած վիճաբանությունը հենց 1856 թ. սեպտեմբերյան օրերին Մոսկվայում եղած

[31] Ռ. Բերբերյան, Գամառ-Քաթիպա, «Հայրենիք», Բոստոն, 1931, № 36։

խոսակցությունների ու կրքոտ հակաճառությունների արձագանքներն են, որ տեղի են ունեցել մի կողմից Նալբանդյանի, Անանիա Սուլթան-Շահի, Նազարյանի և մյուս կողմից Պատկանյանի ու Քանանյանի միջև և մեզ են հասել Անանիա Սուլթան-Շահի «Իմ ուրախ և տխուր օրերից» տետրակի էջերից։ Եվ հասկանալի է, թե ինչո՞ւ Պատկանյանն այնքան անբավական էր Մոսկվայի հայ համայնքից, ինչո՞ւ էր շտապում օր առաջ ետ վերադառնալու Պետերբուրգ և տրվելու անընդհատ ու անվերջ մաքառումներին՝ իր երևակայական նպատակին հասնելու համար։ «...Մոսկով հասնելուս առաջի օրից անմեկնելի սրտնեղությունը տիրեց իմ բոլոր գոյությանը, որ մինչև այսօր համառությամբ հալածում է ինձ նաև սիրելի բարեկամներուս ընկերության մեջ։ Թեև Պետերբուրգումը ինձ չի սպասում ո՛չ մի հրապուրիչ վայելչություն, ո՛չ մի փայլուն հույս... Բայց քանի որ միտս է գալիս, որ ես նորա մեջ չեմ, անմեկնելի տխրություն, այնպիսի տխրություն, որ հայտնի է միայն թշվառ պանդուխտներուն, պատում է ինձ, և երբ որ հանկարծ հիշում եմ, թե այս պանդխտությունը հավիտենական չէ, այլ այսօր կամ էգուց պիտի ազատվիմ նորանից, այդ ժամանակ մի (նմանապես անմեկնելի) հրճվանք էլեկտրոնական հեղուկի պես անցնում է մարմինիս յուրաքանչյուր երակներից» (VI, 125), գրում է նա Քերովբե Պատկանյանին։

«Իր ստեղծագործական կյանքի ընթացքում Ռ. Պատկանյանը չունեցավ հայացքների խոր թեքումներ,— իրավացիորեն նկատել է Աշոտ Հովհաննիսյանը,— իրեն հատուկ անմիջականությամբ և մեծ անկեղծությամբ, զարմանալի ճոխ ու պատկերավոր, դիպուկ ու համակող իր գրչով հայրենասեր բանաստեղծը ծերության տարիներին իսկ հիմնականում հուզում ու պաշտպանում էր գաղափարներ, որ հանդիպում ենք նույնիսկ պատանեկան նրա բանաստեղծությունների մեջ»[32]։

1858 թ. հունվարին նա ոգևորությամբ ընդունեց «Հյուսիսափայլ»-ի հրատարակության ավետիսը, բազմաթիվ բանաստեղծություններ ու հոդվածներ առաքելով նրա խմբագրությանը, միևնույն ժամանակ պատրաստակամություն հայտնեց աշխատակցելու Մսեր Մսերյանի «Ճռաքաղ»-ին, որի դեմ ուղղված հոդվածով ավարտել էին իրենց գոյությունը Գամառ-Քաթիպայի տետրակները։ Զգալով, որ Մսերյանին կարող է զարմացնել իր որոշումը, նա խնդրեց Քանանյանին հաղորդել խմբագրին, որ «Եթե նա (իմա՝ Մսերյանը—Մ. Ա.) դեպի վատ կողմը ուզե մեկնելու իմ անկողմնապահ կարծիքը, դու ջան դիր նորան միամտացնելու ...Միայն ազգի իսկական օգուտը ինձ ստիպեց և, միշտ ստիպելու է

[32] Ա. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, հ. 2, Երևան, 1956, էջ 127։

ճշմարտախոս լինել թե՛ կենդանի խոսքով և թե՛ գրությամբ և ամեն ինչ ձեռնարկություն հանում ազգի միշտ մոտ ունենալու է իմ սրտի մեջ, և ցնծության արձագանք պիտի լսվի այնտեղեն» (VI, 179)։ Չկարողանալով Մոսկվայում նոր բաժանորդներ գտնել Գամառ-Քաթիպայի տետրակների համար, Պատկանյանը շտապեց վերադառնալ մայրաքաղաք, դարձյալ թողնելով այդ կարևոր ու անհետաձգելի գործը Քանանյանի հոգացողությանը։

Պետերբուրգում նրան սպասում էր Լազարյանների կողմից այբբենարաններ ձեռք բերելու համար տրված 50 ռուբլին, որը Ռափայելը օգտագործեց հին և նոր սենյակների վարձը տալու, ուսանողական հանդերձանք գնելու համար և դարձյալ մնաց առանց դրամի։ Օր-օրի վրա սպասվում էր Թիֆլիսից Քանանյանի հասցեով ուղարկված երկաթե մամուլի ստացումը։ Նախատեսվող հրատարակությունների թվին ավելացավ նաև Գաբրիել Պատկանյանի 1857 թ. համար պատրաստած օրացույցը, որը Ռափայելը ուզում էր տպել առաջին հերթին, բանտում հեծող հորը գոնե մի 100 ռուբլի վաստակեցնելու համար։ Մամուլը, որը ուղարկվել էր առանց դրամի, նույնպես մի փոքր վաստակ պիտի հայթայթեր որբացած ընտանիքի համար։ Քանի որ ուշանում էր «Վարդանի մահը» պոեմի տպագրությունը, Ռափայելը մոր և հոր խնդրանքով որոշում է Ն. Նախիջևան ուղարկել պոեմի ձեռագիր օրինակը և, որովհետև իրենք գտնվում էր տպարանում, նա նամակով խնդրում է Քանանյանին մոր հասցեով Ն. Նախիջևան ուղարկել վերջինիս պատկանող արտագրությունը, կարդալուց հետո ետ ուղարկելու պայմանով։ Վերջապես, ստացվում է երկար ժամանակ սպասված մամուլը, որը հնարավորություն կտար տպարանը աշխատեցնելու, բայց, հավանորեն, Քանանյանի անփութության շնորհիվ, այրվում է հենց կայարանում։ Այդ անախորժ դեպքը պատահում է սեպտեմբերի 28-ից մինչև հոկտեմբերի 9-ը ընկած ժամանակամիջոցում։ Թե ինչքան ծանր էր մամուլի կորուստը երկու անօգնական ուսանողների համար, կարելի է եզրակացնել նրանից, թե ինչպիսի անձկությամբ էին սպասում նրանք դրա ստացմանը, ինչքան հույսեր էին կապում ու նախագծեր էին կազմում անկախ տպարան ունենալու հետ։ Եվ, չնայած այդ ամենին, դյուրագրգիռ, արագ հուսահատության գիրկը ընկնող Ռափայելն իր մեջ ուժ գտավ մխիթարելու ընկերոջը, հավատացնելու նրան, որ մամուլի կորուստը իրեն ավելի ուժ ու կորով տվեց կռվելու անհաջողությունների դեմ... «Աստված հավատա, որ երբ որ լսեցի այդ չար լուրը, ոչ թե վհատեցա, այլ ավել ոգևորվեցա, քան թե որ առաջ. հազար մեկ նոր-նոր աղբյուրներ հնարեցի,

որոնցից թե մինը բխի, մեր բանը զարմանալի կերպով պիտի հաջողի» (VI, 131),—գրում է նա Քանանյանին, խնդրում հավատալ, որ տպարանատեր Յոնսոնը այժմ ոչ միայն տպում, այլ իրեն համար ձրի թուղթ է հայթայթում, և որ արդեն պատրաստ են Այբբենարանի բազմաթիվ օրինակներ, որոնցից երբ մի քանի հարյուր օրինակ կարողանան «ձեռաց» ծախել տպարանի գաղափարը նորից «Փյունիկ հավի» պես ոտքի կկանգի «ավել փառավոր, ավել ապահով» (VI, 131)։

Գիտակցելով թե ինչ պիտի զգա այդ գործում ակամա մեղավոր Քանանյանը, Ռափայելը զարմանալի մարդասիրությամբ մխիթարում է նրան, հավատացնում, թե հուսահատվելու դեպքում իր «սիրտը սաստիկ կցավացնի», պետք է միայն ավելի եռանդուն գործել, Ցիդանյաններին համոզել ազգօգուտ գործ անելու դեպքում, անպայման տպարան բացել և ոչ թե ուսանողի ապագա ապահովեցնել, պետք է աշխատել ավելի շատ տպել Այբբենարան, Տաղարան, Գամառներ և հնարավորին չափ բազմաթիվ օրինակներ ցրել Կովկասում, Հայաստանում և գաղթօջախներում։ Անհրաժեշտ է կարկատել այրված մամուլը և գործնական միջոցներ ձեռք առնել նորը գնելու հարցում։ Հավանորեն ինքը կկարողանա մամուլի ձեռք բերման գումարի կեսը հայթայթել իր երկու աշակերտներից՝ Միքայել Բեյբությանից և Ղորղանովից ստացված գումարով (որը ամսեկան կազմում էր ընդամենը 18 ռուբլի), կաշխատի էլի աշակերտներ գտնել, կանի ամեն ինչ և գործը կշարունակի բարգավաճել (VI, 132—134)։

Աշակերտները, որոնց մասին գրում էր Ռափայելը, Թիֆլիսեցի ազնվականներ էին, ամենևին անծանոթ մայրենի լեզվին, և պատրաստվում էին մտնելու գնդապետ Ռումելի մասնավոր դպրոցը։ Պատկանյանի մոտ նրանք սովորում էին հայերեն և կրոն, բացի մեսրոպյան այբուբենին տիրապետելուց, հոգով դառնում էին հայ, ծանոթանում հայոց պատմության դրվագներին, երազում ազգասիրական սխրանքների մասին։ «...Աշակերտներս... երկուսն էլ պատվական տղերք են, զգայուն սրտով և բացված խելքով, ի՛նչ պիտի պատվաստել նույա մատաղ հոգումը, ես արդեն շինել եմ իմ պլանը. այս դիպվածը ինձ խիստ ուրախացուց... Այդ երկու պատանիք փոխանակ կորչելու մեր ազգի համար, իմ աշխատությամբ և իմ համոզությունով կդառնան սաստիկ հայրենասերներ» (VI, 133)։

Իսկ Քերովբե Պատկանյանի աշակերտ՝ Նիկողայոս Աքիմյանը փոխանակ նույնպես հետաքրքրվելու ազգային կյանքով, երազում է զինվորական փայլուն համազգեստի մասին և այս հանգամանքը մեծ ցավ ու վրդովմունք է պատճառում Ռափայելին և առիթ ծառայում գժտվելու իր

քարեկամի հետ։ Նա մեղադրում է դրանում Քերովբեին և պահանջում իրեն մոցնելու Աքիմյանների գերդաստանը։ Նկատելով վերջինիս հապաղումը, Ռափայելը սաստիկ վրդովվում է, լուտանքներ թափում նրա գլխին, մեղադրում հայատյացության մեջ։ Իսկ բարձրաստիճան հասարակության շրջանները ոտք դրած Քերովբե Պատկանյանը ամաչում էր ներկայացնել հնամաշ, անփույթ հագնված և անընդհատ վառվող աչքերով հայրենասիրություն քարոզող իր եղբորը, որի տարօրինակ տեսքը հաճախ զարմանք ու արհամարհանք էր առաջացնում, մանավանդ, օրիորդների շրջանում։

Ավելի ու ավելի էին սակավանում այն օրերը, երբ երկու եղբայրները «շունի կաշիով օձիքի, բարակ շինելի մեջ» փաթթված, գրպանները դատարկ, հույսերով հարուստ, թափառում էին աշխարհից լքյալ այդ գինի փողոցների մեջ և 25 կոպեկի թեյ՝ որ խմում էին «Золотой якорь»-ումը, աշխարհ արարած տակն ու վրա էին անում, (VI, 402), երբ միասին գրավ էին դնում իրենց կրկնակոշիկները, կամ երկուսին պատկանող միակ արժեքավոր իրը՝ մետաղյա ժամացույցը, ստացած կոպեկներով վազում պարահանդես՝ մի քիչ զվարճանալու։ Այդ հեռացումը միմյանցից չափազանց ծանր էր անդրադառնում Ռափայելի հոգուն։

Բայց դրա փոխարեն, տեսնելով Այբբենարանի, Գամառի վերջին տետրակների և տպագրվող Տաղարանի հաջողությունը, նրանց գործին հետաքրքրություն ցուցաբերեց Մովսես Բուդաղյանը, որն իր մոտ հրավիրելով Ռափայելին, առաջարկեց իր աջակցությունը տպարան բացելու գործում։ Նա նույնիսկ պատրաստակամություն հայտնեց ստեղծվելիք տպարանի իրավունքը բերել իր անվամբ և բոլոր դժվարությունների դեպքում միջնորդ լինել տերության առջև։ Նա ոչ միայն ինքը սկսեց ուշադիր հետևել Գամառ-Քաթիպա ընկերության գործունեությանը, այլ Ռափայելին ծանոթացրեց իր մի շարք ընկերների հետ, ինչպես նաև, տվեց Հաշտարխանում բնակվող իր եղբոր՝ Գրիգոր Բուդաղյանի հասցեն, հավատացնելով, որ նա գործակալի դեր կկատարի այնտեղ, տպագրությունները ցրելու և բաժանորդներ գտնելու հարցում։

Ինքնասեր երիտասարդը, չցանկանալով վիզը ծռած աղքատ երևալ նրա աչքում, հավատացրեց, որ իրենք արդեն ամեն ինչ նախապատրաստել են և կարոտ են միայն բարոյական օգնության, որը և մեծ շնորհակալությամբ ընդունում են. «Ես չուզացի նորան մեզ «աղքատ» ձևացնել, որ մի կերպով նորա շլինքից դուրս հանել տպարանի կարգավորությունը։ Բայց այդ ժամանակ նա բնավ չէր ունենալ այն հույսը և հար-

գանքը, որ այժմ ունի իր բոլոր круг-ով, հենց այն իմաստով, որ Թըշվառին ոչ ոք չի սիրիլ» (VI, 139)։ Այժմ անհրաժեշտ էր ավելի մեծացնել տպագրվող գրքերի քանակը, լայնացնել տարածման ցանցը և ստացված գումարը անհապաղ օգտագործել Բուդաղյանի անվամբ տպարան բացելու համար։

Սակայն նույն այդ Բուդաղյանը զգուշությամբ խորհուրդ էր տվել Ռափայելին ավելի ծանրակշիռ գործերով զբաղվելու, քան Գամառ-Քաթիպայի տետրակների հրատարակությունը, ասելով, որ այդ բարալիկ գրքույկները շատերի վրա երեխայական խաղի տպավորություն են գործում և ոչ իսկական, լուրջ գործի։ Լավ կլիներ, օրինակ ռուս-հայերեն մի բառարան պատրաստել և հրատարակել, կամ մեկ այլ խոշոր աշխատություն։ Ժողովրդի վստահությունը գրավելու համար անհրաժեշտ է կամ անուն ունենալ, կամ փող, իսկ անուն կարելի է վաստակել միայն մեծ գործ ստեղծելով և ոչ թե մանր-մունր գրքույկներ հրատարակելով, կամ երգեր գրելով։

Այդ խորհրդից հետո Պատկանյանն իր ամբողջ ուշադրությունը և ժամանակը նվիրում էր բառարանի համար բառ-հոդվածներ գրելով, աշխատելով օրական 6—10 ժամ անընդհատ (VI, 153)։ Նրան խիստ անհրաժեշտ էր գրավել Բուդաղյանի, Սանասարյանի և Իզմիրյանի վստահությունը տպարանի կարգավորության ու հրատարակությունները տարածելու համար։

Բացի դրանից, բառարանի տպագրությունը պիտի օգներ աշխարհաբարի տարածմանը, մաքրեր օտարազգի բառերով խճողված խոսակցական լեզուն, որոշակի կարգ ու կանոնի տակ առնելով այն։ Օգտագործելով դեռևս աշակերտական տարիներից պատրաստած բառ-հոդվածները, որոնք նա տեղադրել էր Այբբենարանի մեջ, ընդարձակելով և այբբենական կարգով դասավորելով դրանք, Պատկանյանը շատ շուտով պատրաստեց 600 բառ-հոդված, որն սկսվելով А տառից, վերջանում էր Бездумье բառով։ Ինչպես Այբբենարանի վերջում տրված բառարանում, այնպես էլ այստեղ գիտակցելով, որ երբեմն գրական հայերենով գրված մեկնությունները կարող են անհասկանալի մնալ ավելի լայն շրջանների համար, թարգմանության բաժնում Ռափայելը տալիս էր նաև ժողովրդի մեջ գործածական թուրքերեն բառերը, առնելով դրանք փակագծի մեջ և հատուկ աստղանիշով ցույց տալով օտար լինելը։ Բոլոր այն դարձվածքները և արտահայտությունները, որ նա կարդացել էր տարբեր գրքերում, տեղ էին գտնում այդ աշխատության մեջ։ Ընդամենը երկու ամսվա՝ 1856 թ. նոյեմբերի և դեկտեմբերի ընթացքում ար-

դեն պատրաստ էին ամբողջ A տառը և Б տառից որոշ բառ-հոդվածներ։ Անհրաժեշտ էր արագ ավարտել այդ աշխատանքը, որպեսզի Բուդաղյանին, Սանասարյանին և մյուս բոլորին ապացուցեր, որ իրենց «Ուխտ»-ը կարող է ամեն տեսակի աշխատանք հաջողությամբ կատարել. «...Մենք պիտի տպենք այնպիսի գիրք, որի վերա պիտի ցույց տանք как на капитальный труд... Եթե այս երկու գործը (իմա՝ տպարանի և բառարանի—Մ. Ս.) հաջողի, մենք կարող ենք դուրս գալ այն երեխայական կարգից, ուր մեզ դրել են ազգի տգիտությունը, նորա նախապաշարմունքը, մեր երեխայական միամտությունը և մի քանիսի նախանձը», (VI, 144),—բացատրում է նա Քանանյանին, թե ինչու է ձեռնարկել այդ անշնորհակալ և ծանր աշխատանքը։ Գիտակցելով, որ բառարանի տպագրությունը «Ուխտ»-ին ոչ մի նյութական օգուտ չի բերի, որովհետև ամբողջ տպագրությունը կնստի 2000 ռուբլի, և վաճառված օրինակները դեռևս երկար ժամանակ չեն կարողանա փակել ծախսը, բայց մտածում էր, որ արդեն պատրաստ Տաղարանի օգուտը կարելի է դնել բառարանի տպագրության վրա և այդպիսով հավասարակշռություն մտցնել գործի մեջ, իսկ օգուտը կլինի այն, որ «...ժողովուրդը կտեսնե, որ մենք կարող ենք նաև ծանրակշիռ գործերով ևս պարապել և ոչ թե Գամառի պես (նորա հասկացածով) երեխայական գործեր ցույց տալ» (VI, 145)։

Չնայած իր այս ծանրաբեռնվածությանը, Ռափայելը մի վերջին անգամ կազմեց Գամառ-Քաթիպայի հերթական տետրակը։ Այս տետրակի մեջ նա սկսեց տպագրել Խորենացու Պատմության մեջ պահպանված առասպելները «Հայոց պատմություն» ընդհանուր խորագրի տակ։ Հավատարիմ մնալով իր «երևելի արանց վարքը» ներկայացնելու ծրագրին, Պատկանյանը փայլուն կերպով կերտում է Հայոց նահապետ «խորագետ և քաջ» Հայկի կերպարը, որը «Ուրիշներու նման չուզեց ծառայաբար խոնարհել գլուխը այն մարդու առաջ, որ յուր փառամոլությամբ լցված մտին ուներ խլել յուր նմաններից այն աստվածատուր պարգևը, որի կորուստը անհնարին է շուտով և դյուրությամբ ետ դարձնելու-ազատությունը ուզում եմ ասել»[33]։ Հայկն իր փոքրաթիվ զորքով կարողացավ ջարդել Բելի հսկայական բանակին, որովհետև նրա ամեն մի մարտիկ լցված էր իր ազատությունը պահպանելու «սուրբ խորհրդով» և չէր վախենում մեռնել հանուն այդ գաղափարի։ «Ահա այդ հռչակավոր մարդու անվամբ մեր ազգը կոչվում է «Հայ» և մեր հայրենիքը՝ «Հայաստան», այսինքն՝ Հայերու աշխարհը, կամ բնիկ երկիրը։ Ուրեմն՝ Հայկն էր, որ

---

[33] «Գամառ-Քաթիպայի տետրակներ», 1857, 4(5), էջ 14։

տվեց ազգին անուն և տերություն»[34],— գրում էր Պատկանյանը։ Հոդվածը կոչ էր անում արժանի հետնորդը լինել քաջարի Նահապետի, որը չվախենալով և չընկճվելով թշնամու սպառազինված կատաղի զորքից, անվեհերությամբ դիմադիր կանգնեց նրանց՝ ազատեց իր հայրենիքը։

Եթե չընդհատվեին Գամառ-Քաթիպայի տետրակները, Պատկանյանը պիտի ընթերցողներին ներկայացներ իրար ետևից բոլոր առասպելական հերոսների սխրանքները, ապա անցներ պատմական անուններին, ինչպես նաև համաշխարհային և ռուս գործիչներին։ Այդ հսկայական աշխատանքի բեկորներից մեզ են հասել միայն վերոհիշյալ «Հայկ Նահապետը», Նապոլեոն Բոնապարտի, Մարտին Լյութերի, Պետրոս Մեծի կենսագրությունները, «Վիլհելմ Տելլ» անավարտ պատմվածքը և մի քանի աշխատությունների վերնագրերը («Գաբրիել ամրոցապետ», «Քրիստափոր Կոլումբոս», «Բենիամին Ֆրանկլին»)։ Ուշագրավ էր նաև 4(5)-րդ տետրակի մեջ տպագրված «Աշխարհաբար լեզու» հոդվածը, որը ուղղված էր Մսեր Մսերյանի 1856 թ. լույս ընծայած «Հիշատակարան կենաց և գործոց մեծանուն սլայազատաց Լազարյան տոհմի» աշխատության առաջաբանի մեջ աշխարհաբար լեզվի մասին հայտնած անբարենպաստ կարծիքի դեմ։ Իր այս հոդվածում Պատկանյանն ի մի է բերում, ամփոփում աշխարհաբարի մասին նախկինում հայտնած իր կարծիքները։

Պատասխանելով Մսերյանի այս մտահոգություններին, թե Ռուսահայաստանում մշակվող աշխարհաբարը բոլորովին օտար պիտի լինի նրա սահմաններից դուրս ապրող հայերի համար, Պատկանյանը հայտնում է այն միտքը, որ ժամանակի ընթացքում երկու հատվածների գրական լեզուները, եթե անգամ միություն չգան, ապա այնքան հասկանալի կլինեն, որ հավասարապես կօգտագործվեն երկու հատվածներում և սիրելի ու հարազատ կդառնան ամեն մի հայի համար, իսկ այս իրավիճակը ա՛լ ավելի կհարստացնի և կգեղեցկացնի յուրաքանչյուր հատվածի գրական լեզուն մյուսի հաշվին։ Իր համաձայնությունը հայտնելով Գևորգ Ախվերդյանի «Սայաթ-Նովայի խաղերի» առաջաբանում գրաբարի մասին հայտնած կարծիքի հետ, ըստ որի այն խոսակցական լեզու չի եղել անգամ հինգերորդ դարի հայերի համար, երբ ստեղծվել են ոսկեղենիկ գրաբարի փայլուն նմուշները, այլ հանդիսանալով բազմաթիվ բարբառներից մեկը, քրմերի ձեռքին և արքունիքի մեջ աճելով դարձել է գրավոր և կոկվել, հարստացել է նոր ձևերով ու դարձվածքներով։ Այսպիսով մայր լեզվից կամ գավառական լեզվից գոյացել ու մեծացել է մեր գրաբար լեզուն։ Ներկայումս այդ պրոցեսը տեղի է ունենում աշխարհաբարի հետ և չի անցնի շատ ժամանակ, որ անկանոն ու խառնի-

[34] Նույն տեղում։

խուռն խոսակցական լեզվից կգոյանա սքանչելի, հարուստ, ճոխ ու խաղացկուն աշխարհաբարը, որը կհամապատասխանի մեր ժամանակի պահանջներին։

* * *

Անցած երկու տարիների ընթացքում զգալիորեն լայնացել էին ռուս առաջավոր մտավորականության հետ Պատկանյանի ունեցած կապերը։ Բացի Աստաֆիևների տանը ձեռք բերած Գոնչարովի, Մայկովի, Զոտովի, Պոլոնսկու, Լոսևի, Տրիֆանովի բարեկամությունից, Ռափայելը կարողացել էր կապեր ստեղծել «Սովրեմեննիկ»-ի խմբագրության անդամների, մասնավորապես Իվան Պանաևի հետ, վերջինիս հայ ազգականների միջոցով[35]։ Անհավանական չէ նաև այն, որ «Սովրեմեննիկ»-ի խմբագրությունում նա ավելի սերտ հարաբերություններ ստեղծեց Դոբրոլյուբովի հետ, որին, երևի, ճանաչում էր, որպես իր եղբոր՝ Քերովբե Պատկանյանի համակուրսեցի, իսկ մի քանի ամիս անց, 1857 թ. հունիսին, Նեկրասովի Ռուսաստան վերադառնալուց հետո, հանդիպեց նաև իր բանաստեղծական հավատամքը մարմնավորողին՝ Նիկոլայ Ալեքսեևիչ Նեկրասովին։ 1857 թ. հուլիսի 30-ին գրած նամակը հենց ապացույցն է այն բանի, որ այդ օրերին էր նա այցելում «Սովրեմեննիկ»-ի խմբագրություն. «Սերաֆիմը պատվական տղա է և մեծ քանքարով։ Ես նորան այս շաբաթ կծանոթացնեմ Պանաևի հետ, Լալաևի միջնորդությամբ, և կարծեմ, որ դորա շարադրությունները ո՛չ վերջին տեղը կբռնեն «Современник»-ումը» (VI, 169),— հայտնում է նա արտասահմանում բուժվող Քերովբե Պատկանյանին, վերջինիս եղբոր կապակցությամբ։

Իր ամբողջ կյանքի ընթացքում Ռափայել Պատկանյանը պահեց հիացումը ռուս 60-ականների նկատմամբ։ Նրա արխիվում պահվում են Նեկրասովի, Դոբրոլյուբովի, Շևչենկոյի, Պիսեմսկու, Կուռոչկինի նկարները՝ իր ձեռքով արված մակագրություններով։ Ավելի վճռական նշանակություն ունեցավ Պատկանյանի համար նրա օրըստօրե աճող մտերմությունը Մովսես Բուդաղյանի հետ, որը մի քանի տարի հետո պիտի որակվեր որպես «ուլտրա-լիբերալ» և Պետերբուրգի հայ մտավորականության ամենաըմբոստ թևի ղեկավարներից ու «Երիտասարդ Հայաստան»

[35] «Սովրեմեննիկ»-ի խմբագիրներից մեկի՝ Իվան Պանաևի մայրը. Մարիա Ակիմովնա Պանաևան (1797—1881 թթ.) հայուհի էր՝ Լալայանների գերդաստանից։ Պանաևի հետ Պատկանյանին ծանոթացրել էր, հավանորեն, նրա մորեղբոր որդին՝ Մատվեյ Ստեպանովիչ Լալաևը, որը զինվորական լինելով հանդերձ զբաղվում էր գրականությամբ։

առաջադիմական կազմակերպության ստեղծողներից մեկը։ Մովսես Բուդաղյանը և իր համախոհները՝ Հովսեփ Իզմիրյանը, Մկրտիչ Սանասարյանը, Կարապետ Եզյանը, Սարգիս Ղահրամանյանը հաճախ հանդիպումներ էին ունենում Սանասարյանի բարեկամուհիներից մեկի տանը, որտեղ և 1857 թ. սկզբներին Մովսես Բուդաղյանի միջնորդությամբ մուտք ունեցավ նաև Ռափայել Պատկանյանը։ Տիկնոջ անունը, որը հետագայում մեծ դեր ունեցավ Ռափայելի կյանքում՝ Մարիա Գրիգորևնա Ստեպանովա էր։ Այդ հանդիպումների նպատակը «Երիտասարդ Իտալիա» հայտնի կազմակերպության օրինակով «Մանուկ Հայաստան» կամ «Երիտասարդ Հայաստան» ընկերության հիմնադրումն էր։ 1857 թ. մարտի 26-ին գրած նամակում Ռափայելը հայտնում է Գևորգ Քանանյանին, որ «Ամիս ու կես առաջ ես ծանոթացա մի պատվական կնկա հետ, որի մոտ հավաքվում են ընտիր մարդիկ, դորա անունը Мария Григорьевна Степанова է» (VI, 155)։ Որ Մարիա Ստեպանովայի մոտ եղած հանդիպումները նպատակ ունեին մի ինչ-որ խմբակցություն կազմելու, երևում է և 1857 թ. մարտին «Ի հրաժեշտ Ղահրամանյան պարոնին» և «Ի հրաժեշտ Իզմիրյանց պարոնին» բանաստեղծությունների մեջ եղած արտահայտություններից և Գաբրիել Պատկանյանի «Հիշատակարանում» բերված փոքր-ինչ խառը պատմությունից.

Մեր փոքրիկ խումբը (ընդգծումը մերն է—Մ. Ս.) անըսփոփ թողած,

Գընում ես, եղբայր, դու երկիր օտար.
Ա՜խ թե գիտենայիր որքա՜ն մեր յաչաց
Արցունք պիտ թափենք մենք քեզի համար

Թողիր հայրենիքդ, թողիր Հայաստան,
Պանդըխտի նման եկար դեպ Հյուսիս,
Բայց քու ջերմ հոգին անշեջ հրո նման
Միշտ բոցոտ մնաց ի սեր Հայ ազգիս։

Այնուհետև մաղթելով նրան հաջողություններ, Արևմուտքում ձեռնարկելիք նրա գործունեության համար, որը մեզ հայտնի չէ, թե ինչ բընույթի պիտի լիներ, Պատկանյանը վերջացնում է հետևյալ տողերով՝

Հավատա՛ դու միշտ մեր անկեղծ սիրույն,
Հուսա՛ քու բարի ըղձի կատարման,
Եվ որ քան զամեն բան է գերագույն՝
Սիրե՛ հար և միշտ մեր Մայրն Հայաստան

Առ ժամս փարատե՛ կարոտն Հայրենյաց,
Ի սեր քու Ազգին դարձի՛ր դու պանդուխտ,
Ազգասիրություն սովորի՛ր յազգաց
Դեպ ի որս ձգտի սրտին քո սուրբ ուխտ։[36] (I, 70, 71)

Հովսեփ Իզմիրյանին նվիրված բանաստեղծության մեջ, հեղինակը պատվիրում է նրան հայտնելու դրսի հայերին.

Որ կան և այստեղ շատ սրտեր վառած
Անշեջ հրով սիրո դեպ յուր Հայաստան,
Որ ամեն սրտից է սուրբ ապաստան.
Ոգի՛ տուր նոցա, քաջալերե՛ շատ,
Որ սիրով առ Հայն լինին միշտ առատ.
Չի կորուսանեն հոգին ազգության,
Չի ձգեն բերնից լեզուն Հայկական։

(I, 72)

Բանաստեղծության մեջ հիշատակված «փոքրիկ խումբը» իր հավաքույթներում հաճախակի էր անդրադառնում ինչպես Հայաստանը ազատագրելու, այնպես էլ ժողովրդի մեջ ազգասիրության և հայրենասիրության հաստատուն արմատներ գցելու ուղիների մասին։ Առաջին հերթին, հավանորեն, որոշվեց կարգավորել տպարանի գործը, այնուհետև թույլտվություն ստանալ սեփական ամենօրյա լրագիր հրատարակելու համար։ Իզմիրյանին տրված հանձնարարություններից մեկն էլ Գերմանիայից մեծ երկաթյա մամուլի ձեռքբերումն էր տպարանի համար։ Թե տպարանի, թե լրագրի թույլտվությունը պիտի լինեին Մովսես Բուդաղյանի անվամբ։ Ռափայելը, ոգևորված խմբի ծրագրերով, ինչպես նաև ունեոր ու ազդեցիկ անդամներով, որոնց պակասը նա, ավա՜ղ, զգացել էր երկու տարիների տաժանակիր գործունեության ընթացքում, որոշեց Գամառ-Քաթիպան տարրալուծել այս նոր խմբակցության մեջ, ինչպես նաև ընդգրկել դրա մեջ նորանոր անդամների. «Ռափայելը, որ Սանասարյանի, Բուդաղյանի և Եզյանի հետ կամենում էր սերտ միավորվել, որ նոցա միասնությունը լինի մի մեծ ընկերության հիմն, ուր ընդ փույթ

[36] Այս և «Ի հրաժեշտ Իզմիրյանց պարոնին» բանաստեղծությունները տպագրվել են «Մասյաց Աղավնի» ամսագրում, 1857 թ. № 7-ում, որի խմբագիրներ Սարգիս Թեոդորյանին և Գաբրիել Այվազովսկուն են հանձնել տպագրելու համար Իզմիրյանն ու Ղահրամանյանը։ Խմբագրությունը բանաստեղծությունը տպագրել է հետևյալ ծանոթությամբ.

պիտի ավելանային և Քերովբե Պատկանյան և Բուդաղյան և Սուլթանշահյանց և Միանսարյան և սոքա վերջինքն խոստացել էին այս ընկերության մեջ հրավիրել և Խաչատուր աղա Լազարյանին և Հովհաննես Դավթյան Դիլանյանին և Սիմեոն Դավթյան Աբամելիքյանին, վասնորո և յուր գաղափարներն թե բանիվ և թե գրով շռայլում էր»[37]։

Խմբի անդամներից ամենաավագը Մովսես Բուդաղյանն էր, և պետք է ենթադրել, որ նա էր խմբի ոգեշնչողն ու ղեկավարը։ Ծնված լինելով Աստրախանում, 1805 թ. ունևոր ընտանիքում, նա 1820 թ. արդեն ավարտել էր Աղաբաբյան դպրոցը և Կազանի համալսարանի խորհրդի որոշմամբ կարգվել ուսուցիչ՝ նույն դպրոցում։ 1827—29 թթ. սովորել էր Խարկովի համալսարանում, ապա մեկնել բանակ՝ ռուս-թուրքական պատերազմին մասնակցելու։ Կռվել էր Էրզրումի ճակատամարտում, իսկ պատերազմական գործողությունները վերջանալուց հետո մտել լեռնականների դեմ կռվող արշավախմբերը։ 1831 թ. Անդրկովկասի կառավարիչ գեներալ-լեյտենանտ Պանկրատևի հրամանով փոխադրվել էր Անդրկովկասյան դպրոցների գերատեսչություն և նշանակվել Ախալցխայի գավառական դպրոցի ուսուցիչ և վերակացու, ապա նույն պաշտոնով անցել Շուշի։ 1838 թ. նշանակվել էր Անդրկովկասի պետական ունեցվածքը ստուգող բարձրագույն հրամանով կազմված հանձնաժողովի անդամ, իսկ երկու տարի անց՝ 1840 թ. թողել էր Կովկասը և փոխադրվել Պետերբուրգ, աշխատանքի անցնելով փոստային գերատեսչությունում։ Հավանորեն տոհմական հարստությունը դեռևս նրան հնարավորություն էր ընձեռում Պետերբուրգում անկախ կյանք վայելելու։ Ազգակցական ու խնամիական կապերը Պետերբուրգի նշանավոր հայ ընտանիքների հետ[38] նրան թույլ էին տալիս ել ու մուտ ունենալ ռուս բարձր հասարակության

«Ազգասեր Հայկազունք Ռուսաստանի

Ազգասիրությունը այնպիսի լույս մը եղած է այս տարիներս նաև մեր ազգին մեջ, որ անով կփայլին, կըշողշողան աշխարհիս ամեն կողմը գտնված հայերն ալ։ Ռուսաստանեն եկան Փարիզ մոտերս, ուրիշ քանի մը ազգասերներե զատ, շուշեցի պ. Սարգիս Ղահրամանյան Հովհաննիսյանց եռանդուն և խոհական երիտասարդը և ղզլարցի Հովսեփ Իզմիրյանցը, որոնց ազգասիրությանը մենք ալ ականատես վկա ըլլալով, սիրով կըհրատարակենք հոս Պատկանյան պ. Ռափայելին անոնց Փեթրպուրկեն ճամփա ելած ժամանակը շարադրած երկու ոտանավորները, որ թե հեղինակին պատիվ կբերեն և թե այն ազգասեր բարեկամներուն»։

37 «Հիշատակարան», էջ 651։

38 Մեծահարուստ վաճառական Նիկողայոս Շանշյանը և Բուդաղյանը քենակալներ էին, իսկ նույնպես անվանի վաճառական Աստվածատուր Բողդանյանը նրա մորաքրոջ որդին էր և միևնույն ժամանակ Կարապետ Եզյանի քրոջ ամուսինը։

մեջ։ Ազգասիրական առաջին պատվաստները նա ստացել էր դեռևս վաղ պատանեկության տարիներին, Սերովբե վարժապետին աշակերտելու ընթացքում—այս այդ տրամադրությունները նրա մոտ ավելի ձև և բովանդակություն էին ստացել ռուս-թուրքական պատերազմի օրերին, երբ նա իր աչքերով տեսել էր Էրզրումի հայ ազգաբնակչության տառապանքները թուրքական տիրապետության պայմաններում, մասնակցել նրանց ազատագրման արշավանքներին, ոգևորվել ռուսների տիրապետության տակ անցնելու և անկախ «հայկական մարզ» դառնալու հեռանկարներով, բայց և խոր հիասթափություն ապրել ցարական ազգահալած քաղաքականությունից Կովկասի և Հայաստանի դպրոցներում աշխատելու տարիներին։

Դժվար է հիմա վերականգնել Բուդաղյանի՝ Կովկասը թողնելու պատճառները, սակայն, պետք է ենթադրել, որ այն չի կատարվել խաղաղ իրադրություններում։ 1859 թ. նրան թերթ հրատարակելու մերժումը հենց թելադրված էր Կովկասի փոխարքայի կողմից, ուրեմն, նրա ունեցած կապերը և նրա անձնավորությունը քաջ հայտնի էին Կովկասում և ակնհայտորեն վստահություն չէին ներշնչում կառավարությանը[39]։

* * *

Առաջին իսկ հանդիպումների ժամանակ, հմայված «Փոքրիկ խմբի» հանդիպավայրի երիտասարդ տանտիրուհու կրթությամբ, ճարտար լեզվով, ղավանած գաղափարներով, գուցե և գեղեցկությամբ, երիտասարդ բանաստեղծը անձնատուր եղավ այս նոր զգացմունքին։ Այն երկա՛ր տարիներ ուղեկցեց նրան, 60-ական թվականների սկզբին փոխվելով սի-

[39] 1859 թ. դեկտեմբերի 8-ին Մովսես Բուդաղյանը Պետերբուրգի Գրաքննչական կոմիտեին դիմում է ներկայացնում «Քաղաքական և գրական լրագիր» վերնագրով, ամիսը երկու անգամ հրատարակվելիք թերթի թույլտվություն ստանալու համար (ЦГИАЛ, ֆ. 772, ցուց. 1, գ. 5059, 1), որը պիտի արտահայտեր «Երիտասարդ Հայաստան» խմբակցության գաղափարները։ Ըստ դիմումին կցած ծրագրի, թերթը պիտի ունենար հետևյալ բաժինները.

1) Եվրոպայում և երկրի այլ վայրերում կատարվող իրադարձությունների քաղաքական տեսություն. 2) Գիտության տարբեր բնագավառների մասին հոդվածներ. 3) Արձակ և չափածո գրական ստեղծագործություններ (ЦГИАЛ, ֆ. 772, ցուց. 1, գ. 5059, 2)։

1859 թ. դեկտեմբերի 2-ին Լուսավորության մինիստրի ստորագրությամբ գրություններ են ուղարկվում Արտաքին գործերի մինիստրին, փոստային գերատեսչության տնօրենին և III բաժանմունքի պետին, հրատարակվելիք լրագրի վերաբերյալ նրանց կարծիքը իմանալու համար։ Արտաքին գործերի մինիստրությունից և փոստային գերատեսչությունից ստացված պատասխանները բարենպաստ էին Մովսես Բուդաղյանի

րային կապի և ընդհատվեց միայն Ռափայել Պատկանյանի ամուսնությամբ։ Նրան էին ձոնված «Իմ սոխակին» և «Օտար օրիորդ և հայ պատանի» ծրագրային բանաստեղծությունները, այդ նրան էր դառնությամբ ասել բանաստեղծը. «Բայց ի՞նչ, դու չես հասկանալ իմ սրտամաշ դարդերը, մի ջանար, ինձ չեն սփոփիլ Թըշիդ փայլուն վարդերը»։ Եվ այդ ռուս աղջիկը զսպելով իր մեջ կորստի ծանր զգացումը, օրհնել էր նրա ընտրած ճանապարհը և «լաց ու ժպիտ նրսին» ընդմիշտ հեռացել նրա կյանքից, դեռևս երկար տարիներ պահելով սրտում իր վաղեմի սիրահարի կերպարը։ Տարիներ անց, 1874 թ. Մարիա Ստեպանովան նամակով դիմել էր նրա հորը՝ Գաբրիել Պատկանյանին և պատմել իրենց հարաբերությունների մասին։ «Տեր Գաբրիելն այս յուր որդվո Ռափայելի և Սանասարյանի մեջ եղած շփոթների մասին տեղեկություն ստացավ 1874 թ., երբ այն օրիորդ Ստեպանովան մի այլ պատճառով առանձին նամակով տվեց նորան, այսինքն Տեր Գաբրիելին, հարևանցի հակիրճ տեղեկություն,— պատմում է «Հիշատակարան»-ում Գաբրիել Պատկանյանը։ Ահա մի գեղեցիկ ձմեռային առավոտ քաղաքային թղթաբերն Տեր-Գաբրիելի ձեռքն մի փոքրիկ ծրար տվեց և ինքն անհետացավ։ Ծրարի մեջ կար մի ռուսերեն գեղեցիկ ձեռագրով պարզ գրած նամակ, ստորագրված՝ Մարիա Ստեպանովա։ Այս Մարիա Ստեպանովան գրել էր, թե թեպետ Ձերդ Սրբությունն ինձ չէ ճանաչում, բայց իմացեք, որ Ռափայել որդուդ վերա շատ երախտիք ունիմ։ Ես նորա քանքարն գնահատելով, նորան, առաջ ծածուկ և ապա հայտնի, պաշտպան կանգնեցի, շատ հզոր թշնամիներ հարուցի իմ դեմ և Ռափայելի հետ միասին շատ հալածանք կրեցի և միայն այն ժամանակ նորանից հեռացա, երբ մի առավոտ նորա բնակարանի մեջ քեզ հետ հանդիպեցանք...»[40]։ Թե ինչքան էր հմայված

համար, մինչդեռ III բաժանմունքի տնօրեն գեներալ-ադյուտանտ իշխան Դոլգորուկովը առաջարկում էր ստանալ նաև Կովկասի փոխարքայի թույլտվությունը, պատճառաբանելով, որ թերթի հիմնական ընթերցողները պիտի լինեին Կովկասի բնակիչները (ЦГИАЛ, ֆ. 772, ցուց. 1, գ. 5059, 13)։

Հունվարի 15-ին Կովկաս ուղարկված հարցումից և այնտեղից նույն ամսի 28-ին ստացված պատասխանից հետո, Գրաքննչական գլխավոր կոմիտեն 1860 թ. փետրվարի 5-ին որոշում է ընդունում մերժել Մովսես Բուղաղյանին թերթ հրատարակելու իրավունք ստանալու խնդրում, նկատի ունենալով «հատուկ պատճառները» (ЦГИАЛ, ֆ. 772, ցուց. 1, գ. 5059, 36)։

Չնայած գործում չկա մերժման որոշակի պատճառը, սակայն, կասկած չի հարուցում այն փաստը, որ այն եղել է Կովկասի փոխարքայի պատասխանի ստացումից հետո, որտեղ ըստ երևույթին, տրված էր Բուղաղյանի Կովկասում ունեցած գործունեության և կապերի վստահություն չներշնչող բնութագիրը։

[40] «Հիշատակարան», էջ 659։

Ռաֆայել Պատկանյանը իր նոր բարեկամներով և մասնավորապես Մարիա Ստեպանովայով, կարելի է եզրակացնել, նրա մի նամակից, գրված իրենց ծանոթության առաջին ամիսների ընթացքում։ Առաջին հանդիպումներից մեկուկես ամիս անց օրիորդ Ստեպանովան դիմում է Ռաֆայելին նրա հայ ծանոթների միջոցով իր բարեկամներից մեկի համար դրամ հայթայթելու թախանձանքով։ Ցանկանալով անպայման կատարել նոր բարեկամուհու խնդրանքը, Պատկանյանը դիմում է ոմն Մամիկոնովի, գրավ դնում նրա մոտ իր նոր լույս ընծայված Տաղարանից 600 և Այբբենարանից 1000 օրինակ ու դրամը առանց որևէ պարտավորագրի, ուղարկում իրեն համար միանգամայն անծանոթ մարդկանց՝ Մոսկվա։ Այս նամակից կարելի է եզրակացնել նաև թե որտեղից էր տեղեկություն ստանում «Մոսկովսկիյե վեդոմոստի» ռեակցիոն թերթի խմբագիր Կատկովը «Երիտասարդ Հայաստան» խմբակցության գոյության, նրա ծրագրերի և, մասնավորապես, այդ խմբակցության ներսում Ռաֆայել Պատկանյանի կատարած դերի ու քարոզած գաղափարների մասին։ Հայտնի է այն փաստը, որ 1865 թ. նրա թերթը հրատարակեց մի հոդված այդ խմբակցության գոյության մասին և Թիֆլիսում տեղի ունեցած համքարական ապստամբությունը կապեց այդ խմբակցության գործունեության հետ[41]։ «Սանկտ Պետերբուրգսկիյե վեդոմոստի» թերթում տպագրված Կարապետ Եզյանի հերքողական պատասխանին Կատկովը պատասխանում էր, որ «Երիտասարդ Հայաստան» անունն իր հնարածը չէ, այդ մասին շշնջում են ամենքը և հայկական սեպարատիզմի գաղափարը արծարծվում է անգամ ընթացիկ հայ գրականության մեջ։ Եվ ապացուցելու համար իր դրույթները, Կատկովը մեջբերումներ է կատարում Ռաֆայել Պատկանյանի «Օտար օրիորդ և հայ պատանի» բանաստեղծությունից, ուր հայ երիտասարդությունը հենց Մասիսի ճակատին ամրացնում է «Մանուկ Հայաստանի» դրոշը, երազում ինքնավարության ու ազատ Հայաստանի մասին։ Ապա անդրադառնալով Լոնդոնի պրոպագանդիստների և նրանց հետ հայերի ունեցած կապերին, նրանց համագործակցած «խելակորույս և ստահակ մեկին, որը ուզում էր գլուխ բերել Հայաստանը վերականգնելու պես մի բան», Կատկովը, որպես հայերի ինքնուրույնության ձգտելու ապացույց, մատնանշում է նաև այն, որ վերջերս «Երիտասարդ հայերն իրենց ազգանվան ով վերջավորությունը որոշ ժամանակներից ի վեր սկսել են յանցի վերածել և պահպանել այդ ձևը նույնիսկ ռուսերեն ստորագրելիս»[42]։

[41] «Մոսկովսկիյե վեդոմոստի», 1865, № 194 և Ա. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 15։

[42] Ա. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 15—16։

Անկասկած, Կատկովը նկատի ուներ Ռափայել Պատկանյանին, որն իր մտերիմ բարեկամ Մելքոն Փանյանին 1858 թ. հոկտեմբերի 15-ին գրած նամակում նախազգուշացրել էր. «Իմ ազգանունն ռուսերեն ևս Պատկանյան, Патканян» (VI, 204)։ Որտեղի՞ց էին հայտնի Կատկովին այդ մանրամասները, խմբակի ծրագրերը, գրականության մեջ ներթափանցած նրա գաղափարները, խիստ գաղտնի պահվող Լոնդոնի պրոպագանդիստների գործը և Նալբանդյանի՝ նրանց հետ ունեցած առնչությունները, անգամ նրա անդամներից մեկի, ռուսերեն իր ազգանունը յան վերջավորությամբ գրելու պահանջը։

Վերոհիշյալ նամակում, որտեղ Պատկանյանը հայտնում էր Քանանյանին Մարիա Ստեպանովայի և նրա բարեկամների հետ ծանոթանալու մասին, կար հիշատակություն նաև տանտիրուհու մոսկովյան ծանոթներից մեկի և Կատկովի կապի մասին, կար նաև Կատկովի տնային հասցեն, որը գտնվում էր Հայկական փողոցում, Լազարյան տպարանի դիմաց։

Այսպիսով, «Երիտասարդ Հայաստան» խմբակցությունը, որի կազմավորումը և գոյությունը մինչև այժմ կապում էին 60-ական թվականների հետ[43], ստեղծվել էր Պետերբուրգում դեռևս 1857 թ. սկզբներին, ընդլայնել էր կապերը, ընդգրկելով իր մեջ թե՛ պետերբուրգցինակ, թե՛ մոսկվացի, թե՛ Անդրկովկասի հայ մտավորականներին և առժամանակ դադարեցրել իր աշխատանքները 1860-ական թթ. վերջերին 80-ական թթ. «Հայասեր-Ազգասեր» խմբակցության մեջ վերածնվելու համար։

Սկսելով իր գործունեությունը Գամառ-Քաթիպա խմբակցության մեջ, Ռափայել Պատկանյանն իր փայփայած ծրագրերը՝ ազգը համախմբելու, ընդհանուր ազգային լեզու ստեղծելու, ազգային ինքնագիտակցություն զարգացնելու, հայրենասիրական զգացմունքներ արթնացնելու և ապա զինված ապստամբության միջոցով անկախ, ազատ Հայաստան ստեղծելու գաղափարները այնուհետև կապեց «Երիտասարդ Հայաստան» նորաստեղծ խմբակցության հետ։ Անցած երկու տարիների՝ 1855—57 թթ. ընթացքում անմարդկային ջանքեր գործադրելով, նա կարողացավ լույս ընծայել «Գամառ-Քաթիպայի արձակ և չափաբերական աշխատությունների» հինգ տետրակ, մեկ «Ազգային երգարան», մեկ «Այբբենարան», գրեց բազմաթիվ հայրենասիրական բանաստեղծություններ, որոնցից «Արաքսի արտասուքն» ու «Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը» դարձան հայ գրականության մնայուն արժեքներ, գրեց աշխարհաբար լեզվի

[43] Տե՛ս Ա. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 15։

անհրաժեշտությունն ապացուցող մի քանի հոդվածներ, հայ ընթերցողին ծանոթացրեց Նեկրասովի բանաստեղծական լավագույն նմուշների հետ, կարողացավ գտնել համախոհներ և հետնորդներ, տպագրեց Քերովբե Պատկանյանի առաջին պոեմն ու Գևորգ Դոդոխյանի, Հովհաննես Սահրադյանի բանաստեղծությունները, հորինեց ու հավաքեց բազմաթիվ մեղեդիներ հայրենասիրական ոտանավորների համար, թարգմանեց ու տըպագրության պատրաստեց «Ռոբինզոն Կրուզո» արկածային վեպը և Եզովպոսի առակները՝ մանուկների համար։

Եվ այդ բոլորը մեն-մենակ, առանց կանոնավոր եկամտի, առանց խրախուսանքի ու համարյա առանց օգնության։ «...Այս երկու տարվա մեջ շատ եմ աշխատել, լսո՞ւմ ես, շատ եմ աշխատել, եթե չկկարողանամ այն ամենը լույս ընծայել... Գոնե իմ КИПЫ ձեռագիրները քեզ կապացուցանեն, որ այդքան օգտավետ գործերով ժամանակ անցնողը բացի ազնիվ զգացմունքից ուրիշ շարժառիթ չիպիտի ունենար յուր կյանքումը,— գրում է նա Քանանյանին, տետրակները դադարեցնելու իր որոշումից առաջ։— Աստված ինձ թող չարաչար պատուհասե, եթե մի ժամ ես մոռացած լինիմ այն օրհասական երեկոյան խոսակցությունը, որ մենք երեքս ունեցանք Թիմուրյանի սենյակումը. եթե չեմ կարողացել 1000 անգամ ավելի անելու, քան թե արել եմ, պատճառը և միակ պատճառը չքավորությունս է եղել։ Քանանյան, ես ինչ որ ունեի, տվի մեր ուխտին, որքան ույժ կար մեջս, թափեցի, որքան խոսք ունեի բերանումս, հորդորեցի մարդոց դեպի մեր գործին գործակցություն. դուք էլ արեք, որքան կամեցաք, բայց արի՞ք արդյոք, որքան կարողացաք...» (VI, 163—4) գրում է նա դառնությամբ։

Թիմուրյանը հայրենիք մեկնելուց հետո համարյա կտրել էր կապերը ընկերների հետ և բացի մի քանի հույսերով ու սին խոստումներով լի նամակներից ոչ մի գործունեություն չէր ծավալում, իսկ Քանանյանը ավելի հետամուտ իր անձնական գործերին, անում էր «Ուխտ»-ի համար այն, ինչ հնարավոր էր համարում, առանց ձեռնարկելու անհնարինն, ինչպես անում և ցանկանում էր տեսնել Ռափայելը, որի համար գոյություն չուներ անձնական բարօրություն, ապահով կյանքի հեռանկար, հանգիստ ու բարեկեցիկ կյանք։ Ինչի էլ նվիրվեր նա, նվիրվում էր ամբողջ էությամբ տեղ չթողնելով այլ զգացմունքների ու գործերի համար։ Համալսարանական պարապմունքներն իսկ, որոնց նա Պետերբուրգ գալուն պես որոշել էր պատշաճ ուշադրություն դարձնել, նրան դարձյալ առանձնապես չէին հետաքրքրում։

Սակայն ով շատ է տալիս, նրանից շատ են պահանջում։ Թե՛ Քանանյանը, թե՛ Թիմուրյանը իրենք համարյա ոչինչ չանելով սրբազան «Ուխտ»-ի համար, անընդհատ պահանջներ էին ներկայացնում Ռափայել Պատկանյանին, դժգոհում նրա կատարած աշխատանքի որակից, տպագրության անփութությունից, ժամկետների խախտումից, իսկ վերջինս միանգամայն իրավացի համարելով նրանց դժգոհությունները, արդարանում էր միայն, խոստանում այնուհետև ավելի ուշադիր լինել։ Եվ նոր, ավելի հզոր, ավելի մեծ ընկերության մեջ ընդգրկվելու հեռանկարը խիստ ժամանակին եղավ Պատկանյանի համար, որը տակավին իր ընկերներից գաղտնի պահելով հիշյալ հանգամանքը, սկսեց հաճախել «Երիտասարդ Հայաստան» խմբակցության հավաքույթներին, երազելով նրա մեջ Գամառ-Քաթիպայի անդամներին, մասնավորապես Գևորգ Քանանյանին ևս ընդգրկելու մասին։

ԳԼՈՒԽ ՆՐՐՈՐԴ

«ՆՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅԱՍՏԱՆ», «ՀՅՈՒՍԻՍԱՓԱՅԼ»

1857 թ. բարենպաստ եղավ Ռափայել Պատկանյանի և Գամառ-Քաթիպա ընկերության համար ոչ միայն նոր ծանոթությունների, նոր հույսերի ու հեռանկարների տեսանկյունից, այլ նաև ճանաչման։ Առաջինը Պատկանյանի բանաստեղծական քանքարի մասին ջերմորեն արտահայտվեցին Գաբրիել Այվազովսկին և Սարգիս Թեոդորյանը, որոնք ծանոթացել էին Գամառ-Քաթիպա ընկերության աշխատանքներին «Տաղարանի» էջերում տպագրված բանաստեղծություններից։ Մասնավորապես նրանց հիացրել էր «Արաքսի արտասուքը» բանաստեղծությունը, որը ընկալվել էր որպես ընդհանուրի ստեղծագործություն, «Ուխտ»-ի արդասիք։ Հայագետ Դյուլորիեն ծանոթանալով այդ բանաստեղծության հետ, զարմացմամբ բացականչել էր՝ «Բավական է կարդալ «Արաքսի արտասուքը», որ իմանաս, թե քանի անգամ բարձր են բուն հայերը՝ կեղծյալ կիսահայ վենետիկցիներից» (VI, 162), և պատրաստակամություն հայտնել թարգմանելու այն իր «Revue d'orient» ամսագրում տպագրելու համար։ Այվազովսկուց իմանալով, որ «Ուխտ»-ն ունի «մի ավելի գերազանց բանաստեղծական հատված՝ «Վարդան Մամիկոնյան», որը տակավին անտիպ է, Դյուլորիեն խնդրել էր իրեն ուղարկել ձեռագիրը թարգմանելու և տպագրելու համար, ինչպես նաև խոստացել դրամ առաքել հօգուտ «Ուխտ»-ի և նորակազմ տպարանի։

Ծանոթացել էր «Ուխտ»-ի աշխատանքների հետ նաև ակադեմիկոս Բրոսսեն և իր գոհունակությունը հայտնել ինչպես կատարված գործի, այնպես էլ ընտիր բանաստեղծական հատվածների կապակցությամբ։ «...Մի օր... այնքան օգտավետ կլինեք ձեր ազգին, որ բոլոր հայոց գիտնականք միացած, չեն կարող նույնը կատարելու» (VI, 162)։ Իմանալով, որ մի բուռ երիտասարդներ գործը սկսել են 30 ռուբլով և այժմ ունեն ոչ միայն տպագրված գրքեր, այլ նաև տպարանական անհրաժեշտ պարագաներ, Բրոսսեն կանխագուշակել էր. «Դուք, միայն դուք կլինեք պատճառը, որ մի ժամանակ բուն Հայաստանի մեջ կունենաք համալսարան,

թատրոն, ճեմարան գիտության։ Ա՜խ,— ավելացրել էր նա,— երանի՜ ձեր ազգին, որ ունի ձեր պես կարեկից աղքատ պատանիներ։ Երանի նորա, որ դուք և ոչ տերությունն սկսեց ջանալ նորա բարոյական կրթության համար։ Ձեզմով ազգը մի անգամով կբարձրանա en masse և ոչ դանդաղ և մի-մի։ Դուք ավել բարձր եք Ձեր ազնիվ և անկեղծ զգացմունքով... քան թե մեր ակադեմիկները» (VI, 163)։

Բրոսսեն նույնիսկ ցանկություն էր հայտնել իր բոլոր աշխատությունները տպագրել Գամառ-Քաթիպա ընկերության տպարանում, որը դեռևս միայն Ռափայելի երևակայության մեջ էր լիովին պատրաստ։ Նույնպիսի ցանկություն էր հայտնել նաև Մկրտիչ Բերոյանը, քանի որ պատրաստվում էր ձեռնարկելու իր բառարանի տպագրությունը։ Այդ տպարանում էր նաև նախատեսվում լույս ընծայել Բուդաղյանի «Քաղաքական և գրական լրագիր»-ը։ Չնայած նրան, որ «Երիտասարդ Հայաստան» ընկերության ունևոր ու ազդեցիկ անդամները կարող էին ավելի առատաձեռն լինել տպարանի, հրատարակությունների և այլ ձեռնարկությունների նկատմամբ, քան երեք աղքատիկ ուսանողները, այդ գործի հոգացողությունը դարձյալ ծանրացած էր Ռափայելի ուսերին, որը մերթ մեկից էր պարտք հայթայթում նոր մայրեր գնելու համար, մերթ դիմում հորը, նրա մոտ մնացած տառատեսակների առաքման խնդրանքով, մերթ իր ունեցած վերջին կոպեկները հավաքում օգտագործված հին մամուլ առնելու համար։

1857 թ. մարտի համարում «Մասյաց Աղավնի»-ն տպագրեց առաջին գրախոսականը «Ազգային երգարան Հայոց»-ի մասին, մեծագույն բերկրությամբ լցնելով Ռափայելի հոգին։ Համընդհանուր ճանաչումը նոր եռանդ է հաղորդում Պատկանյանին, որը, ըստ իր սովորության, միանգամից ձեռնարկում է մի քանի աշխատանք։ Դեռևս հունվար ամսից նա սկսել էր Նապոլեոն Բոնապարտի ընդարձակ կենսագրությունն ու գործունեության ուսումնասիրությունը, հայ երիտասարդ սերնդին առանձին գրքով ներկայացնելու միտումով։ Ֆրանսիական հեղափոխության պատմությունը և Նապոլեոն Բոնապարտի դարաշրջանը պատկերացնելու համար նա ձեռք է բերում այդ հարցի վերաբերյալ ասպարեզի վրա եղած բոլոր աշխատությունները[1]։

[1] Պատկանյանի անձնական գրադարանում պահպանված են ֆրանսերեն լեզվով 1845 թ. հրատարակված Թիերի «Հյուպատոսության և կայսրության պատմությունը», «Ֆրանսիական հեղափոխության պատմությունը», 1851 թ. հրատարակված Լամարտինի «Ժիրոնդայի պատմությունը», 1858 թ. հրատարակված «Նապոլեոնի նամակագրությունը», 1842 թ.՝ Լիբրիի «Հիշողություններ Նապոլեոնի երիտասարդության մասին», 1853 թ.՝ Գարուրի «Ֆրանսիական կայսր Նապոլեոն առաջինի պատմությունը»։ Այս բոլոր

Ուսումնասիրելով և քաղվածքներ կատարելով հիշյալ գրքերից, նա 1857 թ. մարտ-ապրիլ ամիսներին սկսում է շարադրել իր առաջին պատմական աշխատությունը։ Սակայն նրա հիմնական նպատակը դարձյալ մնում էր ուժեղ անհատի, իր հայրենիքը վերափոխողի, ազատագրողի խրախուսիչ օրինակի պատկերումը, այդ օրինակով նոր սերնդի ոգեշնչման ու դաստիարակման գործը։ Օգտագործելով Նապոլեոն Բոնապարտի պատմության դրվագները, Պատկանյանը ոչ միայն փառաբանում էր նրա գործը, այլ նաև հիշեցնում իր ազգակիցներին, որ վճռական միջոցների դիմելով հնարավոր է հասնել հայրենիքի ազատագրությանը։ Խոսելով Հայիթի կղզում 1801—1804 թթ. նեգրերի և մուլատների ապստամբության մասին, որոնք ջախջախելով գեներալ Լեկլերի առաջնորդությամբ Հայիթի ուղարկված զորքը, կարողացան 1804 թ. հայտարարել կղզու անկախությունը, Պատկանյանը գրում է. «Հայիթումը մի քանի կիսամերկ վայրագասանք, մի քանի արհամարհված թշվառ սևամորթք, մի քանի ազատված ստրուկներ, որոնց մարմինը տակավին կրում էր խարազանի արենջարդ հետքերը, ցույց տվեցին աշխարհին, թե ինչեր կարող է գործել մի ազգ, եթե ազգովին ոտքի կանգներ, ապստամբեր օտարի բռնակալության դեմ»[2]։

Եզրակացությունը պարզ էր, եթե դրան հասել է երեկվա կիսավայրենի ստրուկը, ապա դարերի պատմություն ու մշակույթ ունեցող հայ ժողովուրդը, որի նախնիները բազմիցս ելել են օտար բռնակալների դեմ և իրենց մահով ազատագրել են հայրենին, այսօր ևս կարող է համախմբվել և ոտքի ելնել օտար բռնապետության դեմ։ Այս ծանր ու երկարատև տքնություն պահանջող աշխատանքի հետ միասին Պատկանյանն այդ օրերին (1857 թ. փետրվարին) թարգմանում է նաև Բայրոնի «Վերջին ոտանավորը», որն անգլիացի բանաստեղծի անվեհեր գործի նկատմամբ ունեցած նրա մեծագույն հիացման արտահայտումն էր, թուրք բռնակալության դեմ սուր բարձրացրած փոքրաթիվ հույն ժողովրդի սխրանքի գովերգումը։ Եվ անգլիացի մեծ բանաստեղծի հետ միասին նա, կարծես քարոզում էր իր հայրենակիցներին ոտքի ելնել թուրք բռնակալների դեմ, «զարկել արիացած» և հայրենի օջախ վերադառնալ, «կամ հետը, կամ վրան» հորդորում հանուն հայրենիքի մեռնել հսկա, քաջ մար-

---

գրքերը կրում են Պատկանյանի ձեռքով լուսանցքներում կատարած նշումներ, իսկ Գաբուրի գրքի վրա նույնիսկ գրված է ձեռք բերման թվականը և օրը՝ 1857 թ. հունվարի 17-ը։

[2] «Հյուսիսափայլ», 1860, № 10։

դու նման, նրա հետ միասին երազում արդար դաշտում զինվորի շիրիմ գտնելը դարձնել իր կյանքի նպատակը[3]։

Նիկոլայ Տրիֆանովի նոր ընկերուհու՝ օրիորդ Մերիի տված անգլե-

---

[3] Բայրոնի այս անզուգական բանաստեղծության թարգմանությունը ներկայացվում է առաջին անգամ։ 1857 թ. փետրվարի 12-ին Գևորգ Քանանյանին գրած նամակի բնագիրը, որով նա ուղարկել էր ընկերոջը Միսսալոնգիում գրած Մեծ անգլիացու «Վերջին ոտանավորի» թարգմանությունը, ներկայումս կորած է։ Մեքենագիր պատճենը մենք հայտնաբերեցինք Երվանդ Շահազիզի կազմած «Դիվանի» մեջ, ցավոք, արդեն 6-րդ հատորի տպագրությունից հետո։ Ուստի այստեղ տալիս ենք բանաստեղծության թարգմանությունը ամբողջությամբ։

ա Ով սիրտ իմ, սիրտ, բավ է քո չարչարվելը
Էլ քեզ բաժնած սեր դժվար է գրավել.
Թեև սիրո գրգիռն իմ վաղուց հանգել է,
Բայց միշտ կուզիմ սիրել։

բ Ինչպես տերև անցան օրերս, թափվեցան,
Սիրո ծաղիկներս մրրիկն է ցան արել,
Ինձ հետ կսկիծ, պարսավ և հոգետանջ որդը
Միայն են մնացել։

գ Ձինչ հրաբուխի լյառն, մեջ անսահման ծովին
Իմ ներսի կրակը վաղուց է եռ գալիս.
Ոչ թե ջահ է վառելու նա իմ հարսանիքին
Այլ իմ թաղմանն է լալիս։

դ Ոչ վախ, ոչ մեծ հույսեր, ոչ այլ ինչ չարչարանք
Եվ ոչ սիրո կրակ կյանքումս պահեցրած,
Ես չեմ կարող զգալ, իմ սիրտը վաղ ցամքել է
Ինչպես արցունք կաթած։

ե Բայց այսպես տեղ, ուր մահ պտուեն ամենքը
Մի այնպիսի զգացմանց հոգիս է իմ ծարավ,
Ուր փառքը զարդարե դափնով քաջի շիրիմը,
Եվ կամ ճակատը պսակավ։

զ Զարթի՛ր (ո՛չ Հելլադա, նա վաղուց արդեն զարթել է)
Բայց դու իմ լույս հոգի, զարթի՛ր, աչքե՛րդ բաց,
Եվ հիշելով հունաց քաջ, անմռռաց գործքերը,
Զարկի՛ր արիացած։

է Եվ փառքը իմ դեմ ամեն կողմից փայլում է,
Քաջ հույներու արարքը միանգամ,

րեն դասերը այնքան էին օգնել Ռափայելին, որ նա Բայրոնի այդ բանաստեղծության թարգմանությունը կատարել էր բնագրից։

Ամբողջությամբ համակված լինելով Հունաստանի քաջ զավակների սխրանքներով նա, հավանորեն, ցանկանում է գրել նաև Միսսոլոնգիի հերոսի՝ Մարկոս Բոցարիսի կենսագրությունը, կամ ներկայացնել Միսսալոնգիի ճակատամարտը և փառաբանել նրա մահը։ Դեռևս տարիներ առաջ, երբ նա նոր էր կազմում իր գործունեության ծրագիրը, Բոցարիսի կենսագրությունը, նրա կերպարը ևս մտել էր «երևելի արանց» «իրենց հայրենյաց» փառքը եղող հերոսների ցուցակի մեջ։ Սակայն ձեռքի տակ չունենալով համապատասխան նյութ, նա դիմում է Հունաստանի պատմության մի այլ ժամանակաշրջանի, XIV դ. կեսերին, երբ թուրքական հրոսակները վերջնականապես ջախջախեցին Բյուզանդիան, երկարատև ստրկության դատապարտելով նրա զավակներին։ Եվ միայն հոնական Արխիպելագոսի փոքրիկ կղզիներից մեկի բնակիչները չցանկանալով այլևս գլուխ խոնարհել օտար բռնակալների առջև, խմբովին ոտքի ելնելով դուրս վռնդեցին նրանց կղզուց և երկար-երկար տարիներ կարողացան նվաճել իրենց ազատությունը։ Այս ապստամբության հերոսը Թոմաս Բոցարիս անունով մի պատանի էր[4]։

Ուր ամեն սուր վստահ մարդուն ձայնում է
«Կամ հետը կամ վրան»։

ը Զարկի՛ր հոգի, փշրի՛ր հզոր գարշապարովդ,
Նորից զարթած կրից խոր քունը տարեկան,
Զարկի՛ր ու ծաղր արա սառ ժպիտ երեսովդ
Թե՛ ծաղրը, թե՛ լացը աղջկան։

թ Էլ ի՞նչ ապրես, անցավ քու մանկությունդ
Մահն էլ, այս երկրի մեջ մեծ փառք է քեզ համար,
Առաջ ե՛լ, ու ցույց տուր, թե ունիս զորություն,
Մեռնել զինչ հսկա, քաջ մարդու նման։

ժ Գնա՛, պտռի՛ր դու այն, ինչ շատ անգամ անհույս,
Շատերը վառ սրտով գտնում են անվաստակ
Զինվորի շիրիմ գտիր այն դաշտի մեջ
Կյանքիդ նպատակ։
Միսսոլոնգի։

[4] Որ Թոմաս Բոցարիս պատմվածքը Պատկանյանը գրել է 1857 թ., կարելի է մակաբերել նրա տողատակի բերված հետևյալ բացատրությունից։ Խոսելով Լենկ-Թեմուրի և Սուլթան Բայազեդի մարտերի մասին նա նշել է. «Ով որ այս անցքի մասին ցանկանում է ճիշտ և մանրամասն ծանոթություն ստանալու, խորհուրդ ենք տալիս կարդալ Հ. Գ. Այվազովսկու հորինած «Օսմանյան տերության պատմությունը»։ Այվազովսկու

Արդյո՞ք այս պատմվածքը թարգմանություն էր, թե Պատկանյանն ինքն էր հորինել այն, մինչև հիմա դեռևս չի պարզվել։ Թոմաս Բոցարիս պատմական անձնավորություն չի եղել. անգամ «Հունական հանրագիտարանը», որտեղ մանրամասնորեն ներկայացված են բոլոր հույն գործիչները, ոչինչ չի գրում Թոմաս անունով հերոսի մասին։ Ավելին, հունական աղբյուրները, խոսելով Մարկոս Բոցարիսի մասին, ոչ մի խոսք չեն ասում նրա անվանակցի մասին։ Չկա նրա անունը նաև 1859 թ. Էժեն Էմենիցի ստեղծած «Նոր Հունաստանի դյուցազունները» հոդվածաշարում, որը տպագրվել էր ֆրանսիական «Ռևյու դե Դեօ մոնդ» ամսագրում։ Բոցարիս ազգանունը հանդիպում է սուլիոտների մոտ, որտեղից էր նաև հույն ազատագրական պայքարի հերոսը՝ Մարկոսը։ Սուլիոտները, ինչպես հայտնի է, պատմական թատերաբեմի վրա սկսեցին երևան գալ ավելի ուշ շրջանում, XVII դարում, երբ փախչելով թուրքական բռնություններից բնակություն հաստատեցին Սուլի լեռներում։ Ուրեմն պետք է ենթադրել, որ ինչպես Թոմաս Բոցարիսին, այնպես էլ նյութը ստեղծել էր ինքը՝ Պատկանյանը, օժտելով նրան թե՛ հերոսական անվամբ, թե՛ բնավորությամբ[5]։

Պատմվածքը, որը հավանորեն, Պատկանյանի առաջին արձակ ստեղծագործությունն էր, գրված էր կենդանի, պատկերավոր լեզվով և ուներ գործողությունների որոշակի ընթացք, բնավորությունների զարգացում և, որ ամենակարևորն է, արդեն ուներ սենտիմենտալիզմի այն տարրերը, որ հետագայում այնքան բուռն զարգացում ապրեցին նրա

հետ ամենամերձ հարաբերությունները Պատկանյանն ուներ հենց 1857 թ., երբ նրա բանաստեղծությունները Այվազովսկին տպագրում էր «Մասյաց Աղավնի»-ում, գովաբանում Գամառ-Քաթիպա ընկերության գործունեությունը, նամակագրական կապ պաշտպանում Պետերբուրգի հետ։ Եվ բնականաբար, մի երկու ջերմ խոսք ասելը նրա գործունեության վերաբերյալ մեղք է Պատկանյանին հիշելու «Օսմանյան պատմությունը», նրա մեջ «ճիշտ և մանրամասն» շարադրված պատմական իրադրությունները։ Հետագայում իր թափթփված ու մոռացկոտ բնավորության պատճառով, նա առանց վերանայելու պատմվածքը, ուղարկել է այն Թիֆլիս «Կռունկ Հայոց Աշխարհին»-ի խմբագրությանը, և Այվազովսկու մասին դրվատական խոսքերը տպագրվել են 1861 թ. Պատկանյանի և Այվազովսկու թշնամանքի ամենաթեժ պահին։

[5] Հետագայում, 1891 թ. Վրթանես Փափազյանը տպագրել է իր «Թոմաս Բոցարիս» պատմվածքը հետևյալ բացատրությամբ. «Հունական ժամանակակից պատմությունից քաղված այս դեպքը առնված և ընդարձակված է մի հոդվածից, որը «Մ. Մինասիրյան» ստորագրությամբ տպվել է 1861 թ. «Կռունկ» ամսագրի № 10-ի մեջ, փաստերը ճշտությամբ պահպանված են»։ Բացատրությունից երևում է, որ Փափազյանն այդ ընթացքում չի իմացել Պատկանյանի «Մինասիրյան» կեղծանվան մասին։ Ասպարեզի վրա կա դարձյալ 90-ական թվականներին տպագրված «Թոմաս Բոցարիս» պատմվածքը՝ առանձին գրքույկով, որը փոքր-ինչ տարբերվում է Փափազյանի մշակումից։

արձակ գործերում։ Պատմվածքը լիովին համապատասխանում էր Պատկանյանի քաղաքական ծրագրին, արտահայտում նրա փայփայած երազանքները Հայաստանի ապագա վերականգնման վերաբերյալ։ Փոքրիկ կղզու բնակիչները ոտքի կանգնեցին հսկայական թուրքական պետության դեմ և, որովհետև գործեցին միախմբված, հաղթության հասնելու մեծագույն ցանկությամբ, կարողացան հաղթել և ազատություն նվաճել իրենց համեմատաբար թույլ հայրենիքի համար։ Իսկ կղզու կառավարումը հանձն առավ իր երկրի ազատության համար կյանքի և մահու կռվի ելած աղքատ ձկնորս Բոցարիսը։ Անցան տարիներ, և իշխանության ձգտող մարդիկ կամեցան խլել նրանից այն իրավունքները, որ հերոսը ստացել էր «յուր քաջասրտությամբ և այն երախտիքով, որ հարուցել էր յուր ազգին և հայրենյացը»։ Սպանվեց Բոցարիսը, խախտվեց հույների միասնությունը, և բռնակալ տաճիկը դարձյալ սրով ու հրով տիրապետեց կղզին, «մինչև որ լուսավորյալ Արևմուտքը հիշեց հունաց նախկին փառքը և սխրագործությունները և ի հիշատակ նրա թողուցած անմահ հուշակին՝ ոտքի կանգնեցրուց նորա որդվոցը»։

1889 թ., երբ Պատկանյանը գրի առավ իր «Վարդապետարան Հայաստանի ազատության»-ը, հավատարիմ մնալով երիտասարդության իդեալներին, նա ապագայի ազատագրված Հայաստանի կառավարումն ու բարձրաստիճան պաշտոնները դարձյալ հանձնեց իրենց արյունով հայրենիքի ազատությունը նվաճողներին։

* * *

1857 թ. հունիսին Քերովբե Պատկանյանը Աքիմյանների գերդաստանի հետ ուղևորվում է արտասահմանյան ճանապարհորդության, խոստանալով Ռափայելի համար Վենետիկում և Վիեննայում հայթայթել նոր տառատեսակներ՝ կորպուս, նոնպարել, պարիզիեն, գոթիկական, ստվերատառ, բեկյալ, ինչպես նաև արճիճե էստամպներ։ Տպարանը թեև հարստանում էր նորանոր տառատեսակներով ու տպարանական այլ պարագաներով, սակայն, դեռ ի վիճակի չէր պատվերներ ընդունել։ Իզմիրյանը, որը Բեռլինից պիտի ուղարկեր նոր մամուլը, Ռափայելի պատվիրած ձևից չգտնելու պատճառով հետաձգել էր նրա գնումը մինչև վերջինիս հետ խորհրդակցելը։

«Երիտասարդ Հայաստան» խմբակցության անդամները ևս չէին շտապում դրամական առատ նպաստներով արագացնել տպարանի վերջնական կարգադրությունը, այլ բավարարվում էին, առայժմ, հավաքույթներով, որտեղ քննության էին առնվում ապագա Հայաստանի ստեղծման

ծրագրերը։ Ռափայելին մնում էր դարձյալ առաջվա նման գրեթե մենակ հոգալ և՛ տպվող գրքերի ծախսը, և՛ տպարանական պարագաների գնումը։ Առանձնապես պետք էր շտապել, որովհետև Բրոսսեն, Բերոյանը և նույնիսկ Բուդաղյանը կարող էին կորցնել իրենց հավատը տպարանի բացման վերաբերյալ և պայմանագիր կապեին այլ տպարանատերերի հետ։ «...Ինձ շատ ճարտարություն պետք էր նոցա խելքը դեպ ինձ դրավելու, այժմ փոքր-ինչ էներգիա քո կողմեն, և ահա մեր գործը ծլած և ծաղկած կտեսնես» (VI, 173), դարձյալ թախանձագին խնդրում է նա Գեորգ Քանանյանից, զգալով, որ միայն նրան կարող է լիովին հայտնել իր իսկական վիճակի մասին։ Անհանգստացնում էր նրան նաև Նազարյանի և Նալբանդյանի ձեռնարկած «Հյուսիսափայլ»-ի հրատարակման գործում եղած առաջխաղացումը։ Նալբանդյանը մեկնել էր արտասահման՝ օրագրի համար մամուլ, տառեր և կլիշեններ բերելու. երկար ժամանակ սպասվող թույլտվությունն արդեն ստացվել էր, և գիտակցելով Նազարյանի մեծ հեղինակությունն ու Նալբանդյանի անբավ եռանդը, Պատկանյանը չէր կարողանում թաքցնել իր վախը։ Նա, որ առաջինն էր սկսել Ռուսահայաստանում պարբերական գրքույկների հրապարակումը, երազել դրանցով դաստիարակել ու նախապատրաստել ազգը մի մեծ վերափոխման համար, ներկայումս չէր կարողանում շարունակել իր գործը և լիովին կախված էր այս կամ այն ունևոր հովանավորողի քմահաճույքից։ «Տե՛ս, Քերոբ ջան, ինչպես հառաջանում է շառլատաններու ձեռնարկությունը և, մենք, որ կյանքներս մաշեցինք ամենին լավ ասելով, միանգամայն ետ ենք ընկած» (VI, 167),— դառնությամբ ասում է նա այդ օրերին։ Արհեստական ու ծանրաշարժ է թվում նրան Նազարյանի «Հանդես նոր հայախոսության»-ի լեզուն, որը հասկանալի էր միայն ուսյալ հայերի շրջաններին և միանգամայն անմատչելի ժողովրդի լայն խավերին։ Մինչդեռ գրաբարից հրաժարվելն ու աշխարհաբարով ստեղծագործելու առաջին պայմանը համընդհանուր, մատչելի լեզու ստեղծելու պահանջն էր և ոչ թե լեզվի նոր բարդացումն ու արհեստականացումը։

Չնայած Նազարյանը աշխարհաբար լեզվի մեծագույն ջատագովն է, սակայն... «Ամենևին չի հետևում» պարզությանը և ... «շատ կորցնում է»։ «Նորա կարծիքով, գրելը կնշանակե բարձրաձայն աղաղակով ամենին հայտնել. հիմարնե՛ր, էշե՛ր, լսեցե՛ք ինչպես ես кудряво հնարել գիտեմ вычурные фразы։ Ես ձեզանից մինը չեմ, այդ պատճառավ ինձ խիստ ամոթ է այնպես խոսել, ինչպես որ դուք եք խոսում. դուք ասում եք ձի, ես կասեմ նժույգ, դուք կասեք՝ ես գնացի տուն և կե–

ռա ինձ համար պատրաստած ճաշը, *ես կասեմ՝* ես ի կողմն իմ տան ունշարժություն արարի և իմ մարմինեղեն զործարանը լցուցի մարմնակազդուրիչ նյութերով,— *և կարծում է, թե խիստ ազնիվ կերպով բանաստեղծեց» (VI, 174)։*

Գեթ մխիթարություն էր պատճառում այն հանգամանքը, որ Ռափայելի ավագ եղբայրը՝ Հովհաննեսը կարողացել էր մի փոքրիկ վիմագրատուն բացել, որտեղ բացի նկարներ տպելուց, նախատեսում էր հրատարակել «Սանկտ Պետերբուրգ» անունով պատկերազարդ շաբաթաթերթ։ Իհարկե, շաբաթաթերթը միայն անունով պիտի պատկաներ Հովհաննես Պատկանյանին, իսկ հիմնական հեղինակը դարձյալ Ռափայելն էր լինելու, եղբորը թողնելով պատկերազարդման աշխատանքները։ Հայտնելով Քերովբե Պատկանյանին «Հյուսիսափայլ»-ի և «Սանկտ Պետերբուրգ»-ի հրատարակման հեռանկարների մասին Ռափայելը դարձյալ լի էր հավատով, որ իր նոր ձեռնարկությունը ավելի մեծ հաջողություն կունենա, քան «Հյուսիսափայլ»-ը և խնդրում է արտասահմանյան հայկական զաղթօջախներում հայտնել և պրոպագանդել այն, նշելով հատկապես մատչելի գինը՝ տարեկան $4\frac{1}{2}$ արծաթ (մինչդեռ «Հյուսիսափայլ»-ը պիտի արժենար $9\frac{1}{2}$ արծաթ)։

Արդեն ավարտին էր մոտենում նաև «Ռոբինզոն Կռուզոյի արկածները» գրքի լույսընծայումը, որը իր տպագրական բարձր արվեստով կարող էր մրցել ժամանակի ոչ միայն ռուսական, այլ նաև եվրոպական հրատարակությունների հետ։ Երկու եղբայրներ անհամբերությամբ սպասում էին իրենց համատեղ աշխատանքին, որը նախատեսվում էր շարունակել «Սանկտ Պետերբուրգ»-ի էջերում։

1857 թ. հոկտեմբերի առաջին օրերին Ռափայել Պատկանյանը կարողանում է Յոնսոնի տպարանից ստանալ «Ռոբինզոնի» մի քանի օրինակ, մնացածները տպագրության դրամը լրիվ մուծելուց հետո դուրս բերելու պայմանով։ Գրքի տպագրության ծախսի մի մասը վճարել էր տիկին Աքիմյանը և այդ պատճառով գրքի ճակատը զարդարում էր մայր և որդի Աքիմյանների անունը։ Գրքի արտակարգ գեղեցիկ ձևավորումը, թարգմանության պարզ, հասկանալի լեզուն, դրավիչ բովանդակությունը ջերմ ընդունելություն ապահովեցին վերջինիս համար։ Իր մոտ եղած սակավաթիվ օրինակները Ռափայել Պատկանյանն ուղարկեց Փարիզ, Թիֆլիս և Մոսկվա՝ նախազգուշացնելով Քանանյանին, որ իրենց դանդաղկոտության հետևանքով, արդեն Բերոյանը պայման է կապել ճեմայանի տպարանի և Գոթիեի հետ։

Բարեբախտաբար Հովսեփ Իզմիրյանը արտասահմանից վերադառ-

նալով մամուլի համար նախատեսված դրամը հանձնել էր Գևորգ Քանանյանին, տեղում գնելու համար, որը և շտապել էր կատարել արդեն երկար սպասված հանձնարարությունը։ Այժմ մնում էր միայն վճարել Յոնսոնին բոլոր պարտքերը, ստանալ նրա մոտ պահ տրված տառատեսակները և վարձել համապատասխան սենյակներ։ Այդ բոլորի համար անհրաժեշտ էր դրամ։ Պետք էր սպասել մինչև փետրվար ամիսը, քանի որ Նիկողայոս Շանշյանը խոստացել էր հատուցել տպարանատիրոջ վարձը։

Թեպետև ճարահատյալ, Ռափայելը ստիպված էր լինում օգնության համար ձեռք մեկնելու, սակայն իր նոր բարեկամներին՝ Սանասարյանին, Բուդաղյանին, Եզյանին ամաչում էր ցույց տալ իր ետին աղքատությունը, անընդհատ հավատացնելով, որ տպարանական գործերը աշխուժորեն առաջ են գնում և շուտով հնարավոր կլինի սկսել աշխատանքները, իսկ երեկոները տանը նստած՝ զգալով իրեն լքված ամենից, ազատություն էր տալիս արցունքներին։ «Այս նամակը ես չեմ կարող վերջացնել,— գրում է նա Քանանյանին,— որովհետև սիրտս խիստ լցված է, և առատ արցունքը չեն թողնում ինձ հանդարտ նստելու տեղս»։ «Ահա չորրորդ նամակն է, որ մին-մինի քամակից ուղարկում եմ քեզ և, առ մեծի զարմացմանս, նորա պատասխանն չեմ ստանում, այնինչ դու ինձ անպատճառ պիտի միամտացնեիր, ինչպես սրտակից բարեկամին է վայել. այն հույսերովն, որով միայն կարող է ոտքի վերա հաստատ կանգնել մեր ուխտի արգասիքն, որ իմ կողմանե հազար ու մեկ զոհերով վերջապես էացավ, որ մի ժամանակ միայն խոլական ցանկություն էր երևում։ Քանանյան, ես գիտեմ քո բարյացակամությունն, բայց դու ինձ հավատացո՛ւր, որ բարի կամենալն նույն է, որ բարի անելն. այն ժամանակ ես տեղիք չեմ ունենալ քեզ անհանգիստ անելու, նմանապես, եթե ես իմանայի, որ մեր գործն երեքիս վերա չէ լինելու, այլ պիտի ծանրանա իմ վերա, այն ժամանակ գուցե ես մի ուրիշ ընթացք կունենայի...» (VI, 177 և 180)։

Այս նյարդային, ծանր սպասումը մի պահ ընդհատվում է Գաբրիել Այվազովսկու ժամանմամբ, որը ստանձնելով Ն. Նախիջևանի և Բեսարաբիայի թեմի առաջնորդությունը, Պետերբուրգից պատրաստվում է մեկնել Հարավային Ռուսաստան, Օդեսայում ուսումնարան բացելու մտադրությամբ։ Ուրախանալով, որ դեռևս Փարիզի Հայկական վարժարանում սկսված հարաբերությունները հնարավոր կլինի շարունակել Ռուսահայաստանում, հայկական գաղթօջախներում լայնորեն տարածելով ազգասիրական և հայրենասիրական տրամադրություններ, Ռափա-

յել Պատկանյանը Մովսես Բուդաղյանի և Հովսեփ Իզմիրյանի միջնորդությամբ շտապում է ներկայանալ նորընտիր առաջնորդին, հեռավոր ծանոթությունը հաստատում անձնականով, պատմում նրան իրենց նպատակների և հետագա անելիքների մասին, աջակցություն խնդրում «Ուխտ»-ի հրատարակությունների տարածման վերաբերյալ։ Բացի այս ամենից նա Ն. Նախիջևանի և Բեսարաբիայի առաջնորդից օգնություն է հայցում երկար տարիներ բանտում տառապող իր հոր՝ Գաբրիել Պատկանյանի համար։ Հավանորեն պատմելով Խալիբյանի կողմից եկեղեցական գումարների յուրացման և այդ առթիվ բողոքի ձայն բարձրացրած քահանայի դեմ հալածանքներ նյութելու մանրամասն պատմությունը, Պատկանյանը հույս ուներ, որ ազնիվ նպատակներով իր գործունեությունը սկսող առաջնորդը, առաջին հերթին կլուծի Ն. Նախիջևանի հասարակությանը ալեկոծող այդ կնճռոտ խնդիրը, կստիպի Խալիբին ետ վերադարձնելու համայնքի գումարները և բանտից կազատի հորը, վերադարձնելով նրան իր բարի անունը։ 1857 թ. նոյեմբերի 20-ին Գաբրիել Այվազովսկու պատվին Պետերբուրգի հայ համայնքի կողմից կազմակերպված «մեծածախ կոչունքի» ժամանակ Ռափայել Պատկանյանի արտասանած ճառը լցված էր այդ հավատով. «Տեր Աստված, սրբե դորա ճանապարհը այն ամենայն խոչք ու խութերեն, որոնք երբեմն հանդիպում են առաքինի անձանց բարի ձեռնարկությանց մեջ։ Եվ եթե պատահի, որ մարդիկ չիգնահատեն դորա իսկապես բարի գործքը՝ թող չի վհատի դորա ոգին ու եթե տգիտություն, չարակամություն, նախանձ, մոլեռանդություն և այլ դոցա նման մոլի կիրք դաշն կապած միասին, գան խափանելու դորա առաքինի գործերը, տուր զորություն դորա հոգվույն չհուսահատիլ»[6],— ասել էր նա։

Գաբրիել Պատկանյանին օգնություն հասցնելու համար խնդրել էր ոչ միայն Ռափայելը, այլ ամբողջ պետերբուրգահայ համայնքը և մասնավորապես Մովսես Բուդաղյանը, որի մանկության ընկերն էր ամբաստանյալ քահանան, իսկ սիրելի ուսուցիչը՝ վերջինիս հայրը՝ Սերովբե վարժապետը։ Այնքան մեծ է եղել հիացումը և վստահությունը Գաբրիել Այվազովսկու և նրա գործի նկատմամբ, որ «Երիտասարդ Հայաստանի» անդամներից ոմանք, մասնավորապես Հովսեփ Իզմիրյանն ու Պատկանյանը որոշ տեղեկություններ են հաղորդում նրան իրենց անելիքների ու հեռանկարների մասին, ամենազոր առաջնորդին իրենց գործի զորավիգ ունենալու ակնկալությամբ։ «Այս կարճառոտ նամակ ստա-

6 Մասյաց Աղավնի, 1857, №.7։

ցած օրդ իսկույն կշտապես Լորիս Մելիքովի տուն, հետո կառնես Ամբարտանյանին և կերթաս օրհնություն կստանաս Հ. Գաբրիել Այվազյանցին, որ այսօր (այսինքն, նամակը ստացած օրդ) եկավ այդտեղ։ Ես նրան շատ բան ասել եմ ձեր երկուսի մասին, նույնպես պարոն Իզմիրյանցին։ Տես որ արդարացնես այն գովասանքն, որ ես արել եմ առհասարակ հայ ուսանողաց, որոց երկուքդ պիտի օրինակ լինիք։ Ների՛ր, ժամանակ չիկա։ Գուցե մի նամակ ստանաս նորա իսկ ձեռքով» (VI, 177),— հայտնելով գրում է Ռափայել Պատկանյանը Քանանյանին հանդիսավոր հացկերույթից առաջ, նոյեմբերի 20-ին։ Նույն նամակի վերջում Հովսեփ Իզմիրյանն իր գրած երկտողում նույնպես խնդրում է Գաբրիել Այվազովսկուն լավ ընդունել և կատարել նրա բոլոր ցանկությունները (VI, 177)։

Այվազովսկու մեկնումից հետո դարձյալ սկսվում են անվերջանալի սպասումները Յոնսոն տպարանատերի հետ հաշիվները մաքրելու, տառատեսակները ազատելու, «Ռոբինզոնի արկածները» գրքի տպաքանակը ստանալու և վաճառելու կապակցությամբ։ Նիկողայոս Շանշյանի խոստացած դրամը դեռևս չկար և կլիներ միայն փետրվարին։ Սանասարյանը, որը պարտավորվել էր հոգալ «Հայոց դյուցազունք»-ի տպագրական ծախսերը, նույնպես ոչինչ չէր ասում ո՛չ տպարանատիրոջ հետ հաշիվները մաքրելու, ո՛չ էլ հիշյալ գրքի տպագրության հնարավորությունների մասին։

Ջնայած այս անորոշ վիճակին, Ռափայելը Հովհաննես եղբոր հետ միասին տպարանի համար սենյակ է վարձում Կապույտ կամուրջի մոտ, Մյանովսկու տանը, հավանորեն, հարմար աւիթը ձեռքից բաց չթողնելու և մեծածավալ մամուլը տեղավորելու համար։

Անսպասելի կերպով մոսկովաբնակ Մելքոն Փանյանի կողմից ուղարկված 100 ռուբլի դրամը, որը Կարապետ Եզյանի միջոցով հասցվում է Ռափայելին, լուծում է դժվարությունները, և «Ռոբինզոն»-ի բազմաթիվ օրինակներ ուղարկվում են Թիֆլիս, Մոսկվա, Աստրախան, Ղզլար, Գանձակ։ Դրամը Փանյանը ստացել էր Ավետիք Էնֆիաջյանից, որը վաճառքի հանած լինելով Գամառ-Քաթիպայի հրատարակությունները, տեսնելով նրա շահավետությունը ցանկություն էր հայտնել գործակցել Ռափայել Պատկանյանի հետ։ Այդ գործում, անկասկած, օգնել էր նաև Քերովբե Պատկանյանը, որը Գլխավոր մանկավարժական ուսումնարանում ավարտած լինելով ուսման դասընթացը, որպես Կովկասյան սան երեք տարով ուղարկվել էր Թիֆլիս աշխատելու։ Այժմ տպարանը կարող էր աշխատել և առաջին հերթին, իհարկե, պիտի պատվերներ ընդուներ

ուրիշներից՝ ֆինանսական գործերը շտկելու, թղթի, գրաշարների, շենքի վարձը վճարելու նպատակով և հետո միայն սկսեր իրենց հրատարակությունները (այսինքն՝ իր, Ռափայել Պատկանյանի գործերը—Մ. Ս.)։ Իսկ տպագրվելիք աշխատանքների թիվը անընդհատ ավելանում էին։ Բացի բառարանի վրա կատարվող ամենօրյա աշխատանքներից, արդեն ավարտվել էին Վիլհելմ Հաուֆի «Ուխտավորք» ֆանտաստիկ պատմըվածքների թարգմանությունը գերմաներենից, սկսվել Բոկաչիոյի «Դեկամերոն»-ը, որի առաջին նմուշները մեծ ընդունելություն էին գտնում ունկնդիրների մոտ (VI, 191)։

Պատկանյանը առանձնապես մեծ հաճույքով էր կարդում և թարգմանում Բերտոլդ Աուերբախի գործերը, որոնք նրա առջև բացեցին և սիրել տվեցին մի նոր աշխարհ՝ գյուղացիության կյանքն ու կենցաղը, որոնք համարյա բոլորովին անծանոթ էին նրան։

Այդ շրջանում հաստատ որոշած լինելով ազատվել համալսարանական պարապմունքների բեռից, Ռափայելը ջանասիրաբար նախապատրաստվում էր ավարտական քննություններին։

Տպարանը, որ ավելի շատ լիտոգրաֆիական աշխատանքներով էր ծանրաբեռնված, քան տպագրական, առայժմ այցելության տոմսակներ տպելով, կարողանում էր մի կերպ կառավարվել և վճարել նախորդ պարտքերը, իսկ նոր աշխատանքներ ձեռնարկելու հնարավորությունից իսպառ զուրկ էր։ Բացի այցելության տոմսակներից, Հովհաննես Պատկանյանը տպագրում էր իր նկարած դիմանկարները, ընդունում տարբեր գրքերի նկարազարդումների տպագրության, ինչպես նաև ծխախոտի պիտակների պատվերներ։ Չնայած Բերոյանն արդեն պայմանագիր էր կապել այլ տպարանատերերի հետ, Պատկանյանը նրա բառարանի համար տպագրում է մի նմուշ իր մանր տառերով և սկսում շարել իր բառարանի առաջին 600 բառ-հոդվածները, А-ից մինչև Бездумье բառը։ Օգուտներ ակնկալվում էին նաև էնֆիաջյանի հետ առևտրական հարաբերություններ սկսելուց։ Ինչպես Մնացական Թիմուրյանը, այնպես էլ Քերովբե Պատկանյանը Ավետիք էնֆիաջյանին հայտնել էին Ռափայել Պատկանյանի կազմակերպած տպարանի և ունեցած հրատարակությունների մասին, և նա ցանկություն էր հայտնել պայմանագիր կնքել և Թիֆլիսում տարածել Գամառ-Քաթիպա ընկերության հրատարակությունները։

1858 թ. փետրվարի 19-ին ուղարկելով էնֆիաջյանին իր պայմանները, որտեղ գրքերի գները իջեցված էին կիսով չափ (VI, 189), Ռափայելը առանձնացրեց ուղարկվելիք օրինակները և սկսեց սպասել էնֆիաջ-

յանի պատասխանին։ Եվ, քանի որ տպարանական գործերը առայժմ սկսել չէր կարելի մինչև մայիս, Ռափայելը որոշում է լրջորեն պարապել համալսարանական առարկաներով և հունիսին հանձնել ավարտական քննությունները։

Միակ բանը, որ նրան ստիպում էր ընդհատել պարապմունքները, դա հոր՝ Գաբրիել Պատկանյանի գործերն էին, որ 1857 թ. դեկտեմբերին փոխադրել էին Պետերբուրգ՝ Սենատի քննությանը։ Դժգոհ մնալով Ռոստովի և Եկատերինոսլավի գավառական դատարանների վճիռներից, որոնք անմեղ էին ճանաչել Գաբրիել Պատկանյանին, Խալիբյանին և նրա կողմնակիցներին հաջողվում է ամբաստանյալ քահանայի գործը տեղափոխել Սենատ, որտեղ և փոխել տալով նախնական որոշումները, 1858-ի փետրվարին կարողանում են հասնել Գաբրիել Պատկանյանին մեղավոր ճանաչելու և Սիբիր աքսորելու վճռին, նախապես նրան ամեն իրավունքից զրկելու պայմանով։ «...Մի վատ լուր ունիմ քեզ հայտնելու, որ հազիվ լեզուս պտտում է արտաբերելու,— գրում է Ռափայելը Թիֆլիս, Քերովբե եղբորը,— հորս գործը խիստ վատ վճռվել է Սենաթումը, հազիվ թե փրկության հույս կա. ինչ հնար կար արի, խնդրել, միջնորդներ մեջ մտցնել և փող խոստանալն անգամ ոչինչ չօգնեց, չգիտեմ ինչ պիտի լինի...» (VI, 185)։

Ծանր տրամադրությամբ, նա դարձյալ ձեռքն է վերցնում վրացերեն և թուրքերեն լեզվի դասագրքերը և միայն իրեն հատուկ կատաղի համառությամբ պարապում, անգիր անում քերականական կանոնները։ Սակայն ապրիլին համալսարանական խորհրդին ներկայացված դիմումը նոր հիասթափություն է բերում Ռափայելին։ Հաշվի չառնելով, որ նա համարյա երկու տարի եղել է ազատ ունկնդիր, համալսարանական խորհուրդը մերժում է ավարտական քննություններ տալու նրա դիմումը, պատճառաբանելով, որ երկու տարվա ընթացքում չի կարելի ավարտել, այլ պետք է հանձնել երրորդ կուրս փոխադրվելու քննությունները միայն։ Ավելին՝ քննելով նրա գործերը, խորհուրդը 1858 թ. թուլիսի 16-ին որոշում է ընդունում հեռացնել նրան համալսարանից՝ դասերին չհաճախելու և սահմանված քննությունները ժամանակին չհանձնելու համար[7]։

[7] «Սանկտ Պետերբուրգի կայսրական համալսարանի խորհրդին. Արևելյան լեզուների, հայ-վիրա-թաթարական բաժնի կուրսի ուսանող Ռափայել Պատկանյանին, որը երկու տարի մնացել է նույն կուրսում և չի ներկայացել դասախոսություններին ու քննություններին, ուսումնական շրջանի պարոն կառավարչի հրամանով հեռացնել ուսանողների թվից ընդհանրապես, առաջադիմություն չցուցաբերելու պատճառով։

Հայտնելով այս մասին Համալսարանի խորհրդին, առաջարկում եմ կարգադրու-

Մնում էր միայն մի ելք, դարձյալ անցնել ազատ ունկնդիրների շարքերը և հաջորդ տարի իրավունք ստանալ հանձնելու ավարտական քննությունները, և այդ ելքը միանգամայն համապատասխանում էր նրա նպատակներին[8]։

Վրա է հասնում մայիս ամիսը, երբ ըստ նախատեսված ծրագրերի պիտի սկսվեին աշխատանքները տպարանում, սակայն ո՛չ Բուդաղյանն է կարողանում ներկայացնել գրաքննչական ատյանին լրագիր ստանալու դիմումը, ո՛չ Բերոյանը վերջնականապես ներկայացնում իր բառարանը։ Զգալով, որ իր աշխատանքների տպագրությունն անորոշ ժամանակով դարձյալ պիտի հետաձգվի, Պատկանյանը որոշում է պատրաստի աշխատանքներից մի քանիսը ուղարկել Մոսկվա «Հյուսիսափայլ»-ի խմբագրությանը։ Մասնավորապես նրան հետաքրքրում էր «Դև Մրուս» պոեմը լույս ընծայելու հարցը, որ մի տեսակ պատասխան էր հոր դեմ կայացրած, իր անարդարությամբ ցնցող դատավճռին։ Հավասարության նշան դնելով հայոց պատմության մռայլ կերպարների՝ Վասակ Սյունու, Մերուժան Արծրունու, Հազկերտ II-ի, Զարմաղանի և Ներսես Աշտարակեցու տասը տարվա գործունեության միջև, Պատկանյանը վեր է հանում Ամենայն Հայոց Կաթողիկոսի «դիվային» էությունը, ամեն լուսավոր գաղափար հետապնդելու մոլուցքը, ինքնամոռացության հասնող վրեժխնդրությունը։ Հետաքրքիր է, որ այս պոեմում առաջին անգամ երևան եկավ Պատկանյանի անդրերկրային, գերբնական երևույթների միջոցով իրականությունը պատկերելու հակումը, որն այնքան հատուկ էր վաղ ռոմանտիզմի համար։ Ինչպես հայտնի է «գոթական վեպը», կամ «սև վեպը», որը եվրոպական գրականության մեջ մեծ դեր է խաղացել ռոմանտիզմի ձևավորման գործում, պատկերում էր անբնական սարսափներով լի աշխարհներ, սատանաներ, դևեր և այդ ամենի ու իրականության բախման միջոցով արտահայտում իր գեղագիտական իդեալը։ Այն հատկապես մեծ վարպետության հասավ Հոֆմանի վեպերում, որտեղ իրականությունը մերթ սատիրական, մերթ ողբերգական ձևով պատկերվում էր որպես մութ ու լուսավոր ուժերի անընդհատ պայքար, բարձրը, վեհը հնարավոր դարձնելով միայն տեսիլքի մեջ։ Ընդօրինակելով

թյուն անել հիշյալ ուսանողին հեռացնելու համալսարանից»։ 1858 թ. 16-ը հուլիսի

Համալսարանի ռեկտորի պաշտոնակատար՝

(ГИАЛО, ֆ. 11, ցուց. 5, գ. 272, թերթ 10)։

[8] *«Ես նշանած էի» ինքնակենսագրական դրվագներ պարունակող վիպակում հանդիպում ենք այս փաստը հաստատող տողերի. «Այդ միջոցին ես պետք է խնդիր տայի և դուրս գայի համալսարանեն և գրվեի ազատ ուսանող» (III, 69)։*

գոթական վեպի» և հատկապես Հոֆմանի, իսկ մի քիչ ավելի ուշ Դիկ-ենսի գեղարվեստական հնարանքները, Պատկանյանը առաջինը հայ գրականության մեջ ներմուծեց եվրոպական ռոմանտիկական վեպի զարգացման ավանդույթները։

Դև Մրուսի և հայ հասարակության պայքարը պոեմում դիտված է մութ ու լուսավոր աշխարհների բախման ձևով, որտեղ լուսավոր աշխարհը, իրականությունը պատկերված է ինչպես մռայլ, դիվային ուժերի անանց թատերաբեմ։ Բացի «գոթական վեպի» հնարանքներից, Պատկանյանը, անկասկած, օգտագործել էր նաև Սենկովսկու «Սատանայի պաշտոնական մեծ հանդեսը» երգիծական երկը, որը մեկ տարի անց թարգմանեց և հայկական իրականությանը հարմարեցրեց Միքայել Նալբանդյանը։ Պատկանյանի պոեմում բացի Ներսեսից հանդես էր գալիս էջմիածնի ամբողջ սուրբ Սինոդը, ինչպես նաև Սարգիս Եպիսկոպոս Ջալալյանը՝ դժոխքի խորհրդարանի քարտուղարի, դիվապետ Բեհեղզեբուղի կերպարանքով։ Ակնարկելով նրա «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան» գիրքը, որի առաջին մասը լույս էր ընծայվել Թիֆլիսում 1842 թ. Պատկանյանը Բեհեղզեբուղի բերանով արտասանում է հետևյալ քառատողը.

Եղբա՛րք, ասաց վերջապես Բեհեղզեբուղ ծերունին,
Ձեր ցանկությամբ և կամոք ես այց ելա մեր երկրին,
Ինչ կար չըկար նորա վրա՝ ամեն աչքե անցուցի,
Բոլոր տեսածս ու լըսածս՝ մանրամասն գրեցի.
Իմ գըրվածքի մեծ մասը վաղուց եմ գրով հաղորդել,
    Մընացորդը ուզում եմ բերանացի Ձեզ պատմել[9]։
                                        (II, 43)

Դժոխքի չարյաց խորհրդարանում կլոր սեղանի շուրջը ժողովված յոթ դևերը խռովված են ու տագնապած։ Անհրաժեշտ է կործանել Հայաստան աշխարհը, իսկ նրա աստվածավախ ու բարեպաշտ ժողովուրդը միշտ միջոցներ է գտնում իրենց ձեռքից ազատվելու։ Հնարներ են մտածում դևերը, միջոցներ է նյութում Բեհեղզեբուղ չարը, բայց չեն գտնում։ Ի վերջո, իր ծառայությունններն է առաջարկում աճարկու Մրուս դևը, որ դարեր շարունակ պես-պես կերպարանքներ առած կործանել, արյան ճապաղիք էր դարձրել դրախտանման Հայաստանը։

[9] Դարձյալ մի ապացույց, որ «Դև Մրուսը» գրվել է մինչև 1858 թ., հավանորեն 1856—57 թթ., քանի որ «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան»-ի II-ը գիրքը լույս է ընծայվել 1858-ին։

Լավ իմանալով հայերի հոգեբանությունը և սուրբ հավատի համար զոհվելու նրանց պատրաստակամությունը, Մրուսը այս անգամ հոգևորականի կերպարանքով մտնում է Հայաստան ու տաս տարվա ընթացքում հիմնահատակ կործանում այն։ Բացի «Դև Մրուս»-ից Պատկանյանը «Հյուսիսափայլ»-ի խմբագրություն ուղարկեց նաև «Նապոլեոն Մեծի կենսագրությունը» և մի քանի այլ բանաստեղծություններ։

«Հյուսիսափայլ»-ի առաջին երկու համարները (մարտի և ապրիլի) արդեն գրավել էին Պատկանյանի ուշադրությունը։ Նա միանգամայն մոռացել էր իր անբարյացակամությունն ամսագրի և նրա հրատարակիչների նկատմամբ, նրանց կողմից իրեն տրված խայթող որակումները։ Այժմ նա նորանոր ծրագրեր էր հորինում մտքում, համարում իրեն «Հյուսիսափայլ»-ի աշխատակից, պատրաստվում էր «Քաջ Վարդան Մամիկոնյանի» մահը ուղարկել խմբագրություն, ձգտում լծվել «Հյուսիսափայլ»-ի սկսած պայքարին։ Սակայն անցնում էր ամիս ամսի ետևից, լույս էին տեսնում ամսագրի համարները, իսկ Պատկանյանի առաքած գործերից ոչ մեկը չէր երևում նրա էջերում։

Իր պետերբուրգյան բարեկամներից լսած լինելով նրանց հավաքույթներում Պատկանյանի կարդացած «Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը» պոեմի արտակարգ գեղեցկության ու ներգործության ուժի մասին, Մելքոն Փանյանը հատուկ նամակով դիմում է հեղինակին և խնդրում պոեմի ձեռագիրը, ծանոթանալու և տպագրելու համար, միաժամանակ իր հիացումը արտահայտելով նրա զարմանալի ստեղծագործության վերաբերյալ։ «Երբ կարդացի ձեր քաղցր գրությունը,— կարդում ենք Պատկանյանի պատասխան նամակում,— ...չգիտեմ ինչ ուրախություն զգացի մեջս՝ լսելով Ձեր քաջալերությունն առ բարին և գովելի պատրաստությունն առ ամենայն ինչ ազգասիրական ու օգտավետ, և, ճշմարիտն ասեմ, ամաչեցա ինքս իմ առաջ, որովհետև իմ արժանավորությունն հազարապատիկ անգամ նվաստ էր այն ընդունելությունեն, որով ինձ պիտի երջանկացնեք ձեր առավել հաջողակ միջոցիվ։

Թանկ է իմ երախտագետ սրտին լսել ձեր քաղցր շրթներեն այդ քաղցր խոսքերն, որովհետև, եթե կա աշխարհիս երեսին որևիցե աշխատանքի համար մի վարձ, այդ է՝ բարեմիտ մարդու ազնիվ քաջալերությունն, և որովհետև իմ երկասիրությունն արժանացավ այդպիսի կարեկցության կարո՞ղ եմ արդյոք գտնել քան զիս երջանիկ ոք։ Կրկին և կրկին շնորհակալ եմ Ձեզմեն այդ թանկ խոսքերուն համար, որք մինչև վերջին շունչս անջնջելի հետքերով տպավորված կմնան սրտիս մեջ» (VI, 203)։

* * *

Հուլիսի վերջերին Թիֆլիսից Պետերբուրգ վերադարձավ և անմիջապես Աղաթոն Աքիմյանի ավագ դստեր՝ Աննայի հետ ամուսնացավ Քերովբե Պատկանյանը։ Քերովբեի այս ամուսնությունն է՛լ ավելի խորացրեց այն անջրպետը, որ գոյացել էր երկու բարեկամների մեջ վերջին երկու տարվա ընթացքում։ «Քերովբեն բարեբաստիկ գտնվելով ամուսնացել էր անդրանիկ դստեր Աքիմյան Աղաթոն Դավթյանի, որ յուր ժամանակի ամենահարուստ հարուստն էր և Քերովբեն մտել էր ի ժառանգություն այնպիսի ճոխության, որ երբեք Պատկանյան ազգատոհմն չէր երազել»[10],— գրում է այս ամուսնության մասին Գաբրիել Պատկանյանը։ Այժմ արդեն Ռափայելը անհարմար էր զգում հանդիպումներ ունենալ Քերովբեի հետ նրա բնակարանում, ժամադրություններ էր նշանակում փողոցում, որոնց հաճախ Քերովբեն ժամանակ չէր գտնում ներկայանալու։

Դիմելով և մերժում ստանալով նրանից Հաուֆի «Ուխտավորք»-ի համար օժանդակություն ստանալու կապակցությամբ, Ռափայելը նորից է անհանգստացնում Քերովբեին, այս անգամ «Եզովպոսի առակները» փոքրածավալ գրքույկով լույս ընծայելու խնդրանքով։ Պատասխանը դարձյալ անմխիթարական էր. առայժմ Քերովբեն չէր ցանկանում իր նորատի կնոջը անցանկալի ազգականներով շրջապատել, ինչպես նաև նրանց խնդիրքները բավարարելով՝ նորանոր հոգսեր բարդել նրա ուսերին։ Դեռ ավելին, զարմանալով եղբոր անընդհատ անհաջողությունների վրա, նա այդ ամենը վերագրում է վերջինիս անճարակությանը և կտրականապես արգելում դիմել իրեն օգնության հարցերով, հարուստի անտարբերությամբ խորհուրդ տալով կպչել իսկական գործի։ «Браво! Քերոբ, սկիզբդ խիստ լավ է, վաղ կամ ուշ մտնելու ես Գոգոլի նման մինի գրչի տակ. թերևս Թիֆլիզ եկած հայ դերասանները մի օր ցնծալիր ծափահարության տուրք կժողովեն՝ կենդանությամբ ձևացնելով քու штук-ները» (VI, 200)—վրդովմունք է հայտնում Ռափայելը նրա խորհուրդները լսելուց հետո և Տարտյուֆ անվանելով նորադարձ հարուստին՝ կտրում ամեն հարաբերություն նրա հետ։

Քերովբեի հետ Թիֆլիսից Պետերբուրգ էր եկել նաև Ռափայելի հարազատ եղբայրը՝ Վահագնը, որ թողնելով զինվորական պաշտոնը, ցանկանում էր բնակություն հաստատել Պետերբուրգում։ Առայժմ երկու եղբայրներ վարձելով քաղաքի հեռավոր ծայրամասում գտնվող Իզմայլով-

---

10 «Հիշատակարան», էջ 656։

յան գնդի, 5-րդ վաշտի, Գաղեի տանը մի փոքրիկ սենյակ, քարշ էին տալիս մի կերպ իրենց գոյությունը պատահական վաստակներով։

Անցնում են ամիսներ, իսկ «Դև Մրուս»-ի և «Հյուսիսափայլ»-ի խմբագրություն առաքված այլ գործերի մասին դարձյալ ոչ մի լուր չի հասնում Պետերբուրգ։ «Հյուսիսափայլ»-ը միայն մեկ անգամ անդրադարձավ Ռափայել Պատկանյանին, հինգերորդ ամսատետրակում տպագրելով Նալբանդյանի հոդվածը «Ռոբինզոն Կռուզո»-ի վերաբերյալ։

Գնահատելով գրքի թարգմանության կարևորությունը, Նալբանդյանը դիտողություն է անում թարգմանության լեզվի վերաբերյալ։ Քննադատվում են նաև Գամառ-Քաթիպայի տետրերն ու «Այբբենարանը», նկատի առնելով մի դեպքում գրաբարին դիմելու, մի այլ դեպքում արևելյան ու արևմտյան բարբառների հոլովաձևերից միասնություն ստեղծելու Պատկանյանի ձգտումը, ինչպես նաև նրա օգտագործած ժողովրդական դարձվածքների ոճը։

Մինչդեռ Ռափայելի համար առանձնապես անհրաժեշտ էր պոեմի տպագրությունը, որտեղ նա առաջին անգամ բարձրաձայն համարձակվել էր դատապարտել Ներսես Աշտարակեցու և նրա համախոհների գործունեությունը։

Դժվար է բացատրել այն իրողությունը, թե ինչու «Հյուսիսափայլ»-ի հրատարակիչները և, մասնավորապես Միքայել Նալբանդյանը խուսափեց տեղ տալու ամսագրի էջերում Պատկանյանին և իր ձեռքի տակ ունենալով «Դև Մրուսի» նման մի ստեղծագործություն չհրատարակեց այն իր 1858 թ. № 11-ում տպագրած «Նամակ առ հրատարակողը» հոդվածի հետ միասին, տպավորությունն ավելի ներգործուն և հարվածը ավելի շեշտակի դարձնելու համար։ Իհարկե, ժամանակակիցները անմիջապես կճանաչեին և Դև Մրուս-Ներսեսին և Բեհեզզեբուղ-Ջալալյանին և Անամելիք-Խալիբյանին, որոնց իրական գործերի նկարագիրը տրված էր Նալբանդյանի «Նամակ առ հրատարակիչ»-ի մեջ, իսկ գեղարվեստական մարմնավորումը՝ Պատկանյանի «Դև Մրուս»-ում։ Զարմանալի է նաև այն, որ ոչ մի ակնարկով նա իր «Նամակի» մեջ չհիշատակեց այդ նույն գործարքի դեմ բողոքող ըմբոստների ճակատագրի, մասնավորապես բանտում հեծող Գաբրիել Պատկանյանի մասին։ Թե ինչքան կարևոր էր Ռափայելի համար «Դև Մրուս»-ի տպագրությունը, երևում է նրա Մելքոն Փանյանին և Միքայել Նալբանդյանին գրած նամակներից։ Պատասխանելով Փանյանի այն հարցին, թե ինչո՞ւ նա չի ուզում «Քաջ Վարդանի մահը» տպագրել «Հյուսիսափայլ»-ում Պատկանյանը դժգոհում է, որ ամսագրի տնօրենները իրենցից դուրս այլ հեղինակություն

չեն ճանաչում և. «...կարծում են, թե օրագրի մեջ միայն պիտի քարոզվի այն ճշմարտությունը, որն որ խմորվել է նոցա ուղեղի մեջ, իսկ այլոցը՝ խոտան և անընդունելի է» (VI, 208)։

Չնայած «Հյուսիսափայլ»-ի աշխատանքներին այլևս չմասնակցելու իր որոշմանը, Ռափայելը կարդալով և ոգևորվելով Նալբանդյանի «Նամակ առ հրատարակողը» հոդվածը և, հավանորեն, Քանանյանից իմանալով, որ «Դև Մրուս»-ը չեն տպագրում իբր անստորագիր լինելու պատճառով, նամակով դիմում է նրան, հորինում մի անհավատալի պատմություն «Դև Մրուս»-ի ձեռագիրը վաղուց գտնելու մասին, հավատացնում դրա՝ մեր դարաշրջանի հետ ոչ մի առնչություն չունենալը, արտահայտում իր հիացումը Նալբանդյանի սխրանքի առթիվ։ «Մեծարգո պարոն կոմս Էմմանուել,— գրում է նա թեթևակի ծաղրի ենթարկելով իր համաքաղաքացու բարձրաստիճան տիտղոսը,— Եթե չեմ սխալվում՝ յոթը ամիս կլինի, որ ես ուղղել էի Պայծառափայլությանդ անվամբ մի ոտանավոր, որո վերնագիրը «Դև Մրուս» էր, խնդրել էի, որ Դուք հոգս տանեք մուծանել այն պատվական «Հյուսիսափայլ» օրագրի մեջ, որո խմբագրչին Դուք աշխատակից եք։ Իմ խնդիրը անկատար մնաց, և այդ երկարատև միջոցումն ոչ տպվեցավ վերոհիշյալ ոտանավորն և ոչ պայծառափայլությունդ պետք համարեց պատասխան տալ և մեկնել չընդունելու շարժառիթն։ Անհայտ չէ պարոնիդ, որ եվրոպական օրագիրների խմբագիրքը սովորություն ունին այդպիսի դեպքերի ժամանակ նույնիսկ օրագրի միջոցով պատասխանել ում որ հարկն է։ Բայց բերանացի հայտնած պատճառը (որո ստուգությանը պատասխանատու չեմ, որովհետև բերանացի է) Ձեր, իբր թե հեղինակի չստորագրելն է» (VI, 209)։

Այնուհետև, շարադրելով վերոհիշյալ պատմությունը «Դև Մրուս»-ի ձեռագիրը 1849 թ. Աստրախանում գտնելու մասին, Պատկանյանը շարունակում է. «Չկարծեմ, որ դա մի կծու բան լինի այժմվա մարդոց համար և կասկածելի պարունակությամբ. ընդհակառակն, մեր հոգևոր հարք պարծենալով կարող են ցույց տալ, թե ինչպես ամեն ժամանակ սիրելի են եղել նոքա յուրյանց ավանդած հոտին՝ ժողովրդին։ Իսկ ինքը Մրուսը, առանց երկբայության, մտացածին անձն է, որ իրոք, ինչպես պատմությունից մեզ հայտնի է, որ ոչ եղել է, ոչ կա և ոչ լինելու է։ Բայց անձնավորած Մրուսներ ոչ միայն մեր ազգի մեջ, այլև ամեն ազգի մեջ եղել են, կան և լինելու են և բարեմիտ մարդիկ նոցա սատանայական դեմքերեն դիմակը հանելու երբեք վախեցած չեն (ընդգծումը մերն է—Մ. Ս.)։ Ուր թույն, անդ և դեղթափ» (VI, 210)։

Ակնարկը, անկասկած, վերաբերում էր Նալբանդյանի համարձակ

13—907

նամակին, ինչպես նաև իր «Դև Մրուս»-ին, քանի որ նրանք երկուսն էլ առանց «վախի հանում էին դիմակը «մրուսների երեսից» «դեղթափներ» դառնալով հայ հասարակության համար։ Նույն միտքն էր զարգացնում՝ նաև Նալբանդյանն իր «Նամակ առ հրատարակողը» հոդվածում, երբ գրում էր՝ «Մինչև այսօր մեր ազգի մեջ հրապարակախոս բերան չլինելով, պաշտպանություն է գտել, անպատիժ է մնացել ամենայն տեսակ վատթարություն, անկարգություն, ոչինչ չէ խոսվել, ոչ ոք չէ ընկել գրչի դատապարտության տակ... Թող չարագործ և եղեռնագործ մարդիկ զգաստանան տեսանելով, որ մի անմերժելի ձայն հետևում է նոցա քամակից, մտանում է նոցա հետ ամենածածուկ խորհուրդների մեջ և նոցա միմյանց ականջին խոսածը քարոզում է տանիքների վերա»[11]։

Նալբանդյանին ուղղված նամակի հետ միասին Ռափայելը կցում է նաև իր «Ծեր այր» ոտանավորը «Նվեր Հյուսիսափայլ»-ին ընծայականով, սակայն ամաչելով իր փութկոտությունից, ջնջում է հիշյալ բառերը[12] և դարձյալ թեթև կատակի ոճով ավելացնում. «Անհայտ չէ Պայծառափայլությանդ, որ մի ժամանակ Մուսան պահ էր տվել ինձ յուր քնարը. այդ միջոցին պարապո ժամերս նվիրել էի այդ նվագարանին, և ասում են, թե այժմ փոքր-ինչ հաջողակ եմ թեթև piece-*ներում։ Ահա իմ թույլ լարերից հանած մի քանի* accord-*ներ. եթե հավանեք՝ տպեք, թե ոչ՝* в Лету будь...» *(VI, 210)։*

Սակայն ոչ «վտանգավոր» «Դև Մրուս»-ը, ոչ միանգամայն անմեղսիրային բնույթ ունեցող «Ծեր այրը» չմտան «Հյուսիսափայլ»-ի մեջ։ Իսկ Նալբանդյանը, փոխանակ անձնապես գրելու Պատկանյանին նրա գործերի չտպվելու պատճառների մասին, պատասխանեց նրան հրապարակորեն իր «Հիշատակարան»-ի մեջ. «Դարձյալ մի այլ նամակ ստացա պ. Գամառ-Քաթիպայից (Ս. Պետերբուրգից), որ մեղադրում է ինձ, թե ինչու համար նորա ուղարկած մի ոտանավորը չի ընկել «Հյուսիսափայլ»-ի մեջ և թե ինչու մի գրավոր տեղեկություն չեմ տվել նորան չտպվելու պատճառի մասին։ Պիտի իմանալ, որ ես «Հյուսիսափայլ»-ի հրատարակողը չեմ և ոչ նորա գլխավոր աշխատակիցը, ես պատասխանատու եմ այն բաների մասին, որ պիտի ընկնեն Հիշատակարանի մեջ։ Իսկ Հիշատակարան ձգել ամենայն բան նույնպես չեմ կարող, ըստ որում ինչպես վաղուց հայտնել եմ ձեզ, պատվելի ընթերցողք, մի հորեղբայր ունիմ, որ միշտ քննում է իմ բոլոր անձնական գրվածքս անգամ։ Իմ

---

[11] «Հյուսիսափայլ», 1858, № 11, էջ 429—430։

[12] Բանաստեղծության վերնագրի տակ հստակորեն երևում է «նվեր» բառը և «Հյու» տառերը։

անունով, բայց անմիջապես Հյուսիսափայլի մեջ տպվելու գրվածքները ես ուղարկում եմ պ. Հրատարակողին, ինչպես պ. Գամառ-Քաթիպայի և մի քանի նոր ոտանավորքը, որ վերոհիշյալ նամակով ուղարկել էր ինձ, ավելի ոչինչ չեմ կարող առնել. իմ ձեռքում ոչինչ չկա։ Իսկ ինչ-որ վերաբերում է Հիշատակարանիս, այո՛, այդ այլ բան է, այստեղ ես իմ Հիշատակարանի անմիջական տերն եմ. միայն խնդրում եմ ամեն մի մարդուց, որ խնայեն իմ Հիշատակարանը և բան ուղարկելու ժամանակ աշխատեն այնպիսի բան ուղարկել, որ ն՛ յուրյանց ն՛ ինձ ն՛ պատվելի ընթերցողներին ժամանակի զուր կորուստ չլինի»[13]։

Նալբանդյանի հրապարակային պատասխանից Պատկանյանը եզրակացրեց, որ «Հյուսիսափայլ»-ի հրատարակիչները մտադիր չեն տպագրելու իր գործերը, մանավանդ ծանր էր նրա բանաստեղծություններին «ժամանակի զուր կորուստ» տրված գնահատականը։

Վրա է հասնում 1859 թվականը։ Հաստատ որոշած լինելով անպայման ստանալ ավարտական վկայական, Պատկանյանը 1859 թ. հունվարի 10-ին դիմում է ներկայացնում համալսարանի խորհրդին՝ նույն ամսին իրեն թեկնածուական քննություններ հանձնելու իրավունք տալու համար[14], և սկսում անընդհատ պարապմունքները։ Քանի որ այժմ նրա ամբողջ ժամերը կլանված էին պատրաստվելիք առարկաներով և մասնավոր դասերի համար գրեթե ոչինչ չէր մնում, երկու եղբայրներ մի կերպ իրենց գոյությունը քարշ էին տալիս պատահական վաստակներով, մեկ-մեկ էլ օգնություն էր հասնում Հովհաննես եղբայրը։ Չկարողանալով վճարել սենյակի վարձը, նրանք առժամանակ ապաստան են գտնում Հայոց եկեղեցու բակում գտնվող Ավետիք Խաղեզյանի բնակարանի կողքին գտնվող դատարկ սենյակում։ Վերջինս ամբողջ հոգով նվիրված լինելով իր սիրելի ուսուցիչ Գաբրիել Պատկանյանին, ցանկանում էր որևէ կերպ օգտակար լինել նաև նրա զավակներին։

Չնայած զբաղվածությանը, եղբայրները երեկոները նվիրում էին «Եզովպոսի առակները» գրքի ձևավորման աշխատանքներին, որը Հովսեփ Իզմիրյանի ծախսով մտադիր էին լույս ընծայել իրենց տպարանում։ 1859 թ. արտակարգ ցուրտ ձմեռը, Պատկանյան եղբայրների աղքատիկ հանդերձանքը, անկանոն սնունդը ծանր պայմաններ էին ստեղծում նրանց կյանքի համար։ «Ես նշանած էի» վիպակում Պատկանյանը տվել է թե՛ այդ ծանր ձմռվա, թե՛ իրենց աղքատիկ կացարանի նկարագրությունը. «1859 թվականի ձմեռը այնպիսի ցրտեր էր անում, որ մինչև քաղաքիս

[13] Մ. Նալբանդյան, *ԵԼԺ* հ. 1, էջ 395։

[14] *Տե՛ս* ГИАЛО, *ֆ. 14, ց. 3, գ. 15, 366, թ. 1։*

վաղուցվա բնակիչները զարմանում էին, և նոցա մտքին չէր գալիս, որ այդպիսի ցուրտ եղանակ նոցա ժամանակները պատահած լիներ։ Ձյունը ցրտությունն կարծրացած, ընդացած՝ ման եկողի ոտների տակ ճռճռըղում, ճռնչում էր, մարդոց բերնին գոլորշիքը այնպիսի առատությամբ էր դուրս գալիս, որ աչքի առաջ թանձր մեգ էր ձևացնում... Դժվար էր շունչ առնելը. ամեն շունչ առնելիս՝ ասես թե կայծակներ էիր կուլ տալիս... Եզոպոսի ծղրիդի նման՝ ձմեռվա համար վաղօրոք չէի հոգս տարել. մի թեթև չուխայի վերարկու առանց աստառի, մի ուսանողական հին նշանազգեստ,— այս էին ահա իմ մրսոտ մարմնու պաշտպանները... Բացի քանի մի չքավոր հայ ուսանողներն՝ ոչ ոքի հետ ծանոթություն չունեի. ոչ մեկի հետ գնալ գալ չունեի. ի՞նչ եմ ասում. կարողություն ևս ունենալու չէի ոտս տնեն դուրս կոխելու, եթե բնակարանիս տաքության աստիճանը դրսի եղանակին չհավասարեր։ Բայց այնպիսի բնակարան, ինչպես մերն էր (ես կենում էի Գեղարվեստից ճեմարանի աշակերտի հետ, անունը Հովհաննես, ազգավ հայ), կասկածելի է, որ հյուրասիրություն խոստանար նաև բուն հյուսիսումն ծնածին, այսինքն ցրտի սովորած մարդու։ Մեղք է ասելը, որ հնոցը չէին վառում կամ վառելիքը խնայում էին, ո՛չ. բայց երբ որ տանը չորս պատից, տափից և վերևից փչում էր քամին, երբ որ հնացած պատուհաններից ծեփը փշրվել ցած էր ընկել և նոցա թողած ծակերից ցուրտը ազատ ներս էր մտնում՝ ի՞նչ վառելիք կդիմանար այդպիսի ախոռին։ Ճարերս ի՞նչ էր. ո՛չ ես և ո՛չ ընկերս փող ունեինք, որ կարողանայինք բնակարաններս փոխել, բայց այս, ուր կենում էինք՝ ձրի էր, մեզ տված մարդասիրությամբ մեկ բարերարի...։

Ո՞վ գիտե, գուցե ասում կլիներ մտքումը. «Խեղճ հայեր են... տունը դատարկ կա... թո՛ղ կենան իրանց համար...»։ Եվ մենք կրկնելով առածը, թե՝ անճարը ուտում է բանջարը, կենում էինք վա՜յ էն հալին։ Ահա՛ այն ձմեռն էր, որ ստացա հազը, որն որ մինչև այս օրս չարչարում է կուրծքս...» (III, 15—16)։

Բայց այս սենյակն էլ շատ համարվեց Պատկանյան եղբայրների համար։ Ձմռան ամենադաժան ցրտերի ժամանակ Պետերբուրգի եկեղեցական խորհուրդը որոշում ընդունեց ազատել սենյակը և անհապաղ դուրս հրավիրեց տղաներին, որոնք ամբողջ գիշերը փողոցում մնալով, առավոտյան միայն կարողացան ժամանակավոր ապաստարան գտնել իրենց համար Իսմաիլովյան գնդի, 5-րդ վաշտի, 12 բնակարանում, Մյասկովայի տանը։

Գաբրիել Պատկանյանն իր «Հիշատակարան»-ում հետևյալ կերպ է

նկարագրում այս դեպքը. «Տեր-Գաբրիելի բանտարկության տարիներին, երբ նորա ողբացյալ երեք որդիք Ավետիք Խաչեգյանի սենյակում էին ինքյանց ապաստան գտել, ձմեռային անտանելի ցրտի ժամանակն, մինչ այն մանկունք ոչ կոշիկ ունեին ոչ մուշտակ, Գալստյան երեցփոխանի ձեռք արտաքսվել էին... Եթե այն գիշերն այն երեք որբերն ևս չմեռան, այն վերնախնամ պաշտպանությունն էր, որ նոցա հորն ևս պահում էր բանտարկության և աքսորանքի մեջ»[15]։

Այս ծանր օրերին օգնության հասավ Քերովբե Պատկանյանը, և եղբայրները մոռանալով անցյալի վիրավորանքները, դարձյալ մտերմացան միմյանց հետ։ Փետրվարի 3-ին հայտնի դարձավ, որ համալսարանական խորհուրդը հնարավոր չի համարում փետրվար ամսին ավարտական քննություններ ընդունել Ռափայել Պատկանյանից, քանի որ նա ազատ ունկնդիր լինելով չի հաճախել դասախոսություններին և միանգամայն անծանոթ է բաժնին, խորհուրդը որոշում է ընդունում քննությունները հետաձգել մինչև մայիս[16]։ Հնարավորություն ստանալով ավելի երկար ժամանակ տրամադրել պահանջվող առարկաներին, Պատկանյանը առաջին հերթին գրաքննչական ատյանին ներկայացրեց «Հատընտիր և պատկերազարդ առակք Եզոպոսի և առածք պես-պես ազգաց» գիրքը, որը նկարազարդել էր Հովհաննես Պատկանյանը, և սկսեց տպագրության աշխատանքները։

Գրքի տպագրությունը կատարվում էր բարձր արվեստով։ Հավանորեն արժեքը պակասեցնելու նպատակով Պատկանյանը գիրքը որոշել էր տպագրել փոքր չափերով (8×6) և մանր տառատեսակներով։ Այդ ծավալի մեջ տեղավորվել էր երկու առաջաբան (գրքի նպատակների և Եզովպոսի առակների համաշխարհային նշանակության մասին), 46 առակ, տարբեր ժողովուրդների 121 առածներ և 25 բարձրարվեստ լիտոգրաֆիական նկարներ։ «Ռոբինզոն Կռուզո»-ից հետո այս հրատարակությունը մի նոր հաղթանակ էր հայ տպագրության ասպարեզում իր բարձր կուլտուրայով, գեղեցիկ նկարազարդումներով, ճաշակով ձևավորված գլխազարդերով ու վերջնազարդերով։

Սակայն գրքի տպագրությունն էլ չկարողացավ տնտեսական որոշ բարելավումներ մտցնել Պատկանյան եղբայրների կենցաղում, ստիպելով Ռափայելին Քերովբեից փոխ առած հագուստով երևալ հասարակության մեջ. «Եթե քեզ համար մեծ ծանրություն չի լինիլ,— գրում է նա Քերովբեին,— եթե ի պատրաստի և անկարևոր մի սերտուկ, կամ պիջակ

---

15 «Հիշատակարան», էջ 653։

16 ГИАЛО, ֆ. 14, ց. 5, գ. 15366, թ. 2, 3։

ունիս և մի աշխարհական գդակ, խնդրեմ, ինձ ընծայես. այս զգեստով, ինչպես որ եմ, շատ անորոշ մարդու եմ նմանում և ամոթս գալիս է բարեկարգ մարդոց մեջ հայտնվիլ։ Ասում եմ, եթե խնդրած առարկաներս քեզ կարևոր և անփոխարինելի չեն, միայն այդ դիպվածին կատարե խնդիրքըս, ապա թե ոչ՝ թող։ Բայց մի բան խնդրեմ, ոչ ոք չիմանա ոչ իմ խընդըրածս և ոչ քու ընծայելը, ավելորդ է ասելն, թե որքան ծիծաղու պիտի ենթարկվեմ նախապաշարյալ մարդոց աչքին»[17]։

Մեծագույն զգուշություններ բանեցնելով Ռափայելն աշխատում էր շրջապատի, մասնավորապես նոր բարեկամների աչքից ծածուկ պահել իրերի իսկական դրությունը, նրանց հարգանքը չկորցնելու և իր արժանապատվությունը բարձր պահելու համար. միայն Քերովբե Պատկանյանն էր, որ տեղյակ էր եղբայրների ծանր կացությանը և փոքրիկ նըպաստներով օգնության էր հասնում նրանց. «Ռափայելն գիտեր, որ յուր հայրն այլ տառապանաց մեջ է և մայրն՝ այլ տառապանաց. և նա մի անգամ չէր ակնարկել Սանասարյանին, որ նա կարծիք չունենա, թե Ռափայելի ազգասիրական քարոզների մեջ յուր ազգատոհմի շահն էր»,—գրում է Գաբրիել Պատկանյանը հետագայում[18]։

Համառորեն պարապելով և 1859 թ. գարնանը իրեն պատրաստ ըզգալով, Ռափայել Պատկանյանը մայիսի 11-ին դիմում է ներկայացնում համալսարան՝ թեկնածուական աստիճան ստանալու համար քննություններ հանձնելու խնդրանքով[19]։ Քննությունները սկսելով մայիսի 18-ից, նա բոլոր առարկաներից ստանում է «գերազանց» գնահատական և կըտրըվում վրացերեն լեզվից։ Դեռևս մինչև քննությունները նա Քերովբե Պատկանյանի միջնորդությամբ մի քանի անգամ գնացել էր վրացերենի դասախոս Դավիդ Չուբինովի մոտ, նրանից հանձնարարություններ ըստացել պարապելու համար։ Սակայն, լեզվի սակավ իմացությունը հընարավորություն չէր տվել նրան բավարար չափով պատրաստվելու, և այդ ճակատագրական գնահատականը զրկել էր նրան թեկնածուի կոչումից։ Իսկ ավագ ուսուցչի կոչում ստանալու համար անհրաժեշտ էր նախապատրաստվել փորձնական դասախոսությունների հայոց լեզվից, պատմությունից և գրականությունից, որը Պատկանյանը հետաձգեց մինչև հոկտեմբեր։ Այսպիսով, երկար ամիսների զրկանքներն ու տըքնությունը դարձյալ իզուր անցան, վրդովմունքով լցնելով Պատկանյանի սիրտը Չուբինովի նկատմամբ, որն ամենայն խստությամբ մոտենալով

17 ԳԱԲ, ՌՊՖ, № 270։

18 «Հիշատակարան», էջ 652։

19 Տե՛ս ГИАЛО, ֆ. 14, ց. 3, գ. 15, 371, թ. 1։

Նրա իմացություններին հնարավոր չհամարեց 3 նշանակել իրեն անգամ Քերովբեի միջնորդությունից հետո (VI, 223)։

Ամենայն հավանականությամբ հենց վրացերենի քննությունն էր պատճառը, որ երկու եղբայրների միջև նորից լարվեցին հարաբերությունները։ Իհարկե, Ռափայելի մոտ դժգոհության արմատները ավելի խորն էին, քան սոսկ քննության անհաջողությունը։ Նրան անբավականություն էին պատճառում և՛ Քերովբեի խրատական ճառերը, և՛ հովանավորող դիրքը, իր անձնական շահերը ազգայինից վեր դասելը։

Ազատ լինելով պարապմունքներից Պատկանյանը դարձյալ զբաղվում է մասնավոր դասերով, կարգի դնում իրենց տնտեսությունը, դըրանով իսկ պայմաններ ստեղծելով աշխատանքի համար։ Բանաստեղծը սկսում է աշխատել մի պոեմի վրա, որի հերոսը XVI դ. հայտնի աշուղ Քյոռօղլին պիտի լիներ։ Պոեմի համար ընտրելով անխառն ժողովրդական խոսակցական լեզուն, Պատկանյանը ցանկանում էր «Հյուսիսափայլ»-ի հրատարակիչներին ապացուցել, որ լեզվի հետագա զարգացումը պիտի ընթանա ժողովրդական, խոսակցական բառամթերքի օգտագործման ճանապարհով և ոչ թե արհեստականորեն տեղծված, «օտարի լեզվից» բառացիորեն թարգմանված արտահայտություններով. «Եղբայր սիրական, դու պիտի իմանաս, որ մեր «Քյոռօղլուն» կենդանի պատասխան է այն հաճախ կրկնված գանգատներուն, որ մենք անդադար լսում ենք կեսգրագետ հայերու բերնեն, թե հայոց աշխարհիկ լեզվավ անհնարին է որպեսևիցե վերացական միտք հայտնելու։ Ես շատերուն երես առ երես աշխատել եմ հասկացնելու, թե երբ գաղափարը որոճած է մարդուս մտքումը՝ արտահայտելու համար պատեպատ ընկնելը ավելորդ է, եթե միայն մենք ի մոտո գիտենք այն ազգի ոգին և լեզուն։ Կեսգրագետները ինձ ասում էին, թե միակ հնարն է բառ առ բառ թարգմանել օտարի լեզվեն և այդ օտարոտի դարձվածները աշխատել բռնաբար սեփականել տալ ժողովրդին։ Ես անհամաձայն էի այդ անհիմն կարծիքին, բայց և հնար չունեի նոցա կարծրացած ուղեղի մեջ հեղափոխություն անելու։ Այդ և դորա նման խորհրդածությանց հետևանքը եղավ, որ ես հանձն առի գրելու «Քյոռօղլուն», որո լեզուն գիտությամբ ընտրեցի ամենաաղճատածը, գրեթե նույնը, որ խոսում է հայոց ամենաստոր վիճակի մարդը։ Ապագայումը կտեսնենք, մեր «Քյոռօղլուն» կունենա՞ արդյոք իրավունք մեր սուրբ ուխտի ազնիվ ծնունդներեն մինը կոչվելու, կունենա՞ արդյոք իրավունք կարեկից սրտեր դեպ ինքը ձգելու, կպացուցանե՞ արդյոք մեր տխմար գրագետներուն, թե հառաջ, քան թե գրիչդ ձեռքդ առած մտնում ես ազգի դպրության ասպարեզի մեջ, ունենաս

պիտի անկեղծ սեր դեպ ազգդ և անանձնասեր դիտավորություն նորա բարոյապես օգտելու» (VI, 229—230)։

Սակայն, ծայրահեղ որոշումների դիմող իր բնավորության համաձայն, ընտրելով ամենաաղճատված աշխարհաբարը պոեմի համար, Պատկանյանը հենց դրանով արդեն դատապարտել էր մտահղացումը ձախողանքի և անկատարության։ Բանաստեղծական գեղեցիկ հայտնությունները, խոսուն պատկերներն ու համեմատությունները, գտնված ձևը, կորան խառնիճաղանջ լեզվի մեջ, բանաստեղծին համոզելով, որ միայն ժողովրդական բառերի ու դարձվածքների չափավոր օգտագործմամբ հնարավոր կլինի կենդանություն պարգևել նորելուկ աշխարհաբարին։ Պոեմի վերջին հատվածում արդեն բանաստեղծը անցնում է ավելի հղկված աշխարհաբարի, դրանով իսկ ապացուցելով իր նախնական մտահղացման ձախողումը։ Իզուր չէ, որ հայ էպիկական լավագույն պոեմներից մեկը՝ Հովհաննես Թումանյանի «Թմկաբերդի առումը» իր վրա կրում է Պատկանյանի «Քյոռօղլու»-ի ազդեցությունը թե՛ պոեմի կառուցման, թե՛ լեզվաարտահայտչական տեսակետից։ Անգամ Պատկանյանի օգտագործած որոշ դարձվածքներ նույնությամբ մուտք են գործել Թումանյանի պոեմի մեջ։ Հենց նախերգանքում, երբ աշուղն իր շուրջն է հրավիրում ունկնդիրներին Քյոռօղլուի կյանքն ու սխրանքը պատմելու համար, հնչում են «Թմկաբերդի առում»-ը պոեմից մեզ այնքան ծանոթ բառերը.

Անկա՛չ արեք քյոռ աշուղիս՝ ձեզ հրաշալի բան եմ ասում,
Ջանիկ տըղե՛րք, լա՛վ ուշկ դրեք՝ զարմանալի բան եմ ասում,
Սիրուն կուսանք, լավ միտք դրեք՝ արտասվելի բան եմ ասում

(ընդգծումը մերն է—Մ. Ս.) (II, 36)։

Սակայն «Քյոռօղլու» պոեմի ամենամեծ արժանիքը Պատկանյանի վերաբերմունքն էր աշուղական պոեզիայի և աշուղ-երգչի նկատմամբ։ Դեռևս իր գործունեության արշալույսին նա հիացել ու խորապես գնահատել էր Սայաթ-Նովայի արվեստը, Ախվերդյանի գործը համարելով անգնահատելի մի ավանդ հայ մշակույթի համար (VI, 63)։ Նրա կազմած երգարանում առաջին անգամ տեղ էին գտել և՛ անցյալի, և՛ ժամանակակից աշուղների երգերը, որոնց ստեղծագործություններում նա տեսնում էր ազգային հոգեբանության դրսևորումները, հայ աշխարհիկ լեզվի զարգացման հեռանկարների համար կարևոր համարելով նրանց բառապաշարի օգտագործումը։

Պոեմը ընդհատվում է հենց Քյոռօղլուի հանդես գալու պահին, բայց նախորդ գլուխներից և Քանանյանին գրած նամակներից կարելի է եզրակացնել, որ հեղինակը ծրագրում էր իր հերոսի մեջ մարմնավորել հայ ժողովրդի անկախության համար պայքարող, նրա ազատության համար իր ամենանվիրական զգացումը՝ կրոնը զոհող քաջամարտիկին։ Նրա հերոսական կյանքի պատմությունը, որը պիտի պատմվեր աշուղի բերանով, դարձյալ կոչված պիտի լիներ ոգեշնչելու ժամանակակից հայերին՝ պայքարելու և մեռնելու հանուն Հայաստանի, հանուն անկախության ու ազատության։ Հետաքրքիր է, որ Պատկանյանը մտադիր էր պոեմում պատկերելու Խամսայի մելիքների դարաշրջանը, կենդանացնել հայոց անկախության վերջին նշույլները, տալ նրանց պայքարի ու երկպառակությունների պատմությունը, դրանց կործանարար ազդեցությունը հայ ժողովրդի համար։ Ցավոք այդ բոլոր մտահղացումները անկատար մնացին։

1859 թ. վերջերին ոչ միայն աշխուժություն ապրեցին Պատկանյանի ստեղծագործական ծրագրերը, այլ հաճախացան նաև հանդիպումները իր համախոհների շրջաններում, ընդլայնվեցին կապերը Պետերբուրգից դուրս, մասնավորապես Կովկասում գտնվող համակիրների հետ։ Հավանորեն հենց նրանց, մասնավորապես Մովսես Բուդաղյանի խորհրդով նա իր բազմաթիվ ձեռագրերը ուղարկեց Թիֆլիս՝ տարածելու և տպագրելու համար. «Ձեռագիրներս ուղարկեցի Հայաստան,— գրում է նա արտասահմանյան ուղևորությունից նոր վերադարձած Քանանյանին,— որովհետև պահանջել էին մի քանի նոր մարդիկ: Ի՞նչ կլինի հետևանքը՝ կիմանաս, երբ որ նոցանեն պատասխան ստանամ» (VI, 222)։ Հետաքրքիր է, որ նոր մարդիկ արտահայտությունը ընդգծված է իր՝ Պատկանյանի կողմից, իսկ այդ անունով էին կոչում ռուս ռազնոչին մտավորականության այն ներկայացուցիչներին, որոնք հանդես եկան 50-ական թվականների վերջերին, հետագայում կրելով իրենց վրա 60-ականներ պատվավոր անունը։ Ովքե՞ր էին այդ «նոր մարդիկ», դժվար է ասել, սակայն, անկասկած, դրանք կապեր ունեին «Երիտասարդ Հայաստան» կազմակերպության անդամների, մասնավորապես նրանց պարագլուխ Բուդաղյանի հետ, և ուղարկված ձեռագրերը ոչ միայն գրական ստեղծագործություններ էին, այլ նաև ծրագրեր, որոնց բովանդակության մասին ընդհանուր պատկերացում կարելի է կազմել Պատկանյանի հետագա տարիներին գրած բանաստեղծություններից։

Նոր համախոհներ էին հավաքագրվում ոչ միայն Անդրկովկասում և բուն Հայաստանում, այլ նաև տեղում և, իհարկե, առաջին հերթին հայ

ուսանողության շրջաններում։ Իր ամեն մի մասնավոր աշակերտի մեջ Պատկանյանը պտրում էր խմբակցության հետագա հնարավոր անդամին, դաստիարակում նրա մեջ ազգասիրական տրամադրություններ, անձնազոհություն։ Այդպիսին էր նրա համար նաև գլխավոր շտաբի սպա, շտաբս-կապիտան Ալեքսանդր Ղորղանյանը, որը ամենևին անծանոթ լինելով մայրենի լեզվին, մասնավոր կերպով պարապելով Պատկանյանի հետ ոչ միայն հայոց այբուբենն էր ուսումնասիրում, այլ նաև սովորում ազգային շահերը վեր դասել անձնականից, սիրել իր տառապյալ ժողովրդին, հպարտանալ նրա պատմությամբ, անցյալի անձնվեր զավակներով, ձգտել նմանվել նրանց և, որ ամենակարևորն է, սովորում իրեն հետագա ապստամբության մարտիկ տեսնելու մտքին։ «Իմ աշակերտը հայերեն լեզվի՝ Ալեքսանդր Ղորղանյանը... Տեղը մնաց, որ պատվական կրթած... Գիտում, բարեհոգի—ճշմարտասեր երիտասարդ է, այլև տաք ազգասեր, մարդասեր և յուր այդ գովանի առաքինություններն արդյամբ ցույց է տալիս... Դա նոր ուղղության մարդ է, պարզ, ուղիղ հայեցվածով ներկա դարուս վրա. Քոշուտին, Ժյուլ-Սիմոնին և Հյուգոյին պաշտողը և աշակերտողը. դա ինձ շուտով հասկացավ և սիրեց՝ իմ պակասությանցը ներողամիտ լինելով... Այո՛, իմ սիրական Գևորգ, մենք, այսինքն մեր ուխտը, թվով սակավ է՝ դու, Մնացականը, Ղորղանյանը, Ամբարտանյանը և ձեր ամենից խոնարհ ծառան, բայց ցույց տուր ինձ այնպիսի ժողով, որ ավելի սերտ և ազնիվ սիրով կապված լինի, քան թե մենք. թույլ ենք, ճշմարիտ է, բայց ժամանակավ մեծ հույս կա, որ մենք մեծ ազդեցություն ունենալու ենք ազգի բարոյականության վերա մեր վարքով և անձնանվեր գործով» (VI, 224, 225)։

Չնայած արդեն վաղուց Գամառ-Քաթիպա «Ուխտ»-ը կորցրել էր իր նախկին աշխույժը, նրա անդամները ավարտելով դասընթացները զբաղված էին իրենց անձնական գործերի կարգադրությամբ, իսկ Պատկանյանի մտքերն ու ծրագրերը ավելի կապված էին նոր խմբակցության հետ, այնուամենայնիվ, 1859 թ. նոյեմբերին նա դարձյալ փորձում է կենդանացնել «Ուխտ»-ի ուրվականը, ավելի Քանանյանին ոգևորելու, քան իսկապես նրա գործունեության հետագա ծավալմանը հավատալով։

«Հյուսիսափայլ»-ի 10-րդ ամսատետրակում տպագրված Անանիա Սուլթան-Շահի «Հայ ազգի լուսավորիչքը» կատակերգության մեջ միանգամայն անարդարացի Գաբրիել Այվազովսկու, Խալիբյանի հետ միասին ծաղրվել էր նաև Գևորգ Քանանյանը։ Կատակերգության մեջ Քանանյանը դուրս էր բերված որպես տգետ, ինքնահավան մի անձնավորություն, որը հավակնություններ ուներ գիտական աշխատություններ գրելու լեզվաբա-

նության մասին և, անտեղյակ իր աղքատիմացությանը, համարձակվում էր բանավեճի բռնվել Նազարյանի և ընդհանրապես «Հյուսիսափայլ»-ի հետ։ Վիրավորանքն ավելի խորն էր, որովհետև Անանյան, իրենց վաղեմի բարեկամն ու մտերիմն էր, որի հետ միասին էին կազմել «Ուխտ»-ի ծրագրերը, որը մինչև վերջին օրերը օգնում էր իրենց հրատարակությունները տարածելու գործում և նույնիսկ պատրաստվում էր ինչ-որ կատակերգություն տպագրել Պետերբուրգում, Պատկանյանի տպարանում (VI, 186), այժմ հրապարակավ հանդես էր գալիս Քանանյանի դեմ, դնելով նրան Խալիբյանի և Այվազովսկու հետ նույն աստիճանի վրա։

Խոր հիասթափությունը, վրդովմունքը փոթորկում էին Ռափայելի հոգին, իսկ հրապարակով հանդես գալու ասպարեզը առայժմ փակ էր նրա առջև։ Պատրաստ էին արդեն «Լյութեր և ռեֆորմացիո» աշխատությունը, ավարտին էր մոտենում «Պատմություն Մեծին Պետրոսի» ուսումնասիրությունը։ Ռափայելը երկմտանքի մեջ էր, արդյո՞ք ուղարկել դրանք «Հյուսիսափայլ»-ին, թե սպասել ուղարկվածներից գոնե մեկի տպագրությանը։ Ինքնասիրությունն ստիպում էր նրան սպասել, իսկ աշխատությունները լույս աշխարհ հանելու անհրաժեշտությունը՝ շտապեցնում։ Համենայն դեպս հաղթանակեց առաջինը և պատրաստի աշխատությունները մնացին Ռափայելի սեղանի վրա։

Իսկ պետերբուրգյան խմբակը կարծես չէր էլ նկատում Պատկանյանին պաշարած դժվարությունները։ Ամեն շաբաթ հավաքվելով օրիորդ Ստեպանովայի տանը, խմբակի անդամները շարունակում էին նորանոր նախագծեր կազմել գործունեության համար, առանց որևէ կոնկրետ նյութական միջոցների տրամադրման։ Գործնական առաջին քայլը խմբակը ձեռնարկեց 1859 թ. վերջերին։

1859 թ. դեկտեմբերի 8-ին Մովսես Բուդաղյանը խնդրագիր ներկայացրեց խմբակցության օրգան «Քաղաքական և գրական լրագիր» հրատարակելու թույլտվություն ստանալու համար, իսկ Կարապետ Եզյանը «Հյուսիսափայլ»-ում տպագրեց հայտարարություն իր մասնավոր պանսիոնի վերաբերյալ, ուր հայազգի պատանիները պիտի ստանային իսկական ազգային դաստիարակություն և ապա միայն մտնեին օտար համալսարաններ։ «Քննելով հայոց ազգի այժմյան դրությունը,— գրում էր Կարապետ Եզյանը,— զարմանում է մարդ նորա կյանքի ողբալի հանգամանաց վերա... Ամենայն տեղ հայտնապես երևում է, որ օտար նյութերը բռնությամբ մտանում են մեր ազգի մեջ և նորա բնական և բարոյական զորությանը հասուցանում են ծանր և անբուժելի վերքեր։ Հայք ոչինչ տեղ մի ամուր արգելք դեմ չդրեցին այդ օտար ազդեցությունը և

մինչև ցայժմ ոչինչ հնարք պատրաստեցին յուրյանց ազգայնությունը պահպանելու համար, սորա պատճառը ոչ թե այն էր, որ նոցա մեջ չըկար ազգասիրական հոգի, ո՛չ, այլ ինձ թվի, թե նոքա պարզ տեղեկություն չունեին թե ինչ է ազգայնությունը, որ հարկեր պաշտպանել իբրև մի սուրբ բան յուրյանց նախնիքից ավանդած»[20]։

1860 թ. սկզբներից արդեն Եղյանի պանսիոնում ուսանում էին Սանասարյանի քրոջ որդի Լևոն Տիգրանյանը, Ռուբեն Հասան-Ջալալյանը, Աբգար Հովհաննիսյանը, Գրիգոր Բուդաղյանը, Մերուժան և Արշակ Խաչատրյանները, Գրիգոր և Անդրեաս Արծրունիները, Միքայել Բուրջալյանը, Մկրտիչ և Կարապետ Եդիլխանյանները։

Պետք է մտածել, որ հենց առաջին հավաքույթների ժամանակ որոշ տարաձայնություններ էին առաջ եկել Ռափայել Պատկանյանի և Կարապետ Եղյանի միջև։ Ամենայն հավանականությամբ Պատկանյանի «Ազգ և ազգասիրություն» հոդվածը, որ հետագայում ուղարկվեց «Հյուսիսափայլ»-ում տպագրվելու համար, (VI, 261), գրված էր հենց Կարապետ Եղյանի՝ ազգության և ազգասիրական որոշ ըմբռնումների դեմ։ Այդ եզրակացության կարելի է հանգել Գաբրիել Պատկանյանի «Հիշատակարան»-ի հետևյալ գրառումներից. «Եղյանց յուր դուռն բացել էր այս մայրաքաղաքի ուսանողաց ոմանց համար, որոնց ազգասիրություն էր քարոզում համաձայն յուր գաղափարների և առաջին նշան ազգասիրություն էր տեսնում հայերեն խոսիլն։ Իսկ Ռափայելն, որ այս նոր հայասիրության ոսկի բանալին էր յուր Գամառ-Քաթիպայով, չէր գնում ի ժողովս Եղյանց, որովհետև հայտնի տեսնում էր, որ Եղյանի տան ժողովն պիտի ետադիմություն հառաջ բերե յուր կիսամաշ գաղափարներով, և նա գուշակել էր այն ժամանակն (1863 թվին) նույն ինչ որ 1880, 81 և 82 թվին լրագրաց միջին մեծավ հնչեցին և հնչում են այն գաղափարներն, ինչ որ այն ժողովների մեջ են արծարծվում և որոց վճիռն այն իմաստուն և ճանճարեղ բարբառոց արգասիք պիտի լինի, չեն կարող Հայոց ազգին օգնել, որ նոքա հասնեն իրենց նպատակին»[21]։

«Հյուսիսափայլ»-ի հուլիսյան համարում միաժամանակ տպագրվեցին Ռափայել Պատկանյանի տակավին 1858 թ. ուղարկված երկու ընտեղծագործությունները՝ Վիլհելմ Հաուֆի «Ուխտավորք» ֆանտաստիկ պատմվածքների թարգմանությունն ու «Նապոլեոն Մեծի պատմությունը» ուսումնասիրությունը, Միքայել Վայելչյան ստորագրությամբ։

Նալբանդյանը «Ուխտավորք»-ի տպագրության տողատակում հրա-

[20] «Հյուսիսափայլ», 1859, № 10, էջ 833։

[21] «Հիշատակարան», էջ 654։

պարակով շնորհակալություն էր հայտնել թարգմանչից վարպետ թարգ-
մանության և գեղեցիկ հայերեն լեզվի համար։ «Հրատարակողը հրապա-
րակավ հայտնում է յուր շնորհակալությունը,—գրում էր Նազարյանը,—
«Ուխտավորք» մակագրությամբ աշխատության թարգմանիչ հեղինակին։
Նա կարող չէր ետ պահել յուր սրտի խոստովանությունը, թե մեծ հա-
ճությամբ կարդացել է այս պատմությունը, գեղեցիկ բանաստեղծված,
գեղեցիկ գրած և գեղեցիկ թարգմանած հայերեն խոսքով։ Քաջահույս եմ,
որ «Հյուսիսափայլ»-ի ընթերցողքը մասնակից կլինեն մեր կարծիքին»[22]։

Զգալով, որ այսուհետև իր աշխատությունները ավելի ջերմ ընդու-
նելություն պիտի գտնեն «Հյուսիսափայլ»-ի հրատարակչի կողմից, քան
նախորդ երկու տարիներին, Պատկանյանն իր «Լյութեր և ռեֆորմացիա»
պատրաստի աշխատությունը որոշում է տպագրել Նազարյանի ամսա-
գրում և արդեն աշխատության տիտղոսաթերթի վրա հպարտությամբ
դնում հետևյալ մակագրությունը, «Այս հոդվածը պիտի զետեղվի «Հյու-
սիսափայլ» հայկական ամսագրում, որի հրատարակիչն է արևելյան
դպրության դոկտոր, պարոն Նազարյանցը։ Ամսագրի աշխատակից Ռա-
փայել Պատկանյան»[23]։

«Հյուսիսափայլ»-ի աշխատակից լինելու հպարտության գիտակ-
ցությունը Պատկանյանին ուղեկցեց իր ամբողջ կյանքի ընթացքում. «Ես
անվեհեր կերթամ, ուժս արդեն փորձել եմ, ապացույց շատ ունիմ, ճըշ-
մարտությունը իմ կողմս է... Հալածանքը չեմ վախենում, մահն նույն-
պես, եթե մահ սպառնա ևս, փույթ չէ, այդ մահը անմահության սկիզբն
է,— գրում է նա 1875 թվականին, ռուս-թուրքական պատերազմի հասու-
նացման օրերին,— ...Մի՞թե այդպիսի կյանքը... չպիտի պատրաստ լինի
զոհ լինելու մի ազգի գուցե փրկության, թերևս ազատության և հա-
վասարի բարոյական սթափման... Ահա այսպիսի բաներ խլրտում են մըտ-
քիս մեջ։ Գուցե խելագար իմն է, գուցե և խելոք ինչ, ինչ կուզե լինի,
«Հյուսիսափայլ»-ը հրատարակմանն խելացնոր չի լինիլ, դու ինչ կուզես
ասա» (VI, 439)։

Բացի «Լյութեր և ռեֆորմացիա»-ից Պատկանյանը դարձյալ «Հյու-
սիսափայլ»-ի համար սկսում է նախապատրաստել «Պատմություն Մե-
ծին Պետրոսի» պատմական ուսումնասիրությունը։ Դեռևս Պետերբուր-
գի համալսարանում ուսանելու առաջին տարիներին, երբ նա լսում էր
պատմաբանասիրական բաժնի դասընթացը, նրա ուշադրությունն ա-
ռանձնապես գրավում էր Նիկոլայ Ուստրյալովի Ռուսաստանի պատմու-

22 «Հյուսիսափայլ», 1861, № 4, էջ 289։
23 ԳԱԲ, ՌՊՖ, № 159։

թյանը նվիրված դասախոսությունները։ Հավանորեն Ուստրյալովը առանձնակի փայլով էր մատուցում Պետրոս Մեծի ժամանակաշրջանը, քանի որ երկար տարիներ ի վեր աշխատում էր «Պետրոս Մեծի թագավորության պատմությունը» գրքի վրա։ Պետրոսի կերպարը, իր ժողովրդին առաջընթացի և քաղաքակրթության լայն ճանապարհ դուրս բերած հանճարեղ վերափոխիչի կերպարը, լիովին համընկնում էր Պատկանյանի «ուժեղ անհատի» իդեալին, նամանավանդ, որ Ուստրյալովի աշխատության առաջին երեք հատորների լույս ընծայումից հետո ամբողջ ռուս առաջավոր միտքը տոգորված էր Պետրոսի անձնավորության և գործի մեծության գիտակցությամբ։ «Սովրեմեննիկ»-ի 1858 թ. 69-րդ հատորի «Заметки нового поэта» հոդվածաշարում Ուստրյալովի աշխատության առաջին երեք հատորների մասին գրված էր. «Վերջացնելով մեր ակնարկը, մենք ուզում ենք ձեր ուշադրությունը հրավիրել մի մեծ և լուրջ գրական նորության, պրոֆեսոր Ուստրյալովի «Պետրոս Մեծի թագավորության պատմության» երեք հատորների լույս ընծայման վրա։

Այդ հոյակապ աշխատությունը կանգ է առնված 1700 թվականի վրա, Ուստրյալովի նոր ստեղծագործության հաջողությունը, ասում են, ուղղակի ցնցող է, ինչպես և պետք էր սպասել»[24]։

«Պատմություն Մեծին Պետրոսի» գիրքը գրելիս Պատկանյանը օգտըվել է Ուստրյալովի աշխատությունից, ինչպես նաև նրա կարդացած համալսարանական դասընթացից։ Օգտագործելով ժամանակի ռուսական պատմության նվաճումները, Ռ. Պատկանյանը հայ ընթերցողին էր հասցընում այն բոլոր նորը, ինչ կար այդ հարցի վերաբերյալ[25]։

Սակայն նրա թե՛ չափածո, թե՛ արձակ գործերից, թե՛ թարգմանություններից ոչ մեկին այլևս վիճակված չէր հրատարակվելու «Հյուսիսափայլ»-ի էջերում։ Հայտնի չէ, արդյոք ինչը ստիպեց Ստեփաննոս Նազարյանին հրաժարվելու «Լյութեր և ռեֆորմացիա» հոդվածից, արդյո՞ք նա խուսափելով «Հյուսիսափայլ»-ի դեմ հարուցած կրոնական մեղադրանքներին նորանոր նյութեր տալուց, բարվոք էր համարել չհրապարա-

---

[24] «Սովրեմեննիկ», 1858, հ. 69, էջ 97։

[25] Երբ գիրքը ուղարկված էր Պետերբուրգի համալսարանի արևելյան բաժնին կարծիքի՝ անհայտ գրախոսիչը բարձր կարծիք էր հայտնել աշխատության մասին, նշելով հատկապես այն փաստը, որ հեղինակը օգտվել է բոլոր հնարավոր աղբյուրներից և Պետրոսի կերպարն ու պատմական փաստերը ներկայացրել պատմագիտության վերջին նվաճումների համաձայն։ «Նայելով պարոն Պատկանյանի կազմած «Պետրոս մեծի պատմությանը» ես գտա, որ այն կարող է լինել չափազանց օգտավետ հայ ընթերցող հասարակության համար, որը մինչև այժմ չի ունեցել ոչ մի նման բան։ Այն մի բարեխիղճ աշխատանք է, որից կարելի է նկատել ինչպես պ. հեղինակի իմացությունները

կել նյութերի սխրանքը և ուսմունքը փառաբանող մի աշխատություն, թե՞ հոնորարի վճարման կապակցությամբ առաջացած տհաճության ժամանակ Ռափայել Պատկանյանը իրեն հատուկ անզուսպ արտահայտություններով վիրավորել էր նրա ինքնասիրությունը, այսպես թե այնպես նա փոխանակ «Հյուսիսափայլ»-ին առաջարկելու, «Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը» պոեմը և 1860 թ. վերջերին մեծ ներշնչումով գրած «Աղասու մոր երգը» բանաստեղծությունն ուղարկում է Թիֆլիս՝ «Կռունկ Հայոց աշխարհի» ամսագրում տպագրելու համար (VI, 241)։

Իր ռազմաշունչ բանաստեղծությունը կոչելով «Աղասիի մոր երգը մորից երգած» վերնագրով, Պատկանյանը կարծես ուզում էր նշել, որ մարտնչող հերոսներ դաստիարակելու համար անհրաժեշտ է նրանց ծննդյան օրից ներշնչել հայրենիքի ազատության գաղափարը, որ հերոս որդիներ ունենալու համար պետք են հերոս մայրեր։ Անվեհեր ու քաջ Աղասու սխրանքը անմահացնող Աբովյանի անմահ հիշատակին ձոնելով իր նոր «Մարսելյոզ»-ը, նա և՛ իր մեծ հիացումն էր արտահայտում Աբովյանի գործի նկատմամբ, և՛ հերոսներ ծնող ու դաստիարակող, Մայր Հայաստանի սիմվոլիկ կերպարը մարմնավորում Աղասու՝ իր կյանքը հարազատ ժողովրդի ազատագրմանը զոհած մարտիկի մոր կերպարի հետ։ Մայր Հայաստանը ամբողջ հայ ժողովրդին կոչ էր անում ոտքի ելնել, նստել արդեն պատրաստի նժույգը և մարտի դաշտ նետվել զոհվելու և իր արյունով ոտնակոխված Հայաստանն ազատագրելու համար։ Եվ այդ ազատությանը հայ ժողովուրդը պարտավոր է հասնել իր զավակների ջանքերով։ Չնայած բանաստեղծությունը գրված էր ժողովրդական երգի ձևով և կրում էր «Աղասու մոր երգը» վերնագիրը, սակայն, անկասկած, Պատկանյանը Հայաստանի ազատագրության հույսը կապում էր ոչ միայն գյուղացիական խավի պայքարի հետ, այլ, ինչպես իր բոլոր ստեղծագործություններում պայքարի կոչ անում ամբողջ ազգին, համազգային ապստամբության մեջ տեսնելով հնարավոր ազատության գրավականը։

պատմության վերաբերյալ, այնպես էլ կազմելու ընթացքում ցուցաբերած մեծ ու մանրակրկիտ աշխատանքը։ Լեզուն մշակված է և հասկանալի բոլորի համար, որը վերջին առավելությունը չէ հայերի համար, որոնց մեծամասնությունը կարիք ունի ոճի պարզության։ Ընդհանրապես, այս պատմությունն արժանի է ուշադրության նաև այն պատճառով, որ նրա հեղինակը համարյա առաջին անգամն է ծանոթացնում Արևելքին Ռուսաստանի հետ այսպիսի լավ կողմով, հանձինս նրա մեծ կայսեր։ Պատմական փաստերը բոլորը ճիշտ են, ինչպես երևում է պ. հեղինակը օգտվել է բոլոր հնարավոր աղբյուրներից։ Պետրոսի անձնավորությունը տրված է այնպես, ինչպես այն ընկալում է լուսավորյալ Եվրոպան՝ ուժեղ, մեծ, հանճարեղ և հնարագետ» (ԳԱԲ, ՌՊՖ, № 1282)։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
«ՀՅՈՒՍԻՍ»

Քանի որ գրաքննչական ատյանը մերժել էր «Երիտասարդ Հայաստան» խմբակցության ապագա օրգան հանդիսացող «Քաղաքական և գրական լրագիր» հրատարակելու Մ. Բուդաղյանի իրավունքը, ուստի անհրաժեշտ էր գտնել հրատարակչի մի ուրիշ թեկնածու։ Ընտրությունը կանգ առավ Ռափայել Պատկանյանի վրա, չնայած այն հանգամանքին, որ նրա և խմբակցության մյուս անդամների միջև արդեն սկսել էին սկզբունքային որոշ տարաձայնություններ։ «Ռափայելն... առանց ծանուցելու յուր հորն Պետերբուրգի հայազգի մեկենասների և յուր մեծ ծագած շփոթից հանգամանաց մանրամասնություններին, միայն գրեց, թե ազգասերք խոստանում են ինձ նյութական օգնություն մի լրագիր հիմնելու «Հյուսիս» անվամբ»,— պատմում է Գաբրիել Պատկանյանը[1], որը 1860 թ. ամռանը ազատվել էր բանտից և բարձրագույն հրամանով կարգազուրկ լինելուց հետո աշխարհական կյանք էր վարում Ն. Նախիջևանում. «Թեպետ ազգասիրաց անունները Ռափայել չէր գրել յուր հորն գրած նամակի մեջ,— շարունակում է պատմել Գաբրիել քահանան.— բայց հայրն, որ գիտեր, թե Իզմիրյանն ընծայել է Ռափայելին մի տպագրական մամուլ, քաջահույս էր, որ այս ազգասիրաց թվումն նա ևս պիտի լինի և նորա նման անշուշտ պիտի Ռափայելին օժանդակ լինի եղբորորդին հոր յուրո տեր Գաբրիելի... Ուրեմն Տեր-Գաբրիելն պիտի վըստահ լիներ, որ Քերովբեն պիտի օգներ լրագրի հրատարակությանն և Եղյանի օգնությունն ևս նորա համար ապահովեր և ոչ այսչափ միայն, այլև Սանասարյանի օժանդակությունն այն լրագրի համար անկասկած առներ»[2]։

1861 թ. հուլիսի 3-ին Ռափայել Պատկանյանը գրաքննչական ատյանին է ներկայացնում իր խնդրագիրը «Հյուսիս» լրագիր հրատարակե-

[1] «Հիշատակարան», էջ 655։

[2] Նույն տեղում, էջ 656։

լու իրավունք ստանալու մասին[3], և միաժամանակ դիմումին կցում՝ լրագրի մանրամասն ծրագիրը։ Ըստ դիմումի, «Հյուսիս»-ի հրատարակման հիմնական նպատակներից մեկը ինչպես Ռուսաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս ապրող հայերին այն բարերարությունների հետ ծանոթացնելն է, որ նրանք ձեռք են բերել Ռուսաստանի տիրապետության տակ անցնելուց հետո։ «Մի խոսքով, մեր պարբերական հրատարակությունը պիտի դառնա իմ երկրորդ հայրենիքի՝ Ռուսաստանի անընդհատ գովերգողը, որովհետև միայն այս կերպ կարող կլինեմ իմ երախտագիտությունը հատուցել մեծ Ռուսաստանին, որի բարերար պտուղներից օգտվել և օգտվում եմ», գրում էր նա իր դիմումում. «Չեմ կարող չխոստովանել, թե ընդամին ես նկատի չունեմ և իմ գոյության միջոցները, բայց այս դեպքում ամենակարևոր խնդիրը կա և կլինի իմ հայրենակից հայերին և, հատկապես նրանց, ովքեր ապրում են Ռուսաստանի սահմաններից դուրս, ապացուցել, որ եթե նրանք երբևիցե կամենան վայելել լիակատար հանգստություն, որը տրվում էր խաղաղությամբ և իր ունեցվածքը վայելելու այն երջանկությամբ, որը կայանում է դավանանքի ազատությամբ, տիրապետող ժողովրդի հետ իրավահավասարությամբ, բոլոր տեսակի ծառայություններին, ներառյալ նաև կայսրության բարձր աստիճաններին, մուտք ունենալում... Եվ մարդկային կյանքի այս բոլոր բարիքները տրվում են նրանց միայն Ռուսաստանի միջոցով։ Ինքս համակված լինելով այս համոզմունքներով, իմ եղբայրակիցների նկատմամբ տածած սիրուց, նույնը կներշնչեմ նաև նրանց» (VI, 472, 473)։

Հայտնի չէ արդյոք դիմումի ողի՞ն, թե դեռևս Գամառ-Քաթիպաների և մյուս գրքերի տպագրություններից գրաքննչական ատյանին և III բաժանմունքին հայտնի Ռափայել Պատկանյանի անձնավորությունն օգնեց արագորեն ստանալու պահանջված թույլտվությունը, բայց արդեն սեպտեմբերի 10-ին III բաժանմունքից ստացված դրական պատասխանի հիման վրա, նույն ամսի 16-ին գրաքննչական ատյանը որոշում է կայացնում թույլատրել «Հյուսիս» պարբերականի հրատարակությունը, պայմանով, որ հանվեն քաղաքական բաժինը և տոնացույցերը, իսկ հայտարարությունները տպվեն միայն հայերեն[4]։

Կարծես ամեն ինչ արդեն պատրաստ էր լրագրի հրատարակությունը սկսելու համար, մանավանդ, որ խնդրագրին կից ներկայացված ծրագրի մեջ նշված էր անգամ հրատարակության ամիսը՝ օգոստոսի 1-ը։

---

[3] Տե՛ս ЦГИАЛ, ֆ. 777, ց. 1, գ. 5788, թ. 1—7 և (VI, 470)։

[4] ЦГИАЛ, ֆ. 777, ց. 1, գ. 5788—1—7։

Սակայն այնքան երկար սպասվող թույլտվությունը ստանալուց հետո լրագրի հրատարակումը առաջին 6 ամիսների ընթացքում չիրականացվեց։ Դրա պատճառը ոչ միայն օրըստօրե ավելի բուռն բնույթ ստացող սկզբունքային վեճերն էին, այլ նաև Եղյանի, Սանասարյանի և Պատկանյանի միջև առաջացած անձնական բարդ փոխհարաբերությունները, ինչպես նաև Պատկանյանների ընտանիքին հասած նոր, ծանր հարվածը։ 1860 թ. մարտի 22-ին Ռոստովի բանտից ազատված և նույն թվի օգոստոսի 3-ին քահանայագործելու իրավունքից զրկված Գաբրիել Պատկանյանը փորձ կատարեց մասնավոր դասերով պահպանելու իր գոյությունը Ն. Նախիջևանում։ Չնայած երկար տարիների բանտարկությանը, նա շուտով իր տանը բացած դպրոցում հավաքեց 50-ից ավելի աշակերտներ և առաջին անգամ կյանքում ամբողջությամբ տրվելով ուսուցչության գործին, մեծ հաջողությունների հասավ։ Ն. Նախիջևանի և շրջակա գյուղերի բնակչությունը սկսեց նախընտրել նրա մասնավոր դպրոցը նորաստեղծ Խալիբյան ուսումնարանից, և շուտով Գաբրիել Պատկանյանի աշակերտների թիվը ավելին էր, քան Գաբրիել Այվազովսկու հիմնած դպրոցում։ Թե՛ Խալիբյանին, թե՛ Այվազովսկուն, անհրաժեշտ էր անմիջապես ազատվել Գաբրիել Պատկանյանից, նրա անընդհատ աճող հեղինակությունից, Խալիբյան դպրոցը ամայացնող նրա մրցակցությունից։ Եվ, ահա, 1861 թ. հունիսի 13-ին նրանց հաջողվեց նորից ձերբակալել տալ նախկին քահանային և առանց դատ-դատաստանի աքսորել հեռավոր Վյատկա։

Անընդհատ զբաղված լինելով հոր գործով, Ռափայել Պատկանյանը ժամանակ չէր գտնում լրագրի հրատարակման հետ կապված աշխատանքները սկսելու, որը պետք է ենթադրել, դժգոհությունների առիթ էր տալիս նրա ընկերակիցներին։ Դժգոհությունների ու խանդի պոռթկումներ էր առաջացնում Սանասարյանի մոտ նաև Ռափայելի և Մարիա Ստեպանովայի միջև ծնունդ առած համակրանքը, որ առանձնապես զգացվում էր Ռափայելի դեմ հարուցած մեղադրանքների ժամանակ Մարիա Ստեպանովայի պաշտպանական ելույթներում։ Հիշենք Գաբրիել Պատկանյանին ուղարկված նրա նամակում «Ես նորա քանքարն գնահատելով նորան առաջ ծածուկ և ապա հայտնի պաշտպան կանգնեցի» արտահայտությունը։

«Բուդաղյանն ու Եղյանն բազում անգամ Սանասարյանին ասում էին, թե այդ օրիորդն դեպի Ռափայելն ես ունի համակրություն»,— գրում է Գաբրիել Պատկանյանը։ «Նոքա Սանասարյանի սրտի մեջ կասկած և հաջաղանք սերմանեցին, թե քո սիրուհին բեղանից ստանում է

և Ռափայելին հատուցում։ Սանասարյանն հավատաց և սկսավ ընդ ակամբ հարել Ռափայելի վրա։ Ռափայել... տեսնելով, որ յուր բարի սերմանց փոխարեն որոմն երևեցավ, Պատկանյան արյունն մոլեգնեցավ, չմտածեց, թե ազգային մեծ և բազմարդյուն ապագա պիտի խանգարե, երբ որ իմացավ, թե այս ցրտության պատճառն Սանասարյանի հաչաղանքն է, զայրացավ, որ Սանասարյան արժան համարեցավ Բուդաղյանի և Եզյանի զրպարտությանց հավատալ և յուր պարկեշտ և համեստ կենցաղավարության վերա կասկածանց ստվեր արձակել, անհայտի հափշտակեց այն օրիորդն Սանասարյանի ծոցիցն ու տիրապետեց։ Սանասարյանի բողոքն դադարեցրեց Իզմիրյանի բարեկամությունն, որ ուներ առ Ռափայելն։ Քերովբե Պատկանյանն ևս ազատ չմնաց Եզյանի որոգայթներից։

...Սանասարյան... Ռափայելից երեսն դարձուցանելով սկսավ նորա ամեն ազգասիրական գաղափարների դեմ պատերազմ հռչակել։ Ռափայելն ոչ գոլով երկչոտ երիտասարդ, միայնակ որոշեց անձնասիրությամբ ծառայել ազգի բարյացն...»[5]։

Այժմ նախկին համախոհները դարձան հակառակորդներ։ Դժվար էր Ռափայելի համար պայքարել նման հզոր թշնամիների դեմ։ Ե՛վ հասարակական կարծիքն էր նրանց պաշտպանում, և՛ տնտեսական ուժն էր նրանց ձեռքին։ Մենակ, անօգնական, առանց կանոնավոր եկամտի, առանց տպագրության հնարավորության անհրաժեշտ էր պայքարի ելնել և տարածել իր գաղափարները բոցաշունչ բանաստեղծություններով։ Այսպես ստեղծվեցին «Իմ սոխակին» և «Օտար օրիորդ և հայ պատանի» ծրագրային ոտանավորները, որոնք հակադրվելով «Երիտասարդ Հայաստան» խմբակցության հիմնական դրույթներին, անհապաղ մարտի էին կոչում հայերին, հորդորում ներգաղթել Հայաստան և չսպասելով ոչ մի օգնության, ոչ մի «նպաստի», Հայաստանի որդիների ձեռքով, նրանց հեղած արյունով վերագտնել կորսված հայրենին։

Բացի բանաստեղծություններից Ռափայելն իր անհավասար պայքարը առաջ էր տանում նաև հոդվածներով և բանավոր քարոզներով։ Գաբրիել Պատկանյանի «Հիշատակարան»-ում բերված գրառումներից մեկը, ամենայն հավանականությամբ, պահպանել է հենց 1862 թ. աշնանը գրած «Ազգ և ազգություն» հոդվածի բովանդակությունը, որն իր արծարծած գաղափարներով սերտորեն կապված է հիշյալ ծրագրային ոտանավորների հետ։

«Ռափայելն ցանկանում էր օր առաջ հայերի մեջ տարածել մի բանի

[5] «Հիշատակարան», էջ 640, 651—655։

դյուրին գաղափարներ, թե ինչ է նշանակում ազգն և ինչ է նշանակում Հայոց ազգ, թե ինչ նշանակություն ունի ազգությունն և ինչ նշանակություն ունի հայությունն, թե ինչ է նշանակում ազգն յուր սիրել, թե որքան ազնիվ գործ է ազգասիրությունն, թե մեր Հայոց ազգն, որ հեռացել էր Հայաստանի կողմերից ինչ է կորուսել, թե այն կորուսած բանն որքան թանկագին և հավիտենական իր է, թե յուր կորուսածը յուր ամենասիրեցյալ հայրենիքն է, որ այսօր պարսից և քրդի ձեռքին, ինչպես մի դեղեցիկ կին ավազակների է մատնված։

Ռափայելն շտապում էր, որ ազգասիրության հետ միասին ազգի մեջ տարածե հայրենասիրություն. այս մասին կամենում էր նոր գաղափար տարածել, թե ինչ զանազանություն կա ազգասիրության և հայրենասիրության մեջ, որ թեպետ լեզուն մի անվամբ է ընդունում, բայց մեծ զանազանություն ունի ազգասիրությունն և հայրենասիրությունն։ Ընդհանրապես, կամենում էր հայի սրտի մեջ վառել այնպիսի հուր, որ հայերն միայն ազգասեր չլինին, այլ և հայրենասեր լինին, սիրեն յուրյանց ազգը, սիրեն յուրյանց հայրենիքն ոչ այնպես, ինչպես սիրում էին տասնյոթներորդ դարու սկզբին, երբ Շահ-Աբբաս կես միլիոնից ավելի հայ ժողովուրդ ժողովեց, ոչխարի նման առաջ գցեց և տարավ դեպի խորքն, այլ այնպես սիրեն, ինչպես սիրում էին նախնի հույնքն իրենց քարքարոտ հայրենիքն, մինչ Արտաշես պարսից թագավորն եկավ միլիոնավոր բազմությամբ, Լեոնիդես սպարապետն երեքհարյուր մարդով Թերմոպիլեսի նեղ անցքն պահպանեց և չթողաց Պարսից անցնել։

Այնպես սիրել, ինչպես Մովսես Խորենացին Հայկի և նորա որդվոց ու թոռանց պաշտպանությունը յուրյանց նոր հայրենիքին նկարագրեց, ինչպես սիրեց Վարդանն և յուր քաջարի ընկերներն, այնքան ժամանակ պատերազմելով, մինչև իրենք մեռան, որպեսզի յուրյանց հայրենին գերություն չտեսնի, այնպես սիրել, որպես սիրեց Դավիթ բեկն։

Ռափայելն այն մտքով էր յուր հորն գրել տվել Շահ-Աբբասի գերեվարությունն, որ ասե թե, եթե հայք մնան այն գաղափարներով, շատ Շահ Աբբասներ կցանկանան հայերին դարձյալ ոչ թե Իսպահան, այլև, Հնդստան հյուրասիրել»[6]*։*

Իհարկե, Պատկանյանը բանաստեղծորեն հեշտ էր լուծում Հայաստանի ազատագրության հարցը, առանց որևէ նախադրյալների, առանց Ռուսաստանի օգնության մեն-մենակ դարավոր թշնամու դեմ ելնելու պահանջով։ Եվ միանգամայն հասկանալի է այն հանգամանքը, որ նախկին համախոհները հրապարակով «Երազկոտ և դատարկախոս» էին ան-

[6] *Նույն տեղում, էջ 673։*

վանում «Հայկ ու Լևոնին մոռանանք»-ի հեղինակին։ Սակայն նրա իսկական բանաստեղծական ներշնչանքով գրված բոցաշունչ տողերը հասան իրենց նպատակին, նրանք կարողացան վառել հայրենասիրության ջահը երիտասարդության սրտերում, կարողացան արթնացնել ազգային արժանապատվության թմրած զգացումները։ Այսինքն, այն նպատակը, որի իրականացմանն էր նվիրել իր կյանքը Ռափայել Պատկանյանը, իրագործվել էր նրա ներքին անհաղթահարելի ուժով գրված բանաստեղծությունների ու պոեմների գոյությամբ։ Հաղթանակել էր բանաստեղծը, պարտություն կրել՝ քաղաքագետը։

Թե ինչպիսի արձագանք էին գտնում Ռափայել Պատկանյանի գաղափարները Պետերբուրգի հայկական գաղութի որոշ ներկայացուցիչների շրջաններում, դժվար է ասել, պետք է ենթադրել, որ օրըստօրե ավելի դժվար էր դառնում պայքարել պետերբուրգաբնակ ազդեցիկ ընտանիքների ներկայացուցիչների հետ, որոնցից շատերը այժմ նրա հակառակորդներն էին դարձել։ Սակայն նրա բանաստեղծությունները խանդավառ ընդունելության էին արժանանում Թիֆլիսի Մարկոս Աղաբեկյանի խմբագրած «Կռունկ Հայոց աշխարհին» ամսագրի էջերում։ Այնտեղ էին տպվել «Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը» և «Դև Մրուս» պոեմները, «Բոնի պսակ», «Աղասու մոր երգը», «Իմ սոխակին», «Օտար օրիորդ և հայ պատանի» բանաստեղծությունները։ Ռափայել Պատկանյանի դիրքորոշումը ցարական Ռուսաստանի նկատմամբ ընդհանրապես շատ եզրեր ուներ ազգային-պահպանողական այն խմբավորումների հետ, որոնց պարագլուխներն էին Գևորգ Ախվերդյանը, Պետրոս Շանշյանը, Մարկոս Աղաբեկյանը, Պետրոս Սիմեոնյանը և ուրիշներ։ Ուղարկելով «Կռունկի» խմբագրությանն իր ծրագրային «Օտար օրիորդ և հայ պատանի» բանաստեղծությունը, Պատկանյանը «Դև Մրուս»-ին կցած առաջաբանի նմանողությամբ իր այս գործը փարձյալ համարում էր «Մի խլվլցի երիտասարդի» ձեռքից առնված հին երգարանից քաղված ոտանավոր։ Անդրադառնալով բանաստեղծության գաղափարական բովանդակությանը Պատկանյանը այն մեկնաբանում էր հետևյալ ձևով. «Այս ոտանավորի մեջ երևում է հայոց նեղությունը հյուսիսային տիրապետող (լեհ) ազգից և հույսը՝ մի օր ազգովին ազատվելու օտար լծից»[7]։

Ակնարկը միանգամայն պարզ էր, ինչպես նաև պարզ էր ռուսական ինքնակալությանը լեհ անվանելու համար ստեղծված «խլվլցի երիտասարդի» մտացածին գոյությունը։

Պետք է ենթադրել, որ Պատկանյանը դեռևս 50-ական թվականների

[7] «Կռունկ Հայոց աշխարհին», 1862, № 5։

կեսերից, երբ կապ էր հաստատել Անդրկովկասում հանդես եկած «նոր մարդկանց» հետ, բաժանում էր ազգային-պահպանողական խմբակցության ռուսական ցարիզմի և նրա քաղաքականության նկատմամբ ցուցաբերած բացասական վերաբերմունքը, սակայն, հակառակ ապագա անկախ Հայաստանի ազատության հենարանը Ռուսաստանի սահմաններից դուրս գտնելու նրանց գաղափարախոսությանը, այդ շրջանում Հայաստանի ազատագրումը կապում էր իր իսկ որդիների, հայերի համընդհանուր ապստամբության հետ։

Զգալով, որ Սանասարյանի հետ ունեցած բախումից հետո այլևս անհնարին է Պետերբուրգում ապրել և պայքարել իր գաղափարների համար, Ռափայելը սկսեց ուղիներ որոնել մայրաքաղաքից հեռանալու համար։ Այս առումով ուղղակի փրկության մի դուռ էր Գևորգ Քանանյանի՝ Լազարյան ճեմարանում նրան դասեր տալու առաջարկությունը։ 1861 թ. Լազարյան ճեմարանի տեսուչ էր նշանակվել Քանանյանի վաղեմի հովանավոր Յանուարի Նեվերովը, որը և շտապել էր վերատեսչի պաշտոնով իր մոտ բերել Քանանյանին, վերջինս էլ ցանկանալով օգնել ընկերոջը հայոց լեզվի դասեր էր նախատեսել նրա համար։ Բայց դրա համար անհրաժեշտ էր թեկնածուի կոչում, որի համար և 1862 թ. սկզբներից լրջությամբ սկսեց պարապել Ռափայել Պատկանյանը։ Թեկնածուական-դիսերտացիայի համար ընտրելով «Հայ դպրությունների պատմություն» թեման, նա անմիջապես գործի անցավ, շուտափույթ ավարտելու և Պետերբուրգը ինչքան կարելի է արագ թողնելու հաստատ որոշումով։ «Շնորհակալ եմ հուսադրիչ նամակիդ համար,— գրում է նա Քանանյանին։— Ես այլազգ չէի կարող ակնունել քեզանից. ես գիտեի, որ դու, եթե մոռացած էլ լինեիր, չպիտի տեղական լիներ։ **Իմ գալս այդտեղ արդեն կարի հարկավոր է լինում** (ընդգծումը մերն է—Մ. Ս.), ինչու որ տերությունից ես թույլտվություն ստացա «Հյուսիս» անունով օրագիր հրատարակելու, որ գալիս, ինարկե, իրավունքս կբերեմ այդտեղ և եղբայր ուսանողներիս մեծապես նյութապես կշահեցնեմ։ Խորհուրդ ես տալիս կանդիդատություն ես ստանալու, եղբա՛յր, եթե հնար ունենամ կանեմ։ Բայց որ ասում ես՝ կարի հարկավոր է, այդ ինձ մոլորեցնում է, բայց ես այնքան չեմ երկնչում, վասնզի այժմ կողմնակի կամ օգնական առարկաներից ազատ լինելով՝ հույս ունիմ դիարդեիցս ընկճել և այդ։ Ինչ ասել կուզե, եթե այդ աստիճանն ստանամ, կջանամ մի օրինավոր շարադրություն գրելու հայոց դպրության վերաբերած» (VI, 246)։

Լազարյան ճեմարանում դասեր ստանալը Քանանյանը և Պատկանյանը չէին դիտում լոկ որպես Պետերբուրգից փախչելու կամ նյութական-

ապահովություն գտնելու հնարավորություն, այլ առաջին հերթին ազգի քրիստասարդության հետ անմիջական կապ հաստատելու և նրա վրա բարոյապես ազդելու մի հզոր միջոց։ «Եղբայր, դու ինձ առաջարկում էիր տեղ ունենալ Լազարյան ճեմարանի մեջ, թեկուզ առաջին անգամ չնչին վարձատրությամբ, բայց, ինչպես ասում էիր և ինչպես ես չէ չէի պատասխանում քեզ, պետք է սորանով մի բարոյական կապ ունենալ ազգի հետ և այնուհետև, ըստ կարյաց, ազդել նորա վերա, իհարկե, գրականական միջնորդությամբ (VI, 248),— գրում է նա այդ առաջարկությունը ստանալուց ամիսներ անց, թեկնածուական աստիճանը ստանալուց հետո, երբ անհայտ պատճառներով ձգձգվում է Մոսկվա տեղափոխվելու հնարավորությունը։ «Մեծ ցնծությամբ, ուրախությամբս սիրտս թրնդալով մի անգամ քեզ իմաց էի արել, թե այժմ կարող ենք սկսել այն, **ինչ որ իմ և քու ազնիվ խորհրդածությունների (երբեմն) պտուղն էր,** (ընդգծումը մերն է—Մ. Ս.),— գրում է նա մի քանի օր անց,—բավականին շատ ժամանակ անցնելից հետո թախկացրիր ինձ նամակով, թե «թեև խոստմունքես չեմ հրաժարվում, բայց սպասե x ժամանակով», այսինքն, երբ բերնես ատամներս կթափին, միտքս կհոգնի, հոգվովս անգամ կզառամանամ» (VI, 250)։

Հունիսի 29-ին ավարտելով «Հայ դպրությունների պատմություն» աշխատությունը (VI, 247) և հաջողությամբ հանձնելով պահանջվող առարկաները, Ռափայել Պատկանյանը 1862 թ. օգոստոսի 14-ին պաշտպանում է իր թեկնածուական աշխատանքը և ստանում Պետերբուրգի համալսարանի թեկնածուի կոչում[8]։ Սակայն Մոսկվա տեղափոխվելը դարձյալ անընդհատ ձգձգվում էր և, ինչպես ենթադրում էր Ռափայելը, ոչ առանց Լազարյան ճեմարանի դասախոսներից ոմանց և մանավանդ Մկրտիչ էմինի սադրանքների։

Մինչդեռ Մոսկվա տեղափոխվելը անհրաժեշտ էր Ռափայել Պատկանյանին ոչ միայն Լազարյան ճեմարանում գործունեություն սկսելու և իր նախկին համախոհների հետապնդումներից ազատվելու, այլ առաջին հերթին Մարիա Ստեփանովայի հետ ունեցած բարդ ու հակասական հարաբերություններին վերջ դնելու համար։ Ամբողջ հոգով կապված լինելով նրա հետ, Ռափայելը տեսնում էր նաև իրենց հետագա միասին կյանքի ողջ անհնարինությունը։ Շրջապատի և հարազատների, մասնավորապես Հովհաննես եղբոր դժգոհությունը և ծաղրալի հայացքները ստիպում էին նրան լրջորեն մտածել իր կատարած քայլի հետևանքների մա-

[8] ГИАЛО, ֆ. 14, ց. 5, գ. 272, թ. 15։

սին[9]։ Անհանգստություն էր պատճառում նաև այն հանգամանքը, որ Օտարուհին չի կարողանա, չի ցանկանա տրվել իր կյանքի էությունը կազմող ազգային գործունեությանը։ Այդ տանջալից մտորումների արձագանքները կարելի է գտնել «Օտարուհին և հայ երիտասարդ» բանաստեղծության մեջ.

Օտարուհին ինձ ասաց. «Հե՞ր ես լալիս, արցունքը
Հեղեղի պես ինչո՞ւ են ողողում քու աչքունքը,
Քու տրտմության ճար ունիմ, կփարատեմ քու դարդը,
Թըշիս վըրա չե՞ս տեսնում փայլած շուշանն ու վարդը»։

— Ջուր մի՛ ցանար, սիրական, իմ դարդը չես փարատիլ,
Հոգիս հոգսից, ցավերից չես փրկիլ, չես ազատիլ.
Թո՛ղ իմ աչքից հեղեղա արտասունքի աղբյուրը,
Արտասունքն է լըվանում սըրտի խոր-խոր ցավերը։

(I, 84)

Բացի այդ ամենից, նրա ուշադրությունն էր սկսել գրավել իր եղբոր՝ Հովհաննեսի նորատի կնոջ հորաքրոջ աղջիկը, մանկամարդ Հռիփսիմեն, որը սովորում էր Պետերբուրգի Նիկոլաևյան փակ պանսիոնում։

Հովհաննեսը մեկ տարի առաջ, 1861 թ., ամուսնացել էր վաղուց ի վեր Պետերբուրգում բնակություն հաստատած պոլսեցի մի ընտանիքի դստեր՝ Մաքրուհի Մելքոնյանի հետ։ Մելքոնյանի ընտանիքը հարգված ու ճանաչված գերդաստան էր ինչպես Պոլսի, այնպես էլ ռուսահայ շրջաններում։ Ընտանիքի պապը՝ Պոլսի սուրբ Երրորդություն եկեղեցու ավագ քահանա՝ Տեր Զաքարիա Մելքոնյանը բազմիցս եղել է Լազարյան ճեմարանի պատվավոր անդամների թվում[10]։ Նրա դստեր ամուսինը, արաբերենի դասատու պրոֆեսոր Հովհաննես Մելիքղարի Ամիրղին երկար տարիներ պաշտոնավարել է Լազարյան ճեմարանում[11], ապա, Պետերբուրգ տեղափոխվելուց հետո աշխատանքի անցել տեղի համալսարանում։

---

[9] «Դու գիտե՞ս, նա որքան ծիծաղել է վրաս, երբ ես էլ Марья Григорьевна-ի որոգայթի մեջ մեկ օր գլորվել էի... Կյանքս մաշեց շուն-Վանյուշը վրաս ծիծաղելով»,— գրել է նա Քերովբե Պատկանյանին, 1875 թվականի մարտի 13-ին (VI, 408)։

[10] Տե՛ս «Семидесятилетие Лазаревского института», Մոսկվա, 1891, էջ 182։

[11] Մինչև հիմա որևէ բան հայտնի չէր Հովհաննես Ամիրղիի Լազարյան ճեմարանում ունեցած պաշտոնավարության մասին։ Սակայն, ինչպես պարզվում է «Семидесятилетие Лазаревского института» գրքում բերված պատվավոր անդամների ցուցակից, պրոֆեսոր Ամիրղին մինչև Պետերբուրգ տեղափոխվելը աշխատել է ճեմարանում։ Այդ է ապացուցում նաև նրա կնոջ հոր՝ Զաքարիա Մելքոնյանի նամակում հայտնված հետևյալ տե-

Հավանորեն պրոֆեսոր Ամիդին Պոլսից Ռուսաստան էր տեղափոխվել 40-ական թվականների սկզբներին, Զաքարիա Մելքոնյանի դստեր՝ Սանդուխտի հետ ամուսնանալուց հետո, իր հետ բերելով նաև կնոջ ավագ եղբոր՝ Մխիթարին։ Հենց Մոսկվայում էլ 1844—45 թթ. աշխարհ էր եկել նրանց դուստրը՝ Հռիփսիմեն, որին ռուսական հորջորջումով տանը Օլգա էին կոչում։

Հովհաննես Ամիդի մահից հետո տիկին Սանդուխտը Պետերբուրգում ձեռք էր բերել մի ծխախոտի ֆաբրիկա, որի գրասենյակում 1861 թվականից աշխատում էր Հովհաննես Պատկանյանը[12]*։*

Պետք է ենթադրել, որ Հովհաննեսի ծանոթությունը տիկին Ամիդիի հետ սկսվել էր ծխախոտի պիտակներ նկարազարդելու պատվերներից, որից հետո մշտական աշխատանքի անցնելով ֆաբրիկայում, ամուսնացել էր տիկնոջ եղբոր աղջկա՝ Մաքրուհու հետ։ Տասնյոթամյա Օլգա Ամիդին Ռափայել Պատկանյանի երևակայությունը վառել էր իր հայրենասիրական ձգտումներով, հայերեն սովորելու ցանկությամբ և, իհարկե, գեղեցկությամբ ու երիտասարդական հմայքով։ Մեկ տարի անց, դառնալով նրա օրինական փեսացուն, Պատկանյանը սրտի բերկրանքով գրում է Քանանյանին. «Եղբա՛յր սիրական, ես այժմ այնքան գոհունակ եմ վիճակես, որ դառնությամբ լցված անցյալս երևում է ինձ իբրև օտարի պատմած երազ, այդքան չնչին է երևում նորեմն կրած տարաբախտությունն, համեմատելով այժմվա բերկրանքիս հետ։ Եվ կարո՞ղ էր այլապէս լինել. աստված ինձ տվավ մի արարած, որ ասես թե նորա ձեռագործների մեջ անզուգական մարգարիտն է։ Եթե ոչինչ բանի տեղ չդնեի Օլգային ի վերուստ տված շնորհքը, յուր աշխատանքով ստացած գիտությունքը, կանացի սեռի դեղեցիկ որակները՝ գեղեցկությունը և պարկեշտությունը, եթե ասեմ քեզ, որ նա այնպես անձնազոհ *սիրում է յուր ազգը,*

ընկությունը։ Ճեմարանի պատվավոր անդամների թվում հիշատակվում է «Профессор Эмиди, находящийся на службе при Министерстве иностранных дел в Восточном училище» *(տե՛ս նույն տեղում, էջ 182), իսկ 1844 թ. ապրիլի 13-ին Հովհաննես և Խաչատուր Լազարյաններին ուղղված Զաքարիա Մելքոնյանի նամակում, որը գրված է վերջինիս կրտսեր որդու ճեմարան ընդունվելու կապակցությամբ, ասվում է. «զարդին ազդ արար մերս շնորհալի փեսայ,* պրօֆեսօր կայսերական ճեմարանիդ *ազա Յօհաննէս Մելքզար Ամէդի՝ ըստ առուկ պաշտպանութեամբ ձեր մանուանդ ի վերայ զաւակի փմոյ Հոգւոյս հատորի ձերդ ծառայի Մեծ յիշատակի գերապատիւ վեհազնեայից և միւս ես Սանդուխտ Աղախնոյ ձեր գեր քան զչափն պարտուասիրեալ ի գերազնութեանդ...»* (*Լազարյանների արխիվ, թ. 107, վ. 206, դ. 44)։*

[12] *«Մեղնից մեկը, Հովհաննես Պատկանյանը, կոլեգիական ռեգիստրատոր է, աշխատում է Ամիդիի ծխախոտի ֆաբրիկայի գրասենյակում», գրում է Ռափայել Պատկանյանը կոմս Սիվերսին ներկայացված իր դիմումի մեջ (VI, 497)։*

ցուցե ոչ մի կինարմատ Հայաստանի որդոցմեն, այդքանն ևս բավական էր, որ իմ կյանքը լցներ անմեկնելի ուրախությունով (ընդգծումը մերն է— Մ. Ս.): Խոսքս կարճ կտրեմ, եղբայր, ես քեզ ուրիշ բախտ չեմ ցանկանում, բայց եթե հայ հարսնացու զգայուն սրտով, անմեղ հոգվով, անապական ճաշակով» (VI, 261)։

Դառնալով նրա հայերենի ուսուցիչը և հաճախակի հանդիպումներ ունենալով գեղանի օրիորդի հետ, Ռափայելը ավելի ու ավելի էր խըճճվում իր զգացմունքների մեջ, ցանկանում փախչել ինքն իրենից։ Մարիա Ստեփանովան կռահելով նրա սրտում բույն դրած նոր ոգևորության մասին, խանդի տեսարաններ էր սարքում և զանազան ճանապարհներով բորբոքում թշնամությունը Սանասարյանի և Ռափայելի միջև[13]։

Սակայն, չնայած ընկերոջ բազմիցս կրկնվող խնդրանքներին ու հորդորանքներին, մագիստրոսական աստիճան ստանալու խոստմանը[14], Քանանյանը անընդհատ ձգձգում էր Մոսկվա տեղափոխվելու հարցը, ստիպելով Ռափայել Պատկանյանին վերջնականապես հրաժարվելու այդ մտքից։ Պաշտոն գտնելով Ռազմական մինիստրության դատական (աուդիտորական) գերատեսչությունում, նա 1862 թ. հոկտեմբերի 3-ին դիմում է ներկայացնում Պետերբուրգի համալսարանի գործերը կառավարելու համար նշանակված ժամանակավոր հանձնաժողովին, իր դիպլոմը հիշյալ գերատեսչություն ուղարկելու մասին[15]։ Միևնույն ժամանակ սկսում է հաշտության եզրեր փնտրել իր նախկին համախոհների և մանավանդ Մովսես Բուդաղյանի հետ «Հյուսիսի»-ի հրատարակությունը վերականգնելու համար։ Նույն հոկտեմբերի 22-ին նա կրկին դիմում է ներկայացնում Պետերբուրգի գրաքննչական ատյանին առաջին թույլտվությունից հետո անցած վեց ամիսների ընթացքում կորցրած իրավունքը վերականգնելու կապակցությամբ[16]։ Սակայն պարբերական հրատարակությունների տպագրության վերաբերյալ սպասվող նոր օրենքները,

---

[13] «Ստեփանովան հետո պարծեցավ, թե ես երբ տեսա, թե Ռափայելի խելքն ու միտքը Ամիդիի դստեր հետ էր և ինչպես խոստացել է ինձ, չի կամենում ինձ հետ ամուսնանալ, Ջինական պարիսպներ կառուցեցի նորա և Սանասարյանի մեջ, որ մինչև գերեզման միմյանց թշնամի լինեին»,—պատմում է Գաբրիել Պատկանյանը (տե՛ս «Հիշատակարան», էջ 702)։

[14] «Գուցե դու ինձ խորհուրդ կուտաս մագիստրոսության քննության պատրաստվելու, որի համար, իհարկե, պետք է գոնե ամբողջ մի տարի. եղբայր, ցանկությունդ և խորհուրդդ ես կընդունեմ, ինչպես ամենաբարին և ամենաազնիվն, բայց և դու լսե իմ չքմեղությունը, հոգնել եմ, տո՛ւր փոքր մի ժամանակ շունչ առնելու, հետո ես ուրախությամբ, նոր ուժով կսկսեմ ընդմիջված զբաղմունքս (VI, 249)։

[15] ГИАЛО, ֆ. 14, ց. 3, գ. 272, թ. 17։

[16] ЦГИАЛ, ֆ. 777, ց. 2, 1861, գ. 90—7 և հ. VI, էջ 476։

տրոնք նախատեսում էին սահմանափակումներ մտցնել նախորդ կանոնադրության մեջ, հնարավորություն չտվին Պատկանյանին այս անգամ հեշտությամբ ստանալու ակնկալվող թույլտվությունը։ Այն հետաձգվեց անորոշ ժամանակով, «պարբերական հրատարակությունների վերաբերյալ սպասվող նոր որոշումներից հետո» քննարկման ենթարկելու համար[17]։

Ռեակցիան վճռական գրոհ էր սկսել Ռուսաստանի առաջատար ուժերի նկատմամբ, սկսվել էին ձերբակալությունները, համարյա վերացված էր Չերնիշևսկու խումբը, Պետրոպավլովյան ամրոցի Ալեքսեևյան ռավելինում արգելափակված էր Միքայել Նալբանդյանը։ Առժամանակ կանգ էր առել քաղաքական կյանքը հայկական շրջաններում, դադարել էին Նզյանի տանը տեղի ունեցող պարապմունքները, հանդիպումները։ Բոլորը սպասում էին իրադարձությունների հետագա զարգացմանը և անցել էին խոր ընդհատակ։

Չհուսահատվելով նման պատասխանից Պատկանյանը շարունակում էր ապագա լրագրի համար բաժանորդներ գտնել, ինչպես նաև կրկին շահել Բուղաղյանի համակրությունն ու համագործակցությունը։ «Հիշատակարան»-ի մեջ բերված փոքր-ինչ խառը պատմությունից կարելի է մակաբերել, որ Ռափայել Պատկանյանի և Մովսես Բուղաղյանի միջև նույնիսկ պայմանավորվածություն է եղել թույլտվություն ստանալուց հետո «Հյուսիս»-ը երկու խմբագիրների՝ Ռափայել Պատկանյանի և Մովսես Բուղաղյանի անունով հրատարակելու մասին։ Թվում է, որ Գաբրիել Պատկանյանի՝ տասնամյակներ հետո կատարած գրառումները թեև տառապում են փաստերի որոշ կանտամինացիաներով, սակայն, հիմնականում ճիշտ են ներկայացնում իրադարձությունները, քանի որ Ռափայել Պատկանյանի՝ 1863 թ. հունվարին Քերովբե Պատկանյանին հղած տոմսակում խոսվում է ապագա լրագրի բաժանորդության գումարները Բուղաղյանին հանձնելու մասին։ «Ամենասիրելի եղբայր Քերովբե,— գրում է Ռափայելը,— ղրկում եմ քեզ այս նամակիս մեջը դրած լրագրիս ստորագրության մասնավոր ցուցակը, որն, հուսամ, քու ձեռքումդ գտնված հնարովն կջանաս պետք ածելու՝ թեկուզ կարծե իմ օգտին, թեկուզ ընդհանուր ազգին... Փողը ա՛ռ, բայց մինչև մարտն կամ ապրիլն կա՛մ մոտդ պահե, կա՛մ բանք դիր, կա՛մ Բուղաղովին տուր (ընդգծումը մերն է—Մ. Ս.) ամենը մեկ է» (VI, 253)[18]։

[17] Տե՛ս ЦГИАЛ, ֆ. 777, ց. 2, 1861, գ. 90—7 և (VI, 476) և գ. 90—10 և (VI, 478)։

[18] Նրքա պայմանն այսպես են կապել, որ «Հյուսիս» լրագրին խմբագիրն ունենա երկու մականուն, ոչ թե Ռափայել Պատկանյան և Մովսես Բուղաղյան, այլ Մովսես Բուղաղյան և Ռափայել Պատկանյան, որ այնուհետև, երբ բաժանորդագրությունն հասնի ապահովյալ վիճակի, Ռափայելին հանեն և «Հյուսիսն» մնա սեփականություն Բուղաղ-

Բացի բաժանորդագրության թերթիկներ տարածելուց, Ռափայել Պատկանյանը դարձյալ խնդրագրեր է հղում և՛ գրաքննչական ատյանին, և՛ ներքին գործերի մինիստր Վալուևին, թույլտվության գործը արագացնելու նպատակով[19]։ Սակայն, չնայած ձեռք առած բոլոր միջոցներին «Հյուսիս»-ի հրատարակման իրավունք ստանալու գործը դարձյալ տեղից չէր շարժվում։

Բացի «Հյուսիս»-ի մասին հոգալուց Ռափայելին զբաղեցնում էր նաև հոր՝ Գաբրիել Պատկանյանին աքսորից ազատելու, մի հնարքով Պետերբուրգ բերելու խնդիրը։ Շնորհիվ մեկ տարի առաջ ձեռնարկած միջոցների, օտար դավանությունների հոգևոր գործերի պետ Սիվերսին հղած դիմումներին, Դելյանովի միջնորդություններին, վերջինիս խորհրդով «Պատմություն Մեծին Պետրոսի» ուսումնասիրությունը թագաժառանգ Նիկոլայ Ալեքսանդրովիչին նվիրաբերելը տվել են իրենց դրական արդյունքները, հնարավորություն ընձեռելով ցրտաշունչ Վյատկայից Կոստրոմա տեղափոխել ետին թշվառության հասած հորը[20]։

Այժմ անհրաժեշտ էր Կոստրոմայից Պետերբուրգ բերել նրան։ Ռափայելը դարձյալ դիմում է Լազարյանների ու Դելյանովի օգնությանը, խնդրագրեր ուղարկում ներքին գործերի մինիստր Վալուևին, Եկատերինոսլավի նահանգապետին, օտար դավանությունների հոգևոր գործերի պետին, ներքին գործերի մինիստրության փոխկառավարիչ Պալենին, այդ դիմումներում մերկացնում Խալիբյանի և Այվազովսկու ստոր համագործակցությունը, մեղադրում Այվազովսկուն հոգևոր հովվին անհարիր արարքների մեջ. «Այս բոլորից հետո ի՞նչ բարիք կարող են սպասել հայերը Այվազովսկուց, որը անգթաբար և առանց խղճի խայթի մեղադրում է անմեղներին խարդախ զրպարտություններով և զվարճանում նրանց դժբախտություններով։ Մի՞թե այդպիսին պիտի լինի թեմական առաջնորդը, մի՞թե այդպիսին պիտի լինի հոգևոր հովիվը (VI, 495)։ «Մի՞թե

յանի։ Ռափայելն իմանալով, որ այս խարդախությունն լարել են համաձայնությամբ Սանասարյանի, պիտի Ռափայելին որպես վարձկան, որպես մշակ աշխատեցնեն և արդեն կազմակերպյալ «Հյուսիս»-ն նվիրեն Բուդաղյանին, Ռափայելն զայրույթ սրտին Մարիա Ստեփանովային առևանգում է, որով և ընկնում է նրա և Սանասարյանի միջև անհաշտելի թշնամություն», «Հիշատակարան», էջ 681։

[19] Տե՛ս ЦГИАЛ, ֆ. 777, ց. 2, 1861, գ. 90—10 և Հ. VI, էջ 478, ֆ. 777, ց. 2, 1863, գ. 43—1 և Հ. VI, էջ 479։

[20] Վյատկայի ճանապարհին թալանվելով ավազակաբարո ուղեկիցների կողմից, Գաբրիել Պատկանյանը մինչև Նախիջևանից և Պետերբուրգից օգնություն ստանալը, պատսպարանք էր գտել քաղաքի մոտակայքում գտնվող մի այրափոր շան բնի մեջ և երեք ամիս շարունակ ապրել շան հարևանությամբ, հաճախ ցուրտ գիշերներին ջերմանալով նրա մարմնի տաքությամբ (տե՛ս «Հիշատակարան», էջ 603 և հետո)։

այս ամենը արվել է վերոհիշյալ անձանց (Խալիբյանի և Այվազովսկու— Մ. Ս.) քմահաճույքները և ցանկությունները բավարարելու նպատակով, որովհետև նրանցից մեկը անբավ հարստությունների տեր է, իսկ մյուսը բարձր պաշտոն է զբաղեցնում» (VI, 490)։ Իմանալով, որ հորը Վյատկա աքսորելու պատճառ է հանդիսացել նրան հերձվածողության մեջ մեղադրող Այվազովսկու գրությունը, Պատկանյանը գրում է Կոմս Սիվերսին՝ «Չէ՞ր բարեհաճի արդյոք Ձերդ պայծառափայլությունը դիմելու Էջմիածնի Սինոդին և տեղեկանքներ ստանալու, մեղադրվե՞լ է արդյոք մեր հայրը հերձվածողության մեջ, եղե՞լ է արդյոք բողոք որևէ մեկից այդ մասին, ի՞նչ ձևով կկարողանա հայր Այվազովսկին ապացուցել այդ ամենը, ինչպիսի՞ փաստեր կբերի։ Մի՞թե այդքան հեշտ է մերկապարանոց կերպով մեղադրել մեկին հավատի երկպառակություն սերմանելու մեջ։ Այդ ավելի շուտ կարելի էր սպասել հենց իրենից՝ Այվազովսկուց, որը հայ եկեղեցուց անցավ կաթոլիկ եկեղեցու գիրկը, տպագիր հոդվածներով սկսեց վարկաբեկել հայ եկեղեցին, իսկ այժմ, պետք է կարծել, որ վերադարձել է նրա գիրկը ոչ թե ներքին համոզմունքից ելնելով, և ոչ էլ նրան նվիրված լինելու զգացումից, այլ փառամոլությունից և իշխելու մարմաջից, որ երևում է նրա բոլոր արարքներից»[21]։

Պետրոս Մեծին նվիրված նրա ուսումնասիրությունը Թագաժառանգի դրասենյակի տնօրեն, դնդապետ Ռիխտերի կարգադրությամբ ուղարկվել էր Պետերբուրգի համալսարանի արևելյան բաժնի կարծիքի, որտեղից ստացվել էր ամենաբարձր գնահատական[22], որի հետևանքով և

[21] ЦГИАЛ, ֆ. Департамент духовных дел, գ. 1859—1881, № 85, 88 և հ. VI էջ 490—494։

[22] Քանի որ «Պատմություն Մեծին Պետրոսի» աշխատության մասին Ղազարոս Աղայանի կողմից հայտնվել է կարծիք, որ այն մի բառացի թարգմանություն էր բավականին հայտնի ռուսերեն բնագրից (Ղ. Աղայան, հ. VI, 1963, էջ 371), ուստի ստիպված ենք այստեղ մեջ բերելու Պետերբուրգի համալսարանի արևելյան բաժնի տված բարձր գնահատականը, որի աշխատակիցները, անշուշտ, կնկատեին գործի թարգմանություն լինելու հանգամանքը։ Բացի դրանից, աշխատության բնագրի հայտնաբերման համար ձեռնարկած մեր մանրակրկիտ պրպտումները, նույնպես արդյունք չտվին։ Մնում է ենթադրել, որ Ղազարոս Աղայանի հայտարարության հոգեբանական առանցքը կազմել է Նդյանի խմբակցությանը հարելը, ցույց և այդ հավաքույթների ժամանակ լսած կողմնակալ կարծիքները։

«Նայելով պարոն Պատկանյանի կազմած «Պետրոս Մեծի պատմությունը» ես գտա,—գրում է համալսարանի դրախոսը,—որ այն կարող է լինել չափազանց օգտավետ հայ ընթերցող հասարակության համար, որը մինչև այժմ չի ունեցել ոչ մի նման բան։ Այն մի բարեխիղճ աշխատանք է, որից կարելի է զգալ, ինչպես պ. հեղինակի իմացությունները պատմության վերաբերյալ, այնպես էլ կազմելու ընթացքում ցուցաբերած մեծ

Թագաժառանգի դրասենյակից նրան բաց էր թողնվել 150 ռուբլի՝ գիրքը տպագրելու և ռուսական պետության հիմնադրման 1000 ամյակի տոնահանդեսին թագաժառանգին նվիրաբերելու համար։ Սակայն իր անվերջանալի դժվարությունների հետևանքով ծախսելով այդ գումարը անձնական կարիքների համար (VI, 249), Պատկանյանը ընկել էր ծանր կացության մեջ։ Անհրաժեշտ էր գրքի տպագրությունն իրականացնել մինչև տոնակատարությունը, նախ հորը օգնելու, ապա թագաժառանգի դրասենյակի տնօրենի առջև անհարմար դրության մեջ չընկնելու համար։ Մնում էր դարձյալ դիմել Քանանյանին՝ գիրքը Լազարյան ճեմարանի տպարանում լույս ընծայելու և իրեն մի 100 օրինակ ուղարկելու խնդրանքով։ Բայց Քանանյանը անուշադրության է մատնում ընկերոջ այս ակնկալությունը ևս, հասկացնելով, որ ինքը նույնպես դատապարտում է նրա վարքագիծը և զբաղված լինելով, չի կարող առաջվա պես ամբողջությամբ նվիրվել իրենց գործին։ Եվ չնայած դրան, խրախուսական խոսքեր է գրում, ինչպես նրա գրքի, այնպես էլ հրատարակվելիք շաբաթաթերթի վերաբերյալ։

Թեև Ռափայել Պատկանյանը զգում էր, որ Քանանյանը վերջին երկու տարիների ընթացքում աստիճանաբար հեռանում է իրենց փայփայած նպատակներից, բայց դեռ հավատում էր վերադարձի հնարավորությանը, դեռ աշխատում էր կապել իր հետ զանազան հանձնարարություններով ու խնդրանքներով։ Խոցվելով Քանանյանի մերժումից և նամակի հովանավորող շեշտից, Պատկանյանը վերջին ամիսների ընթացքում սրտում կուտակված դառնությունը ճափում է նրա առջև. «Կա՛մ դու շատ ես բարձրացել, սավառնել դեպի վերին գավառները, կա՛մ ես շատ եմ իջել դեպի բարոյական անդունդը, մեր մեջ հավասարությունը կորել, անհետացել է,—գրում է նա 1862 թ. դեկտեմբերին։—...Բա՛վ է, որքան ինձ անմեղ և իզուր էշի նահատակ արին, ծամեցին, ծամծմեցին շան ժանիքներով, այսուհետև ես հաշիվս կտրեցի, վերջացուցի ամեն ազգասերների հետ (ընդգծումները մերն են—Մ. Ս.)։ Չեմ կամենում ոչ որքի

ու մանրակրկիտ աշխատանքը։ Լեզուն մշակված է և հասկանալի, որը վերջին առավելություն չէ հայերի համար, քանի որ նրանց մեծամասնությունը կարիք ունի ոճի պարզության։ Ընդհանրապես այս պատմությունը արժանի է ուշադրության նաև այն պատճառով, որ նրա հեղինակը համարյա առաջին անգամն է ծանոթացնում արևելքին Ռուսաստանի հետ այնպիսի լավ կողմով, հանձինս նրա մեծ կայսեր։ Պատմական փաստերը ճիշտ են, ինչպես երևում է, պ. հեղինակը օգտվել է բոլոր հնարավոր աղբյուրներից (ընդգծումները մերն են— Մ. Ս.)։ Պետրոսի անձնավորությունը տրված է այնպես, ինչպես այն ընկալում է լուսավորված Եվրոպան՝ ուժեղ, մեծ, հանճարեղ և հնարագետ» (ԴԱՌ, ՌՊՖ, 1282)։

դուθը, ոչ ոքի ներողամտությունը, կամ վեհանձնությունը, ոչ ոքի խըրախուսը կամ ջատագովությունը, եθե ես վատ եմ, հրաժարվեցե՛ք ինձանից, ինչպես բորոտ, վարակիչ ժանտախտ. ես այն հասակումը չեմ՝ որ գլուխս, ի նշան քաջալերության, անցնող-դարձողին շփել տամ, իսկ եθե լավ եմ, օգտավետ եմ, գործս կամ անձս գնահատեցե՛ք, և այն վարձը, որ տալիս եք ինչպես հարկ իմ կամ գործիս որակին, կրկնապատիկ կշեռքով մի՛ք տալ ինձ իբրև վարձ և իբրև նպաստ։ Եղբա՛յր, բարեկամը բարերար չէ՛, հասկացի՛ր, որ վաղ կամ ուշ այդպիսի անբանական հարաբերությունը ինձի մինչև մահ պիտի սպաներ» (VI, 251)։

Միակ լուսավոր կետը Ռափայել Պատկանյանի համար այդ շրջանում օրիորդ Ամիդիի անկեղծ սերն ու նվիրվածությունն էր, որ ավելի ու ավելի բուռն ընθացք էր ստանում ամեն հանդիպումից հետո։ Թեև Ռափայելը դեռևս բնակվում էր Մարիա Ստեպանովայի համար վարձված սենյակում (Վասիլևյան կղզի, 4-րդ մաս, 1-ին θաղամասի № 5 տուն), նա ավելի ու ավելի հաճախակի էր գիշերում եղբոր տանը, որը դառնալով տիկին Ամիդիի եղբոր աղջկա ամուսինը, իր ձեռքն էր վերցրել ծխախոտի ֆաբրիկայի և խանութի ղեկավարությունը, աղդեցիկ դիրք ստեղծելով Պետերբուրգի գործարար շրջաններում։ Ծխախոտի պիտակներ տպելու համար Հովհաննեսը գնել էր մի փոքրիկ տպարան, ձեռքի մամուլ և բազմաθիվ մաշված տառեր։ Այս բոլորը հանձնելով Ռափայելին, նա տպարանատեր էր դարձրել եղբորը, որը և Յոնասոնին ունեցած պարտքի դիմաց θողնելով նրան Իզմիրյանի նվիրած մամուլը, ազատել էր իր բազմաθիվ տառատեսակները և տեղափոխել նոր տպարան։

Տպարանը դեռ չէր սկսել գործել, երբ սարսափելի հրդեհը համարյա ամբողջությամբ ոչնչացրեց Հովհաննես Պատկանյանի և տիկին Ամիդիի ծխախոտի գործարանը։

Սակայն, ամենացավալին այն էր, որ շուտով այրված ֆաբրիկայի պարտքերի դիմաց Հովհաննես Պատկանյանի և տիկին Ամիդիի ողջ ունեցվածքի հետ միասին վաճառքի հանվելու սպառնալիքին ենθարկվեց նաև Ռափայել Պատկանյանի նորաստեղծ տպարանը, որ դեռևս միայն ձևականորեն էր իր անվամբ։ Իսկապես որ ճակատագիրը հալածում էր Ռափայելին՝ ամեն անգամ նորանոր խոչընդոտներ դնելով նրա առջև, և այդ նկատեցին անգամ նրա հակառակորդներն ու բանտում նստած Միքայել Նալբանդյանը։ «Խոստովանում եմ, չեմ կարող չզարմանալ Ռափայելի անհաջողության հանդիպելուն յուր ձեռնարկած գործում։ Դու շատ հարմար համեմատություն ես անում ճակատագրի հալածանքի և θափառական հրեայի անեծքի մեջ։ Հավանական է, որ նա նրաշխավորել

է տիկին Ամիդիի համար, եթե նրա պարտքի տեղ ի վաճառ են հանում նրա տպարանական պարագաները»[23], 1863 թ. հուլիսի 18-ին Ալեքսեևյան ռավելինից իր եղբորն է գրում Միքայել Նալբանդյանը։

Բայց չնայած Ռափայելին համակած տագնապին, մինչև դատի արդյունքների ի հայտ գալը նա շտապում է տպագրել «Պատմություն Մեծին Պետրոսի» գիրքը 1000-ամյակի տոնակատարության հանդեսին հասցնելու և հորը Պետերբուրգ տեղափոխելու թույլտվություն ստանալու համար[24], ինչպես նաև խմբագրում և հավելումներ կատարում Գաբրիել Պատկանյանի գրած «Հայոց ազգի պատմության» մեջ, որը վերջանում էր 1862 թ. օգոստոսի 14-ի Զեյթունի ապստամբությամբ և Ազիզ փաշայի կանոնավոր զորքի պարտության նկարագրությամբ։ Պատմության մեջ մեծ տեղ էր հատկացված նաև Դավիթ-բեկի ազատագրական պայքարի դրվագներին, Պետրոս Մեծի արևելյան արշավանքներին, Իսրայել Օրիի, Հովսեփ Էմինի ձեռնարկած ազատագրական փորձերին։ Այս ամենից բացի հայր և որդի Պատկանյանները այս աշխատության մեջ փորձել էին ներկայացնել ոչ թե հայ թագավորների ու իշխանների պատմությունը, այլ առաջին շարք մղել ժողովրդի դերը ազգային պատմության կերտման գործում։ «...Շուտով կստանաս «Հայոց ազգի պատմություն» տպած իմ տպարանումս, եթե կարող ես, տարածե քանի մի օրինակ,—գրում է նա մի քանի ամիս անց Գևորգ Քանանյանին,—ասելն ավելորդ է, որ այս գիրքը շատ օգտավետ է, հենց այն հասկանալի պատճառով, որ իր ազգումը միակ է, ինչո՞ւ համար, որ նա, որքան ներեցին նյութերը, ազգի պատմություն դարձուցինք թագավորաց պատմության աղբյուրներեն (ընդգծումը մերն է—Մ. Ս.), կարդա՛, ինքդ էլ կտեսնես այդ» (VI, 263, 264)։

Իսկ ամենամեծ մտահոգությունը դարձյալ մնում էր «Հյուսիս» շաբաթաթերթի նյութերի նախապատրաստումն ու աշխատակիցներ գտնելը։ Բուդաղյանի հետ վերսկսված հարաբերությունները, հավանորեն, չտվին սպասված արդյունքները, և Ծղյանին հաջողվեց կրկին իրենց կողմը քաշել տատանվող Բուդաղյանին։ Մնում էր դիմել Քերովբե Պատկանյանին, որին նորից հաշտության ձեռք էր մեկնել Ռափայելը և խընդ-

---

[23] Մ. Նալբանդյան, ԵԼԺ, հ. IV, էջ 231։

[24] «Մեծ պասի վերջին շաբաթն էր։ Պիտի տպվեր «Մեծին Պետրոսի պատմությունը» և զատկի տոներին նվիրաբերվեր մի շատ բարձրաստիճան անձի, նրա ողորմածությունը հայցելու համար։ Դրանից կախումն ուներ իրանից հոր մայրաքաղաք բերելու հրաման ստանալը», պատմում է Ղազարոս Աղայանը (Ղ. Աղայան, հ. IV, Երևան, 1964, էջ 341)։

րել ինչպես Նրա, այնպես էլ Ալեքսանդր Ռոտինյանի աշխատակցությունը շաբաթաթերթին (VI, 259)։

Կար նաև Գաբրիել Պատկանյանը, սակայն, վերջինիս մշտական հափշտակությունները պատմական թեմատիկայով փոքր-ինչ անհանգստություն էր պատճառում Ռափայելին։ Առաջարկելով հորը թարգմանել Գրուբեից համապատասխան հատվածներ՝ Գեորգ Վաշինգտոնի, Բենյամին Ֆրանկլինի և Կոլումբոսի մասին, Ռափայելը միևնույն ժամանակ խնդրում է նրան ուշադրություն դարձնել ազգի ժամանակակից խնդիրներին, մասնավորապես Զեյթունի ապստամբության և նրանից բխող հետևանքներին։ «Ես Ձեզ շատ կենդանի խնդիրներ էի (ընդգծումը մերն է—Մ. Ս.) ուղարկել, դուք շատը նոցանից անտես արիք և միայն մեծարեցիք ինձ փոշիոտած Արշակունիքով և Հայկազունիքով, որի հիշատակը վաղուց-վաղուց թռել է ժողովրդի մտքեն, և ի հուշն ածելն այժմ ոչ տեղին է և ոչ օգտակար. այսպես, մենք պիտի արխիվարիուս լինենք, նրանի՞ մեզ» (VI, 256)։

«Հյուսիս»-ը ըստ Ռափայելի մտահղացման, պիտի դառնար ազգի հրատապ խնդիրների արձագանքողը, նրան ապագա ազատագրական պայքարի համար նախապատրաստողը։ Այսինքն նոր պարբերականին տրվում էր նույն այն դերը, որի համար ստեղծվել էին Գամառ-Քաթիպաները։ Այդ տեսակետից չափազանց հատկանշական է դեռևս 1862 թ. հոկտեմբերի 28-ին, այսինքն Զեյթունի դեպքերից ընդամենը 3 ամիս հետո կազմած և գրաքննության հանձնած «Հյուսիս»-ի հայտարարությունը, որին կցած էր թրով ու մտրակով սպառազինված զեյթունցու պատկերը։

«Հայտարարությունը» կազմելուց առաջ, զգալով, որ ինքը Ռուսաստանում կտրված լինելով ազգային խնդիրներից, չի կարողանա դառնալ ազգային կարիքների թարգման, Պատկանյանը հարաբերություններ է ստեղծում Հայաստանի տարբեր մասերում գտնվող գործիչների հետ շաբաթաթերթում «Հայրենական նամականի» բաժին ստեղծելու մտումով։ «... շտապում ենք հայտնելու,—գրում է նա «Հայտարարության» մեջ,—որ մի անձն մեզ խոստացել է պեսպես ազգային տեղեկությունք հաղորդելու, որ (եթե կատարվի) մենք դիտավորություն ունենք «Հայրենական նամականի» վերնագրով հրատարակելու «Հյուսիս»-ի մեջ։ Մենք հեռի ենք Հայաստանի ծոցեն, մեր ազգի ներկա վիճակը գիտենք այնքան, որքան կարելի էր իմանալ կամ մասնավոր թղթակցությամբ, կամ լսելով ճանապարհորդների պատմվածքը, կամ կարդալով ազգիս վերաբերյալ գրվածքը զանազան պարբերական գրքերի մեջ։ Այո, պա-

15—907

կասավոր է այդպիսի և այդքան ծանոթությունը և այդ իսկ պատճառը, որ մենք չենք հանդգնում մեր լրագրի վրա պատասխանատվություն առնուլ, երբ թե նա լինելու է ազգային կյանքի և վիճակի հայելի։ Այդ նախանձելի պատիվը մենք ուրախությամբ թողնում ենք մեր այն եղբայրներին, որոնց կարողությունը ի վեր է քանց մերը....։ Մենք մեզ համար պատիվ կհամարենք միշտ այդպիսիններու արձագանքը լինել։ Բայց մենք այն ևս գիտենք, որ մեր ազգի մեծագույն մասը կարոտ է շատ ուրիշ ծանոթությունների, որի ստանալու համար ուրիշ հնար չկա, բայց եթե մի որոշյալ խորհրդով *հրատարակված լրագրի միջնորդություն»[25]։*

«Հայտարարության» մեջ Պատկանյանը խնդրում էր ընթերցողներին ազգային ամեն մի լուր անհապաղ նամակով հաղորդել «Հյուսիս»-ի խմբագրություն, ինչ լեզվով էլ, որ հնարավոր լինի. «Փույթ չէ, եթե շարադրություն լինի գրված որպիսի և իցէ օտար լեզվով (շատ լուսավորյալ հայեր կան, որոնք իմանալով այլազգի 3—4 լեզու, միևնույն ժամանակ ոչ խոսել, ոչ կարդալ և ոչ գրել գիտեն հայերեն), կրկնում ենք, թող գրածը լինի ռուսերեն, ֆրանսերեն, տաճկերեն, վրացերեն և գերմաներեն, միայն թե բովանդակությունը լինի հայկական խնդիր»[26]։

Երկրորդ հարցը, որին անդրադառնում էր Պատկանյանը իր «Հայտարարության» մեջ, դա լրագիրը բանակռվի ասպարեզ չդարձնելու խնդիրն էր, որ անշուշտ բխում էր դարձյալ ազգի միասնությունը չպառակտելու մտումից։ Ինչպես տարիներ առաջ նա սոսկումով ետ էր վանում դավանաբանական վեճերը, այնպես էլ այժմ չէր ցանկանում «Հյուսիս»-ը դարձնել տարբեր հասարակական հոսանքների թատերաբեմ, այդ հոսանքների պայքարը համարելով «անպտուղ» և «անթույլատրելի» մեծ գործի համար նախապատրաստվող հայ ազգի համար։ «...Որպեսկիցե իբր-ազգասիրական, իբր-մարդասիրական, իբր-քաղաքավարական պատրվակով մեկի անունը սևացնելը, օգտավետ գործքը, ձեռնարկությունը ոտնակոխ անելը և ազգի առջև կասկածելի ցուցանելու ցանկությունը համարում ենք մեզ համար սոսկալի հանցանք»[27]։

Այս տողերի մեջ, բացի ազգային միասնությունը պահպանելու ձըգտումից, զգացվում էր նաև անձնապես իր նկատմամբ, իր ձեռնարկած գործերի նկատմամբ ծավալված պայքարն ու անբարյացակամությունը «Երիտասարդ Հայաստան» խմբակցության անդամների կողմից, որոնք դուրս վանելով նրան իրենց շարքերից, առիթը բաց չէին թողնում նշա-

25 «Հյուսիս», «Հայտարարություն», էջ 1։

26 Նույն տեղում։

27 Նույն տեղում։

վակելու նրա անձն ու գործը։ Մեկ տարի անց, «Գամառ-Քաթիպայի բանաստեղծությունքը» ժողովածուի լույս ընծայումից հետո Միքայել Նալբանդյանի գրած պարոդիաների բովանդակությունը մոտավորապես ներկայացնում էին այն վերաբերմունքն ու արտահայտությունները (վախկոտ, դատարկախոս, գայլի շարականներ ասող, գործից փախչող), որոնք օգտագործվում էին Ոսկյան-Բուդաղյան խմբակցության անդամների կողմից Պատկանյանի վերաբերյալ։ Հիշենք նաև Կատկովին գրած պատասխանի մեջ Պատկանյանի մասին Ոսկյանի օգտագործած «Երաշկոտ-դատարկախոս» որակումները[28]։ Քանի որ «Հյուսիս»-ը մնացել էր միայն Պատկանյաններին, ապա Ռափայելը նպատակահարմար էր համարում այն կոչել 13 տարի առաջ դադարած «Արարատ»-ի շարունակություն և նույնիսկ «Արարատ»-ի բաժանորդներին առաջարկում իր ժամանակին չստացած համարները լրացնել «Հյուսիս»-ով։

* * *

Հունիսի կեսերին կայացած դատը արդարացրեց ապահովագրված ֆաբրիկան հրդեհելու մեջ մեղադրվող Հովհաննես Պատկանյանին և տիկին Ամիդիին, և տպարանի վրա կախված ոչնչացման վտանգը վերացավ։ Մեկ ամիս անց մայրաքաղաք վերադառնալու իրավունք ստացավ Գաբրիել Պատկանյանը. «...Ավելորդ չեմ համարում այստեղ քեզ թախանձանոք խնդրելու, որ նորա դու ցույց տայիր այնպիսի հարգություն, որին նա արժանի է շատ և շատ պատճառով,— գրում է նա Քանանյանին հորը դիմավորելու համար Մոսկվա մեկնած մոր ձեռքով ուղարկած նամակում,— գլխու ալիքը մինչև արծաթանալը նա անցուցել է ազգին իսկապես, բարոյապես օգուտ բերելով. եթե միայն լոկ ընթերցանությամբ անցնել մեկ ամբողջ տարի, բավական չէր նորա գրվածքը կարդալու» (VI, 257)։

Պետերբուրգ հասնելուն պես Գաբրիել Պատկանյանը իջևանեց ավագ որդու բնակարանում, որտեղ արդեն տեղափոխվել էր նաև Ռափայելը։ Քանի որ Սիվերսին և Վալուևին ներկայացված բազմաթիվ խնդրագրերի մեջ Պատկանյան եղբայրները երաշխավորել էին, որ այսուհետև ոչ մի բողոք չի ներկայացվի նրանց հոր մասին, որովհետև և՛ որդիները, և՛ մայրը կաշխատեն մեկուսացնել նրան բոլոր հնարավոր առնչություններից, հակառակ դեպքում, իրենց կենթարկեն օրենքի բոլոր խստություններին։ Ուստի հենց առաջին օրը, տոնական ճաշից հետո պահանջ դրին

---

[28] Տե՛ս Ա. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 15։

հոր առջև առանց իրենց խորհրդի և գիտության ոչ մի նոր ծանոթություններ չսկսել և հին բարեկամների հետ հարաբերություններ չպահպանել։ Այսինքն, իմանալով նրա հախուռն ու բռնկվող բնավորությունը, հետագա ապահովության համար աշխատեցին կատարելապես մեկուսացնել առանց այդ էլ տարիների մեկուսացման մեջ գտնվող տառապյալին բոլոր ազգային խնդիրներից։

Մանկական տարիներից ի վեր անջատված լինելով իր զավակներից, ծանոթ չլինելով նրանց խառնվածքներին ու նրանց պաշտած խոհերին, հայրը առաջին իսկ օրերից սկսած հետաքրքրությամբ ուսումնասիրում էր թե՛ մեկին, թե՛ մյուսին ու բազմաթիվ նմանություններ գտնում իր և երկրորդ որդու միջև։ Նույն բռնկվող, անզուսպ խառնվածքը, նույն տարբեր հոգեվիճակների արագ հաջորդումը մեկը մյուսին, նույն ստեղծագործ արթուն ոգին, դժվարություններ ստեղծելու և դրանց դեմ մաքառելու նույն անհագ տենչը[29]։

Այդ նմանությունները արագ կերպով մտերմացրին հորն ու որդուն, և մի քանի օր անց Ռափայելը հոր առջև բացեց սիրտը՝ հայտնելով նրան իր ամենանվիրական զգացմունքների՝ օրիորդ Ամիդիի հանդեպ տածած սիրո մասին։ Ծանոթ լինելով Ռափայելի տնտեսական անապահով վիճակին, հայրը կասկած է հայտնում տիկին Ամիդիի դիրքավորման վերաբերյալ, սակայն Ռափայելը դարձյալ կրկնում է իր ամենամեծ փաստարկը. «Հայրիկ, ես այն օրիորդին սիրահար եմ»։ Ինչպես և սպասում էր տեր Գաբրիելը, տիկին Ամիդին կատաղի դիմադրություն ցուցաբերեց իր աղջկանը տարեկան 300 ռուբլի եկամուտ ունեցող մեկին տալու հարցում և միայն օրիորդի հաստատակամությունն ու Հովհաննես Պատկանյանի միջնորդությունը կոտրեցին տիկնոջ կամքը, և 1863 թ. օգոստոսին տեղի ունեցավ նրանց նշանադրության հանդեսը, և Ռափայելը այլևս անհարմար համարելով իր հարսնացուի տանը բնակվել մինչև պսակադրությունը, իր քրոջ որդու հետ տեղափոխվեց այլ բնակարան և երկրորդ անգամ լրագրի թույլտվությունը չկորցնելու համար սկսեց ցրել իր բարեկամների միջև բաժանորդագրության թերթիկները։

Սակայն, չնայած միջոցներ գտնելու հրամայական անհրաժեշտության, նա այս անգամ օգնության համար չդիմեց Գևորգ Քանանյանին, անգամ չուղարկեց լրագրի հայտարարությունը՝ Լազարյան ճեմարանում տարածելու խնդրանքով։ Եվ ընկերոջ զարմացական նամակին, սրտի խորքին կսկիծով հայտնեց իր հիասթափությունն ու ցավը բոլոր բարե-

[29] «Հիշատակարան», էջ 670։

կամներից և մասնավորապես Քանանյանից լքվելու ու մեղադրվելու համար։ Խոսեց իրեն համակած ծանր հիասթափության ու միայնության զգացմունքի մասին, որին անգամ չկարողացավ օգնել սիրասուն էակի մոտիկությունը, քանի որ իր կյանքի բովանդակությունը կազմող գործունեության և համագործակցության ճանապարհները փակվել էին նրա առաջ։ Պատկանյանը կարծում էր, որ «Հյուսիս»-ը նույնպես դատապարտված կլինի մահացման, եթե իրեն զորավիգ չլինեն ընկերներն ու համախոհները։ Ահա այսպիսի հուսահատական տրամադրությամբ, 1863 թ. սեպտեմբերի 30-ին պարտավորություն տալով գրաքննչական ատյանին «Հյուսիս» լրագիրը պարբերական հրատարակությունների վերաբերյալ ընդունվելիք որոշումներին ենթարկելու մասին, հոկտեմբերի 1-ին սկսեց նրա հրատարակությունը։ Առաջին համարի լույս աշխարհ գալը թշնամաբար ընդունվեց «Երիտասարդ Հայաստան» խմբակցության անդամների կողմից, Մովսես Բուդաղյանն անգամ հայկական եկեղեցում բազմության առջև ետ վերադարձրեց լրագրի օրինակը Գաբրիել Պատկանյանին, հայտարարելով, որ իրենց պետք չեն այնպիսի թերթեր, որտեղ գովաբանվում են լեհական ապստամբությունը ճնշած և այդ ամոթալի ճակատամարտում վերք ստացած զորականները, որ այդ ամենը հակառակ են իրենց գաղափարներին[30]։

Հայտնի է, թե ինչպիսի մեծ հույսեր էին կապում Լեհաստանի ապստամբության հետ ռուս հեղափոխական կազմակերպությունները, մասնավորապես Գերցեն-Օգարյով խմբակցությունը, դրա հետ միասին հայ հեղափոխական-դեմոկրատների փոքրիկ խումբը և Գաբրիել Պատկանյանի «Նամակ առ հրատարակիչը» վերնագրով հոդվածը, որտեղ կոչ էր ար-

[30] «Մովսես Բուդաղյան եկեղեցուց ելնելու ժամանակին, երբ որ տեսավ, թե տեր Գաբրիելն ևս ելավ, հանեց ծոցից ծալծլած «Հյուսիսն» և ասաց.—«Որդին այս թերթն ուղարկել է ինձ, բայց ես կարողություն չունիմ բաժանորդագրվելու»։ Տեր Գաբրիելն պատասխանեց. «Այդ թերթն ձեր հարգության ես եմ ուղարկել ընծա, իբրև վաղածանոթ բարեկամիս»։ Բուդաղյան պատասխանեց. «Շնորհակալ եմ, բայց եթե մյուս անգամ այդպիսի հոդվածներ լինեն մեջը ետ կուղարկեմ»։ Տեր Գաբրիելն հարցուց. «Այդ ո՞ր հոդվածն է ձեզ անախորժ, լրագրի խմբագիրն չի ունենար այնքան կարողություն, որ յուրաքանչյուր բաժանորդագրին հառաջագույն տա ընթեռնուլ և քննել յուր հոդվածները... ետ կուղարկեմ ասելն ավելորդ է»։ «Ինչպես ավելորդ է—պատասխանեց բարկությամբ Բուդաղյանն, մեր գաղափարները ի՞նչ է, դուք ինչ եք գրում, հարկավո՞ր էր այնքան գովել այն հայ զինվորներին, որ լեհաց պատերազմի մեջ վիրավորվել են...»։ Տեր Գաբրիելն պատասխանեց. «Պարոն Բուդաղյան, ո՞վ կարող է գուշակել, թե ձեր գաղափարներն ինչ է, եթե այն գաղափարն հրապարակի մեջ խոսված և դատված չէ, այլ մի խորշի անկյունում երեք-չորս հոգու բանդագուշանք է» («Հիշատակարան», էջ 684)։

վում Լեհաստանում կատարվող դեպքերի նկատմամբ հայերը շտապեն հայտնել իրենց երախտագիտությունը և հավատարմությունը Ռուսաստանին, պիտի մեծ վրդովմունք առաջացնեին նրանց շրջաններում։ Գաբրիել Պատկանյանի համար Լեհաստանը այն երկիրն էր, «ուր մեկ ժամանակ հայոց ազգը պանդխտության մեջ անտանելի հալածանք է կրել», և լեհահայերը Նիկոլ եպիսկոպոսի առաջնորդությամբ խսպառ զրկվել էին հայ դավանանքից, լեզվից, ազգությունից։ Նիկոլ եպիսկոպոսի ջանքերով գլուխ բերված լեհահայերի անհետացումը ու ձուլումը նա համեմատում էր Գաբրիել Այվազովսկու գործունեության հետ, մանավանդ, որ «Ծիածանի» մեջ Բեսարաբիայի առաջնորդը, բերելով Նիկոլի պատմությունը, հասկացնել էր տվել իրեն դեմ պայքարող նորնախիջևանցիներին, որ եթե իր առաջնորդությունը չընդունվի, ապա ինքը Նիկոլի նման կործանման կտանի ըմբոստ քաղաքի բնակչությանը։ Պատասխանելով Գաբրիել Այվազովսկուն Նիկոլի գործունեության մանրամասն պատմությամբ, որը կցած էր «Նամակ առ հրապարակիչը» հոդվածին, Գաբրիել Պատկանյանը նպատակ ուներ վեր հանել Այվազովսկու ապգադավ գործունեությունը և հակադրել իրար Լեհաստանի և Ռուսաստանի քաղաքականությունները օտար դավանություններ ունեցող բընակչության նկատմամբ, հասկացնել տալ, որ նրա նկրտումները Ռուսաստանում դատապարտված կլինեն ձախողման։ Ահա այս միտումներն էին ստիպել Գաբրիել Պատկանյանին բացասական վերաբերմունք ցուցաբերելու լեհերի ազատագրական պայքարին, իսկ խմբագիրը չէր առարկել նրան, քանի որ հայերի ազատագրական պայքարի հեռանկարները նա չէր առնչում ռուսական հեղափոխական պայքարի հետ։

Բացի վերոհիշյալ հոդվածից «Հյուսիս»-ի անդրանիկ համարում հանդես էին եկել Քերովբե Պատկանյանը «Մի քանի խոսք թերթ հրատարակելու մասին» հոդվածով, որին բնաբան էր ընտրված Սայաթ-Նովայի «Ամեն մարդ չի կանա խըմի, իմ ջուրն ուրիշ ջրեն է» քառյակը։ Տպագրված էր նաև Գաբրիել Պատկանյանի «Վարդան Մամիկոնյան» պոեմը և «Հայր վարդապետ Ալամդարյան» կենսագրական ակնարկը։

Սակայն, պետերբուրգյան այդ անդրանիկ պարբերականի ամենահետաքրքրական հոդվածը, «Հայրենի նամականի» ընդհանուր վերնագրի տակ տպագրված «Խոյեցիք»-ն էր, որտեղ, դեռևս «Հայտարարության» մեջ խոստացված բազմագիտակ անձը, մանրամասնորեն նկարագրելով Պարսկահայաստանի բնակչության թշվառ, անհեռանկար վիճակը, առաջարկում էր հերոսական ջեյթունը դարձնել մի փոքրիկ Հայաստան և սոված, հալածված, գողությամբ ու մուրացկանությամբ ապրող պարսկա-

Հայերին տեղափոխել Զեյթուն։ «Որովհետև այն երկրի մարդը յուր ամեն երջանկությունը ազատության մեջ է դրել, նա յուր և քու ազատության և ապահովության համար ամեն ժամ, ամեն վայրկյան պատրաստ է յուր կյանքը զոհել։ Գնա, խոյեցի Մարաշի կողմը, գնա Զեյթուն, այն էլ է այժմ ձեզ պես հայերու համար ավետյաց երկիր, ուր որ կարող եք ազատ կյանք վարել»[31]։

Հետագա համարներում Ռափայել Պատկանյանը նույնպես շարունակում էր հոդվածների և լիտոգրաֆիական պատկերների օգնությամբ ընթերցողների մեջ հետաքրքրություն առաջացնել Զեյթունի ապստամբության վերաբերյալ։ Ոչ մի պարբերական Ռուսահայաստանում այդքան տեղ չի տվել Զեյթունի հերոսամարտին, ինչքան կարճատև կյանք ունեցող «Հյուսիս»-ը, որովհետև Զեյթունի հերոսամարտի փաստը արտահայտում էր նրա խմբագրի փայփայած իդեալները։

Լրագրի № 9—13-ում «Վիկտոր Լանգլուայի ճանապարհորդությունը 1863 թվին» անմեղ վերնագրի տակ մանրամասնորեն նկարագրված էր Զեյթունի պաշտպանության պատմությունը, Ազիզ-փաշայի կանոնավոր զորքի պարտությունը, վախկոտությունն ու խայտառակ փախուստը, մերկացվում էր թուրքական կառավարության նենգ քաղաքականությունը ու երկերեսանիությունը, նրանց անօրինակ բարբարոսությունները ու քստմնելի անգթությունները։ «Պատերազմը տևեց 4 ժամ,— գրում էր «Հյուսիս»-ը,— բոլոր դաշտը լցված էր մեռելներով կամ մերձիմահ խոցոտվածներով։ 800 թուրք մնացին պատերազմի դաշտումը։ Երբ որ հասավ գիշերը, զեյթունցիք դադարեցան, էլ փախչողներու ետևեն չընկան։ Ազիզի զորքը խայտառակությամբ հաղթվել էր. տասնեն մեկը պատիժ կրեցին հաղթվելու համար և իրենց դրոշակները և ռմբագործիքները կորցնելու համար և ետ դարձան դեպի Մարաշ դարհուրելի անկարգության և շփոթքի մեջ։ Այնպես էին փախել վազելով, որ Փրկչի վանքեն մինչի Մարաշ եկել էին 6 ժամեն, մինչ որ այդ ճամփան հասարակորեն 12 ժամ պիտի երթային։ Օգոստոսի 14-ի ճակատամարտը, որ փառավորեց Տորոսի սարերու հայոց զենքը՝ *ազատեց Զեյթուն քաղաքը»*[32]։

Այնուհետև անդրադառնալով Զեյթունի կոտորածի ու հերոսական պաշտպանության պատճառներին, հեղինակը ցույց էր տալիս թուրքական կառավարության քաղաքականության բարբարոս էությունը, «որ

---

[31] *«Հյուսիս», 1863, № 1։*

[32] *«Հյուսիս», 1863, № 11։*

միայն կողոպտել, սպանել և հրձիգ անել են ցանկանում» և քրիստոնյա ժողովրդի վրա կատաղի ատելությամբ բաց են թողնում վայրենի բաշիբոզուկների ոհմակներ, նրանց խսպառ բնաջնջելու համար։ Հոդվածում խոսվում էր նաև այն հալածանքների մասին, որոնց ենթարկվում են Թուրքիայում Զեյթունի ապստամբության մասին որևէ ակնարկ անող հայ մտավորականները և բերվում «Մունատրի երճիաս» թերթի խմբագիր Փանոսյանի դեմ սկսված հալածանքներն ու բանտարկությունը, որը համարձակվել էր նկարագրել հերոսամարտը և Ազիզ-փաշայի զորքերի փախուստը։ Հոդվածը վերջանում էր լեռնականների ռազմատենչ մի երգով, որը հորինված էր դեռևս 1859 թ., երբ զեյթունցիք ջարդել և դուրս էին նետել քաղաքի մատույցներից Ազիզի նախորդ Խուրշիդ փաշային։ Բանաստեղծությունը, որ բնագրից ֆրանսերեն էր թարգմանել Վիկտոր Լանգլուան, մեծ վարպետությամբ կրկին հայացրել էր Ռափայել Պատկանյանը, նրա մեջ գնելով արդեն ոչ թե նախնիների սխրանքների օրինակով պայքարելու ու հաղթանակելու քարոզը, այլ հենց այսօր ոտքի ելնելու ու ոտախին պարտության մատնելու հնարավորությունը։

Բացի այս բացահայտ կոչից, «Վիկտոր Լանգլուայի ճանապարհորդությունը 1863 թվին» հոդվածը զարդարված էր սպառազինված զեյթունցու և Զեյթուն ու Սիս քաղաքների համայնապատկերներով։ Ձնայած հոդվածաշարի տակ որպես թարգմանչի դրված էր օրիորդ Օլգա Ամիրիի ստորագրությունը, սակայն, ոչ մի կասկած չէր հարուցում այն իրողությունը, որ և՛ թարգմանիչը, և՛ այդ հոդվածը յուրովի խմբագրողը, ինքը՝ օրիորդի փեսացու Ռափայել Պատկանյանն էր։

Այս ծավալուն ակնարկից զատ «Հյուսիս»-ը Զեյթունի դեպքերին անդրադարձավ նաև «Հայերի արդի վիճակը» հոդվածում (№ 12), որտեղ արդեն հոդվածագիր Գաբրիել Պատկանյանը աշխատում էր Եվրոպայի և առաջին հերթին Ֆրանսիայի ուշադրությունը հրավիրել Թուրքահայաստանում կատարվող դեպքերի վրա։

Թեև հոդվածագիրը Գաբրիել Պատկանյանն էր, սակայն այս նույն արևմտյան տերությունների միջամտությամբ կամ Թուրքիայի աջակցությամբ պրոտեկտորատի ստեղծման գաղափարները՝ արդեն արձագանք էին գտնում նաև խմբագրի մոտ, որը գնալով համոզմունք դարձավ 1875—76 թթ. սկվող ռուս-թուրքական հարաբերությունների տարիներին։

Հետաքրքրական էին նաև «Հյուսիս»-ի 11-րդ համարում «Հովհաննես իշխան Շահկերտցի (Ավան Յուզբաշի)» հոդվածը, որը փառաբանում էր Ղարաբաղի մելիքների սխրանքները, տալիս Խամսայի մելիքության,

հայոց պետականության վերջին մոհիկանների պատմությունը։ Անկասկած, հայկական ոգին արթնացնելու նպատակով էր տրված նաև Վարդան Մամիկոնյանի, Ղևոնդ Երեցի, Վասակ Սյունու մեծադիր լիտոգրաֆիական պատկերները, որը մեծ վարպետությամբ քարի վրա փորագրել էր Հովհաննես Պատկանյանը։

Լրագրի գրական բաժինը հիմնականում զբաղեցնում էին Գաբրիել Պատկանյանի գրական վաստակները, «Սուրբ Վարդան Մամիկոնյան, քաջ սպարապետ հայոց», «Շավարշ Բ, կամ Նորոգյալ Հայաստան», «Հրոփսիմե, կամ փրկություն Հայաստանյաց» երկարաշունչ պատմական պոեմները, բազմաթիվ չափածո առակներ, թարգմանություններ։ Ռափայել Պատկանյանի ստեղծագործություններից տպագրվեցին «Հազար ու մի գիշեր»-ից կատարած նրա թարգմանությունները, «Ծովաշրջիկ Սինդբադի ճանապարհորդությունները», «Բաղդադի վարսավիրան», «Հուզաթափը» և «Մեռելի վրեժխնդրությունը» նորավեպը։

Այդ նորավեպում ի հայտ էին եկել հեղինակի ֆանտաստիկական-ռոմանտիկական աշխարհի նկատմամբ ունեցած սերը, որն այստեղ գալիս էր և գոթական «սև վեպից» և Գոգոլի որոշ պատմվածքների ֆանտաստիկական-ռոմանտիկական պատկերացումներից։ Այդ շրջանում Պատկանյանի ամենասիրած հեղինակներից մեկը Գոգոլն էր, որի ստեղծագործություններին էր նա հաճախակի դիմում իր մտքերը հաստատելու համար, երազում էր գրել նրա նման, կամ չգրել ընդհանրապես։ «Մեռելի վրեժխնդրության» մեջ հատկապես նկատվում է Գոգոլի ամենաֆանտաստիկական պատմվածքի՝ «Վիի» ակնհայտ ազդեցությունը։ Նրա օրինակով հեղինակը ցանկանում էր իրական և անիրական աշխարհների բախումով վեր հանել չարի և բարու, ճշմարտի, մարդկայինի ու անհեթեթի, անբացատրելի զուգակցությունները կյանքում։ Այս ամենը դարգացում ապրելով նրա ստեղծագործությունների մեջ, հանգեցրեց 80-ական թվականներին գրված նրա «Քաղական մեռելների» աշխարհի պատկերմանը, որը ներգործուն կերպով ազդում էր իրական աշխարհի վրա, այլանդակում էր, դատապարտում տառապանքների, դժբախտացնում այն իր ակնհայտ չարությամբ, թշնամությամբ, ատելությամբ։

Բժշկական ֆակուլտետի մի խումբ ուսանողներ քաղաքի արվարձաններից մեկում ժամանակ անցկացնելուց հետո, կիսահարբած վիճակում վերադառնում են տուն։ Նրանցից մեկը ընկնելով դիահերձարանի փողոցը, իրեն զգալով ծանոթ վայրում, անհաստատ քայլերը ուղղում է դեպի այն շենքը, ուր դեռևս այդ առավոտ աշխատում էր դիակների վրա, հավատացած լինելով, որ տուն է գնում։ Ընկնելով կարմիր վարագույր-

ների միջով ֆանտաստիկորեն լուսավորված դիահերձարանը, նա ոչ մի կերպ չի կարողանում դուրս պրծնել կլոր անփիթատրոնից և ենթարկվում է երկու դիակների՝ բզկտված ծերունու և նոր բերված չքնաղագեղ մանկամարդ աղջկա հարձակմանը, որը նրա այտին խրելով իր ատամները ցանկանում էր արյան հետ միասին դուրս ծծել նաև կյանքը։

Առավոտյան դիահերձարան հավաքված ուսանողների զարմանքին ու ծաղրալի բացականչություններին ենթարկվելով, պատմողը արդեն պատրաստ էր իր հետ պատահած ֆանտաստիկ դեպքերը գինու գոլորշիներին վերագրելու, երբ այտի վրա դրոշմված ատամների սարսափելի հետքերը ի հայտ բերին ամեն ինչ։

* * *

Նաբաթաթերթի շուրջ ստեղծված անբարյացակամության օղակը սկսվեց սեղմվել հենց առաջին համարներից հետո։ Միայն մեկ հոդված ով մասնակցելով նրա աշխատանքներին հեռացավ Քերովբե Պատկանյանը, չուղարկելով անգամ խոստացած նյութերը։ Ոչ մի թղթակցություն չուղարկեցին Քանանյանն ու Ռոտինյանը, իսպառ դադարեցին Թիֆլիսից և այլ հայաշատ վայրերից սպասվող լուրերն ու հոդվածները։ Մինչև իսկ Իզմիրյանը, որ միշտ բարեկամաբար էր վերաբերվել Ռափայելին (անգամ նրա Եզյան-Սանասարյան խմբակցության հակամարտության օրերին) այժմ բացեիբաց պատերազմում էր «Հյուսիս»-ի դեմ (VI, 264)։ Նրանից ետ չէին մնում իրենք՝ «Սինիդրիոն»-ի խորհրդարանի անդամները (ինչպես կոչում էին Պատկանյանները Եզյան-Բուդաղյան-Սանասարյան խմբակցությունը)[33], որոնք ամեն ջանք գործ էին դնում վարկաբեկելու, խայտառակելու և պետերբուրգահայ երիտասարդությանը «Հյուսիս»-ին աշխատակցելու մտքից հեռու պահելու համար։

Իսկ Ռափայել Պատկանյանի կազմակերպչական-ժուռնալիստական ակար ընդունակությունները, որ արդեն ի հայտ էին եկել Գամառ-Քաթիպաների տպագրության ընթացքում, հնարավորություն չընձայեցին նրան նույնիսկ իր ձեռքի տակ ունեցած նյութերով հարստացնելու, հետաքրքրական դարձնելու «Հյուսիս»-ը։ Անգամ իր բանաստեղծությունները, որ կարող էին շարժել ընթերցողների հետաքրքրությունը շաբաթաթերթի նկատմամբ, նա գերադասեց հենց այդ օրերին առանձին գրքով տպագրել Մոսկվայում, քան թե իր լրագրի մեջ, կամ իր տպարանում։ Հուսահատությունը, գործից արագ հիասթափվելը, որը մեկ անգամ ար-

[33] Տե՛ս «Հիշատակարան», էջ 685։

դեն ստիպել էր նրան ընդհատել Գամառ-Քաթիպաների հրատարակությունը, կամաց-կամաց սկսեց պաշարել Ռափայելին նաև այս անգամ։ Քիչ չէր նպաստում այդ տրամադրություններին նաև հոր՝ Գաբրիել Պատկանյանի գործունեությունը, որն ամեն ինչ անելով իր ձեռքը, բառիս պես ներգործում էր որդու վրա, իրար ետևից տպագրելով սեփական երկարաշունչ հոդվածներն ու պոեմները, անգամ ամբողջ գրքեր։

Միայն վերականգնված «Հյուսիսափայլ»-ի հետ մրցակցելու ցանկությունն ու ըմբոստության պոռթկումներն էին նրան ստիպում դատական գիրառնսչության ծանր աշխատանքից հետո զբաղվել նյութերի խմբագրման ու դասդասման հոգնեցուցիչ գործով։ «...Լրագրիս խմբագրությունը և արքունի պաշտոնիս կատարումը այնպիսի ծանրակշիռ և ժամանակ կուլ տվող զբաղմունք են, որ ամեն մինը սոցանից բավական էր մի մարդու բոլոր գործունեությանը մեջ քաշելու, ո՞ւր մնաց, երբ երկուսն էլ ծանրացած են մի մարդու տկար ուսերի վրա... Բայց ինչ ասեմ այն արտաքին, ստորերկրյա վատակամների մեքենայությունքը... որոնք ոչ սակավ բարոյական ուժեն հանում են մարդուս...» (VI, 260)։ «Բայց զարմա՜նք բան, քանի որ արգելք և խութք շատանում են առջևս, այնքան սաստկանում է մեջս կամակոր արիությունը, երևի իմ կորուստը մոտ է. նրանի՜ թե լիներ այդ ֆիզիկական և ոչ բարոյական։ Բայց ես այսքան ժամանակ չեմ կարողացել հասկանալու, սովորական արգելքի հե՞տ է, որ ես պատերազմում եմ ի մահ, թե՞ ջրի ընթացքի դեմ լողալով՝ իզուր կորցնում եմ թանկագին ուժս... Ինչևիցե, բաժակիս մեջ դառնության գինին քիչ է մնացել, էն էլ կխմեմ ու մաղս պատեն կկախեմ» (VI, 264)։

Սակայն ամենածանրակշիռ պատճառը, որ հուսահատեցնում է Ռափայել Պատկանյանին, երկրում տիրող տագնապալից իրադրությունն էր, Չերնիշևսկու ձերբակալումից հետո մամուլի համար վրա հասած ծանր օրերը, որը ստիպեց «Սովրեմեննիկ»-ին 6 ամիս փակված լինելուց հետո հազիվ-հազ քարշ տալ իր գոյությունը, որը Վալուևի «Ռուսաստանին պետք չէ մարզային մամուլ» արտահայտությունից հետո իրար ետևից սահմանափակեց ու խափանեց բազմաթիվ պարբերականների գոյությունը։ Խուզարկությունները, ձերբակալություններն ու ոստիկանական գաղտնի հսկողությունները ավելի ու ավելի էին դժվարացնում պարբերականների հրատարակության պայմանները, խլում նրանցից կենսունակության ոգին։ Նույն վիճակին արժանացավ նաև «Հյուսիս»-ը, որի

առաջին թույլտվություն ստանալու ժամանակ, 1861 թ. հունիսին, արդեն արգելվել էր քաղաքական բաժին ունենալը[34]։

Զգալով, որ հեռանալով արդիականության հարցերից, լրագիրը կորցնում է իր հետաքրքրությունը, «Հյուսիս»-ի խմբագիրը հինգ ամսվա ընթացքում երկու անգամ դիմում ներկայացրեց գրաքննչական ատյանին քաղաքական նորությունների բաժին բացելու խնդրանքով։ «Բաժանորդները և ընթերցողները բազմիցս և անընդմեջ խնդրել են ինձ,— գրված էր գլխավոր գրաքննչական ատյանին ուղղված դիմումի մեջ,— իսկ արտասահմանյան պարբերական հրատարակությունների խմբագիրները մինչև այժմ էլ անընդհատաբար համոզում են ինձ իմ հրատարակած թերթի միջոցով ծանոթացնել իմ հայրենակիցներին լուսավորյալ պետությունների կարևոր իրադարձություններին և նրանց ժողովուրդների ճակատագրերին։ Այս վերջիններս նույնիսկ ինձ մասամբ հանդիմանում են, որ ես ապրելով քաղաքակիրթ աշխարհի համարյա կենտրոնում, արհամարհում եմ պարբերական հրատարակությունների այսպիսի մի բնագավառ, ինչպիսին քաղաքականությունն է»[35]։ Սակայն թե՛ առաջին խնդիրը, որը գրված էր 1864 թ. մարտի 23-ին, թե՛ երկրորդը՝ գրված հուլիսի 7-ին, որտեղ Պատկանյանը կրկնելով իր խնդիրը պարտավորվում էր «ժամանակակից պատմական բոլոր փաստերը, որոնք ճայտնի քաղաքական իրադարձություններ անվան տակ» քաղել իր չափավոր հայացքներով հայտնի «Սեվերնայա պոչտա» լրագրից տառացի թարգմանությամբ, հանդիպեցին կառավարության դիմադրությանը։ Երկուսի համար էլ նախապատրաստված էր նույն պատասխանը, որ «Պարոն մինիստրի թույլտվությունը Ռ. Պատկանյանի խնդիրը բավարարելու կապակցությամբ չի ստացվել, քանի որ մինչև գրատպության վերաբերյալ նոր օրենքի ընդունումը չի թույլատրվում ընդարձակել պարբերական հրատարակությունների ծրագրերը»[36]։

Այսպիսով «Հյուսիս»-ի հրատարակությունը Ռափայել Պատկանյանի համար կորցնում էր այն նշանակությունը, որի համար նախատեսված էր, և առաջին շրջանի եռանդուն գործունեությունից հետո նա կամաց-կամաց սկսում է հեռանալ լրագրի աշխատանքներից, ամեն ինչ թողնելով հոր տնօրինությանը[37]։ «Հյուսիս»-ը դադարում է ամբողջ երեք

[34] Տե՛ս ЦГИАЛ, ֆ. 777, ց. 1, գ. 5788, թ. 1—7։

[35] ЦГИАЛ, ֆ. 777, ց. 2, 1863, գ. 43—11 և (VI, 482)։

[36] ЦГИАЛ, ֆ. 777, ց. 2, 1863, գ. 43—12 և (VI, 623)։

[37] Այս հանգամանքը բազմիցս նշում է իր «Հիշատակարան»-ում Գաբրիել Պատկանյանը. «Ռափայելը թուլացավ խմբագրությունից և փոխանակ նպատակահարմար և

ամիս, 1864 թ. հունիսից մինչև սեպտեմբեր, և Հովհաննես Պատկանյանն ու տիկին Ամիդին որոշում են տպարանը և «Հյուսիս»-ը լիովին հանձնել Գաբրիել Պատկանյանին՝ թողնելով միայն Ռափայելի անունը, քանի որ տեր Գաբրիելն բարոյապես մեռած էր և նա «չարժեր ինչ»[38]։

Համաձայնություն տալով լիովին իր վրա վերցնել «Հյուսիս»-ի խմբագրությունն ու տպարանի կառավարությունը, Գաբրիել Պատկանյանը միայն պայման դրեց, որ Ռափայելը շաբաթը մեկ մի հոդված հասցնի լրագրին, որպեսզի այն «չկարկատվի» համաշխարհային և Նիկոլի պատմություններով։ Չնայած իր խոստումին, Ռափայելը հոդվածներ չգրեց «Հյուսիս»-ի համար, այլ օգնեց հորը միայն «Հազար ու մեկ գիշեր»-ից կատարած թարգմանություններով և միայն մեկ անգամ լրագրի նախավերջին համարում հանդես եկավ իրենց տպարանում Միքայել Նալբանդյանին ընծայականով լույս տեսած Հովհաննես Սահրադյանի կատարած Վերդիի «Տրուբադուր» օպերայի թարգմանությանը նվիրված ակնարկով։

Նշելով այն մեծ ծառայությունը, որ ազգի զարգացող մշակույթի համար կատարում է Հովհ. Սահրադյանն իր թարգմանությամբ, Պատկանյանը հատկապես գովաբանում է օպերայի՝ ազգային-ազատագրական շարժումների գաղափարով տոգորված լինելու փաստը։ Ակնարկի վերջում Պատկանյանը «Սրտի անկեղծ» շնորհակալություն էր հայտնում Միքայել Նալբանդյանին «...այն թելադրության համար, որով սիրտ առած մեր համազգի երաժիշտը սկսավ և ավարտեց յուր ձեռնարկությունը»[39]։

Հատկանշական է, որ Ռափայել Պատկանյանը ոչ միայն չէր զգուշացել իր տպարանում լույս ընծայել Ալեքսեևյան ռավելինում ձերբակալված Նալբանդյանին ձոնած օպերան, այլ նաև, առանց երկյուղի այդ ծանր օրերին, երբ արգելված էր հիշատակել ձերբակալվածի անունը, հրապարակավ շնորհակալություն էր հայտնում նրան իր խմբագրությամբ հրատարակվող «Հյուսիս»-ում։ Պետք է ենթադրել, որ ճիշտ էր Ռուբեն Բեր-

---

ժամանակահարմար հոդվածներով զարդարելու լրագիրն, նախ սկսավ թերթերն լրացնել Նիկոլի պատմությամբ, որ գրում էր Տեր-Գաբրիելն և ապա տիեզերական, կամ համաշխարհային պատմությունն, որ գերմաներեն լեզվից թարգմանում էր յուր հարսն Օլգա Հովհաննեսի Պատկանյան, որ կամենում էր հայերեն սովորել։ «Հյուսիս»-ի վարկն նվազեցավ, նորա հարսի հղիությունն և Ռափայելի պաշտոնական զբաղմունքն ժամանակ չտվին, որ նա սթափվի, և այսպես «Հյուսիս»-ն դադարեցավ» («Հիշատակարան», էջ 685, 689)։

38 «Հիշատակարան», էջ 693։

39 «Հյուսիս». 1864, № 33։

բերյանը, իր «Գամառ-Քաթիպա» կենսագրականում գրելով՝ «Երբ Նալբանդյանին ձերբակալեցին, երկու քաղաքների հայ մտավորականությունը ճնշված էր, լուռ ու մունջ։ Մ. Նալբանդյանը Պատկանյանի աչքում հանկարծ բարձրանում է այդ դեպքից հետո հերոսական բարձրությամբ... Բա՛յց ուշ էր. Նալբանդյանի ընկերները չէին ուզում ներել Պատկանյանին դեպի Նալբանդյանն ունեցած նախկին տարիների հակակրությունը»[40]։

Միայն Նալբանդյանին չէ, որ հաշտության ձեռք էր ուզում մեկնել Պատկանյանը, հայտնել նրան իր համակրանքն ու հիացումը, այլ փորձում էր նորից մեղմացնել Մովսես Բուդաղյանի սիրտը՝ «Հյուսիս»-ի № 5-ում տպագրելով վերջինիս համար նվիրական «Ի մահ յոթամյա որդուս» ոտանավորը։

Սակայն ամեն ինչ ապարդյուն էր, ոչ ոք չէր ցանկանում աշխատակցել «Հյուսիս»-ին, ոչ ոք չէր ուզում Պատկանյանին նորից ընդունել իրենց շարքերը։ Մուտք չուներ նա անգամ Քերովբե Պատկանյանի տանը, որտեղ երեկոները սկսել էին հավաքվել և Հայաստանի ապագայի վերաբերյալ խորհրդակցություններ անել Պետերբուրգի հայկական գաղութի ներկայացուցիչները։ «Ասում են, այժմ քու տունդ Հայաստան է դարձել. Իգմիրյանի աչքին փուշի ես ցանում,— գրում է դառնությամբ նա Քերովբե Պատկանյանին,— մի՞թե այդ պարագան պիտի ինձանից գաղտուկ պահեիր, գիտես խո, **ես միայն ասպարեզ ունիմ Հայաստանի մեջ** (ընդգծումը մերն է—Մ. Ս.)։ Հեռու ես բշում, երևի բանի մեջ բան կա...» (VI, 263)։

Իսպառ թևաթափ եղած Պատկանյանը սկսեց երազել Պետերբուրգից փախչելու մասին, մանավանդ, որ 1864 թ. փետրվարի 23-ին տեղի ունեցած ամուսնությունից հետո խճճվել էին նաև ընտանեկան հարաբերությունները տիկին Ամիդիի, Հովհաննես եղբոր և ծնողների հետ։ Ռազմական մինիստրությունում տարեկան 300 կաղմող չնչին աշխատավարձը չէր բավարարում աճող ընտանիքի պահանջներին, իսկ ծխախոտի ֆաբրիկայի գործերում նա ինքը չէր ցանկանում մասնակցություն ունենալ[41]։

---

[40] «Հայրենիք», 1931, № 3։

[41] Ղազարոս Աղայանը Երվանդ Շահազիզի խնդրանքով գրած իր տեղեկությունների մեջ ասում է, «1863-ին էր կարծեմ, Տեր-Գաբրիելի միջամտությամբ նրա որդի Ռափայելը ուզեց Օլգային և դառավ իր եղբոր բնակարանը կամ դրա պես մի բան, Ռափայելը, որ ավելի մոտեցավ մադամ Ամիդիին, իբրև նրա հարազատ աղջկա ամուսին, բայց նրա գործում չխառնվեց, այլ կարծես փախավ և փախցրեց կնոջը այդ շրջանից, որ բավականին մութ կողմեր ուներ։ Օրինակ, այդ ժամանակ այրվեց գործարանը, որ

1864 թ. նոյեմբերին աշխարհ եկավ երիտասարդ ամուսինների առաջին զավակը՝ որին մորատատի պատվին տվին Սանդուխտ անունը։ Այժմ արդեն անհրաժեշտ էր հոգալ և՛ երեխայի, և՛ համեմատաբար փարթամ կյանքի սովոր մոր կարիքները, լսել ղոքանչի անընդհատ բողոքներն ու պահանջները, մի բան, որ անտանելի էր անկախ ու ըմբոստ բնավորություն ունեցող Ռափայելի համար։ Մաշում ու ամայությամբ էին լցնում նրա հոգին նաև դատական գերատեսչությունում ունեցած նրա ձգտումների հետ ոչ մի առնչություն չունեցող ձանձրալի պարտականությունները, իսկ նրա կրծքում օրըստօրե սաստկացող թոքախտը սպառնալից էր դարձնում հյուսիսի անբարենպաստ պայմաններում ապրելը։

Պետերբուրգից մի որևէ հայաշատ վայր մեկնելու հեռանկարը ավելի ու ավելի էր հրապուրում Ռափայելին։ Բայց ու՞ր։ Արդյո՞ք Թիֆլիս, թե՞ դարձյալ Նախիջևան, այդ նույն Խալիբյանների ու Այվազովսկիների հետ պայքարը շարունակելու ու հաղթելու համար։ Հակառակության ոգին նրան մղում էր ընտրել Ն. Նախիջևանը, ընկճել իր ոսոխներին, առաջ տանել ազգային լուսավորության գործը հայրենի քաղաքում, ապա հրավիրել նաև հորը՝ միասին աշխատելու ու ներգործելու համար (VI, 267)։

Օգտվելով Ն. Նախիջևանի վաճառական Մկրտիչ Հայրապետյանի Պետերբուրգում գտնվելու հնարավորությունից, Ռափայելը հոր միջնորդությամբ հարաբերություններ է ստեղծում նրա հետ, Ն. Նախիջևանում իգական և արական դպրոցների բացման հեռանկարով բորբոքում նրա երևակայությունը, դրական պատասխան ստանալով Հայրապետյանից, որը հանուն ապագա համագործակցության, հանձն առավ դառնալ Ռափայելի երկրորդ զավակի՝ Արամի կնքահայրը։

Այժմ հարկավոր էր նախապատրաստել կնոջը, որը թեև անսահման սիրով կապված լինելով ամուսնու հետ, պատրաստ էր նրա հետ կիսել ամեն մի դժվարություն, սակայն, ծնված և մեծացած լինելով ռուսական մայրաքաղաքներում, կարող էր չցանկանալ մեկնել իրեն համար խորթ ու անծանոթ մի միջավայր, բաժանվել մորից և հարազատներից։ Բայց արիասիրտ Օլգան ոչ մի րոպե չվարանեց ընդունել ամուսնու առաջարկությունը և ինքն իր կողմից պատրաստակամություն հայտնեց համագործակցելու նրա հետ։ Հետագայում գրված նամակներից մեկում Պատկանյանը բառացիորեն բերում է իր այդ դժվար խոսակցությունը կնոջ

ապահովացրած էր լավ գնով։ Բայց թե որքան շահեց այդ բանից Օհաննեսը, չգիտեմ։ (Տե՛ս ԳԱԻ, Ե. Շահազիզի ֆ., «Ռ. Պատկանյանի դիվան», էջ 1122—23 և VI, 583)։

հետ. «Ես նշանածիս, ինչպես մտերիմ եղբորս, պարզ հայտնեցի, որ ոչինչ հնար չունիմ նորան Պետերբուրգի մեջ պահելու և ասացի, որ պիտի մի հայաբնակ քաղաք երթանք. հոժա՞ր ես։

— Ինչու՞ չէ. կերթամ։

— Բայց այնտեղ դժվար է կենալը, այս ու այն հարմարությունքը չիկա։

— Մարդիկ կենու՞մ են այնտեղ։

— Կենում են, բայց շատ կոպիտ։

— Արև կա՞։

— Կա։

— Հաց ու ջուր կունենա՞նք։

— Կունենանք։

— Ուրեմն երթանք, դու խոմ մոտս կլինիս, երեխայքս խոմ մոտս կլինին. ինձ ի՞նչ ուրիշ բախտ պետք է...» (VI, 321)։

Ոգևորված կնոջ այս պատասխանից Ռափայել Պատկանյանը մորը ևս համոզեց, առաջին շրջանում ապրել իրենց հետ Ն. Նախիջևանում և օգնել Օլգայի դպրոցի կառավարման գործում։

1866 թ. փետրվարի 28-ի մարտի կեսերին, ճանապարհ ընկավ դեպի Ն. Նախիջևան, իր ևռանդը, ընդունակությունններն ու կամքը ազգին ծառայեցնելու նպատակով։

ՄԱՍ ԵՐՐՈՐԴ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՈՐՆԱԽԻՋԵՎԱՆՅԱՆ ՇՐՋԱՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅՐԵՆԻ ՔԱՂԱՔՈՒՄ: ՆՈՐՆԱԽԻՋԵՎԱՆՅԱՆ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

1866 թ. մայիսի առաջին օրերին Ռափայել Պատկանյանն իր կնոջ, երկու զավակների և մոր ուղեկցությամբ հասավ Ն. Նախիջևան։ Նրա ժամանումը համընկավ հայրենի քաղաքը փոթորկող ու պառակտող այն հարաբերություններին, որոնք առաջացել էին Միքայել Նալբանդյանի հուղարկավորությունից հետո։ Հրավիրված լինելով Հայրապետյան կուսակցության կողմից, Պատկանյանը սերտորեն առնչվում է այդ քընությունններին ենթարկվողների հետ, մասնակցում դիվանագիտական պատասխանների հորինմանը, վրդովվում Խալիբյանի և նրա կամակատարների անիրավություններից։ «Գէն<երալ> գուբ<երնատորեն> գալովն՝ մեր բարեկամքը շունչ առին,— հայտնում է նա հորը նամակով,— հավատացրին նորան, որ նորքա մեղավոր չէին Ն<ալբանդյան>ի թաղման մեջ. այդ պոլիթիքական խառաքթեռ չուներ, այլ միայն առտնին գժտության մի նշան էր» (VI, 266)։

Սակայն նրան ցավ էր պատճառում քաղաքում տիրող այդ լարված մթնոլորտը, միմյանց նկատմամբ նյութված դավերը, անբավականությունն ու մատնությունները։ Միատարր, համերաշխ հայ համայնք տեսնելու երազանքները, որի ամբողջ ուժը նվիրված լինի հայրենիքի ազատագրությանը, ի դերև էին ելնում «այս ընդհանուր խռովության» տեսքից։ «Այժմ ես լիովին հասկանում եմ պատճառը Հայաստանի կործանման,—շարունակում է նա նույն նամակում,—...Եթե ուժս առավել լիներ, հավատացնում եմ Ձեզ, որ ես առաջնորդ կլինեի, բայց ոչ որպիսիեիցե կուսակցության, ո՛չ, այլ ամբողջ հասարակության» (VI, 269)։

Սակայն ուժերը լքել էին նրան, նա այլևս ոչ հավատում էր իր ծրագրերին, ոչ արիություն գտնում իր մեջ նորից սկսելու իր գաղափարների տարածումը։ Նա իրենից հեռու էր վանում անգամ ստեղծա-

16—907

գործական աշխատանքի հրապույրը, որովհետև ստեղծագործել, նրա համար նշանակում էր պայքարել հանուն իր գաղափարների, նշանակում էր բորբոքել իր ազգակիցների ազատասիրական նիրհող զգացմունքները, արթնացնել նրանց ազգային արժանապատվության և ինքնաճանաչման գիտակցությունը։ Այժմ նրա ամբողջ ուշադրությունը բևեռված էր հայրենի քաղաքում ժամանակակից պահանջները բավարարող «օրինակելի» ուսումնարան բացելու խնդրին։ Օրինակելի ուսումնարան թե՛ տղաների, թե՛ աղջիկների համար, որտեղ բացի պահանջվող բոլոր առարկաներից ավանդվեին և՛ երաժշտություն, և՛ պար, և՛ մի քանի օտար լեզուներ։

Մայիսի 30-ին նա իր և կնոջ՝ Օլգա Պատկանյան—Ամիրդի անունից դիմումներ է ներկայացնում Օդեսայի ուսումնական օկրուգին և Ն. Նախիջևանի քաղաքագլուխ Կալալովին, տղաների և աղջիկների դպրոցներ բացելու խնդրանքով[1] և դեռևս պատասխան չստացած սկսում պատրաստություններ տեսնել։ Գրություն է ուղարկում Պետերբուրգ դաշնամուր գնելու և պարի դասատու գտնելու համար, խնդրում աղջիկների պանսիոնի տնտեսական կառավարչուհու պաշտոնի համար փնտրել որևէ հարմար թեկնածու և համոզել նրան անհապաղ Ն. Նախիջևան մեկնելու, վարձում է ընդարձակ բնակարան։ Արդեն առաջին իսկ ամսվա ընթացքում Ն. Նախիջևանի ուսումնածարավ հասարակությունը համբավավոր տեր Գաբրիելի որդու հոգացողությանն է հանձնում իրենց զավակներից շատերին, և դեռ պանսիոն բացելու թույլտվությունը չստացած Պատկանյան ամուսինները սկսում են աշխատանքները։

Սակայն, սեպտեմբերի 26-ին ստացվում է թույլտվություն միայն տղաների պանսիոնի համար[2], և տիկին Օլգա Պատկանյանը առայժմ բավարարվում է ամուսնու հետ միասին տղաների պանսիոնում ֆրանսերեն դասեր տալով, չդադարեցնելով դիմումները Օդեսայի ուսումնական օկրուգին, Օդեսայի կանանց վարժարանի հոգաբարձությանը, Ն. Նախիջևանի քաղաքագլխին։ Արդեն 1867 թ. հունվարին Պատկանյանների օրինակելի պանսիոնում ուսանում էին 25 տղաներ, որոնց մեծամասնությունը նախապատրաստվում էր Լազարյան ճեմարանի 3-րդ կամ, նույնիսկ, 4-րդ դասարանն ընդունվելու համար։ Ամենօրյա շփումը մանուկների հետ, նրանց հոգին կրթելը, նրանց բարբառային անհասկանալի հայերենը մաքրելը, երգի, երաժշտության հետ ծանոթացնելը

---

[1] ՀՊՊԱ, ֆ. 139, գ. 1697։

[2] ԴԱԲ, ՌՊՖ, № 1288։

մեծագույն բերկրանքով էին լցնում Պատկանյանի հոգին։ Այն բարոյական օգուտը, որ նա նրաղում էր հասցնել ազգին իր գրական վաստակով և տպագրական գործունեությամբ, այժմ ավելի շոշափելի կերպով տեսնում էր իրականացած ամեն դասից հետո։ «Մի՜ տղ է, մենք ինչ կերպով կամենում էինք մեր սիրական ազգին բարոյապես օգտաբեր լինելու, բայց մեր կարծեցած օգուտը չկարողացանք հասցնել մեր բռնած ճանապարհով, թեև ոչինչ չխնայեցինք, ոչնչի առջև չկասեցանք, ինչ որ մեզմեն էր կախած. ստված կամ դիպված մեզ դրին առավել լայն ասպարիզի մեջ, ուր արդեն աներկբայելի է բարոյական օգուտը ազգիս, եթե մեր մեջ մնացել է այն եռանդեն (որով արծարծած էինք 12 տարի առաջ) թեկուզ մի փոքր կայծ...»,—(VI, 270), գրում է նա այդ օրերին Գևորգ Քանանյանին։

Առանձնապես մեծ աշխատանք էր տարվում հայոց լեզվի ուսուցման ժամերին։ Միայն Ն. Նախիջևանի բարբառով խոսող մանուկների համար չափազանց դժվար էր ընկալել ուսուցչի գրական լեզվով կարդացած փոքրիկ պատմությունները, հասկանալ նրա խոսքը, քանի որ Ն. Նախիջևանի բարբառի մեջ հատկապես շատ էին օտարամուտ բառերը և դարձվածքները (թուրքերեն, նողայերեն, աղճատված ռուսերեն)։ Այդ երեխաներին մայրենի լեզուն սովորեցնելը ավելի մեծ ջանք ու եռանդ էր պահանջում, քան որևէ օտար լեզու։ Որպեսզի երեխան կարողանա հասկանալ հայերեն նախադասությունը, ուսուցիչը այդ նախադասության մեջ հանդիպող բոլոր բառերը թարգմանում էր բարբառում օգտագործվող համանիշին, ապա այդ բարբառային բառը թարգմանում ռուսերեն և ֆրանսերեն։ Կամաց-կամաց ընտելացնելով նրանց հայերեն բառերին, նա սկսում էր թվաբանական խնդիրները առաջադրել մաքուր հայերենով, փոքրիկ պատմություններ և ոտանավորներ հորինել ու անգիր ասել տալ աշակերտներին։ Արդեն մի քանի ամիս անց հայերենին բոլորովին անտեղյակ երեխաները կարողանում էին ոչ միայն հասկանալ ուսուցչին, այլ նաև՝ իրենց կարդացածը։ «Երբ որ 1866-ին բացի դպրոց Նոր Նախիջևանի մեջ,—պատմում է Պատկանյանը,—իմ առաջին ջանքը եղավ իմ սիրելի Աղգակցած որդոց խոսակցական լեզուն մաքրելու այն անթիվ, անհամար օտարազգի տարրերեն, որոնք մասամբ մեր սեփական անփութությամբը, և մասամբ պես-պես պատմական պատճառներով սպրդելով նոցա առօրյա ընտանեկան զրույցի մեջ և այնտեղ խոր արմատ արձակելով, մեծապես արգելառիթ էին նոցա հասկանալու թե վարժապետաց խոսքը և թե իրենց դյուրին ոճով շարադրած դասագրքերը։ Այդ վախճանին ես սկսեցի ամեն օր սերտել

տալ նոցա փոքր առ փոքր բուն հայոց խոսքերը և իսկույն գործածել նոցա փոխանակ այլ ազգականին։ Իհարկե, առաջին նվազ ծանր էր աշակերտացս այդ աշխատանքը, վասն զի նոցա համար մայրենի հայկական բարբառը նույնքան դժվար էր սովորելու, որքան և մի նոր օտար լեզու։ Բայց անդադար խրախուսելով, քաջալերելով հասա այն աստիճանին, որ այժմ (մի տարի անցնելեն ետև) մեծագույն մասը աշակերտներուս հասկանում են ոչ միայն վարժապետի խոսածը և պատմածը, այլ և իրենց հայերեն կարդացածը, այլ և նույնիսկ գրաբար շարադրությունը»[3]։

Դասերի ընթացքում անընդհատ բարբառային բառը գրական լեզվով, ռուսերեն, ինչպես նաև երբեմն ֆրանսերեն բառերով բացատրելու հետևանքն եղավ այն, որ շուտով Պատկանյանը ձեռնարկեց «Ժողովածույք օտարազգի բառերի Նոր-Նախիջևանցոց լեզվի մեջ մտած» քառալեզվյան բառարան ստեղծելու աշխատանքը։ Բառարանը կազմված էր այբբենական կարգով. սկզբում տրված էր բարբառային բառը, ապա գրական լեզվով նրա նշանակությունը, հետո ռուսերեն թարգմանությունը, ապա՝ ֆրանսերենը։

Բառարանի աշխատանքներն ավարտվեցին 1867 թ., իսկ այն լույս տեսավ 3 տարի անց՝ 1870 թ., Պետերբուրգում։ Բացի բառարանից Պատկանյանն իր աշակերտների համար հայոց լեզվով աշխարհագրության, պատմության, թվաբանության դասագրքեր էր պատրաստել։ Նրա արխիվում պահպանվել են աշխարհագրության և թվաբանության դասագրքեր՝ ձեռագիր վիճակում[4]։ Աշխարհագրության դասագիրքը պարունակում է գիտելիքներ երկրի կազմության, մայր ցամաքների, առանձին պետությունների մասին։ Առանձնակի տեղ է տրված ինչպես պատմական Հայաստանի աշխարհագրությանը, այնպես էլ ժամանակակից Հայաստանի վիճակին։ Թվաբանությունը կազմված էր առաջին և երկրորդ դասարանների համար։ Չորս գործողությունների վերաբերյալ խնդիրները կազմված էին Ն. Նախիջևանի միջավայրից վերցրած դեպքերից, ինչպես նաև դարձյալ Հայաստանի պատմական անցյալին վերաբերող փաստերից։

Ինչ գործ էլ որ ձեռնարկեր Պատկանյանը, նրա ուշադրության կենտրոնում իր ունկնդիրներին հայոց լեզվի, Հայաստանի և նրա պատմության վերաբերյալ գիտելիքներ հաղորդելն էր։ Այժմ, երբ նա որոշել էր

[3] Ռ. Պատկանյան, Ժողովածույք օտարազգի բառերի Նոր-Նախիջևանցոց լեզվի մեջ մտած, Պետերբուրգ, 1870, Առաջաբան։

[4] Տե՛ս ԳԱԲ., ՌՊՖ, №№ 205, 206։

չտեղծագործել, ազգային գործերով չզբաղվել, այլ տրվել լոկ ուսուցողությանը, դարձյալ նրա ամեն մի պարապած ժամը, լիներ դա թվաբանության, աշխարհագրության, թե պատմության դաս, դարձյալ ներծծված էր հայ մանուկին ազգային արժանապատվության զգացումներ ներարկելու, հայոց լեզուն նրանց համար անհրաժեշտություն դարձնելու ձգտումով: «Թերևս դու էլ լսած կլինես, որ ես այստեղ բացել եմ դպրոց, ուր սովորում են 25 հայ (միայն հայ) տղայք։ Չգիտեմ ինչի առգրեմ, ժամանակիս բարոյական զարթմանը, թե աշակերտներուս ժրաջանությանը, կամ թե իմ եռանդին, բայց մեծ ուրախությամբ շտապում եմ քեզ հայտնել, որ մեծ հառաջադիմություն անում են աշակերտքս, մանավանդ հայոց լեզվի մեջ, թեև մյուս առարկաների մեջ ևս հետամնաց չեն» (VI, 270), նա հպարտությամբ հայտնում է Գևորգ Քանանյանին և խնդրում վերջինիս օգնել իրեն նորագույն ձեռնարկներով, Լազարյան ճեմարանի ծրագրերով, ինչպես նաև ուղարկել 1856 թ. լույս ընծայած իր «Այբբենարան»-ը՝ առաջին դասարաններում օգտագործելու նպատակով։

Պանսիոնի ուսուցչական կազմն առանձնապես մեծ չէր, այն բաղկացած էր Պատկանյան ամուսիններից, կրոնուսույց քահանա Խաչատուր Զարիֆյանից և կրտսեր ուսուցիչ Մինաս Փախալյանից։ Հիմնական առարկաները՝ հայոց և ռուսաց լեզուները, թվաբանությունը, աշխարհագրությունն ու պատմությունը վարում էր ինքը՝ Ռափայել Պատկանյանը, ֆրանսերեն լեզուն և երաժշտությունը՝ Օլգա Պատկանյանը, կրոնը՝ Խաչատուր քհ. Զարիֆյանը, իսկ վերակացուի պարտականությունները ստանձնել էր Մինաս Փախալյանը (VI, 271)։

1867 թ. մայիսին Օդեսայի ուսումնական օկրուգից ստացվում է արգելք՝ տիկին Պատկանյանին տղաների պանսիոնում դասավանդելու կապակցությամբ[5]։ Պետք է ենթադրել, որ այս հրամանի ստացումից հետո տիկին Պատկանյանը սկսում է տանը առանձին պարապել մի քանի աշակերտուհիների հետ, որը իրավունքի ստացումից հետո վերածում է աղջիկների պանսիոնի՝ լեզուների, երաժշտության, երգեցողության և պարի ուսուցումով[6]։

---

[5] ԳԱԹ, ՌՊՖ, № 1289։

[6] Թեև մեզ չհաջողվեց հայտնաբերել տիկին Պատկանյանի պանսիոնի թույլտրման հրամանը, սակայն նրա գոյությունը հաստատվում է հետագա գրագրության մեջ հիշատակված փաստերով։ Օր. 1871 թ. օգոստոսին գրած իր նամակներից մեկում Ռ. Պատկանյանը գրում է. «Օլինկաս չէ ուզում յուր դպրոցը փակել, ասում է քանի որ ջահել եմ կաշխատեմ», (VI, 311), իսկ 1872 թ. փետրվարին անհանգստանում է կնոջ պանսիոնի

1867 թ. ամռանը վախճանվում է Պատկանյանի մեկ և կես տարեկան որդին՝ Արամը, որը Ն. Նախիջևան հասնելուն պես հիվանդացել էր աղիքային ծանր հիվանդությամբ։ Հուսահատությունն ու ծանր վիշտը Ռափայել Պատկանյանին միաժամանակ կտրում են Պետերբուրգի և Մոսկվայի իր հարազատներից, դադարում է աշխույժ նամակագրական կապը։ Պետք է ենթադրել, որ միայն անդուլ մանկավարժական գործունեությունն է, որ փոքր-ինչ մեղմում է նրա ալեկոծ հոգին։ Այդ աշխատանքը նրա համար դառնում է անհրաժեշտություն, կյանքի իմաստ։ Իր աչքի առջև կատարվող հոգեկան վերափոխությունը, մանուկների բարոյական «սթափումը» ուժ են տալիս նրան և ստիպում կրկնապատկված եռանդով շարունակելու գործը։ «Դու ասում ես, որ ճակատագիրը մեզ (իմա՝ Պատկանյաններին—Մ. Ս.) նշանակել է վարժապետության, դաստիարակչության և այլն։ Չգիտեմ, ինչպես դու, բայց ես համոզված եմ, որ բարեհաջող պայմանների մեջ, քանց վարժապետությունը, ուրիշ երջանիկ վիճակ չիկա։... Մի՛ խոսիլ արհամարհանքով այն պաշտոնի վրա, որո նախադաղափարը տեսնում ենք Քրիստոսի մեջ... Իսկ ա՞յն, որ դու սերմանում ես մատաղ սրտերու մեջ այն զգացմունքը, որից զուրկ էին նոցա ծնողք և պապերը և որ մի օր, գուցե, կարող է լինել նոցա բարոյական սթափման պատճառ... Այդ քի՞չ բան է, մի ղանգուլակի (իմա՝ շքանշան—Մ. Ս.) չարժե՞...» (VI, 311, 312)։

Աշակերտների թիվը գնալով ավելանում է, դպրոցը բարգավաճում և նրա համբավը տարածվում է Ն. Նախիջևանի սահմաններից դուրս։ Անհրաժեշտ էր մտածել ուսուցչական նոր ուժերի մասին, որովհետև եղած փոքրաթիվ կազմը այլևս չէր կարողանում բավարարել դպրոցների օրավուր աճող պահանջները։

Դեռևս Ն. Նախիջևան տեղափոխվելու առաջին օրից մտադիր լինելով հորը նույնպես վերադարձնել հայրենիք, նա 1869 թվականին ճանապարհորդություն է ձեռնարկում Պետերբուրգ՝ հորը անձամբ հորդորելու և միատեղ աշխատանքի հեռանկարով գայթակղելու որոշմամբ։

Սակայն, Ռափայելի ջանքերը հաջողությամբ չեն պսակվում։ Հայրը կտրականապես հրաժարվում է վերադառնալ Ն. Նախիջևան նույնիսկ կարճ ժամանակով, և նա ձեռնունայն ետ է վերադառնում։ Բայց այդ մի քանի շաբաթը մայրաքաղաքում լինելը նրա հոգում արթնացնում են իր

աշակերտուհիների թվի ավելանալուց։ Քերովբե Պատկանյանն իր նամակում գովաբանում է տիկին Պատկանյանի պանսիոնը..., 1871 թ. գրած իր նամակում Ռափայել Պատկանյանը հայտնում է, որ խնդրում է հորը ստանձնել կանանց դպրոցի վերատեսչությունը (VI, 317)։

քում, մաքառումներով լեցուն կյանքի հիշատակները, իսկ հանդիպումները հին բարեկամների և, մասնավորապես, Քերովբե Պատկանյանի հետ նորից մղում նրան դեպի այնքան բաղձալի ստեղծագործական աշխատանքը։

Հավանորեն հենց Պետերբուրգում, Քերովբե Պատկանյանի խնդրանքով ծնունդ են առնում նրա Ն. Նախիջևանի բարբառով գրված առաջին ղավեշտական պատկերները՝ «Մօսքօվն» ու «Փէթռէպուրք»-ը, որը անմիջապես զետեղվում է Քերովբե Պատկանյանի «Исследование об армянских наречий» գրքում, որպես Ն. Նախիջևանի բարբառով գրված նմուշ։

Պատկերները գրի էին առնված հատուկ գիտական, հնչյունային համակարգով (տրանսկրիպցիայով), որը, հավանորեն, թելադրված էր Քերովբե Պատկանյանի կողմից։ Բացատրում է նրան Քերովբե Պատկանյանը և իր հիմնական պահանջը, այն է՝ այդ պատկերների մեջ հոգով և լեզվով դառնալ նախիջևանցի[7]։

Առաջին նվագ Ռափայելին կարծես գրավեց այդ առաջարկությունը, սակայն Ն. Նախիջևան վերադառնալուց հետո նորից մխրճվեց դպրոցական գործերի մեջ, որը նրանից կլանում էր իր ամբողջ ժամանակը, դարձյալ դատապարտելով իրեն գրական ամլության։

Միանգամայն անձնատուր իր զբաղմունքներին, նա ամիսներով դպրոցից ու տնից բացի ուրիշ վայրերում չէր լինում, չէր մասնակցում քաղաքում այնքան ընդունված հացկերույթներին, բարեկամական կապեր չէր ստեղծում Ն. Նախիջևանի «աղաներ»-ի հետ, չէր հարում քաղաքը պառակտող ոչ մի կուսակցության, իր հպարտ ու ըմբոստ բնավորությամբ շարժելով նրանցից շատերի, մասնավորապես նրան Ն. Նախիջևան հրավիրած Հայրապետյանների զայրույթն ու անբավականությունը։ Չէր կարողանում մերվել Ն. Նախիջևանի բարձր հասարակության հետ նաև Պատկանյանի կինը՝ տիկին Օլգան, որին նույնպես քիչ էին գրավում դատարկ երեկույթները, թանկագին զարդերով ու հագուստներով պճնված հարուստ տիկինները, նրանց քաղքենի զրույցները։ «...Ես ոչ ոքին այստեղ ոչ հավատում եմ, ոչ սիրում եմ և ոչ ատում եմ... Օհ, ի՜նչ հետաքրքրությամբ զննում եմ այն անցքերը, որոնց մեջ անցել է մեծագույն և լավագույն մասը Ձեր կյանքին. տեսնում եմ ասպարեզը Ձեր մի ժամանակվա գործունեության, տեսնում եմ Ձեր բարե-և շարակամներուն և զարմանում Ձեր վրա, որ Դուք սոցա մարդ եք համարել և մարդու պես հետները վարվել։ Իմ մեջ, բացի ծիծաղից, ոչինչ չեն շար-

[7] ԳԱԹ, ՌՊֆ, № 1005։

ժում այս ախմախի թագավորները։ Հոգվով, սրտով ատում եմ մեր— ամեն բարե-և չարակամներում հավասարապես» (VI, 269),—այդ օրերին գրում է նա հորը։

Միակ կապը Ն. Նախիջևանի հասարակության հետ դպրոցն էր, որ օրըստօրե լայնացնում էր իր շրջանակները, աշակերտները, նրանց ծնողները։ Այժմ արդեն 50-ից ավելի աշակերտների համար անհրաժեշտ էր գտնել համապատասխան շենք, մեծացնել ուսուցչական կազմը, ձեռք բերել բազմաթիվ գրենական պիտույքներ։ Այդ բոլորը դժվար էր կազմակերպել փոքրիկ Ն. Նախիջևանում։ Ուստի Ռափայել Պատկանյանը որոշեց իր դպրոցը տեղափոխել Ռոստով, ստանալ պրոգիմնազիայի իրավունք և ներգրավել ոչ միայն Ն. Նախիջևանի մանուկներին, այլ նաև Ռոստովում ապրող հայ ընտանիքների զավակներին։ 1871 թ. ապրիլի 14-ին ստանալով թույլտվությունը, նա օգոստոսի 5-ին դպրոցը տեղափոխում է Ռոստովի Դմիտրիևյան փողոցում գտնվող Գլադիլինի տունը։ Դպրոցը պիտի ունենար լրիվ գիշերօթիկ, գիշերօթիկ, կիսագիշերօթիկ և երթևեկ աշակերտներ։

Դպրոցը պահանջում էր ոչ միայն բավականին ընդարձակ ուսուցչական կազմ, այլ նաև տնտեսական մասի կառավարիչ, խոհարար, լվացարարուհի, սպասուհի, սպասավոր և վերակացուներ։ Պետք է ենթադրել, որ առաջին շրջանում այդ ամենը կազմակերպված է եղել անհրաժեշտ ձևով, և ավելի քան երեք տարի դպրոցի աշխատանքները ընթացել են բավականին հաջող։ Այնքան հաջող, որ Քերովբե Պատկանյանը, որին հոգնեցրել էին օտարությունն ու հյուսիսի սառը եղանակները, նույնպես ցանկություն հայտնեց միանալու եղբորը, ընդարձակելու դպրոցը և հասցնելու այն ռեալական գիմնազիայի աստիճանի։

Այս առաջարկությունը ցնծությամբ լցրեց Ռափայելի հոգին։ Այն մենակությունը, որ նա զգում էր Ն. Նախիջևան փոխադրվելուց հետո, կարծես լիովին վերացավ Քերովբեի առաջարկությունից։ Նրա երևակայության մեջ մեկը մյուսի ետևից սկսեցին ծնվել փայլուն երազներ ու հույսեր քաղաքի հետագա լուսավորության ու բարգավաճման վերաբերյալ։ Նորից ոգի առան նրա սրտում բոլոր կարող ուժերը դեպի Հայաստան կամ գոնե դեպի գաղթօջախներ բերելու ծրագրերը։ «Ասում են, է՜հ, մեկ օր պիտի լինի, որ հայը պիտի խառնվի ուրիշ ազգերու հետ և կորչի, գիտեմ, ես էլ կասեմ, մեկ օր պիտի լինի, որ մեր հայր-մայրը պառամանան, մեռնին, և նոցա մարմինը հող դառնա, ուրեմն, արի շուտ և մեր ձեռքով սպանենք նոցա, որ շուտով բնության պահանջմունքը լցնենք։ Մաքառումն մինչև ի մահ՝ ահա մեր ժամանակվա օրինավոր,

լուսավորյալ, բարեմիտ հայի դևիզը», «Քերոբ, ե՛կ նախապաշարմունքե վեր եղիր, հպիր ժողովրդին... ...Ինչպե՞ս ժողովուրդը կարող է հառաջադեմ լինել, երբ նրա առողջամիտ, հուսալիր զավակները մեկիկ-մեկիկ հեռանում են և գնում...» (VI, 291, 300),—գրում է նա, իր բազմաթիվ նամակներում խնդրում համոզել հորը, եղբայրներին, մյուս բոլոր ծանոթ հայերին։ Նկարագրում է իր հայրենակիցների համար աշխատելու բերկրանքը, մեկ առ մեկ թվարկում այն բարոյական օգուտները, որ իր ետևից բերում է աշխատանքը հարազատ միջավայրում. «Նայե՛,—գրում է նա,—8 տարի առաջ դու հարուստ էիր, իսկ ես աղքատ, այժմ, համեմատելով քեզ հետ, ես տասնապատիկ առավել ապահոված եմ, քան թե դու. իմ գերդաստանը նույնքան բարեկիրթ է, որքան և քոնը, բայց իմ ընտանիք սովոր են առավել չափավոր ապրուստի, իսկ քոնը՝ ոչ... Իմ կինը յուր երեսանց քրտամբ գիտե փող վաստակել, քոնը ո՛չ. մենք մեզ պետք եղածեն ավելի ստանում ենք, դուք՝ պակաս. ...Մեզ ամենափոքր հաջողությունը ուրախացնում է, ձեզ՝ ոչ, վասնզի դուք բախտը, հաջողությունը և լիությունը ձեզ բնածին կարծում եք և ոչ աստծո առանձին շնորհը, աշխատանքի տրիտուրը կամ երկնից պարգևը։ Տեսնում ես գործունեության բարերար ազդեցությունը... Սիրական Քերոբ, միտքդ բեր Շանշիևին, Եղիլխանովին, Բեռևին, Պողոսովին, ո՞ւր են, ինչո՞ւ անհետ կորան, ինչո՞ւ նոցա շառավիղները չիմնացին։ Ընդուր համար նոքա կորան, որ տակերը հող չունեին... Նախիջևան<ը> չի կորչիլ, ըստ որում հայի աթմոսֆերան մեծ է, մարդը շատ է, բայց ափսո՜ս որ նորան պակասում է մանկանց դաստիարակություն, տղայոց և աղջկանց կրթություն...» (VI, 297, 298, 299, 300)։

Հմայված նրա նամակներով, որոնցից ամեն մեկը մի առանձին գեղարվեստական գործ էին հիշեցնում և, ինչպես Գյոթեն է արտահայտվել Շիլլերի նամակների մասին՝ «պատկանում են նրա գրած ամենալավ ստեղագործությունների թվին»[8], Քերովբե Պատկանյանը նորից է հորդորում նրան ձեռքն առնելու գրիչը և Ն. Նախիջևանի բարբառով պատմվածքներ և պատկերներ ստեղծել հայկական այդ գաղթօջախների կյանքից, որոնց կարիքն այնքան նա զգում էր իր բարբառագիտական ուսումնասիրությունները հրատարակելու ժամանակ։ Խոստանալով լըրջորեն կշռադատել Ն. Նախիջևան տեղափոխվելու խնդիրը, Քերովբե Պատկանյանը դարձյալ ու դարձյալ հորդորում է նրան ստեղծագործել.

[8] «Նրա (Շիլլերի) նամակները—այդ ամենահիանալի հիշողություններն են, որ մնացել են ինձ մոտ նրանից և դրանք պատկանում են Շիլլերի գրած ամենալավ ստեղծագործությունների թվին»։ Эккерман, «Разговоры о Гёте», М., 1934, стр. 270.

«Մի կորցուր տաղանդդ,—խնդրում է նա,—որովհետև քեզ նմանը ես չեմ ճանաչում և չկա ևս։ Գրիր մանր բաներ, ինչ կուզես։ Ինքդ տեսնում ես, որ նախիջևանցին կորչում է, նաև ուշ է այժմ բնությունից նկարագրել, բայց պետք է պոետական հանճարովդ ստեղծել այնպես, ինչպես որ աստված ուներ յուր հանճարումը ստեղծել նախչվանցուն...»։ «Գիտեմ, գործդ շատ է, գլուխդ պարապած դրպանական մտքերով, բայց քանքարդ քարի տակ դնելն էլ մեծ բարոյականություն չէ։ Դուն չի պետք է կորչես աշխարքեն առանց քեզ արժանի հիշատակ թողնելու։ Իզուր չէի զոռ տաքեզի։ Ես փոքրիշատե եվրոպական գրականություն գիտեմ և ծանոթ եմ և քեզ մեջ տեսնում եմ հասարակից դուրս քանքար, բազմակողմանի և հասուն արդեն։ Մեղք կառնեմ վիզս, թե անդադար չդնեմ այդ աչքիդ առաջ։ Ուրեմն աչքիդ քունը պակասեցուր, բայց երբեմն, երբեմն գրե։ Հուսով եմ աղերսս անկատար չես թողնիլ, մնամ պարծեցող քո տաղանդովդ՝ Քերովբե»[9]։

Քաջալերված Քերովբե Պատկանյանի դրդումներից բանաստեղծը կրկին ձեռքն է առնում այնքան վճռականությամբ թողած գրիչը և 1871 թ. հուլիսին սկսում է գրի առնել Ն. Նախիջևանի բարբառով գավեշտական պատկերներ, աշխատելով հարազատորեն վերարտադրել գավառական քաղաքի բնակիչների մտավոր և բարոյական զարգացման աստիճանը, բառապաշարը, մտածելակերպը։ Ուշի ուշով հետևում է նաև բարբառային գրառման գիտական կանոններին, աշխատելով առաջին հերթին ապահովել հնչյունային վերարտադրումը։ Մի շաբաթվա ընթացքում ավարտելով «Ցափէթ», «Sermo», «Պազարի կալաճի», «Տռակիլ Մէլքօն» պատկերաշարը, նա հուլիսի երկրորդ կեսին ձեռնարկում է «Տիրացինս» պատմվածքի ստեղծումը։

Քանի որ պատվիրատուին առաջին հերթին հետաքրքրում էր նորնախիջևանյան բարբառի կենդանի պատկերը, ապա Ռափայել Պատկանյանը աշխատում է զսպել իր երևակայության սահմանները և մնալ սոսկ «սթենոգրաֆի» պաշտոնում։ «Այս անցքերը ցայն աստիճան ճշմարիտ և ֆոտոգրաֆիքական ճիշտ են և ամենին հայտնի բան են, որ եթե անզգուշությամբ մարդու ցուցանես, կարող ես վտանգի բերել ինձ. համեստ եղիր, որ իմ գրածս չիմացվի։ Այնուամենայնիվ ինձ գրե քու նկատմունքդ, մանավանդ սթիլիսթիքական և հոգեբանական սխալներուս։ Դու որ ասիր թե կյանքե առնուլ դժվար է, վասնզի կորչելու վրա է, ընդհակառակը ես թրթռուն կյանքեն հափշտակեցի, պատմողի սկզբնական խոսքովը։ Եթե իմ անհատը երևում է, այդ իմ ընտրության առարկային է և ոչ ուրիշ

[9] ԴԱԻ, ՌՊֆ, № № 1005, 1012։

քան. ես բոլորովին մասն չունիմ, բացի սթենոգրաֆի պաշտոնեն: «Ցափէթը» բարեկամիս պատմածն է, քարոզը ինքս լսեցի, տեր Գեորգի արկածքը հալիի բերանն է մինչև այսօր, որին կուզես հարցուր, ամենքը գիտեն»[10],— գրել է նա «Պաշարի կալաճի» պատկերի թերթիկի վրա: Սակայն, ինչքան էլ նա աշխատում էր հավատացնել, որ կատարել է միայն լուսանկարչի պարտականություն, ինչպես ճիշտ նկատում է Քերովբե Պատկանյանը[11], դրանք թեև կենդանի և կյանքից վերցրած էին, սակայն ամբողջապես բեկված էին հեղինակի ստեղծագործական տեսանկյան միջով: Պատկանյանին հաջողվել էր կերտել անբարոյական, տգետ, ինքնահավան հոգևորականների կենդանի կերպարներ: Առանձնապես մեծ վարպետությամբ էր գրված դրանցից առաջինը, որտեղ արտաքին լրջության տակ թաքնված հորդահոս հումորը լիովին վեր է հանում թե՛ քարոզչի, թե՛ նրա լսարանի մտավոր զարգացման ողորմելի աստիճանը: Հետաքրքիր է, որ այս փոքրիկ պատկերի մեջ Ռափայել Պատկանյանը կարողացել էր հաղորդել նաև այն անվստահության մթնոլորտը, որ շրջապատել էր իրեն հայրենի քաղաքում հոգևորականության և ժողովրդի որոշ խավերի կողմից: Անկասկած, նկատի ուներ՝ իրեն, երբ քարոզիչ տեր-հոր բերանով ասում էր. «Մալը շթօ Մօսքօվէն, Փէթէռպուռքէն նոր էկած մարթիք կասին. «Հավատը պօշ պան է, ժամը, պասը, մօմը, խունկը, տէրտէրը,—ալայը պօշ պանէր ին» ... Տուք ատ մարթօցը ասածին մի նայիք... Ատպէս առըրզ անհավատ, անօրէններ շատ էկիլ ին, շատ ալ կընացիլ ին, ամմա, Ասված արիլ է նացա թատաստանը, ամէնն էլ շունի պէս սատկօց էղիլ ին... —էվալլա՛, էվալլա՛, տէր պա, խիստ աղէկ ասիր, մէռնիմ պէրանիտ իտա նոր էկած մարթօց շատ տէղօվ խայտառակէցիր... Ատ ի՞նչ անուշ լիզիւ ունիս էղիլ է...» (IV, 410—411):

Ցնցող ազդեցություն էր թողնում նաև «Տռակիլ Մէլքօն» փոքրիկ պատկերը, որտեղ մեկ և կես էջի վրա հեղինակը կարողանում է տալ իրեն հարբեցողության տված օրավարձ բանվորի կյանքի ամբողջ ողբերգությունը, որը դառը քրտինքով վաստակած մի քանի կոպեկը տուն հասցնելու փոխարեն վատնում է գինետներում... Իսկ տանը նրան սպասում էին վեց քաղցած, կիսամերկ մանուկներ...

Սակայն, առանձնապես հաջողված էր Ռափայել Պատկանյանի «Տիրացինս» պատմվածքը, որի վարպետորեն կառուցած սյուժեն, հոգեբանական նուրբ դիտումներով հագեցված սրտաշարժ պատմությունը, պատմողի խոսքի կենդանի վերարտադրումը, բարձրացրին այն իսկա-

10 ԳԱԲ, ՌՊՖ, № 1687:

11 ԳԱԲ, ՌՊՖ, № 1607:

կան գեղարվեստական գործի աստիճանի, սկիզբ դնելով հայկական նորավեպի ծնունդին։

Պատմվածքի գեղարվեստական արժանիքները նկատեց նաև պատվիրատուն. «Տիրացինդ շատ սպատվական և սրտաշարժ պատմություն է այն մասին, ինչպիսին է վիճակը ընտրյալ անձնավորություններու իրեն համար օտար մթնոլորտումը,—գրում է նա,—եթե Կատարիդ պես երկու-երեք рассказ գրես այդ հոգով և լեզվով և տպենք, ճշմարիտ, մեր մատղաշ գրականությանը այժմ ևս զորդ կլինի և ուրիշներու համար stimul նմանապես գրելու, եթե քեզնից զատ ուրիշներն էլ կարողանան գրել այդպես»[12]։

Նախքան նորավեպի բուն նյութին անցելը, Պատկանյանը կարողացել էր ճշմարտացիորեն պատկերել իր զրուցակցի՝ ծերունի Հարեանի խոսակցության նուրբ երանգները, յուրատեսակ հումորը, հոգեբանությունը, ծերուկի, անցյալի մարդու դժգոհությունը ներկա ժամանակներից, տալ նորնախիջևանյան նիստ ու կացի գիպուկ տեսարաններ։

Այնքան ամբողջական էր ներկայացված Հարեանը, որ ընթերցողն անգամ տեսնում էր նրա արտաքինը, լսում ծերունական դողդոջյուն ձայնը։

Իր առաջին պատմվածքից հետո էլ Պատկանյանը մյուս բոլոր նորավեպերը ստեղծելիս, կերտել է նաև պատմողի անմոռաց կերպարը։ Մկր-աղային («Տիրացինս»), Հոռոմսիմա-ճիճային («Պաց աղպար»), Սախաճի Մարտիրոսին («Ջախու»), Պոզաճի Գալուստին («Պօզաճի Կալուստ»), Խնձօր ծախող Ասվատուրին («Ջէրտալու»), Թիքիջի Ակոպին («Կիւլզատէ»), Խաֆաֆ Օվանեսին («Վարթէվօր») և շատ ու շատ ուրիշների։ Զարմացած ու հմայված հեղինակի կարողությամբ, որ կարծես կյանքի էր կոչում անհետացող դիմաստվերների մի ամբողջ պատկերասրահ, Քերովբե Պատկանյանը բացականչել է. «Ես էլի մնում եմ համոզված, որ նախիջևանցին յուր նախկին բնությունը և ոգին օրի օր կորցնում է ... և ես միայն քո հանճարին приписываю այժմյան լեզվի մեջ հին հոգին նկատելը և վերականգնելը։ Մեկ էլ այն, որ դու երեխայությունիցդ դեռ պահած ունիս մէջդ հին ավանդությունները և այն հիշատակը, որը շատերի մեջ արդեն մեռած է»[13]։

Քերովբե Պատկանյանի ոգևորությունը փոխանցվում է Ռափայելին, նրա մոտ ծնունդ են առնում նորանոր սյուժեներ, նորանոր հեռանկարներ, ստեղծագործական մարմաջը նորից սկսում է հետապնդել

[12] ԳԱԲ, ՌՊֆ, № 1007։

[13] Նույն տեղում։

նրան, ստիպելով մոռանալ այլևս չգրելու իր որոշումը, դասերը, առօրյա զբաղմունքները։ Ափսոսանքով է հիշում նա նաև անցած տարիները, երբ ամեն ինչ նոր էր այստեղ նրա համար, երբ կյանքը ինքը հարյուրավոր անսպասելի անակնկալներ էր ցույց տալիս իրեն, պատկերացնում, թե ինչքան հետաքրքիր պատմվածքներ ստեղծած կլիներ, եթե իրեն դատապարտած չլիներ կամավոր ամլության։ «Ես այժմ քեզ համար մի անցք նկարագրում եմ, բավական մեծ. նոր լսեցի, շուտեցի, որ մոռացման տվվեր... Զգիտեմ ինչու է, քու առաջարկությունն եաև ասես թե իմ մեջ վաղուցվա մեռած սերս կենդանացավ հայերեն գրելու. արդյոք ЛОВКО շողոքորթեցիր հեղինակական անձնասիրությունս, թե նորից պիտի անձնատուր լինիմ այդ կորստական զբաղմունքին, մոռանալով ինձ և իմայնոց, թե՞ իրավ կա մեջս քանքարի նման մի բան, թե՞ մահս մոտ է, և ես ինսթիքթաբար ջանք անում եմ թողնել ինձմեն ետքը այն, ինչ որ այլք կամ չէին կարող, կամ չեն կամենալ... Ես կարծում էի, որ հաստատ կամք ունիմ, մի՛ ասիլ, որ հաստատ կամքը յոթլուփայլին վիճակված չէ, ամեն բան պարագայեն է կախյալ, քամին ուր կփչե, սահանքը ուր կտանեն, այնտեղ կընթանա մարդը, և կարծում է, թե յուրակամ է հառաջանում» (VI, 330)։

Սակայն Պատկանյանը չավարտեց իր այդ «անցքը»։ Արդյո՞ք խանգարեցին նրան մասնավոր դպրոցի հետ կապված բազմաթիվ պարտականություններն ու պարապմունքները, թե՞ Ն. Նախիջևանում հոգևոր իշխանությունից գնված տունը, որի առջև գտնվող պարտեզի բարեկարգմանը նվիրեց նա իր համարյա ամբողջ ազատ ժամանակը։ Հավանորեն ամենից ավելի տանջում էին հեղինակին իր սկսած գործի անկարևորության զգացումը։ Ո՞մ համար է ստեղծագործում, ո՞վ պիտի հասկանա դժվարըմբռնելի բարբառը, բացի մի բուռ նախիջևանցիներից, որոնք այսօր, կամ վաղը պիտի դադարեն խոսել և հասկանալ այդ լեզվով... Ճի՞շտ կլինի արդյոք, ամբողջ ստեղծագործական ուժն ու ավյունը դնել այդ գործին։ Գուցե պետք է գրել գրակա՞ն լեզվով, համայն հայության համար։ Իսկ ինքն ունի՞ այդքան ուժ ու քանքար, չէ՞ որ տարիների փորձը ցույց տվեց, որ ոչինչ չփոխվեց նրա զրկանքների ու մաքառումների գնով ստեղծած գործերից հետո... Անգամ այդ գրքերը չգնվեցին, ոչ ոք ոչ մի հետաքրքրություն չցուցաբերեց։ Արժե՞ արդյոք նորից վերսկսել, թե՞ հայ հասարակության վրա պետք է ներգործել այլ միջոցներով, կանոնավոր դպրոցով, դաստիարակչական, մանկավարժական տրակտատներով (VI, 381)։

Ահա այս ծանր մտորումները և անդադար գործունեություն պահան-

չող դպրոցի տնօրենի ու երեք առարկաների ուսուցչի պարտականությունները ընդմիջեցին նրա այնքան հաջող վերսկսված ստեղծագործական կյանքը։

1871 թ. դեկտեմբերի 19-ին մեկնելով Մոսկվա և ապա Պետերբուրգ, նա վերջնականապես համոզվում է իր հարազատներին և մանավորապես Քերովբե Պատկանյանին Ն. Նախիջևան բերելու անկարելության մեջ և վերադարձից հետո կրկնապատկված եռանդով լծվում դըպրոցական գործերին, որոնք ընթանում էին փոփոխական հաջողությամբ։

Մի կերպ անցկացնելով դժվարին 72 և 73 թվականները, կորցնելով գիշերօթիկ դպրոցի համար դրած համարյա իր ամբողջ դրամագլուխը, նա 1874 թվականի սկզբներին փակում է իր մասնավոր դպրոցը, թողնում Ռոստովը և բավարարվում դարձյալ մասնավոր դասերով։

«Այս տարի, սիրական Քերոբ,—գրում է նա,—ֆինանսս բոլորովին պղտորվեցավ և, եթե չեմ սխալվում, առհավիտյան և ցկատարած աշխարհի։ А ну его... Այժմ ավելի բախտավոր եմ, որ թեթևացա, թե չէ առաջները քունս միանգամայն կորցրել էի, թե ի՞նչ հնարով 100-ի վրա էլի մեկ ուրիշ 100 դիզեմ. այժմ որ փողիս տակեն մտա, վրայեն ելա, պորտս տեղը ընկավ. не в деньгах счастье! քարոզում եմ աջ ու ձախ, և նոր փիլիսոփայական դպրոց ուզում եմ հիմնել, որ փողավորները գործ չեն կարող հառաջացնել. ինչ որ լավ բան արել են մարդկության համար և ինչ որ անելու են, միշտ և հանապազ տկլորներն են արել և պիտի անեն» (VI, 383)։

Դպրոցի բազմազբաղ պարապմունքներից թեթևանալուց հետո, նա հնարավորություն է ստանում հետաքրքրվելու քաղաքի գործերով, ծրագրեր մշակելու հետագա գործունեության վերաբերյալ։

Հասարակական հարցերին հետաքրքրություն ցուցաբերելուն, և այդքան տարիներ արհեստական մեկուսացումից դուրս գալուն, անկասկած նպաստել էին Ռափայել Պատկանյանի 1873 թ. ընթացքում Թիֆլիս կատարած երկու այցելությունները։ 1873 թ. ապրիլին, 23 տարվա բացակայությունից հետո նա կրկին ոտք է դնում այդ «Ասիական Ռուսաստանի մայրաքաղաքը»։ Թիֆլիսի եռուն հասարակական ու գրական կյանքը, նախկին համախոհների ու ընկերների հետ ունեցած հանդիպումները, ազգային հարցերին նվիրված վեճերն ու գործունեության նախագծերը արմատապես փոխեցին նրա տրամադրությունները, նորից արթնացրին նրա հոգում գործելու տենչը, ստեղծագործելու փափագը, իր սիրելի ազգին օգնության ձեռք մեկնելու ցանկությունը։ Հաճախակի հանդիպումները Եզյանի պանսիոնի նախկին սան և իր պետերբուրգյան շրջանի

համախոհ Ռուբեն Հասան-Ջալալյանի հետ, որն այդ շրջանում արդեն հիմք էր դրել հետագայում Երևանում մեծ գործունեություն ծավալած «Հայասեր-Աղգասեր» խմբակցությանը, և որին Թիֆլիսում հարում էին Րաֆֆին, Գրիգոր Արծրունին, Աբգար Հովհաննիսյանը, հնարավորություն տվին Պատկանյանին մոտիկից շփվելու հատկապես Րաֆֆու և Գրիգոր Արծրունու հետ, ներգրավվելու այդ խմբակցության մեջ, նրանց հետ միասին նորանոր ճանապարհներ որոնելու հայ ժողովրդի երկու հատվածները վերամիավորելու և օտար լծից ազատագրելու ուղղությամբ[14]։ Փաստորեն այդ կազմակերպվող խմբակցության նպատակները նույնն էին, ինչ 50—60-ական թվականներին երազում էր իրագործել «Երտասարդ Հայաստան»-ը։ Հետագայում՝ 1879 թ. Երևանում հանդիպումներ ունենալով խմբակցության երևանյան մասնաճյուղի հետ, Ռափայել Պատկանյանը Լևոն Տիգրանյանի տանը գնդապետ Սարգիս Յուզբաշյանին Հայաստանի քարտեզի վրա ցույց տալով Տիգրանակերտը, Վանը, Մուշը, ասել է. «Ահա այս տեղաց պիտի կազմվի մի մեծ նահանգ»... «Ես այս բերկրալի խոսքերը լսելով չկարողացա պահել արտասուքս»,—գրել է Սարգիս Յուզբաշյանը[15]։

«Անցավ վրա ուղիղ 23 տարի,— գրել է Պատկանյանն իր 1879 թ. գրած «Ճանապարհորդական տպավորություններ»-ում,—ես նորից եկա Թիֆլիս։ «Մեղուն» ազատվելով հայր Մանդինյանի ձեռքից, ստացել էր որոշ ձև և գույն. «Մշակ» լրագիրը նոր նոր ոտքի էր կանգնում և ուներ թեև փոքրաթիվ ստորագրողք, բայց շատ երկրպագուներ և կարդացող-

[14] Երևանի պետական պատմական արխիվում պահվող «Երևանի նահանգական ժանդարմական վարչության» 1884 թվականի «Հայասեր-Աղգասեր» խմբակցության գործունեության քննությանը նվիրված գործում ասվում է. При дальнейших расспросах даны были указания, что оскорбление Бражникова было делом лиц кружка, известных в г. Эривани под названием «Гая-сер», «Аско-сер», стремящихся путем воспитания юношеств и влияния на народ подготовить деятелей, способных содействовать к объединению и восстановлению в будущем независимой Армении. այս անդրադառնալով խուզարկության արդյունքներին, ժանդարմական ատրճանավորը գրանցում է.— У Левона Тиграняна найдены письма Хримянца, где говорится о необходимости одновременного восстания в Киликии, в Верхней или Русской Армении. У Рубена Гасан-Джалаляна письма Мелик-Акопянца из Тифлиса, относительно турецкоподанного Шахназарянца, приехавшего из Константинополя с тайной миссией, а также обнаружен документ об армяно-курдском союзе, из которого видно состоявшееся соглашение армян с курдами, кочующими на границах Турции, Персии и России, для взаимной помощи и единства действий».
(ՀՊՊԱ, Երևանի նահանգային ժանդարմական վարչության ֆոնդ, № 115, գ. 44)։

[15] ԳԱԲ, ՌՊֆ, № 884։

ներ։ Հայ երիտասարդությունը ուներ յուր ժողովատեղին Ռուբեն Ձալալյանի պանդոկումն. Հայ բարբառը արդեն բախտավորված էր հայ օրիորդի լեզվին (մսեղեն) կպչելով։ Կրոն, ազգ, Սուրբ Աթոռ, տաճկահայոց վիճակ, ազգային դաստիարակություն, ազգային լեզու և այլ այսպիսի խոսքեր շատ շատ լսվում էին երիտասարդների ժողովներումն։ Սունդուկյանցը, Ամիրիկյանցը, Զմշկյանցը առատ նյութեր էին հայկական խոսակցության և լրագիրների։ Երիցյանը փորում էր գերեզմաններ և ժողովում հայոց հնություններ և ծանոթացնում ռուսներին հայ գրականության և պատմության հետ։ Հայ ազգությունը արդեն զարթել էր, թեև անկողնից տակավին չէր վեր ելել... Բայց ամուր-ամուր ճմռում էր քնաթաթախ աչքերը։ Թույլ կտա՞ք արդյոք ինձ այս ժամանակամիջոցը անվանել «Կովկասյան հայերի սթափման դարագլուխ» (V, 72)։

Հոգեկան այդ սթափումը ստիպում է Պատկանյանին ոչ միայն մասնակից լինել «Հայասեր-Ազգասեր» խմբակցության նախապատրաստվող աշխատանքներին, այլ իր մայրենի քաղաքում նույնպես ձեռնամուխ լինել հասարակական գործերին, համախոհներ փնտրել համաքաղաքացիների մեջ, աշխատել ներգործել շրջապատի և առաջին հերթին երիտասարդության վրա։ Հայ գրականության ամեն մի նոր երևույթ Պատկանյանի համար ազգային թմրած զգացմունքները արթնացնելու մի միջոց էր, մի զենք, և այդ է պատճառը, որ Րաֆֆու «Փունջ»-ի հատորները և մասնավորապես նրա «Սալբի» և «Հարեմ» վեպերը մեծագույն ցնծությամբ դիմավորվեցին նրա կողմից։ Հիանալով հեղինակի գրական վարպետությամբ Պատկանյանը նրա մեջ առաջին հերթին տեսավ այն գրողին, որ պիտի կարողանար իր գրվածքներով ոտքի հանել մի ամբողջ ժողովուրդ, զինել նրան ազգասիրական ոգով, ապրեցներ նրան։ Րաֆֆու առաջին վեպերը կարդալով Պատկանյանը մարգարեաբար գուշակեց հայ նոր գրականության զարգացման գործում նրա կատարելիք դերը։ «Ձեր արձակը յուր սեռումը՝ թե ներքին և թե արտաքին հյուսովն, թե ասացվածքի կերպով և թե առարկայի ժամանակակցությամբ, միով բանիվ, ամեն կողմանե նոր երևույթ է մեր նորածին գրականության մեջ։ Ոչ ոքի անձնասիրություն չխոցոտելով, ոչ ոքի դափնիից մի տերևն չխլելով, ոչ ոքի արժանավորությունն մի կաթիլ չպակասեցնելով, ես կհայտնեմ Ձեզ, որ ո՛չ Աբովյան, ո՛չ Նազարյան և ո՛չ Թաղիադյան, ո՛չ ոք, ո՛չ ոք Ձեր նախորդ արվեստակիցներից ունեցած չէ այն գրական նշանակությունը և ազդեցությունը։ Եվ թե էլ պետք է ասել՝ հանճարեղ գրվածքը միշտ ժամանակակից ինթերես ունի, որն որ Դուք պիտի ունենաք, եթե միայն չշեղվիք Ձեր բռնած ճանապարհեն, իսկ այդ ճանապարհը ամենից ճիշտն է։

Դուք այն մեսսիա բանաստեղծներեն եք, որին մենք յարդ պտրում էինք և չէինք գտնում։ Բավական է։ Գրեցեք այդ նյութի վրա շատ, շատ և շատ. կհավատա՞ք, կարդալով Ձեր «Հարեմը», հազար ու մեկ զգացմունք բորբոքեցին մեջս և տարփանք գրգռեցին մեջս, և արտասուք ճմլեցին աչքերես. և՛ սեր, և՛ ատելություն բորբոքեցին այս ու այն անձին, միով բանիվ, Դուք տիրապետեցիք բոլոր էությանս. որ կողմ կամենաք, այն կողմ տարեցիք հոգիս ... Ինչո՞ւ, նրա համար, որ Դուք բանաստեղծ եք բառիս ծայրահեղ իմաստով» (VI, 376—377)։

Ն. Նախիջևանի հասարակության մեջ տարածելով Թիֆլիսի իր բարեկամների վերջին ստեղծագործությունները, Պատկանյանը կազմում է նաև սեփական գործունեության մի ծրագիր, որն առաջին հերթին վերաբերում էր դպրոցին և եկեղեցուն, քանի որ ներկա պարագաներում միայն այս երկու գործոններով հնարավոր կլիներ ներգործել մատաղ սերընդի և քաղաքի ինքնավարությունն իր ձեռքը առած «աղայական» դասի վրա, ստիպել նրանց ծառայել համազգային շահերին։

Այդ օրերին քաղաք էր ժամանել նրա ճեմարանական և համալսարանական ընկեր Գրիգոր եպիսկոպոս Աղավիրյանը։ Նրա մեջ տեսնելով իր ծրագրերի հնարավոր համախոհին, Պատկանյանը սկսում է անել ամեն հնարավոր բան նրան թեմական առաջնորդ նշանակելու համար։ Մեկը մյուսի ետևից նամակներ են սլանում Պետերբուրգ՝ Քերովբե Պատկանյանին, Կարապետ Եզյանին, Մկրտիչ Ամասարյանին կաթողիկոսի օգնությամբ Աղավիրյանի առաջնորդության հարցը դրականապես լուծելու և Քեվրովբե Պատկանյանին, Ն. Նախիջևան գալու խնդրանքներով։ «Քաղաքիս ներկա վիճակը և ապագան սաստիկ մեծ վտանգի մեջ են,— գրում է նա նամակներից մեկում,—մոտալուտ կորուստը սպառնանում է նոցա... Կրոնը, լեզուն փտելու վրա են. ուստեք չիկա փրկություն. զգայուն հոգիները, ազնիվ սրտերը անկարող են այս ընդհանուր հուզմունքին դեմ կենալու... Հազար փառքթի ետևե վազում են, ոչ մինը ազգաշեն չէ՛, այլ ամենը ազգակործան է ... Միայն աստված գիտե, թե ո՛րքան ցավում է սիրտս ո՛չ էնդուր համար, որ կորուստը անփախուստ է, այլ որ ուժ չունիմ դեմ կենալու այս ընդհանուր կործանման։ Փրկությունը այս է՝ ներգործել քաղաքի վրա ուսումնարանով և եկեղեցիով։ Բայց ո՞վ գիտե, որ անպիտան... դիրեքթորի ձեռք պիտի ընկնի աշխարհական լուսավորության վիճակը քաղաքիս, եթե դու չիհոժարիս գալու. իսկ մեր եկեղեցիներն բոլորովին գլուխ չունին... Մի՛տք արա, ինչե՞ր չենք անիլ մենք հայի համար. ինչ որ քու իմաստուն ճակատդ կհանճարե, ա՛յն իմ անխոնջ գրիչը կտարածե, ա՛յն Աղավիրյանի առաջնորդական գավազանը կմուծանե» (VI, 374, 375)։

Այսպիսի ոգևորության պայմաններում նա 1873 թ. Թիֆլիսում տեսած Սունդուկյանի պիեսների անմիջական ազդեցությամբ ձեռնամուխ է լինում Ն. Նախիջևանի բարբառով մի կատակերգության ստեղծման աշխատանքներին, ուր ներկայացված էին խարդախ միջոցներով, կեղծ դրամի օգնությամբ միլիոնների կարողության տեր դարձած հայ մեծատունը, նրա ագահ, իր հարստությունից շլացած տիկինը, այդ խարդախությամբ դիզված ոսկիների մեջ իրեն դժբախտ զգացող նրանց համակրելի դուստրը։ Կատակերգության մեջ որպես հակոտնյաներ կան նաև Հայաստանի մասին երազող, Հայաստան մեկնելու պատրաստ հայ աշխատավոր երիտասարդների ու աղջիկների կերպարներ։

Կատակերգության հերոսի նախատիպը՝ Պաղտասար աղան, Ն. Նախիջևանում բավականին հայտնի անձ էր, և հեղինակի թափանցիկ ակնարկները նրա հարստության աղբյուրների վերաբերյալ բոլորի համար ակնհայտ էին դարձնում աղայի անձնավորությունը։

Գուցե այդ էր պատճառը, որ Պատկանյանը մի քանի անգամ խորհրդակցելով Քերովբե Պատկանյանի հետ պիեսի մասին, կիսատ թողեց նրա աշխատանքները և ձեռնարկեց դարձյալ Ն. Նախիջևանի բարբառով «Պաց ապպար» (քանդած օջախ) և «Ջախու» պատմվածքների ստեղծմանը, որոնցից առաջինը պատկերում էր կապիտալիստական հարաբերությունների զարգացման հետևանքով քաղաքի քայքայվող, ունեզուրկ մանրառևտրական դասի ողբերգությունն ու կործանումը և նորելուկ առևտրավաշխառուական բուրժուազիայի, հարստահարիչ, գիշատիչ «աղաների» էությունը, իսկ երկրորդը վերհանում հայկական բնավորության առանձնահատկությունները, որը և, ըստ հեղինակի, հանդիսացել է ամբողջ հայ ժողովրդի պատմական ողբերգության պատճառը։

Հավանորեն, դարձյալ Գաբրիել Սունդուկյանի «Քանդած օջախ»-ի ազդեցության տակ, իր նորավեպը, որը Սունդուկյանի «Պեպո»-ի պես պետք է ներկայացներ խաբեության, գողության և ուրիշներին զրկելու ճանապարհով հարստացող «լիրբ մեծատունին», անվանել է «Պաց ապպար»։

Նորավեպի նյութը վերցված էր նախիջևանցի հայտնի փողատեր Հովհաննես Պապասինյանի կյանքից, որը բազմաթիվ խեղճերի խաբելու, զրկելու ու հարստահարելու ճանապարհով դիզելով իր հարստությունը, գրավում էր ազդեցիկ դիրք և ուղղություն տալիս քաղաքի հասարակական կյանքին։ «Ուղարկում եմ քեզ այս փոքրիկ բանը... Այս մարդը, որի պատկերը կգտնես «Պաց ապպարի» մեջ ոչ միայն КЛЯУЗНИК է, այլ բոլոր քաղաքի հետ ազգակցություն ունի» (VI, 386),—գրում է

նա 1875 թ. սկզբներին, ապա նույնիսկ խնդրում տպագրության դեպքում թաքցնել իր հեղինակությունը, և վերնագրի տակ գրել «ռուսերենից թարգմանված և հարմարեցված մեր կյանքին» բառերը: Հատկանշական է, որ սկսելով պայքարը քաղաքի աղայական դասի դեմ, Պատկանյանը երկնչում է բացեիբաց մարտի մեջ նետվելուց: Հավանորեն, նրան ետ են պահում Ն. Նախիջևանի «աղաների» ու հոգևոր դասի իր հոր և Միքայել Նալբանդյանի նկատմամբ ձեռնարկած վայրագ հաշվեհարդարի հիշողությունները: Սակայն, նույնիսկ կիրառված զգուշությունները չէին խանգարում անմիջապես ճանաչելու ներկայացված անձնավորությանը, հենց իրեն, հիշյալ վաճառական Հովհաննես Պապասինյանը 1875 թ. իր օրագրում գրել է. «Մի քանի ամիս հետո լույս է գալիս գիրքն, ուր «Պաց ադպար» повесть-ին մեջ ներկայացնում է Իվանուշ Մայասիլովին, ուր հայհոյում է զիս»[16]:

Այսպիսով, Պատկանյանը ամեն մի նոր ստեղծագործությունից հետո վաստակում էր մի անհաշտ թշնամի, և նրանց հետ մարտնչելու անհրաժեշտությունը արդեն նրան ստիպում էր հրաժարվել ամեն տեսակ զգուշություններից, ամրապնդում վճռականությամբ մարտնչելու և պայքարը մինչև վերջ հասցնելու նրա հաստատակամությունը:

Արդեն 1878 թ. նա ի լուր բոլորի հայտարարում է, որ իր Հրատարակելիք «լրագիրը պիտի լինի խամչի, խղտրմիշ արած տամղա, позорный столб, կախաղան, эшафот, гильотина... Մեր տեղի միլիոնչիք мироед-ներու, сомодур-ներու, монополист-ներու, эксплуататор-ներու համար» (V, 410), և, գեն նետած վախ ու անվճռականություն, իր «մեղվի» սուր խայթը խրում է ամեն արգահատելի երևույթի մեջ, անխնա մտրակում «փողի տոպրակներին», բարեպաշտ դիմակ հագած բարձրաստիճան հոգևորականներին, քաղաքագլուխներին, նահանգապետներին:

Երկրորդ նորավեպը, որ նա գրի առավ «Պաց ադպար»-ից հետո «Ջախուն» էր, մի ստեղծագործություն, որ մինչև հիմա կարելի է դասել հայ նոր գրականության լավագույն պատմվածքների թվին: 1874 թ. փետրվարին իր այգում նա լսում է ջրկիր Մարտիրոսի կյանքի դրամատիզմով հագեցված, ցնցող, ողբերգական պատմությունը և նրա ամբողջ դժբախտությունը վերագրում հերոսի բնավորության խեղճությանը, ամեն վիրավորանք ու զրպարտություն անտրտունջ տանելուն, գլուխը կախ ամեն իրավիճակի հետ համակերպվելուն: Արդյոք այդ չէ՞ ամբողջ

[16] ԳԱԹ, Խալիբյանի ֆ., № № 4—7:

հայ ժողովրդի պատմական ողբերգության պատճառը, արդյոք այդ չէ՞ հայկական բնավորությունը... «Ախպա՛ր, մեզի վո՞վ ասիլ է քի խուզի ըլանք, վոր կալէրը մէզի ուտին...»,—բացականչել է իր ցավալի պատմությունն ավարտելիս ջրկիր Մարտիրոսը... Այո՛, պիտի ընդվզել, պիտի պայքարել, ինչպես իր լսած մի այլ պատմության հերոսուհին, Թագուհին արեց։ Ճիշտ է, Թագուհին նույնպես կործանվեց, բայց կործանվեց պայքարելով, իսկ պայքարելով մեկ օր էլ կարելի է հասնել հաղթանակի... «Թագուհին ինձանից ու քեզանից լավ հասկացել էր հայի որպիսությունը,—գրում է նա իրեն մորմոքող այդ անվերջանալի մտածմունքների մասին Քերովբե Պատկանյանին,—ամենալավ հայը նորան պիտի նմանի, եթե չուզե Մարտիրոսին նմանել... ընտիր, недюжинный հայի վիճակը այդ է, դու ինչ կուզես ասա։ Աստված տա, որ սխալած լինիմ...» (VI, 405)։

Ջրկիր Մարտիրոսի կյանքի պատմությունը նույն հայ ժողովրդի պատմական ողբերգության պատմությունն էր՝ աշխարհի առջև զրպարտված, արհամարհված, բայց իրականում տաղանդավոր ու ազնիվ ժողովրդի ճակատագիրը։ Բացի հայկական բնավորության կերտումից, «Ջախում» գրելիս հեղինակին սկսեց զբաղեցնել նաև սոցիալական անհավասարության հարցը, բուրժուական հասարակարգի պայմաններում ընչազուրկ մարդկանց ձգտումների ու դրանք իրականացնելու միջև եղած խորը վիհը, անհաղթահարելի հակասությունը՝ «Կհավատա՞ս,—գրել է նա Քերովբե Պատկանյանին,—քանի որ լսում եմ սախաճի Մարտիրոսի խուլած ձայնը «Ճուր առե՛ք, ճուր առե՛ք», մարմինս փուշ-փուշ լինում է, տեսնում եմ էլի մի ղոհ մեր կյանքի անհարմար սարքվելուն ... է՞հ ցավալի բաներ են...» (VI, 400)։

Մոտավորապես 1825—30 թ., այն նույն տանը, որ 1871 թ. հոգևոր իշխանությունից գնել էր Ռափայել Պատկանյանը, տիրացու Վարդան Ջալիկյանը դպրոց էր բացել և արհեստավորական դասին պատկանող մի քանի տասնյակ մանուկներ իր շուրջը ժողովելով, ժամանակի օրենքների համաձայն, ծեծով, սպառնալիքներով ու տանջանքով գրաճանաչություն էր սովորեցնում նրանց։

Այդ աշակերտների թվում էր եղել նաև նախիջևանցիներին լավ հայտնի, ծերունի ջրկիր Մարտիրոսը, որն իր կիսագրագետ, տգետ ու վայրենի ուսուցչի նախանձն ու բարկությունն էր շարժում իր ընդունակություններով, հարցասիրությամբ և ավանդվող գիտելիքների նկատմամբ ցուցաբերած անվստահությամբ։ Եվ ահա «վարպետը» դաժանո-

րեն հաշվեհարդար է տեսնում քանքարավոր պատանու հետ մի կորսված գրչահատի պատճառով, կործանելով ոչ միայն նրա ապագան, այլև նրանց ամբողջ ընտանիքը։

Հետագայում Մկրտիչ վարժապետի նախատիպ հանդիսացած այդ տիրացու Ջալիկյանը, կնոջ մահից հետո դառնալով կուսակրոն, կարգվում է Սուրբ Խաչ վանքի վանահայր։ Նկարագրվող դեպքերից 50 տարի անց ջրկիր Մարտիրոսը բանաստեղծի այգում աշխատելու ժամանակ գտնում է իր կյանքը կործանող դանակի ժանգոտած մնացորդները և արցունքը աչքերին, դողդոջուն ձայնով պատմում սեփական կյանքի ողբերգությունը։

Ձեռնարկելով պատմվածքի ստեղծումը, Պատկանյանը կարողացավ ռեալիստորեն ներկայացված պատմվածքի ամբողջ հենքը ենթարկել իր միտումին, մեծագույն վարպետությամբ կերտելով ազգային բնավորության առանձնահատկությունները և այդ բնավորությունից բխող համազգային ողբերգությունը։

«Ջախում» նա սկսեց գրել 1874 թ. դեկտեմբերի կեսերին և ավարտեց ընդամենը մեկ ամսվա ընթացքում՝ 1875 թ. հունվարի 14-ին (VI, 387)։ Իր տպավորվող խառնվածքի ողջ էությամբ, արտասուքով ու աղեխարշ «ա՜խ»-երով ցավակից լինելով տաղանդավոր պատանու կյանքի փլուզման պատմությանը, նա առանց արտագրելու նորավեպը շտապում է փոստ, այն անհապաղ Պետերբուրգ հասցնելու համար։ «Այս րոպեիս ավարտեցի այս զուլամա «Ջախում» և իսկույն պիտի տանեմ նամակատուն. սաստիկ հոգնած եմ, մի՛ պահանջիլ երկար նամակ...» (VI 387), «Բայց չկարծեմ, որ այսուհետև կենդանի կյանքից շատ բան գրեմ, վասնզի պատմածը լսելիս սաստիկ ցնցվում եմ, մեկ անգամ էլ գրելիս. ինհարկե, քու ստացած ազդեցությունը շատով ստոր է ինձմեն, ես լսում եմ արտասուքով, առ ի սրտե ախերով և միանգամայն ցավակից եմ լինում թշվառներուն» (VI, 400)։

Այնուհետև Պատկանյանը գրում է «Խապաաթը վօրինն է» պատմվածքը, որը դժբախտաբար կորել է Պետերբուրգում, և նրա բովանդակության ու կառուցվածքի մասին կարելի է դատել միայն երկու եղբայրների նամակների մեջ սփռված ակնարկներից։ Եթե «Ջախում» հեղինակը «մի առանձին նշանավոր բան» չի համարել և նրա կատարելությունները վերագրել պատմողի արվեստին (VI, 382, 391), ապա «Խապաաթը վօրինն է» գործը նրա համար չափազանց թանկ է եղել և, հավանորեն, առաջին հերթին նրա հերոսուհու՝ Թագուհու ըմբոստ, անհանդուրժող բնավորության համար, որը չցանկանալով Մարտիրոսի

պես անտրտունջ կրել կյանքի դառը հարվածները, ընդվզել է դրանց դեմ և ապա պոհվել։

Հայ կնոջ բարոյական կերպարը Պատկանյանի համար եղել է զարմանքի ու հիացումի առարկա։ Իր ստեղծագործություններում նա կերտել է բազմաթիվ դրական կանացի կերպարներ, նրանց համարելով հայության պահպանության միակ նեցուկը։ «Աշխարհքիս ստեղծագործության վերջին օրը աստված երկրի ամեն թանկագին նյութերը ի մի ժողովեց, խառնեց և նոցանից ստեղծեց հայ կնկան... Բայց հայ տղամարդուն հա՞, հա՞, հա՞, հա՞... Եթե հայ տղամարդը օրինավոր մարդ լիներ, գոնե յուր կնոջ սիրուն թույլ չպիտի տար, որ թշնամին Հայաստանը տիրապետեր և բնակիչների ձեռքից հայ կնկան հափշտակեր... Աշխարհիս վրա վաղուց մոռացված կլիներ հայության անունը, եթե հայ կինը յուր կանացի առաքինությունները սուրբ և անարատ պահած չլիներ» (ընդգծումը մերն է—Մ. Ս.),— գրել է նա (III, 451)։

Կնոջ դաստիարակության հարցը նա միշտ համարել է առաջնահերթ խնդիր հենց ազգապահպանության տեսակետից, քանի որ կնոջ ձեռքին է գտնվում հայ ընտանիքի, հայ օջախի բանալին և նրա զարգացման աստիճանից է կախված հետագա հայ հասարակության բարոյական վիճակը, անգամ գոյության հնարավորությունը։ «Դու զարմանո՞ւմ ես, որ ես գեռոյ չունիմ, այլ միայն героиня—գրել է նա Քերովբե Պատկանյանին,—մի զարմանալ, մեր էրիկմարդիկ գործ չեն կատարում, բոլոր пружина-ն կանանց ձեռքն է և, մանավանդ, աղջկերանց։ Հավատացիր ինձ այժմ խոսքով, հետո ես քեզ գործով կապացուցանեմ։ Հայի կյանքի ոգին աղջիկն է։ Այս բանը ես առաջինը նկատեցի և այսուհետև իմ գրվածքի մեջ անդադրում դուրս կբերեմ և ցույց կտամ, թե ինչ կողմի վերա պետք էր ուշադրությունը դարձնել հայասերներին» (VI, 411)։

Ինչպես երևում է պատմվածքը գեղարվեստական տեսակետից չի բավարարել Քերովբե Պատկանյանին, և նա այն չմտցնելով նախատեսվող գրքի մեջ, անփութորեն կորցրել է նաև միակ ձեռագիրը, մեծ ցավ պատճառելով հեղինակին։

Բացի հիշյալ պատմվածքից, Ռափայել Պատկանյանը 1875 թ. ըսկըզբի բեղմնավոր ամիսներին գրում և ավարտում է «Խութուռ» նորավեպը, «Քախքէթօն», «Бежин луг Նախչուանի» և «Քուչէռի փարէվագրէր» պատկերները և ձեռնարկում նախիջևանյան վերնախավի՝ վաճառականների, իշխանավորների, հոգևորականների երգիծական չափածո դիմանկարների կերտումը։

Սրանցից առաջինը՝ «Խութուռ»-ը, որը դարձյալ կորել է Քերովբե

Պատկանյանի մեղքով, պատկերում էր մի հայ աղջկա (VI, 409), իսկ մյուս երկուսը հումորով ներկայացնում նախիջևանյան տարբեր տիպեր։ Այդ մի երկու էջի վրա հեղինակին հաջողվել էր կենդանի, հյութեղ գույներով կերտել խոսակցությամբ զբաղված ծերունիների և երեխաների պատկերներ, նրանց գրույցի արտաքին լրջության տակ ներկայացնելով զավեշտական դատողություններ ու իրավիճակների անկրկնելի տեսարաններ։

Նպատակ ունենալով ներկայացնելու Նախիջևանցի հային այնպես, ինչպես որ նա կա, իր հետաքրքրություններով, զարգացման աստիճանով, բնավորությամբ, առտնին զբաղմունքով, Պատկանյանը ծրագրում էր իր այդ պատկերաշարի մեջ ներկայացնել քաղաքի տարբեր խավերի և զբաղմունքների ներկայացուցիչներին, հոգևորականներին ու աշխարհականներին, երեխաներին, ծերերին, հարուստ կանանց, օրավարձով աշխատող բանվորուհիներին։ Ծրագրում էր դրանցից ամեն մեկի համար գտնել իրեն հատուկ արտահայտությունը, խոսելակերպը, նյութը։ Եվ այդ պատկերները պետք է կազմեին մի ամբողջություն, լրացնելով մեկը մյուսին։ Այդպիսին պիտի լիներ նաև չափածո շարքը, որը հանելուկների ձևով պիտի գծագրեր նախիջևանյան վերնախավի դիմապատկերներ։ «Ես հավատարիմ մնացի քու մի անգամ ինձ տված կանոնիդ «Դուրս հանե քաչևանցի как он есть»։ Ես քեզ դուրս բերի քաչևանցիին և դուրս կբերեմ նորա կյանքի ամեն պատահարքումն, կյանքը, սերը, ատելությունը, խոսվածքը, դատմունքը, քննությունը, աշխարհանկատությունը, միով բանիվ, ժամանակավ դու կունենաս, նախիջևանցիին 5—600 փոշտի թերթի վերա, կարճ՝ սորա գրականությունը... Այն ժամանակ դու իսկապես դուրս բերած կլինիս ազգի ամբողջությունը։ Ես վրան այնպիսի կարծիք ունիմ, որ ամենը միասին մեկ կապ ունեն իմ գրվածքը, իսկ ջոկ-ջոկ՝ թերի են» (VI, 411)։

Հայկական բնավորության բացասական գծերի բացահայտումը անասելի տանջանք էր պատճառում հեղինակին. ամեն մի կերպար, կարծես թե, խլում էր նրանցից ազգը մի օր վերափոխված ու ազատված տեսնելու հույսը, թեև պատմական իրադրությունների և սոցիալական հարաբերությունների հետևանքով առաջացած ու հաստատուն բնավորություն դարձած երևույթների բացահայտումը ուներ միայն մեկ նպատակ, դրանց վերհանման ու ծաղրման միջոցով վերափոխելու, դաստիարակելու նպատակ։ «Այս նորումս ես սկսեցի զանազան կատակաչելեքներ գրել, կարծեմ մոտ 100 հատ բան հավաքվեցավ, կզրկեմ, կտեսնես իմ կարծիքը և այն տպավորությունը, որ կատարեց վրաս մեր սի-

րական ազգը… Իհարկե, հանճարեղ ճշմարտություններ չկան նրա մեջ, բայց կան աղեխորով արտասունք խեղճ Ռափայելին…» (VI, 414)։

Հավանորեն այդ «կուտմուշեկքները» (հանելուկները) հետագայում կազմեցին նրա «Նոր-Նախիջևանի քնար»-ի հիմքը։ Քանի շատանում էին չափածո դիմանկարների թիվը, այնքան հեղինակը մոռանում էր զգուշության մասին։ Քաղաքի «աղաների» արատների մերկացումները կարդացվում էին տարբեր մարդկանց մոտ, անգամ ձեռագիր վիճակում շրջում քաղաքում՝ շարժելով «այս աշխարհի հզորների» բարկությունը։ Բնականաբար, գնալով լարվում են քաղաքի վերնախավի և բանաստեղծի հարաբերությունները, մեծանում է նրան «չխսիրողներու» բանակը, որոնք վրդովմունքով են հայտում իրենց ծոցում բուն դրած «օձին», որը ոչ միայն ծաղրում ու անարգում է ազգի պատվավոր մարդկանց, այլ դրածն էլ անմիջապես ուղարկում է Պետերբուրգ, այնտեղ ևս նրանց խայտառակելու նպատակով (VI, 422)։

Եվ, երբ հարց է ծագում բացվելիք հոգևոր դպրոցի համար հարմար տեսուչ նշանակելու վերաբերյալ, ընտրությունը կանգ է առնում ավելի համակերպվող, քաղաքի վերնախավի հետ բարեկամական կապեր հաստատած Գրիգոր եպիսկոպոս Աղափիրյանի վրա, իսկ Պատկանյանը բավարարվում է միայն փոքրաքանակ դասերով, թեև վերջինս ուներ բոլոր իրավունքները զբաղեցնելու տեսչի պաշտոնը թե՛ իր կրթությամբ, թե՛ մանկավարժական երկարատև աշխատանքով, թե՛ ստեղծած դասագրքերով։ Չեն օգնում նրան անգամ Քերովբե Պատկանյանի դիմումները քաղաքագլխին և քաղաքի ինքնավարության անդամներին։ Նման մարդ, որ անընդհատ քննադատում է հասարակության պատվավոր անդամներին, չէր կարող տեղ ունենալ այնպիսի պատասխանատու մի ասպարեզում, ինչպիսին մանկավարժությունն է և մանավանդ դպրոցի տեսչությունը։ Անգամ որոշ սառնություն է սկսվում Գրիգոր Աղափիրյանի և Ռափայել Պատկանյանի հարաբերություններում, քանի որ նորընտիր տեսուչը նույնպես չէր խրախուսում իր վաղեմի ընկերոջ վարքագիծը և աշխատում էր ընդհանուր լեզու գտնել «փողի տոպրակների» հետ։ Այսուհանդերձ Ռափայել Պատկանյանը ոչ միայն շարունակում էր ավելացնել իր հանելուկների թիվը, նորանոր դիմապատկերներ ընդգրկելով դրանց մեջ, այլ նրաղում բազմաթիվ պատմվածքների, ավանդությունների, ծեսերի, առածների, երգերի վերարտադրման միջոցով կերտել հայկական բնավորության հիմնական գծերը, ըստ որում, ոչ միայն ներկա դարի, ապրող հայերի, այլ նաև պատմական դարաշրջանի։ «Իհարկե, քո դիտավորությունը այլ է,—գրում է

նա Քերովբե Պատկանյանին, ակնարկելով նրա բարբառագիտական նյութակները,—բայց ես ժողովելով Նախիջևանի կյանքից ինքնուրույն ասացվածքը, կեցվածքը և աշխարհանկատությունը, այլև ավանդությունք, ծեսեր, առածներ, երգեր, խաղեր, նշանակներ (նոթա), սիրախոսքեր (les mots favorits) կարծում էի ժամանակով գումարել մի ամբողջ ազգի (Անի՞, Շիրա՞կ) դրականություն, որով, գուցե լույս ձգվեր աշուղների և սմբատների ձեռքի տակ նղած հայ ժողովրդի վիճակի վերա... Թե՞ ուշ է արդեն... Թե՞ այդ պետք էր 3—4 հարյուր տարի առաջ անել... Ասա՛ ինձ, ինչպե՞ս պիտի ձեռնարկել, ի՞նչ բանի վերա պիտի դարձնել ուշադրություն, ինչի վերա՝ ոչ. մեր բնավորությունն 1000 տարվա մարդոց բնավորություն կգուշակվի՞, մենք նմա՞ն ենք մեր ազգակործան, խորոխտ, տերատյաց պապերուն, մեր կանայք և մեր աղջկունճ նմա՞ն են իրանց հանիմներուն, թե մենք փոխվել ենք ցայն աստիճան, որ միայն հոմանուն է հայ անուններս, մնացած ամենը փոխվել է...» (VI, 416)։

Այս մտորումները նրան մղեցին ստեղծելու «Նորընծա» պատմվածքը, որտեղ ներկայացված էր Ն. Նախիջևանի հոգևոր դասի ներկայացուցիչներից մեկը։ Իր ամբողջ կյանքում ոչ մի գործի համար պետք չգալուց, ամեն տեղից անընդունակության, գողության, ստախոսության, ծուլության համար վռնդվելուց հետո այդ մարդը ընտրում է հոգևոր ասպարեզը և սկզբում տիրացու դառնալով վարժապետություն անում, իսկ վերջում օծվում տերտեր։

Եվ վրդովեցուցիչն այն է, որ իմանալով տիրացուի իսկական էությունը, հոգևոր առաջնորդը, միայն նրա, քաղաքի հայտնի հարուստներից մեկի հետ ունեցած ազգակցական կապի համար, առանց տատանվելու այդ ապաշնորհ խարդախի ուսին է դցում հոգևորականի ուրարը։

Առանձնապես բարդացան Ռափայել Պատկանյանի և քաղաքի վերնախավի հարաբերությունները, երբ 1875 թ. հունիսին Պետերբուրգում լույս ընծայվեց Քերովբե Պատկանյանի «Материалы для изучения армянских наречий» գիրքը, որտեղ «Ախտամերկյան» ստորագրությամբ տպագրված էին նրա «Տիրացինս», «Պաց ազպար», «Ջախու» պատմըվածքները, «էրէվան» պատկերը, «Արէվ-մանուկին հեքիաթը»։

Կարդալով և իրենց տեսնելով մի շարք բացասական կերպարների մեջ, քաղաքի «հզորները» իրենց վրդովմունքն էին հայտնում հեղինակի մասին, բարձրաձայն նրան կոչելով «դավաճան», «քաղաքի պատիվը ոտնակոխ անող», «հայ ազգը անարգող»։

Չնայած Պատկանյանի հավատացումներին, որ ինքը ոչ մի կապ չու-

նի այդ Ալտամերկյանի հետ, ընթերցողները անմիջապես զգում էին նրա ոճը, որ այնքան հաճախ դրսևորվում էր զրույցների ժամանակ, տեսնում ու ճանաչում քաղաքի տարբեր մարդկանց ու իրադարձություններ։ «Վերջի աշխատությունդ տվի քանի մի մարդոց, գրգռվում են սաստիկ, կասկածում են, որ ես գրած լինիմ, բայց ես, իհարկե, բացեիբաց հրաժարվում եմ։ Պիտի ջանաս արդելյալ, скандалный, հոլարտա մասը շուտ լույս ընծայելու հնարը գտնել... Թո՛ղ կատաղեն, թո՛ղ բարկանան, բայց կշահվին. այդ որոշված է...» (VI, 428),— գրում է նա իր պատմըվածքների հրատարակչին, խնդրելով մի հնարով լույս աշխարհ բերելու նաև կղերի քննադատությունը և գավառաբանական անպատուղ վեճերին նվիրված «Sermo»-ն ու «Քախքէթօն»-ը, «Նօրընծա»-ն, վերջին օրերս գրած «Ջօք»-ը (մատաղ-պատարագը), «Վարժապէտ»-ը և մյուս պատմվածքները, որոնք տեղ չէին գտել գրքում։

Քանի որ գրաքննության խստության պատճառով Ռուսաստանում անհնար էր դրանց բոլորի համար տպագրության թույլտվություն ստանալ, Ռափայել Պատկանյանի մոտ առաջանում է արտասահմանում տպարան բացելու և անարգել ամեն ինչ տպագրելու գաղափարը։ «Ուղարկում եմ այս փոքրիկ բանը,—գրում է նա «Ջօք» պատմվածքը ավարտելուց հետո, որտեղ նրա երգիծանքի սայրերը ուղղված էին կրոնական հավատալիքների դոհհկացման, թեմի հոգևոր առաջնորդի և քաղաքագլխի դեմ,—բայց առջևէ գիտեմ, որ տպելու չես, եթե միայն արտասահմանը չորոշես մի արգելյալ տիպ մտածել, և հիրավի որ, անպատճառ այդ մասին պիտի հոգալ։ Եթե իսկապես դու միտք ունիս մի գիրք լույս ընծայել, ուր հայի ներկա բարոյական և նյութական վիճակը ճշտիվ նկարված լինի, անհնար է Ռուսաստանի մեջ. իսկ այն է մեր գրքերին կյանքը խլում, ինչ որ մենք՝ երկյուղ կրելով մեր ցենսուրային զգուշանում ենք մուծանել մեր գրվածքի մեջ։ Իսկ ակնարկությունով, առակով խոսելեն և կամ կարդացողին տողընդմեջ հասկացնել տալեն զզվելի բան չիկա, գոնե ինձ համար. կա՛մ բոլորովին բանալ սիրտս, կա՛մ բոլորովին փակել, կա՛մ խոսել ամեն ինչ, որ կա սրտումս, կա՛մ միանգամայն լռել» (VI, 426)։

Ն. Նախիջևանի բարբառով ստեղծագործելու ընթացքում նա այնքան է ընտելանում այդ կենդանի երանգներով հարուստ խոսվածքին, որ նրան սկսում է թվալ, որ այդ բարբառը կարելի կլինի դարձնել ապագայի գրական լեզվի հիմքը, եթե ստեղծվի նրանով մի ամբողջ գրականություն։ Գրել անխոնջ, փորփորել ու հանել ոչ միայն հայկական ոգին, այլ

նաև ժողովրդական պատմվածքներ, գարերից եկող լեզվական մտածելակերպը։

Ախտամերկյանի պատմվածքների բուռն ընդունելությունը համաքաղաքացիների կողմից, որոնք ոչ միայն կարդում, այլ նույնիսկ գրական երեկոներ էին կազմակերպում զանազան տներում, բարձրաձայն ընթերցում, պատմում մեկը մյուսին «Ջախու»-ն, «Տիրացին»-ը (VI, 427), համոզեցին նրան, որ հայը դեռևս լրիվ չի կորցրել հայերեն կարդալու և կարդացածը հաճույքով ընկալելու ընդունակությունը, որ նա կարդում է, եթե և՛ նյութը, և՛ լեզուն մոտ են նրա սրտին։ Ուրեմն պետք է ստեղծագործել այդ լեզվով և հայկական կյանքից առնված թեմաներով, ու ժողովուրդը կսկսի կարդալ, իսկ եթե հայերեն ընթերցանությունը դառնա նրա համար անհրաժեշտություն, ապա կարելի կլինի ներգործել, կոփել նրա կամքը, մարտունակությունը։

Նույնիսկ այդ օրերին (1875 թ. սեպտեմբեր) նորաստեղծ հոգևոր դպրոցի համար ձեռնարկած «Մայրենի բարբառ» դասագիրքը նա պատրաստվում էր գրել «ժողովրդական ոճով», որով խոսում են բոլորը, այն գրական լեզվի աստիճանին բարձրացնելու միտումով։

Չնայած պատվիրատուների հակադիր տեսակետներին, նա, այնուամենայնիվ, դասագիրքը սկսեց գրել Ն. Նախիջևանի բարբառով, որը և պատճառ հանդիսացավ այդ կարևոր գործի խափանմանը. «Ինչ կուզե, թող լինի, ես կանեմ, ինչ որ զգում եմ... Կենդանի բարբառով մի լավ ընթերցարան կգրեմ... Ես այսուհետև ներկա մարդոց հետ գործ չունիմ, հաշիվս դոցա հետ մրծեցրել եմ. ես հոգվով սրտով կդառնամ դեպի գալոց սերունդը, այսինքն՝ նոցա, որոնք թերևս 100—150 տարիեն պիտի հայտնվին» (VI, 434), առարկում էր նա իրեն հակառակում համոզել ջանացող Քերովբե Պատկանյանին։

Եվ չնայած իրեն պաշարած ստեղծագործական բազմաթիվ ծրագրերին, Ն. Նախիջևանում հայկական մանկական պարտեզ ստեղծելու մտահղացմանը, Պատկանյանը զգում էր իր շուրջը սեղմվող թշնամական օղակի սառնությունը։ Հարաբերությունները դպրոցական կառավարության հետ ավելի ու ավելի էր սրվում, քաղաքի պատվարժան «աղաները» վրդովմունքով էին արտասանում նրա անունը, հիշում այն բոլոր վնասները, որ քաղաքին հասցրել էր դեռևս, նրա հայրը՝ եկեղեցական դումարների չարաշահումների հարցը բարձրացնելով։ «Կյանքիս մեջ ամենամեծ սխալն էր Նախիջևան գալս,—գրում է նա,—բայց ես մարգարե չէի, չգիտեի, որ Նախիջևանը իմ առջև փակված էր արդեն 45 տարի ա-

առջ։ Նախիջևանի մեջ 2 տեսակ մարդիկ կարող են կենալ՝ բռնակալներ և նվաստ ստրուկներ. ուրիշ ուղղության մարդոց համար հեղձուցիչ է այստեղի մթնոլորտը» (VI, 427)։

Միակ ելքը Ռափայել Պատկանյանը տեսնում էր քաղաքից հեռանալու և գործունեության նոր ասպարեզ որոնելու մեջ։ Կինը ոչ մի կերպ չէր կարողանում ընտելանալ Ն. Նախիջևանի միջավայրին, համոզում էր ետ վերադառնալ Պետերբուրգ, մանավանդ, որ երեխաներից երկուսը՝ Սանդուխտն ու Գաբրիելը ուսման մեջ կատարելագործվելու նպատակով արդեն գտնվում էին Պետերբուրգում։ Սակայն Պատկանյանին ամենևին չէր հրապուրում հյուսիսային մայրաքաղաքի հարմարավետ կյանքը, նրա հոգին ձգտում էր դեպի Հայաստան, դեպի գործունեության «իր սուրբ հայրենյաց ծոցում»։

Ն. Նախիջևանից հեռանալու ցանկությունը այնպիսի ուժով է համակում Պատկանյանին, որ մեծ դժվարությամբ ու ջանքերով ստեղծած իր պարտեզն անգամ ետ չի կանգնեցնում նրան իր մտադրությունից։ Իսկ նրա պարտեզը մի զարմանալի, անկրկնելի երևույթ էր, որտեղ նա կարողացել էր աճեցնել Հայաստան աշխարհում գոյություն ունեցող բազմաթիվ ծաղիկներ և ծառեր, տնկիներ, սոխուկներ ու սերմեր բերել տալով Ծաղկաձորի, Երևանի, էջմիածնի, Ղարսի ու Անիի շրջակայքից (V, 50)։ Եվ քանի որ մեկ տարի առաջ բացվել էր Գևորգյան ճեմարանը, ապա իր նպատակների իրագործման ամենահարմար վայրը պիտի լիներ էջմիածինը, ուր կարելի կլիներ և՛ աշխատել դպրոցում, և՛ պարբերաբար տպագրվել «Արարատ» ամսագրում։

1875 թ. հունիսին նա նամակով դիմում է Վահրամ եպիսկոպոս Մանկունուն և ռմն տեր խաչատուրի, ճեմարանում իրեն դասերով ապահովելու համար Վեհափառի առջև միջնորդելու խնդրանքով։ «Իմ ցանկությունս դեպի էջմիածին երթալու ոչ այլ ինչ է, եթե ոչ մոտիկ լինել իմ բնիկ հայրենակցաց և գտնվել ծոցումն իմ սուրբ հայրենյաց» (VI, 428),—գրում է նա և հայտնում որ ինքը պատրաստ է վարել աշխարհագրության, բնագիտության, թվաբանության, պատմության և ռուսաց լեզվի դասերը, որը որ հնարավոր լինի, միայն թե նա կարողանա հոգալ իր ընտանիքի չափավոր ապրուստը և ազատ րոպեներին զբաղվել գրականությամբ և հասարակական աշխատանքով։ Հիմա արդեն նա իր գոյությունը չի պատկերացնում առանց ստեղծագործական աշխատանքի. «Ապաքեն Ձեզ հայտնի է, որ գրիչս իմ կենաց տարրն է, կյանքիս ամենահարկավոր պահանջմունքն է. ես առանց գրելու կենալ չեմ կարող,— գրում է նա էջմիածին։ Ինչ ասել կուզե, որ ակադեմիորեն ազատ րոպե-

ներս ամբողջությամբ նվիրված կլինին «Արարատին» եթե միայն նա կարժանացնե ինձ յուր էջքերի մեջ հյուրընկալություն ցույց տալու (VI, 428)։

Սակայն էջմիածինը չարձագանքեց բանաստեղծի խնդրին։ Ո՛չ ճեմարանի տնօրինությունը, ո՛չ «Արարատ» ամսագրի խմբագրությունը չարժանացրին նրան «հյուրընկալության»։ Թերևս, կղերականների դեմ ուղղված նրա բազմաթիվ երգիծական ստեղծագործությունների և անհանգիստ բնավորության համբավն արդեն հասել էր կաթողիկոսին և մյուս բարձրաստիճան հոգևորականներին՝ մեկընդմիշտ փակելով նրա առջև «Սուրբ քաղաքի» դռները։ «Վախեցան, որ էջմիածնի հանգիստ կյանքը քար ու քանդ կանեմ»[17],—ասել է Պատկանյանը, երկա՜ր, ապարդյուն սպասումներից հետո և այլևս առանց նահանջի ճանապարհներ որոնելու, դառնալով «համոզմունքի նահատակ» անվախ դուրս եկել «ցմահ պատերազմի» իր ախոյանների դեմ։

---

[17] *«Վեմ», 1933, № 1։*

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ԱԶԱՏ ԵՐԳԵՐ

Վրա է հասնում 1875 թ. աշունը։ Թուրքական բռնապետության դեմ Հերցոգովինայում և Բոսնիայում բռնկված սլավոնների ապստամբության լուրերը հասնում են Ն. Նախիջևան և տակն ու վրա անում Պատկանյանի հոգին։ Հիմա արդեն ետին շարքն են մղվում սոցիալական անարդարությունների դեմ մղվելիք պայքարի ծրագրերը, Ն. Նախիջևանի «ազգային դասի» ներկայացուցիչների չափածո դիմանկարների ըստեղծումը, անգամ հայկական բնավորության պատկերման փորձերը։ Միայն վերածնված Հայաստանի ուրվականն է հետապնդում, չարչարում նրա միտքն ամենուրեք։ Եթե իր վաղ երիտասարդության տարիներին նա երազում էր համաժողովրդական ապստամբության մասին և հնարավոր համարում զենքով վերադարձնելու կորսված ազատությունը, ապա պատմական այս ժամանակաշրջանում նա ավելի ողջախոհ էր համարում թուրքական պրոտեկտորատի ներքո Արևմտյան հայկական հանրապետության ստեղծման հեռանկարները, քանի որ Մերձավոր արևելքում Ռուսաստանի և Անգլիայի շահերի բախումը հնարավորություն չեն ընձեռի անկախ Հայաստանի գոյության համար։ Ուրեմն ամեն ջանք, ամեն հնարավորություն պիտի ուղղել այս նպատակի իրագործման համար, անհրաժեշտ են հզոր համախոհներ, տպագրության հնարավորություն, անհրաժեշտ են այդ գաղափարը արծարծող ոտանավորներ, հոդվածներ, արձակ գործեր, դրամատիկական ստեղծագործություններ։ Անհրաժեշտ է այդ գաղափարը դուրս բերել Ռուսաստանի սահմաններից, հոդվածներ տպագրել եվրոպական օրագրերում, ծանոթություններ տալ պատմական Հայաստանի մասին, գիտական տարբեր համաժողովներում հանդես գալ Հայաստանը, նրա անցյալը, նրա ներկան բնորոշող զեկուցումներով ու հաղորդումներով։

Անհրաժեշտ է չկորցնել րոպեն և հայկական հարցը բարձրացնել աշխարհի առջև։

Իմանալով Պետերբուրգում նախատեսվող «Լումա» ամսագրի հրատարակման աշխատանքների մասին Պատկանյանն իր փայփայած ծրագիրը առաջարկում է ապագա խմբագրությանը, իր նախկին համախոհներ Կարապետ Եզյանին, Մկրտիչ Սանասարյանին, Քերովբե Պատկանյանին և ապագա խմբագիր Փիլիպոս Վարդանյանին։ «Վարդանյանը ինձ ասաց, իբր թե դու, Եզյանը և այլք միտք ունիք օրագիր հրատարակելու,—գրում է նա 1875 թ. նոյեմբերի 10-ին, ...Երանի՜ թե ինձ էլ հրավիրեիք ոչ թե օգնական, այլ ժամանակից ժամանակ հոդված մատակարարող, բայց ես կխնդրեի (եթե միայն այդ գործին արժանի կհամարեիք ինձ) ոչինչ կանոն և օրենք, և պատշաճություն չիդնել առջևս... Քարոզ ուսման, դաստիարակության, զոհաբերության, ազգասիրության, հայրենասիրության և այլ այսպիսի դրսեն փայլուն և ներսեն դատարկ նյութերը արդեն սպառեցան, ժողովրդի ատամները հարվեցան, ականջ<ները> ժո՜ւվ ժո՜ւվ անում են։ Բավ է, թողե՛ք այդ զարշելի բաները, խրատով մարդ խելոք չի լինիլ, խելքը պարագան պիտի սովորեցնե։ Արի՛ այսուհետև ուրիշ ճամփա բռնենք, իսկական փրկավետ, ժողովրրդական ճամփան.—արի՛ այն անենք, ինչ որ ժողովուրդը սիրում է, «արի ֆիս տանք»... Արի՛ ցույց տանք, որ ազգը մինչև ազատություն, ինքնակառավարություն չիստանա, ոչ դաստիարակություն կստանան նորա որդիք, ոչ ինքյանք կիրթ ու բարոյական կդառնան։ Մի՞թե ռուսը նախ կրթվեցավ և ապա ազատվեցավ, մի՞թե Գարիբալդին նախ կրթեց յուր ավազականման զինվորներին և ապա ազատեց ազգը. ո՞ր կուզես նայե, միայն ազատ, ինքնակառավար ժողովուրդը կարող է բարոյապես լուսավորվելու, իսկ կրթությունը և ստրկությունը շատ խաղաղ կերպով կկենան։ Միտքդ բեր նվաճյալ հույներուն Հռովմի իշխանության տակ։

Արի՛ Վանի հայերու ինքնակառավարությունը դարձնենք այսուհետև ազգային ձգտումն, արի՛ ամեն կերպով, ամեն հնարով, ամեն մեր բանքարով ասենք, կռվենք, վիճենք այդ խնդրոց վերա, արի՛ բացարձակ քարոզենք, որ Օսմանյան տերության միակ հնարն է ազատության և փրկությանն, հայերուն ինքնուրույն վարչություն տալումն...

Եթե կկամենաք, այս փռոգրամմով ես վարձկան կգրվիմ ձեր օրագրին, ինձ ազատություն տվեք, հա՛մ повесть, հա՛մ թատերական փիեսա, հա՛մ խոսակցություն, հա՛մ դատմունք, հա՛մ ոտանավոր կգրեմ շատ, շատ և շատ, և միշտ պտույտ կգամ այդ գաղափարի չորս կողմը և գիտեմ, հավաստի եմ, սրտեր կթնդացնեմ, կվառիմ և... մնաց<ածը> կլինի, ինչ որ կլինի, և հավաստի եմ, որ ինչ որ լինի, եղածեն լավ կլինի. միայն թե դուք էլ քաջ, արի, անվախ եղեք, չափե դուրս զգուշությու-

նը ու փոքրոգությունը շատ նման են միմյանց, իսկ քաջ առաջ երթալը նպատակի կեսին հասնելու արժի» (VI, 435—437)։

Պետք է նկատել, որ Պատկանյանը իր այս նույն ծրագիրը առաջարկել էր նաև Թիֆլիսի և Երևանի համախոհներին, թախանձել որսալ հարմար պահը և հայկական հարցը դուրս բերել հրապարակ։ Սակայն 1875 թ. Զեյթունի ապստամբության լուրը, այլ ընթացք տվեց Պատկանյանի մտքերին։ Չցանկանալով այլևս տուրք վճարել Մարաշի փաշային, ազատասեր զեյթունցիք դարձյալ ապստամբել են Տավուտ Նիազի գայմագամի դեմ, քանդել պաշտոնատները, մզկիթը, վռնդել թուրք պաշտոնյաներին և երեք տարով նվաճել իրենց անկախությունը և կառավարման գործը դարձյալ հանձնել չորս իշխաններին։ Եթե մի բուռ զեյթունցիք կարողացել են նվաճել իրենց անկախությունը (թեկուզ ժամամանակավոր), ապա այդ կարող է անել նաև թուրքական վայրագ լծի տակ հեծող ողջ արևմտահայությունը։ Ուրեմն հնարավոր է ոչ միայն համոզել թուրքական կառավարությանը, այլ զենքը ձեռքին պահանջել իր իրավունքները։ Միայն անհրաժեշտ է գրել, ստեղծագործել, ոգևորել, սթափեցնել հայ մարդուն, հարկավոր է նկարագրել այն անլուր տառապանքները, որոնք անմռունչ կրում է դարեր ի վեր հայ ժողովուրդը, հարկավոր է ստիպել նրան ընդվզել, վառել նրա հոգին, տրոփել տալ սիրտը, ընտելացնել պայքարի ելնելու մտքին։ «Իմ բռնելու ճանապարհս միանգամայն նոր է,—գրում է նա 1875 թ. նոյեմբերին,—չեմ ասում, որ ոչ ոքի մտքե անցած չէ, ոչ, այլ տակավին ոչ ոք ընթացած չէ այդ ճանապարհով։ Ես անվեհեր կերթամ, ուժս արդեն փորձել եմ, ապացույց շատ ունիմ, ճշմարտությունը իմ կողմս է, պատրաստած մտքեր շատ կան, հարուցանելու խնդիրս կենդանի և կարևոր է, ուրեմն, հայտնի և ծածուկ կուսակիցք շատ կունենամ, հալածանքե չեմ վախում, մահե նույնպես, եթե մահ սպառնա ևս՝ փույթ չէ, այդ մահը անմահության ըսկիզբն է... Մի՞թե... Կյանքը... չպիտի պատրաստ լինի զոհ լինելու մի ազգի զույգ փրկության, թերևս ազատության և հավասար բարոյական սթափման... Ահա այսպիսի բաներ խլրտում են մտքիս մեջ։ Գուցե խելագար իմն է, գուցե և խելոք ինչ, ինչ կուզե լինի, «Հյուսիսափայլ»-ը հրատարակմանն խելացնոր չի լինիլ, դու ինչ կուզես ասա...» (VI, 439),— շարունակում է նա նույն նամակում իր հիացումը արտահայտելով «Հյուսիսափայլ»-ի սխրանքի նկատմամբ, ցանկանալով իր այս նոր նախագիծը հասցնել նրա աստիճանին, սթափեցնել ու վառել իր համազգիների զգացմունքները, ինչպես այդ կարողացավ անել «Հյուսիսափայլ»-ը 60-ա-

կան թվականների ծանր օրերին մեն մենակ մարտնչելով խավարի ու մոլեռանդության դեմ։

Առաջին գործը, որ Պատկանյանը ձեռնարկեց «Լումա» ամսագրի համար, ըստ իր առաջադրած ծրագրի, «Կիուլզատէ» պատմվածքն էր, որտեղ պատկերված էին պարսկական բռնապետության դեմ պայքարող և այդ պայքարում զոհված երևանցի Սումբաթը և նրա որբ մնացած, ազատասեր դուստրը՝ Կյուլզադեն, որը երդվել էր ամուսնանալ միայն իր հոր արյան վրեժը լուծողի, բռնակալների դեմ սուր բարձրացնողի հետ։ Սակայն ամբողջ քաղաքի մեջ չի գտնվում մի հայ տղա, որ կարողանա կատարել գեղեցիկ աղջկա պահանջը, տղաները անմիջապես պաղում են «այդ տարօրինակ» պայմանը լսելով, հեռանում, ամուսնանում մեկ ուրիշի հետ և իրենց «գազը ու կշեռքը» ձեռքն առած խաղաղ ու հանդիստ ապրում։ «Ասվածտ քիսիրիս՝ հային պա՞նն է թուր ու խամա առնէլը, թանղրին չէլէրը ինէլը, հարամի խըղըլպաշին ձէռքէն մարթ խալսէցունէլը, արունի տէղ արուն վօթէլը, ձէռքի թիւֆէնկօվ տուշմանին վրան թիւֆէնկ քաշէլը» (IV, 170),—դառնությամբ բացականչում է հեղինակը։

Եվ ոչ մի համարձակ հայ երիտասարդ չգտնելով, Կյուլզադեն իր բախտը կապում է մի լեհ ապստամբի հետ, որը սեփական հայրենիքի ազատության համար պայքարելու պատճառով հասարակ զինվորի աստիճանով ուղարկվել էր Կովկաս։ Պատմվածքի վերջում, արդեն ռուսական ամրոցներից մեկի պարետի աստիճանի հասած լեհ ապստամբի կին Կյուլզադեն ազատում է շահույթի համար փորձանքի մեջ ընկած մի հայ երիտասարդի, որին դեռևս մանկության օրերից ճանաչում էր Ն. Նախիջևանից, և պատվիրում նրան ասելու բոլոր հայերին, որ «նաքա մինչէվ ան օրը ատած կըլան հէ՛մ օտար ասքէրէն, հէմ ալ չէնքօվ հայէրէն, քանի վօր ատպէս չէսիրի փունութքի տէր ին ու ինքնէրը իրէնց շուքէն կըվախենան» (IV, 179)։

Հավանորեն ստանալով «Լումա»-ի տնօրենների համաձայնությունը և հավանությունը իր առաջարկած ծրագրի վերաբերյալ, Ռափայել Պատկանյանը Քերովբեի ձեռքով Փիլիպոս Վարդանյանին է հասցնում իր նոր պատմվածքը՝ խնդրելով գրաքննիչին անհրաժեշտության դեպքում միայն «ամուր նախադասությունները» միջից հանելով պահպանել պատմվածքի հիմնական գաղափարը, նպատակասլացությունը։ «Կիուլզատէի» հետ միաժամանակ Պատկանյանը ավարտում և իր նոր նպատակներին է համարեցնում նաև «Խութու» պատմվածքը և, ամենայն հավանականությամբ, զգալով, որ բարբառով գրված գործերը այդպիսի հրատապ րոպեին կարող են չհասկացվել և անուշադրության մատնվել,

նա անցնում է անմիջականորեն ներգործող չափածո գործերի և դրանք գրում ամենքին հասկանալի աշխարհաբարով։

1876 թ. ապրիլին Բուլղարիայում բռնկված խոշոր ապստամբությունը թուրք բռնապետության դեմ նորանոր ոգևորությունների աղբյուր է դառնում բանաստեղծի համար, և նա անմիջապես, մայիսի սկզբներին գրելով իր «Ազատ երգեր» շարքի առաջին երկու բանաստեղծությունները՝ «Մշեցու հեկեկանք»-ը և «Ղարիբ մշեցի»-ն, «Խութուա»-ի հետ միասին ուղարկում է «Լումա»-ի ապագա խմբագիր Փիլիպոս Վարդանյանին։ «Ստացե՛ք այս ракет-ները «Վանա հարցին»,— գրում է նա «Ղարիբ մշեցու» ինքնագրի վրա։— Այս նախապատրաստություն է, որին կհետեվեն գնդակոծությունք՝ դամ քան զգամ սաստիկ և սոսկալի՝ մերթ արձակ և մերթ չափաբերական, մերթ ի բերանս մշեցոց և մերթ բոլոր հայերի սրտեն բխած» (VI, 442)։

Այս բանաստեղծություններին հաջորդում է մի ամբողջ շարք՝ «Վանեցոց աղոթքը», «Վանեցի մոր երգը», «Վանեցի գեղջուկի տաղը», «Անվերջ գանգատներ»-ը, «Սերուկ վանեցին», «Հազարեն մեկը», «Հայի գանգատը»։

Հիմա Պատկանյանին զբաղեցնում էր միայն մի միտք. տպագրված տեսնել այդ բանաստեղծությունները, և նա անընդհատ շտապեցնում է իր բարեկամներին, հորդորում մի մեծ առաջնորդող հոդվածում արծարծել Վանի հանրապետություն ստեղծելու անհրաժեշտությունը, «Լուման» դարձնել այդ հրատապ հարցի ամբիոն։ «Շտապեցե՛ք, շտապեցե՛ք, իմ վրա այնքան հուսացե՛ք, որքան որ ազգի սերը իմ վրա սուրբ պարտք դնում է նրա գործի համար խոսքս բարձրացնելու։ Ես ոչինչ արդյունքի առջև կանգ չեմ առնիլ. ես ամենեդ առավել վստահ եմ, որ այդ բանը մեր օրերով պիտի լույս աշխարհ ելանե, ուրեմն շտապեցեք, խոհեմություն, զգաստություն և երկյուղ՝ նվաստ զգացմունքներ են այս դիպվածումը։ Մի՞թե մեր կյանքը առավել արդյունք պիտի ունենա, քան թե ազգ սթափեցնելու երախտիքը... «Մինչև ցորենը չիմեռնի՝ պտուղ չի տալ». ով որ մեզանից առավել ազնիվ է, թող ցույց տա այլոց նահատակվելու ճանապարհը— այդ բանը ազգը վաղուց մոռացել է, իսկ այն օրեն սկսում է ազգիս նվաստությունը» (VI, 442)։

Սակայն «Լումա»-ի հրատարակման թույլտվությունը ուշանում էր, ամենայն հավանականությամբ այն պատճառով, որ նախապատրաստվող ռուս-թուրքական պատերազմի նախօրեին ռուսական միապետությունը չէր ուզում գրգռել հայերի ազգասիրական տրամադրությունները և նախատեսվող տպագրական օրգանների նկատմամբ չափազանց զգուշա-

վոր քաղաքականություն էր վարում։ Մինչև պաշտոնական թույլտվություն ստանալը, ապագա խմբագիր Փիլիպոս Վարդանյանը և փաստական հրատարակիչ Կարապետ Եզյանը սկսել էին թղթակցել, ինչպես հայ, այնպես էլ օտարազգի հեղինակների հետ և ստացել բազմաթիվ նյութեր։ Ստեփանոս Նազարյանը ուղարկել էր մի քանի հոդված, Րաֆֆին՝ «Խաչագողի հիշատակարանը», Քերովբե Պատկանյանը, Կարապետ Եզյանը, Ալիշանը, Ստեփանոս Պալասանյանը, Մատթեոս Մամուրյանը, Համբարձում Իփեքչյանը, հայագետներ՝ Դյուլորիեն և Պետերմանը տվել էին Հայաստանի պատմությանը և ժամանակակից հարցերին վերաբերող ուսումնասիրություններ։ Իր ռազմաշունչ բանաստեղծությունները էր ուղարկել Ռափայել Պատկանյանը։ Անկասկած, այս ամենի մասին որոշակի լուրեր էին սպրդել գրաքննչական ատյան, դժվարացնելով և ձգձգելով ամսագրի տպագրության թույլատրումը։

Մեկ ուրիշ հանգամանք ևս. ինչպես 1859 թ. Մովսես Բուզաղյանին և Կարապետ Եզյանին չհաջողվեց «Քաղաքական և գրական լրագիր» վերնագրով երկամսյա պարբերական հրատարակելու թույլտվություն ստանալ, պահանջվող քաղաքական վստահություն չվայելելու պատճառով, այնպես էլ այժմ, չնայած իր վարած բարձր պաշտոններին Կարապետ Եզյանի անունը դարձյալ անհանգստացնում էր գրաքննչական ատյանին։ Որ Կարապետ Եզյանի նկատմամբ երկար տարիներ կիրառվել է գաղտնի հսկողություն, երևում է այն բանից, որ 1884 թ. Երևանում հայտնաբերված «Հայասեր-Ազգասեր» խմբակի գործունեության կապակցությամբ Երևանի նահանգային ժանդարմական վարչության կազմած գործի մեջ հիշատակվում է նաև նրա անունը, նշվում Կովկաս կատարած նրա այցելությունների տարեթվերը և իջևանատեղիները։ Խոսելով «Հայասեր-Ազգասեր» խմբակի գործունեության նպատակների մասին և նշելով այն փաստը, որ այդ խմբակցության անդամներն իրենց համակիրներն ունեն նաև այլ վայրերում, քննիչը գրում է. «1879 թվականին Անդրկովկաս այցելեցին Կոնստանդնուպոլսի և Վանի որոշ հայրենասերներ, ինչպես նաև այլ վայրերի նման խմբակների գործիչներ»։ Այս տողերի կողքին կապույտ մատիտով լուսանցքում ավելացված է. «Նույն այդ թվականին Թիֆլիս եկավ Եզովը և կանգ առավ իր բարեկամ Հովհաննիսյանի մոտ»[1]։

Մինչև հունիսի 18-ը Պատկանյանն արդեն վերջացրել էր «Ազատ երգեր» շարքը (թվով 22 բանաստեղծություն) և անհամբեր սպասում էր

[1] ՀՊՊԱ, ֆ. № 115, գ. № 44, Երևանի նահանգային ժանդարմական վարչություն։

նրանց լույս աշխարհ գալուն. «Եթե տիպը ուշանա,— գրում է նա Փիլիպոս Վարդանյանին,— կարծում եմ, անախրոնիզմ կդառնա» (I, 295),— և աշխատում է ձեռագիր վիճակում տարածել դրանք՝ Ն. Նախիջևանում, Թիֆլիսում, Պետերբուրգում, կարդալ տարբեր հավաքույթների ժամանակ։

Աննախադեպ էր այդ երգերի գործած ազդեցությունը ընթերցողների վրա։ Ճիշտ ժամանակին հնչող նրա բոցակեզ «ռումբերը» հայկական ամենատարբեր շրջանների կողմից ընկալվեցին իբրև ռազմի շեփոր, իբրև մարտահրավեր, համընդհանուր ոգևորությամբ համակեցին բոլորին։ «Կարդացի, զմայլվեցա և սրտագին շնորհակալությամբ լցավ հոգիս դեպի Ձեզ, որ գիտեք այդպիսի սքանչելի կերպով արտահայտել հայ մարդու ցավն ու վիշտը,— գրում է նրան «Ազատ երգեր»-ի առաջին ընթերցողներից մեկը՝ Փիլիպոս Վարդանյանը։— Ես պարզ խոստովանում եմ, որ Ձեր երկարամյա լռությունից հետո էլ հույս չունեի լսելու Ձեզնից այս աստիճանի ոգեշունչ, կենդանի, անպաճույճ, սրտե առ սիրտ խոսող բուն ազգային զողտրիկ ձայներ։ Ուստի իմ ուրախությունը, որին և ամբողջ հայ ազգը մասնակցելու է անշուշտ, անչափ է Ձեր քնարի վերակենդանացման համար և ցանկությունս անբավ, այլևս երկար տարիներ լսելու Ձեր անզուգական երգերը և ոգևորելու նոցա կենսատու ջերմությամբ... Դե՛հ, ուրեմն թող աստված անպակաս անե յուր շնորհը Ձեզնից, իսկ մենք միշտ պատրաստ կլինենք վայելել այդ շնորհաց արդյունքը և երախտագետ սրտով լսել Ձեր ձայնին, որ հոգի և սիրտ է տալիս ամեն հայ մարդու» (VI, 609)։

Բանաստեղծությունները գրելու ընթացքում Պատկանյանը աշխատում էր տեսնել իրական փաստը, ջանում գտնել իսկապես տառապող ժողովրդի սրտից բխած ցավը։

Նա չէր բավարարվում միայն իր կարդացածով կամ ստացած լուրերով, այլ աշխատում էր տեսնվել Արևմտյան Հայաստանից եկած մշակների հետ, լսել նրանց պատմածները, զգալ նրանց տրամադրությունները։ «Հավատացեք ինձ, ազնիվ պարոն,— գրում է նա Կարապետ Եզյանին, մեկ այլ նամակում,— որ յուրաքանչյուր իմ ոտանավորը է որպիսինիցեն հայեն լսած մի դատմունք նույն իսկ հայի վրա։ Այս նորումս որ գրեցի 28 հատ բան, ամենն էլ կարող եմ մի առ մի թվել, թե երբ և որից լսեցի, ոչ մինը շարադրած կամ մտացածին չէ» (VI, 453)։

1876 թ. հոկտեմբերի 9-ին Պատկանյանը հանձնարարական նամակներով Պետերբուրգ է ուղարկում Զեյթունից Ռուսահայաստան ժամանած փախստական Ղազարոս Ենի-Դյունյանին և խնդրում լսել նրան ու ա-

ջակցել։ Ամենայն հավանականությամբ, Անդրկովկասի հայրենասիրական խմբերի և Պետերբուրգի նրանց համախոհների միջև կապող օղակը Ռափայել Պատկանյանն էր։ Այդ պատճառով Անդրկովկաս առաքված զեյթունցի պատվիրակը այցելում է Ն. Նախիջևան, իջևանում բանաստեղծի մոտ և ստանալով հանձնարարական նամակներ Կարապետ Եզյանի, Փիլիպոս Վարդանյանի, Մկրտիչ Սանասարյանի և Քերովբե Պատկանյանի անուններով, մեկնում է Պետերբուրգ։ Այդ նամակներից պահպանվել է Քերովբե Պատկանյանին ուղղված երկտողը և Փիլիպոս Վարդանյանի պատասխանը, որը լույս է սփռում զեյթունցու առաքելության նպատակների վրա։ «Չգիտեմ, կբարկանա՞ս, թե կուրախանաս, որ այս նամակը տվի քեզ հասցնողի ձեռքը,—գրված է Քերովբե Պատկանյանին ուղղված նամակում,—Ղազարոս Էնկի-Դյունյան զեյթունցի է, այն 4 իշխաններեն մինն է, որոնք քանի մի տարի առաջ 30.000 տաճիկ, չերքեզ և բաշիբոզուկ մինչև վերջին հոգին թրև անցուցին։ Այս մարդուն ես շատ սիրեցի, և, կարծում եմ, նա էլ ինձ սիրեց... Դա աշխարհներ ու ծովեր պիտի անցնի և երթա պատմե յուր տեղը, թե մինակ դուք չէք հայեր, այլ կան ուրիշներ, որոնք սոցա, զեյթունցոց ցավակից են» (ընդգծումը մերն է—Մ. Ս.), (VI, 444—445)։

Հոկտեմբերի 14-ին Փիլիպոս Վարդանյանը Պետերբուրգում դիմավորում է զեյթունցուն և հայտնում այդ մասին բանաստեղծին։ «Զեյթունցին երեկ երեկոյան ժամը 9-ին հասավ ինձ Ձեր նամակներով հանդերձ։ Գիշերն իմ մոտ պահեցի, հյուրասիրելով ինչքան որ կարող էի. այս առավոտ պ. Սանասարյանի մոտ տարի...

Արդյոք գիտե՞ք, թե այս Ղազարն ինչու է եկել Պետերբուրգ, ինչո՞ւ է թափել այսքան քրտինք, կրել այսքան չարչարանք, նեղություն, տառապանք։ Եկել է անոր համար, որ մի խնդիրք տա Թագավորին։ Ի՞նչ խնդիրք, ինքն էլ լավ չգիտե... «Զունքի Թագավորը զորավոր է, մեծ է, բարի, պեքիմ աղեկություն մը կընե... Միամիտ, անմեղ, ողորմելի Ղազար։ Այժմ ինքն էլ լավ հասկացել է յուր արած հիմարությունը...

Թեև յուր ասելով այդ կողմերը գալու միտքն ինքն է հղացել, բայց ես կարծում եմ, որ նա մի այլ կողմից է ստացել այս դրդումը, թերևս Պոլսի ռուսի դեսպանատան շրջաններից։ Այս մասին գրով խոսելն անհարմար է ու թողնում եմ։ Ըլլալուն կտեսնենք...

Ղազարի պատմած բաները մեծ ուշադրությամբ լսում եմ։ Մեր ապագայի մեջ Զեյթունը մի նշանավոր պաշտոն կատարելու է անշուշտ, այդ մասին իմ հավատն անխախտ է։ Միայն մեր պարտավորություն-

ներն են հույս տալիս նրանց և թիկունք...» (ընդգծումը մերն է—Մ. Ս.)[2]։

Երկու նամակների մեջ զգուշությամբ հիշատակված խմբակցության ունեցած «պարտավորությունները» զեյթունցիների գործի նկատմամբ, հնարավորություն է տալիս ենթադրելու, որ Թուրքահայաստանում սպասվող ապստամբության ժամանակ պետք է միաժամանակ նրանց միանար նաև Արևելահայաստանը։ 1884 թվականին «Հայասեր-Ազգասեր» խմբակցության գործունեության ժանդարմական քննության մեջ հիշատակվում է Լևոն Տիգրանյանի մոտ հայտնաբերված Մկրտիչ Խրիմյանի մի նամակի մասին, որտեղ խոսվում է Կիլիկիայում և Վերին, կամ Ռուսական Հայաստանում միաժամանակ ապստամբական գործողություններ սկսելու մասին[3]։ Պետք է ենթադրել, որ այդ նախագիծը ստեղծվել էր դեռևս ռուս-թուրքական պատերազմի նախօրեին։

Զեյթունը բաժանված էր չորս իշխանական տների պատկանող թաղերի, որոնք, բացի դրանից, ունեին նաև իրենց ենթակա գյուղերը։ 1862 թ. ապստամբության ղեկավարներն էին. Շովրոյան թաղից՝ Հազոր (կամ Ղազար) Շովրոյանը, Յաղուբյան թաղից՝ Մկրտիչ Յաղուբյանը, Ենի Տունյա թաղից՝ Աստվածատուր Ենիտունյանը, Սուրենյան թաղից՝ Նազարեթ Սուրենյանը։

Չնայած այն հանգամանքին, որ Ռափայել Պատկանյանն իր հանձնարարական նամակում նրան համարում էր 1862 թ. ապստամբության ղեկավարած իշխաններից մեկը, սակայն անունների տարբերությունը մեզ ստիպում է ենթադրել, որ պատգամավորը եղել է կամ Ենիտունյան իշխանի եղբայրը, կամ մեկ այլ ազգականը։

* * *

√ 1876 թ. նոյեմբերի սկզբներին անհանդստացած «Լումա»-ի թույլտվության ձգձգումից Պատկանյանը «Ազատ երգեր» շարքը Արզար Հովհաննիսյանի միջոցով ուղարկում է Թիֆլիս «Փորձ»-ի խմբագրություն և համարյա նույն օրը տեղեկանում «Լումա»-ի արգելման մասին։ Հայտ-

---

[2] ԳԱԲ, ՌՊֆ, № 1120։

[3] У Левона Тиграняна найдено письмо Хримяна, где говорится о необходимости одновременного действия в Киликии и в Верхней или Русской Армении, а также обнаружен документ об армяно-курдском союзе, из которого видно состоявшееся соглашение армян с курдами, кочующими на границах Турции, Персии и России, для взаимной помощи и единства действий.
(ՀՊՊԱ, ֆ. № 115, գ. 44, Երևանի նահանգային ժանդարմական վարչություն)։

նելով այդ տխուր լուրը, Փիլիպոս Վարդանյանը առաջարկում է նրան Կարապետ Եզյանի անունից, բանաստեղծությունները տպագրել առանձին գրքույկով և խնդրում դարձյալ նոր գործեր ուղարկել՝ շարքը մեծացնելու նպատակով։ «Տարրակույս չկա, որ այդ կենդանի քերթվածքները խույն տարածվելու են մեր ազգի մեջ, մանավանդ այս բոպեիս, երբ նոքա, կարելի է ասել, բոլոր հայերի զգացմանց հավատարիմ թարգմանն են»[4],—գրում է նա։

Սակայն, չնայած ձեռնարկված միջոցներին, «Ազատ երգերը» Պետերբուրգում առանձին գրքույկով նույնպես հնարավոր չի լինում հրատարակել, իսկ «Փորձ»-ի 1877 թ. № 3—4-ում տպագրվում են 22 բանաստեղծություններից միայն 10-ը։ Ամենայն հավանականությամբ, գրաքննության արգելքի հետևանքով «Ազատ երգեր» շարքից դուրս են ընկնում այնպիսի մարտաշունչ բանաստեղծություններ, ինչպիսիք են «Վաննեցոց աղոթքը», «Վանեցի մոր երգը», «Վանեցի կտրիճ»-ը, «Հայի արյուն»-ը, «Թալանված գեղ»-ը, «Երկու պատկեր»-ը, «Հազարեն մեկը», «Ի՞նչ անենք»-ը, «Ո՞չ խնդիր, ո՛չ հրաման»-ը, «Երգ»-ը, «Ուսանող»-ը։ Իսկ մեկ տարի անց՝ 1878 թ. հրատարակված «Ազատ երգեր» ժողովածուում ընդգրկվում են դարձյալ 10 բանաստեղծություններ, որոնցից 3-ը՝ «Վանեցու աղոթքը», «Վանեցի մոր երգը» և «Վանեցի կտրիճ»-ը համալրված էին դուրս թողնված ոտանավորներից։ Հեղինակի մտահղացումը մասամբ հնարավոր է լինում վերականգնել միայն 1881 թ. լույս ընծայած ժողովածուի էջերում, որտեղ ներկայացվում են 1876 թ. ամռանը գրած շարքից 19-ը։

Բայց ռուս-թուրքական պատերազմի առաջին օրերին տպագրված այդ 10 բանաստեղծություններն էլ բավական էին համընդհանուր ոգևորություն առաջ բերելու համար։ Նրանք բոլորի շուրթերին էին, արտասանվում էին, արտագրվում, տարածվում ձեռագիր վիճակում։

1877 թ. ապրիլի 24-ին պայթեց ռուս-թուրքական պատերազմը։ Ռուսական զորքերի հաղթական առաջխաղացումը Կովկասյան ռազմաճակատում, հայ զորավարներ Լորիս-Մելիքյանի, Տեր-Ղուկասովի, Շելկովնիկովի հաջողությունները, Արդահանի, Կարսի, Բայազետի, Ալաշկերտի ազատագրումը, հայ կամավորների անօրինակ սխրանքները նորանոր հույսեր ու ակնկալություններ բերին իրենց հետ։

Հիմա արդեն Պատկանյանը և նրա համախոհները ապագա Վանի հանրապետության ստեղծումը կապում էին, առաջին հերթին, ռուսական

---

[4] ԳԱԽ, ՌՊֆ, № 1121։

հզոր զենքի հաջողությունների հետ, աշխատում մամուլում ու բանավոր կերպով արծարծել այն։ Արծրունին «Մշակ»-ի էջերում արևմտահայերին հորդորում էր զինված ապստամբության միջոցով թոթափել իրենց վրայից Թուրքիայի ստրկացնող լուծը, մեծ հույսեր կապելով Ռուսաստանի հաղթական առաջխաղացման հետ։ Րաֆֆին կրքոտ հրապարակախոսական հոդվածներով բացահայտում էր թուրքական բռնապետության վայրագությունները և հայերի ազատագրական ձգտումների անհրաժեշտությունը։ Ժամանակի ամբողջ մտավոր կյանքը տրոփում էր մոտալուտ ազատության հեռանկարից, ծնվում էին բազմաթիվ ծրագրեր և տեսություններ, որոնցից շատերը կապված էին ռուսական հովանու ներքո հայկական հանրապետություն ստեղծելու գաղափարի հետ։

Բրյուսելում լույս տեսնող «Jndependance Belge» լրագրում տպագրված հոդվածը, որը վերագրվում է Քերովբե Պատկանյանին, արծարծում էր Ռուսաստանի օգնությամբ ազատ Հայաստան ստեղծելու միտքը և այն դիտում որպես մի առաջադիմական քայլ, հավասարապես շահավետ և՛ Ռուսաստանի, և՛ Անգլիայի համար։ Հերքելով եվրոպական մամուլում բազմիցս հայտնված կարծիքը Ռուսաստանի զավթողական նպատակների մասին, հոդվածագիրը հատկապես նշում է այդ պատերազմում Ռուսաստանի ունեցած ազատագրական առաքելության մասին և ավելացնում. «Այսպես օրինակ, հայերի վերաբերմամբ՝ որոնք չարչարվում են թուրքերի ձեռքից ոչ պակաս, քան թե Բալկանյան սլավոնները, խոսում են, թե իբր ռուսները կամենում են վերցնել այդ երկիրը (Հայաստան), որ ապահովեն իրենց ճանապարհը դեպի Հնդկաստան, ի վնաս անգլիացիների օգուտների։ Դորանից ավելի սխալ բան չկա։ Բայց ազատ Հայաստանը, քրիստոնյա իշխանով, որը չի լինի ոչ ռուս, և ոչ անգլիացի, կլինի մի ճշմարիտ առաջադիմություն լուսավորության։ Այդ օգտավետ կլինի որչափ Ռուսաստանի համար, նույնչափ և Անգլիայի համար»[5]։

Ռափայել Պատկանյանը ազատասիրական բաղձանքների այդ թեժ օրերին հորդորում է չլռել, դուրս գալ հրապարակ, խոսել հայի պահանջների և իրավունքների մասին, այդ հարցը դուրս բերել միջազգային ասպարեզ։ Զարմանալով, որ այդպիսի ժամանակ կարելի է զբաղվել այլ գործերով, նա գրում է Խորենացու Աշխարհացույցի հրատարակման և մեկնության հարցերով մտահոգված Քերովբե Պատկանյանին. «...Մանավանդ որ ժամանակն էլ մի այնպիսի ժամանակ էր, ուր քեզմեն սպա-

[5] «Մշակ», 1877, № 48։

սում ենք ամպրոպներ, շանթեր, կայծակներ՝ դես ու դեն ցրված կա՛մ ֆրանսիական, կա՛մ գերմանական, կա՛մ անգլիական լրագիրներումն, հօգուտ վերականգնելի Հայաստանի... Ուրեմն, Քերոբ ջան, հօգուտ մեղք է, եթե դու մի սիրուն բրոշյուռ չիգրես և շատ շուտ միջոցում չիտպես առաջիկա քոնգրեսի համար՝ ի ցույց տիտաններուն մեր հայի վիճակը և նոցա ստանալու ողորմությունքը Եվրոպայեն և այն դերը, որ պիտի խաղա հայը ազգության մեջ... Ցույց տուր, Քերոբ ջան, ի՞նչ պիտի պոռա մեր խեղճ հայը ի լուր ազգաց և աղանց. Նա տանջվում է, բայց չգիտե ի՞նչ ասե և ի՞նչ խնդրե։ Դիր նորա բերանը խոսք, բայց այդ խոսքը թող լինի հավիտենական ճշմարտություն» (VI, 455—456)։

Հավանորեն հենց այդ օրերին էլ նա ստեղծել է «Հայերու թուքը» ոտանավորը, որտեղ պահանջում է բոլորից՝ հայ փողատերերից, հայ զորավարներից, հայ հեղինակներից, հայ գիտնականներից լարել իրենց ամբողջ ուժերը, ուղղել իրենց մտածմունքները, հնարավորություններն ու կարողությունները օրհասի մեջ գտնվող հայրենիքը փրկելու համար։

Սակայն, չնայած այս ոգևորությանը, մի զգոն ձայն Ռափայել Պատկանյանին թույլ չէր տալիս հավատալ բաղձալի նպատակի իրականացման հնարավորությանը։ Ռուսաստանի և Անգլիայի շահերի բախումը Մերձավոր Արևելքում դարձյալ պիտի խոչընդոտ հանդիսանա հայկական հարցի բարեհաջող լուծման համար։ Ինչքան էլ ռուսական կառավարությունը, ելնելով իր շահերից, ձգտի ինքնավարություն տալ հայերին, եվրոպական մի շարք պետություններ և առաջին հերթին Անգլիան դեմ կկանգնի Ռուսաստանի առաջխաղացմանը։ Ահա այս մտայնությամբ ըստեղծվեց Պատկանյանի «Վայնա»-ն, որտեղ սայլապան Սեղպոսի արտաքուստ միամիտ, հեքիաթաձև պատմությամբ տրված են պատերազմի պատճառները, հայ ժողովրդի ակնկալությունները, նրա կատարած սխրանքները, նրա զորավարների խիզախությունները, Ռուսաստանի նվաճողական բաղձանքները ու Անգլիայի հետ ունենալիք անխուսափելի բախումը։

Շնորհիվ ժողովրդական պատմելաձևի, «Վայնա»-ի մեջ երգիծական սուր գրչով ներկայացված են ռուս արքունիքը, այնտեղ տիրող ստորաքարշության մթնոլորտը, կեղծիքը, աշխարհակալության մասին երազող Ալեքսանդր II-ը, նրա խորամանկ կանցլեր Գորչակովը, դիվանագիտական մեքենայությունների վարպետ Իգնատևը։

Համակրելի գույներով է պատկերված անձնվիրաբար կռվող և ռուսական գահի համար հաղթանակներ բերող գեներալ Լորիս-Մելիքյանը, որն իր քաջագործությունների դիմաց խնդրում է ցարից վերականգնել

«Հայկական թագավորությունը»։ Ինչպես վայել է հեքիաթին, ռուսական թագավորը խոստանում է հայ գեներալին կատարել նրա ցանկությունը, եթե ինքը ստանա իր ականջալիքները. «Հիմա նայինք,—վերջացնում է իր պատմությունը սայլապան Սեղպոսը,—դրա վերջը ինչ կլինի։ Տեսնենս այս անգամ հայերուս համար մեջից մի լավ բան դուրս կգա՞, թե էլի քթներիս-պռունկներիս մածուն կքսեն ու չորս քամիի դեմ բաց կթողնեն ասելով՝ «Գնացեք ձեր տիկիններին բարեվ արեք» (IV, 210)։

Պատմվածքի համար Պատկանյանը ընտրել էր «Հաճախ թիկնոցի տակ ծածկված է լինում կեղտոտ ճշմարտությունը» լատինական ասացվածքը, դրանով արդեն արտահայտելով իր կասկածանքները ցարական Ռուսաստանի սկսած պատերազմի միայն ազատագրական նպատակների վերաբերյալ։

«Վայնա»-ի հետ միասին, իբրև սկիզբ նկարագրված էր նաև մի խումբ սայլապանների զրույցը, պատերազմի պատճառների ու նպատակների մասին, զավեշտական գույներով ներկայացված էր նրանց միամիտ մեկնաբանությունները ու մշուշոտ պատկերացումները և այդ ամենից բխող նրանց միակ տենչը՝ հայկական անկախ թագավորության երազը։

Սակայն զգալով, որ զրույցը կառուցվածքով հիշեցնում է «Քահկէթօն» պատմվածքը, Պատկանյանը անջատում է սայլապան Սեղպոսի պատմությունը, ավելի ներգործուն դարձնելու նպատակով, իսկ զրույցը թողնում որպես առանձին պատկեր, անվանելով այն «Փլէվնա-փաշա»։

Չնայած այն հանգամանքին, որ Ռափայել Պատկանյանը պատմվածքը գրել էր Ն. Նախիջևանի բարբառով գրաքննչական թույլտվության հարցը հեշտացնելու համար, գրաքննիչ Քերովբե Պատկանյանը դարձյալ հնարավոր չհամարեց այն լույս աշխարհ հանել քաղաքական իրադրության այդ լարված պահին և, իհարկե, առաջին հերթին ռուսական արքունիքը պատկերող երգիծական սուր դրվագների պատճառով։ «Աղը ավել ես տվել (пересолил), քան թե որքան հարկավոր էր, թեև խոսողները արաբաչիներ են»[6],—զգուշությամբ հայտնում է նա հեղինակին՝ պատմվածքը ստանալուց անմիջապես հետո։

Ռափայել Պատկանյանին մնում էր դիմելու հին, փորձված ձևին, ձեռագիր վիճակում, բազմաթիվ արտագրությունների և բանավոր ընթերցանությունների միջոցով իր նոր ստեղծագործությունը տարածե-

---

[6] ԳԱԲ, ՌՊՖ, № 1049։

լում։ Արտագրություններով է տարածում Ռափայել Պատկանյանը նաև քաղաքի վերնախավի քննադատությանը նվիրված իր չափածո գործերը, որոնք մինչև քաղաքական իրադրությունների սրվելը գրում և տարածում էր Ն. Նախիջևանում, հանելուկների ձևով։ Հիմա արդեն նա գրում էր երգիծական բանաստեղծությունների մի շարք, որտեղ ծաղրվում էին այդ օրհասական պահին անձնական բարօրության մասին մտածող հայ վաճառականը, քեֆի ու անառակության մեջ օրեր սպանող նրա որդին, ագահ, տգետ ու խարդախ հոգևորականը, աղաների սեղաններից փշրանքներ հավաքող ծախված մտավորականը, քաղաքակրթության միայն արտաքին ձևերը կապկող հայ տիկինը։

Արձակ երգիծական գործերը՝ «Ռիսաք» և «Տօնչունօրավօր» պատմըվածքներն էին, որոնք նա տպագրեց «Մեղու Հայաստանի»-ում 1878 թ.։ Դրանցից առաջինը ծաղրում էր շքեղ կառք ու թանկագին ձի ձեռք բերելու և շրջապատին զարմացնելու մոլուցքով տարված հայ նորելուկ «աղաներին» ու նրանց տիկիններին, իսկ երկրորդը պատկերում ճաշկերույթների ու անվանակոչությունների այն մրցավազքը, որը, մեկը մյուսից ետ չմնալու համար, կազմակերպում էին քաղաքի համարյա բոլոր ընտանիքները։ Պատմվածքներում սուր, երգիծական գրչով կերտված էին քաղաքի մի շարք անվանի ներկայացուցիչներ, որոնք ուրիշ ոչ մի մտածմունք չունեին կյանքում, բացի շռայլ սեղանների առջև անօգուտ շատակերությամբ զբաղվելուց ու մարդիկ, որոնք ազգային գործերի համար խնայում են տաս ռուբլին, իսկ հարևաններին ու ծանոթներին զարմացնելու համար շպրտում հազարներ։ «...Այժմ որ ինձ կարդալով (այսինքն՝ շարադրությունքս) այստեղ մարդոց մաղձերն է խառնում,— գրում է նա 1877 թ. դեկտեմբերի 17-ին,—կարկտի նման թափեցնում եմ **արձակ և ոտանավոր** (ընդգծումները մերն են—Մ. Ս.), ինչո՞ւ, էնդուր որ տպավորություն անում է. մարդոց կատաղությունը ցայն աստիճան հասնում է, որ տունս կրակելու պատրաստ են։ Ա՜խ, ինչպես ուրախ եմ ես։ Կարողացա՞ խոմ այս թմրած հոգիները զարթեցնելու։ Դրանից հետո ախր ինչպե՞ս չիգրես։ Բայց այդ բաները եթե դու կարդաս, չես հավանիլ, նոքա էլ չեն հավանում, բայց կարդում են և կատաղում են» (VI, 460—461)։

«Կատաղում էին» Պատկանյանի դեմ ոչ միայն նրա գրչի տակ ընկած նորնախիջևանյան աղաներն ու նրանց մերձավորները, այլ նաև իր երեկվա մտերիմներից շատերը, որոնք չկամենալով փչացնել իրենց հարաբերությունները քաղաքի հզորների հետ, մեղադրում էին բանաստեղծին՝ նրա «անզուսպ» գրչի, «օձախայթ» լեզվի, հիգինակությունններ

չճանաչող վարքագծի համար։ «Պետք չէ թաքցնեմ, իմ կծու լեզվի համար ինձ չեն սիրում, այդ ես նկատում եմ, բայց ինձ ի՞նչ պետք է սեր. բավական է, երբ որ իմ իդեան առաջ երթա... Ինձ թեև չեն սիրում, բայց խոսքս ընդունում են. այդ անմերժելի է, ինձ ատողք անգամ նկատել են այդ... Ես չեմ հուսահատվում, մի՛ հուսահատվիր և դու» (VI, 438),— գրում է նա Քերովբե Պատկանյանին։

Սակայն մեն մենակ, առանց համախոհների պայքարը շարունակելը օրըստօրե դժվարանում էր։ Լարվում ու անբարյացակամության էին փոխվում հոգևոր դպրոցի տեսչի՝ Գրիգոր եպիսկոպոս Աղափիրյանի, ավագ քահանա, կրոնուսույց Խաչատուր Զարիֆյանի և մյուս ուսուցիչների ու Պատկանյանի հարաբերությունները, որն առանց հաշվի առնելու մի շարք աշակերտների ծնողների դիրքն ու հեղինակությունը, կոպիտ կերպով նկատողություն էր անում նրանց չսովորելու և անկարգությունների պատճառով, ծաղրում դպրոցի հարուստ, բայց տգետ հոգաբարձուներին։ Պատկանյանին անհրաժեշտ էր համարձակ, լայնախոհ, իսկական հայրենասեր մի բարեկամ, որի հետ միասին հնարավոր լիներ շարունակել սկսած գործը։ Այդպիսի մարդ կարող էր լինել Փիլիպոս Վարդանյանը, որը «Լումա»-ի խափանումից հետո այլևս չէր ուզում մնալ Պետերբուրգում։

Ինչպես տարիներ առաջ նա Ն. Նախիջևան էր կանչում Քերովբե Պատկանյանին, ապացուցելով, որ հայ մտավորականի տեղը իր հայրենիքն է, իր եղբայրների ու քույրերի հարազատ միջավայրը, այնպես էլ այժմ թախանձում էր Փիլիպոս Վարդանյանին՝ թողնել հյուսիսը, տեղափոխվել ժամանակավորապես Ն. Նախիջևան, այնտեղից Վան ներգաղթելու համար, եթե, իհարկե, Վանում «մի փոքրիկ խորշ բացվի հայության համար»։ «Դու կարծեցիր, թե Պետերբուրգի մեջ ես կարելի է ազգին օգտավետ լինել ու սկսեցիր մտածել նորա աչքը բանալու խոսքի միջոցով։ Այդ լավ բան էր, ո՞վ է ասում, և միշտ գերադասելի էր այդ գործունեությունը, քան թե սառնասիրտ մնալ ազգի և ազգության հալվելուն և ոչնչանալուն։ Բայց, իմ կարծիքով, դորանից առավել և հազարապատիկ առավել ազգասիրական գործ է մի հասարակ հայ կոշկակարի կյանքը, որ ունի գերդաստան, հառաջացնում է 4—5 զավակ, կրթում է նոցա հայության մեջ, թեև ինքը ա և բ չգիտե. վասնզի ես ի՞նչ անեմ քու բազմահատոր թեորիաներն ազգաշինության, որ քանի մի տասնյակ տարիեն աշխարհիս երեսին ոչ մի հայ չի մնալ, վասնզի ժողովրդի մեջեն ինթելլիգենցիային յուր հայրենիքեն և մայրենիքեն գաղթելը մեծ, վտանգավոր բան է» (VI, 450), համոզում էր նա իր բարեկամին ու հա-

մախոհին, հավատացնելով, որ նրանց միատեղ ջանքերը կօգնեն բազմաթիվ ազգակիցների բարոյական սթափման գործին, կդարմանեն նրանց ցավերը։

Փիլիպոս Վարդանյանին վերջնականապես հայ իրականության հետ կապելու համար Պատկանյանը խորհուրդ է տալիս ամուսնանալ տեղի հայ գերդաստաններից որևէ մեկի դստեր հետ և խոստանում օգնել նրան այդ հարցում։ Առաջին անգամ բացելով իր սիրտը ընկերոջ առջև, նա դժգոհում է իր ընտանեկան կյանքից, իր այնքան համակրելի ու աշխատասեր կնոջ ազգային խնդիրների հանդեպ ցուցաբերած անտարբեր վերաբերմունքից և դրան վերագրում սեփական անհաջողություններից շատերը, իր երեխաների հայերեն լեզվի վատ իմացությունը, տանը ազգային ոգին ներմուծելու անհնարինությունը, որի հետևանքով և, շատերի թերահավատությունը իր գործունեության վերաբերյալ։ «...Ես, գրեթե մենակ եմ երբեմն խոկմանցս մեջ և երբեմն գործունեությանս մեջ. բայց որ առավել ափսոսալին է, բախտի բերմունքը ինձ դրավ ձախողակ վիճակի մեջ 1. հորս անբախտությունը և ժողովրդի նախապաշարմունքը, 2. **ամուսնությունս ժողովրդին օտար աղջկա հետ**, (ընդգծումը մերն է— **Մ. Ս.**) 3. քանի մի սեփական անփորձությունս և այլն։ Բայց քեզ, գրեթե, ոչ մի այդ անհարմարություններն պատահելու չեն, քեզ կսպասե ամենահաջողակ վիճակ, եթե միայն **խոհեմ**, իսկապես **ազգասեր** և **նախապաշարումներե** ազատ լինիս...» (VI, 450)։

Ստանալով ընկերոջ համաձայնությունը, Պատկանյանը աշխատում է նրա համար ուսուցչի պաշտոն հայթայթել հոգևոր դպրոցում, հորդորում Հակոբ Խլտճյանին իր աղջիկներից մեկին ամուսնացնելու Վարդանյանի հետ և սկսում է անհամբերությամբ սպասել իր համախոհի ժամանմանը, նրա հետ աշխատելու, ներգործելու և գործունեության հետագա ծրագրեր մշակելու համար։

* * *

Ջնայած ազգային-ազատագրական ակնկալությունների այս եռուն օրերին Պատկանյանի ամբողջ ուշադրությունը կլանված էր հայ ժողովրդի մարտական ոգին կոփելու, նրա ազգային զգացմունքները գրգռելու, նրան համաժողովրդական ապստամբության կոչելու մտորումներով, այնուամենայնիվ, նա մերթ ընդ մերթ վերադառնում էր հայ մարդու հոգեբանությանն ու կենցաղին, նրա ազգային բնավորությունն արտացոլող գործերին։ Այդ անհրաժեշտ էր նրան իր ազգակիցների համակրելի, ազնիվ, աշխատասեր կերպարներ ստեղծելու, աշխարհին հայի

բարձր ձգտումները ցույց տալու համար։ Իր բազմաթիվ գործերում ձաղկելով հայկական բնավորության հոռի կողմերը, նա միևնույն ժամանակ պահանջ էր զգում վերարտադրել նրա հոգու գաղտնարաններում պահված մաքրասիրությունն ու բանաստեղծական խառնվածքը, կերտել նրա կենցաղն ու սովորությունները, ցույց տալ աշխարհին նրա ազնիվ, հերոսական բնավորությունը... «Ջուղի, որ մոռացման տվեր իմ վրա կատարված տպավորությունը, որն արել է վրաս մեր ազգի շատերուն աննշմարելի և, առավել, շատերուն անհավատալի սրտի փափկությունը։ Առանց բացառության ամենքը կարծում են հային ընդունակ միայն արծաթ ստանալու և անընդունակ որպիսիևիցե մարդկային զգացմունքի» (VI, 453), գրում է նա այդ օրերին Կարապետ Եզյանին։

Երեկոները, երբ օրը 6 ժամ անընդհատ դասախոսելուց հոգնած նա տուն էր վերադառնում և քաշվում իր փոքրիկ առանձնասենյակը, նրան, կարծես, դարձյալ իրենց շուրջն էին առնում խնձոր ծախող Սաատուրը, կաշեգործ Հովհաննեսը, մաշկակար Մելքոնը, ծերունի Խաթրան-օղլուն և պատմում հինավուրց ավանդություններ ու իրենց գլխով անցած իրադարձություններ՝ հյութեղ, ժողովրդական լեզվով կենդանություն պարգևելով նկարագրված կերպարներին ու դեպքերին։ Այդպիսի երեկոներին ծնունդ առան «Խունձօր ծախօղ Սավատուրը», «Ջէրտալու» և «Ի՞նչ սէպէպօվ խըրըմին մէչը պահչանէր մէյտան էկիլ է» անզուգական պատմըվածաշարը, որտեղ դրվատված էր հայի ստեղծարար ոգին, ամեն տեղ, ուր էլ նրան նետեր ճակատագիրը այդ հողը շենացնելու, բարիքներով լցնելու նրա կարողությունը, ստեղծվեցին «Հինուց խօսքէր»[7], «Իսա պանը ինչպէ՞ս կհասկընաս» զրույցները, որոնցից երկրորդը պատմում էր հայ ընտանիքներում տիրող նահապետական կարգերի, եղբայրների ու քույրերի միջև գոյություն ունեցող սիրո ու անձնազոհության մասին։

Պատկանյանի ոչ մի ստեղծագործության մեջ այնպիսի ջերմությամբ չի ներկայացված հայ մարդը, ինչպես վերոհիշյալ պատմվածաշարի հերոս, սակավապետ գեղջուկ Սաատուրը, որը, չնայած կյանքի դըժվարություններին, միշտ գոհ էր իր ունեցվածքով, կարողանում էր զգալ և ըմբոշխնել կյանքի գեղեցկությունները, հիանալ ծաղկի տեսքով, տաղի հնչյուններով, մերձավորի սիրով։ Երբեք տեսած չլինելով իր հեռավոր Հայաստան աշխարհը, այդ հայ ռամիկը փայփայանքով պահում է իր

---

[7] Դժբախտաբար այս պատմվածքը կորած է, և նրա բովանդակության մասին կարելի է դատել միայն վերնագրից։

հոգում հայրենիքի ավանդությունները, գովաբանում նրա բնությունը, իր փոքրիկ պարտեզում աճեցնում նրա զարմանահրաշ ծաղիկներն ու մրգերը, հայ մարդու, հայ կնոջ բնավորությունները նույնացնելով այդ մրգերի ու ծաղիկների հատկությունների հետ։

Այդ աշխատանքների ընթացքում Պատկանյանը պահանջ զգաց ստեղծելու հայ ժողովրդական ավանդությունների ու հինավուրց պատմությունների մի շարք, առանց մշակման ենթարկելու խոսողի արտահայտչաձևը, նրա լեզվական առանձնահատկությունները, ինչպես այդ արել էր Վլադիմիր Դալը իր «Русские сказки, из предания народного, из устного на грамоту гражданскую переложенные, к быту житейскому приноровленные и поговорками ходячими разукрашенные казаком Владимиром Луганским» գրքում։

Ավանդությունների այդ ժողովածուն պիտի կարողանար առաջին հերթին ի մի հավաքել բոլոր այն պատմությունները, որտեղ ժողովուրդը գովաբանել է այս կամ այն հերոսական դեպքը, հիշատակության արժանի արարքը, ազգի ստեղծարար ոգին և դարերի խորքից այն բերնեբերան փոխանցելով հասցրել մեզ։ «Եթե հնախուզին հետաքրքրական է հին գերեզմաններու մեջ գտնել կոճեր ու սախաներ և եզրակացություն անել, թե 1000—2000 տարի առաջ մարդոց (կամ տղայոց) խաղը և զբոսանքը այսինչ ոսկորն կամ փայտն է եղել, մի՞թե դորանից սոսր հետաքրքրական է իմանալն, որ այսինչ ազգին երբեմն այսպիսի պատմությունք կամ անցք մտավոր զբոսանք և այլն բավականություն տվել է… Ասա՛ խնդրեմ, միթե 100-ներ և 1000-ներ չէի տայիր, եթե մի այսպիսի ինչ նշխարած մնացած լիներ Թեկուզ մեր Խորենացիի օրերին… Нечто в роде этого արել է Даль-ը, բայց իմ ձեռնարկելին ուրիշ բան է. Ես ուզում եմ մինչև nee plus ultra կենդանի խոսքին հասցնել գրությունս, այնպես որ կարդացողի համար միայն խոսողի երեսը փակած լինի, իսկ խոսքը, ինչպես որ ասել է, стенографик-ական ճշտությամբ դուրս հանել… Իմ կարծիքով, եթե հնար լիներ մի ազգի մեջ գտնված շատերուն խոսեցնել տալ և նոցա խոսվածքը գրել, այդ էր միայն կենդանի լեզվի աղբյուրը, որից պիտի բխեն քերականություն, բառարան, ճարտասանություն, հոգեբանություն և այլն (իհարկե, այդ ազգին)…» (VI, 461, 462)։

Սակայն, ստեղծելով վերոհիշյալ պատմվածքները, Պատկանյանը այլևս չանդրադարձավ իր այս մտադրությանը հոգևոր դպրոցում ծագած տհաճությունների ու սուր բախումների պատճառով, որը նրան մղեց ստեղծելու «Պամպուլիոս» կատակերգությունը, «Գիրքօր Կայափա»

պամֆլետը և այդ խնդրի հետ առնչվող բազմաթիվ հոդվածներ ու բանաստեղծություններ։ Իսկ վրա հասած հայկական հարցի անբարեհաջող լուծումը միանգամայն շեղեց հեղինակի ուշադրությունը, այլ ընթացք տալով նրա ստեղծագործական մտահղացումներին։

1877 թ. ամռանը, անսալով Ռափայել Պատկանյանի հորդորներին, Ն. Նախիջևան տեղափոխվեց և հոգևոր դպրոցում դասեր ստացավ Փիլիպոս Վարդանյանը։ Սակայն շուտով նորեկ ուսուցիչը կողմնորոշվեց դեպի դպրոցի տեսուչ Գրիգոր Աղափիրյանի դիրքորոշումը և նույնպես ըսկըսեց դատապարտել իր բարեկամի ծավալած անհաշտ պայքարը, քաղաքի «պատվավոր» մարդկանց տված նրա վրդովեցուցիչ ածականները, մանավանդ որ այդ երգիծական ածականներից ու բանաստեղծություններից շատերը ուղղված էին պատվավոր քաղաքացի Սիմավոն աղա Ալաճալյանի դեմ, որի դուստր Եվգենիայի հետ մտադրվել էր ամուսնանալ Փիլիպոս Վարդանյանը։

Սկզբում բարեկամական հարաբերությունները փոխվեցին սառնության, իսկ հետո, երբ 1878 թ. հունվարին դասի ժամանակ քաղաքի անվանի մարդկանցից մեկի որդուն կոպիտ նկատողություն անելու պատճառով տեսուչ Աղափիրյանը Պատկանյանին հեռացրեց դպրոցից, և Փիլիպոս Վարդանյանը պաշտպանեց այդ արարքը, վերածվեցին թշնամանքի։ Դեռ ավելին, քաղաքում սկսեց ձեռքից ձեռք անցնել «Քնարին վերջաբանը»[8] խոսուն վերնագիրը կրող մի բանաստեղծություն—պասկվիլ, որտեղ ծաղր ու ծանակի էր ենթարկվում Պատկանյանի անձնական կյանքը, կնոջ հետ ունեցած հարաբերությունները, դատապարտվում քաղաքի «պատվավոր» ու «ազնիվ» մարդկանց իզուր զրպարտելու «անմիտ» ու «հիմար» ֆելիետոններ ու «պիղծ» ու «մուռտառ» ոտանավորներ «մրոտելու» նրա «չար գործը»։ Առաջին ոտանավորին հաջորդեց երկրորդը, որը պարոդիայի ենթարկելով Պատկանյանի «Ասված վերջը բարի անէ» երգիծական բանաստեղծությունը, դարձյալ ցուցադրում էր նրա կյանքի, ընտանեկան հարաբերությունների ինտիմ մանրամասներ, անգամ սրա նրա գլխին «ստոր ու խաբեբա» մարդկանց «պառաված աղջիկներին» կապելու նրա երկրորդ մասնագիտությունը։

Այդ պարոդիաների հեղինակը Փիլիպոս Վարդանյանն էր։ Քաղաքացիների հուզումը հասել էր գագաթնակետին։ Պատկանյանի երգիծական բանաստեղծությունների խայթը զգացածները հրճվանքով էին ըմբոշխնում նրա հասցեին ասված անվայել տողերը, իսկ նրա փոքրաթիվ բարե-

---

6 ԳԱԲ, ՌԳՖ, № 100 և Մատենադարանի արխիվ, Կ. Սրապյանի ֆ., ց. 43, թ. 81 բ։

կամները՝ վրդովմունքով վանում ցունիկ բովանդակությամբ գրված այդ ոտանավորները։

Թերթիկները շրջում էին քաղաքում, ընկնում աշակերտներից շատերի ձեռքը, ծիծաղ հարուցում ծնողների շրջաններում, և երբ Պատկանյանը դիմում ներկայացրեց հոգաբարձուական խորհրդին իրեն աշխատանքի մեջ վերականգնելու խնդրանքով, խորհուրդը հնարավոր չհամարեց հարգել այն, առաջին հերթին հենց ա՛յդ, ուսուցչին անվանարկող վարկաբեկիչ ոտանավորների պատճառով։

Մնալով առանց նյութական միջոցների (այդ տարիներին արդեն վեց երեխաների հայր էր), Պատկանյանը որոշեց դիմել հենց իր դեմ գործադրած միջոցին և վարկաբեկիչ գրվածքներով դուրս մղել իր թշնամիներին դպրոցից և քաղաքից։ Այսպես ծնունդ առան «Պամպուլիոս» կատակերգությունն ու «Գիրքօր Կայափա» պատմվածքը՝ ուղղված մեկը Փիլիպոս Վարդանյանի, Խաչատուր Զարիֆյանի, Գրիգոր Աղափիրյանի, իսկ մյուսը միայն Գրիգոր Աղափիրյանի դեմ։ Հետագայում բանաստեղծն իր այդ ստեղծագործությունները անվանել է ոչ թե «գրականական երկունք», այլ սոսկ բարկության արտահայտություն, ինչպիսիք են՝ հիշոցները, ապտակը, մենամարտը։ Սակայն գրական արտադրանք չհամարելով չի էլ հրաժարվել նրանցից, հայտարարելով, որ եթե նույնանման դեպքեր պատահեն նրա հետ, որոնք տեղիք են տվել ստեղծելու վերոհիշյալ գործերը, ապա «բյուր «կայափաներ» և «պամպուլիոսներ» (VIII, 55) նորից դուրս կգան նրա գրչի տակից։

Բայց, ինչքան էլ Պատկանյանը աշխատել էր «Պամպուլիոս»[9] կատակերգությունը նմանեցնել «Քնարին վերջաբանը» պասկվիլին, վերհանել հերոսի անձնական կյանքի հանգամանքները, ծաղր ու ծանակի ենթարկել նրա ազգասիրական բարձրագոչ նախադասությունների տակ թաքնված իսկական, գործնական նպատակը, մեծ օժիտով աղջիկ գտնելու տենչը, այնուամենայնիվ վարպետորեն կառուցած երգիծական սուր պատկերները, կոմիկական կատակերգությունն անպայմանորեն բարձրացնում էին իսկական գեղարվեստական գործի աստիճանի։

Առանձնապես հաջողված էին հոգևոր դպրոցում տիրող մթնոլորտի քննադատությանը նվիրված տեսարանները, որտեղ տեսուչը, ուսուցիչներից ոմանք քծնում են հարուստների բութ ու անբարտավան որդիների առջև ու անխնա ծեծի ենթարկում արհեստավորների, չունևոր ծնողների

---

[9] *Կատակերգությունը «Պամպուլիոս» է կոչել հեղինակը միայն Փիլիպոս անվան հնչյունային նմանության պատճառով։*

զավակներին, փող են կորզում աշակերտներից, կատարելագործում նրանց մատնության արվեստի մեջ։ «Պամպուլիոս»-ին հետևում է «Գիրքոր Կայափա»-ն՝ ուղղված Գրիգոր Աղափիրյանի դեմ։ Պատմվածքը գրված էր Ն. Նախիջևանի բարբառով, հեքիաթի ձևով պատմում էր Աղափիրյան եպիսկոպոսի կենսագրության հայտնի դրվագները՝ քաղաքում ունեցած նրա սիրային արկածները, գինու նկատմամբ տածած թուլությունը, քաղաքի հարուստների առջև ցուցաբերած քծնանքն ու ստորկամությունը։ Առանձնապես ծիծաղաշարժ գույներով էին պատկերված հարգարժան եպիսկոպոսի սիրային բազմաթիվ հետամտությունները և դրանց հաջորդող խաբված ամուսինների վրիժառության տեսարանները։ Բարոյականության դիմակի տակ թաքնված խարդախությունները, անսանձ վարքը, շվայտ կյանքը հեղինակին ստիպում են Աղափիրյան եպիսկոպոսին համեմատել ճիզվիտների միության անդամների հետ, նրա գործունեությունը դիտել որպես կործանարար երևույթ քաղաքի համար։

Զգալով սատիրայի ամենազոր ուժը հակառակորդին կործանելու ասպարեզում, Պատկանյանը և՛ «Պամպուլիոս»-ում, և՛ «Կայափա»-ում վարպետորեն օգտագործել է դրության կոմիզմը, ծաղր ու ծանակի ենթարկել իր հակառակորդներին, ստիպելով ընթերցողներին նույնպես անզուսպ քրքջալ հարուստ օժիտ երազող վարժապետի և անընդհատ փորձանքների մեջ ընկնող, սիրառատ եպիսկոպոսի վրա։ «Դուք շատ լավ գիտեք, որ մարդուն համար ամենավատ վիճակն է աշխարհիս երեսին ծիծաղելի դերը,— գրել է նա հետագայում,— մարդ ամեն բան կարող է կուլ տալ՝ բամբասանք, չարախոսություն, գանձի կորուստ, բայց ծաղր՝ երբե՛ք. շատ անգամ բամբասված և չարախոսված մարդը նորեն հոտն կկանգնե, բայց ծաղր ու ծանակ եղածը՝ երբեք» (VII, 47)։

Ավարտելուց և, ըստ իր սովորության, ձեռագիր վիճակում «Կայափա»-ն տարածելուց հետո, Պատկանյանը նրա մի օրինակը ուղարկում է Պետերբուրգի գրաքննիչ Քերովբե Պատկանյանին, հույս ունենալով Պետերբուրգում հրատարակելու այն։ Սակայն անսպասելի կերպով Քերովբե Պատկանյանը ընդվզում է այդ գրվածքի դեմ, անվայել համարելով մի ժամանակվա ընկերների նման փոխհարաբերությունները և հորդորում Ռափայել Պատկանյանին հրաժարվելու պատմվածքը հրատարակելու մտքից։ Սակայն ոչ մի հորդոր այլևս չէր կարող կասեցնել հեղինակին։ Երկար տարիների վիրավորանքները, դպրոցում տիրող անհանդուրժելի մթնոլորտը, քաղաքի ազգային դասի հալածանքնե-

րը, Փիլիպոս Վարդանյանին իրենց շրջանում ներգրավելը, վերջինիս՝ իր դեմ դրած, քաղաքում ձեռքից ձեռք անցնող անպարկեշտ բովանդակությամբ ոտանավորները վերջնականապես համբերությունից հանել էին Պատկանյանին։ «Մենք կենում ենք այնպիսի քաղաքի և ժողովրդի մեջ, ուր ուշունց տվողը... քաջ մարդ է երևում, իսկ լռողը, համբերողը՝ և՛ մեղավոր, և՛ վախկոտ, այսինքն լաթի կտոր, թքնելու մարդ։ 3 տարի է, այս հրեշը վրաս հարձակմունք է անում ամեն աղտեղի կերպով, և ես միայն համբերել եմ. ինչո՞ւ, գիտե՞ս, որ 6 զավակ և մի կին ունիմ, միդուցե նոցա վտանգի մեջ ձգեմ կրիցս շարժելովն... Դու ճանաչում ես Աղափիրյանին մի խենթուկ, միամիտ, միշտ երգող, քեֆից ետ չիքաշվող, բավականին տանելի ընկեր. այնպես չէ՞։ Բայց չուզի՞ս արդյոք մի խոյեցի բարքավարքով, մի խորամանկ էջմիածնասնունդ, սևահոգի, չարագործ, հուդայաբարո, զարշելի արարած, որ մարդու հետ խոսակցելու անունը «տոպրակ թափ տալ» ասում է, այսինքն բան իմանալ և ի կորուստ քո գործ դնել վաղվաղակի... Սորան նորան մատնե, վնասե, ոտքի տակ կոխկոտե» (VII, 17),—գրում է նա Քերովբեին՝ վերջինիս մերժումը ստանալուց հետո և ապա փորձում բացատրել գրվածքի բնույթը, հոգևորականի անբարոյական արկածների վրա շեշտը դնելու պատճառը։

Զսպասելով «Պամպուլիոս»-ի և «Կայափա»-ի տպագրության հնարավորությանը, Պատկանյանը սկսում է «Մեղու Հայաստանի»-ի էջերում հանդես գալ Ն. Նախիջևանի հոգևոր դպրոցի վերաբերյալ բազմաթիվ հոդվածներով, որոնցից միայն առաջինն էր գրված գրական լեզվով, իսկ մյուսները քաղաքի բազմությանը հասկանալի լինելու համար Ն. Նախիջևանի բարբառով։ Այդ հոդվածներում արծարծվում էին դպրոցում տիրող անհանդուրժելի վիճակի հարցերը, աշակերտների հանդեպ խտրականությունը, տգետ ուսուցիչների սանձարձակությունները, ազգային լեզվի ու ազգային ոգու թույլ դրսևորումները, կարգապահության կատարյալ բացակայությունը, վերատեսուչ Աղափիրյանի և նրա կողմնակիցներ Խաչատուր քահանա Զարիֆյանի ու Փիլիպոս Վարդանյանի՝ դպրոց կառավարելու անկարողությունը, ուսուցչական կազմի տգետ ու անկարող լինելու փաստը։ Առաջին անգամ մամուլում նա իր համաքաղաքացիներին հիշեցնում է այն մեծ երախտիքը, որ ուներ հոգևոր դպրոցի հիմնավորման գործում Միքայել Նալբանդյանը, և որի վաստակը անամոթաբար յուրացնում են տարբեր Զարիֆյաններ ու Աղափիրյաններ, իրենց վերագրելով դպրոցի ստեղծման պատիվը։ «Պարոն Դեղնամորուսյան,—գրում է նա «Ճախճախավանի հոգևոր դպրոցը» հոդ-

վածում,—դու իզուր հավատացնում ես պարզամիտ ժողովրդին, իբր թե դու ես Ճախճախավանի հոգևոր դպրոցի սկզբնապատճառը։ Սո՛ւտ ես խոսում. դպրոցի հիմնարկությունը կարող է մի մարդու միայն վերաբերել, որ կենում է, գիտես խո ուղեղ» (ընդգծումը մերն է—Մ. Ս.), (V, 208)։ Ապա անմիջապես այս հոդվածից հետո, կարծես ամեն կասկածանք փարատելու համար, թե ում է վերաբերում ակնարկը, տպագրում է «Պապաճան Մասեհը» հոդվածը, ուր մանրամասնաբար պատմում է երկու հոգևոր դպրոցներ բացելու հնդկահայ կտակի մասին և ցավ հայտնում, որ այդպիսի ծանր զոհողությունների (ընդգծումը մերն է—Մ. Ս.) գնով բերված գումարը իր նպատակին չի ծառայում։

Հոգևոր դպրոցի հարցերին նվիրված իր հոդվածներում նա զարձյալ կոչ է անում հավատարիմ մնալ ազգային լեզվին, սիրել իրենց հայրենիքին, չտարվել սուտ քաղաքակրթության շլացուցիչ փայլով, որը կուրացնելուց բացի ոչ մի օգուտ չի բերում ազգին. չլսել չարամիտ մարդկանց, որոնք հավատացնում են, թե հայոց լեզուն միայն կարող է խանգարել իրենց որդոց լուսավորության գործին (V, 455)։

Առաջարկելով իր և իր համախոհների պատկերացրած հոգևոր դըպրոցի ծրագիրը, Պատկանյանը «Հապա ի՞նչ վարժարան պետք է մեզի» հոդվածում զարձյալ մանրամասնաբար կանգ առնելով Բաբաջան Մասեհի կտակի վրա, առաջարկում է կատարել հանգուցյալի սուրբ կամքը և հիմնել երկու դպրոց՝ մեկը երեք նախակրթական դասարաններով և մյուսը՝ ութ տարվա դասընթացով բուն հոգևոր դպրոցներ։ «Ատոկէս վօր անիք նը, հէմ ծէր քաղաքին անմէղ, ախքատ տուղօց մէծ աղէկութին արած կըլաք, հէմ Պապաճան Մասէհ աղային կտակը արթար կատարած կըլաք» (V, 475)։ Ավարտում է նա հոդվածը, կարծես, Բաբաջան Մասեհի աղայի անունով կրկին հիշեցնելով Միքայել Նալբանդյանի կամքը և կատարած գործը։ Եվ, եթե տպագրության համար նախատեսված հոդվածներում նա ակնարկներով էր խոսում Նալբանդյանի մասին, ապա ձեռքից ձեռք անցնող «Նալբանդի վայրույթը» ոտանավորում[10], նա արդեն բացեիբաց հայտնում է իր վրդովմունքը իրենց մեծ համաքաղաքացու ավանդները ոտնակոխ անելու, հայկական հոգևոր դպրոցից մայրենի լեզուն համարյա արտաքսելու, օտար ոգի ու օտար բարքեր դպրոցի մեջ ներմուծելու, անարժան ուսուցիչների ձեռքը հայ մանուկի դաստիարակությունը տալու առիթով։ Թերևս այս բանաստեղծությունը բոլոր հոդ-

---

[10] Այս բանաստեղծությունը առաջին անգամ լույս տեսավ 1904 թ. ՌՊՆ III հատորում։

վածներից, «Պամպուլիոս» կատակերգությունից ու «Գիրքօր Կայափա»-ից ավելի ճիշտ է կարողանում բացահայտել այն դժգոհությունների արմատները, որոնք ստիպել էին Պատկանյանին լարվել, ապա բացեիբաց թշնամանալ Գրիգոր Աղաւիրյանի, Խաչատուր Զարիֆյանի, Մինաս Փախսալյանի, Եղիա Շապոշնիկյանի և նրանց հարած Փիլիպոս Վարդանյանի և այլոց նկատմամբ։ Բանաստեղծության մեջ պատկերված է, թե ինչպես Հոգևոր դպրոցի բացման օրը դուրս ելնելով Սուրբ Խաչում գտնվող իր շիրմից, Միքայել Նալբանդյանը շտապում է ողջունել Գանգեսի ափերի մոտ գտնվող իր հանգստարանից դուրս ելած Բաբաջան Մասեհին, և երկուսը ցնծագին ուրախությամբ շտապում են Ն. Նախիջևան իրենց վաստակի պտուղները ճաշակելու։

Այսպիսի ուրախ հույսերով և իրենց կատարած գործի հպարտ գիտակցությամբ, ձեռք ձեռքի տված նրանք կոխում են Հոգևոր դպրոցի շեմը... Եվ շփոթված կանգ առնում կարծելով թե, մոլորվել, օտարի դպրոց են մտել, որովհետև

Կարդացին կանոնք այդ հեգ դպրոցին,—
«Հայ լեզու սովորել շատ հարևանցի»—
Եվ լուսավորչական սորվեցնող հավատ
Ընտրած է տերտեր լիրբ ու անհավատ։

Վերատեսուչն է ոմն հայատյաց,
Մի հույլ տղգետներ վարժապետ ընտրած.
Այլ և ինքնընտիր մի հովանավոր,
Ամենի գլուխ մի հայ խնլացնոր...

Ոչինչ չըտեսան որ համոզեին,
Թե նոքա հայի դպրոցումն էին.
Հայ ժողովրդին քարոզն անգամ
Թուրքերեն կարդաց մեր հայ քահանան։

Տեսնելով այդ քահանային, Նալբանդյանը զայրույթից կարկամում է, քանի որ իր իսկ ջանքերով ստեղծված դպրոցում պաշտոնավարում ու փառք ու պատվի է արժանանում ամբողջ քաղաքին հայտնի քսու ու խառնակիչ քահանա Եղիա Շապոշնիկյանը, որի լրտեսագործչի շնորհիվ սկսվեցին հալածանքներն իր դեմ.

Երբոր Նալբանդը տեսավ այս հրեշին,
Երեսը դեղին կըտրեցավ խեղճին.

«Այ զըվո՜տ, ասաց. դու ո՞րի շունն ես,
Այս հանդիսի մեջ դու ի՞նչ գործ ունես։

Դու ու քեզի պես մարդիկ այն չէ՞ին,
Որ ինձ վաղաժամ սև հող մըտցուցին.
Քանի որ ազգիս մեջ էի կենդան,
Ամեն մեկ քայլիս չի դըրի՞ք դարան։

Ա՞յս էր փափագած ձեր վարժատունը,
Օր առաջ մոռցնող Հայի անունը,
Որի մեջ սորվող ամեն մի տըղա
Իր հայ եղածեն պիտի ամընչնա (I, 145, 146)։

«Մեղու Հայաստանի»-ի էջերում տպագրված հոդվածները, «Նալբանդի զայրույթը» բանաստեղծությունը, մասնավոր հավաքույթներում կարդացվող կատակերգությունն ու պատմվածքը քաղաքը բաժանել էին երկու թշնամական խմբերի։ Քաղաքի հզորները, աղայական դասը դատապարտում ու նզովում էին խառնակիչ վարժապետին, որը տարիներ ի վեր վրդովում է քաղաքի անդորրը, զրպարտում «պատվավոր» մարդկանց, իսկ բանաստեղծի փոքրաթիվ կողմնակիցները, քաղաքի արհեստավորական խավը հիանում ու զարմանում էր նրա անկախության ու կորովի վրա, որ համարձակվել է պատերազմ հայտարարել «այս աշխարհի հզորներին»՝ զենք ու զորավիգ ունենալով միմիայն իր գրիչը։ «Ես գրում եմ և շատ եմ գրում. և զարմանք բան, գրվածքս սաստիկ բորբոքում է տեղական կրքերը։ Բայց, կարող եմ ասել, բոլոր քաղաքը ագահությամբ կարդում է—կհավատա՞ս, բերանք սերտողներ անգամ կան... Ինչևիցե, փառք Աստծո, կարողացա ընթերցասիրություն տարածել այս քնած հալխի մեջ։ Եվ ինչպե՞ս մարդ չմխիթարվի. «Մեղուի» գզլտած թերթերը կարդում են պազարի մեջ և թառան ու չեչեք ծախողները ակռաները ցցած ականջ են դնում ու ժամանակե ժամանակ իրանց հրճվանքը հայտնում» (VII, 8)։

Եվ կատարվեց անսպասելին. գեղարվեստական խոսքի ամենազոր ուժով Պատկանյանը կարողացավ հաղթել քաղաքի հզորների և հոգևոր թեմի առաջնորդի հովանավորությունը վայելող Գրիգոր Աղափիրյանին։ 1878 թ. ապրիլին «Գիրքօր Կայափան» Դոնի Ռոստովում լույս ընծայվելուց անմիջապես հետո, վարկաբեկված եպիսկոպոսը ստիպված եղավ ընդմիշտ հրաժեշտ տալ հոգևոր դպրոցին և քաղաքին։

Գտնվելով անսպասելի հաջողությունից, Պատկանյանը սկսեց երազել տպարան հիմնելու մասին, որը նրան հնարավորություն կտար թերթ հրատարակել և այն դարձնելով մարտական դրոշ՝ պայքարի ելնել հոռի երևույթների դեմ։ Թերթը պիտի կրեր «Նոր Նախիջևան» անվանումը և քաղաքի բոլոր խավերին հասկանալի լինելու համար հրատարակվելու էր գրական լեզվով և բարբառով։

Նրա համար լրագիրը պատերազմի դաշտ էր, իսկ ինքը՝ պայքարող մարտիկ, որի զենքերն էին գրիչը, թուղթը, տպագրական մեքենան և գրաշարները. «...Ընտրեցե՛ք ինձ պայքարող (боец),—դիմում է նա քաղաքի երիտասարդությանը իր վերոհիշյալ ելույթի ժամանակ,—եթե կզգաք իմ թուլությունը, իմ անկարողությունը, իմ տգիտությունը և կամ կգտնեք ձեր մեջ առավել ընտրյալին և արժանավորին, ընտրեցեք նորան պարագլուխ, և մենք լինենք նորան օգնական և զինակից։ Ժողովրդի համար աշխատելեն, կտեսնեք, ես չեմ փախչի» (V, 409)։ Բանաստեղծի փոքրաթիվ հովանավորողները՝ Հակոբ Խըլտճյանը, Գրիգոր և Խաչատուր Ջալխուշյանները, Կարապետ Ջորչոփյանը և նրան մեծարող բազմաթիվ երկրպագուներ ամեն ջանք գործ են դնում տպարանի և թերթ հրատարակելու գաղափարները իրականություն դարձնելու, սակայն հակառակորդները արթուն հետևում էին նրանց գործունեությանը և անընդհատ արգելքներ դնում նրանց առջև։ Այսպես՝ երբ Պատկանյանը առաջարկեց 2000 ռուբլով գնել հոգևոր դպրոցին պատկանող և անգործածության մեջ փչացող Խալիբյան դպրոցի երբեմնի տպարանի մնացորդները և հոգաբարձության անդամներից ոմանք հավանություն տվին այդ գաղափարին, Խաչատուր Ջարիֆյանը վրդովմունքով սաստեց անհեռատես հոգաբարձուներին. «Խե՞վ իք, ինչ է, տեսնված բան է, ածին պօսթանի մեջ թօղնէն»[11]։ «Պամպուլիոս»-ի, «Կայափա»-ի և բազմաթիվ չափածո

[11] Փաստը վերցված է Ռուբեն Բերբերյանի «Վեմ» ամսագրում Պատկանյանի՝ Վահրամ Նավիսկոպոս Մանկունուն գրած մի քանի անտիպ նամակներ ներկայացնող առաջաբանից. «Իր երիտասարդության օրերից սկսած՝ մեր բանաստեղծը սիրահար էր տպարանական գործին... Երբ դեռ 60-ական թվականների վերջերից հաստատվեց իր հայրենի քաղաքում, նա, ինչպես ինքն էր ասում, «որբ էր զգում իրեն առանց տպարանի»։ Բացի իր մանկավարժական գրագմունքներից, Ռ. Պատկանյանի իղձերից մեկն էլ եղել է ունենալ ձեռքի տակ մի տպարան, որ կարողանա շարունակել հրատարակել մանկավարժական ընթերցանության համար հայերեն գրքեր։ 70-ական թվականների վերջերին նա վճռել էր մի ուրիշ բան էլ, որ միայն իր մտերիմներին էր հայտնի, այն է՝ հրատարակել շաբաթաթերթ, կամ ամսագիր, որի մի մասը պետք է լիներ տեղական բարբառով, մյուսը՝ գրական աշխարհաբարով։ Այն հարցին, թե ովքեր են լինելու աշխատակիցները, Ռ. Պատկանյանը կես լուրջ, կես հեգնական պատասխանել էր. «Թերթի աշ-

ֆելիետոնների հարուցած անզուսպ քրքիջը դեռևս հնչում էին նրա հակառակորդների ականջներում, իսկ Աղափիրյան եպիսկոպոսի մեկնումը քաղաքից սարսուռ ազդում նրանց վրա։ Բնականաբար նրանք ոչ միայն պետի չօգնեցին բանաստեղծին տպարանական պարագաներ ձեռք բերելու գործում, այլ վնասեցին այդ գաղափարի իրագործմանն ընդհանրապես։ Եվ, երբ Պատկանյանը չհուսահատվելով առաջին անհաջողությունից 1878 թ. հուլիսի 13-ին, Հակոբ Խլղաթյանի նյութական օժանդակությամբ մեկնում է Պետերբուրգ տեղում տպարանական պարագաներ գնելու և դիմումներ ներկայացնելու Թերթ հրատարակելու թույլտվություն ստանալու համար, Ն. Նախիջևանից գաղտնի գրություններ են ուղարկում Պետերբուրգի գրաքննչական կոմիտեի և Եկատերինոսլավի նահանգապետ Դուրնովոյին, որտեղ Պատկանյանը ներկայացվում է որպես քաղաքականապես հույժ անբարեհույս մի անձնավորություն[12]։

Հավանորեն մատնագրի մեջ հատկապես շոշափված են ռուս-թուրքական պատերազմի ընթացքում ցուցաբերած նրա հակակառավարական, «սեպարատիստական տրամադրությունները», նրա ստեղծած և ժողովրդի մեջ արտագրություններով տարածած, կասկածելի վերնագիր կրող «Ազատ երգեր» շարքը և ապա քաղաքի երիտասարդությանը և հասարակ ժողովրդին «կառավարական պաշտոնյաների ու պատվավոր քաղաքացիների» դեմ ընդվզելու նրա կոչերը, որոնք, անկասկած, մատնում

խատակիցներ են՝ Սյուլուկը, Խրճի-աղան, Ճանկով մամուկը, Խամշին» — բոլորն էլ Պատկանյանի ծածկանունները։

Բնական էր, որ մի այնպիսի դիվանագետ, խելացի և խորամանկ, բայց ոխերիմ թշնամի, ինչպիսին էր Զարիֆյան քահանան, ամեն ջանք պիտի թափեր, որ տպարանը չհանձնվեր Ռ. Պատկանյանին. տալ նրան տպարան, ասել է թե տալ թերթ հրատարակելու նյութական կարողություն։ Իսկ թերթը Պատկանյանի ձեռքում մահացու հարված կլիներ թե՛ Զարիֆյանի, թե՛ սորա համախոհների համար։ Ու երբ հոգեբարձուական ժողովին հոգաբարձուներից մեկը այն միտքն է հայտնում, թե ավելի լավ է համեստ վարձով տպարան տալ Պատկանյանին, քան թե տառերը փչացնել փոշիների տակ, Զարիֆյան քահանան բացականչում է. «Խե եր, ինչ կ, տեսնված բան է, ածին պօսթանի մէջ թօղնէնս։ Ու տպարանը վարձով տալիս են մի հրեայի։ (Տե՛ս «Վեմ», 1933, տետրակ Ա, էջ 41—52 և VII, 299)։

[12] «Լրագրիդ չթույլ տալու պատճառը ոչ պրոգրաման է և ոչ իմ հայթայթմանց պակասությունը, այլ այն аттестация-ն, որ ստացվեցավ քո վերա տեղական իշխանությունից։ Ուրեմն հրատարակչի անունը պետք է փոխվի իմ կարծիքով, ցուցե ձեր իշխանությունը ուրիշի վերա առավել մեղմ կարծիք հայտնեն»,— գրել է նոյեմբերին Քերովբե Պատկանյանը, իր բարեկամի խնդրանքով տեղում իմանալով արգելքի պատճառների մասին (ԴԱՌ, ՌՊՖ, № 1045)։

են նրա պատկանելությունը տերության դեմ կազմակերպված գաղտնի ընկերությանը։

Անհավանական չէ, որ Փիլիպոս Վարդանյանը, իմանալով Պատկանյանի գաղտնի «Հայասեր-Ազգասեր» կազմակերպության հետ ունեցած կապերի մասին, նրան վերջնական հարված հասցնելու մտադրությամբ, հայտնել էր այդ մասին իր նոր հովանավորներին, որոնք և շտապել էին ծանուցանել այդ մասին Պետերբուրգ և Եկատերինոսլավ[13]։

Դեռևս անտեղյակ այդ բոլորին Ռափայել Պատկանյանը հուլիսի 18-ին հասնելով Պետերբուրգ Կնապֆ տպարանատերից արագորեն ձեռք է է բերում 3000 ռուբլու արժողությամբ մի արագատիպ մեքենա, ձեռքի մամուլ, բազմաթիվ տառատեսակներ և այդ օրերին քաղաքից բացակա Քերովբե Պատկանյանի հետ միատեղ դրաքննչական ատյանում պաշտոնավորող, Պետերբուրգի համալսարանի պրոֆեսոր Վ. Գրիգորևի աջակցությամբ ստանում լրագիր հրատարակելու նախնական իրավունքը[14]։

Պետերբուրգում հանդիպումներ ունենալով մի շարք մտավորականների, մասնավորապես հայտնի գիտնականներ Կաետան և Սմարագդ Կասսովիչների հետ, Պատկանյանը քննարկում է նրանց հետ լրագիրը ժողովրդական բարբառով հրատարակելու իր մտադրությունը, ստանում գիտնականների հավանությունը «վերջին արաբաջին ու նախրչին

---

[13] 1879 թ. նոյեմբերի 22-ին Վահրամ Մանկունուն գրած իր նամակում Ռ. Պատկանյանը հայտնում է. «Անցյալ տարի ես մտադիր էի հիշյալ տպարանը կապալու առնել վրաս և տեղացի ունևոր և բարեմիտ մարդիկ էի գտել, որ հոժարակամ պատրաստ էին ինձ օգնել տպարանը ոտքի կանգնեցնելու, տուն վարձելու, գրքեր տպել տալու մինչև անգամ... լրագիր հրատարակելու և այլն։ Այս բանս իմանալով՝ քանի մի չարամիտք (հավանական է, որ վերոհիշյալք կամ նոցա համախոհք) (իմա՝ Խ. Զարիֆյան, Մ. Խալիբյան, Փ. Վարդանյան—Մ. Ս.) օգուտ քաղելով տերության մեջ տարածված գաղտնի ընկերության չարագործությամբը (ընդգծումը մերն է—Մ. Ս.), անանուն և անստորագիր ամբաստանության նամակներ գրեցին վրաս նահանգապետ Դունդուկովին, հավատացնելով, իբր թե ես «անհուսալի անձն եմ» և նա թույլ չտվավ ինձ տպարան բանալու (VII, 42)։

[14] «Հետ տպարանին սկսեցի լրագրի հոգսը տանելու։ Պետք է իմանալ, որ դորա թույլտվությունը, մանավանդ գավառական քաղաքի մեջ, այնքան հեշտ չէ, ինչպես որ թերևս ձեզմեն շատերը կկարծեն։ Բայց պարոն Գրիգորևը ինձ թույլ տվեց հրատարակելու «Նոր Նախիջևան» անունով շաբաթաթերթ քաղաքական լրագիրը»,—գրում է նա «Մշակ»-ի 1878 թ. № № 165, 166, 167 տպագրած «Մի ճանապարհորդություն» հոդվածում (V, 18)։

հասկանալի լինելու», «ժողովրդի մեջ նոր լուսավոր գաղափարներ տարածելու» հարցում[15]։

Բացի վերոհիշյալ գործերից Պատկանյանը խնդրագրեր է մատուցում Ազգային լուսավորության նախարարին իր կնոջ՝ Օլգա Պատկանյանի անունով Ն. Նախիջևանում հայկական մանկական պարտեզ հիմնելու թույլտվություն ստանալու կապակցությամբ։ Մանկական պարտեզի ստեղծման գաղափարը բանաստեղծը ներշնչել էր Հակոբ Խըլտճյանին դեռևս 1875 թվականին, որոշելով հայ մանուկների համար ստեղծել իսկական լուսավորության մի օջախ, որտեղ երեխան կկարողանա խաղալով սովորել, ճանաչել իրեն շրջապատող բնությունը, բավարարել իր հարցասիրությունը, հետագա իմացությունների հիմքը դնելով խոհեմ ու կրթված դաստիարակչուհիների խնամածության ներքո։ Քանի որ դեռևս հայ ժողովրդին պակասում են լուսավորված, կրթված կանայք, որոնք կարող կլինեին կազմակերպել երեխաների ճիշտ դաստիարակությունը տանը, ապա անհրաժեշտ է այդ դերը հանձնել մանկական պարտեզին, որտեղ մեկ վարժուհի կկարողանա կրթել բազմաթիվ երեխաներ։ «Մանկության օրերի ստացած տպավորությունը ո՛չ միայն խոր, այլ անջնջելի կմնա մարդուս հոգու, սրտի և ուղեղի վրա,—գրել է նա հետագայում «Մշակ»-ում։—Ա՜խ լուսավորյալ մա՛յր, մեծ է քո ազդեցությունը ո՛չ միայն երեխայի, այլև ամբողջ միլիոնավոր ազգի վրա... Բայց հայ ազգը շա՞տ լուսավորյալ մայրեր ունի արդյոք...

Ինչո՞ւ մեր ազգը լուսավորության մեջ հետամնաց է։ Դրա մի հատիկ պատճառը այն է, որ մեր երեխաները դաստիարակություն չունեն։ Իսկ երեխայի դաստիարակողն է լուսավորված մայրը։ Մանկական պարտեզն է բազմության երեխաների լուսավորված մայր... Այն դրության մեջ, որ կա ներկա րոպեին Ն. Նախիջևանը, մանկական պարտեզը մի հատիկ հնարն ու միջոցն է՝ նրա գալոց սերնդին հասցնելու նյութական ու բարոյական բարիքի» (V, 212)։

Վերջապես ստանալով Հակոբ Խըլտճյանի համաձայնությունը իր վաղամեռիկ կնոջ անունով մանկական պարտեզ հիմնելու և նյութապես այդ ձեռնարկությունը ապահովելու վերաբերյալ, Պատկանյանը շտապում է հայթայթել նաև այդ իրավունքը, մանավանդ որ հոգևոր դպրո-

---

[15] «Ի միջի այլոց խոսեցանք նաև մեր լրագրի ոճի մասին։ Ես ասացի, որ գրելու ենք այնպես, որ վերջին արապաչին ու նախոճին հասկանան. նոքա զարմացան մեր ընտրության և ճաշակին և միաբերան ասացին, որ մենք մեր պաշտոնը առավել լավ հասկացել ենք, քան թե Ռուսաստանի ամեն գիտունները և գրագետները. լրագրապետի և հեղինակի պաշտոնն է գաղափար տարածել և ոչ բոնի լեզու սովորեցնել» (V, 22)։

ցում աշխատանքը կորցնելուց հետո Պատկանյան ամուսինները ընկել էին անասելի ծանր տնտեսական կացության մեջ և իրենց անհագին ընտանիքի պետքերը հոգալու համար ստիպված էին գրավ դնել ու վաճառել ամեն ինչ։ Պարտատերերը մուրհակները ձեռքներին պրիստավի ուղեկցությամբ սկսել էին բախել նրանց դռները։ Դժվար է առանց սարսուռի կարդալ նրա՝ իր այդ օրերը նկարագրող հետևյալ տողերը. «Մէկ տարի պէթէր քէսատ տարիս էր. կըհավատա՞ք ան տարին մէկ կըռօշ չիվաստակէցա ու սայախլույօվըս ու վէց մանտռ տուղօցմօվս մնացիլ էի առանց ստըկի։ Տունիս մէչը ինչ թանկնօց պան վօր կար՝ ալայը կաղտուկէն (վօր տիրացիննէրս չիմանան) տէլալի ու ճուհուտի ծէռքօվ կէս կինօվը ծախիլ էինք ու կէրիլ էինք։ Ատ արալըխը մէքամ մէկիչի տասնըութը մանէթ պարտք էի, ու խնթրիլ էի, վօր չինէղէ, սապռ անէ, ինչվանքի մէկ պանի-կօրծի կըպչիմ։ Նա յալ խայիլ էղիլ էր, անխատար օր, պառլաթքայի համար (իրէն ասմունքէն) ինձիմէն ծէռագիր ուզացիլ էր, յէս ալ չէ ասած չէի, տուվիլ էի, ամա տալու ատէնս նօրէն խնթրիլ էի զօռի չիտնէլ, նա յալ նօրէն խայիլ էղիլ էր։ Վրա մէկ շափաթ չանցած աղլի ծէռագիրս կէրթա միռավօյին կուտա, միռավօյն ալ ռէշէնին կանէ, վօր մութլախ իտա պարտքը տըվի ու հրամանը կուտա փոխթըվին ծէռքը։ Ատ փըռխթըվը քանի-քանի տապռա տունս կէրթա կուգա, ամէն գալուն յէս աղաչանքօվ-պաղատանքօվ վատէ կառնում ու ինքս ինծի մէջ խունտու էմ, քի փոխթըվը ինծի կըմէղքընա տէյին, մի աւիլ օր նա իրէն ամէն էկածը վրաս խարճ կտնէ էղիլ է. ի՞նչ թահմին կանիք, աղլի տասնութը մանէթը էրկուիրէք ամիսէն քառսուն մանէթի չիթաթռի՞։ Էնճամը պալտքէրէս խալսէցանք, ամա տունիս մէչը մէքամ սթօլ, մէքամ աթօռք, մէքամ մուշտակ, մէքամ սամավար չիմնաց, սայախլուխս պահէստին ուռուպայէն թէք ճուհուտին ծէռքը անցավ» (V, 490, 491)։

Հաջողությամբ ավարտելով բոլոր հանձնարարությունները, Պատկանյանը չի շտապում Ն. Նախիջևան, այլ սպասում է Բեռլինի վեհաժողովից վերադարձող Խորեն եպիսկոպոս Գալֆայանին, որպեսզի մանրամասը նրանից իմանա հայ ժողովրդի բոլոր հույսերն ու ակնկալությունները խորտակող հանգամանքների մասին։ Հավանորեն հենց Պետերբուրգում, հայկական նվիրակի հետ հանդիպելուց հետո Պատկանյանը ստեղծում է «61-րդ հոդված» բանաստեղծությունը, որը մի կատաղի բողոք էր մեծ տերությունների հասցեին, մի ցասումնալից մեղադրանք՝ ուղղված հայ ազգի հարուստներին, իշխաններին, պաշտոնյաներին, անվանի մարդկանց, գիտնականներին, որոնք այս բարեհաջող հանգամանքների ժամանակ չմիավորեցին իրենց ուժերը, չզոհեցին իրենց ողջ ունեց-

վածքը Հայաստանի ինքնավարությունը ապահովելու համար։ Նույնանման տրամադրություններ ու մտքեր են պարունակում նաև հուլիսյան այդ օրերին գրած պետերբուրգյան ճանապարհորդական տպավորությունները, որը Գրիգոր Արծրունուն նվիրած «Այց Հայաստանի» բանաստեղծության հետ միասին հրապարակվեց «Մշակ»-ում։ Այժմ Պատկանյանը գերադասում էր տպագրվել «Մշակ»-ում, միավորել իր ուժերը Արծրունու հետ հայ ժողովրդին տիրած ծանր հիասթափության պայմաններում իսկ նրա մարտական ոգին չթուլացնելու մտադրությամբ։ «Ջարատեղիս փոխեցի» (VII, 25),— գրում է նա Քերովբե Պատկանյանին, ակնարկելով «Մշակ»-ի էջերում իր հաճախակի երևալու փաստը։ Հավատարիմ մնալով հայ ժողովրդի ուժերը չմասնատելու իր իդեալին, համառորեն չնկատելով ազգային պահպանողականների և լիբերալների ներքին անհամաձայնությունները, նա և «Մեղու Հայաստանի»-ի և «Մշակ»-ի նպատակները համարում է հավասարապես օգտավետ ազգի համար, իսկ նրանց ձգտումները նույն «ազնիվ նպատակների» արգասիք։ «Մշակ»-ի օրավուր աճող հեղինակությունը Պատկանյանը վերագրում էր միայն խմբագիր Արծրունու հմտությանը, որը կարողանում էր «շարժել հայի հետաքրքրությունը», ստիպել տրոփել նրանց սրտերը, համախմբել նրանց հանուն սուրբ նպատակի։ «Ո՞ւր էին այն բազմահատոր պատմությունքը հայոց ազգի բազմադարյան թշվառության, եվրոպական ամեն լեզուներով շարադրված և միլիոնավոր օրինակներով ցրված. ու՞ր էին կայծակնացայտ առաջնորդող հոդվածներն հընթացս 2 տարվա եվրոպական ամեն օրագրերումն զետեղած... Մի՞թե կարող ենք գանգատել, որ հանգամանքը անբարեհաջող էր. մի՞թե կարող ենք ասել, որ ազգի մտքը բացողները պակաս էին։ «Մշակը» չէ՞ր, որ կաշիեն դուրս էր գալիս ու ինքն իրան խաչ էր հանում, ուրիշ քի՞չ լրագիրներ, քի՞չ հեղինակներ, քի՞չ բանաստեղծներ հանդես եկան. բայց ինչպես կերևի, ազգը քնած չէ՛ եղել, այլ մեռել է... Բայց չէ՛, ես սխալ ասացի, ազգը մեռնել չէ՛ կարող, ազգի գլխավորքն, ազգի իշխանները և մանավանդ ազգի հարուստները ու փողատերերն էին մեռած... Հավիտենակա՞ն խայտառակություն նոցա» (V, 25)։

Իմանալով Քերովբե Պատկանյանի Հայաստան կատարած այցի մասին, բանաստեղծը ևս վառվում է իր հայ եղբայրներին իրենց հայրենիքում տեսնելու ցանկությամբ, նրանց ցավին և ուրախությանը, նրանց քեֆին ու տրտմությանը ականատես ու մասնակից լինելու որոշումով։ Անհրաժեշտ էր պարզել, թե հնարավոր կլինի՞ դարձյալ արթնացնել ու պահպանել հայության ոգին, թե՞ հուսալքումն ու անտարբերությունը

վերջնականապես տիրել են նրանց։ «Հայերը իրենց տեղումը նման են կամ ինչո՞վ տարբեր են մեզ, գաղթականներես, հայերեն մի բան լինելու հույս և առհավատչյա կա՞,— տագնապով հարցնում է նա Քերովբե եղբորը նամակով։—Դու գիտես խո, Թիֆլիսեն հեռի ես ոտս կոխած չեմ, ուրեմն քու ամեն տառը Հայաստանի մասին ինձ համար հետաքրքրական պիտի լիներ» (VII, 26, 25)։

Մինչև օգոստոսի վերջերը Պետերբուրգում, ապա Մոսկվայում մնալուց հետո, Պատկանյանը վերադառնում է Ն. Նախիջևան և նախապատրաստական աշխատանքներ ձեռնարկում թերթի և տպարանի աշխատանքներն սկսելու համար։

Սակայն նոյեմբերի առաջին օրերին Պետերբուրգից ստացվում է ներքին գործերի մինիստրի արգելքը Ռափայել Պատկանյանին «Նոր Նախիջևան» անունով թերթ հրատարակելու արտոնություն տալու վերաբերյալ, իսկ դրան հետևում է նաև Եկատերինոսլավի նահանգապետ Դուրնովոյի մերժումը Ռափայել Պատկանյանի անունով տպարան բացելու մասին։ Թե՛ բանաստեղծի, թե՛ նրա համախոհների բազմաթիվ դիմումները ուղղված Պետերբուրգի գրաքննչական ատյանին, թե՛ Կարապետ Եզյանի ու Քերովբե Պատկանյանի միջնորդությունները, թե՛ թերթի ծրագրի սահմանափակման խոստումները ոչ մի արդյունք չեն տալիս, քանի որ Ռափայել Պատկանյանը չէր վայելում քաղաքական այն վստահությունը, որ նրան իրավունք ընձեռեր Ռուսաստանում ռուս-թուրքական պատերազմից հետո հայերի մոտ առաջացած հայրենասիրական ձգտումների ու սկսված նարոդնիկական պայքարի այդ սուր շրջանում թերթ հրատարակել և ունենալ սեփական տպարան։ «Լրագրիդ չթույլ տալու պատճառը ոչ պրոգրաման է և ոչ իմ հայթայթմանց պակասությունը, այլ այն аттестация-ն է, որ ստացվեցավ քո վերա տեղական իշխանությունից։ Ուրեմն հրատարակիչի անունը պետք է փոխվի իմ կարծիքով. գուցե ձեր իշխանությունը ուրիշի վերա առավել մեղմ կարծիք հայտնե»[16],—զգուշորեն հասկացնում է նրան գրաքննիչ Քերովբե Պատկանյանը նորանոր դիմումներ և թույլտվության փորձեր չանելու համար։ Բայց Ռափայելը նորից խնդրագրեր ու բողոքներ է ուղարկում Պետերբուրգ, գրաքննչական ատյանին, Կարապետ Եզյանին, ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ IV-ին, վերջինիս քարտուղար Վահրամ Մանկունուն՝ կաթողիկոսի վրա ներգործելու խնդրանքով։ Սակայն ոչ մի միջոց չի օգնում, քանի որ Պատկանյանը ոչ միայն դիտվել էր որպես աղ-

---

[16] ԳԱԽ, ՌՊՖ, № 1045։

գային-ազատագրական ձգտումներին աջակցող անբարեհույս անձ, այլ նաև պետության դեմ կազմակերպված գաղտնի հեղափոխական, նարոդնիկական ընկերության համակիր։ «Եթե պատեհ միջոց գտնեք, խնդրեմ, ասացեք նորան (իմա՝ կաթողիկոս Գևորգ IV-ին—Մ. Ս.) հետագայս. թող գրե Օդեսայի պատերազմական շրջանային նահանգապետին՝ կոմս Թոթլեբենին, որ թույլ տա ինձ տպարան բանալու. թող Վեհափառը համոզե և երաշխավոր լինի, որ ես երբեք տերության դեմ ոչ խոսքով և ոչ գրչով մի չար բան ձեռնարկած չեմ և եթե կամենա իմ վրա արդար կարծիք ունենալ, թող հարցափորձ անե Ն. Նախիջևանի քաղաքագլխին կամ Դումային (ք. խորհրդի անդամներին), որոնք ինձ ի մոտո ճանաչում են և ոչ թե Եկատերինոսլավի նահանգապետ Դուռնավոյին, որ հազարեն մի գալիս է մեր քաղաքը միայն այս կամ այն, հայի թշնամի աղաներու տուն, նոցա հետ քաղաքացիի փողով տված ճաշն է լափում և շամփայն է լակում» (VII, 42)։

Հարվածը հասցված էր խիստ և դիպուկ։ Պայքարը շարունակել գրեթե անհնարին էր, և Պատկանյանը համակերպվելով հանգամանքներին, առժամանակ հետաձգեց մտադրությունները և սկսեց բավարարվել իր տանը ուրբաթ օրերին գրական երեկոներ կազմակերպելով, որտեղ կարդացվում էին իր ստեղծագործությունները, երեկոյի մասնակիցներից մի քանիսի գրական փորձերը, նյութեր էին պատրաստվում քաղաքը հուզող այլևայլ հարցերի՝ քաղաքում զովաշունչ ու կազդուրիչ քաղաքային պարտեզ գցելու, քաղաքի փողոցները սալահատակելու, ժողովրդական թատրոն ստեղծելու, մանկական պարտեզի աշխատանքները ընդլայնելու, քաղաքի չքավոր մանուկների համար (և՛ տղաների, և՛ աղջիկների) արհեստագործական ուսումնարաններ բացելու անհրաժեշտության մասին։ Այս նյութերից շատերն այնուհետև տպագրվում էին «Մշակ»-ի, «Մեղու Հայաստանի»-ի կամ «Փորձ»-ի էջերում, ինչ-որ չափով լրացնելով քաղաքային լրագիր չունենալու անհարմարությանը։

Սակայն շուտով այս «գրական երեկոները» նույնպես արգելվում են՝ ամենայն հավանականությամբ նույն քաղաքական նկատառումներով, և նրա անդամները ստիպված են լինում իրենց հավաքույթները տեղափոխել այլ վայրեր։ «Իմ մոտ գրականական երեկոներ էին լինում,—հայտնում է Ռափայել Պատկանյանը Քերովբե Պատկանյանին,—այժմ նույնը շարունակվում է ուրիշ տեղեր, սոցա պտուղը ժամանակե ժամանակ հայտնվում են «Մշակ»-ի մեջ։ Առհասարակ, Նախիջևանի նոր սթափումն այդ երեկոների ծնունդն են» (VII, 27)։ Իսկ «Մշակ»-ում տպագրված «Արվեստի վարժատուն» հոդվածի տողատակ տրված բացատրության մեջ

Հեղինակը նշում է. «Ռ<ափայել> Պ<ատկանյանի> ուրբաթ երեկոների մեջ հրապարակախոսված է այս հոդվածը քանի մի այլ հոդվածների հետ։ Չար ու բարի շատ անցան այս գրականական երեկոների գլխով, որո պատմությունը մի օր կհայտնվի հայոց ազգին, երբ կրքերը հանդարտվին» (V, 216)։

Քանի որ մանկական պարտեզի թույլտվությունը ստացվել էր դեռևս ապրիլ ամսին տիկին Պատկանյանի անունով և, ամենայն հավանականությամբ, այդ ուղղությամբ, արդեն սկսվել էին նախապատրաստական աշխատանքները, բանաստեղծը ձեռնարկեց մանկական երգերի ստեղծման գործը։ Անհրաժեշտ էր հայ մանուկին ուսումնառության հենց առաջին շրջանից ընտելացնել հայերեն բանաստեղծություններին, սովորեցնել երգել հայերեն երգեր, պարզ, անպաճույճ ոտանավորներով հայ մանուկի սրտում սեր ներարկել իր լեզվի, իր հայ ազգակիցների, իր հայրենիքի, նրա բնության, նրա բար ու բերքի նկատմամբ, ներարկել գութ՝ իր աղքատ ու անօգնական հայ հասակակիցների հանդեպ։

Քիչ բան է հայտնի Պատկանյան ամուսինների մանկական պարտեզի գործունեության վերաբերյալ. այն իր գոյությունը պահպանեց միայն երեք տարի, 1878-ից մինչև 1881 թվականը։ Արդյոք նյութական դըժվարություննե՞րն էին նրա խափանման պատճառը, թե՞ քաղաքը փոթորկող ներքին տարաձայնությունները, թե՞ տիկին Պատկանյանի առողջական ծանր կացությունն ու վարժուհիների պակասությունը՝ դըժվար է ասել[17]։ Սակայն այդ երեք կարճ տարիներն էլ բավական էին, որպեսզի հայ մանուկները մեկ ամբողջ դար իրենց առաջին թոթովանքների հետ միասին արտասանեին «Բադիկ բադիկ կարմիր թաթիկ»-ը, «Արի գարուն»-ը, «Արև, արև դուրս արի»-ն, «Կռունկներ»-ը «Ճիվ-ճիվ մատնոցիկ»-ը։

Օգտագործելով ժողովրդական խաղիկները, Պատկանյանը ստեղծեց մանկան հոգուն հասկանալի անզուգական երգերի մի շարք։

Գիտակցելով երգի ու ոտանավորի դաստիարակիչ հզոր կարողությունը, Պատկանյանը գրել է. «Մոր սուրբ կաթին հետ ո՞րն է ամենակարևոր սնունդը երեխային, եթե ոչ մանկական երգերն, որք առհավիտյան

17 1881 թվականին, այսինքն մանկապարտեզի փակման տարում գրված «Մեր տեղի ծակլարունները» պատմվածքում Պատկանյանը ներկայացնում է Զորրորդ-բարեկամ գործող անձին, որն, ի թիվս այլևայլ խոստումների հայտնում է նաև 400—600 հայ մանուկների համար մանկական պարտեզ հիմնելու իր մտադրության մասին և հետո փախչելով քաղաքից ծիծաղում այն միամիտների վրա, որոնք հավատալով իրեն, սկսել էին գործել համաձայն այդ հավաստիացումների (III, 237)։

պիտի տպավորվին նոցա սրտերու ու հոգիներու մեջ, որոնք, ժամանակի անցնելով, ով գիտե որպիսի արձագանք պիտի դուրս հանեն այնտեղնե-րեն։ Թող մեր զավակունք անմեղ երգերով անցնեն իրանց հրեշտակա-յին մանկական օրերը և վստահ լինինք... Որ նոքա մեզանից լավ երի-տասարդներ և այրեր կլինին ընդնմին և արժանի որդիք Հայրենյաց» (II, 360)։

Ամենափոքրերի համար գրված երգերն էին «Ծափ»-ը, «Նղիկ-մեղ-րիկ»-ը, «Ճի՛վ-ճի՛վ»-ը, «Կռունկնոր»-ը, «Կատուն», «Բադիկ»-ը, «Գա-րուն»-ը, «Արև»-ը, որոնք ընդամենը մի քանի նախադասությամբ կարո-ղանում էին երեխային հաղորդել տարբեր հասկացություններ, գերա-գույն հաճույք պատճառելով նրան իրենց շրջապատը ընկալելու, իմաս-տավորելու և այդ ամենը բառերով վերարտադրելու։

* * *

Մոտենում էր 1879 թվականը, Ն. Նախիջևանի հիմնադրման 100-ամյա հոբելյանը։ Առաջինն այդ ուղղությամբ մտածեց Քերովբե Պատ-կանյանը, բանաստեղծին առաջարկելով բարձրացնել այդ խնդիրը, քա-ղաքապետարանում աշխատել արժանավայել նշել տալ այդ կարևոր տա-րեթիվը[18]։ Ժամանակը բարենպաստ համարելով, Ռափայել Պատկանյանը որոշեց առաջ քաշել քաղաքի ծախսով տղաների համար արհեստագոր-ծական դպրոց հիմնելու հարցը և դեռևս 60-ական թվականներին հայ մեկենաս Մկրտիչ Կոկոյանի իգական դպրոց հիմնելու համար կտակած դրամագլուխը օգտագործել աղջիկների արհեստագործական ուսումնա-րան բացելու համար։ Շուտով քաղաքի խորհրդարանում դրվեց հոբել-յանի նշանավորման հարցը, և առաջարկություններ եղան քաղաքում կանգնեցնել կայսրուհի Եկատերինա II-ի և կաթողիկոս Հովսեփ Արղութ-յանի արձանները, իսկ քաղաքի ընչավոր դասից երկու տղաների և աղ-ջիկների ձրի ուսում ապահովել, կոչելով նրանց Եկատերինայի և Հովսեփ Արղությանի սաներ։ Այս որոշման դեմ ձայն բարձրացրեց Ռափայել Պատկանյանը՝ առաջարկելով ի նշանավորումն քաղաքի 100-ամյա հո-բելյանի այդ մեծածախս, բայց քաղաքի համար անօգուտ արձանների փոխարեն Ն. Նախիջևանում արական և իգական արհեստագործական դպրոցներ հիմնադրել, որոնք պիտի համալրվեին բացառապես քաղաքի չունևոր դասի երեխաներով։

Հայ ժողովրդի, մանավորապես գաղթօջախներում ցրված հայերի

---

[18] ԳԱՐ, ՌՊՖ, № 1003։

տնտեսական բարեկեցությունը տեսնելով արհեստների զարգացման մեջ և հայ ժողովրդի հետագա ազգային ու սոցիալական ազատագրության գաղափարը կապելով արհեստագործական դասի հետ, Պատկանյանը դեռևս 70-ական թվականների սկզբներից, ինչպես իր բազմաթիվ բանավոր և գրավոր ելույթներում, այնպես էլ գեղարվեստական մի շարք գործերում («Պապի», «Արվեստի վարժատուն») արծարծում էր դպրոցներում դասավանդվող առարկաների հետ մի շարք արհեստների ուսուցման գաղափարը, իսկ ավելի ուշ քաղաքի չունևոր երեխաների համար հատուկ արհեստագործական դպրոցներ հիմնելու միտքը։ «...Ձեզ համարձակ կասեմ, որ մեր քաղաքի ընկած դրության միակ և միակ պատճառն է մեր ժողովրդի մեծամասնության կախյալ վիճակը. և եթե բանը այդպես շարունակվի, մեր ժամանակվա ամեն նորոգությունները ոչինչ շահ տալու չեն մեր տեղի հայ ժողովրդին... Ինչ գործ և հառաջացնելու լինիս, պարտավոր ես ո՛չ քո սեփական խելքի և աղնիվ ձգտմունքի հետ խորհրդակցելու, այլ քանի մի համառ, կամակոր, եսամոլ ու բթամիտ հարուստներու ձեռքը ու ոտքը լիզել...

Մեզ պետք է այնպիսի ուսումնարան, ուր տղան կարդալու հետ մեկտեղ սովորի մի հացատու ձեռարվեստ ևս, որպեսզի նա, վարժատունեն ոտքը դուրս դրած չիդրած՝ ուրիշի օգնության կարոտ չլինի, ուրիշի առջև իր աղնիվ գլուխը չիճկե, իր մատղաշ հասակեն չիմանա ի՛նչ ասել է այն ստորաքարշ խոնարհությունը...», (V, 217, 220), ասել է նա իր տանը տեղի ունեցած երեկոներից մեկի ժամանակ և խնդրել մասնակիցներին բարձրաձայն քարոզելու այն «հրապարակներու» ու «հավաքույթներու» մեջ, համոզելու ունկնդիրներին և «վերջիվերջո նրան մարմին ու հոգի» պարգևել (V, 218)։

«Պապի» պատմվածքում անագագործ Ասատուրը թողնելով իր արհեստը ձեռք է զարկում վաճառականության, կորցնում ամեն ինչ, սնանկանում, զրկվում ընտանիքից և ժամի դռանը կանգնած ողորմություն է հավաքում ու, եթե բախտը ժպտում է, մի քանի գրոշ վաստակում սրա նրա բեռները կրելով։ «Բանուկ ձեռքը չի մուրա»,—քարոզում էր Ռափայել Պատկանյանը և երազում ստեղծվելիք արհեստագործական ուսումնարանի դռներին փակցնելու այս խոսքերը։ Արդեն առիթը բարենպաստ տեսնելով, Պատկանյանը կարողացավ համոզել ոչ միայն քաղաքի ձայնավորներին, այլ նաև ստանալ քաղաքագլուխ Միքայել Կարապետյանի համաձայնությունը մեկ տարի հետո, հոբելյանի օրերին այդ հարցին պատշաճ կերպով անդրադառնալու և ըստ հնարավորին դրականապես լուծում տալու խնդրում։

Ռափայել Պատկանյանին հանձնարարվեց նաև գրել մի ընդարձակ հոդված քաղաքի հիմնադրության և նրա հետագա կյանքի մասին։ Նույնանման պատվեր ստացավ Պետերբուրգում նաև բանաստեղծի հայրը՝ Գաբրիել Պատկանյանը, որի ստեղծած պատմությունը պիտի լիներ ավելի ընդարձակ ու լի մանրամասնություններով։

Ավարտելով այս նախապատրաստական աշխատանքները Ռափայել Պատկանյանը սկսեց իր վաղուց փայփայած երազանքը՝ Հայաստան աշխարհը սեփական աչքերով տեսնելու ծրագիրը իրականացնելու ուղիներ որոնել։

Հայաստան այցելելու միտքը, անկախություն ստանալու հույսերի փլուզումից հետո իր համախոհների և ժողովրդի հետ հանդիպումներ ունենալու, նրանց նորից դեպի գործունեության մղելու պահանջը օրըստօրե համակում էր Պատկանյանին։

> Ի տես կուգամ քեզ, իմ թըշվա՛ռ դու հայ,
> Աչքով տեսնել քու քանդած տըները,
> Ականջով լըսել գանգատ քու ու վայ,
> Ձեռքով շոշափել քու խոր խոցերը... (I, 143)

Գրում է նա այդ օրերին «Այց Հայաստանի» բանաստեղծության մեջ։

Բացի Հայաստան աշխարհի, նրա ժողովրդի ու մտավորականության հետ ի մոտո ծանոթանալու բուռն ցանկությանը, Պատկանյանին դեպի հայրենիք էր մղում նաև կաթողիկոսի օգնությամբ տպարանի և թերթի թույլատրության հայթայթման և իր մտահոգության նոր առարկայի՝ արհեստագործական դպրոցի ստեղծման համար հնարավորություններ գտնելու հույսը։ Ուստի, օգտագործելով ամեն միջոց, և՛ իր բարեկամների օգնությունը, և՛ իր անձնական սուղ հնարավորությունների տնտեսումից առաջացած ոչ մեծ գումարը, Պատկանյանը 1879 թ. հուլիսի 16-ին դուրս է գալիս Ն. Նախիջևանից Արևելյան Հայաստան այցելելու և, եթե հանգամանքները ներեին, այնտեղից Արևմտահայաստան անցնելու որոշումով։

ԳԼՈՒԽ ՆՐՐՈՐԴ
ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԵՏ

1879 թ. ամռանը Պատկանյանը սկսում է նախապատրաստվել Հայաստան կատարելիք ճանապարհորդությանը։ Հուլիսի 16-ին դուրս գալով Ն. Նախիջևանից նա երեք օր անց հասնում է Թիֆլիս և ամբողջ 21 օր անցկացնում այնտեղ։ Հանդիպումներ ունենալով Գրիգոր Արծրունու, Պետրոս Սիմեոնյանի, Աբգար Հովհաննիսյանի, վերջինիս քույր Գայանե Հովհաննիսյանի, Րաֆֆու հետ, ծանոթանալով Սպանդար Սպանդարյանի, Ալեքսանդր Քիշմիշյանի, Տեր-Գրիգորյանի և այլ գործիչների հետ, Պատկանյանը ամենուրեք տեսնում է ոչ թե հուսալքություն, այլ պայքարը շարունակելու, հայ ժողովրդին կրկնապատկված եռանդով ծառայելու տրամադրություն, որը կարծես թե նոր ուժ ու համոզմունք է հաղորդում նրան, որ «հայը կուլ գնալու ազգ չէ», որ հայի ներքին արժանավորությունները նրա համար կկարողանան ստեղծել անհաջողություններին դիմադրելու պայմաններ, կկարողանան համախմբել նրանց համազգային վեհ նպատակների համար։ «Կրոնական ազատամտությա՞մբ պիտի պարծենան մեր առջև օտարազգիները, թե՞ ընտանեկան մաքրակենցաղությամբ, թե՞ լեզվի դյուրությամբ, թե՞ նախնյաց հարուստ պատմական ժառանգությամբ։ Մեր եկեղեցին ազատ է, մեր հոգևորականությունը ներողամիտ է, մեր առտնին օջախը սուրբ է, մեր հայերուս գանգի ուղեղը զարգացած ու հասուն է, հայի լեզուն ճկուն, հարուստ ու դյուրին է, եթե հայը ակներև հալածանքի մեջ անգամ գիտե զարգանալ ազգովին, ապա որքա՞ն նա պիտի բարգավաճեր բարոյապես և նյութապես, եթե ունենար ազատության նման մի բան յուր քանդքնված, բայց հարուստ Հայաստանի մեջ» (V, 71),—գրում է նա այդ օրերին իր «Ճանապարհորդական տպավորությունններ»-ի մեջ և հենց Բորժոմում, Աբգար և Գայանե Հովհաննիսյանների հետ ունեցած զրույցից հետո օրիորդին ձոնում նույնանման տրամադրություններ արտահայտող «Ի՞նչ է մեզ պակաս» բանաստեղծությունը։ Օրիորդը, որ «Հայասեր-Ազգասեր»

խմբակցության գործոն անդամներից էր[1], հավանորեն, բանաստեղծին հավաստիացրել էր նրա հետագա գործունեության ու ազգասիրության ոգին մարտականորեն բարձր պահելու իր որոշմանը, ինչպես նաև ուղիներ նշել խմբակցության երևանյան մասնաճյուղի անդամների հետ հանդիպելու հարցում։

Համազգային ուժերը ներքին երկպառակություններով չջլատելու իր համոզմունքով, Պատկանյանը աշխատում է հաշտություն հաստատել «Մշակ»-ի և «Մեղու Հայաստանի»-ի միջև, հորդորում ավելորդ և անտեղի պայքարով չշեղել հայի ուշադրությունը ամենակարևոր՝ «ազգովին պայքարի ելնելու» և «հայրենի աշխարհը տիրելու» նպատակից։

Բանաստեղծը գրվատանքով է արտահայտվում Թիֆլիսում լույս ընծայվող մյուս պարբերականի՝ «Փորձ»-ի ուղղության վերաբերյալ, հատկապես նշելով այն փաստը, որ «Փորձ»-ը մի ընտիր ասպարեզ է, ուր ներկա ժամանակիս ընտիր հայ հեղինակները գտնում են պատվավոր հյուրասիրություն՝ առանց զոհելու որևէ իրենց համոզմունքը և կարծիքը» (V, 79)։

Պաշտպան կանգնելով Մարիամ Մելիք-Աղամալյանի հետ Գրիգոր Արծրունու մեծ աղմուկ բարձրացրած քաղաքացիական ամուսնությանը, Պատկանյանը անգամ զոհում է Գաբրիել Սունդուկյանի նկատմամբ ունեցած համակրանքը (V, 55), (վերջինս, լինելով Մարիամ Մելիք-Աղամալյանի նախկին ամուսնու՝ բժ. Քոչարյանի մտերիմ ընկերը, չէր արդարացնում Պատկանյանի նման դիրքորոշումը)։ «Այս նորերումս իմ սիրեկան Գրիգոր Արծրունին մի փոքրիկ voliace արավ, որի պատճառավ սաստիկ դայթակղվեցան նորա պատվողքը, և հանկարծ, մոռանալով այդ խեղճ գործողի ամեն երախտիքը... դարձան խստապահանջ դատավորներ խեղճ լրագրապետի վրա, թե՛և այդ պաշտոնի իրավունքը ո՛չ տերությունն էին ստացել, և ո՛չ մի ուրիշ բարեկարգ հաստատությունն։ Պարոն երիտասարդներ, ինչո՞ւ մոռանում եք, որ մարդկային սիրտը որքան և բաց լինի, այնուամենայնիվ նա ունի մի վարագուրած խորշիկ, ուր ձեռք մխելը առավել քանթե ամոթ է, այդ աններելի մեղք է։ Մարդուս վարքումը կա բան... որի դատաստանը և վճռահատությունը յուր վրա կատարում է ինքը անհատը, և օտար մարդ նորա մեջ իրավունք չունի ձեռնամուխ լինելու... Ես համոզված եմ, որ Գրիգոր Արծրունին, ինչպես որ էր, այնպես էլ կմնա ազգասեր և անխոնջ մշակ հայ հասարակությանը. թերևս կյանքի փոփոխությունը, քաղցրացնելով նորա

---

[1] Տե՛ս ԵՊՊԱ, ֆ. № 115, գ. 44։

դառնացած կյանքը, առավել ուժ կուտա նորան այդ... աշխատանքի համար» (V, 74, 76),— գրել է նա իր «Ճանապարհորդական տպավորություններ»-ի մեջ։

Եվ ու մոտ ունենալով Թիֆլիսի բազմաթիվ ընտանիքներում, Պատկանյանը գոհունակությամբ նկատեց, թե ինչքան խոր արմատներ է ձգել ազգային ոգին ոչ միայն մտավորականության շրջաններում, այլ նաև քաղաքի բնակչության այլ խավերում։ Հայոց լեզուն, որի չիմանալը մի քանի տարի առաջ ոչ միայն ամոթ չէր համարվում, այլ մի տեսակ նույնիսկ ցուցադրվում էր, այժմ դարձել էր կենսական պահանջ, հայերեն գրքերն ու պարբերականները իրենց հաստատուն տեղն էին գրավել բազմաթիվ ընտանիքներում, երիտասարդությունը իր պատրաստակամությունն էր հայտնում պայքարելու հանուն համազգային նպատակների, արդեն Թիֆլիսում լսել տալով «...հեռավոր արձագանքը այն թնդումների, որոնք դուրս գալով Հայաստանի բնակչաց սրտերու հրաբուխներեն շատ շուտ պիտի ցնցեն հայի բոլոր էությունը» (V, 84)։

Գոտեպնդված նման խորհրդածություններով, գոհ սրտով թողնելով Թիֆլիսը, Պատկանյանը Աբգար Օրբելու ընկերակցությամբ օգոստոսի 6-ին ոտք է դնում այնքան անձկությամբ երազած Հայաստանի հողը։

Առաջին տպավորությունը՝ Հայաստան աշխարհի գեղեցիկ մայրամուտը, արևի վերջին ճառագայթներով բոսորագույն ու ոսկեգույն ներկված սարերը, մուգ կապտագույն երկինքը, հեռվում փռված անհուն դաշտերը վստահությամբ լցրին բանաստեղծի հոգին, որ հայ ժողովուրդը երբեք չի լքի իր գեղեցիկ հայրենին, որ նա միշտ զորավիգ կկանգնի նրան՝ զոհելով իր ամենաթանկ բանը՝ կյանքը։ «Չէ՛, որբացած ու այրիացած կնկա չէի նմանեցնում մեր անգին Հայաստանը,—գրում է նա, իր առաջին տպավորությունների մասին,—այլ այն խաթուն մորը, որն յուր ամուսնին ու որդոցը ճամփել է հեռավոր աշխարհ, և այժմ ինքը, աչքերը դուռը, սպասում է նոցա վերադարձին։ Չէ՛, հայերս էլ լքած ու մոռացած չենք մեր զավակասեր ու բազմակարոտ մորը, այլ միայն երկնքի պարզվելուն ու ճամփաների շտկվելուն ենք նայում, որ գոտիներս կապենք, ցուպերը ձեռքերս առնունք ու մեր ըղձալի հետադարձ դաղթությունը կատարենք» (V, 64, 65)։ Առանձնապես մեծ հիացմունք պատճառեց նրան Դիլիջանի ձորը, նրա սիզավետ անտառների անկրկնելի գեղեցկությունն ու հարուստ ծառատեսակները, զարմանալի օդը։ Այդ տպավորությունները ավելի վառ դարձան, երբ մինչև Երևան հասնելը բանաստեղծը իջևանեց Ծաղկաձորում, իր բարեկամ Ռուբեն Հասան-

Ջալալյանի ամառանոցում։ Մի քանի օր այնտեղ մնալուց հետո Պատկանյանը հասավ Երևան և հանդիպեց բժիշկ Լևոն Տիգրանյանի հետ, որը նրան ծանոթացրեց «Հայասեր—Ազգասեր» խմբակցության երևանյան մասնաճյուղի անդամներ, Երևանի հոգևոր դպրոցի տեսուչ Բեգնազարյանցի, քաղաքագլուխ, բժիշկ Վասակ Պապաջանյանի և մյուս գործիչների հետ[2]։ Լևոն Տիգրանյանի տանը տեղի ունեցող հանդիպումների ընթացքում խմբակցության անդամները ծրագրեր մշակեցին հետագա գործունեության վերաբերյալ, որտեղ Պատկանյանի մասնակցությունը հիմնականում պիտի կայանար նորանոր ստեղծագործություններով, համազգիների սրտերում հայրենասիրության ջահը վառ պահելու և նրանցից ապագա վերամիավորվելիք Հայաստանի համար պիտանի գործիչներ կրթելու գործում։ Այդ հանդիպումներից մեկին ներկա գտնված Սարգիս Յուզբաշյանի նամակը մեզ հնարավորություն է ընձեռում մասամբ վերականգնելու խմբակցության անդամների բարձրացրած խնդիրները, որը վերաբերում էր Վանի հանրապետություն ստեղծելուն, Հայաստանի երկու հատվածների վերամիավորմանը և Ռափայել Պատկանյանի բանաստեղծությունների դաստիարակիչ դերին, որը և կարող գործիչներ պիտի դաստիարակի հետագա վերամիավորված Հայաստանում աշխատելու համար և պիտի օգնի շատերին գտնելու իրենց ազգային արժանապատվությունը։ «Մեծապատիվ և գերազնիվ Ռափայել Գաբրիելյան և ողորմած տեր,— գրում է ղարաբաղցի ընդապետ Սարգիս Յուզբաշյանը,—անցյալ տարի Դուք շնորհ բերաք Երևան, բարեբախտաբար ես ժամանակավորապես գտնվում էի այնտեղ և պատիվ ունեցա ներկայանալ և ծանոթանալ Ձեզ հետ բժիշկ Տիգրանյանի տանը։ Խոսակցության ժամանակ ես հարցրի Ձեզ՝ ինչի եք այնքան խիստ հարձակվում խեղճ հայերի վրա և անխնա խայտառակում նոցա՝ հինգ միլիոն հայերին։ Դուք բարեհաճեցաք բացատրել ինձ՝ զինվորիս, հարձակման նպատակը և նորա սպասելի օգտավետ հետևանքները. ես ասացի Ձեզ, որ եթե այդպես է, խնդրեմ այսուհետև սկսեք ուղիղ ինձանից. հետո խոսակցությունը վերաբերվեցավ մեր սուրբ Հայաստանին և նորա ապագա վիճակին։ Դուք տարաք ինձ պ. Տիգրանյանցի ննջարանը և այնտեղ ցույց տվիք ինձ քարտեզի վրա Տիգրանակերտը (Դիարբեքիր), Վան, Մուշ և այլն և ասացիք. ահա այս կողմ տեղից պիտի կազմվի մի մեծ նահանգ, որի

[2] Տե՛ս «Ճանապարհորդական տպավորություններ» (V, 96—97), ինչպես նաև ՀՊՊԱ, ֆ. 115, գ. 44, որտեղ խմբակցության անդամների ցուցակի մեջ հիշատակվում էին Ռուբեն Հասան-Ջալալյանը, Լևոն Տիգրանյանը, Վասակ Պապաջանյանը, Բեգնազարյանը։

գլխավոր կառավարիչ պիտի նշանակվի Նուբար փաշան։ Ես այս բերկրալի խոսքերը լսելով չկարողացա պահել արտասուքս...»[3]։

Մի քանի օր անց Պատկանյանը Լևոն Տիգրանյանի ուղեկցությամբ մեկնում է Կողբ, հատկապես Արաքս գետը տեսնելու համար և ափին երկար-երկար կանգնած դիտում նրա կոհակների ամեհի ընթացքը[4]։ Իսկ դրանից անմիջապես հետո, մոտավորապես օգոստոսի 10-ին, 11-ին Վասակ Պապաջանյանի հետ միասին այցելում է էջմիածնի վանքերը, սրտի թրթիռով ոտք կոխում ամեն հայի համար նվիրական այդ հողին, ապա շրջում և զննում Արարատյան դաշտում սփռված բազմաթիվ պատմական հուշարձանները[5] և օգոստոսի 20-ին մեկնում Բյուրական, կաթողիկոս Գևորգ IV-ի հետ հանդիպելու համար։ Կաթողիկոսի հետ անցկացրած 6 օրերը նորանոր հույսերով են լցնում բանաստեղծի հոգին, քանի որ Գևորգ IV-ը նույնպես հանդիսանում էր հայրենասիրական խմբակցության ջերմ համակիրներից[6], և, բնականաբար, այդպիսի հզոր մարդու հովանավորությունը գործունեության նորանոր հնարավորություններ պիտի բացեր նրանց առջև։

Պետք է ենթադրել, որ հենց կաթողիկոսի խորհրդով Պատկանյանը որոշում ընդունեց այցելել Արևմտյան Հայաստան[7]։

Բացի հիմնական հարցերի մասին խորհրդակցելուց, Պատկանյանը կաթողիկոսից աջակցություն է խնդրում Ն. Նախիջևանում արհեստագործական դպրոցի ստեղծման համար, բարեխոսում առաջիկա ընտրություններին քաղաքագլխի պաշտոնի համար նախատեսվող Միքայել Կարապետյանի օգտին, քանի որ վերջինս հանդիսանում էր դպրոցի ջերմ պաշտպաններից մեկը, մանրամասնաբար պատմում նրան վերջին տար-

---

[3] ԳԱԹ, ՌՊֆ, № 884։

[4] «1881 թ. (պետք է լինի 1879 թ.—Մ. Ս.) Պատկանյանի հետ ճանապարհորդում էի Երևանից դեպի Կողբ։ Երբ մոտեցանք Արաքսին, Ռափայելն ասաց. «Սպասիր իջնեմ և Արաքսին մի լավ նայեմ, տեսնեմ ինչպիսի գետ է, առաջին անգամն եմ տեսնում»։ Գետի ափին երկար զբոսնելուց հետո ծիծաղելով ասաց. «Գիտե՞ս, Լևոն, ինձ շատ մեծ շառլատան կկարծեն»։—Ինչո՞ւ,—հարցրի ես. «Եղբա՛յր, Արաքսն երբեք չէի տեսել և համարձակվեցի գրել «Արաքսի արտասուքը» և կրկին սրտանց ծիծաղելով ասաց. «Այո՛, երբ մարդ ներշնչված է լինում, ամեն բան կարող է երևակայել և գրել»,—պատմել է Լևոն Տիգրանյանը։ (Տե՛ս «Լումա», 1903, № 6)։

[5] «Հիմա արդեն եղա բազմաթիվ վանքերում, որոնց ավերակները ինձ ուղղակի հիացրին»,— գրում է նա օգոստոսի 26-ին կնոջն ուղղված նամակում (VII, 32)։

[6] Տե՛ս ՀՊՊԱ, ֆ. 115, գ. 44։

[7] «Ինձ դեռ շատ ճանապարհներ են սպասում, եթե արտասահմանյան անձնագիր ստանամ, հակառակ դեպքում կբավականանամ Ռուսական Հայաստանով»,— գրում է նա կնոջը սեպտեմբերի 4-ին, Երևանից (VII, 35)։

վա ընթացքում հոգևոր դպրոցում պատահած ծանր դեպքերի մասին, օգնություն խնդրում տպարանի թույլտվության վերաբերյալ։

Վերադառնալով Երևան, Պատկանյանը շարունակում է ծանոթանալ հայ ժողովրդի տարբեր խավերի ներկայացուցիչների հետ, աշխատում ներթափանցել նրանց հոգեբանության մեջ, ըմբռնել նրանց հուզող կըրքերը, ուղղություն տալ նրանց ձգտումներին։ «Օրհնեցեք ձեր որդուն, որ ի սեր ազգին յուր կյանքը վտանգի տակ ձգել գիտե... Ի սերը ազգին ասում եմ, ես գիտեմ, որ իմ ճանապարհորդելս Հայաստանի մեջ անօգուտ չպիտի մնա հայերի համար» (VII, 39),— գրել է նա այդ օրերին հորը՝ Պետերբուրգ։

Սակայն ինչքան էլ մեծ էր ոգևորությունը, խանդավառ ընդունելությունը Հայաստանի մայրաքաղաքում, այնուամենայնիվ, Պատկանյանի սրատես աչքը որսում էր օտարամոլության, խորթ բարքերի ներմուծման բազմաթիվ երևույթներ, որոնց օրինակները նա ամենուր նշմարում էր գաղթօջախների՝ Աստրախանի, Ն. Նախիջևանի, Ստավրոպոլի հայկական բնակչության շրջաններում և որոնք, ըստ նրա պատկերացման, պիտի խսպառ բացակաեին իսկական հայկական քաղաքներում։ Այն, ինչից կարողացել էր ազատագրվել Թիֆլիսի հայ բնակչության մի ստվար մասը, դեռևս թագավորում էր Երևանի շատ ու շատ ընտանիքներում. «Ես կարծում էի, թե հենց որ հայոց հողի վրա կոխեմ, իսկույն աչքիս առջև կհանդիսանան ոչ թե հայկերը, արամները, վաղարշակները ու վարդանները, գոնե նոցա պայպատ, քաջ, անվեհեր հետնորդները։ Ավա՜ղ, իմ հույսերն ու ակնկալությունները այնպես ցնդեցան, ինչպես և շատ ու շատ հույսեր մեր այժմվա վիճակի մեջ ցնդել են» (V, 62),— գրում է բանաստեղծը։ Եվ հենց Երևանում էլ ծագել իր ապագա «Փառասեր»-ը վիպակի մտահղացումը, որտեղ հերոսը չնայած իր կատարելություններին, չարաչար պատուհասվում է, որովհետև օտարամոլ, միայն իր անձնական բարօրության մասին մտածող հայը, կյանքը «դըրմակ» ընկալող հայը, չի կարող համակրանք շահել ինչպես իր ազգակիցների, այնպես էլ օտարների աչքում։ Վիպակի հերոսի ծննդավայրը Երևանի գավառի գյուղերից մեկը պիտի լիներ, նրա մուլքադար հայրը Երևանի բնակիչ, ստացած ընտանեկան դաստիարակությունը՝ Երևանի բազմաթիվ ընտանիքներում տարածված օտարամոլությունը, նասիրությունը։

«Ինչպիսին պիտի չլինի հայը»,— ահա այս էր լինելու ապագա վիպակի հիմնական գաղափարական առանցքը։ Այս մտահղացման հետ զուգընթաց Պատկանյանի մոտ առաջացավ նաև «ինչպիսին պիտի լինի

հայր» ստեղծելու պահանջը, ծննունդ տալով «Ես նշանած էի» վիպակի նախագաղափարին, որի հերոսը պիտի ունենար «շատերուն աննշմարելի և առավել, շատերուն անհավատալի սրտի փափկություն», պիտի իր վարքագծով հերքեր այն տարածված կարծիքը, թե հայն ընդունակ է «միայն արծաթ ստանալու և անընդունակ որպես նիցէ մարդկային զգացմունքի»։ Անհրաժեշտ է վիպակի հերոսին օժտել ասպետական գծերով, ազնվությամբ, անշահամոլությամբ, քնքուշ սիրող սրտով, անձնազոհությամբ։

Մինչև սեպտեմբերի կեսերը մնալով Երևանում և այնտեղ ստանալով իր յոթներորդ զավակի՝ Մարիամի աշխարհ գալու ավետիսը[8], նա մեկնում է Ալեքսանդրապոլ, ծանոթանում տեղի մտավորականության հետ, ապա հոկտեմբերի 1-ին այցելում Անիի ավերակները, որոնք անջնջելի տպավորություն են գործում նրա վրա։ Հայոց կործանված մայրաքաղաքի հոյակապ մասունքները կարծես ոգի առած պատմում են բանաստեղծին իրենց ավերման պատճառների մասին, մեկը մյուսի ետևից ծնելով նրա երևակայության մեջ բազմաթիվ ստեղծագործական մտահղացումներ Անին հողին հավասարեցնող արտաքին ու ներքին թշնամիների վերաբերյալ։ «...Աչքս փակում եմ, կոպքիս մեջեն տեսնում եմ, ավելի տեսնում եմ, քան թե աչքս բաց ժամանակը... Տեսնում եմ անձնավորված ամեն հայկական մոլությունք, որք կործանեցին ապառաժաշեն Անին... Անհնար է այդպիսի հրաշակերտ շինելու հասարակ մահկանացուի ձեռքով, Անիի շինողը հսկաներ և դյուցազներ են եղել, բայց և քանդողք եղել են ոչ պակաս հսկաներ չարության և մոլության կողմանե։ Հայոց չորուցամաք պատմությունը ամենևին արտահայտիչ չէ հայոց կյանքին և մահուն. ես այս սոսկալի ժամուն հոգվով և երևակայությամբ ըմբռնեցի այն ամեն գաղտնին, որ վարդապետների գրիչը երբեք հասկացնել չէր ինձ։ Ես հասկացա շատ բան. այս քարերեն ավելի բան հասկացա, քան թե մեր բազմահատոր գրքերեն»,— գրել է նա հորը, ավերված քաղաքի Կաթողիկե եկեղեցու գավթում անցկացրած հենց առաջին գիշերը (VII, 38, 39)։

Հետևյալ օրը քաղաքի միջնաբերդից դուրս գտնվող Հովվի եկեղեցու տեսքը, որի պատուհանների շուրջը և պատերի վրա եղած բազմահազար նետերի հետքերը վկայում էին պաշարվածների համառ դիմադրության

---

[8] «Ես ստացա քո նամակը, ուր դու հայտնում ես քո առողջության և Մարիամի աշխարհ գալու ուրախալի լուրերը։ Դա բարի նշան է, այդ տեղեկությունը ես ստացա Երևանում՝ Հայաստանի մայրաքաղաքում, ի տես Արարատ լեռան»,— գրել է նա կնոջը (VII, 32)։

և թշնամիների կատաղի գրոհների մասին, Պատկանյանին մղում է ստեղծելու իր «Անիի առումը» պատմական դրամայի ուրվագիծը, որի նյութը պիտի կազմեր Բագրատունյաց թագավորության անկման և հայկական անկախության կործանման պատմությունը (VII, 67)։

Իմանալով Պատկանյանի Անիում գտնվելու մասին Ալեքսանդրապոլի մի խումբ մտավորականներ աշուղ Ջիվանու առաջնորդությամբ գալիս են նրա ետևից և հենց մայր եկեղեցու գավթում կազմակերպում մի մեծ հացկերույթ, որտեղ երգվում են ինչպես իր՝ Պատկանյանի հայրենասիրական երգերից շատերը, այնպես-էլ Ջիվանու հեղինակած տաղերը, մասնավորապես նրա «Ոչ այլազգին անարգե, ոչ քո ազգը ուրացիր»-ը, որը մեծ տպավորություն է գործում բանաստեղծի վրա, ստիպելով նրան երազել այն օրվա մասին, երբ հայերի մտավոր զարգացումն ու կյանքի բարեկեցիկ պայմանները հնարավորություն կտան նրան հպարտությամբ արտասանել իր հայ անունը և հավասարի իրավունքով հարգել այլազգիին[9]։

Մինչև հոկտեմբերի առաջին տասնօրյակը մնալով Ալեքսանդրապոլում և զգալով, որ Արևմտյան Հայաստան անցնելու ծրագրերը չեն իրականանալու, Պատկանյանը որոշում է վերադառնալ Ն. Նախիջևան։ Մի քանի օր Թիֆլիսում կանգ առնելուց հետո, հոկտեմբերի կեսերին հասնում է տուն և անմիջապես ճանապարհորդական տպավորությունների մաքրագրման հետ միասին մի երկու օրվա ընթացքում ավարտում «Փառասեր» վիպակը։

Հոկտեմբերի 26-ին արդեն պատրաստ վիճակում «Փառասեր»-ը առաքվել էր Աբգար Հովհաննիսյանին, հետևյալ մակագրությամբ. «Ես արտագրում եմ ճանապարհորդությունս, որ շուտ կստանաս։ Առայժմ ստացիր այս փոքրիկ բանը, որ նմանապես իմ տպավորությունների մի մասն է, բայց ուրիշ ձևով արտահայտած, եթե չիհավանիս, մի՛ տպիր» (VII, 40)[10]։

Եվ եթե վիպակի մտահղացման համար ազդակ էին հանդիսացել

---

[9] *Տե՛ս «Ախուրյան», 1909, տետրակ Ա, հունվարի 11։*

[10] *Այն, որ «Փառասեր»-ը «Փորձ»-ի խմբագրություն էր ուղարկվել «Ես նշանած էի» վիպակից առաջ, կարելի է զգալ արդեն նրանից, որ իր 1880 թ. մարտի 31-ին Աբգար Հովհաննիսյանին ուղղված նամակում խոսելով իր «Ճանապարհորդական տպավորություններ»-ի միջից մեկ ամբողջ հատված հանելու մասին, անհանգստացած հարցնում է.—«Փառասեր» վեպը մտադի՞ր եք մուծանելու «Փորձ»-ի մեջ»։ Անշուշտ անհանգստությունը հեղինակի մոտ առաջացել էր այն բանից հետո, երբ ավելի ուշ ուղարկված «Ես նշանած էի» վիպակը տպագրվել էր ավելի վաղ, քան «Փառասեր»-ը։*

Ծրևանում ստացած տպավորությունները, ապա Ալթմազովի արտաքինը, փայլուն ընդունակությունները, կենսագրության որոշ մանրամասներ ըստեղծելիս Պատկանյանը օգտագործել է իր հորեղբորորդու՝ Քերովբե Պատկանյանի կերպարը։ Այնտեղ պատկերված էր և մեծահարուստ Աղաթոն Աքիմյանի տան տնային դաստիարակի առօրյան, ամառանոցում նրա անցկացրած օրերի նկարագրությունը, տանտիրոջ աղջկա հետ թաքուն նշանվելու արարողությունը, Աքիմյանի գերմանուհի կնոջ այդ մտերմությանը ցուցաբերած լուռ դիմադրությունը, գեղեցիկ, ընդունակ, բայց աղքատ երիտասարդին հայտարարած երկարամյա «պատերազմը» և այլն։ Հիշենք նաև, թե ինչպես էր դժգոհում Ռափայել Պատկանյանն իր հորեղբորորդուց այն օրերին, երբ նա Աքիմյանների տանը բնակվելու ընթացքում խսպառ կտրվել էր հայկական միջավայրից, ծանոթություններ հաստատել բարձրաշխարհիկ հասարակության հետ, իր «ձեռնասընունդ» Նիկողայոս Աքիմյանին չներշնչելով ազգասիրական ոչ մի ձըգտումներ։ Եվ իզուր չէր, որ վիպակը ավարտելուց հետո, նա առանց Քերովբե Պատկանյանին ձեռագիրը ուղարկելու, առանց նրա հետ խորհրդակցելու, մի բան, որ արվում էր տարիներ շարունակ, շտապում է առաքել Թիֆլիս, տպագրության[11]։

«Փառասեր»-ից հետո Պատկանյանը ձեռնամուխ է լինում «Ես նշանած էի» վիպակը գրելուն, այս անգամ գործողությունները փոխադրելով պետերբուրգյան հայ ուսանողների միջավայրը և այդ միջավայրում պատկերում Ալթմազովի հակոտնյային, անշահախնդիր, աղնիվ, անկեղծ, անձնազոհ սիրո ընդունակ Միքայել Վայելչյանին՝ աշխարհի առջև հայի բարձր բարոյական հատկությունները ներկայացնելու միտումով։ Հետաքրքրական է այն, որ այս վիպակում Պատկանյանը ազգասիրական ոչ մի հարց ուղղակիորեն չի առաջադրում, նույնիսկ ընտրում է այլազգ հերոսուհի՝ հայ երիտասարդի մարդկային կատարելիությունները շեշտելու նպատակով։

Եթե Ալթմազովը ընդունակ է զոհել ամեն բան՝ և՛ գեղեցկություն, և՛ սեր, և՛ կանացի հրապուրանքներ, և՛ հոգեկան բարձր առաքինություններ, և՛ ազգային զգացումներ միայն հանուն փողի ու հարստության,

---

[11] Ջանաչելով իրեն «Ասիական Ապոլոնի» կերպարում, Քերովբե Պատկանյանը, այնուամենայնիվ ցանկանում էր իմանալ, թե ո՞ւմ է աչքի առաջ ունեցել հեղինակը հերոսին նկարագրելիս. «...Բայց այդպես Ալթմազով խելք տեսած չեմ, ոչ նաև նորա նախագաղափարը։ А все-таки մեկին-մեկին միտքումդ ունեցած պետք է լինիս, միայն անչափավոր գովասանքներովդ սպանեցիր ստեղծագործությունդս»,— գրել է նա վիպակը «Փորձ»-ում կարդալուց հետո (ԳԱԲ, ՌՊՖ, № 1068)։

ապա Միքայելը, ընդհակառակը, փնտրում է կնոջ մեջ միայն մարդկայինը, հրապուրվում նրա գեղեցկությամբ, մաքրությամբ, ունկնդրում իր սրտի կանչին և կորցնելով սիրո առարկային, հրաժարվում նաև անակընկալ հարստությունից։ Վիպակի գործողությունների ընթացքը ծավալվում է Պետերբուրգի հայ ուսանողների միջավայրում, որոնք նույնպես հանուն վեհ նպատակի անմռունչ կրում էին և՛ դառն աղքատության, և՛ պանդխտության հարվածները՝ չդավաճանելով իրենց համոզմունքներին, չշեղվելով մեկ անգամ ընտրած նպատակից։ Թեև հեղինակը դարձյալ ոչ մի ազգասիրական դատողություն չի դնում իր հերոսների բերանը, չի նկարագրում ոչ մի նման գործունեություն, սակայն նրանց վեհ, մաքուր, անշահախնդիր կերպարներով ներկայացնում է 50—60-ական թվականների այն հայ երիտասարդներին, որոնք հանձն առնելով բազմաթիվ դժվարություններ, անօրինակ ծանր պայմաններում քարշ տալով գոյությունը հյուսիսային հեռավոր քաղաքներում, երազում էին օգտակար լինել իրենց ժողովրդին։ Զգալով վիպակի այս ենթատեքստը, Քերովբե Պատկանյանը գրել է. «Փորձումը» կարդացի քո «Նշանած եղածդ»։ Գիտես որ, բացի հերոսուհին, բոլոր անձիք ինձ լավ ծանոթ են։ Ես հույս ունիմ, որ ժամանակով և շատ շուտ կգրես մանրամասնաբար Լազարյանց ճեմարանի կյանքը լավ միտդ բերելով ամեն մի հանգամանք։ Ժամանակն է, այդ պատմական րոպեն մեր զարգացման, մոռացումից ազատելու։ Օրե օր պակասում են մեր ժամանակակիցները. ոչ Լազարյան ճեմարանը, ոչ Դորպատի կյանքը չունի դեռ պատմիչ։ Վերջի ժամանակները զարթոնք զարկեց թե մեր մտավորական կյանքը, թե մեր գրականությունը։ Ժամ է արդեն մեր անցյալ կյանքի նշանակությունն էլ պարզել, ոչ թե գիտական, այլ վեպի, կամ հիշատակարանի ձևով»[12]։

1879 թ. նոյեմբերի 14-ին նշվեց Ն. Նախիջևանի հիմնադրման հարյուրամյա հոբելյանը, որտեղ վերջնականապես հաստատվեց արհեստագործական դպրոցի հիմնադրման նախագիծը, որը քաղաքի ամենաչքավոր երեխաներին պետք է հնարավորություն տար տարրական գիտելիքների հետ միասին սովորել որևէ արհեստ, իսկ ուսումնառության ընթացքում, օրեկան մեկ անգամ անվճար ստանալ կերակուր և ամենաանհրաժեշտ հագուստ։ Հաստատվեց նաև տղաների արհեստագործական դպրոց բացելուց հետո օրիորդաց արհեստագործական վարժարան հիմնելու նախագիծը։

Անհրաժեշտ էր պայքարել գոնե տպարանի ստեղծման համար, քա-

12 ԳԱԲ, ՌՊՖ, № 1065։

նի որ արդեն պարզ էր Թերթ հրատարակելու արգելքը վերացնելու անհնարինությունը։

«Փորձ»-ի խմբագրությանը ուղարկելով դեռևս մեկ տարի առաջ պատրաստած «Նոր Նախիջևանի հիմնարկության պատմությունը» և հոբելյանական հանդիսությունների նկարագրությունը, Պատկանյանը մի վերջին փորձ կատարեց կաթողիկոսի միջնորդությամբ գլուխ բերել այդ դժվարին գործը։ Միջնորդ ընտրելով կաթողիկոսի անձնական քարտուղար Վահրամ վարդապետ Մանկունուն, որի հետ ծանոթացել էր էջմիածին կատարած այցելության ժամանակ, Պատկանյանն իր բազմաթիվ նամակներում և Ն. Նախիջևանից ուղարկված բազմաստորագիր դիմումներում, խնդրում է նրան համոզել կաթողիկոսին երաշխավոր լինելու իր համար Օդեսայի շրջանային նահանգապետ Տոտլեբենի առջև, մտադիր լինելով շրջանցելով Եկատերինոսլավի նահանգապետին, թույլտվությունը ստանալ ուղղակի Օդեսայից (VII, 40, 45, 46)։

Սակայն կաթողիկոս Գևորգ IV-ը ինչքան էլ լավ վերաբերվելիս լիներ Պատկանյանին, ինչքան էլ համակրեր ընդհանուր գործին, այնուամենայնիվ նա խուլ մնաց բանաստեղծի խնդրանքների նկատմամբ, տպարանի գործը թողնելով ավելի լավ ժամանակների, և Պատկանյանը համակերպվելով հանգամանքներին, ակամա հրաժարվեց իր տարիների փայփայած երազանքից, դառնությամբ գրելով Վահրամ Մանկունուն. «Ջգուշավոր մարդը սիրողներ կունենա, բայց հետևողներ շատ սակավ։ Վախենում եմ, որ Վեհափառը յուր զգուշությամբ և խոհեմությամբ յուր զորությունը կտեղափոխե Քիշնև, ուր ներգործում են ավելի համարձակ։ Ի սերն Աստծո, ներշնչեցեք Վեհափառին մի փոքր քաջություն... էջմիածնա վարկը օրեցօր սասանում է...» (VII, 52)։

Այնուհետև Պատկանյանն իր ամբողջ ուշադրությունը նվիրում է արհեստագործական դպրոցի նախապատրաստություններին։ Գործնական հարաբերություններ սկսելով ապագա հոգաբարձական խորհրդի նախագահ Սերովբե Հարությունյանի, անդամներ Գաբրիել Տրապիզոնյանի ու Հովհաննես Պապասինյանի հետ, Պատկանյանը ձեռնարկում է դպրոցի կանոնադրության և ուսումնական ծրագրերի պատրաստման աշխատանքը, հետևում շենքի, արհեստանոցների և այլ անհրաժեշտ պիտույքների հայթայթման գործերին, իսկ գիշերները դարձյալ անցկացնում գրասեղանի առջև, տպագրության պատրաստելով իր բանաստեղծությունների լիակատար ժողովածուն, «Մանկական ոտանավորներ և երգեր»-ի գրքույկները, աչքի անցկացնում, մաքրագրում, կարգի բերում իր երկարամյա աշխատանքը՝ «Ռուսահայ բառարան»-ը։

* * *

1880 թ. ամռանը Պատկանյանը դարձյալ որոշում է այցելել Հայաստան, շրջել Ախալցխայի և Ախալքալաքի գավառներում, կրկին մեկնել Էջմիածին, Երևան, հանդիպումներ ունենալ իր բարեկամների, համախոհների և ընդհանրապես հայ ժողովրդի հետ։ Հուլիսի 16-ին դուրս գալով Ն. Նախիջևանից նա 18-ին հասնում է Սիմֆերոպոլ, ապա անցնում Եվպատորիա՝ մոր և քրոջ՝ Վառվառի հետ հանդիպելու համար։ Հուլիսի վերջերին Թիֆլիսի վրայով մեկնում է Երևան, օգոստոսի 15—20 հյուրընկալվում է Էջմիածնում և դարձյալ Երևանում 10 օր մնալուց հետո, սեպտեմբերի 2-ին վերադառնում Թիֆլիս։ Քիչ բան է հայտնի Պատկանյանի այս ուղևորության մասին, երևի այն պատճառով, որ ինքը մամուլում համարյա հանդես չի եկել իր ճանապարհորդությունը նկարագրող հոդվածներով, բացառությամբ օգոստոսի 20-ին Երևանից ուղարկված մի թղթակցության, որը տպագրվեց «Մշակ»-ում։ Այդ ոչ մեծ գրության մեջ Պատկանյանը խոսելով Էջմիածին կատարած իր այցելության մասին, հրապարակով հերքում էր Էջմիածնի միաբանության կողմից Գաբրիել Այվազովսկու արխիվի ոչնչացման անճիշտ լուրը, հավատացնելով հայ հասարակությանը, որ ինքը իր աչքով տեսել և մեկ առ մեկ նայել է գիտնականի՝ Վեհարանում պահվող մեծարժեք թղթերն ու ձեռագիր ուսումնասիրությունները։

Երևանում անցկացրած օրերի մասին պատկերացում են տալիս Պատկանյանի նամակներն ուղղված իր կնոջը, որտեղ նա խոսում է Հայաստանի մայրաքաղաքում իր նկատմամբ ցուցաբերած ջերմ ընդունելության, ամենուրեք իր ստեղծագործություններով ու արտահայտած կարծիքներով ոգևորվելու մասին։ «Զարմանքին ու մեծարանքին այնքան եմ վարժվել,—գրում է նա,— որ բոլորովին բթացել եմ ամեն տեսակի շքեղությունների հանդեպ և դրանք ինձ ձանձրացրել են... Իմ սովորությունները, նույնիսկ տարօրինակությունները դարձել են մոդա տեղացիների համար ընդօրինակվող...» (VII, 56)։

Տեղի մտավորականությունը Պատկանյանին առաջարկում է ընդունել թեմական դպրոցի դիրեկտորի պաշտոնը և ընդմիշտ մնալ Հայաստանում, սակայն բանաստեղծը հրաժարվում է այդ այնքան գայթակղեցուցիչ առաջարկությունից, ամենայն հավանականությամբ արհեստագործական դպրոցի գործը մինչև վերջ հասցնելու հաստատակամությունից, ինչպես նաև իր բարեկամներից, տնից, փայփայած պարտեզից բաժանվելու դժվարություններից ելնելով (VII, 56)։ Հավանորեն հենց

Երևանում իր համախոհների հետ ունեցած հանդիպումներից հետո Պատկանյանը ստեղծում է «Հույս» բանաստեղծությունը, որտեղ կոչ է անում չընկճվել, չհուսահատվել, չկորցնել պայքարելու հաստատակամությունը, որովհետև ինչ արհավիրքների էլ հանդիպի հայ ժողովուրդը, նա դարձյալ կգոյատևի, եթե չկորցնի ազատագրման իր հույսը։

Սեպտեմբերի առաջին օրերին հասնելով Թիֆլիս, Պատկանյանը խանդավառ ընդունելության է արժանանում քաղաքի հասարակայնության կողմից, հատուկ համերգներ են կազմակերպվում նրա պատվին, բեմից կարդացվում նրա ստեղծագործություններից։ Թիֆլիսի գրական շրջաններում մեծ համակրանքով են արտահայտվում նրա վերջին երկու վիպակների և նոր լույս ընծայված «Մանկական բանաստեղծություններ»-ի մասին, անգամ դրանք համարում հայ գրականության մեջ դարաշրջան կազմող գործեր (VII, 57)։ Առանձնապես ջերմ ընդունելություն է գտնում Պատկանյանը Գաբրիել Սունդուկյանի կողմից, ծանոթանում է նրա ընկերական շրջանին, մտերմանում մասնավորապես բժիշկներ Սարգիս Քոչարյանի և Բագարտ Նավասարդյանցի հետ։ Սարգիս Քոչարյանը, որ ինչպես ասացինք, Արծրունու քաղաքացիական կնոջ՝ Մարիամ Մելիք-Աղամալյանի առաջին ամուսինն էր, հանդիպումներից մեկի ժամանակ մեղադրելով Պատկանյանին հրապարակով քաղաքացիական ամուսնությունը պաշտպանելու համար, պատմում է իր հոգեկան տանջանքների մասին, բողոքում Արծրունուց, որը լինելով նրա երիտասարդության լավագույն բարեկամներից մեկը, չի վարանել իրեն այդպիսի սոսկալի բարոյական հարված հասցնելուց։ Տիկնոջ նրման վարքագիծը Գրիգոր Քոչարյանը բացատրում է օտարազգի տնային դաստիարակչուհու հոռի ազդեցությամբ, որը դեռևս փոքր հասակից իր սանուհուն ներշնչել էր ազատ բարքերի գաղափարը, ընտելացրել հայ ընտանիքի, հայ կնոջ համար միանգամայն անընդունելի սովորություններին։ Եվ եթե հայ ժողովրդի սիրված երգիչը մամուլում հանդես գալով պաշտպանում է քաղաքացիական ամուսնության գաղափարը, ապա այդ հանգամանքը կարող է կործանարար ազդեցություն ունենալ բազմաթիվ հայ ընտանիքների համար, օտար բարքեր ներմուծել հայ հասարակության մեջ։ Անհրաժեշտ է, որ նորից ինքը՝ Պատկանյանը ընդվզի հայ ընտանիքի համար միանգամայն անընդունելի այդ երևույթի դեմ, դատապարտի այն, աշխատի ամենատգեղ գույներով ներկայացնել գործող անձանց, նրանց կենցաղը, նրանց ամբողջ էությունը, ընդօրինակման ոչ մի տեղ չթողնելով հայ հասարակության համար։ Փաստորեն հայ պահպանողական հոսանքը այդ նոր թատերագրությամբ պիտի պայ-

քարեր լիբերալ հոսանքի, մշակականության դեմ, որը օտար, «եվրոպականացված» բարքեր էր քարոզում ոչ միայն գրչով, այլ նաև անձնական օրինակով։ Լսելով այս ամենը դյուրաբորբոք Պատկանյանը զղջում է իր կատարած «սխալի» համար, մանավանդ որ վերջին շրջանում Արծրունու նկատմամբ ունեցած դժգոհությունը խանգարում էր նրան ճըշմարտացիորեն ընկալելու երևույթները, և անսալով իր նոր բարեկամների, մասնավորապես Սունդուկյանի խնդրանքին, խոստանում է «Պամպուլիոսի» օրինակով մի թատերական ներկայացում հորինել Արծրունու և նրա կնոջ վերաբերյալ, դատապարտել քաղաքացիական ամուսնությունը ընդհանրապես և նրանց վարքագիծը բացատրել ոչ թե մաքուր սիրո անդիմադրելի ուժով, որը պիտի սրբագործվեր միայն ապահարզանից հետո կայացած օրինական ամուսնությամբ, այլ կեղծ քաղաքակըրթության ձևերի կապկային ընդօրինակումով։ Թատերագրության հաջողության դեպքում Սունդուկյանը խոստանում էր ներկայացնել այն հայ բեմում։ Բժիշկը ցանկություն է հայտնում խաղալ իր իսկ դերը, Աբգար Հովհաննիսյանը, որը նույնպես խրախուսում էր այդ գաղափարը, խոստանում էր տպագրել «Փորձ»-ում[13]։

* * *

Սեպտեմբերի 28-ին Ն. Նախիջևանում, հանդիսավոր պայմաններում բացվեց արհեստագործական դպրոցը, որի տեսուչ նշանակվեց Ռափայել Պատկանյանը։ Սկզբում, տեղի փոքրության պատճառով բացվեց միայն մեկ դասարան և երկու արհեստանոց (կոշկակարական և ատաղձագործական)՝ 25 աշակերտներով, սակայն մեկ-երկու ամիս անց աշակերտների թիվը եռապատկվեց, իսկ արհեստանոցների և դասատուների թիվը հասավ երեքի (ավելացավ երկաթագործական արհեստանոցը)։ Քանի որ դպրոցը նախատեսված էր քաղաքի չունևոր դասի երեխաների համար, ապա հոգաբարձությունը և տեսուչը եռանդուն գործունեություն սկսեցին ամենաչքավոր աշակերտներին հագուստով, գրենական պի-

[13] Հետագայում, երբ «Աստառ»-ը չտպագրվեց և չբեմադրվեց, Պատկանյանը զարմանքով գրել է Սունդուկյանին. «...Բայց «Աստառ»-ի հյուրընկալություն չգտնելը ո՛չ «Փորձ»-ի և ո՛չ տեղվույդ թատրոնական բեմի վրա ինձ ապացուցեց, թե ո՛րքան փոքրոգի և վախկոտ է տեղվույդ գոված ինտելիգենցիան։ ...Ես ամենքից հավատացի, թե Արծրունին հրեշ է, հանձն առի երես առ երես գոտեմարտելու հետը, քաղաքի վիրավորանքին վրիժառու հանդիսանալով։ Բայց ո՞վ ձեզանից ինձ օգնեց, թե՞ հին բարեկամս Աբգարը, թե՞ նոր բարեկամս Քոչարյանցը։ Բայց իմ այդտեղ եղած ժամանակ ինչե՞ր էին ինձ խոստանում. ...Զարմանում եմ պր. Քոչարյանցի անտարբերությանը, որ խոստացել էր և՛ խաղալ, և՛ բեմի վրա դնել և այլն, և այլն...» (VII, 92, 68, 69)։

տույքներով և սննդով, ինչպես նաև անվճար ուսումով ապահովելու համար։ «Այժմ արվեստական դպրոցին տասնհինգ ամենաաղքատ աշակերտները հագնված են շատ համեստ, տաք և վայելուչ կերպով։ Իսկ դորամեն մի ամիս առաջ այդ ողորմելիները համարյա թե մերկ էին ոտից մինչև գլուխ, ցեխ ու ցուրտ օրերը ստիպված էին նոքա օրը չորս անգամ առաջ ու հետ անցնել գրեթե ամբողջ քաղաքը... մաշված ու ծակ կոշիկները միշտ լիքն էին ցեխով ու ցնցոտի հալավների տակեն երևում էր թշվառականների մերկ մարմինը. շատերը շապիկ անգամ չունեին, իսկ շատ ուրիշների շապիկը այն նյութից էր, որից ալյուրի ու ցորենի համար պարկեր են կարում...» (V, 335),—գրում է Պատկանյանը, հրապարակավ շնորհակալություն հայտնելով զանազան բարեգործական կազմակերպություններին և անհատ անձանց, կոչ անելով մյուսներին ևս մասնակից լինելու այս մարդասիրական գործին։

Պատկանյանը նամակներ է հղում Պետերբուրգ, Մոսկվա, Թիֆլիս, Երևան՝ արհեստագործական դպրոցին օգնելու, նրա արհեստանոցների համար առաջնակարգ վարպետներ գտնելու և սարքավորումներ ուղարկելու խնդրանքներով։ Գրություններ է ուղղում մասնավոր անձանց և զանազան կազմակերպությունների՝ նորաստեղծ դպրոցի մատենադարանի համար գրքեր ձեռք բերելու, նյութական միջոցներ տրամադրելու, ինչպես նաև իրենց ավելորդ գրքերը նվիրաբերելու հարցերով, նույնանըման բովանդակությամբ հոդվածներ է առաքում տարբեր խմբագրություններ։ «Եթե կուզենք, որ հայը միշտ մնա հայ՝ պարտավոր ենք նորա ձեռքեն հայերեն գիրքը անպակաս անելու,—գրում է նա այդ օրերին «Արձագանք»-ի խմբագրությանը։—Գրականություն ունեցող ազգը երբեք չի կորչիլ աշխարհիս երեսեն։ Եկեղեցին և թատրոնը գրականության ջոկ-ջոկ ճյուղեր են։ Մատենադարանը ազգի և գրականության համար այն է, ինչ որ է բերդը պատերազմող և սահմանները պաշտպանող զորքի համար... Հիմնենք և բազմացնենք հայկական մատենադարանները. այս բանը մի փոքր ավելի հուսալի և ապահով է, քանց վեհաժողովներից հայ ազգի համար արտոնությունների փշրանքներ մուրալը...» (V, 350)։

Շուտով Պատկանյանի ոգևորությունը սկսում է տալ իր շոշափելի արդյունքները. զարմանալի արագությամբ ավելանում է աշակերտների թիվը, մեծանում են արհեստանոցները, ստեղծվում գրադարան և գործիքների պահեստ։ Ինքը՝ տեսուչը ստանձնում է հայոց լեզվի և աշխարհագրության դասերը և նկատելով երեխաների մտավոր ծայրաստիճանի անզարգացությունը, ձեռնարկում է նրանց համար հատուկ դասագրքերի

21—907

ստեղծման գործը, որոնք պիտի օգնեին մանուկներին արագ տիրապետելու մայրենի այբուբենին («Այբբենարան հնչական ձևով») և դյուրըմբռնելի նախադասություններով ընկալել այնպիսի գիտելիքներ, որոնք նրանք պիտի իմանային դեռևս մինչև դպրոց հաճախելը։ Ավելի բարձր դասարաններում (դպրոցն ուներ 3 դասարան) երեխաներին ընդհանուր պատկերացում էր տրվում աշխարհագրության, պատմության և քերականության վերաբերյալ, ինչպես նաև սովորեցվում թվաբանական չորս գործողությունները։

Դառն աղքատության մեջ մեծացած, օրինավոր սննդի, հագուստի ու կոշիկի մասին պատկերացում չունեցող երեխաները դպրոց մտնելով սկսում էին աստիճանաբար կերպարանափոխվել, հաճույքով պարապել արհեստանոցներում, հեգելով կարդալ առաջին նախադասությունները մայրենի լեզվով։ «Տվե՛ք մեզ մեծակառույց ու ընդարձակ շենք, որպեսզի քաղաքիս միջի ո՛չ մի ճայ տղա անուսումն և անայցել չմնա, և դուք կտեսնեք, որ հայի թարմ ուժերը և հազվագյուտ քանքարները, որ այս վայրկենիս անօգուտ կորչում են փողոցների փոշիի, ցեխի և ուրիշ անվայել տեղերումը, կուղղվին դեպի անհատի ապագա բարօրությունը և հասարակության բարոյական և նյութական բարգավաճմանը» (V, 339),— իր բազմաթիվ բաց նամակներում Պատկանյանը շարունակում էր հորդորել և խրախուսել հայ հասարակությանը, երազելով արդեն քաղաքի բոլոր աղքատ մանուկներին դպրոցի մեջ ընդգրկելու մասին։

Չնայած արհեստագործական դպրոցի գործերը համարյա ամբողջությամբ կլանել էին Պատկանյանի ուշադրությունը, սակայն ոչ մի օր չդադարեցնելով ստեղծագործական աշխատանքները, նա 1880 թ. աշնանային օրերին դրեթե մեկ ամսվա ընթացքում, սեպտեմբերի 28-ից մինչև նոյեմբերի 8-ն ընկած հատվածում, ավարտում է Արծրունու քաղաքացիական ամուսնության դեմ ուղղված «Աստառ» կատակերգությունը։ Ըստ սովորության, պատրաստի աշխատանքը ուղարկելով Պետերբուրգ և ստանալով Քերովբե Պատկանյանի հավանությունը, նա կատակերգության երկու օրինակներ հասցնում է Սունդուկյանին, մեկը բեմադրության հարմարեցնելու և մյուսը Աբգար Հովհաննիսյանին հանձնելու համար։ Պետերբուրգի հայ համայնքը նույնպես դատապարտում էր Արծրունուն և անհամբերությամբ սպասում կատակերգության ավարտմանը, հայ հասարակության համար այդքան վտանգավոր արարքը հրապարակորեն մերժելու, անարգանքի սյունին գամելու մտադրությամբ։

Սակայն, երբ Պետերբուրգում «Աստառ»-ը արժանացել էր ընդհա-

նուր հավանության, ապա նրա անմիջական պատվիրատուները Թիֆլիսում հնարավոր չհամարեցին այն ոչ բեմ բարձրացնել և ոչ էլ լույս աշխարհ հանել, քանի որ հեղինակը պասկվիլային բնույթ տալով իր ստեղծագործությանը, զրկել էր նրան այն ուժից և ներգործուն հնարավորություններից, որ կարող էր ունենալ գեղարվեստական երկը։ Եթե «Աստառ»-ը բեմ բարձրանար, կամ տպագրվեր, անկասկած, Գրիգոր Արծրունին և Մարիամ Մելիք-Ազամալյանը կսկսեին համակիրներ վաստակել հասարակության մեջ, իսկ հեղինակն ու դրական պերսոնաժները կարժանանային պարսավանքի։ Եվ փոխանակ դառնալու նրանց «բարոյական մահու դատակնիքը», «Աստառ»-ն ինքը բարոյական մահվան պատճառ կդառնար հեղինակի, բեմադրողի, դերակատարների և հրատարակչի համար։ Այսպիսով քաղաքացիական ամուսնության դատապարտումը կծառայեր նրա արդարացմանը։

Զգալով այս ամենը Սունդուկյանը առաջինն է ետ կանգնում իր որոշումից և նույնը խորհուրդ տալիս մյուս համախոհներին։ Անգամ բժիշկ Քոչարյանը, որ երազում էր վրեժ լուծել իր ամենասուրբ զգացմունքները վիրավորողներից և ընդամենը մի քանի ամիս առաջ հորդորում Պատկանյանին դատապարտելու քաղաքացիական ամուսնության գաղափարը, հրաժարվում էր իր մտադրությունից։ «Մշակ»-ի և մշակականության ամենակատաղի հակառակորդը՝ «Մեղու Հայաստանի»-ի խմբագիր Պետրոս Սիմեոնյանը նույնպես խուսափում է իր պարբերականում տեղ տալ «Աստառ»-ին, իսկ Աբգար Հովհաննիսյանը բավարարվում է «Փորձ»-ի խմբագրությունում այն կարդալով։

Կարծես ուրախանալով, որ «Աստառ»-ը չպիտի բեմադրվի ու տպագրվի, Պատկանյանը անհապաղ ետ է պահանջում կատակերգության բնագիրը և այն տպագրելու այլևս ոչ մի փորձ չի ձեռնարկում, մինչդեռ «ռուսական բարկության ծնունդները»՝ «Պամպուլիոս»-ը և «Գիրքօր Կայափան»-ն տպագրելու համար նա պայքար էր մղում մի քանի ամիս շարունակ։

* * *

Հետևյալ տարին Պատկանյանի համար բերեց մի շարք ստեղծագործական նախագծեր։ Դա և՛ «Մեր տեղի ծակլաբուները» պատմվածքն էր, և՛ «Անիի առում»-ը պատմական դրաման, և՛ «Հայոց պատմություն», և՛ «Մայրենի բարբառ» դասագրքերի պատրաստման գործը, և՛, վերջապես, դեռևս աշակերտության տարիներից սկսած «Ռուսահայերեն բառարան»-ի վերջնական խմբագրման աշխատանքները։ Թեև հիշյալ բոլոր

գործերը նա ձեռնարկել էր միաժամանակ, ինչպես միշտ սովորություն ուներ անելու, սակայն նրանցից հատկապես երկուսը՝ «Մեր տեղի ծակլաբունները» և «Անիի առում»-ը համարյա ամբողջությամբ կլանեցին հեղինակի ուշադրությունը։

«Մեր տեղի ծակլաբունները» ըստ էության «Ազատ երգեր»-ի արձակ շարադրանքն է, որտեղ հրապարակախոսական կրքով շարունակվում էր տարիներ առաջ սկսած ազգովին ազատության դատին ներգրավվելու պրոպագանդը, նշավակվում Բեռլինի վեհաժողովի «կապուտ-կողոպուտին» մասնակցած բոլոր մեծ տերությունները, երգիծաբանական փայլուն վարպետությամբ ծաղրվում այս օրհասական ժամին իրենց սրբազան պարտքից խուսափողները, հատկապես խարազանվում ազգի փողատերերն ու պետական բարձր պաշտոնյաները, որոնք իրենց անձնական բարօրությունը գերադասեցին հայրենիքի ազատությունից։ Իր այս ստեղծագործության մեջ Պատկանյանը առաջին անգամ անդրադարձավ համայն հայության մեկ ընդհանուր շահի՝ համազգային օրենքի ստեղծման անհրաժեշտությանը, որը կկարողանար միաձուլել աշխարհով մեկ սփռված, տարբեր տերությունների հովանու տակ ապրող, տարբեր իդեալներ ունեցող ժողովրդին։ «Շատ տխուր էի այն օրը,—սկսում է Պատկանյանն իր պատմվածքը, Բեռլինի վեհաժողովից հետո իրեն պատահած խոհերի նկարագրությամբ,—Տաճկահայաստանի կորիզը, Տաճկահայաստանի բունը—Վանը հայերիս ձեռքեն գնում էր. մեր միակ հոգեկան մխիթարությունը, միակ հույսը, որ հայերիս անտեսանելի և անքակտելի կապերով միացնում էր այս կյանքի հետ, մեր պատմական ահագին ժառանգությունից մնացած փոքրիկ սուրբ նշխարը խլում էին մեր ձեռքից, և ոչ ոք կարեկից չէր մեզ։ Արշավանքը Տաճկաստանի վրա թեև մեծամեծ և ազնիվ խոստումներով էր սկսված, բայց փայ-բաժինը շատ անարդարությամբ էր կատարվում. այստեղ անգլիական առյուծը Կիպրոս էրեն հափշտակած, թաթի տակ առած մռնչում էր. այնտեղ ավստրիական միագլուխ արծիվը Բոսնիան ու Հերցեգովինան մագիլներու մեջ ամուր բռնած ծվատում էր ...Ո՛չ մի ավազակախումբ այնպիսի լրբությամբ իրա մեջ բաժանած չէր կապուտ-կողոպուտը, որքան որ այս նորատեսակ խաչակիրների ոհմակը բաժանում էր օր-ցերեկով, փող ու թմբուկների ձայնով յուր կատարած հափշտակությունը։ Իսկ տաճկահայերս, թշվառ հայերս, այդ միջոցին, դռնե դուռն ընկած... մեր պապերու թողած ժառանգության ամենափոքրիկ մաս էինք խնդրում, ու մեզ չէին տալիս. ո՛չ միայն չէին տալիս, այլև ծիծաղում էին մեր պարզամտության վրա. ո՛չ միայն ծիծաղում էին, այլև կասկածում էին, որ մենք, այժմվա հայքս,

հարազատ որդիք լինեինք մեր նախնյացը՝ Հայկերին, Արամներին, Տիգրաններին, Վարդաններին, Սմբատներին, Աշոտներին...» (III, 208, 209)։

Այնուհետև նրա աչքերի առջև երևում են թալանված ու ավերված հայրենիքի արյունաշաղախ գյուղերն ու քաղաքները, նրա փոշիապատ ճանապարհներով քայլող բյուրավոր քաղցած ու մերկ իր ազգակիցները, մնացող բերրի դաշտերն ու անտեր թողած այգիները։ Եվ հեղինակի սրտից անեծքի ու վրդովմունքի շիթեր են ժայթքում Բեռլինի վեհաժողովի բոլոր անդամների հասցեին, որոնք կույր ու խուլ մնալով հայ ժողովրդի տառապանքների հանդեպ, դատապարտեցին նրան ոչնչացման։

Հանկարծ անշշուկ, անձայն նրա կողքին հայտնվում է մի կտրիճ երիտասարդ, որին նա դեռևս իր մանկության օրերին տեսել էր ճեմարանում, պատանեկության ժամանակ՝ համալսարանում, իսկ երիտասարդության պահին՝ մայրաքաղաքում։ Այդ երիտասարդը հայ ժողովրդի ազատագրական պայքարի ոգին էր՝ Մասիսի Քաջը, որը հրամայաբար պահանջում է դադարեցնել բողոքներն ու անեծքները և, փոխանակ ողորմություն մուրալու, ազգովին ոտքի ելնելու իրենց ազատությունը նվաճելու համար։ «Ազատությո՞ւն» ես ասում,—գոչում է Մասիսի Քաջը»— ո՞վ, ե՞րբ, ո՞րին տվել են ազատություն։ Թող գիտենան Տաճկահայաստանի հայերը. ազատությունը երբեք չի շնորհվիլ. նա կամ կխլվի քաջությունով, կամ կվաստակվի ջանք ու ճիգով։ Շնորհված ազատությունը, ինչպես և ժառանգությամբ ստացած փողը, շատ վատ գնահատվում է և շատ շուտ կորցվում է» (III, 213)։

Եվ Մասիսի Քաջը կերպարանափոխվելով ու դառնալով Վանի կողմերից եկած մի աղքատ վարդապետ և բռնելով հեղինակի ձեռքը մի պտույտ է կատարում քաղաքում, այցելում մի քանի անվանի հայերի տներ, որոնք տեղն եկած ժամանակ չեն զլացել խոսել հայրենիքի ազատության մասին, խոստումներ տալ, ճառել, իսկ հիմա օգնություն խնդրող ծնրումի վարդապետին համարյա վռնդում են իրենց ճոխ տների դռներից, նրա հետ միասին նաև իրեն, բանաստեղծին։

Եվ ցավով ու դառնությամբ հասկանում է բանաստեղծը, որ հայը դեռևս ազգ չի դառել, չունի համազգային շահ, չունի հաստատ համոզմունք. «Ի՞նչ է նշանակում ազգ։ Ազգ նշանակում է միաձև զարգացած, մի համոզմանց տեր, մի շահով կապված, մի օրենք հարգող մարդիկ։ Ե՞րբ հայերը միաձև զարգացել են, ո՞ր ընդհանուր երկրում, ո՞ր ընդհանուր դպրոցում, ո՞ր ընդհանուր պայմանների տակ։ Ո՞րն է հայերի համոզմունքը, որն լինի ընդհանուր ամեն մի հայի. ո՞րն է ճշմարտությունը, որն իբրև կրոն խոստովաներ ամեն մի հայ. ո՞րն է այն շահը,

որն ամեն հայի դեպ իրար ձգեր և միացներ... Ո՞րն է հայի ազգային հատկությունը. ի՞նչ է հայի կոչումը. ո՞րն է հայի ծրագիրը, որպիսի դրրոշակի տակ հայը կժողովվի...» (III, 232)։

Ջափաղանց բնորոշ էր նաև պատմվածքի վերնագիրը «Մեր տեղի ծակլաբունները» (трущобы), որտեղ ներկայացված են հոգով, սրտով, ձգտումներով աղքատ-հարուստների նոր ապարանք-ծակլաբունները, որտեղ ոսկինրի զրնգոցները խլացնում են ամեն տեսակ այլ ձայներ, անգամ թույլ չտալով նրա բնակիչներին լսելու հայրենիքից եկող աղեկտուր օգնության ճիչը։

Նույնանման տրամադրություններ էր արտահայտում նաև հայոց միջնադարի պատմությունից վերցված «Անիի առում»-ը դրաման, որտեղ պատմական թատերաբեմ փոխադրելով ազատագրական պայքարի գաղափարը, հեղինակը դարձյալ բարձրացնում է այդ շրջանում իրեն հուզող խնդիրները, հայ ժողովրդի համար մեկ միացնող շահ, մեկ ընդհանուր օրենք ստեղծելու անհրաժեշտությունը, ազատագրական պայքարի նկատմամբ հայ բարձրաստիճան պաշտոնյաների ու փողատերերի բռնած անտարբեր դիրքը, հայազգի վարչապետ ունենալու կարևորությունը։ Անկասկած սրանք այն հարցերն էին, որ հուզում էին «Հայասեր-Ազգասեր» խմբակցության անդամներին (հիշենք Նուբար փաշային, ապագա հանրապետության վարչապետ դարձնելու նրանց նախագիծը), և որոնք անհրաժեշտ էր արծարծել ժողովրդի մեջ բանաստեղծությունների, վիպակների, թատերական ներկայացումների միջոցով։

Հայրենիքի կործանման հիմնական պատճառ համարելով հայ ազգի իշխանների, նախարարների մեծամասնության դավաճանական ազգադավ գործունեությունը, Պատկանյանը դրան հակառակ փառաբանում է հասարակ ժողովրդի քաջությունն ու անշահախնդրությունը՝ հանուն ազատագրման զոհվելու նրա պատրաստակամությունը։ «...Համոզված եմ, որ քանց հայ նախարարյանը և հայ մեծատունները, Հայաստանը ավելի վտանգավոր թշնամի չունի...» (III, 463), բացականչում է դրրամայի դրական հերոսներից մեկը և ազատագրական պայքարի հույսը կապում Անիի արհեստավորների ու շրջակա գյուղերի շինականների հետ, որոնք նույնքան կեղեքվում էին իրենց նախարարներից, որքան և օտար բռնակալներից։

Քանի որ պատմահերոսական դրամայում Պատկանյանը դժվարանում էր արտահայտել իր հիմնական մտահղացումը, ուստի նրա հետ միաժամանակ փորձում էր այն տեղադրել արձակի իր նախասիրած ձևի՝ վիպակի մեջ և գործողությունը միջնադարից տեղափոխել դարձյալ

իր օրերը։ Ահա այդպես հեղինակի մոտ ծնունդ է առնում «Տիկին և նաժիշտ» փիեսի նախագաղափարը, որտեղ հիմնականում պիտի ներկայացվեր հայ փողատերերի, հայ «ավագանու» բռնած դավաճանական դիրքը ազգային հարցի և ընդհանրապես հայության նկատմամբ ու դրվատանքի ենթարկվեր հասարակ ժողովրդի ծոցից ելած նրա զավակների անձնազոհությունը, բարոյական բարձր արժանիքները, հայրենասիրությունը։ «Ժողովրդի աղքատ դասակարգը ամենայն ինչ բերում է զոհ—և՛ յուր կոպեկները, և՛ ցնցոտի լաթերը, և՛ ... հարազատ զավակների (յուր միակ կերակրողի) արյունը։ Իսկ մեր հարուստնե՞րը... է՛հ, ի՛նչ խոսեմ մեր հարուստների վրա, երբ դուք ինքներդ շատ լավ գիտեք, թե ի՞նչ է նշանակում հայի հարստությունը, այսինքն՝ միշտ (գործից) անբարոյականության, ապականության, անառակության... Տխրալի՛ պատկեր» (VIII, 188), հավատարիմ մնալով իր համոզմանը տարիներ անց նա գրել է իր նամակներից մեկում։

Այս անգամ ևս հեղինակի մտապատկերները նրան տարան դեպի իր երիտասարդության օրերը, և նա որոշեց վիպակում պատկերել անցյալ տարիների մտերիմ բարեկամ Գևորգ Քանանյանի կյանքի դրաման, իր մտումի համաձայն լուծելով նրա հանգուցային կետերը։

50-ական թվականներին Ղզլարից Մոսկվա ուսանելու եկած, չքավոր ծնողների զավակ Գևորգ Քանանյանը Մոսկվայի հայկական եկեղեցու քահանա Մովսես Ալամխանյանի միջնորդությամբ ոտք է դնում Մոսկվայում հայտնի հայ վաճառական Հովհաննես Հովնանյանի (Անանով) տունը որպես նրա դստեր՝ Վառվառեի տնային դաստիարակ։ Շուտով Գևորգը և Վառվառեն կապվում են միմյանց բուռն սիրով, շարժելով միլիոնատեր աղայի կատաղությունը, որը վռնդելով տնից Քանանյանին, աղջկան բռնի կերպով ամուսնացնում է պետերբուրգաբնակ մեկ այլ հայ հարուստի՝ հանրահայտ Աղաթոն Աքիմյանի որդի Նիկողայոսի հետ։

Ամուսնությունից անմիջապես հետո իր վիճակի հետ ոչ մի կերպ չհամակերպվող Վառվառեն մի քանի անգամ փորձեր է անում փախչել ամուսնուց. վերադառնում է հայրենական տուն՝ Մոսկվա, որտեղ ապրում էր իր սիրեցյալը, և ամեն անգամ ետ էր տարվում արցունքով, բռնությամբ ու սպառնալիքներով։ 1860-ական թվականների վերջերին, արդեն երկու երեխաների մայր դառնալուց հետո, իր հետ վերցնելով երեխաներից մեկին և վերջնականապես խզելով կապերը չսիրած ամուսնուց, Վառվառեն հաստատվում է հոր տանը, դարձյալ հանդիպումներ փնտրելով Քանանյանի հետ։ Բնականաբար այս աննախադեպ իրադարձությունը մեծ իրարանցում և անբավականություն է առաջ բերում հայ-

կական շրջաններում, որտեղ միաժամանակ մեղադրվում էր և՛ Հովհաննես Հովնանյանը, որ հանուն հարստության զոհ բերեց աղջկա ապագան, և՛ պախարակվում անհնազանդ, հանդուգն աղջկա արարքը, որակվելով այն որպես անբարոյականություն[14]։

Քանանյանի սիրավեպի բուռն տարիներին հեռու լինելով իր ընկերոջից և Վառվառեին ավելի ծանոթ լինելով Աքիմյանների պատմածներից (Վառվառեի ամուսինը՝ Նիկողայոս Աքիմյանը Քերովբե Պատկանյանի կնոջ եղբայրն էր), Ռափայել Պատկանյանը նույնպես լավ համարում չուներ տառապյալ կնոջ վերաբերյալ, նրա «կամակոր» բնավորության մեջ տեսնելով իր ընկերոջ դժբախտության հիմնական պատճառը[15]։

Վիպակի հիմքում դնելով հիշյալ պատմությունը Պատկանյանը ըստեղծում է ազգասիրական ամեն զգացումից զուրկ, միայն անձնական շահի մասին մտածող ազգատյաց և փառամոլությամբ տարված հայ փողատեր վաճառական Ասատուր աղայի և նրա դստեր՝ կամակոր ու բարոյականության ոչ մի սկզբունք չունեցող ծաղրանկարային, գրոտեսկային կերպարները և որպես դրանց հակոտնյաներ պատկերում ազնիվ, բայց աղքատ ուսանող Վարդանին ու նույնքան բարձր մարդկային հատկանիշներով օժտված հասարակ աղախին Կատյային։

Ինչպես իր նախորդ երկու վիպակներում, այնպես էլ այստեղ իրական փաստը օգտագործելով միայն վիպակի առանցքն ստեղծելու համար, հեղինակը նկատելիորեն հեռացել էր իր բացասական և դրական հերոսների նախատիպերից, օժտել նրանց, համաձայն իր միտումի, զանազան հատկանիշներով և դարձյալ նրանց օրինակով խուսափել ազատագրական պայքարի ուղղակի պրոպագանդից, այլ աշխատել լոկ մարդկային հատկանիշներով պատկերել այս կամ այն դասակարգի հայ ներկայացուցիչներին։

Ամենայն հավանականությամբ, նախնական մտահղացմամբ վիպա-

---

[14] Այս անցքերին 1859 թվականին անդրադարձել էր նաև Միքայել Նալբանդյանը իր «Մեռելահարցուկ»-ում, ներկայացնելով ընչաքաղց վաճառական Հովնաթանյանի կերպարը, որը հանուն փողի կործանում է դստեր կյանքը, դատապարտելով նրան անառակության։ (Տե՛ս Մ. Նալբանդյան, ԵԼԺ, հ. I, Երևան, 1945, էջ 291—295)։

[15] Հետագայում, 1887 թ. անձնապես ծանոթանալով տիկին Վառվառեի հետ և մանրամասն տեղեկություններ ստանալով ամբողջ 25 տարի առաջ նրա և Քանանյանի անձնազոհ սիրո պատմության վերաբերյալ, Պատկանյանը դառնում է տիկնոջ անձնվիրության անկեղծ հիացողներից մեկը, անձնապես կաթողիկոսի միջնորդությամբ գլուխ բերելով նրա ապահարզանի դժվարին գործը։ Նույն՝ 1887 թ., Պատկանյանը Վառվառեի և Գևորգի սիրո պատմությանն է ձոնում իր «Տեսչություն վերին» բանաստեղծությունը՝ նրանց կապը համարելով վերին տնօրինության սուրբ արգասիք

կի գաղափարական առանցքը պիտի այլ բնույթ ունենար, դրական հերոսը՝ Վարդան-Քանանյանը պիտի արծարծեր ժամանակաշրջանի այնպիսի այրող քաղաքական խնդիրներ, որպիսիք կրում էին իրենց մեջ նրա «Ազատ երգեր»-ը և դրանց հաջորդած տարիներին գրած մյուս ազատաբաղձ բանաստեղծությունները։ Սակայն աշխատանքի ընթացքում շեղվելով հիմնական հարցադրումից և սահմանափակելով իր առջև դրված խնդիրները, Պատկանյանը վերադարձել է իր նախորդ վիպակների պրոբլեմներին՝ հայ մարդու լավ ու վատ հատկությունների պատկերմանը։

Այս հանգամանքը, անշուշտ, կապված էր նրա ստեղծագործական առանձնահատկությունների հետ. նա ավելի բանաստեղծ էր, քան արձակագիր և չափածո գործերում ավելի ճիշտ ու դիպուկ էր կարողանում արտահայտել ինքն իրեն՝ իր ձգտումները, երազանքները, համոզմունքները, կարողանում էր անմիջապես արձագանքել ժամանակաշրջանի ամենահրատապ հարցերին։ «Տիկին և նաժիշտ»-ի հետ համարյա միաժամանակ ստեղծած «Ամպամած Մասիս», «Տաճկահայերի օրհաս», «Երդումն» բանաստեղծությունները, որոնք նվիրված էին Կարինի հեղափոխական կազմակերպության 400 անդամների ձերբակալմանը, և որոնց տպագրումը հնարավոր եղավ միայն «Ազատության ավետաբեր» անլեգալ պարբերականում, կոչ էին անում համայն հայությանը ոտքի ելնել արյան գնով բաղձալի ազատությունը նվաճելու համար, հորդորում թողնել ամեն մանր հաշիվներ, անձնական կրքեր, դավանաբանական վեճեր, առօրյա հոգսեր, չսարսափելով բանտից, կախաղանից՝ համարձակ մխրճվել պայքարի մեջ.

Ահա՛ իմ սուրը, որ ձեռքիս ցոլաց,
Էլ նա չի մտնիլ վերըստին պատյան,
Մինչև չի դադրի հայի սուգն ու լաց,
Մինչև չազատվի ըստրուկ Հայաստան։

Գիտեմ, իմ առջև կան մեծ-մեծ վըտանգ—
Բանտ, շըղթա, դան, թույն, սուր ու կախաղան,
Դահիճ, արհավիրք, անգութ կըտկըտանք,
Բայց իմ այս երդումն անհողդողդ կմնա։

. . . .

Կըրկին ու կըրկին շրթունքն իմ կերդնում,
(Թո՛ղ երդնու ինձ հետ ազգը հավիտյան)
Չըտալ դուլ դադար անդուլ թշնամուն,
Մինչև չազատվի մայր մեր Հայաստան (I, 180, 181)։

Այդ էր պատճառը, որ հեղինակը ավարտելով վիպակը և դժգոհ մընալով ինքն իրենից, դառնությամբ գրել է. «Ես ուզեցի քանի մի անձանց պատկերներ նկարել *(ընդգծումը մերն է—Մ. Ս.), ուզեցի կենդանի մարդիկ դուրս բերել և ի՞նչ դուրս եկավ... Այս նկարված մարդիկս այնքան նման են իրենց նախագաղափարին, որոնք երևակայությանս մեջ էին, որքան փողոցի ստահակ երեխաների ձյունե շինած արձանները նման են այս կամ այն թագավորին, որոնց պատկերը կամեցել էին արտաբերել նոքա... Ինչևիցե։ Այս կոշտ էսքիզներս էլ կարող ես հասկանալ միտքըս...» (VII, 106)։*

* * *

Ստեղծագործական աշխատանքների, արհեստագործական դպրոցի կառավարման ու մանկավարժական աշխատանքների հետ մեկտեղ Պատկանյանը այս տարիներին դարձյալ շարունակում է գործուն մասնակցություն ցուցաբերել քաղաքի հասարակական աշխատանքներին՝ ծրագրեր պատրաստում և հանդես գալիս զանազան հարցերի նվիրված նյութերով ուրբաթ օրերին կազմակերպվելիք երեկոներին, օգնում ստեղծվող թատերասիրական ընկերությանը, մամուլում տպագրում հոդվածներ հիշյալ հարցերի մասին։

Գրական երեկոներին արտասանած ճառերից մեզ են հասել «Ազգապահպանման միջոցների մասին»-ը (V, 414), որտեղ բանախոսը կոչ է անում երիտասարդությանը նվիրվելու ազգին բարոյապես ծառայելու գործին, որովհետև ժողովուրդը ազգ է դառնում միայն մշակութային կյանք ունենալուց հետո։ Հարստանալու տենչը, անձնական շահը հասարակականից վեր դասելը դեպի կործանում կտանի հայությանը. մեզ պետք են դպրոցներ, լրագրեր, տպարան, թատրոն, մեզ պետք են այդ գործին նվիրված անձնվեր մարդիկ։ Երբ Բեռլինի վեհաժողովում մեր ներկայացուցիչները ներկայացնում էին իրենց ազգը, նրանք առաջին հերթին նշեցին նրա մշակութային գործունեությունը և ոչ թե փողատերերի ունեցած գումարների չափը, ազգը ազգության անուն ստացավ մի քանի ազնիվ, աղքատ, անձնուրաց երիտասարդների աշխատանքի և անվան համար։ Ուրեմն ամեն հայ մարդ պիտի առաջին հերթին ձգտի այս

կամ այն ձևով մասնակից լինել ազգային կյանքին։ Քանի որ աշխարհով մեկ սփռված հայությունը հնարավորություն չունի իրար հետ կապվելու տնտեսական շահով, տնտեսական միությամբ, իսկ ազգ դառնալու համար առաջնահերթ պայմանն է միասնական շահը, ուրեմն այդ կապող օղակը պիտի լինի հայ մշակույթը, որի ստեղծմանն ու զարգացմանը պիտի իրեն նվիրի ամեն մտածող հայ մարդ։

Մյուս ելույթները նվիրված են քաղաքում թատերասերների ընկերության հիմնադրմանը, ազգային կրթության անհրաժեշտությանը, որտեղ հեղինակը դարձյալ անդրադառնալով այդ տարիներին իրեն զբաղեցնող հարցին՝ համազգային մշակույթ ստեղծելու անհրաժեշտությանը, ունկնդիրներին հորդորում է մասնակցություն ցուցաբերել այդ մեծ գործին։

Զբաղվարարվելով միայն փոքրաթիվ ունկնդիրների շրջանակով, բանաստեղծը աշխատում է հիշյալ հարցերը մամուլի միջոցով լսելի դարձնել բոլորին և զգալով «Մշակ» թերթի առավելությունը ինչպես լայն տարածման, այնպես էլ հարուցված խնդիրները ժամանակին տպագրելու հարցում, մի կողմ թողնելով խմբագրի հետ ունեցած գժտությունները, ձեռք է մեկնում նրան, «նորից իր գրիչը զլեցնելով «Մշակ»-ի համար» (VII, 91)։ «Մշակ»-ում տպագրելով Ն. Նախիջևանում «Պեպո»-ի բեմադրության առթիվ գրած իր դրախոսականը, Պատկանյանն ի պատասխան Սունդուկյանի անբավականության, ջանում է բացատրել նրան իր այդ քայլի շարժառիթները, դժգոհում «Մեղու»-ից նրա դանդաղկոտության և սահմանափակության պատճառով։ «...Մինչև որ նա իմ որևէ՛ երկտող բանը արժանացնում է տպի՝ հարուցած խնդիրս վաղուց արդեն յուր հարմար միջոցը կորցնում է և մտնում է ի շարս ջրալի հոդվածներին, որոնք տպագրության «дальность» են և ո՛չ թե «թրթռուն հարց», բոլորովին ջոկ բան է «Մշակ»-ի վարմունքը... նա յուր գործը շատ ճարպկությամբ առաջ է տանում... Իսկ վերջին հոդվածս «Մշակ»-ի մեջ զետեղելով, ներե՛ խորամանկությանս, ես ուզացի Ձեզ մի փոքրիկ ծառայություն անել. ջոկ բան է լսելի լինել 2—3 հարյուր մարդոցմե, ջոկ բան է 1—2 հազարե» (VII, 92)։

Նա ոչ միայն լոկ հոդվածներ է տպագրում «Մշակ»-ում, այլ կարծես իր մեղքը քավելու համար, դարձյալ իր հոդվածներում գովաբանում Գրիգոր Արծրունու ազգօգուտ գործունեությունը, հայ մշակույթի զարգացման համար նրա մատուցած մեծամեծ ծառայությունները։

Խոսելով Ն. Նախիջևանում մշտական թատերական խումբ և թատրոնի հարմարավետ շենք ունենալու անհրաժեշտության մասին, Պատ-

կանյանը հիացմունքով նշում է Գրիգոր Արծրունու կատարած ևս մի մեծ գործը՝ իր անձնական միջոցներով հայկական թատրոնի համար շենք կառուցելը Թիֆլիսում (V, 345), մենակ արեց այն, ինչ չի կարողանում, կամ ավելի ճիշտ չի ուզում անել տասներկու հազար բնակչություն ունեցող մի քաղաք։ Իսկ հայկական թատրոնի շենքը կապահովի թատերական մշտական խմբի հաստատուն գոյությունը, որը ազգի մտավոր զարգացման ցուցանիշն է։ Այն ժողովուրդը, որն ունի կանոնավոր ազգային կրթության օջախներ, ունի գրականություն, ունի մամուլ և ազգային թատրոն, նա իրավունք է նվաճում ազգ կոչվելու։

Այդ միտքն էր արծարծում նաև Ստեփան Պալասանյանին նվիրած «Հայ վարժապետ» բանաստեղծության մեջ, հայ վարժապետին, դերասանին, գրողին և մշակույթի մյուս գործիչներին համարելով ազգապահպանության հզոր սյուներ, որոնց երախտիքը մի օր պիտի կազմի ապագա հայրենիքի հիմքը։

Սակայն 1882 թ. վերջերին կայացած Կարինի «Պաշտպան Հայրենյաց» կազմակերպության ցույցը և նրա 400 մասնակիցների ձերբակալության լուրը այլ ընթացք տվին Պատկանյանի մտքերին։ Կարինում տիրող մարտական մթնոլորտը մեկ անգամ ևս գալիս էր ապացուցելու հայերի պայքարելու կամքը, նրանց մարտունակությունը, գալիս էր հաստատելու, որ նրանք կարող են աներկյուղ նայել մահվան աչքերին, զոհել կյանքը հանուն վերականգնելիք Հայաստանի, գալիս էր մեկ անգամ էլ ասելու, որ հույսը չի մարել հայ ազգի սրտում։

Եվ իրար ետևից ստեղծվեցին «Զոհեր»-ը, «Տաճկահայերի օրհաս»-ը, «Երդում»-ը, «Փեսաներ»-ը, Ն. Նախիջևանի բարբառով գրված «Հօս ու հօն»-ը, որոնք, ինչպես և երեք տասնամյակ առաջ ստեղծված ոտանավորները՝ կանչում էին բոլորին, համայն հայությանը՝ հարուստին, աղքատին, գիտնականին, հողագործին, աշխարհականին, հոգևորականին, կանգնելու հայրենիքի ազատության սուրբ դրոշի տակ, մի կողմ թողնելով դասակարգային կրոնական, անձնական ներհակությունները, առանց վարանելու գնալ դեպի մահ.

Գիտո՛ւն, թո՛ղ գիրքը, ժամ չէ՛ կարդալու,
Գեղջո՛ւկ, դու էլ թո՛ղ եզներն ու գութան,
Տեր-հայր, դադարե՛ մեռել թաղելու,
Երկունքի մեջ է մայր մեր Հայաստան...
Երկունքի մեջ է Հայաստան աշխարհ,

Մեզ պիտի շնորհե մի նոր գոյություն,
Փափաքով սպասած ամենես շատ դար
Հայոց աշխարհի սուրբ ազատություն... (I, 176)։

Ուղարկելով Գաբրիել Սունդուկյանին «Տաճկահայերի օրհաս» և «Երդում» բանաստեղծությունները, Պատկանյանը խնդրում է նրան անել ամեն հնարավոր բան դրանք տպագրելու համար. «Որ լրագրի մեջ կամենաս՝ զետեղե «այս արձագանքը իմ սրտին», այն ուրախաբեր լուրի, որ տարածեցավ մեր կողմերը, անշուշտ և Ձեր» (I 307)։

Բանաստեղծի ոգևորությունն այնքան մեծ է լինում, որ մոռանալով իր անձնական վիրավորանքն ու վերջին շրջանի թշնամանքը Փիլիպոս Վարդանյանի հետ, առաջինը շտապում է հաշտության ձեռք մեկնել նրան, դարձյալ միասին աշխատելու (VII, 130)։

Սակայն ոչ հիշյալ երկու բանաստեղծությունները, ոչ էլ 1883 թվականի հետագա ամիսների ընթացքում ստեղծված «Կարապի երգս», «Փեսաներ»-ը, «Ջոհեր»-ը, «Նոր տարի»-ն գրաքննության արգելքի հետևանքով չտպագրվեցին ոչ մի պարբերականում և դարձյալ տարածվեցին բազմաթիվ արտագրությունների միջոցով։ Ստանալով «Փեսաներ» բանաստեղծությունը, Սունդուկյանը դառնությամբ հայտնում է Պատկանյանին. «Այս րոպեիս ստացա Ձեր 3-րդ բանաստեղծությունը, որով բոլորովին հափշտակեցիք սիրտս ու հոգիս. բայց ցավով պետք է հայտնեմ Ձեզ, որ նրան էլ սպասում է ցենզուրայի կողմից նույն վիճակը, որին ենթարկվեցին առաջին երկուսը, այսինքն ոչ մինի տպվելու հնարք չկա... Ահա մեր ճակատագիրը, մեզ հալածում են, մեզ տանջում են, մեր կաշին են պլոկում, կյանքը խլում և մեկ բառ անգամ արտասանելու իրավունք չեն տալիս»[16]։ Միայն մեկ տարի անց Մոսկվայի հայ ուսանողների հիմնադրած «Հայրենասերների միություն» անլեգալ կազմակերպությունը, որը սերտ առնչություններ ուներ ռուս հեղափոխական նարոդնիկության գաղափարախոսության հետ, իր «Ազատության ավետաբեր» անլեգալ պարբերականում տպագրեց առաջին երկու բանաստեղծությունները, իսկ Էջմիածնում գտնվող Արփիար Արփիարյանը Փիլիպոս Վարդանյանի միջնորդությամբ իր հետ տանելով «Փեսաներ», «Կարապի երգս» և «Հայ վարժապետ» բանաստեղծությունների արտագրություն-

---

16 ԳԱԹ, Գ. Սունդուկյանի ֆ. № 108։

ները, դրանցից առաջին երկուսը հրապարակ հանեց «Մասիս»-ի էջերում[17]*։*

«Ազատության ավետաբեր»-ը տպագրելով բանաստեղծությունները, կցել էր դրանց հետևյալ բացատրությունը. «Ընթերցող հասարակության մի մասը արդեն ծանոթ է, իհարկե, մեր ժամանակակից հայտնի բանաստեղծի երկու «չտպագրված» ոտանավորների հետ («Ազգային երգումն» և «Օրհաս»), որոնք հեղինակը նվիրում է Կարնո 400 բանտարկյալներին։ Մի ժամանակ ցենզուրան չէր արգելում դրանից էլ ավելի խիստ ոտանավորները, բայց Կարնո անցքերի ժամանակ, ինչպես և հիմա, ուրիշ քամի է փչում... և ցենզուրան արգելեց հիշյալ ոտանավորները։ Ցենզուրան արգելեց, բայց ձեռագրերը երկար ժամանակ ձեռից ձեռ պտտում էին հասարակության մեջ։ Թե ինչպես հայտնի գրողների կաբինետից դուրս եկած շարադրությունը տարածվում է հասարակության մեջ, ինչքան էլ որ արգելեն նրան, դա ամենին հայտնի է։ Հարկավոր ենք համարում մեր ձեռը գտնված օրինակները հրատարակել հեղափոխական ազատ մամուլի մեջ» (I, 309)։

Գևորգյան ճեմարանի ուսուցչության և աշակերտության շրջաններում «Փեսաներ» բանաստեղծության տարածման մասին պատմում է Փիլիպոս Վարդանյանը, էջմիածնից գրած իր նամակում. «Շնորհակալությամբ ստացա և մեծ զվարճությամբ կարդացի «Փեսաներ»-ը։ Ինչ տպավորություն որ ինքս ստացա այդ գեղեցիկ ոտանավորներից, նույնը ստացան իմ ընթերցանությունից հետո և բոլոր ընկերներս և աշակերտները. ձեր քնարի նոր արգասիքը հանկարծ բոլոր ճեմարանի սեփականությունը դարձավ.— այժմ նա արտագրությամբ բազմապատկվելով ման է գալիս ձեռքե-ձեռք և վստահ եմ, որ նա դեռ մեր շրջապատից էլ շատ տեղեր կերթա շրջելու»[18]*։*

Թիֆլիսի գրաքննական արգելքներից հետո Պետերբուրգում նույնպես դժվարություններ են ստեղծվում տպագրության իրավունք ձեռք բերելու հարցում, որովհետև Թիֆլիսի գրաքննչական կոմիտեն պաշտոնապես բողոք էր ուղարկել Պետերբուրգ, որ իր կողմից արգելված սեպարատիստական բնույթ ունեցող գործերը Պետերբուրգում տպագրու-

---

[17] *«Ներսես այստեղ էր պ. Հայկակի, մի համակրելի երիտասարդ է։ Երբ որ մոտս էր կարդացի «Փեսաներ»-ը, «Հայ վարժապետ»-ը և «Կարապի երգս»։ Այդ երեքն էլ նրա խնդրանոք արտագրեցի և օրինակները նա Պոլիս տարավ»,— գրել է Փիլիպոս Վարդանյանը իր 1884 թ. մայիսի 24-ին Պատկանյանին ուղղած նամակում (ԳԱԹ, ՌՊՖ, № 1129)։*

[18] *ԳԱԹ, ՌՊՖ, № 1129։*

թյան թույլտվություն են ստանում, և Քերովբե Պատկանյանը խնդրել էր Գաբրիել Պատկանյանին այդ մասին հայտնել և զգուշացնել որդուն. «Քերովբեն ասաց, թե Տփխիսու ցենզորն բողոքել է, թե մեր թույլ չտվածն Պետերբուրգ թույլ են տալիս, թե Քամառ-Քաթիպայի համար ասում են,— ապագայի անկախություն կքարոզե։ Ուրեմն զգույշ կեցիր, որդյակ, դարձելի ժամանակի հանդիպեցանք...»[19],— ծանուցել է Պետերբուրգից Հայր Պատկանյանը, խնդրելով միաժամանակ ընդմիջել վտանգավոր բանաստեղծությունների առաքումը Պետերբուրգ։ Զգալով, որ բանաստեղծությունները հնարավոր չէ լույս աշխարհ հանել, Պատկանյանը աշխատում է գոնե տպագրության հնարավորություններ ստեղծել «Տիկին և Նաժիշտ»-ի, «Մեր տեղի ծակլաբունները»-ի, «Անիի առումն»-ի համար, ուղարկելով դրանց արտագրությունները Աբգար Հովհաննիսյանին, Գաբրիել Սունդուկյանին, Սպանդար Սպանդարյանին, «Արձագանք»-ում կամ նոր կազմակերպվելիք «Նոր-Դար»-ում զետեղելու համար։

Սակայն հիշյալ գործերից հնարավոր է լինում «Արձագանք»-ում տպագրել միայն «Տիկին և Նաժիշտ»-ը, որի բուռն ընդունելությունից հետո «Արձագանք»-ի խմբագրությունն այն հրատարակում է նաև առանձին գրքով։ Իսկ «Նոր-Դար»-ը, չնայած Պատկանյանի ջերմ, համակրական վերաբերմունքին[20], աշխատակցելու պատրաստակամությանը, նրա առաջին համարներին ուղարկած իր բազմաթիվ գործերին («Տիկին և Նաժիշտ», «Մեր տեղի ծակլաբունները», «Անիի առումը», «Մեր նոր սերունդը», «Ստակ», «Մոնթեն մինչև վեր») մեծ դժկամությամբ էր տեղ տալիս համբավավոր հեղինակի գործերին, նույնիսկ հրապարակավ կոպտությամբ հայտնում իր մերժման մասին։ Այսպես, Պատկանյանի մի քանի մասնավոր հարցումներին, թե խմբագրությունը ստացե՞լ է «Տիկին և Նաժիշտ» վիպակի ձեռագիրը և մտադի՞ր է արդյոք տպագրելու, «Նոր Դար»-ը իր 1884 թ. №1-ում հրատարակում է հետևյալ պատասխանը. «Ռ. Պ.-ին. Դուք հարցնում եք ստացա՞նք Ձեր «Տիկին և Նաժիշտ» վեպիկը և կտպագրվի թե ոչ։ Ցավում ենք, որ հակառակ Ձեր գրություն-

---

[19] ԳԱԲ, ՌՊֆ, № 949։

[20] Աղնիվ բարեկամ պր. Ս. Սպանդարյան,—գրում է Պատկանյանը 1883 թ. դեկտեմբերին «Նոր-Դար»-ի առաջին համարը ստանալուց հետո,—եթե իմ կարծիքը կուզեիք իմանալ (իհարկե, մի թերթով պարբերության վրա գաղափար կազմելը և կարծիք հայտնելը անհնարին է) ես բացի լավեն ոչինչ չունիմ Ձեզ ասելու, և իմ հույսը Ձեր վրա այնքան մեծ է, որ կարծում եմ մյուս թերթերն օրեօր ավելի և ավելի ընտիր կլինեն։ Պետք է ջանալ, որ հավանեն ոչ միայն Ձեր բարեկամք, այլև նոքա, որոնք հուսահատած են հայերից մի որևէ օրինավոր բան ակնկալելու... Շնորհավորում եմ Ձեր գեղեցիկ ձեռնարկը, որի սկիզբը ինձ շատ ուրախացուց և մեծամեծ հույսերով լցուց (VII, 112, 113)։

ների, երկու ամսից հետո էլ պիտի ասենք, որ ստացանք, ուրեմն տպագրելու մասին էլ խոսք չի կարող լինել»։

Ի լրումն այս բոլորի, Ն. Նախիջևանի քաղաքային ինքնավարությունը պատճառ բռնելով արհեստագործական դպրոցում տեղի ունեցած աշակերտական ինչ-որ խռովություն և դպրոցի ղեկավարության կատարած որոշ չնախատեսված ծախսերը, առաջարկություն է մտցնում փակել դըպրոցը և տեսչին ստիպում է հրաժարվել իր պաշտոնից։ Այս անգամ բանաստեղծին հետապնդողների պարագլուխներից մեկն էր հոգևոր դպրոցի տեսուչ Գալուստ Ջաղըխյանը։ Հրավիրված լինելով Նախիջևան Լազարյան ճեմարանից, նորընտիր տեսուչը անհրաժեշտ համարեց լրիվ փոխել հոգևոր դպրոցի ուսումնական ծրագիրը, հարմարեցնելով այն կլասիկական գիմնազիաների դասընթացներին, դրանով արդեն տուրք տալով ռեակցիոն գործիչ Դմիտրի Տոլստոյի ռեֆորմներին, ըստ որի միակ լիիրավ դպրոցը Ռուսաստանում պետք է համարվեր կլասիկական գիմնազիան։

Հոգևոր դպրոցի բնույթի փոփոխման դեմ ծառացավ Ռափայել Պատկանյանը, հայ մանուկների համար պահանջելով ուսուցման ավելի գործնական ծրագիր՝ ավելորդ համարելով ժամանակի ոգուն չհամապատասխանող, միանգամայն անօգուտ հունարեն և լատիներեն պարապմունքների համար մայրենի լեզվի և գործնական առարկաների ժամերի կրճատումը։ Իրեն հատուկ կրքոտությամբ պաշտպանելով արհեստագործական և ռեալական դպրոցների անհրաժեշտությունը հայկական համայնքների համար, Պատկանյանն անխնա ծաղրի էր ենթարկում իր հակառակորդներին, թե՛ ոտանավորների, թե՛ ֆելիետոնների մեջ։ Այսպես ծնունդ են առնում «Ծկլա մանկավարժ», «Ծկլայի փալիթիքան», «Փափաղան» ոտանավորները, «Շաղլաթան» պատմվածքը, որտեղ քըննադատվում էին ոչ միայն դպրոցի նոր ծրագիրն ու այն իրականացնողները, այլ նաև դրանց հովանավորները, այսինքն, քաղաքի հզորները, որոնք կապվելով ռուս վերնախավին, չէին կարողանում հասկանալ, թե հայ ժողովրդին իսկապես ինչ է պետք։

«Մոնթեն մինչև մեր» պատմվածքում Պատկանյանը սուր ծաղրի է ենթարկում տգետ հոգևորականությանը։ Պատմվածքի հերոսը՝ Տեր Մինասը ոչ մի տեղ չկարողանալով սովորել և աշխատել իր անընդունակությունների ու ստահակ վարքի պատճառով, ի վերջո ընտրելով հոգևոր ասպարեզը, ամենակարճ ժամանակահատվածում եպիսկոպոս է ձեռնադրվում և սկսում երազել կաթողիկոսական գահին տիրանալու մասին։ Երգիծաբանությունը, որն ուղղված էր հոգևոր դպրոցի կրոնուսույց Մի-

նաս Փափազյանի դեմ, միաժամանակ հարվածում էր և՛ հոգևոր դպրոցում տիրող բարքերին, և՛ քննադատում հոգևորականությանն ընդհանրապես։ Արդեն գործի ավելի քան խոսուն վերնագիրը՝ «Մոնթեն մինչև վեր», գալիս էր ասելու, որ տեր մինասները մեծամասնություն են կազմում հայ հոգևոր կյանքում և դրանց դեմ պայքարելով միայն հնարավոր կլինի փրկել հայ եկեղեցու հեղինակությունը։

Պատկանյանի աշխարհայացքը և նրա ամբողջ գործունեությունը սերտորեն կապված լինելով ազգային-պահպանողական հոսանքի հետ, այնուամենայնիվ եկեղեցու և դավանության հարցերում որոշակիորեն տարբերվում էր նրանից։ Նա առանց վարանելու և երկնչելու դուրս էր գալիս հայ եկեղեցու բարձրաստիճան սպասավորների դեմ, դաժանորեն ծաղրի ու քննադատության ենթարկում նրանց ազգակործան գործունեությունը, բարքերը, տգիտությունը («Դև Մրուս», «Գիրքօր Կայափա», «Sermo», «Քախքէթօն», «Նօրընծա», «75 մանեթնոց քարոզ», «Մոնթեն մինչև վեր», «Սատանայի օջիլ»), առանց հաշվի նստելու այդ հոսանքի ներկայացուցիչների հայ եկեղեցու և նրա սպասավորների հեղինակությունը անբիծ պահելու պահանջի հետ։

Արհեստագործական դպրոցը փակելու վտանգը ոչ միայն կործանման էր դատապարտում բանաստեղծի այդքան տարիների փայփայած երազները, ո՛չ միայն փողոց նետում հազիվհազ դպրոցի երես տեսած, ուսման քաղցրությունը ճաշակել սկսող մի քանի տասնյակ ընչազուրկ մանուկների, այլ նաև նորից գործազրկության և հետևապես դառն աղքատության դատապարտում ազգի բանաստեղծին. «Տերտեր, վարժապետ, լրագրապետ, հեղինակ մեր ազգի մեջ ամենաթշվառ արարածներն են, 4—5 աստիճանով ստոր, քան թե արևմտյան Եվրոպայի փռոլեթեռը, որոց թշվառության պատմությունը կարդում ենք ամեն օր։ Դժվար է երևակայել հայ ազգի մտավոր մշակներից սակավապետ, հալածյալ և ստոր կանգնած մարդկային ցեղ... Այս թշվառությունը քառապատկվում է, եթե այդ նահատակները, բախտի բերմամբ, ունեն ամուսին և զավակունք... Ահա Ձեզ անվերջանալի նյութ թեկուզ ռոմանի, թեկուզ լրագրի առաջնորդողի...» (VII, 119)։

Սակայն այս ամենը չկարողացան ընկճել բանաստեղծի հաստատակամությունը՝ մինչև վերջ պայքարելու հանուն իր գաղափարի իրականացման, և նա իր համար ծանր այդ օրերին «Արձագանք»-ի խմբագրությանն ուղարկեց «Սյուլուկին պատասխանը» հոդվածը, ուր ձևակերպեց իր ամբողջ կյանքի, իր գոյության իմաստը. «Յէս գրէլ չիմ դաթրիլ, քանի վոր աշխարիս մէչ կկէնամ. յէս գրէլ չիմ դաթրիլ, քանի վոր

աշխարհիս մէջ կա աղէկություն յէվ գէշություն.— յէս գրել չիմ դաթրիկ, քանի վօր մէջս կա խղճմտանք յէվ արթարության ձայն։ Ինձ գրել չի դաթրէցնուլ վօ՛չ կօվասանք յէվ վօչ քյուֆյուր, վօչ վարց և վօչ վախ, քանի վօր գլխուս մէջ խելք կա, քանի վօր կուրծքիս մէջ սիրտ՝ յէս կգըրիմ, բայց վա՛յ այն մարթուն, վօր կաշխատէ խալէմը ծէռքէս հանելու, նա իրէն ծէռքօվ իրէն վօրթօց համար փոս փօրած կըլա, զէրէ՝ իմ խալէմս ազգիս փառքի, պատվի ու բախտավօրության համար է, յէթէ իմ շահիս համար ըլար՝ ինքնէրտ ալ շատ աղէկ կիտիք, վօր մէկ փասլօտ կալը ավէլի անձնական շահ կուտա մէր ազգի մէջ, քան թէ հարուր հազար խալէմը» (V, 537)։

Անսալով իր բարեկամների հորդորներին Պատկանյանը մեծ դըժվարությամբ հանձն է առնում խնդրագիր ներկայացնել քաղաքային վարչություն, իրեն տեսչի պաշտոնում վերականգնելու վերաբերյալ և կրկին անցնում իր պարտականությունների կատարմանը։

* * *

1883 թ. ամռանը Երևանում հայտնաբերվում և ձերբակալվում են «Հայասեր-Աղքատասեր» խմբակցության ղեկավարներ Ռուբեն Հասան-Ջալալյանը, Լևոն Տիգրանյանը, Վասակ Պապաջանյանը, Վասիլ Եղիազարյանը, Հովհաննես Տեր-Զաքարյանը, Գայանե Հովհաննիսյանը, Հայկ Մատաիկյանը, Արամ Մելյանը, Թովմաս Մհերյանը, Տրդատ Վարդանցյանը։ Խուզարկություններ են կատարվում Թիֆլիսում «Մշակ»-ի և «Արձագանք»-ի խմբագրություններում և տնային կալանքի են ենթարկվում Րաֆֆին, Գրիգոր Արծրունին, Աբգար Հովհաննիսյանը, ժանդարմական հսկողության տակ առնվում Կարապետ Եզյանը[21]։ Ներքին գործերի մինիստրության 1884 թ. նոյեմբերի 8-ի հրամանով փակվում է «Արձագանք»-ի խմբագրությունը։ Այս պայմաններում է՛լ ավելի է դժվարանում տպագրության գործը, և Պատկանյանն իր վրա ավելորդ ուշադրություն չհրավիրելու համար միաժամանակ դադարում է իր ստեղծագործությունների առաքումը տարբեր խմբագրություններ և սպասում ավելի բարեպատեհ ժամանակի։ Սակայն Ալեքսանդր III-ի կառավարության ավելի ու ավելի ընդգծվող բացասական վերաբերմունքը հայկական հարցի նկատմամբ և ի վերջո 1885 թ. փետրվարի 22-ի հրամանով հայկական դպրոցների փակումը դարձյալ ստիպեցին Պատկանյանին մոռանալ ամեն զգուշություն և այդ մղձավանջային օրերին ստեղծած «Մեսրոպ,

---

[21] *Տե՛ս ՀՊՊԱ, ֆ. № 115, գ. 44, Երևանի նահանգական ժանդարմական վարչություն։*

Վարդան, Ղևոնդ» և «Հայ տղայոց ողբը» բանաստեղծությունները ուղարկում է Թիֆլիս, տեղում արտագրությունների միջոցով տարածելու համար, անգամ հարմարեցնում նրանցից երկրորդի համար գերմանական ուսանողական Wir habengebant երգի եղանակը[22]։

Չբավարարվելով հիշյալ բանաստեղծություններով, Պատկանյանը ձեռնարկում է հայոց պատմության դպրոցական ձեռնարկի պատրաստման աշխատանքները։ Հայոց պատմության դասագրքի ստեղծումը հայկական դպրոցների համար ստեղծված այդ ծանր օրերին Պատկանյանը անհրաժեշտ է համարում առաջին հերթին ազգապահպանության տեսակետից, որովհետև եթե հետամուտ չլիներ միջոցների որոնման հարցում, ապա «Ազգը գալոց և ներկա սերնդի մեջ դնում է ձեռքերես և անդառնալի մտնում է մի սարսափելի ծոց» (VII, 145)։ «Այժմ ես մշակում եմ հայոց պատմություն... այսինքն ինչպես ազգը վերացավ, գլորվեցավ և վերանում է նորից։ Աշխատում եմ գրել համառոտ, բայց լիակատար, որ ամեն տղա կարողանա орентироваться լինել, թե ինչպե՞ս եղավ, որ այն ինչ վիճակեն և ես եկա և այստեղ հայտնվեցա. ի՞նչ է իմ հատկությունը բաղդատելով ուրիշ ազգաց հետ, ինչո՞ւ ես պիտի պահպանեմ այդ հատկությունը, ի՞նչ մխիթարական գեղեցիկ և փրկավետ բան կա նորա մեջ» (VII, 146)։

Դասագրքի աշխատանքներին զուգընթաց Պատկանյանը ձեռնարկում է ռուս և համաշխարհային գրականության մի քանի ընտիր նմուշների թարգմանության աշխատանքները, որպեսզի երեխաները կարողանան մանկական հասակում իրենց մայրենի լեզվով ծանոթանալ այդ ստեղծագործությունների հետ, կրթվել նրանց գաղափարներով, ձևավորել իրենց գեղարվեստական ճաշակը առանց օտարանալու, ավելի ստույգ՝ ռուսանալու վտանգի։ Գտնում է, որ հայերը երկար տարիներ կապված լինելով Ռուսաստանի և ռուս կուլտուրայի հետ, պետք է հենց այդ կուլտուրայի մեջ որոնեն և գտնեն ազգային լուսավորության միջոցները. «Մենք օտար<են> շատ բան ունենք սովորելու։ Մեր բնությունը ավելի մոտ լինելով նոցա և մենք անխզելի կապեր ունենալով նոցա հետ, հակամայս մեր ազգովին լուսավորվելու միջոցները պիտի որոնենք և գտնենք նոցա մեջ... Նմանապես ես ցանկանալով կցանկանայի, որ օտարի գեղեցիկ հոդվածները հայք կարդային և սերտեին հայերեն և ոչ օտարերեն և նույնիսկ մանկության օրերեն. այդպես ավելի անվտանգ

[22] «Հայ մանկանց ողբը ոմանք արտագրեցին և դա այժմ ձեռքե ձեռք պտույտ է գալիս»,—հայտնում է Փիլիպոս Վարդանյանը անմիջապես երգը ստանալուց հետո (տե՛ս ԳԱԹ, ՌՊՖ, № 1138)։

կլինեն» (VII, 124),— գրում է բանաստեղծը Փիլիպոս Վարդանյանին, ուղարկելով նրան Պուշկինի «Ոսկե ձկնիկ»-ի թարգմանության ձեռագիրը։ «Ոսկե ձկնիկ»-ին հետևում է «Պոլտավա»-ն, ապա Լերմոնտովի «Երեք արմավենի»-ն, իսկ դրանցից հետո բանաստեղծն անցնում է Վիրգիլիոսի «Էնեական»-ի[23] թարգմանության գերմաներենից։

Նա ոչ միայն ինքն է զբաղվում թարգմանություններով, այլև հորդորում իր մտերիմներին հնարավորին չափ շատ թարգմանական ստեղծագործություններ պատրաստել հայ մանուկների համար, ուրախանում, որ Ղազարոս Աղայանը, Րաֆֆին և Փիլիպոս Վարդանյանը նույնպես ձեռնարկել են այդ ազգային մեծ նշանակություն ունենալիք գործը, հորդորում սկսել ամենամատչելի նյութերից, որոնք պիտի կամուրջ հանդիսանան դեպի մի «արգավանդահող աշխարհ», «Կցանկանայի մի օր կարդալ քո գրչով մշակած «Հազար ու մի գիշերը», ահա մի գիրք, որն այնքան ընթերցողներ կունենար, որքան հայ ազգը ունի անդամներ, բայց Ֆրանկլին, Ուաշինգթոն, Հոմերոսին կարդալու համար պետք է փոքրիշատե նախապատրաստություն» (VII, 151),—համոզում է նա Փիլիպոս Վարդանյանին։

Բայց ինչպես միշտ, ոգևորության առաջին ալիքն անցնելուց հետո Պատկանյանը դարձյալ կիսատ է թողնում իր մտադրությունը, այլևս չվերադառնալով թարգմանական աշխատանքներին, թեև «Ոսկե ձկնիկ»-ի տպագրության հաջողությունն այնքան մեծ է լինում, որ «Վարժարան» ամսագրում տպագրվելուց հետո լույս է ընծայվում նաև առանձին գրքով, իսկ Սեդրակ Մանդինյանը ոգևորված թարգմանության հաջողությունից Պատկանյանի ուշադրությունը հրավիրում է «Սասունցի Դավիթ» էպոսի մշակման խնդրի վրա, ինչպես նաև ընդգծելով նրա գերմաներենի լավ իմացությունը, առաջարկում է թարգմանել Շիլլերի և Ուլանդի ստեղծագործություններից։

* * *

1885 թ. ամռանը, երբ վերսկսվեց հրատարակվել «Արձագանք»-ը, Պատկանյանը նրա առաջին համարներից մեկում տպագրեց Ն. Նախիջևանի բարբառով գրված «Շառլաթան» պատմվածքը, որն ուղղված էր հոգևոր դպրոցի տեսուչ Գալուստ Ջաբախյանի դեմ։ Մինչ այդ հոգևոր դպրոցի ծրագրի համար մղված պայքարը հասել էր իր գագաթնակե-

[23] «Պոլտավա»-ի և «Էնեական»-ի թարգմանությունները մեզ չեն հասել, թեև հեղինակի վկայությամբ լիովին ավարտված են եղել։

տին։ «Մեղու Հայաստանի»-ն և «Նոր-Դար»-ը համարյա իրենց ամեն համարում վարկաբեկիչ հոդվածներ ու թղթակցություններ էին տպագրում արհեստագործական դպրոցի և հատկապես նրա տեսչի դեմ, պահանջում դպրոցը ներկայիս ծանր դրությունից ազատելու համար տալ նրան ընդունակ նավապետ[24], զանազան անվայել ակնարկներ անում գումարների անտեղի վատնումների վերաբերյալ։ Առանձնապես մեծ ջանասիրություն էր ցուցաբերում այդ գործում Պատկանյանի վաղեմի թըշնամիներից մեկը՝ Հովհաննես Պապասինյանը, որի արգահատելի կերպարը նա ներկայացրել է դեռևս 1875 թ. գրած իր առաջին նորավեպերից մեկում՝ «Պաց ապպար»-ում։ Որ իր թշնամիները միշտ էլ միջոցների խտրություն չեն դրել նրա դեմ պայքարելու ընթացքում, չէր զարմացնում Պատկանյանին, բայց որ իր վաղեմի բարեկամ Պետրոս Սիմեոնյանը և «Նոր-Դար»-ի խմբագիր Սպանդար Սպանդարյանը տեղ էին տալիս նման թղթակցությունների, առանց վարանմունքի իրենց թերթերի էջերում արատավորում բանաստեղծի անունը, դառնությամբ ու զայրույթով էր լցնում նրա հոգին։ Զարմացնում էր Պատկանյանին նաև այն, որ այդ թերթերը փոխանակ հասկանալու պայքարի իմաստը, փոխանակ իր հետ միասին ոտքի ելնելու օտարացման վտանգի դեմ, առանց գիտակցելու պաշտպան էին կանգնում հայկական հոգևոր դպրոցի բնույթի այլափոխմանը։

Մնում էր միայն նորընտիր կաթողիկոսի՝ Մակարի հզոր միջնորդությունը օգտագործելով դադարեցնել հոգևոր դպրոցի ծրագրում մտցըվող նորմուծությունները, որին և դիմում է Պատկանյանը, նկարագրելով դպրոցում տիրող անհանդուրժելի մթնոլորտը. «Երեք տարի դորանից առաջ, երբ մոլեգնած քաղաքացվոց մի մասը կամենում էր ռուսաց գիմնազիա բանալ Նոր Նախիջևանի մեջ, իսկ մյուսը ունենալ սեմինարիա... և ամենաչնչին մասն միայն ոչ սորան էր հոժար և ոչ նորան, այլ ունենալ հոգևոր դպրանոց ազգային ուղղությամբ, ես գործին ի մոտո ծանոթ լինելով, մեծ երկյուղ ունեի, թե մի գուցե գիմնազիա ունենալ ցանկացողք հաղթանակեն ի կորուստ մեր քաղաքին, երկուց չարյաց փոքրագույնը ընտրելով, աղաչեցի Ձեզ հաստատել Ջառխյանին, որպեսզի գիմնազիո խնդիրը մեռանի... Այժմ նույն վտանգը վերանորոգվում է, ինչ որ սպասվում էր մեզ երեք տարի առաջ։ Եթե Գ. Ջառխյանը հարատև մնալու դպրանոցի մեջ, օրեցօր և ժամեժամ պիտի սպասվի, որ ժողովրդի մեծամասնությունը դիմե ազգային լուսավորության նախա-

[24] Տե՛ս «Մեղու Հայաստանի», 1885, № 94։

քարին, որ բանա քաղաքի մեջ ռուսաց միջնակարգ վարժարան, վասնզի անկեղծորեն պիտի խոստովանել Հորդ հասարակաց առջև, որ Գ. Ջաղըլխյանի ղեկավարած դպրանոցը առավել կորստաբեր է հայության համար» (VII, 159, 160)։

Նորընտիր կաթողիկոսը անմիջապես արձագանքում է բանաստեղծի խնդրին և Ամենայն Հայոց Հայրապետի հատուկ հրամանով վերջ են տրվում տեսուչի ինքնակամություններին, և ավելացվում են մայրենի լեզվի ժամերը։ Չբավարարվելով այս հաջողությամբ, Պատկանյանը 1885 թ. դեկտեմբերին ձեռնարկում է Ն. Նախիջևանի բարբառով «էսլի լեվէնտ» («Սիրուն ամուրին») պատմվածքի ստեղծմանը, որտեղ ներկայացված էր գաղթօջախում աստիճանաբար օտարացող, ազգային հատկությունները կորցնող հայ մարդու ողբերգությունը, որը իր ընդունակությունները, ապագայի փայլուն հեռանկարները ընտանեկան կյանքը, առողջությունը, գեղեցկությունը զոհաբերում է օտար կնոջ քմահաճույքին և զրկվելով ամեն ինչից, մեռնում է մենակության և մոռացության մեջ։

Պատմվածքն ուղարկում է Փիլիպոս Վարդանյանին, խնդրելով այն հանձնել «Արձագանք»-ի խմբագրությանը։ Սակայն նախքան տպագրելը այն ընթերցվում է քաղաքային ակումբում և մասնավոր բնակարաններում, առիթ ծառայելով քաղաքի թատերական ընկերության համար գրական երեկոներ կազմակերպելու ծրագրին։ Շուտով այդ երեկոները սկսում են տեղի ունենալ ամեն շաբաթ կանոնավորապես, ստիպելով Պատկանյանին նորանոր գործեր ստեղծելու Ն. Նախիջևանի բարբառով, որոնց ընթերցումը մեծ բավականություն էր պատճառում ունկնդիրներին։ Նա ոչ միայն իր նոր գործերն էր ներկայացնում այդ երեկոներին, այլ նաև կարդում կամ կարդալ տալիս տարիներ առաջ գրածները՝ «Վարժապէտ»-ը, «Ջօք»-ը, «Քախքէթօն»-ը, «Նօրընծա»-ն, «Վայնա»-ն և մյուսները (VII, 158)։ «էսլի լևէնտին» հաջորդում է «էկլենճեն» (Ժամանց, զվարճալի զրույց), որը գրական երկրորդ երեկոյին կարդացվելուց հետո, դարձյալ ուղարկվում է Փիլիպոս Վարդանյանին, «Արձագանք»-ի խմբագրություն հանձնելու համար[25]։

Սակայն, եթե այդ երկերի ընթերցումը մեծ բավականություն էր պատճառում ունկնդիրների մի մասին, ապա մյուս մասը ճանաչելով իրեն ներկայացված բացասական կերպարների մեջ, վրդովմունքի ցույցեր էր կազմակերպում, վիրավորանքներ ու չարախոսություններ տարածում քաղաքում հեղինակի հասցեին։

[25] Պատմվածքը դժբախտաբար չի տպագրվել և ձեռագիրը կորել է «Արձագանք»-ի խմբագրությունում։

Դարձյալ բորբոքվում են կրքերը, դարձյալ քաղաքը բաժանվում է երկու մասի, դարձյալ թղթակցություններ են թռչում «Մեղու Հայաստանի»-ի և «Նոր-Դար»-ի խմբագրություններ, արհեստագործական դպրոցի և նրա «անճարակ» տեսչի դեմ։ Եվ, կարծես, ի պատասխան այդ թղթակցությունների «Արձագանք»-ը իր պաշտպանության տակ է առնում բանաստեղծին՝ հարուցելով նրա 35-ամյա հոբելյանը նշելու խնդիրը[26]։

Հանձնարարելով այդ օրերին Սրզար Հովհաննիսյանի հատուկ հրավերով Թիֆլիսում գտնվող գերմանացի լրագրող և գրականագետ Արտուր Լայստին մի հոդված Ռափայել Պատկանյանի մասին, որը հեղինակը տպագրում է Լայպցիգում լույս ընծայվող „Das Magazin für die Litteratur des in-und Auslandes“ շաբաթաթերթում, իսկ «Արձագանք»-ը Փիլիպոս Վարդանյանի թարգմանությամբ՝ իր էջերում օտարազգի հեղինակի բերանով հայ հասարակությանը հիշեցնում է այն մեծ երախտիքի, այն ինքնամոռաց, հսկայական գործունեության մասին, որ ծավալել էր բանաստեղծն իր ամբողջ գիտակցական կյանքի ընթացքում՝ հանուն իր ժողովրդի բարոյական սթափման։ «Պատկանյանի մատենագրական գործունեությունը մի ժամանակ շատ ժիր էր, յուր երկար հեղինակության միջոցին նա հրատարակել է և լրագրեր և առհասարակ շատ ծառայություններ է մատուցել նա գրականությանը։

Այս պատվական քերթողի բանաստեղծական զորությունն կարծես թե բեկվել է այժմ. նա ապրում է մի շատ անձուկ և տաժանելի դրության մեջ։

Արևելքի ամենահարուստ վաճառական կոչված հայերը մինչև այս օրս դեռ չեն հասկացել, որ բարոյապես պարտական են դյուրացնելու իրանց ամենամեծ բանաստեղծի նյութական վիճակը»,— գրում է Լայստը հոդվածի վերջում, դրանով արդեն կոչ անելով մտածելու հեղինակի հոբելյանի նշման և դրանով արդեն նրան նյութապես ապահովելու մասին։

Նույն այդ համարում «Հոբելյան» վերտառությամբ խմբագրական հոդվածում առաջ էր քաշվում հայ գործիչներին նյութապես ապահովելու անհրաժեշտությունը և ցավ հայտնվում, որ այդ մասին առաջինը ձայն է բարձրացրել մի օտարական, կշտամբելով մեզ անօգուտ շռայլությունների համար և զարմացել մեր իսկ մշակույթի և նրա գործիչների նկատմամբ ցուցաբերած անտարբերության վրա։ «Հարուստ ենք թե ոչ—մենք պարտավոր ենք և կարող ենք նյութական կյանքի դառնություններից

[26] Տե՛ս «Արձագանք», 1885, 26, 31 դեկտեմբերի. («Արձագանք»-ում սխալմամբ նշված է «25-ամյա հոբելյան»)։

աղատ պահել մեր մտավոր մշակներին,— գրում է «Արձագանք»-ը,— որոնք բարի ծառայություններ են մատուցել մեր լեզվի և մտքի զարգացմանը։ Անմոռաց Պեշիկթաշլյանը ետին չքավորության մեջ մեռավ, Աբովյանցն յուր դառնակսկիծ կյանքի մեջ մի թեթև օր չտեսավ, երիտասարդ Դուրյանը աղքատության մեջ շունչը փչեց, մեր սիրելի Իփեքչյանը գրեթե մի կտոր հացի կարոտ վախճանվեցավ—էլ ո՞ր մեկին հիշենք հայ գրականության նահատակներից... Ամոթ չէ՞ մեզ, որ այժմ մի օտարականից աղգարարություն պիտի լսենք մեր երախտամոռության մասին գեպի մեր աղգային բազմադարյան բանաստեղծը, որի սրտառուչ քնարի ձայնը կրկնելով մենք սովորել ենք հայերեն երգել, հայերեն մտածել և հայի պես զգալ»[27]։

Հոդվածի վերջում խմբագրությունը կոչ էր անում «հայի անուն կրող ամեն մի մարդու» մասնակցել այդ համազգային գործին։ «Արձագանք»-ի այս նախաձեռնությունից հետո անմիջապես Թիֆլիսում կազմակերպվում է հատուկ հանձնաժողով՝ անդամակցությամբ քաղաքագլուխ Ալեքսանդր Մատինյանի, Ալեքսանդր Անանյանի, իշխան Կոնստանդին Բեյբությանի և Աբգար Հովհաննիսյանի։ Թիֆլիսի օրինակին են հետևում նաև այլ քաղաքների ներկայացուցիչները և առաջին հերթին բանաստեղծի համաքաղաքացիները։ 1886 թ. փետրվարի 16-ին քաղաքային ակումբի դահլիճում տեղի է ունենում առաջին նիստը հոբելյանական հանձնաժողով ընտրելու և նախապատրաստական աշխատանքները սկսելու կապակցությամբ։ Այդ նիստին եկել էին մասնակցելու ուսուցիչներ ու աշակերտներ, բանաստեղծի բարեկամները, նրա տաղանդի երկրպագուները, գրականության հետ առնչություն չունեցող բազմաթիվ վաճառականներ և այլ զբաղմունքի տեր մարդիկ։ Ներկաները ոգևորությամբ նշում էին Պատկանյանի մեծ երախտիքը, ցանկություն հայտնում արժանավայել կերպով նշելու իրենց մեծ համաքաղաքացու հոբելյանը[28]։

Բանաստեղծի մեծ երախտիքին վարձահատույց լինելու ցանկությունը համակեց հայության ամենատարբեր հատվածների։ Յուրաքանչյուրը պատրաստակամություն հայտնեց անձնապես մասնակցելու համազգային այդ մեծ գործին։ Անգամ նրա ամենամատաղ ընթերցողները անմասն չմնացին այդ ոգևորությունից։ «Արձագանք»-ում տպագրված մի թղթակցության մեջ պատմվում էր, թե ինչպես մի փոքրիկ աղջնակ, իմանալով, որ պատրաստվում են նշել այն Պատկանյանի հոբելյանը, որ գր-

---

27 «Արձագանք», 1885, № 26։

28 «Տարազ», 1901, № 14։

րել է «Հողմը փչեց հարավեն» և «Ահա եկավ Նոր տարին» ոտանավորները, իր գանձանակի ամբողջ պարունակությունը նվիրաբերում է Հոբելյանի նախապատրաստմանը։

Սակայն բառացիորեն հասկանալով թե Արթուր Լայստի «Հոբելյան» հոդվածում հիշատակված ու մի շարք թղթակցություններում կրկնված՝ բանաստեղծին նյութապես ապահովելու անհրաժեշտությունը, շատ կազմակերպություններ և անգամ անհատներ շրջանցելով ստեղծված հանձնաժողովները, սկսեցին անձնապես Պատկանյանին ուղարկել հավաքված նվիրատվությունները, ինչպես նաև մամուլի էջերում քննության առնել նրա նյութական աննախանձելի վիճակը, խորապես վիրավորելով բանաստեղծի ինքնասիրությունը, քանի որ նա հոբելյանի նշման մեջ առաջին հերթին ուզում էր տեսնել ազգի մտավոր զարգացման մի որոշակի աստիճանի արտահայտությունը և ոչ թե իր անձնական շահը (VII, 157)։

Ամենայն հավանականությամբ «Արձագանք»-ին ուղարկած Պատկանյանի բողոքից հետո շաբաթաթերթի խմբագրությունը փետրվարի 16-ի համարում հրատարակում է «Մի հայ» ստորագրությամբ «Ռափայել Պատկանյանի հոբելյանի առթիվ» թղթակցությունը, որտեղ կարդի է հրավիրում հայ հասարակությանը, հորդորում չվիրավորել բանաստեղծին դրամի առաջմամբ, այլ «Ուղարկել կարգադրիչ հանձնաժողովներին և՛ ոսկե գրիչ, և՛ արծաթե պսակ, և խնդիրք բանաստեղծի անտիպ գրվածքները հրատարակելու և էժան գնով ժողովրդի մեջ տարածելու վերաբերյալ, որպեսզի տոնը ոչ միայն բանաստեղծինը լինի (իհարկե նա այսպես չի վիրավորվի), այլ հասարակաց հանդես դառնա։ Եվ այս դեպքում հոբելյարը չի հրաժարվի ժողովրդի նվիրատվությունից, այլ այն կընդունի այնպես, ինչպես Լամարտինը ընդունեց Ֆրանսիայից մեկ միլիոնը»[29]։

Եթե բազմաթիվ երկրպագուների աններբանկատ վարմունքը վիրավորում էր Պատկանյանի ինքնասիրությունը, ապա վաղեմի թշնամիների անխիղճ հարձակումները միանգամայն անտանելի էին դարձնում հոբելյանի նախապատրաստական աշխատանքները նրա համար։ Ն. Նախիջևանում խանդավառության առաջին ալիքը անցնելուց հետո և՛ նրա սուր գրչի տակ ընկած բազմաթիվ «աղաները», և՛ հոգևոր դպրոցի տեսուչն ու ուսուցիչները ջանք չէին խնայում զանազան վարկաբեկիչ լուրերի տարածման գործում, անգամ լրիվ հերքում էին բանաստեղծի վաս-

[29] Տե՛ս «Արձագանք», 1886, № 6։

տակը։ Այդ ուղղությամբ առանձնապես մեծ եռանդ էր ցուցաբերում Հոգևոր դպրոցի աստվածաբանության ուսուցիչ, առաջնորդի տեղապահ, Սուրբ Խաչ վանքի վանահայր Կյուրեղ վարդապետ Սրապյանը։

Հարություն տալով տասնամյակներ առաջ հորինված գրպարտությանը, Կյուրեղ Սրապյանը քաղաքի Մայր եկեղեցու բեմից համարձակվում է հայ մեծ բանաստեղծին մեղադրել գրագողության մեջ, գոչելով ի լուր ամենքի. «Ո՞վ է Պատկանյանը, որ ուզում եք նրա հոբելյանը կատարել, նա մի «Մայր Արաքսի» է գրել և այն էլ գողացել է Եգիպտոսի մի արաբ բանաստեղծից, որ այդ երգը հորինած է եղել Նեղոսի մասին»[30]։

Թեև ուղղակի փաստեր չեն պահպանվել հոբելյանի նախապատրաստական աշխատանքները խափանելու պատճառների մասին, և մինչև այժմ դա վերագրվում էր հանձնաժողովների վատ աշխատանքներին, սակայն, ամենայն հավանականությամբ այդ եղել է բանաստեղծի խնդրանքով, որը վիրավորված կարեկցության չափազանցված արտահայտություններից և թշնամական լուտանքներից, բարվոք է համարել հրաժարվել հոբելյանից։

Բանաստեղծի քայքայված առողջությունը անկարող լինելով դիմագրավել անընդհատ տեղացող հարվածներին, անկողին է նետում նրան։ Գլուխ են բարձրացնում մի քանի հիվանդություններ և՛ տարիներից ի վեր նրա թոքերում բույն դրած ծանրախտը, և՛ աղիքային սուր երևույթները, և՛ նյարդերի ու ականջների բորբոքումները։

Անհրաժեշտություն է առաջանում անհապաղ վիրաբուժական միջամտություն, և Պատկանյանն իր բուժող բժիշկ Համբարձում Քեչեկյանի խորհրդով սկսում է պատրաստություններ տեսնել Մոսկվա, Սկլիֆասովսկու կլինիկան մեկնելու համար։

Իսկ մինչ այդ, անկողնում պառկած նա դարձյալ մտորում էր հայկական հարցը միջազգային ասպարեզ բարձրացնելու վերաբերյալ։ Նրա վերջին տարիների գործերը, մասնավորապես «Մեր տեղի ծակլաբուններ»-ը անվերապահորեն արգելվեցին գրաքննության կողմից, և հայկական հարցին նվիրված բոլոր ստեղծագործությունները տարածվեցին արտագրությունների կամ անլեգալ տպագրությունների և Ռուսաստա-

[30] Տե՛ս ԳԱԹ, Ե. Շահազիզի ֆ., «Հուշեր Ռ. Պատկանյանի մասին»։ Մեկ տարի անց, Կյուրեղ Սրապյանի դեմ գրված «Սատանայի օջիլ» երգիծական պատմվածքի մեջ ներկայացնելով վարդապետի քարոզը, Պատկանյանը գրել է. «Օրթնյալ ժողովուրթ՝ տուքկուզիք լյուպիլէ անէլու մէկ շարաթրօղի, ամա չէս տեղօվ կիտիմ, վօր նա, աստված վէրը վրկա, ինքը շարաթրած չէ՛, հա՛պա ալայը արապնակէն թարքմանիլէ ու ծէզի կըխափէ, ատպէս բան կըլա՞ մի. չիլա վօր տուք ատ մարթուն լյուպիլէ անէք, ստակնէրտ մէխք է» (IV, 303)։

նից դուրս գտնվող մամուլի միջոցով։ Իր նոր ստեղծագործությունը, Անգլիայի նախկին վարչապետ, 70-ական թվականներին Բուլղարիայի, Իռլանդիայի և արևելյան քրիստոնյաների պաշտպան Գլադստոնին ուղղված նամակը, որտեղ նկարագրված էին հայ ժողովրդի դարավոր տառապանքը Թուրք վայրագ բռնապետության ներքո, Պատկանյանը որոշեց լույս աշխարհ հանել Մարսելում հրատարակվող «Արմենիա»-ի էջերում։

Շարադրելով անօրինակ ուժով ու բանաստեղծական ներշնչանքով գրած իր այս տողերը, Պատկանյանը, իհարկե, հեռու է այն մտքից, որ Գլադստոնը, որն իր իշխանության 7 տարիների ընթացքում ոչինչ չկարողացավ անել հայկական բարենորոգումների հարցը Թուրքիայում կիրառելու ուղղությամբ, կկարողանար կրկին պետության գլուխ անցնելուց հետո ձեռնարկել որևէ մի բան հայկական հարցի վերաբերյալ։ Սակայն Գլադստոնի՝ բուլղարների ազատարարի անունը այդ տարիներին շրջափակված էր ճնշված ազգերի պաշտպանի լուսապսակով, նրա կրակոտ «Բուլղարական սրհավիրքները», «Մաոթիաոլոգիա»-ի տողերը դեռևս հնչում էին բազմաթիվ տառապյալների ականջներում, սուլթանի քաղաքականությանը տրված սուր գնահատականները մի ինչ-որ մշուշոտ հույսեր ներշնչում նրա հետագա գործունեության վերաբերյալ։

«Էհ, ինչ պիտի գրեի ես,— ասել է հետագայում Պատկանյանը,— դա մի ցաված սրտի հուսահատ աղաղակ ու ճիչ էր, որ ես հասցրի նրան, համառոտ նկարագրությունն «Թուրքահայաստան» կոչված դժոխքի...»[31]։

Պատկանյանին ավելի հուզում էր հայկական հարցը միջազգային ասպարեզ բարձրացնելու խնդիրը, այնտեղ կատարվող սահմռկելի վայրագությունների նկարագրությունը բազմաթիվ լրագրերի նյութ դարձնելու մտահոգությունը։ Իսկ որ Գլադստոնին ուղղված հայ բանաստեղծի նամակը Ֆրանսիայում լույս աշխարհ գալուց հետո որոշ թերթեր և ամսագրեր կարող էին արտատպել, դա արդեն աններկբայելի էր Պատկանյանի համար։

Ուստի օգտագործելով «Մեր տեղի ծակլաբունները»-ի մեջ այնքան ներգործուն ուժով տրված հայկական սարսափների տեսարանները, Պատկանյանը դարձյալ վկայակոչում է Գլադստոնի 70-ական թվականների գործունեությունը բուլղարական հարցի վերաբերյալ, բացականչելով. «Բայց եթե իմանայիր ո՞րքան տկար է բուլղարացոց տանջանքը համե-

---

[31] Տե՛ս «Էջմիածին», 1945, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 63։

մատությամբ այն աներևակայելի տանջանքին, որին ահա 600 տարի ամեն օր և ամեն վայրկյան կկրե ողորմելի հայոց ազգը... և դորա հետևանքը այն եղավ, որ մեկ ժամանակվա 30 միլիոնանոց ազգը այժմ հազիվ հազ կհասնի $2^1/_2$ միլիոնի և մեկ ժամանակվա ծաղկյալ Հայաստանը այս օրս ամայի անապատ է, ուր գիշատիչ գազաններ և շաղղակեր թռչուններ անգամ չկան, վասնզի նոցա համար լափելու բան մնացած չէ՝ շատ տեղ...

. . . .

Ա՜խ ազնիվ տե՜ր, մեր ձեռք պետք էր տալ տիկին Բիչեռ Ստոուի գրիչը, որ մենք կարողանայինք քեզ հասկացնելու, որ Ամերիկայի նեգրներեն թշվառ մի ազգ կա աշխարհիս երեսին և այդ ազգի անունն է հայ» (VIII, 422, 423)։ Ավարտելով նամակը և նրա մի օրինակը թողնելով քաղաքի բարեգործական ընկերության նախագահ Եպիփան Պապոյանի մոտ, Պատկանյանը առողջական ծանր վիճակով 1886 թ. դեկտեմբերի 11-ին դուրս է գալիս Ն. Նախիջևանից։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՆՈՐԻՑ ՆՈՐՆԱԽԻՋԵՎԱՆՅԱՆ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ, ՎԵՐՋԻՆ «ՄԱՐՍԵԼՅՈՋՆԵՐ»

Դեկտեմբերի 13-ին հասնելով Մոսկվա, իր հայ բարեկամների, մասնավորապես համալսարանի իրավագիտության պրոֆեսոր Ներսես Ներսիսյանի միջնորդությամբ տեսնվելով համբավավոր Սկլիֆասովսկու հետ և ստանալով նրա համաձայնությունը անձամբ վիրահատություն կատարելու խնդրում, Պատկանյանը որոշում է նույն ամսի 17-ին գնալ հիվանդանոց։ Իսկ մինչ այդ մնացած օրերը նա աշխատում է տեսնել Մոսկվայի իր բոլոր բարեկամներին, այցելություններ կատարում Մկրտիչ Էմինին, Հովհաննես Հովնանյանին, Գրիգոր Խալաթյանին, Մելքոն Փանյանին։ Իր վաղեմի ընկերոջ՝ Քանանյանի հետ տեսնվելու հեռանկարը մեծ անհանգստություն է պատճառում բանաստեղծին, երկար տարիներ կտրված լինելով միմյանցից, նա վախենում էր իր մի ժամանակվա հոգեհարազատ ընկերոջ փոխարեն բարձրաստիճան մի անձ տեսնել և նույնիսկ մտածում էր խուսափել այդ հանդիպումից (VII, 166, 186)։ Սակայն Քանանյանի ցուցաբերած հիացական ընդունելությունը, նրա ջերմ ու անկեղծ զրույցները, հոգացողությունը, համոզեցին բանաստեղծին որ ոչ անցալի հիշատակներն են ջնջվել ընկերոջ հիշողությունից և ոչ էլ իր ներկա գործունեությունն է անկարևոր նրա համար։ Քանանյանից իմանալով Մոսկվայի հայ ուսանողների և ճեմարանի աշակերտների տրամադրությունների ու իդեալների մասին, բանաստեղծը որոշում է հատուկ հանդիպումներ ունենալ նրանց հետ, «իմաստասիրել նոցա», փորձել վառել նրանց ազգասիրական տրամադրություններով, հորդորել վերադառնալ հայրենիք և գործել նրա համար։

Քանանյանի հետ խորհրդակցելով իր վերջին ստեղծագործության՝ Գլադստոնին գրած նամակի մասին, Պատկանյանը ընկերոջ խնդրանքով Ն. Նախիջևանից խնդրում է ուղարկել իրեն այդ գրության մեկ օրինա-

կը, Մոսկվայի հայ մտավորականությանը դրա հետ ծանոթացնելու համար[1]։

Պատկանյանի վրա անջնջելի տպավորություն է գործում Մկրտիչ Էմինի հետ ունեցած հանդիպումը՝ մղելով նրան անպայմանորեն վիրահատությունից հետո գրի առնել իր հիշողությունները Էմինի մասին, գնահատելով նրա վաստակը ո՛չ միայն որպես գիտնականի, այլ նաև որպես մանկավարժի, մանկավարժ, որն իր սաների սրտում կարողացավ վառել հայրենասիրության կրակը, կարողացավ սիրել տալ մայրենի գրականությունը։

Դեկտեմբերի 17-ին Պատկանյանը ընդունվում է կլինիկա, որտեղ ռուս մեծ գիտնականը իմանալով նրա ով լինելը առանձնակի ուշադրությամբ է շրջապատում բանաստեղծին, հրաժարվում վերցնել նրանից հիվանդանոցի վարձը, թույլ է տալիս անարգելք նրա մոտ բարձրանալու անընդհատ հոսանքով եկող բազմաթիվ այցելուներին։

Մինչև վիրահատություն մնացած օրերը Պատկանյանը անգործ չի անցկացնում։ Նամակներ է հղում Ն. Նախիջևան արհեստագործական դպրոցի համար մեքենաներ, նյութերի զանազան ցուցակներ ուղարկելու խնդրով, հնարներ պտրում բժիշկ Քեչիկյանին Սկլիֆասովսկու մոտ օրդինատոր տեղավորելու մասին, խնդրում մի ինչ-որ հայ ուսանողի համար մուշտակ առնելու ճարը գտնել և ուղարկել («Մե՜ղք է տղան»)։ Իսկ նրա ամենամեծ մտահոգությունը, իհարկե, ցարձյալ հայկական հարցն էր և, մասնավորապես, իր վերջին ստեղծագործությունը՝ Գլադստոնին գրած նամակը, որը նա անհապաղ ուզում էր միջազգային ասպարեզ հանել, ուզում էր տպած տեսնել արտասահմանում մի քանի լեզուներով։ «Խնդրեմ, շտապես մեկ նամակ գրելու «Արմենիա»-ին, որ Գլադսթոնի նամակը նախ՝ տպեն հայերենը, հետո, եթե կարելի է, թարգմանեն ֆրանսերեն, անգլերեն և տպեն լրագրաց մեջ և վերջապես աշխատեն իրեն ուղարկելու» (VII, 174),—գրել է նա Ջալխուշյանին հիվանդանոցից, վիրահատությունից մեկ օր առաջ։

Դեկտեմբերի 22-ին պրոֆեսոր Սկլիֆասովսկին իր օգնական Լևիցկու հետ վիրահատեց Պատկանյանին, ազատելով նրա կյանքը անխուսափելի մահից, քանի որ, ինչպես պարզվեց վիրահատությունից հետո,

---

[1] «Խնդրեմ, հատկապես երթաս Էպիփանին, առնուս նորանեն իմ ձեռագիր Գլադստոնի նամակը և անհապաղ ուղարկես ներքոգրյալ հասցեով. շատ կպարտավորեցնես»,— նամակով նա խնդրում է Մկրտիչ Գանձապետյանին (VII, 175)։

խոցն ուներ պոլիտիկական բնույթ և հանդիսանում էր քաղցկեղի մի տարատեսակը (VII, 180)։

Վիրահատությունից հազիվ մի երկու օր անց, բանաստեղծը անկողնում անշարժ պառկած, դարձյալ կարգադրություններ էր անում Գլադստոնի նամակի տպագրությունը արագացնելու վերաբերյալ[2], գրում է «Մկրտիչ Էմին» բանաստեղծությունը, կառուցում մտքում հուշագրությունը նրա մասին (VII, 181)։ Իսկ այցելուները, նրա մոտկիկացի բարեկամները, բազմաթիվ ուսանողներ, ամեն դասակարգի միանգամայն անծանոթ մարդիկ գալիս են, գալիս մեկը մյուսի ետևից՝ իրենց հոգատարությամբ ու սիրով զարմացնելով բանաստեղծին, անհուն երկրպագանքով լցնելով նրա հոգին։ «Այսուհետև այնքան ապրելու չեմ, որքան որ ապրել եմ. ժամանակն է ինձ ներելի պարծանքով ասելու, որ 56 տարիս, որ աստված ինձ շնորհեց, ազգիս համար անպտուղ չանցան։ Թող հետս միասին շատ հայեր պարծենան այս գիտակցությամբ և այն ժամանակ մենք կարող ենք Եվրոպայի տերերու օձիքներեն բռնած պահանջել 61 հոդվածի իրագործումը» (VII, 185)։

Սակայն ինչպես միշտ, այս անգամ էլ Պատկանյանին վիճակված չէր երկար ժամանակով վայելելու հոգու երկրպագանքն ու անդորրը։ Դեռ անկողնուց նոր բարձրացած, հենց հիվանդանոցի մեջ նրան է հասնում Ն. Նախիջևանում արհեստագործական դպրոցի գործունեությունը քննելու հատուկ հանձնաժողով կազմակերպելու և դպրոցը որպես միանգամայն անօգուտ ուսումնական հաստատություն փակելու լուրը[3]։

Բնականաբար այս համբավը ցնցում է բանաստեղծի ողջ էությունը։

---

[2] *«...Գրեցի՞ր արդյոք Փորթուգալյանին ֆեյան նամակի հրատարակման մասին։ Այսօր-վաղը Գլադսթոնը կփոխարինի Սալիսբյուրիին և մեր գործը նորա ձեռքը կանցնի։ Շտապե խնդրելու Փորթուգալյանին, որ նա ջանա ոչ միայն տպելու «Արմենիային» մեջ, այլև թարգմանել անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և մի օրինակ ինչպես վայել է թարգմանությամբ իրեն, Գլադսթոնին հասցնե...» (ԳԱԹ, ՌՊֆ, № 1)։*

[3] *«Մշակ»-ի 1887 թ. № 2-ում հրապարակված թղթակցությունից իմանում ենք հետևյալը. «Մեզ գրում են Ն. Նախիջևանից, որ մեր բանաստեղծ Ռ. Պատկանյանը խիստ տկար լինելով, ուղևորվել է Մոսկվա, հմուտ բժիշկների ձեռքով մի օպերացիա անել տալու համար։ Իսկ այդ ժամանակ օգուտ քաղելով բանաստեղծի բացակայությունից, Նախիջևանցիք, դրդված հայերի հատուկ ատելությունից դեպի իրանց գործիչը, աշխատում են զրկել Ռ. Պատկանյանին Ն. Նախիջևանի Արվեստավորաց դպրոցի տեսչության պաշտոնից, կամ նույնիսկ խպառ փակել դպրոցը և այդպիսով փողոց շպրտել անօգնական դրության մեջ բանաստեղծին ու նրա ընտանիքը։ Ահա երեկ այդպես պիտի կատարեն Նախիջևանցիք իրանց երևելի հայրենակցի 35-ամյա հոբելյանը։ Դա չի՞ նշանակում արդյոք, ամեն տեսակ բարոյականությունից զուրկ լինել»։*

Վերջին ամսվա ընթացքում ամենուր տեսնելով համընդհանուր սեր և երախտագիտության արտահայտություններ իր անձի ու գործի նկատմամբ ոչ միայն իր աղգակիցների, այլ նաև ռուս մտավորականության շրջաններում, զգալով նրանց հոգատար վերաբերմունքը, բանաստեղծը կարծես մի պահ վեր էր բարձրացել առօրյա ծանր հոգսերից, թշնամանքի ու տգիտության ճղճիմ դրսևորումներից, իր դեմ կազմակերպված հալածանքներից, և հիվանդանոցի դռնապանի տված նամակը նորից ետ վերադարձրեց նրան դեպի դառը իրականություն։

Այս անգամ ես Պատկանյանի հակառակորդների պարագլուխներից մեկը տխրահռչակ Կյուրեղ վարդապետ Սրապյանն էր, որի դեմ դարձյալ պետք էր պայքար մղել երգիծանքի ամենազոր ուժով։ Եվ հենց հիվանդանոցում ծնունդ առավ ապագա երգիծական հեքիաթի՝ «Սատանայի օջիլի» մտահղացումը, որտեղ պիտի անխնա ծաղրի ու ոչնչացման դատապարտվեր հայ հասարակության համար մի իսկական պատուհաս դարձած այդ «սատանայի օջիլ» եկեղեցականը։ «Մինչ այս տարիքս հասած, ես այնպես գործ գործած չեմ, որ իմ ազգը ամաչեր ինձ համար, բայց կուգա մի օր, երբ ես հայ ազգի պարծանքը կլինեմ օտար ազգերու առջն, և սորա պատճառը այն է, որ երբեք, իմ անձնական շահերը որոնած չեմ, այլ միշտ հետամուտ եմ եղել ազգիս շահերին,— գրում է նա Ն. Նախիջևան, ապա ավելացնում սպառնագին,— բայց եթե մեր եկեղեցիներու վրա դեռևս երկար ժամանակ պիտի բարձրանան կյուրեղներ, այն ժամանակ ինքներս հրավիրած կլինենք այն վտանգները, որն մեր թշնամիները երազած անգամ չեն մեր մասին» (VII, 185)։

Հավանորեն հենց այդ հոգեկան փոթորկի ծանր օրերին ստեղծվեց «Հուսահատություն» բանաստեղծությունը, որը նշավակում էր հայ ազգի մեջ բույն դրած «ազգատեցությունը», կեղծավորությունը, տգիտությունը, եղբորը դավելու մոլուցքը, ամեն մի լուսավոր բան հալածելու, ոչնչացնելու տենչը։

Սակայն կյուրեղների դեմ պայքարը շարունակելու գիտակցությունը, կարծես, նորից ուժ պարգևեց բանաստեղծին, պատռեց հուսահատության պարույրը նրա հոգուց, և առողջության ժամանակավոր վատթարացումից հետո սկսեց կամաց-կամաց ապաքինվել և դեկտեմբերի 30-ին կարողացավ դուրս գրվել հիվանդանոցից։

* * *

Մոսկվայում մնալով մինչև հունվարի 27-ը, Պատկանյանը մեկ շաբաթով մեկնում է Պետերբուրգ ծնողների, հարազատների և բարեկամ-

ների հետ տեսակցելու նպատակով, ապա փետրվարի առաջին օրերին վերադառնալով Մոսկվա, նույն ամսի 7-ին արդեն համարյա լրիվ կազդուրված ճանապարհ է ընկնում դեպի հայրենիք։ Այդ մեկ և կես ամսվա ընթացքում, շնորհիվ Մոսկվայի հայ համայնքի և իր բարեկամների հոգատար վերաբերմունքի, Պատկանյանը կարողանում է լիովին հաղթահարել հոգեկան խռովքը, նորից խանդավառվում ստեղծագործական մըտահղացումներով, նորանոր ուղիներ որոնելով «սիրական հայրենին» ազատագրելու ուղղությամբ։ Նորից սկսվում են հավաքույթներ ու հացկերույթներ նրա պատվին, նորից նա առաջին հերթին ազգին ծառայելու հորդոր է կարդում հայ ուսանողներին, կոչ անելով նրանց թողնել «անհյուրընկալ հյուսիսը» և մեկնել Հայաստան գործելու և, եթե հարկը պահանջի հանուն նրա նահատակվելու։

Հունվարի 17-ին Պատկանյանը հրավիրվել էր մասնակցելու Մոսկվայի հայ ուսանողների ժողովին, որտեղ բազմաթիվ ուսանողներ հանդես էին եկել խանդավառ ճառերով, հավատացնելով բանաստեղծին, որ նրա պատգամները սրբորեն կիրառգործվեն իրենց կողմից։ Չկարողանալով պատասխան ճառով հանդես գալ տկարության և ձայնը կտրված լինելու պատճառով, Պատկանյանը ուսանողներին խոստանում է գրավոր ուղարկել իր խոսքը և նրանց համար կարդում այդ նույն օրը գրած «Գուսան» բանաստեղծությունը (վերադառնալով Ն. Նախիջևան, Պատկանյանը կատարում է իր խոստումը և Վառվառե Քանանյանի միջոցով հայ ուսանողներին ուղարկում իր խոսքը)։

Հետևյալ օրը Մոսկվայի հայ համայնքը էրմիտաժի դահլիճներից մեկում մեծ հրավերք է սարքում, որտեղ բանաստեղծի երախտիքի գնահատությամբ հանդես են գալիս Գրիգոր Խալաթյանը, Գևորգ Քանանյանը և այլ մտավորականներ։ Այս հավաքում Պատկանյանը ելույթ է ունենում համառոտ, բայց շատ ազդու ճառով և դարձյալ կարդում հիշյալ «Գուսան» բանաստեղծությունը, որտեղ կոչ է արվում ոտքի ելնել պայքարի համար, նշավակվում անտարբերությունն ու անձնական բարօրության ձգտումները, մասնավորապես անարգանքի սյունին գամվում հայ «մեծատունը», որը փոխանակ մտածելու ազգի մասին, «ղանդուլակներով կուրծքն է զարդարում»։ «Շատ փառավոր անցավ երեկոն,— գրել է Պատկանյանը Ն. Նախիջևան,— շատ ուրախ եմ, որ ես դրոշակ դարձա՝ հայերին միմյանց մոտ ժողովելու» (VII, 194)։

Բացի հասարակական հանդիպումներից ու ելույթներից Պատկանյանը Մոսկվայում ծանոթանում և մտերմանում է Գևորգ Քանանյանի քաղաքացիական կնոջ՝ Վառվառե Աքիմյանի հետ, որը 25 տարի ապարդ-

յուն ջանքեր էր գործադրում իր նախկին ամուսնուց բաժանվելու և Քանանյանի հետ օրինական ամուսնությամբ կապվելու ուղղությամբ։ Առաջին անգամ երես առ երես հանդիպելով իր «Տիկին և նաժիշտ» վիպակի հերոսուհի Սոֆիայի համար նախատիպ հանդիսացած կնոջ հետ և զգալով թե որքան է հեռու նա իր ներկայացրածից, Պատկանյանը խորին հարգանքով ու խանդաղատանքով է լցվում այդ զարմանալի կնոջ նկատմամբ, որ, հավատարիմ մնալով իր զգացմունքին, երկա՜ր-երկա՜ր տարիներ անօրինակ ուժով ու հետևողականությամբ մաքառում է բազմաթիվ արգելքների դեմ, ձգտելով օրինականացնել իրենց կապը։ Եվ հենց այդտեղ նա երդվում է բարեկամներին, իր ամբողջ հեղինակությունն ու ուժը գործադրել, Էջմիածնում ապահարզանի գործը գլուխ բերելու համար, որի գլխավոր արգելքներից մեկը Վառվառեի հայրը՝ հայ մեծահարուստ Հովհաննես Անանյանն էր։

Քանանյանի տանը Պատկանյանը ծանոթանում է նաև Վառվառեի 19-ամյա գեղանի դստեր՝ Մարիամի հետ, հիանում նրա անզուգական արտաքինով և երազում այդ հայ աղջնակին ազգասիրական զգացմունքներ ներարկելու, հայկական շահերի հետ կապելու մասին։

Այնուհետև հանդիպումներ ունենալով Եզյանի, Սանասարյանի և Քերովբե Պատկանյանի հետ, Պատկանյանը, հավանորեն նրանց խորհրդով, խուսափում է տեղի ուսանողության հետ հանդիպում ունենալուց, քանի որ Մոսկվայի հավաքույթների և խանդավառ հայրենասիրական ճառերի լուրը հասել էր արդեն մայրաքաղաքի ոստիկանատուն. «Ուսանողները ևս պատրաստվում էին ինձ ճաշ տալու, բայց ես բացեիբաց հրաժարվեցա, վախենալով, որ դղրդմունք չիբարձրանա, վասնզի փոլիցիան սկսել էր ծուռ-ծուռ նայելու և ինչ ասես լուրեր հասցրին ինձ» (VII, 201), գրել է նա Պետերբուրգից։

Վերադառնալով Մոսկվա, Պատկանյանը նամակով դիմում է Մակար կաթողիկոսին, Վառվառե Աքիմյանի ապահարզանի հարցը դրականապես լուծելու խնդրանքով, մանրամասն պատմում նրա և իր վաղեմի ընկերոջ կյանքի ողբերգությունը, փառաբանում սիրո զգացմունքը, որը եկեղեցական ամուսնության միակ վավերականությունը պիտի լինի, խնդրում թողնել ավելորդ խստարտությունը, որը կարող է պատճառ հանդիսանալ ժողովրդին եկեղեցուց հեռանալուն։ Հորդորում է կաթողիկոսին արդար որոշումով օգնել երեք հայ մարդու վերագտնելու իրենց երջանկությունը, քանի որ և՛ Վառվառեն և՛ նրա նախկին ամուսին Նիկողայոս Աքիմյանը կկարողանան կազմել մի-մի երջանիկ հայկական ընտանիք։

Փետրվարի 8-ին հասնելով Ն. Նախիջևան և ուրախությամբ տեղեկանալով, որ արհեստագործական դպրոցի գործունեությունը քննող հանձնաժողովը բարձր գնահատական է տվել ինչպես դպրոցի կառավարման աշխատանքներին, այնպես էլ աշակերտների առաջադիմությանը, խաղաղված սրտով ձեռնարկվում է բավական երկար ընդմիջած ստեղծագործական աշխատանքներին և արդեն փետրվարի 13-ին Մոսկվա Գրիգոր Խալաթյանին ուղարկում Ն. Նախիջևանի բարբառով գրած իր «Բարեկագրեր» երգիծաբանությունը։ «Բարեկագրեր»-ը ստեղծելու փորձեր Պատկանյանը կատարել էր տակավին 1875 թվականին, երբ նրա ձեռքն էին անցել մի ինչ-որ տիրացուի գրած նամակների բնագրեր։ Սկզբում պատմվածքի համար հերոսներ ընտրելով արհեստավորական շրջաններից, հեղինակը նամակագրություններ էր ստեղծել հոր և որդու միջև՝ անվանելով այն «Кучер-ի փարէվաքիրնէր», այնուհետև երևի դժգոհ մնալով ինքն իրենից, ձեռնարկել էր փեսացուի և հարսնացուի միջև նամակագրության նկարագրությունը, այս անգամ հերոսներին ընտրելով առևտրական միջավայրից։ Երրորդ անգամ վերադառնալով նամակագրական ձևին, Պատկանյանը ներկայացնում է վաճառականի և նրա նախկին գործակատարի միջև եղած մի զավեշտալի նամակագրություն։ Ստեղծագործությունը, ինչպես հավատացնում էր հեղինակը, նախատեսված էր միայն Մոսկվայի բարեկամներին, մասնավորապես տիկին Վառվառեին զվարճացնելու համար։

Այդ նամակները իրենց ձևով, նուրբ հումորի տակ թաքնված կյանքի այլանդակ հարաբերությունները վերհանող և ծաղրող բովանդակությամբ հայ գրականության մեջ մի առանձնահատուկ տեղ են գրավում։

Ավարտելով «Փարէվագրէր»-ը Պատկանյանը ձեռնարկում է «Մանկական հիշողություններ Մկրտիչ Էմինի մասին» հուշագրությունը և ուղարկելով Մոսկվա, Գևորգ Քանանյանին, խնդրում է տեղադրել այն Էմինին նվիրված բանաստեղծության հետ միասին նախապատրաստվող հոբելյանական ժողովածուի մեջ։

Անմիջապես հուշագրությունից հետո, Պատկանյանը սկսում է գրել դեռևս Մոսկվայում որոշած երգիծանքը Կյուրեղ վարդապետ Սրապյանի դեմ՝ անվանելով այն «Սատանայի օչիլ»։

Հիմնականում ծաղրելով վարդապետի մարտնչող տգիտությունը, որ երևան էր գալիս ինչպես նրա բազմաթիվ քարոզներում ու տպագրված ստեղծագործություններում, Պատկանյանը անխնա ձաղկում է նաև նրա երկպառակություններ սերմանող բնավորությունը, նման հոգևորական-

ներին համարելով ժողովրդի մարմնի վրա բուն դրած սատանայի ոջիլներ, նրանց արյունը ծծող պորտաբույծներ։

Նկարագրելով այն քստմնելի տեսարանը, երբ հայ վարդապետը փայտը ձեռքին աղքատներին քշում էր եկեղեցու դռներից «գնացեք աշխատե՛ք» աղաղակով, հեղինակը դառնությամբ բացականչում է. «Հէ՜րկէլէ շուն, տուն ինչո՞ւ մէմը վրատ չիս նայիլ. աս տարիքս վօր էկիլ իս՝ հալխին օղօրմութինով ապրած չի՞ս ինչ... Ի՞նչ ֆառղ կա ախքատին տըրված չոր տիլիմ հացին ու քու փաթլամիշ-յէղած թօռթին մէջը. յա ի՞նչ ֆառղ կա ախքատին առած փասլօտած տէնիշքէյին ու քէզի տրված տասը մանէթնօց ժամուցին մէջը։ Ֆառղը, չէս քէզի ասիմ, աս է «Մուրացկանը պզտիկ ախքատ է, տուն խօշօր ախքատ իս։ Մուրացկանը կաղաչէ ու կառնէ, տուն կխափիս ու կառնուս» (IV, 311)։

Ավարտելով և «Արձագանք»-ի խմբագրություն ուղարկելով իր նոր երգիծաբանությունը, Պատկանյանը սկսում է ճանապարհի պատրաստություններ տեսնել։ Անհրաժեշտ էր Քանանյանին և տիկին Վառվառեին տված խոսքի համաձայն էջմիածնում գլուխ բերել ապահարզանի գործը, ապա նորից շրջելով Հայաստանի գավառներում և, եթե հնարը թույլ տա նաև Արևմտյան Հայաստանում, աշխատել ծանոթանալ ժողովրդի տրամադրություններին, հանդիպումներ ունենալ հոգևոր և աշխարհական առաջնորդների հետ, երիտասարդությանը ոգևորել հայրենասիրական բանաստեղծությունների ընթերցմամբ ու ոգեշունչ «ազդու» ճառերով։

«Ես գրեթե պատրաստ եմ,— գրում է նա Գևորգ Քանանյանին հունիսի 13-ին,— այսինքն՝ մի նամակ էլ սպասում եմ Պետերբուրգից, որպեսզի կարող լինիմ, գուցե ճանապարհորդել դեպի Վան ևս» (VII, 233), հավանորեն կարգադրություն սպասելով ազգային պահպանողականների Պետերբուրգի Եղյան-Սանասարյան մասնաճյուղից։

Ստանալով սպասված նամակը, Պատկանյանն իր համար գծում է հետևյալ ուղեգիծը. Թիֆլիս, Բաքու, Ղարաբաղ, Երևան, էջմիածին, Ղարս, նորից Թիֆլիս, Բաթում, Տրապիզոն, Արզրում, Մուշ, Վան, նորից Տրապիզոն, Արզրում, Ստամբուլ, Զմյուռնիա (VII, 294)։

Հունիսի 25-ին դիմում ներկայացնելով արհեստագործական դպրոցի հոգաբարձուական խորհրդի նախագահին, իրեն պաշտոնական արձակուրդ տալու վերաբերյալ և իր եռամսյա ուղևորության նպատակը բացատրելով Արևմտյան Հայաստանում ապրող իր կնոջ ազգականներից սպասվող ժառանգության խնդիրը տեղում ստուգելու անհրաժեշտությամբ (VII, 235), Պատկանյանը հունիսի 28-ին դուրս է գալիս Ն. Նա-

խիջևանից և հետևյալ օրը իջևանելով Եսենտուկիում, գրում է իր առաջին նամակ-տպավորությունը և այն անհապաղ ուղարկում «Արձագանք»-ի խմբագրությանը: Իր ճանապարհորդական տպավորությունները Պատկանյանը նախատեսել էր հրատարակել նամակների ձևով և սկզբում ցանկացել դրանք ուղղել Մարիամ Աքիմյանին, բայց անսալով նրա մոր խնդրանքին՝ չհրապարակելու իր դստեր անունը մամուլում, փոխում է հասցեատիրոջ անունը, նամակները հղելով Խաչատուր Զալխուշյանին: Կոչելով այդ նամակ-տպավորությունները «Հայ ուխտավորի նամակներ», Պատկանյանը ցանկացել է բացահայտել իր այդ ուղևորության նպատակը, որ և իր վաղեմի բարեկամին արված ուխտն էր նրան իր բաղձալի նպատակին հասցնելու հարցում (VII, 236) և հայ ժողովրդի **ուխտյալ նվիրակի** *պարտավորությունները իր ազգի նկատմամբ*[1]:

Մի քանի օր մնալով հանքային ջրերում և այնտեղ հանդիպելով Գաբրիել Սունդուկյանին, Պատկանյանը երկար խոսակցություններ է ունենում նրա հետ հայ ժողովրդի ապագայի վերաբերյալ: Ինչպես կարելի է մակաբերել «Սրտի վկայություն» բանաստեղծությանը կցած նամակից և այդ բանաստեղծության բովանդակությունից, խոսակցությունը ծայր էր առել դեպի Փով (Провал) տանող ճանապարհին և վերաբերել էր հայ ժողովրդի մարտունակությանը, նրա հոգու թաքնված գանձերին, նրա ջերմ հայրենասիրությանը, ի վերուստ շնորհված հանճարին, և ի վերջո Հայաստանի ազատությանը մեկ հոգու պես նվիրվելու նրա պատրաստակամությանը: «Ուղարկում եմ քեզ այս փոքրիկ ոտանավորը, որ միտքդ պիտի բերե մեր տեսակցությունը Տաք-Ջրումը և մեր ճեմելը դեպի Փով (Провал) մի՞տդ է... Մի՞տդ է, այնօր դու և ես ինչե՛ր խոսեցանք: Այն օրվա խոսակցության արձագանքը ահա՛ ուղարկում եմ քեզ այսօր: Մարդու կյանքը աղքատ է երջանիկ րոպեներով, ինչպես Սահարայի անապատը ջրարբի օազիսներով. բայց ինչ որ կա՝ պետք է պահպանել, որ մեզնեն հետ եկողները նոցա մեջ սփոփանք գտնենեն: Այս ոտանավորս կարծում եմ, վատերից չէ՛: Ցանկալի էր, որ մեր աճող սերունդը զարգանար և տածվեր ավելի թարմ և հուսալի գաղափարներով: Վայ-վազլուխը և անձնամոտակությունը բավականին վնասներ հասցրեց ազգիս. տվե՞ց արդյոք մի որևէ շահ՝ երկբայելի է» (VII,

---

[1] *Չնայած իր նոթագրության մեջ Պատկանյանը «Ուխտավորի նամակներ» վերնագիրը բացատրում է իր որդու ծանր հիվանդության ապաքինման հետ կապված տված խոստումի՝ ուխտի հետ, սակայն ակներև է, որ այդ արված է իրողությունը քողարկելու նպատակով:*

279),—գրել է նա Սունդուկյանին, «Սրտի վկայություն» բանաստեղծության առաքման ժամանակ։

Հետաքրքրականն այն է, որ նույն այդ օրը նա Սունդուկյանին էր նվիրել հուսահատական, հոռետեսական տրամադրություններ պարունակող «Բանաստեղծ, լավ բաներ գրի» ոտանավորը։ Պետք է ենթադրել, որ Սունդուկյանը մխիթարելով բանաստեղծին, աստիճանաբար կարողացել է ցրել նրա ծանր տրամադրությունը, հույս ու հավատ ներշնչել նրան ազգի ապագայի նկատմամբ (V, 114)։ Բարեկամների զրույցը տևում է մինչև ուշ գիշեր, և ջերմությամբ բաժանվելով միմյանցից, Պատկանյանը հետևյալ առավոտ Ռազմավիրական ճանապարհով մեկնում է Թիֆլիս։

Սակայն լեռներով անցնող ճանապարհին մրսելով սառնաշունչ քամուց, Պատկանյանը, որը դեռ նոր էր ապաքինվել ծանր վիրահատությունից, դարձյալ հիվանդանում է և ծանր դրության մեջ մի կերպ հասնում Թիֆլիս (VII, 24)։ Անկողնում պառկած նա շարունակում է գրի առնել իր ճանապարհորդական տպավորությունները, որոնցից երկուսը նա անհապաղ ուղարկում է «Արձագանք»-ի խմբագրություն, իսկ երրորդը, հակակառավարական տրամադրությունների պատճառով նախատեսում է հրատարակել Մարսելի «Արմենիա»-ում։

Ապաքինվելուն պես Պատկանյանը այցելում է Վրաստանի թեմի առաջնորդին, խորհրդակցում նրա հետ ապագա ճանապարհորդության վերաբերյալ. «Առաջնորդը Հայաստանի ճամփորդության մեջ վտանգ չի տեսնում <ոչ> կառավարության և ոչ քրդերու կողմանե, բայց խորհուրդ է տալիս ճանապարհս այսպես բռնել՝ Էջմիածին, Իգդիր (էլի մեկ ավանի անուն տվեց, բայց մոռացա), հետո Ալեքսանդրապոլ, Ղարս, Արզրում, Մուշ, Վան և վերադարձը՝ Մուշ, Արզրում, Տրապիզոն, Ստամբոլ և Իզմիր» (VII, 242),—հայտնում է նա Ն. Նախիջևան և խնդրում դրամ հասցնել իրեն աշխատավարձի հաշվից, քանի որ իր մոտ եղած 94 ռուբլին հնարավորություն չի ընձեռի այդպիսի երկարատև ճանապարհորդություն կատարելու։ Ինչպես երիտասարդության օրերին կատարելով խմբագրության հանձնարարությունները, նա հրատարակության և տպագրության բոլոր ծախսերը վճարում էր իր աղքատիկ դրպանից, այնպես էլ հիմա ձեռնարկելով երկարատև, մեծածախս ճանապարհորդություններ հայ ժողովրդի հետ ծանոթանալու, նրանց ազգային-ազատագրական զգացմունքները գրգռելու ու արթուն պահելու նպատակով, դարձյալ ամեն մի կոպեկ վճարում էր ինքը, կտրելով դրանք իր ահագին ընտանիքի բերանից։

Թիֆլիսում մնալով 14 օր, Պատկանյանը անընդհատ հանդիպումներ է ունենում քաղաքի տարբեր խավի ներկայացուցիչների հետ, այցելում խմբագրություններ, մասնավոր տներ, զրուցում, շրջափում տպարանադրություններ, ոգևորում, կարդում և ձեռագիր բանաստեղծություններ տարածում ունկնդիրների շրջաններում: «...Չիմանաս, որ մեր ընդհանուր գործերի մասին անգործունյա է անցնում օրս, ժամս, մինչև անգամ վայրկյանս: Փրկավետ և ազգաշեն հարվածները տալիս եմ աջ ու ձախ և ունկնդիրքս հազարով են: Գրածս[5], որ թուլիկ ու աղքատիկ մասն է ասածներիս, շուտով կկարդաս, և մեջեն, ինչպես խելոք մարդ, կհասկանաս, թե դեպի ո՞ւր գնալու են ընդդիմներս և ինչե՞ր կործանելու» (VII, 243):

Հուլիսի 16-ին Թիֆլիսի հայ հասարակությունը «Եվրոպա» այգում կազմակերպում է հանդիսավոր ընթրիք ի պատիվ բանաստեղծի, նվիրում նրան իր գործերի փառակազմ հրատարակությունը, դափնյա պսակ, շքեղ ծաղկեփնջեր: Սեղանի կառավարիչ Աբգար Հովհաննիսյանը հանդիսականներին է ներկայացնում բանաստեղծի վաստակը, անգնահատելի համարելով այն մեծ տրվածքները, որ 35 տարիների ընթացքում, առանց մի օր ընդմիջելու նա շռայլորեն բաժանել է իր ժողովրդին: Խոսում են Պատկանյանի կատարած ու դեռ կատարելիք գործերի մասին, Շիրվանզադեն, Ալեքսանդր Երիցյանը, Հարոն, Եղեկյանը, Ջելինսկին ընթերցում են տարբեր տեղերից առաքված հեռագրեր, արտասանում նրա բանաստեղծություններից: Ամբողջ երեկոյի ընթացքում շարունակ երգվում էին նրա խոսքերով հորինված երգերը: Երեկոյի վերջում հուզիչ պատասխան խոսքով հանդես է գալիս Պատկանյանը, խոստանալով իր կյանքի մնացորդը դարձյալ ողջակեզ անել հարազատ ժողովրդի ինքնագիտակցության բարձրացմանը, շնորհակալություն հայտնում ներկաներից իր վաստակի բարձր գնահատման համար[6]:

Հուլիսի 18-ին դուրս գալով Թիֆլիսից, Պատկանյանը երկու օր կանգ է առնում Դիլիջանում, Պերճ Պռոշյանի ուղեկցությամբ այցելում Հաղարծին, հիանում նրա բնական դիրքով ու տաճարների ճարտարապետությամբ: Դիլիջանի ձորի անզուգական գեղեցկությունը, կազդուրիչ օդը, մեղմ կլիման բանաստեղծը համեմատում է իր հենց նոր տեսած աշխարհահռչակ Թթու Ջրի (Կիսլովոդսկ) հետ և շատ ավելի բարձր դասում Հայաստանի այդ դրախտանման անկյունը: «Օդը այնպես մաքուր

[5] Խոսքը այստեղ «Հայ ուխտավորների նամակների» մասին է:

[6] Տե՛ս «Արձագանք», 1887, № 26:

էր և այնպես առատորեն լցված էր թթվածինով,— գրում է նա,— որ ամեն մի շունչ առնելիս՝ առողջությունը լայն հոսանքով մտնում էր ցավագար թոքերիս մեջ։ Քանի որ անտառում էի ու սարի գագաթին, թեև ձիս չափ տալով սրընթաց վազում էր, երևակայե՛, ո՛չ մի անգամ չհազացի։ Հայաստանը դրախտի տեղ որ չէ, ապա ի՞նչ է» (V, 137, 138)։

Երևան հասնելուն պես Պատկանյանը շտապում է այցելություններ կատարել աքսորում գտնվող իր բարեկամների հարազատներին, հուզվում նրանց թափուր տեղերը տեսնելով, արտասվում նրանց հարազատների հետ միասին։

Երկու օր ևս մնալով Երևանում և այցելություններ կատարելով քաղաքագլուխ Գեղամյանին, պատվավոր քաղաքացիներ Դադյանին ու Քանքռշյանին, Պատկանյանը շտապում է Էջմիածին իր հիմնական նպատակներից մեկը ի կատար ածելու։ Երեք օր Էջմիածնում մնալով և կաթողիկոսի քարտուղար Ներսես եպիսկոպոսից իմանալով, որ Վեհափառը հակված է դրականապես լուծելու ապահարզանի գործը, Պատկանյանը կաթողիկոսի հատուկ հրավերով մեկնում է Բյուրական և երեք օր այնտեղ մնալուց և կաթողիկոսի՝ ապահարզանի վերաբերյալ համաձայնությունը ստանալուց հետո, երկար զրույցներ ունենում իր ճանապարհորդության հիմնական նպատակների մասին, լսում նրա խորհուրդները այցելության հարմար քաղաքների վերաբերյալ[7], նրա հետ միասին գծում իր նոր ուղին։

Երևան վերադառնալուց հետո Պատկանյանը հայ, ռուս և թուրք հասարակության կողմից հրավիրվում է մեծ հացկերույթի, որտեղ «Արաքսի արտասուքի» հնչյունների տակ անընդհատ ճառեր են արտասանվում, գովաբանվում իր ժողովրդի նկատմամբ բանաստեղծի ունեցած մեծ երախտիքը[8]։

Մնալով Երևանում մինչև հուլիսի 30-ը, հանդիպումներ ունենալով ամենատարբեր խավի ներկայացուցիչների հետ և ամենուրեք հայրենասիրական զգացմունքներ վառելուց հետո, Պատկանյանը մեկնում է

---

[7] «Վեհափառը հոժար չէ՛, որ ես երթամ Էրզրում, Մուշ և Վան. ասում է թե՝ այնտեղ միայն խառնիճաղանջ ամբոխ է մնացած, որոնք ինձմեն չեն շահվիլ, բայց գործին վնասել կարող են. բայց օրհնեց ճանապարհորդությունս դեպի Ստամբոլ և Իզմիր» (VII, 251)։

[8] «Երևանում ինձ մեծամեծ բանքեթ տվին. հրավիրված էին քաղաքի ռուս մեծավորքը և տաճիկ իշխանները։ Ամենքը ինձ ցույց էին տալիս այնպիսի հարգանք, ասես թե ես ազգային պատգամավոր եմ և ունիմ <իրավունք> ազգի բերանից խոսելու և խոստանալու»—գրել է նա Երևանից Մարիամ Աքիմյանին (VII, 253)։

Թիֆլիսի վրայով Բաթում՝ Պոլիս և Իզմիր անցնելու որոշումով։ «Այժմ ես կերթամ Ստամբոլ, կտեսնեմ Բոսֆորը և կտեսնեմ մեր հայ եղբայրներին, որոնք բոլորովին ուրիշ տեսակ զարգացած են քան թե մենք» (VII, 253),—գրել է նա մեկնելուց առաջ։

Օգոստոսի 17-ին ֆրանսիական «Մինգրելիա» նավով դուրս գալով Բաթումից, բանաստեղծը 19-ին ոտք է դնում Կոստանդնուպոլիս։

Անօրինակ խանդավառությամբ է ընդունում Կոստանդնուպոլսի հայ համայնքն իր ազգային երգչին։ Ընդունելություններն ու հանդեսները հետևում են մեկը մյուսին, մեծահարուստ ամիրաներն ու պետական բարձր պաշտոնյաները (Հովհաննես Սագըզյանը, Ջունդ Ասպետը, Համբարձում Գաֆավյանը և այլք), իրար ձեռքից խլում են բանաստեղծին իրենց ճոխ, մարմարյոնյա պալատներում հյուրընկալելու պատիվը։ Պոլսի մտավորականները, բազմաթիվ վարժատների աշակերտները հանդեսներ ու մեծարանքի երեկոներ են կազմակերպում, ուր հնչում են նրա ազատաբաղձ բանաստեղծություններն ու սրտառուչ երգերը։

Գատը գյուղի հայ երիտասարդությունը Ղալաթիայի կենտրոնական վարժարանի դահլիճում կազմակերպված մեծարանքի երեկոյին Պատկանյանին է ընծայում արծաթե թանաքաման ու ոսկյա գրիչ, ինչպես նաև նկարիչ Սրապյանի «Ղարիբ մշեցի» յուղանկարը «Եւ զքոյդ ի քոյոց քեզ մատուցանէմք» մակագրությամբ, քանի որ այդ կտավը ստեղծվել էր Գամառ-Քաթիպայի «Ղարիբ Մշեցի» բանաստեղծության ներշնչմամբ[9]։ Բացի այս ամենից Պատկանյանը հանդիպումներ է ունենում պատրիարքարանի քարտուղար Հովհաննես Մկրյան քահանայի,

---

[9] Գատը գյուղի հայ երիտասարդությունը այսօր կեսօրեն վերջ, յուր մեջեն պատգամավորությամբ մը, որս կառաջնորդէր Թաղին եկանդուն քարոզիչ վարդապետը, ներկայացավ պ. Պատկանյանին Ղալաթիո կեդրոնական վարժարանին մեջ։ Պատգամավորությունը հանձնեց Պատկանյանին մի հույժ գեղեցիկ թանաքաման արծաթյա։ Թանաքամանի պատվանդանի վրան գրված՝ «Կ. Պոլիս Գատը գյուղի հայ երիտասարդությունն առ պ. Ռ. Պատկանյան, 1887, օգոստոսի 25»։ Այդ կաղամարի հետ միասին մի ոսկեփետուր գրիչ ևս Ռ. Պ. գրերովս Թանաքամանեն վերջ տրվեցավ մի պատկեր, որ խոր տպավորություն թողեց բանաստեղծի վրա։ Այդ պատկերը մի խեղճ մշեցվո պատկեր էր Տեղն էր ընելու «Եւ զքոյդ ի քոյոց քեզ մատուցանէմք»։ Արդարև այդ պատկերն մի քանի տարի առաջ գծագրված էր Գամառ-Քաթիպայի ներշնչմամբ։ Գծագիրը պ. Սրապյանինն էր Պ. Գր. Նիկողոսյան, որո բերնին մեջն էր միշտ Գամառ-Քաթիպա անունն, կարդաց օր մը պատկերահանին «Ղարիպ Մշեցին»։ Այդ տողերը ցնցեցին պատկերահանը, որ բերան առավ այդ զորովալից և սրտահույզ բանաստեղծությունը և զայն երգելով, վրձինն ձեռքին նկարեց մշեցի ղարիպ Մանուկ աղբար, հայու թշվառության այդ կենդանի պատկերը։ Երբ պատկերը պարզեցին պ. Պատկանյանի աչաց առջև, աչքերը լցվեցան արտասուքով. («Մշակ», 1888, № 99)։

կաթոլիկների պատրիարք Ազարյանի և, անկասկած, Մկրտիչ Խրիմյանի հետ։ Չնայած այն հանգամանքին, որ ուղղակի տեղեկություններ Խրիմյանի հետ ունեցած հանդիպման վերաբերյալ չեն պահպանվել, սակայն, դեռևս ճանապարհորդության սկզբում նրա հիմնական նպատակներից մեկն էր հանդիպումը Խրիմյան Հայրիկի հետ և իրեն Պոլիս ուղարկվելիք նամակները նա խնդրում էր հասցեագրել Պատրիարքարան, Հայրիկին (VII, 256)։

Հովհաննես Մկրյանի ուղեկցությամբ Պատկանյանը այցելության է գնում Բերայի գերեզմանատանը ամփոփված իր մեծ պապի՝ տեր Պետրոս Պատկանյանի շիրիմին, ջերմեռանդ պատկառանքով համբուրում այն[10], այցելություններ կատարում զանազան դպրոցներ և բարեգործական հիմնարկներ։

Ինչպես Հայաստանում, այնպես էլ Պոլսում ունեցած հանդիպումների ժամանակ բանաստեղծը համոզվում է, որ հայ հասարակության, մասնավորապես երիտասարդության մեջ արդեն հասունացել է ազգային ինքնագիտակցության վսեմ զգացմունքը, որ «մի օր Հայաստան նորից պիտի ծաղկի և բարգավաճի յուր հարազատ զավակներով», որ «բանը դեպի այդ գնում է և մենք այդ ավետավոր օրվան պատրաստ պիտի լինինք և այդ օրվա համար ուրախությամբ պիտի զոհենք ոչ միայն մեր ժանգ ոսկին, այլև մեր բախտը և կյանքը...», որ «Հայաստանի ազատ արժե այդ զոհերին» (VII, 273)։

Խանդավառված նման տպավորություններով, Պատկանյանը օգոստոսի վերջերին թողնում է Պոլիսը և վերադառնում հայրենի քաղաք։

* * *

Տանը Պատկանյանին սպասում էր նոր ուրախություն։ Աշխարհ էր եկել նրա իններրդ զավակը՝ Աշխեն դուստրը[11]։

---

[10] Գաբրիել Պատկանյանին ուղղված իր նամակում Հովհաննես Մկրյանը գրում է. «...Տեսեալ զորդին մոռացայ զհայրն... Այնչափ խանդաղատանոք փարեցա և սրտագին համբուրիվ ողջագուրեցի զնա... Եւ ոչ կարացի պատվել զնա իբրև զբաղումս, բայց նա սիրողաբար պատվեաց զիս և եղբայրաբար խոնարհեցավ մտանել ընդ խոնարհ հարկ իմով։ Տարա զնա ի գերեզման մեծ հորն հոգելույս, Տեր Պետրոս քհ. Պատկանեան, զոր համբուրեց ջերմագին պատկառանոք և ես կարդացի զհոգվույն բարեմաղթեալ վասն օրհնութեան սերնդոյ նորին զերկարութեան ամացն» (ԳԱԹ, Գ. Պատկանյանի ֆ., № 66 դ)։

[11] Ռ. Պատկանյանը ունեցել է տաս երեխա, որոնցից երկրորդը՝ Արամը վախճանվել է մեկ տարեկան հասակում։ 1. Սանդուխտ (1864, Պետերբուրգ), 2. Արամ (1866, Պետերբուրգ—1867, Նախիջևան), 3. Գաբրիել (1868, Նախիջևան—1929, Մոսկվա), 4. Հովհաննես (1870, Նախիջևան—1916), 5. Գրիգոր (1872, Նախիջևան), 6. Եվգենիոս

Անմիջապես մխրճվելով դպրոցական աշխատանքների մեջ, Պատկանյանը միևնույն ժամանակ սկսում է կարգի բերել «Սատանայի օչիլ»-ը՝ «Արձագանք»-ի խմբագրություն ուղարկելու համար, ինչպես նաև ավարտին հասցնում «Ուխտավորի նամակներ»-ը, որոնք, սակայն, տպագրվում էին բավականին ճապաղ ու անհետաքրքիր այն բազմաթիվ արգելքների պատճառով, որ հեղինակը դնում էր ինքն իր առջև գրաքննչական խստություններից խուսափելու նպատակով. «Ափսո՜ս, որ ամեն բան գրել չեմ կարող ցենզուրայի խստության պատճառով, վասնզի իմ անունը և սուտ անունը ահ ու սարսափանք է ցենզորների համար»,— գրել է բանաստեղծը իր ճանապարհորդական նոթերը գրի առնելու պահին (VII, 247)։

Սակայն այդ բիչն էլ հնարավոր չի լինում տպագրել։ Անխղճաբար ջնջելով ամբողջ պարբերություններ, գրաքննիչ Սոլոմոն Մելիք-Մենհրաբովը հրատարակության էր թողնում միայն գրվածքի անդամահատված մարմինը։ «Ուխտավորի նամակներ»-ի հետ գրաքննիչը վարվում է խիստ անխիղճ կերպով, ջնջում է, ինչ որ անձամբ իրեն դուր չի գալիս, թեև այդ լիներ ոչ հակացենզուրային,— հայտնում է Պատկանյանին «Արձագանք»-ի ժամանակավոր խմբագիր Շիրվանզադեն,— ես այս մասին մի տասն անգամ վիճած կլինեմ թե՛ Ֆրանգուլովի, թե Մելիք-Մենհրաբովի հետ։ Բայց գիտեք, որ ոչ մի համոզիչ վիճաբանություն նշանակություն չունի, երբ մտքի դահիճները հակառակ են մի բանի»[12]։

«Ուխտավորի նամակներ»-ի բախտին է արժանանում նաև «Սատանայի օչիլ»-ը, որի առաջին մասը տպվելուց հետո գրաքննիչը ցրում է շարվածքը, հայտարարելով, որ հոգևորականների մասին արգելված է որևէ քննադատական բան բաց թողնելը։ Բայց այդ առաջին մասն էլ բավական էր, որ հեղինակի դեմ թշնամանքի նոր ալիք բարձրանար։ Այս անգամ թշնամական «զորատեղին», «Նոր-Դար»-ի խմբագրությունն էր, որի էջերում «Դատողություններ և դիտողություններ» վերնագրի տակ համարից համար լույս էին ընծայվում բազմաթիվ մտացածին մեղադրանքներ և անվայել լուտանքներ պարունակող հոդվածներ, որոնց մեջ Զ ստորագրության տակ թաքնված գրաքննադատը համարձակվում էր անգամ հրապարակավ առաջ քաշել արաբերենից արված գրագողության

(1875, Նախիջևան—1940-ական թթ. Ռոստով), 7. Եղիսաբեթ (1878, Նախիջևան), 8. Մարիամ (1879, Նախիջևան—1918, Բաքու), 9. Աշոտ (1883, Նախիջևան), 10. Աշխեն (1887, Նախիջևան)։

[12] ԳԱԹ, ՌՊՖ, № 913։

հարցը, քննադատում ու ծաղրում «Ուխտավորի նամակներ»-ի աղքատիկ բովանդակությունը։

Պատկանյանի բոլոր ջանքերը իր քննադատներին պատասխանելու, նրանց հետ գոտեմարտի բռնվելու խնդրում, անցնում են ապարդյուն։ Գրաքննությունը նրա ոչ մի գրվածքը բաց չի թողնում։

Դիմելով Գաբրիել Սունդուկյանին, Պատկանյանը խնդրում է նրան անձամբ խոսելու գրաքննիչի հետ և պարզելու այս տարօրինակ երևույթի պատճառը, երբ իր մասին թույլ են տալիս ամեն ինչ գրել, իսկ իրենից խլում պատասխանելու իրավունքը։ «Սիրական Գաբրիել,— թախանձում է նա,— դու ինձ շատ և շատ կպարտավորես, եթե հատկապես երթաս տեսնվիս ցենզոր Մելիք-Մեհրաբյանի հետ և երկարորեն խոսիս այդ մասին, նույնպես աշխատես իմանալու, թե ինչո՞ւ նա թույլ է տալիս անխնայաբար և գռեհիկ խոսքերով վատաբանել ինձ, իսկ իմ անմեղ հեքիաթները և առակները վճռողաբար արգելում է տպելու։ Ո՞ւր ենք մենք կենում, ե՞րբ ենք մենք կենում. մեր թագավորը խոմ Иван Грозный-ը չէ, այդ սրիկա Z-ը խո նորա ОПРИЧНИК-ը չէ՞... Դիցուկ թե, վերջապես, ես գրված եմ ի շարս այն մարդոց (թեև այդ հավանական չէ, վասնզի այդպիսի վեհ պատվի ես բնավ արժանի չեմ), որոնց գրվածքը տերության որևէ հաշվով հրատարակման համար անհարմար է դատված, ինչպես զորօրինակ Սոլթիքով-Շչեդրին, երբեմն Օստրովսկի և այլն. թեև շատ ցավալի է այդպիսի վիճակը, բայց գոնե նորա մեջ այն մխիթարությունը կա, որ այդպիսի անձանց վրա չարախոսել ևս ընդ նմին արգելված՝ է լինում սովորաբար. բայց ես տարաբախտաբար, այդ մխիթարությունեն ևս զրկված եմ շնորհոք Թիֆլիսի ցենզորին. ինձ ամեն սրիկա լիաբերան հիշոցում է. իսկ ես գրիչս ձեռք առնելու իրավունք չունիմ...» (IV, 555, 566)։

Բայց ոչ մի հորդոր չի կասեցնում «մտքի դահիճներին» շարունակելու իրենց գործը, և Պատկանյանի ստեղծած ոչ մի բանաստեղծություն, ոչ մի արձակ ստեղծագործություն, բացառությամբ 1888 թ. «Արձագանք»-ում տպագրված «Հազար բամբասանքին մեկ պատասխան» հոդվածի և մեկ տարի անց լույս ընծայված «Խապասթը վորի՞նն է» պատմվածքի, չհրատարակվեցին Կովկասում։

Ամենայն հավանականությամբ հենց այդ շրջանում էլ Պատկանյանը ստեղծում է իր «Լեզու կտրող» փոքրիկ պատմվածքը՝ ուղղված «մտքի դահիճ» Սողոմոն խան Մելիք-Մեհրաբովի դեմ, որը տարիներ շարունակ վարելով ավագ գրաքննիչի պաշտոնը, աննահանջ կերպով հետապնդում էր հայ գրողներին ու լրագրապետներին, զեկուցագրեր ներ-

Հայացնում այս ու այն գրողի, գործչի, գրական տարբեր երևույթների դեմ, շարունակ պահանջելով փակել թերթը, պատժել խմբագիրներին և ամենուր տեսնելով «սեպարատիզմի» երևույթներ, լռության դատապարտում, բռնի կերպով սեղմելով հայ գրողների բերանները իր բռունցքով։ Պատմվածքի գործողությունները փոխադրելով XIII դար, Պատկանյանը ներկայացնում է մոնղոլական տիրապետության ժամանակ մի հայ վերակացուի, Կարապետի վարքագիծը, որն իր տիրակալի առջև քծնելու մոլուցքից ամեն մի երևույթ դիտում է որպես տերության դեմ ուղղված հանցանք և կտրում իր ազգակիցների լեզուները։

* * *

1888 թվականի ընթացքում, չնայած առողջության հետզհետե վատթարացմանը, Պատկանյանը Ն. Նախիջևանի բարբառով ստեղծում է «Օցի խածած», «Շատէրէն մէկը», «Խօրթլախ», «Հին տուն ու նոր տուն», «Փորսուխին Ավազը» ստեղծագործությունները, որոնք կազմում են նրա՝ բարբառով գրված ստեղծագործությունների երկրորդ շրջանը։

Եթե 70-ական թվականներին հեղինակին ավելի զբաղեցնում էր գաղթօջախի անցյալը և դրա հակադրումը ներկայի հետ, ապա այս երկրորդ շրջանում նրա պատմվածքների նյութը բուրժուական հարաբերությունների զարգացման հետևանքով փլուզում ապրող հայ համայնքի պատմությունն էր, հայ ընտանիքի քայքայումը։ Առաջինը՝ «Օցի խածծը» երգիծաբանությունը, գրված էր դարձյալ կոնկրետ անձնավորությունների, կոնկրետ դեպքերի ազդեցության տակ և, ամենայն հավանականությամբ, դարձյալ ուղղված էր Հովհաննես Պապասինյանի և նրան հովանավորող մի շարք անձանց, մասնավորապես Մինաս Պալապանյանի դեմ, որոնք չէին դադարում «Նոր-Դար»-ի էջերում անվայել թղթակցություններ տպագրել բանաստեղծի և նրա կառավարած դպրոցի վերաբերյալ։ Երգիծական սուր գրչով ներկայացնելով, թե ինչպես միամիտ ու կիսակիրթ Սեղպոսը, թունավոր օձից խայթվելուց հետո, չկարողանալով ազատվել գարշահոտ վերքից, երազում իրեն այցի եկած սատանայի խորհրդով ուխտ է գնում Երուսաղեմ՝ Հուդայի գերեզմանին և երկրպագություններ անելով նրան, ազատվում օձի խայթից առաջացած քստմնելի վերքից, քանի որ թույնը ներծծվելով նրա հոգին, ապաքինում է նրա մարմինը, բայց՝ ապականում էությունը։

Այնուհետև բանելով խաբեությունների ու դավաճանությունների ուղին, Սեղպոսը շատ արագ հարստանում է, սեփականելով իրեն՝ «Հաղաչին» հատուկ բոլոր հատկանիշները և իր հոգու մեջ կուտակված թույնը

առատորեն թափում ամեն լուսավոր երևույթի, ամեն կարգին մարդու, ամեն օգտակար գործունեության վրա։

Երկրորդ պատմվածքը՝ «Շատէրէն մէկը», պատկերում էր թղթախաղի զոհ մի հայ ընտանիքի ողբերգությունը, որտեղ պարկեշտ տանտիրուհին չկարողանալով տեսնել երբեմնի աշխատասեր, ազնիվ ամուսնու անկումը, մեռնում է վշտից, իսկ խաղամոլը տանուլ տալով իր ամբողջ կարողությունը, շարունակում է ամբողջ օրեր անցկացնել խաղասեղանների առջև, չմտածելով իր որբ մնացած զավակների մասին։

Ավելի հետաքրքրական էր Պատկանյանի «Խօրթլախ» և «Հին տուն ու նոր տուն» պատմվածքների կառուցվածքը, որոնք կրում էին «Պարկէնթանքի նախընթեր» ընդհանուր վերնագիրը։

Ընդօրինակելով Չառլզ Դիկկենսի «Ծննդյան պատմվածքներ»-ի ձևին, որտեղ իրական ու ֆանտաստիկ աշխարհների բախման հետևանքով հեղինակը կարողացել էր վերհանել ժամանակակից բուրժուական հասարակության ողջ այլանդակող էությունը, Պատկանյանը նույնպես անդրաշխարհային, դժոխային պատկերներով և այդ ամենի իրականության հետ հակադրումով կարողացել էր կերտել իրեն ժամանակակից գիշատիչ հարստահարողների իրական կերպարներ։

Իրական կյանքում իսկապես ոճրագործ, «հոգիները սատանային ծախած» այդ մարդիկ, որոնք առանց երկմտանքի ընդունակ են կողոպտելու անգամ իրենց հարազատ զավակներին, որոնք իրենց հարստությունը դիզել են հազարավոր դժբախտների արյան ու արտասուքի գնով, անդրշիրիմյան կյանքում զգալով կյանքի ողջ ունայնությունը, զղջում էին իրենց արածների համար, խնդրում կենդանի մնացածներից չհետևել իրենց օրինակին։ Անդրշիրիմյան սարսափների նկարագրմամբ, կարծես, հեղինակը վերացնում է իրական ու մտացածին աշխարհների տարբերությունը, ընթերցողին հավաստիացնելով դրանց նույնությունը, գերբնական այդ արարածների մեջ տեղադրելով իրական հարստահարիչների կերպարները, որոնք իրենց աշխարհային գոյության ընթացքում նույնպես «խածնում էն, ճանկռտում, ծակծակում, քէրթում ու միս կըրծում» (IV, 349)։

Բացի իրականության ամբողջականացված պատկերումը տալուց, հեղինակը դժոխքի բոցերի մեջ այրվող աղաների երկրային կենսագրությունները օժտում էր մի շարք հայտնի դրվագներով, նրանց արտաքին կերպարանքներն ու խոսելաձևերը նմանեցնում քաղաքում ծանոթ անձնավորությունների, դրանով կրկին ու կրկին գրգռելով դրանց նախատիպերին իր դեմ։ Իսկ երբ այդ գործերից երկուսը, «Օցի խածածը» և «Նա-

տէրէն մէկը» լույս աշխարհ են գալիս Մոսկվայում նոր հրատարակվող «Հանդես գրականական և պատմական»-ի առաջին գրքում, նորից սկիզբ են առնում թշնամական հոդվածներ բանաստեղծի դեմ, նորից «Նոր-Դար»-ը, որը իր վրա էր վերցրել Պատկանյանի դեմ պայքարելու առաջամարտիկի դերը, սկսում է իր էջերում տեղ տալ զանազան լուրերի և հասնում նրան, որ քննարկում է արհեստագործական դպրոցի դրամարկղում եղած մի ինչ-որ աննշան դրամական պակասորդի հարցը[13]։

Բացի թերթի էջերում հանդես գալուց, «Նոր-Դար»-ի համակիրները մասնավոր նամակներով վիրավորում և «կարգի» են հրավիրում բանաստեղծին, պահանջելով դադարեցնել «աղտեղի» գրվածքներով «պատվավոր» քաղաքացիներին արատավորելու սովորությունը։

Պատասխանելով նման գրչակներին և՛ հրապարակավ, և՛ մասնավոր նամակներով, Պատկանյանն ընդհանրացված երևույթները չհասկանալը, չըմբռնելը, երգիծաբանության մեջ միայն իր կերպարը տեսնելը և վիրավորվելը համարում է ազգի մտավոր զարգացման պակասություն և գրում. «Ճիշտ երկու տարի սորանից առաջ մի քանի բարեկամք համոզիչ խոսքերով խնդրել էին ինձ, որ ես գրիչ չառնում ձեռքս երգիծական հոդվածներ գրելու դիտմամբ, վասնզի, ասում էին նոքա, մեր ժողովուրդը տակավին զարգացած չէ, փոխանակ խրատվելու և հոռի սովորությունները փոխելու, նա առավել կատաղում է, երբ տեսնում է իրեն հրապարակավ այպանված»։ Ապա հայտնելով իր հաստատակամությունը մինչև վերջ պայքարելու հայ կյանքը, հայ ընտանիքը, հայ մարդու անունը աշխարհի առջև վարկաբեկող երևույթների դեմ, Պատկանյանը հարց է տալիս «Նոր-Դար»-ին պաշտպան կանգնած բժ. Միսակ Արամյանին, որը լուտանքներով լի նամակներ էր ուղղել իրեն. «Ինչո՞ւ այսօրվա Ձեր բարեսրտությունը հանդես չհանեցիք 2—3 տարի առաջ, երբ այդ լրագրում զանազան սնանկներ, խաբեբաներ, աշխարհակերներ... արտաքսված թերուս ուսանողներ, խելագարներ, սուտ-մունջեր զանազան ստահոդ լուրեր էին տարածում իմ կառավարած Արհեստական դպրոցի մասին... Ինչո՞ւ այն ժամանակ Դուք չասացիք Ձեր բարեկամ-լրագրապետին, որ չէ՛ կարելի հավատալ կուրորեն մի քանի սրիկաների, սինլքորների և ցխոտել Ռ<աφայել> Պ<ատկանյան> անունը, որ փոքրիշատե երախտիք ունի ազգիս մեջ։ ...Հարձակվողը ես չեմ... ես պաշտպանվում եմ, միայն թե իմ զենքով, այսինքն երգիծաբանությամբ, որն Դուք անվանում եք աղտեղի ոտանավոր... Պուշկինն էլ շատ էպիգրամ-

[13] Տե՛ս «Նոր-Դար», 1888, № 93։

մասին գրել է յուր ժամանակակից Բուլգարինի, Քաչենովսքիի և այլոց վրա և զորանով ո՛չ նորա անունը կեղտոտվել է և ոչ նորա գրվածքը ներկվել աղտեղի» (VIII, 53, 54)։

Ուշադրություն չդարձնելով սկսված արշավի վրա, առանց որի նա արդեն չէր պատկերացնում իր գոյությունը, Պատկանյանը «Հանդես գրականական և պատմական»-ի երկրորդ գրքի համար ուղարկում է «Սատանայի օջիլ»-ը, խնդրելով անպայման տպագրել այն առանց ուշադրություն դարձնելու «սորա» և «նորա» խոսքերին։ Հիշյալ գրվածքի հետ հեղինակը առաքում է Մոսկվա նաև դեռևս 1875 թ. ստեղծած «Վարթէվօր», «Վարժապէտ» պատմվածքները, իսկ նոր գրվածքներից՝ «Խօրթլախ»-ը։

* * *

Իր վերջին ճամփորդությունից վերադառնալուց ի վեր Պատկանյանին մտահոգում էր համայն հայության համար մեկ ընդհանուր օրենք ստեղծելու գաղափարը, օրենք, որ կարողանա ընդհանուր շահով իրար միացնելու աշխարհի չորս ծագերը ցրված և իրարից այնքան տարբեր տնտեսական պայմաններում ապրող հայ զանգվածը։

Դեռևս տարիներ առաջ այդ հարցը ծառացել էր նրա առջև, երբ զգալով, որ հայը պիտի ունենա մի ընդհանուր շահ ազգություն կոչվելու համար, նա իր «Անիի առումը» դրամայում, «Մեր տեղի ծակլաբունները» պատմվածքում դնում էր ընդհանուր օրենք ունենալու հրամայական պահանջը։ Եվ, առաջին անգամ հանդիպում ունենալով Ռուսաստանի սահմաններից դուրս ապրող հայության մի ստվար հատվածի հետ, ծանոթանալով նրանց ապրելակերպին ու ձգտումներին, Պատկանյանը որոշեց անձնազոհ հայրենասիրության *գաղափարը, հայրենին թուրքական լծից զենքի ուժով ազատագրելու պահանջը դարձնել այն ընդհանուր հոգեկան ձգտումը, որը պիտի աներևույթ թելերով կապեր իրար հետ ամեն մի հայի։ Եվ որպեսզի հոգեկան այդ կապը ամրապնդվի տնտեսական շահով, բանաստեղծը ազատագրվելիք հայրենիքի հողատարածությունները որոշեց առաջարկել կանխիկ գնով վաճառելու հայությանը և ստացված գումարներով ապահովելու պատերազմական ծախքերը։*

Ահա այսպես ստեղծվեց «Վարդապետարան Հայաստանի ազատության» ծրագիրը, ուր ի մի էին հավաքված այն գաղափարները, հանուն որոնց նա մարտնչել էր իր ստեղծագործական ողջ կյանքի ընթացքում։

Այդտեղ արծարծվում էր և՛ հայության համընդհանուր ոտքի ելնելու պահանջը, և՛ հայերի խմբովին Հայաստան ներգաղթելու, և՛ հայկական հողի վրա դպրոցներ ու այլ հաստատություններ հիմնելու հարցը, և՛ վախի ու հուսալքության զգացումը հայերի հոգուց խսպառ վանելու, ազգային շահը անձնականից վեր դասելու երազանքը, Հայաստանի ազատագրման հարցը հայ ազգի կրոնը, հայ մարդու դավանանքը դարձնելու սաստը...

«Այդ իմ կտակն է, որ թողնում եմ ազգիս,—գրել է նա «Վարդապետարան»-ի մասին,— լավ արի, թե վատ՝ չգիտեմ. այդքան հասավ խելքըս, ա՛յն խելքս, որ ստացել էի աստվածանից և որն զարգացել էր այն հանգամանաց մեջ, ուր ես պտուտ եկել եմ իմ ամբողջ կյանքս։ Գուցե սխալներ կան (թերևս և շատ սխալներ), բայց հավատացե՛ք, կեղծիք չի կա. ամեն մի տողի մեջ ես ինքս եմ կենդանի կանգնած իմ ամբողջ կյանքով» (VIII, 72)։

Ավարտելով համայն ազգին ուղղված պատգամները, Պատկանյանը ձեռագիրը հանձնում է Պետերբուրգի համալսարանի ուսանող Թադեոս Զաքարյանին, որը մայրաքաղաքից այցելության էր եկել բանաստեղծին՝ Ն. Նախիջևան, և տանելով այն իր հետ Մոսկվա և ապա Պետերբուրգ, տարածում է ուսանողության շրջանում, այնուհետև առաքում Մարսել՝ «Արմենիա»-ի էջերում տպագրելու համար։

Նույն ուսանող Զաքարյանը դրանից առաջ «Արմենիա»-ին էր ուղարկել իր մոտ գտնված Պատկանյանի վերջին ոտանավորները՝ «Գուսան»-ը, «Խնամակալի խրատներ»-ը, «Տաճկահայերի հառաչանք»-ը[14]*, որոնցից երկրորդը ուղղված էր ցարիզմի ազգակուլ քաղաքականության դեմ։ Եթե Թուրքը արյան մեջ թաթախված յաթաղանով էր բնաջնջում հայ ազգը, ապա ռուսական ցարիզմը նույն ցանկալի նպատակին էր հասնում հայկական դպրոցները փակելով և իր հպատակներին մեծամեծ պաշտոնների ու բազում հարստության տեր դարձնելով։*

Հիշյալ բանաստեղծություններին հետևում են «Տասնապանյա պատ-

---

[14] *«Ձեր ոտանավորներից մի քանիսը, որոնք իմ մոտ էին, ես առանց Ձեզ հարցնելու ուղարկեցի «Արմենիա» լրագրին տպագրելու և արդեն տպագրեցին...,—հայտնում է ուսանող Զաքարյանը 1887 թ. նոյեմբերի 29-ին,—մինչև այսօր տպված են «Գուսանը», «Դարձյալ բողոք առ Եվրոպա» և «Կեղծ խնամակալի խրատները»։ Զգուշության համար Ձեր անունը դրված չէ այդ ոտանավորների տակ, ստորագրված է միայն «Գ» տառը. բոլոր կարդացողները, իհարկե, արդեն հասկացել են, թե ում են պատկանում դրանք։ Հայ ժողովուրդը չէ կարող չճանաչել յուր պաշտած բանաստեղծին, ինչքան էլ որ քողարկված լինի նա» (ԳԱԹ, ՌՊֆ, № 725)։*

24—907

գամք Հայաստանի»-ին և «Հանդանակ հայության»-ը, որոնք փաստորեն «Վարդապետարան»-ի չափածո շարադրանքներն էին և սեղմ ձևով իրենց մեջ պարունակում էին նույն գաղափարները, որոնք նախատեսված էին պատգամներ դառնալու հայության համար։

Դարձյալ ուսանող Զաքարյանի միջոցով առաքելով այդ բանաստեղծությունները «Արմենիա»-ին, Պատկանյանը խնդրում է նրան մինչև տպագրության հանձնելը, տարածել դրանք հայկական շրջաններում, մասնավորապես տալ կարդալու ուսանող երիտասարդությանը։ «Ձեր նամակը և անգին նվերները՝ «Հայության հանդանակ»-ը և «Հայաստանի տասնապանյա պատգամք»-ը ստացա,— հայտնում է Զաքարյանը,— հազար ու բյուր շնորհակալություն, ինչպես այդ անփոխարինելի նվերի, նույնպես և այն պատվի համար, որով բախտավորեցնում եք ինձ, ուղարկելով Ձեր գրչի տակից նոր դուրս եկած մարգարիտները. ես ինձ պարծանք ու բախտավորություն եմ համարում, որ բոլոր հայերից առաջ եմ արժանանում կարդալ այն գրվածքները, որոնք այդպես սրբազան պատգամներ պետք է լինեն հայ ազգության համար։ Ձեր այդ երկու նոր գրվածքները լրումն են «Հայաստանի ազատության վարդապետարան»-ին[15]։

* * *

Հետևյալ տարին, չնայած առողջության վատթարացմանը, Պատկանյանի համար լի էր ստեղծագործական նոր մտահղացումներով։ Դարձյալ շարունակելով մի պահ «Վարդապետարան»-ի և մյուս բանաստեղծությունների ստեղծման պատճառով ընդմիջած նորնախիջևանյան պատմվածքների շարքը, Պատկանյանը ստեղծում է «Խապաամը վօրի՞նն է» պատմվածքը, «Քալական մէռէյնէր» դիմաստվերների շարքը, «Տայմաքվա պանէր» պիեսը և իր երգիծական ստեղծագործությունների գլուխգործոցը՝ «Փոստուխին Ավագը» պատմվածքը։

Դրանցից առաջինը, որ ստեղծվել էր 1889 թ. մարտին, դարձյալ պատկերում էր ժամանակակից ընտանիքի քայքայումը։ Եթե «Շատէրէն մէկը» պատմվածքի մեջ հեղինակը ներկայացրել էր հայ տղամարդուն, որը զոհ դնալով թղթամոլությանը, կործանվել էր և իր հետ միասին կործանման դատապարտել կնոջն ու երեխաներին, ապա այստեղ պատկերված էր հայ կնոջ ողբերգությունը, որը չկարողանալով դիմադրել հայկական ընտանիք սպրդած թղթախաղի ու շռայլության կործանարար

15 ԳԱԻ, ՌՊՖ, № 725։

վաղքին, աստիճանաբար իջնում է ցած բարոյականության աստիճաններով, մեկը մյուսի ետևից փոխելով հարուստ սիրեկաններին... Իսկ ընտանի՞քը, ամուսի՞նը... Ամուսինը չտեսնելու է տալիս այս խայտառակությունը և կնոջ նոր բարեկամների շնորհիվ կարգավորում իր գործերը...

«Խապաաթը վորի՞նն է» (ո՞վ է հանցավորը), հարցնում է հեղինակը։ Հանցավորը այլանդակ բուրժուական բարքերն են, որ գալիս են քայքայելու ամեն բարոյական սկզբունք, գալիս են վաճառքի հանելու կնոջ բարոյականությունը, ամուսնու պատիվը, ոչնչացնում հայկական սուրբ ընտանիքը...

«Գրեցե՛ք ձեր տեղի հայկական վիճակը,— խնդրում է Պատկանյանը ուղարկելով պատմվածքի ձեռագիրը Իսահակ Հարությունյանին,— մեր տեղինը նկարած է այս հաստ ծրարի մեջ» (VIII, 120)։

Իր ստեղծագործական ողջ կյանքի ընթացքում առաջին անգամն էր, որ Պատկանյանը փորձում էր ներկայացնել բացասական հայ կնոջ կերպար, քանի որ հայ կնոջն էր համարում նա ազգության պաշտպանության միակ նեցուկը, նրա բարոյական բարձր հատկանիշներին, նրա անձնազոհ էությանը վերագրում «Հայ ընտանիք» սուրբ հասկացողությունը։ Եվ կարծես, ավելի շեշտելու համար ժամանակակից բարքերի կործանարար ազդեցությունը, նա իր այս ստեղծագործության համար ընտրեց բուրժուական հասարակարգի պայմաններում այլասերվող հայ կնոջ կերպարը, տեխելով իր կուռքին, իր կողմից տարիների ընթացքում բարձր պատվանդանի վրա դրած ամոթխած հայ կնոջը, իջնելու մինչև բարոյական լրիվ անկում։

Պատմվածքին տալով 70-ական թվականներին կորած իր սիրելի գործի «Խապաաթը վորի՞նն է» վերնագիրը, նա այս անգամ ևս հերոսուհու անունը պահպանում է նույնը, որը, սակայն, ռուսական հորջորջմամբ կորցրել էր իր ազգային ձևը և Թագուհուց վերափոխվել Թանիչքայի։

Երկրորդ ստեղծագործությունը, որը ձեռնարկեց հեղինակը, դա շչեդրինյան «Умирающие» շարքում ներկայացված («Невинные рассказы» և «Сатиры в прозе» ժողովածուներ) և պատմականորեն ոչընչացման դատապարտված «Քայլող դիակների» («Ходячие трупы») նըմանությամբ և շչեդրինյան շնչով գրած «Քաղական մէռէլնէր» դիմապատկերների շարքն էր։ Ներկայացված նորնախիջևանյան «աղաների» կերպարները, որոնց միակ հետաքրքրասիրությունը աշխարհում անձնական շահն է, ընդունակ են ամեն տեսակ անարդարությունների, նրանք կա-

տող են և՛ խաբել, և՛ թալանել, և՛ կեղծիքով զբաղվել, և՛ չարախոսել ու զրպարտել։ Սակայն, չնայած իրենց ստոր, խարդախ էության, չնայած ամեն երևույթ իրենց անձնական բարօրության չափանիշով կշռադատելու սկզբունքին ու աններևակայելի տգիտության, այս մարդիկ հանդիսանում են հասարակական կյանքի արդիական «սյուները», որպես քաղաքային խորհրդարանի անդամներ, որոշում քաղաքի կառավարման հրատապ հարցեր, որպես դպրոցի հոգաբարձուներ, իրենց «հեղինակավոր» կարծիքը հայտնում ուսումնական հարցերի վերաբերյալ, որպես իրավաստուներ, արգելք հանդիսանում այս ու այն օգտավետ գործին։

Փաստորեն այդ «Քալական մէռէլնէր»-ի թվին էր պատկանում նաև հեղինակի ստեղծած հաջորդ պատմվածքի հերոսը՝ Փոռսուխին Ավագը, որի միակ իդեալը աշխարհում իր սեփական ստամոքսն էր։

Արտաքին լրջության տակ թաքնված պատմելաձևը Պատկանյանին հնարավորություն է ընձեռել այդ ստեղծագործության մեջ ամենաբարձր կատարելության հասցնել իր երգիծանքի ուժը, լեզվական դիպուկ արտահայտություններով, հատուկ, նուրբ երանգավորումներով պատկերել իր հսկայական, ամենապարփակ ստամոքսի տեսանկյունով աշխարհի բազմազանությունները տեսնող ու գնահատող, սակայն «հասարակական անդուլ գործունեությամբ» զբաղվող իր հերոսին։

Այս «ազգային գործիչների» կերպարները, անշուշտ, ունեին և իրենց որոշակի նախատիպերը քաղաքի ինքնագոհ, տգետ ու ամբարտավան «աղաների» շրջաններում, որոնք շատ անգամներ իրենց իրավունք էին վերապահում խորհուրդներ տալ գիտակ մարդկանց, արգելք հանդիսանալ նրանց ձեռնարկություններին, քննադատել նրանց մանկավարժական ու ճիշտ ըմբռնումները։ «Տե՛ր հայր,— գրել է նա Մոսկվայի դպրոցի կրոնուսույց Մկրտիչ Գանձապետյանին,— ես քեզ մեկ բան ասեմ, բայց դու պարծանք չհամարես, և ոչ ոքի այս տողերս չցուցնես. ես շատերին զարմացնում եմ խոսքով և գործքով, բայց ինձ ոչ ոք չզարմացուց... Եվ հետո ինչպես չծիծաղեմ, որ մեր միամիտ նախիջևանցիք իմ վրա նաչալնիքներ դրել են մուրատշաններու, խասամովներու... խայտառակությո՜ւն» (VII, 181)։

Պետք է ենթադրել, որ Փորսուղի Ավագի հավաքական կերպարի համար առատ նյութ է մատակարարել հենց այս Մուրադչյանը, որի հերթական ոտնձգությունների մասին իմանալով, բանաստեղծը բացականչել է. «Այժմ ալ Մուրատշանն է ընկել ետևես հա՜, շատ աղեկ...» (VII, 247), և այնուհետև ձեռնամուխ եղել իր հանրահայտ երգիծաբանության ստեղծմանը։

Բայց, ինչպես վերջին շրջանի համարյա բոլոր գործերը, Պատկանյանի այս ստեղծագործությունները ևս չարժանացան տպագրության։ Մեծ դժվարություններից ու քաշքշուկներից հետո միայն հաջողվեց «Արձագանք»-ում լույս ընծայել «Խապաաթը փորի՞նն է» պատմվածքը, իսկ մյուսները դարձյալ ձեռքեձեռք անցան արտագրությունների միջոցով։

1890 թ. առաջին օրերը դարձյալ նոր, ծանր փորձություններ բերին Պատկանյանի համար։ Այս անգամ նրա դեմ արշավանք սկսեց «Մուրճ» ամսագիրը, տպագրելով Մոսկվայի համալսարանի 15 ուսանողների բողոքն ուղղված «Սատանայի օչիլ» երգիծաբանության դեմ[16]*։*

Անկասկած, այդ բողոքը նույնպես կազմակերպված էր Ն. Նախիջևանի որոշակի շրջանների կողմից, քանի որ դրանից մի քանի օր առաջ «Նոր-Դար»-ում տպագրված Վարսամ ստորագրությամբ հոդվածը դարձյալ ուղարկված էր Մոսկվայից և կրքոտ կերպով պաշտպանելով «բոլորից հարգված» Կյուրեղ Սրապյանին, անհեթեթորեն կրկնում էր վերջինիս մեղադրանքը բանաստեղծի նկատմամբ, հավաստիացնելով ընթերցողներին, որ Պատկանյանը իր բոլոր ստեղծագործությունները թարգմանել է արաբերենից և խաբում է հայ ժողովրդին[17]*։*

Մոսկվայի համալսարանի հիշյալ 15 ուսանողները և նրանց հետ միասին նաև «Մուրճ»-ի խմբագրությունը մեղադրում էին Պատկանյանին պասկվիլագրության մեջ, բարձր բարոյական հատկանիշներով օժտելով նրա գրչի «զոհ» դարձած վարդապետին։

Այս անգամ հարվածը առանձնապես ցնցող էր, որովհետև գալիս էր ոչ թե մի քանի տգետ ու անմաքուր «աղաների», այլ բանաստեղծի այնքան սիրված, այնքան մեծ հույսեր ներշնչող երիտասարդության կողմից։ Առանձնապես անմխիթարական էր այն գիտակցությունը, որ մտավորապես վարժված երիտասարդությունը նույնպես չի կարողանում ըմբռնել երգիծաբանության իմաստը, ընկալելով այն որպես անձնական հաշիվների հաշվեհարդար։

«Մոսկվայի ուսանողաց հրապարակական անգութ *բողոքը իմ դեմ պարզ ցույց տվեց ինձ, որ իմ դերը արդեն վերջացած է. երիտասարդությունը բնազդաբար ինձ հարկադրեց գրիչս վայր դնելու, իբր կամենալով ասելու թե «դու արդեն ոչինչ նոր և փրկավետ ասելիք չունիս առ մեր ազգը»։ Նա բարձրաբարբառ աղաղակեց՝ թող մեռնի Քրիստոսը, թող*

---

[16] *Տե՛ս «Մուրճ», 1890, № 1։*

[17] *Տե՛ս «Նոր-Դար», 1889, № 211։*

պրի Բառնաբաս ավազակապետը, մեզ համար վերջինը ավելի է հարկավոր» (VIII, 176), գրում է նա դարձյալ «Հանդես գրականական և պատմական»-ի աշխատանքներին մասնակցելու խնդրանքով իրեն դիմող Մկրտիչ Բարխուդարյանին և իր դերի ավարտվածության դառն զգացումով ավելացնում. «Հայ երիտասարդության ինձ ցխի հետ հավասար կանգնեցնելուց հետ՝ արդեն ավելորդ է ինձ գրիչ ձեռքս առնել և մարդոց առջև սիրտս բանալ... Ոչ թե տակավին չիտպած գրվածքս տպել տալ կամ տպածները վերատպել, այլ եթե մի որևէ հնար ունենայի՝ գրչիս տակից բոլոր դուրս եկածները ուրախությամբ կոչնչացնեի... Այսուհետև ես ոչինչ գրելու չեմ. հայկական աշխարհքին պետք չեն մեր սրտի վերքերը և նորանից դուրս պրծած հառաչանքը... Ես ուխտել եմ լուռ մնալ, մինչև որ մահը խսպառ կկարկամեցնե իմ լեզուն և մատները, որք երբեմն, ասես թե ինչ ու ինչ օգտավետ հայի համար դոյացնում էին» (VIII, 176)։

Պատկանյանի պաշտպանությամբ և երգիծական ստեղծագործությունների ճիշտ ըմբռնմամբ ու գնահատմամբ հանդես եկավ Շիրվանզադեն «Արձագանք»-ի էջերում, «Սատանայի օչիլ»-ը համարելով Սվիֆտի գրչին արժանի մի համարձակ երգիծաբանություն, որը կարողանում է գանակոծել կյանքի տգեղ երևույթները ընդհանրացած ձևով, և ոչ մի հարկ չկա փնտրել այդ ստեղծագործությունների նախատիպերը նրա հակառակորդների շրջաններում, որովհետև հեղինակը մասնավորից գընում է դեպի ընդհանուրը, իր անցանկալի երևույթը խտացնելով նկարագրված հերոսի մեջ։ Օրինակ բերելով եվրոպական գրականության մեջ բազմաթիվ ստեղծագործություններ, որոնց գործող անձինք նույնպես կոնկրետ անձնավորությունների սինթեզ են հանդիսանում, Շիրվանզադեն հատկապես շեշտում էր այն փաստը, որ այդ ստեղծագործությունները լուրջ քննադատությունը երբեք պասկվիլ կամ պանֆլետ չի անվանել։

Ընդհանրապես չափազանց բարձր գնահատելով Պատկանյանի բոլոր ստեղծագործությունները, հոդվածագիրը դրանք համարձակորեն դընում էր համաշխարհային նման գործերի կողքին։

Սակայն Պատկանյանը այլևս ոչ ուժ և ոչ ցանկություն ուներ շարունակելու անհավասար պայքարը «սուտ ազգասիրության» և թշնամանքի դեմ և, կարծես, իսկապես պատրաստ էր հավատարիմ մնալու գրիչը այլևս ձեռք չվերցնելու՝ իր որոշմանը, երբ Հայաստանի խորքերից եկող «արյունով շաղախված» լուրերը մի վերջին անգամ նրան ստիպեցին ոտքի ելնելու, մոռանալու ամեն վիրավորանք, հիվանդ մարմնի վերջին զորությունները ժողովելով՝ կրկին զորավիգ կանգնել հայության ոգուն։

* * *

Հիվանդանոցում էր պառկած Պատկանյանը, երբ նրան հասավ 1890 թ. հունիսի 18-ին Կարինում տեղի ունեցած ժողովրդական ցույցի և թուրքական զորքի տեսած արյունոտ հաշվեհարդարի լուրը։ Այն և ցրնցեց բանաստեղծի ողջ էությունը և նորանոր հույսերով լցրեց նրա հոգին։ Հենց այնտեղ, հիվանդանոցում դողդոջուն մատներով նա գրի առավ «Կարինի կոտորած» ոտանավորը[18] և սկսեց հորդորել բժիշկներին՝ իրեն թույլատրել մեկնելու Հայաստան օդափոխությամբ առողջությունը կազդուրելու նպատակով։

«Կարինի կոտորած»-ը դա մի ողբ է թափված անմեղ արյան, մի նախատինք բարբարոսների հասցեին և, իհարկե, հորդոր՝ չվհատվելու, այլ ոտքի ելնելու և պայքարելու։

Արդեն բանաստեղծության վերնագիրը հուշում էր այն նոր արհավիրքի մասին, որոնց մասին պատկերավոր լեզվով պիտի խոսեր բանաստեղծը։

Ուղարկելով ոտանավորի արտագրությունները Մոսկվա, Թիֆլիս, Բաքու ու ստանալով բժիշկ Քեչեկի համաձայնությունը, Պատկանյանը օգոստոսի 3-ին դուրս է գրվում հիվանդանոցից և երեք օր անց մեկնում ուղևորության Թիֆլիս—Բաքու—Գանձակ—Շամախի—Նուշի—էջմիածին երթուղով (VIII, 178), տեղում հայերի տրամադրությունները շոշափելու և իր ելույթներով ու բանաստեղծություններով նրանց ոգևորելու մտադրությամբ։

Ճանապարհի սկզբում, դեռևս կազդուրված չլինելով վերջին տարիներին անընդհատ սրացող թոքային հիվանդությունից, նա կրկին անկողին է ընկնում և բարձր ջերմությամբ հասնում Թիֆլիս։ Մի երկու օր պառկելուց հետո նա ոտքի է կանգնում, շտապում տեսնվել քաղաքի մտավորականության հետ, հանդիպում «Մշակ»-ի խմբագրատուն, այ-

---

[18] «Դուք չգիտեք, որ ես մոտ 2 ամիս կիսամեռ պառկած էի մահճի մեջ, հույսս իսպառ կտրած, որ մյուս անգամ ոտքի պիտի կանգնեմ. այժմ ես չհամարեք ինձ բոլորովին առողջացած. այս նամակը (գրիչը առաջին անգամ ձեռքս եմ առնում) գրում եմ Ձեզ քաղաքական հիվանդանոցից, ուր ակամա զետեղված եմ, տանս մեջ կարևոր հարմարություններ չունենալուս ...Բարեհաճությամբ ընդունեցե՛ք այս անարվեստ ոտանավորս, որն իմ դառն վշտերի արգասիքն է. ինչպես երևում է, ամեն մարդու տրված չէ շնորհը հոգու զգացածը բառերով արտահայտելու։ Բայց Դուք, ազնիվ օրիորդ, ինչպես և մոտո ինձ ճանաչող, այս կոշտ բառերի և կոպիտ դասավորության մեջ որոնեցե՛ք և գըտե՛ք իմ ի խորոց սրտի բխած զգացմունքը»,—գրել է նա հուլիսի 14-ին Մարիամ Աբիմյանին, ուղարկելով նրան ձոնած «Կարինի կոտորած» բանաստեղծությունը (VIII, 177)։

նուհետև այցելում առաջնորդարան, տեսնում Վրաստանի թեմի առաջնորդ Մամբրե եպիսկոպոս Սանասարյանին, երկար խոսակցություններ ունենում Թիֆլիս նոր ժամանած Խորեն Նարպեյի հետ, նրանցից նորություններ իմանում Կարինի դեպքերի և Պոլսում, հուլիսի 15-ին տեղի ունեցած Գում-Գափուի ցույցի մասին, ոգևորվում հայերի ցուցաբերած անօրինակ սխրանքներով, դրանց մեջ տեսնելով ապագա հաղթության հաստատ գրավականը։ «Հայաստանից եկած լուրերը թեև արյունով ու արտասունքով են թաթախված, այնուամենայնիվ շատ ուրախալի և շատ մխիթարական են,— հայտնում է նա ոգևորությամբ Գևորգ Քանանյանին՝ Մոսկվա, զգալով, թե ինչքան անճիշտ էին այն լուրերը, որոնց ազդեցությամբ նա ստեղծեց «Կարինի կոտորած» ողբ-բանաստեղծությունը,— մայրաքաղաքի լրագիրների թղթակցությունները մասամբ խվիքճշմարիտ են, իսկ մեծավ մասամբ ստություններով լցված են։ Ճշմարիտը այն է, որ թուրքերը ոչ թե մորթել են հայերին, այլ դեմ հանդիման, ճակատ ճակատի կանգնած հաղթել են, բայց ի՜նչ հաղթություն. նույնքան թուրք ընկել են պատերազմի դաշտում, որքան և հայք։ Կռվի ժամանակ հայերը կորզել են թուրք զինվորների ձեռքից հրացանները և նոցա սվինները դարձրել են թշնամիի կրծքին. և ընկճվել են, վասնզի տաճիկները կանոնավոր զորք են ունեցել, իսկ հայի պատերազմողք եղել են երեկվա ստրուկները։ Իսկ Կ. Պոլսի մեջ բանը բոլորովին այլազգ է եղել. հայ ամբոխի առջևին ծածանել է կարմիր (ապստամբական) դրոշակը. հայք թվով 4—5 հազար, զինվորած են եղել թրերով, դաշույններով, ռևոլվերներով, իսկ պատերազմի վերջը շատերի ձեռքին եղել է տաճկական հրացաններ՝ նույն իսկ տաճիկներից խլած։ Սուլթանի նիշանը պատառ պատառ են արել և առաթուր են կոխել, իսկ նորա կենդանագիր պատկերը ծածկել են հրաղենքի գնդակներով... Ես զարմացա, հիացա և սարսափեցա, որ այս ընկճված, կարծես թե արդեն մեռած ժողովրդի մեջ այսքան հզոր ոգի էր թաք կեցած, առժամանակ մի նիրհած... Հը՞, ինչպես ես այժմ, սո՞ւտ էր իմ 35 տարի առաջ կատարած դուշակությունները և տածած հույսերս... Քո անունը իմի հետ միասին շրջում է բերնբերան և դեպի հաղթություն և ապագա բարօրություն խրախուսում է ստրկացած ամբոխին... Օրհնյա՜լ լինի, սիրական Գևորգ, մեր ազնիվ պատանեկությունը, որի խոսքերը այժմ կենդանարար ոգի են ներշընչում ամեն սիրտ և թնդացնում են լեռներ, ձորեր...» (VIII, 181, 182)։

Նարպեյի հետ ունեցած խոսակցություններից իմանալով Մակար կաթողիկոսի հայկական հարցը զինված պայքարի ճանապարհով լուծելու ժխտական դիրքորոշման մասին, Պատկանյանը որոշում է թեքել նրա

համակրանքը դեպի ազատագրական շարժումը, հանդիպումներ ունենում մտավորականության մի շարք ներկայացուցիչների հետ, նախապատրաստում ազգու փաստերով ներգործել էջմիածնի վրա (VIII, 185), ապացուցել ժողովրդի Գվեռիլյաների սիստեմով բռնած պայքարի նպատակահարմարությունը, ապա խնդրելով անմիջապես դերասան Գևորգ Չըմըշկյանի և «Արձագանք»-ի խմբագրության հասցեներով ուղարկել «Կարինի կոտորած» բանաստեղծության նոր արտագրություններ (VIII, 180, 185), նա պատրաստվում է օգոստոսի 27-ին մեկնել Թիֆլիսից, սակայն հիվանդության նոր ալիքը դարձյալ գամում է նրան անկողնին, մինչև սեպտեմբերի 1-ը։ Անկողնուց բարձրանալուց անմիջապես հետո, առանց հապաղելու, նա ճանապարհ է ընկնում դեպի Գանձակ և երկար-երկար տարիների անջատումից հետո իջևանում իր վաղեմի բարեկամ Մնացական Թիմուրյանի մոտ։

Իմանալով ընկերոջ ճանապարհորդության նպատակների մասին, Թիմուրյանը նրան մանրամասը ծանոթացնում է քաղաքի հայության տրամադրություններին, հանդիպումներ կազմակերպում նրանց հետ։ Պետք է ենթադրել, որ ինչպես Թիֆլիսում, այնպես էլ Գանձակում Պատկանյանին հիացնում է երիտասարդության և ընդհանրապես ժողովրդի ոգևորությունը ու զայրույթ պատճառում հայ եկեղեցու և ավագանու բռնած ըղձուշավոր դիրքը։ «Հայկական հարցը (ոչ այն, որ գրվում է սև թանաքով, այլ այն, որ խարանվում է նահատակների սուրբ արյունով) հառաջ է գնում՝ օրավուր գրավելով ավելի սրտեր,— գրում է նա իրենց երբեմնի ուխտի երրորդ անդամին Գանձակից,— ...Կարին, Մուշ, Վան և Կոնստանդնուպոլիս հրդեհի ճարակող բոցերով են պատած. հայ երիտասարդությունը զինավորվում է և աններկյուղ գնում է մահվան առջև. ընկնում է անտրտունջ, անբարբառ և միայն վերջին շունչը արձակելիս, կոչում է. «կեցցե՜ մանուկ Հայաստան»։ Ռուսական գավառները խումբ-խումբ քաջեր են մղում դեպի արյունով ողողված և հրով ճարակված հայրենիքը... Ժողովրդի աղքատ դասակարգը ամենայն ինչ բերում է զոհ—և՛ յուր կոպեկները և՛ ցնցոտի լաթերը և՛... հարազատ զավակների (յուր միակ կերակրողի) արյունը։ Իսկ մեր հարուստնե՞րը... է՜հ, ինչ խոսեմ մեր հարուստների վրա, երբ դուք ինքներդ շատ լավ գիտեք, թե ի՞նչ է նշանակում հայի հարստության, այսինքն՝ միջոց... անբարոյականության, ապականության, անառակության... Տխրալի՜ պատկեր...» (VIII, 187, 188)։

Տաս օր Գանձակում անցկացնելուց հետո Պատկանյանը ուղևորվում է Բաքու և իջևանում Սև քաղաքում բնակվող ինժեներ Գրիգոր Ծգնավոր-

յանի տանը։ Բաքվի հայ հասարակությունը, մասնավորապես երիտասարդությունը անօրինակ ցույցերով ու ոգևորությամբ է ընդունում առաջին անգամ իրենց քաղաքը ոտք դրած բանաստեղծին։ Արդեն կայարանում նրան էին սպասում հարյուրավոր երիտասարդներ, որոնք ծափահարություններով ու ողջույնի բացականչություններով ուղեկցելով Պատկանյանին մինչև կառք, դեռ երկար ժամանակ քայլում էին կառքի կողքից, երգելով և արտասանելով նրա բանաստեղծությունները։

Հետևյալ օրը հատկապես Պատկանյանի պատվին ներկայացվում է «Վարդան Մամիկոնյան» պատմական ողբերգությունը։ Հանդիսականները և դերասանները տեսնելով օթյակում նստած Պատկանյանին, հոտընկայս ծափահարում են նրան, իսկ դերասան Սաֆրազյանը, մինչև ներկայացումը սկսվելը բուռն օվացիաների ներքո արտասանում է բանաստեղծի մի քանի հայրենասիրական ոտանավորներ։

Մեկ օր անց Կարա-Մուրզայի երգեցիկ խումբը համերգ է տալիս Պատկանյանին մեծարելու նպատակով։ Մինչև համերգը Պատկանյանը հատկապես այդ երեկոյի համար գրել էր «Կարինի սոխակ» բանաստեղծությունը, իսկ Քրիստափոր Կարա-Մուրզան, իր՝ Պատկանյանի մասնակցությամբ երգի էր վերածել այն ու պատրաստել խմբի կատարմամբ։

Համերգի ծրագրացանկը գլխավորապես բաղկացած էր Պատկանյանի խոսքերով գրված երգերից։ Համերգի ժամանակ հանդիսականների ոգևորությունը անցնում է ամեն սահմաններ, մի քանի անգամ կրկնվում է «Կարինի սոխակ» և «Բավ է, եղբայր, վիզը ճկել» ու այլ երգեր։ Ամբողջ դահլիճը ոտքի կանգնած հուզմունքի արտասուքը աչքերին ձայնակցում է խմբին[19]։

Պատկանյանի պատվին կազմակերպված մեծ հացկերույթի ժամանակ պատասխանելով ներկաների դրվատական ճառերին, բանաստեղծը Բաքվի արդյունաբերողներին կոչ է անում չմոռանալ իրենց օրհասի մեջ գտնվող հայրենիքի մասին և հիշել, որ աշխարհի մեջ անջնջելի ու անմոռանալի են մնում միայն այն գործերը, որոնք արվում են հօգուտ հասարակության։

Անմիջապես նրա ելույթից հետո, հենց այնտեղ, հացկերույթի սեղանի շուրջը մեծ խանդավառությամբ հանգանակվում է մի շատ նշանակալից գումար արևմտահայության պետքերի համար[20]։

Հոկտեմբերի առաջին օրերին Պատկանյանը արդեն ծրանում էր և

---

[19] Տե՛ս «Նոր-Դար», 1890, № 148։

[20] Տե՛ս «Մշակ», 1890, № 113, հոկտեմբերի 4։

հանդիպումներ ունենալով տեղի կազմակերպությունների ղեկավարների հետ աշխատում էր ամեն հնարավոր օգնություն կազմակերպել ոտքի ելնող հայությանը, չթողնելով, որ «առկայծող եռանդը հանգչի և հոգին տկարանա»։ Մեկին հատուկ հանձնարարական նամակով ուղարկում է Թիֆլիս՝ Գաբրիել Սունդուկյանի մոտ, խնդրելով, որ «ինչ որ սորա բերանից կլսես՝ ավետարանի խոսքի նման ճշմարտություն համարե և ինչ խնդիր որ սա կհայտնե քեզ՝ կաշխիտդ դուրս եկիր և ոսկորներդ ծախե և կատարե» (VIII, 193), մյուսին խոստանում տալ իր «Վարդապետարան»-ի արտագրած օրինակը (VIII, 197), երրորդին հանձնում վերջին բանաստեղծությունների ձեռագրերը, Արևմտահայաստան անցնող խմբերին բաժանելու համար։

Հենց այստեղ, Երևանում, Պատկանյանը ստեղծում է «Հայ զինվոր» վերոխտ քայլերգը, որն անմիջապես տարբեր եղանակներով սկսում է երգվել ժողովրդի կողմից (VIII, 226)։

Բանաստեղծության ռազմաշունչ ոգին, նրա ամեն տողից բխող մոտալուտ հաղթանակի հավատը, թուրքական զորքին ու սուլթանի հզորությանը տված ծաղրալի գնահատականները, «Ստրուկ եմ եկել, կդառնամ ազատ, ետ խլած քեզմեն հողն իմ հարազատ» ռեֆրենը կոչված էին հայերի մարտունակությունը բարձրացնելուն, նրանց իրենց գործի արդարության և ուժի բարձր գիտակցության բերելուն։

Երևանից մեկնելով էջմիածին Պատկանյանը, ամենայն հավանականությամբ, չի կարողանում որևէ ազդեցություն ունենալ ազատագրական շարժումների խնդրում կաթողիկոսի բացասական դիրքորոշման վրա և, առողջության հանկարծակի վատթարացման պատճառով դադարեցնելով ճանապարհորդությունը, Թիֆլիսի վրայով վերադառնում է Ն. Նախիջևան (VIII, 189)։

Մի փոքր կազդուրվելուց հետո Պատկանյանն ի մի է հավաքում իր տպավորությունները, կատարում ստացած հանձնարարություններն ու խոստումները և ձեռնարկում հայկական հարցը այս հրատապ րոպեին միջազգային ասպարեզ հանելու իր նոր որոշումը, որը պիտի արտահայտվեր դարձյալ Գլադստոնին ուղղված նոր նամակը եվրոպական մամուլում տպագրելու և Անգլիայի ապագա վարչապետի ձեռքը հասցնելու ձևով։

Պետք է ենթադրել, որ այս հանձնարարությունը Պատկանյանը ըստացել էր ազգային-պահպանողական հոսանքի և, մասնավորապես, իրեն՝ Սրգար Հովհաննիսյանի կողմից, Թիֆլիսում ունեցած վերջին հանդիպումների ժամանակ։

Իհարկե, դժվար թե ինքը՝ Պատկանյանը, ինչ-որ պատրանքներ ունե-

նար Գլադստոնի հասցնելիք օգնության վերաբերյալ, նրան ավելի քան լավ էին հայտնի անգլիացի քաղաքագետների, դրանց թվում նաև Գլադստոնի «Անգլիա, Անգլիա, և կրկին անգամ Անգլիա» գործելակերպի նշանաբանը։ Հենց այդ օրերին գրած նամակներից մեկում նա նշում է, որ «Մեզ հարստահարող Թուրքիան հարկավոր է Եվրոպային՝ նրա ոխերիմ թշնամու դեմ կանգնելու համար» (VIII, 227)։ Սակայն այդ տագնապալի օրերին հայկական հարցը եվրոպական թերթերի նյութ դարձնելը, թուրքական քստմնելի վայրագությունների նկարագրությունների, հայ ժողովրդի հոգու կորովի գովերգությունը և, վերջապես, նրա այդ, օրը ցերեկով կատարվող սպանդի վրա անտարբեր աչքով նայող Եվրոպային մեղադրող ձայնը, աշխարհին հասցնելու մտայնությունն էր, որ կրկին ստիպում էր նրան գրիչ վերցնելու ձեռքը։ Նկարագրելով Բեռլինի վեհաժողովից հետո տեղի ունեցած և ունեցող է՛լ ավելի սպառնալից բնույթ ստացած թուրքական վայրագությունները, Պատկանյանը շպրտում է Անգլիայի ապագա վարչապետի երեսին իր ժողովրդի ազգային բանաստեղծի իրավունքով. «Եվրոպայի խաղաղությունը չվրդովել» կասեն, «անգլիացիի շահը կպահանջե» կասեն։ Մի՞թե Եվրոպայի խաղաղությունը կպահանջե, որ մի ամբողջ ազգ եռ մարտիրոսական ամենասարսափելի տանջանքի, բնաջինջ լինի աշխարհիս երեսեն. մի՞թե անգլիական շահը կպահանջե, որ երկրիս վրա չլսված-չտեսնված չարագործություններ կատարվին, որպեսզի միլիոնատեր լորտերը սնդուկներու մեջ դիզեն հայի արյան և մահվան գնով ձեռք բերված սթեռլինները» (VIII, 207)։

Այս անգամ նամակը Պատկանյանն ուղարկում է լոնդոնաբնակ, Օքսֆորդի համալսարանի հայ և թուրք լեզուների դասատու Կարապետ Հակոբյանին, այն անգլերեն թարգմանելու և մի հանձնարարական նամակով Գլադստոնին մատուցելու համար, ինչպես նաև առանձին բրոշյուրներով անգլերեն, ֆրանսերեն և գերմաներեն լեզուներով տարածելու համար։ Բացի այս ամենից, Պատկանյանը խնդրել էր նաև հայերեն բնագիրը հրատարակել Փոռթուգալյանի «Արմենիա»-ում և հատուկ այդ նպատակի համար դրամ է առաքում Լոնդոն, խնդրելով Միսս Ջերազին տպագրել այն օտար լեզուներով և վաճառել կամ հօգուտ «Armenie»-ին, կամ ձրի բաժանել ցանկացողներին, որպեսզի «որքան կարելի է շատ ծավալեն ժողովրդիս մեջ և ուժգին արձագանք գտնեն այնտեղ» (VIII, 223)։

Սակայն հատկանշականն այն է, որ անելով այս ամենը, Պատկանյանը սրտի խորքում զգում էր, որ ամեն ինչ ապարդյուն է, որ երբեք պատմական նման իրադրության պայմաններում հայկական հարցը դը-

րական լուծում ստանալ չի կարողանա, որ ո՛չ նահատակների սուրբ արյունը, ո՛չ լուսավորյալ Եվրոպան, ո՛չ խոհեմությունը, ո՛չ քաջությունը, ոչի՜նչ, ոչի՜նչ չեն օգնի գործին, իսկ թե ո՞րն էր ելքը, չէր կարողանում ըմբռնել...

«Արտաքո ամեն ակնկալության, հայ ազգը, ալեոր ծերունուց մինչև թոթովախոս երեխան, մեծավորից մինչև փոքրավորը, այր և կին, երիտասարդ և կուսանք՝ բոլորը մի հոգով ոգևորված են, մի ցանկությամբ վառված, մի հույսով և հավատով ներշնչված, ակներև վտանգի և անխուսափելի կորստյան առջև դեմ հանդիման, աներկյուղ կանգնած են ...Ավելի կասեմ՝ այսպիսի ընդհանուր ոգևորություն երկբայելի է, որ Վարդանանց և Ղևոնդյանց օրերումն անգամ տեսնված լիներ հայ ազգի մեջ... Բայց, ափսո՜ս, հազա՜ր ափսոս, որ իրաց հանգամանքը այնպես ճախողակի է դրված, որ մեզ, բացի ազգովին կոտորվելեն, ոչինչ ուրիշ ելք չի մնում...

...Առջևներս ունենալով այսպիսի ճախողակ պայմաններ, ինչպե՞ս կարող ենք 25—50 հազար անզեն գառներով դեմ դնել կես միլիոնյա գազան-թշնամիներին։ Եթե լռենք, մեր բարոյական, թեև դանդաղ, մահը անխուսափելի է. եթե ոտքի ելնենք, ազգովին պիտի մորթվինք և Եվրոպան մեր վրա ցավակցական հայացք ձգելու ու սրտեն թեթև հառաչանք անգամ հանելու չէ՛։ Ի՞նչ անենք ուրեմն, խոհեմությո՞ւն։ Բայց մենք ամբողջ վեց դար ամենախոհեմ ազգն ենք եղել աշխարհիս մեջ և ի՞նչ ենք վաստակել։ Քաջությո՞ւն, բայց մի՞թե անմեղ, անզեն գառների նման ուղիղ դեպի սպանդանոց վազելը քաջություն է... Մասնավորների խելքեր, մասնավորների դատմունքներ այստեղ ոչինչ չեն օգնի։ Թո՛ղ ուրեմն ինքը, ազգը, յուր օրհասական վտանգի մեջ որոնե և գտնե յուր փրկության ճանապարհը... Իսկ մենք ամենքս կատարենք մեր սուրբ պարտքը վերաբերմամբ ազգիս... և մնացածը թողնենք նախախնամության» (VIII, 226, 227)։

Սակայն անողոք հիվանդությունը օրըստօրե ավելի քիչ հնարավորություն է թողնում բանաստեղծին կատարելու «իր սուրբ պարտքը»։

Մի երկու անգամ էլ հայությունը լսեց նրա խրոխտ ձայնը, որը անարգանքի սյունին էր գամում Սուլթան Համիդի հետ համագործակցած երեսունվեց դավաճան հայ «էֆենդիներին» իր «Ուղերձ առ Սուլթան Համիդ» բանաստեղծության մեջ և մարտի կոչում իր համազգիներին, ոգևորելով նրանց, ինչպես տասնամյակներ առաջ, Քաջ Վարդանի սխրանքով. «Հայոց գուգաղի չունվագը» ռազմի երթում։

* * *

1892 թ. օգոստոսի 26-ին կյանքից հեռացավ Ռափայել Պատկանյանը, որի ամբողջ կյանքը մի երկունք էր, և որի ստեղծած բանաստեղծական համայնապատկերի մեջ հայ ժողովուրդը նշմարում էր ոչ միայն իր մարմնացած երազանքը, այլև ազգային ինքնատեսությունը, որը կանխատեսում էր գալիքը ոչ որպես մարգարե, այլ կռվի դուրս եկած զինվոր, որի համար մահը կամ ազատությունը փյունիկի պես հառնած հայրենիքի մեծ տեսիլքի մեջ երկու ծայրաթևեր էին, հանուն որի նա ապրում և ապրեցնում էր մի ամբողջ ժողովուրդ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ, ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆ

Գլուխ առաջին

Հայրական օջախում, Լազարյան ճեմարան 5

Գլուխ երկրորդ

Առաջին ճանապարհորդությունը դեպի Նիժնի-Նովգորոդ, Աստրախան, Ստավրոպոլ և Թիֆլիս 27

Գլուխ երրորդ

Դորպատում 58

Գլուխ չորրորդ

Մոսկվայի համալսարանում 67

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՅԱՆ ՇՐՋԱՆ

Գլուխ առաջին

Գամառ-Քաթիպայի տետրակները 92

Գլուխ երկրորդ

Ռուսական առաջավոր մտքի ոլորտներում 107

Գլուխ երրորդ

«Երիտասարդ Հայաստան», «Հյուսիսափայլ» 174

Գլուխ չորրորդ

«Հյուսիս» 208

ՄԱՍ ԵՐՐՈՐԴ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՈՐՆԱԽԻՋԵՎԱՆՅԱՆ ՇՐՋԱՆ

Գլուխ առաջին

Հայրենի քաղաքում։ Նորնախիջևանյան պատմվածքներ 241

Գլուխ երկրորդ

Ազատ երգեր 270

Գլուխ երրորդ

Հանդիպումներ հայրենիքի հետ 307

Գլուխ չորրորդ

Նորից նորնախիջևանյան պատմվածքներ։ Վերջին «Մարսելյոզներ» . . 349

ՍԱՂՅԱՆ ՄԵՐԻ ՍՈՒՐԵՆԻ

ՌԱՓԱՅԵԼ ՊԱՏԿԱՆՅԱՆ
Կյանքը և գործը

Հրատ. խմբագիր Ա. Վ. Հովակիմյան
Կազմը Ց. Հ. Ղանդիլյանի
Գեղ. խմբագիր Հ. Ն. Խոծակալյան
Տեխ. խմբագիր Լ. Կ. Հարությունյան
Սրբագրիչ Ջ. Դ. Նաքանյան

ИБ № 215

Հանձնված է շարվածքի 20. 06. 1980 թ.։ Ստորագրված է տպագրության 11. 12. 1980 թ.։ ՎՖ 04894։ Չափը 60×84 1/16 թուղթ, № 1։ Տառատեսակ՝ «Գրքի սովորական»։ Բարձր տպագրություն։ Պայմ. 22,32, տպագր. 24,0 մամուլ։ Հրատ. 21,55 մամուլ։ Տպաքանակ 2000։ Պատվեր 907։ Հրատ. 5334։ Գինը 3ռ. 50կ.։

ՀՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, 375019, Երևան, Բարեկամության փ., 24 գ։
Издательство АН Арм. ССР, 375019, Ереван, ул. Барекамутян, 24 г.
Երևանի պետհամալսարանի տպարան, Աբովյան փող. № 52։
Типография Ергосунта, ул. Абовяна, № 52.

A II
64641

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220064641